
ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹՅՒՆՆԵՐ



ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՀԷ ՍՎԱՃԵԱՆ



ԹՈՐՈՆԹՕ
ՄԺԹ
2019

**Ստանարտ Համար դիմել՝
Հեղինակին
Vahe Sivacian
sivacian@sympatico.ca**

**Ազատ զգացեք ձեր շրջանակին դրկել, բազմացնել,
տպել ու բաժնել ձրիաբար:
Գրովթիւնը որեւէ փոփոխովթեան էնթարկել կամ
տպագրուած օրինակները ծախել
բացարձակապէս արգիւուած է:**

Տպագրուած - Printed



THE RELIABLE PRINTER
PRINT ASSURED

15 – 2200 Markham Rd. Scarborough ON M1B2W4
Tel : 416-292-9394

STORE HOURS

MONDAY • FRIDAY: 9^{AM} – 5^{PM}

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

*Աստուածաշունչէն գրաբար, աշխարհաբար,
նաեւ եկեղեցական ժամերգովքիւններէ
մէջբերումները աւնուած են
Հետեւեալ աղբիւրներէ.*

ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԻՉ ՄԱՏԵԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՅ

ԸՍՏ

**ՃՇԿԻՏ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԱՄՆԵԱՅ ՄԵՐՈՑ Ի ՀԵՎԵԱԿԱՎԱՆ
ՀԱՄԱՏՄՍԿՈՅՆ ԲԱԳՐԷ Ի ՀԱՅԿԱՎԱՍ ԲԱՐԲԱՌ
1805 Ի ՎԵՆԵՏԻԿ. ՈՒՄԾԻ
Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՄՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ**



ՀԱՄԱՅԱՆՅԱՅԻՆ ԱՍՏՈՒՄԾԱՇՈՒՆԻՉ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԱՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ



ԱՂՕԹԱՄԱՏԵԱՆ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԻ

ՀՈԳԵԻՈՐ ԵՐԳԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆԸ

ՇԱՐԱԿԱՆԸ

ԱՂՕԹԸ

ՏԱՂԸ

ՏՊԱՐԱՆ Յ. Գ. ՓԱՆԿԱՇԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1929



ՀՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԻՒՆ

Իմ խորին եւ սրտաբուխ շնորհակալութիւնները, ինչպէս նաեւ երախտագիտութեան զգացումները կը յայտնեմ, այս աշխատանքի պատրաստութեան ընթացքին իրենց խորհուրդներով, ուղղումներով եւ թելադրութիւններով գործս դիւրացնող մի քանի բարեկամներու:

Աղօթարար եմ որ Աստուած իրենց պարգեւէ առողջութիւն եւ արեւշատութիւն:

*

Շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ բոլոր անոնց, որոնք գիրքիս մէջ գործածուած պատկերները քաշած, Հայթայթած եւ Հրապարակած են:

Աղօթարար եմ,

որ Աստուծոյ օրհնութիւնները անոնցմէ անպակաս ըլլայ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

- 3- Ծանօթութիւն
- 4- ՇտորՀակալութիւն
- 5- Բովանդակութիւն
- 8- Կենսագրական
- 9- Ծնողացս
- 10- Չօն Այտային
- 11- - Յառաջաբան
- 13- Ա - Խորհրդածութիւններ
- 15- - Կրօնքը ու Հշմարտութիւնը
- 25- - Մարդը, Կրօնքը ու Եկեղեցին
- 41- - Ինչպէս Աստուծոյ Որդին ըլլալ
- 43- - «Գեղեցկութեան» Յայտնութիւնը
- 45- - Մարդը ու դրախտի ցանկութիւնը
- 47- - Աղօթք
- 49- - Կրօնքը Հասկնալ
- 57- - Կրօնքը եւ Փրկութիւնը
- 63- - Կրօնք թէ Չարթօնք
- 67- - Հաւատալիքներ թէ Հաւատք
- 75- - Հշմարտութիւնը Հանչնալ
- 83- - Ինչու Խոկալ
- 87- - Հասկնալ Խոկումը
- 101- - Քրիստոնեայ Կրօնքը Հասկնալ
- 117- - Հասկնալ Մտային «Մարմին»-ը
- 123- - Թագուն գիտութեանէն Սորվիլ
- 133- - Ինչո՞ւ Թագուն Գիտութիւն
- 145- - Կատարելութեան Ուղին
- 153- - Ինչ եւ Ինչպէս սորվիլ
- 169- - Ինչ է Քրիստոնէութիւնը
- 179- - Ի՞նչ է Կրօնքը եւ ի՞նչ պէտք է ըլլայ

- 185- Բ - Խորհրդածութիւններ
187- - «Ե»-ը
199- - Գիտակցութիւն
211- - Խոկումը եւ Գիտակցութիւնը
217- - Ո՛ւր է Աստուած
225- - Երրորդութիւն
235- - Լոյսը
241- - Մարդուն Տեղը Ստեղծագործութեան մէջ
257- - Փառաբանութիւն
263- - Աստուածապաշտութիւն
281- - «Աստուծոյ Երկրպագեսցուք»
289- - Ի՞նչ է Վերստին Ծնունդը
299- - Ճակատագիր եւ Հայ Ազգը
311- - Ի՞նչ է Հրաշքը
321- - Դատել ու Ներել
335- - Դատել ու Ներել եւ Հայ Ազգը
345- - Զոհ թէ Զոհողութիւն
351- - Աստուած Արդա՛ր է, թէ ոչ
359- - Ուսողութիւնը եւ Մարդուն Կենցաղը
363- - Մեղքը եւ Փրկութիւնը
371- - Ի՞նչ է Փրկութիւնը
385- - Յաւատնականութիւն եւ Յ. Կեանքը
395- - Մարդը - Հաւատքը, Յոյսը եւ Սէրը
403- - Աստուծոյ Կամքը եւ Ճակատագիրը
407- - Վերջաբան - Անդրադարձ ու Ամիսփում՝
417- Գ - Յաւերուածական
419- - Հոգեմտաւոր Խոհեր
441- - Իմաստուն Խօսքեր
442- - Ի՞նչ է Պաշէցողութիւնը
443- - Կոմիտասէն բանաստեղծութիւններ

**ԿԱՐԵԼԻ ՉԷ ԱՆՁ ՄԵ
ՊԱՐՏԱԴՐԵԼ ՀԱՍԿՆԱԼ
ԳԱՊԱՓԱՐ ՄԵ, ՉՈՐԱ
ՀԱՍԿՆԱԼՈՒ ՏԱԿԱԻՆ
ՊԱՏՐԱՍ ՉԷ:**

**ՄԱԿԱՅՆ ԵՒ ԱՅՆՊԷԱ ԵՐՔԵՔ
ՊԷՏՔ ՉԷ ԱՏՈՐԱԳԱՀԱՏԵԼ
ՓԱՆՈՒԱԾ ՀՈՒՆՏԻ ՄԵ
ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:**




ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Հեղինակը ծնած է Կ. Պոլսոյ արուարձաններէն Գատրգիւղի մէջ: Նախակրթարանի ուսումը ստացած է տեղոյն Արամեան-Ոննճեան Ազգ. Վարժարանէն, իսկ միջնակարգի ուսումը՝ Սէն Ճօզէֆ ֆրանսական վարժարանէն: Ըստանտօք գաղթած էն Թորոնթօ, Գանատա, ուր աւարտած է իր երկրորդական ուսումը: **1968**-ին վկայուած է որպէս պսակաւոր գիտութեանց՝ Թորոնթոյի Համալսարանէն: Ապա Հետեւած է բժշկական ճիւղին ու մասնագիտացած ներքին Հիւանդութեանց ու սրտաբանական մարզերու մէջ: Պաշտօնավարած է Թորոնթոյի Սէն Ճօզէֆ եւ Սէն Մայքըլ Հիւանդանոցներէն ներս: Ստացած է օգնական ուսուցչապետի տիտղոս իր շրջանաւարտ եղած Համալսարանէն: Դասախօսած է թէ՛ տեղական եւ թէ՛ միջազգային բեմերու վրայ: Յօդուածներ հրատարակած է արդիւնք իր Հետազօտութիւններուն եւ **2007**-ին ալ դասագիրք մը՝ սիրտը քննելու նոր Հասկացողութեամբ եւ ֆիզիքական նշաններուն բնախօսական եւ ախտաբնախօսական պատճառներու բացատրութեամբ:



Դպրութեան սկսած է Գատրգիւղի Ս. Թագաւոր Եկեղեցոյ մէջ, եօթ տարեկանին, ապա, իր ծառայութիւնը շարունակած է Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցոյ մէջ: Ուրար կրեւու իրաւունք ստացած է Սիօն Արքեպիսկոպոսէն **1960**-ներու վերջերը: Սարկաւազ ձեռնադրուած է Սէնթ Գաթրիսգի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, ձեռամբ Արիս Եպս. Շիրվանեանի: Եկեղեցոյ ծառայութիւնը շարունակած է Ս. Խաչ եւ յետոյ, դարձեալ, Ս. Երրորդութիւն Եկեղեցիներուն մէջ: Մաս կազմած է Թորոնթոյի Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ Վարժարանի Հաստատման եւ անոր Հոգաբարձութեան, որոշ շրջան մին ալ ատենապետելով այդ կազմին: Իր Հետաքրքիր եւ քննասինդիր բնութիւնը զինք մղած է Հետազօտութեան՝ ոչ միայն բժշկական, այլ նաեւ կրօնական գեանի վրայ:





1911-1985



1904-1994



ՄԻՐԵԼԻ ԾՆՈՂԱՅՍ
ԺԻՐԱՅԻ ԵՒ ԻՍԿՈՒՀԻ
ՍՎԱՃԵԱՆՆԵՐՈՒ
ԱՆԹԱՌԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ
ՍԷՐ ԵՒ ՅԱՐԳԱՆՔ



«Դուք աղեղն եղաք, ուրիշ Ձեր շահպաները իբր սյուրդ նետեր
դուրս արձակուեցան:

Աղեղնախորը աշտոխի ճնաքոխ իր թիրախը ԿԵ ՏԵԱՆԷ ԵՒ ԱՂԵՂՆ
ՉՕՐԱՄՈՐ ԿԵՐՊՈՎ ԿԵ ԴՐԿԷ, ՈՐՊՈՒՄԻ ԻՐ ՆԵՏԵ ԱՐԱԳ ԵՒ ՀԵՊՈՒՆ
ԵՐԹԱՅ:

Աղեղնախորի Ձեռքին՝ Ձեր ԴՐԿՈՒՄԸ ՈՐԱՆՈՒԹԵԱՄԸ ԵՂԱՒ
ՈՐԵԱՆ ՈՐ ԱՆ սլաճոդ նետք ԿԵ ՍԻՐԷ, ԵՆՅԵԱՆ ԱՂ ՀԱՍՏԱՏ ԱՂԵՂԸ»:

(յարասուած - Խալիլ Ճիպրան-ի «Մարգարէն» գիրքէն)



1955-2010



**ՄՈՅՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԶՈՒՆԱ
ՎԱՊԱՄԵՌԻԿ ԿՈՊԱԿԻՅԻՄ՝
ԱՅՏԱ ՍՎԱՃԵԱՆ-Ի
ԱՆԹԱՂԱՄ ՅԻՇԱՏԱԿԻՆ:**



ՅԱՌԱՋԱԲԱՆ

Այս գիրքը երկու գլուխներու բաժնուած է: Առաջին գլուխին մէջընները նոր գրուած թիւներ չեն, այլ անոնց բոլորը նախապէս հրատարակած գիրքերուս «Յառաջաբան» եւ «Վերջաբան-խորհրդածուծ թիւներ»-էն առնուած են: Իսկ երկրորդ գլուխին մէջը գրուած թիւները հոգեւոր կեանքի զանազան նիւթերու մասին նոր խորհրդածուծ թիւներ են: Բոլոր գրուած թիւներուն նպատակը, հոգեւոր կեանքի նկատմամբ, թէ՛ ներկայացընել եւ թէ՛ բաղդատականը ընել է, բոլոր այն ինչ որ փոքր տարիքէս ինծի սորվեցուցած էին եւ այն ինչ որ ես անձնապէս պրպտելով սորվեցայ: Այս երկուքին միջեւ հսկայ տարբերութիւն մը կը թուի գոյութիւն ունենար: Գրութիւններուն մէջ բազմաթիւ կրկնութիւններ գոյութիւն ունին, բոլորն ալ նպատակաւոր են:

Եթէ մարդ գիտնայ, թէ ինք ինչու աշխարհի մէջ ծնած է, այն ատեն ինք ալ առիթը կ'ունենայ, իր երիտասարդութեան տարիքէն սկսեալ, համապատասխան կենցաղ մը կերտել, որպէսզի ծառայէ իր կեանքին բուն նպատակին: Ընդհակառակը մարդ միշտ կը թուի զբաղ ըլլալ դրամը հետապնդելով: Ան կը խորհի թէ դրամը իրեն երջանկութիւն կու տայ: Բայց միշտ կան հարուստ մարդիկ որ ապերջանիկ են եւ կարօտեալներ՝ որոնք երջանիկ են: Հետեւաբար դրամը չի կրնար ըլլալ երջանկութեան պատճառը: Անտարակոյս, կան շատ անձեր, որոնք երբ մատչելի գումարի մը տիրանան ինքզինքնին երջանիկ կը զգան: Բայց դրամը ամենեւին մնայուն երջանկութիւն չի տար: Մնայուն երջանկութիւնը միայն կարելի է Աստուածային օրհնութեամբ: Ամէն մի անձի համար երջանկութեան պատճառը տարբեր կը թուի ըլլալ: Անտարակոյս, դրամը անհրաժեշտ է այս աշխարհի մէջ ապրելու

Համար: Դրամը լաւ նպատակներու օգտագործելու համար է: Ան մարդուն աշխատութեան վաստակն է: Բայց մարդ պէտք չէ դրամին համար աշխատի, այլ իր պարտականութիւնը կատարած ըլլալու համար: Եթէ ինք լաւագոյնս գործած է դրամն ալ կու գայ: Անտարակոյս դրամը մարդը բարգաւաճ վիճակի մը կը բերէ, բայց ան միանգամայն կը յառաջացնէ յոխորտանք եւ ազահուստութիւն: Ան կարող չէ մտային խաղաղութիւն տալ: Երբ մարդ դրամը կը հետապնդէ ինք ստեղծած կ'ըլլայ կուռք մը, որ ինք զայն կը պաշտէ: Միթէ չէ՞ գրուած.

«Մի եղեցին լեզ ասորւածի բաց յինէն:

Միարացեալ որ լեզ կուռս, ...» (Ելից Ի:3-4)

«Ինձմէ գատ ուրիշ աստուածներ մի՛ ունենար: Ո՛չ մէկ կուռք շինէ դուն քեզի, ...»:

Այո՛, դրամը կարող է անձին տնտեսական վիճակը բարելաւել: Բայց ան կարող չէ անձը իր հոգեւոր կեանքին մէջ յառաջացնել եւ իրեն հոգեկան բարելաւում տալ: Այս վերջինը կարելի է միայն Աստուածպաշտութեամբ, որ ճամբան կը բանայ փրկութեան: Մարդ Աստուած կը պաշտէ իր Աստուածահաճոյ արարքներով, իր կերտած բարձր գիտակցութեամբ ամբարած գիտութեամբ: Մարդ կարող չէ պաշտել ան, որ ինք չի սիրեր: Մարդ կարող չէ սիրել ան, որ ինք չի գիտեր: Հետեւաբար այս գիտութիւնը անհրաժեշտ է: Մարդ դարձեալ Աստուած կը պաշտէ ինքզինք ձերբազատելով աշխարհիկ հետապնդումներէ եւ նա մանաւանդ իր «Ես»-էն, ինչպէս նաեւ Աստուծոյ՝ իր ներքին Քրիստոսին անձնատուր ըլլալով: Աս ալ կարելի է միայն Աստուծոյ վրայ բացարձակ հաւատք ունենալով: Դժբախտաբար շատեր իրենց խաւարամտութիւնը, իրենց յամառութիւնը եւ իրենց եսապաշտութիւնը կը համարեն հաւատք: Ահա՛ աս է մարդուն ողբալի կացութիւնը:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Ա



ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՑ գիրքի յառաջաբանին առևուած

ԿՐՕՆՔԸ ՈՒ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Յարմար կը նկատեմ յառաջաբանը սկսիլ հետեւեալ պատմութեամբ:

ԿՐԱԿԸ

Աշխարհի հեռաւոր մէկ անկիւնը կղզի մը կար: Մի քանի հարիւր տարի առաջ, այս կղզիին չորս տարբեր կողմերը չորս զատ ցեղեր կ'ապրէին՝ իրարմէ անջատ, առանց իրարու հետ կապ ունենալու: Որքան ալ ուշ եղած ըլլար, կրակը այս կղզիի բնակիչներուն ալ յայտնուած էր:

Օր մը մարդաբանութեան մասնագէտ մը ուսումնասիրութեան համար իր աշակերտներուն հետ միասին ճամբորդութիւն մը կը կազմակերպէ դէպի այդ կղզին: Երկար եւ դժուար նաւու ճամբորդութենէ մը յետոյ վերջապէս կղզի կը հասնին:

Կը հանդիպին առաջին ցեղին եւ մի քանի օր իրենց մօտ կը մնան: Կը նշմարեն որ կրակէն միայն շամանները (անոնց կրօնքի քահանաները) կ'օգտուին: Ընդհանուր կարծիքը այն էր թէ կրակը Աստուծոյ կողմէ տրուած էր իբր սուրբ նուէր՝ միայն շամաններու գործածութեան համար: Շամանները խորոված միս եւ տաք կերակուր կ'ուտէին եւ կը տաքնային, բայց պարզ ժողովուրդը պաղէն կը թողար եւ հում միս կ'ուտէր:

Երբ մեկնելու ժամանակ կը հասնի, աշակերտներէն մին կը փափաքի հոն մնալ եւ բոլորին կրակը գործածելու հնարաւորութիւնը սորվեցնել: Միւսերը կը մեկնին եւ կը հասնին

երկրորդ ցեղին գիւղը: Այս գիւղին բնակիչները նաեւ գիտէին կրակի մասին եւ զայն կը համարէին որպէս աստուածային ոյժ: Անոնք կը պաշտէին ամէն ինչ որ պիտոյ էր կրակ վառելու համար, բայց կրակ չէին վառեր եւ օգտագործուիլ անկէ: Երբ մեկնելու ժամանակ կը հասնի, ուրիշ աշակերտ մը կը փափաքի հոն մնալ եւ անոնց սորվեցնել կրակէն օգտուելու կերպերը:

Մնացեալ խումբը կը մեկնի եւ կը հասնի երրորդ ցեղին գիւղը: Անոնք, կրակը իրենց բերող մարդուն արձանները շինած եւ ամէն տեղ զետեղած էին: Ժողովուրդը այդ արձանները կը պաշտէր: Հին ժամանակներուն անոնք որոշեր են թէ կրակը բերողը աստուած պէտք է ըլլար եւ զայն սկսեր են պաշտել: Բայց իրենք բնաւ չեն փորձեր կրակ վառել: Աշակերտներէն մին ալ կ'որոշէ հոն մնալ անոնց կրակի մասին սորվեցնելու նպատակաւ: Խումբին մնացեալ անդամները կը մեկնին եւ կը հասնին չորրորդ ցեղին գիւղը: Այս ցեղին անդամներն ալ կրակ չէին վառեր բայց կրակի մասին խեղաթիւրուած շատ մը տուեալներու կը հաւատային: Կրակը կը պաշտէին իբր աստուած: Մարդ չէր գիտեր կրակ վառել, բայց անոր զօրութեան մասին բազմաթիւ պատմութիւններ կը պատմէին: Աշակերտ մըն ալ հոն կը մնայ, նման իր միւս երեք ընկերներու առաքելութեամբ:

Խումբին մնացեալ անդամները կղզիին մէջ մի քանի օր եւս պտըտելէ յետոյ կը վերադառնան ետին թողած չորս աշակերտները առնելով իրենց եկած նաւով մեկնելու

համար:

Առաջին գիւղը մնացող աշակերտը երբ կը սկսի բացատրութիւններ տալ, շամանները զինք կ'ամբաստանեն: Ժողովուրդը փոխանակ օտարականին տեղեկացուցած իրողութիւններուն հաւատք ընծայելու, նախընտրած է իր շամաններուն հաւատալ եւ աշակերտը բռնած եւ զայն այրելով մեռցուցած է:

Երկրորդ գիւղի ժողովուրդը երբ կը տեսնէ որ աշակերտը իրենց պաշտած գործիքները գործածելով կրակ կը վառէ, կարծելով թէ կրնան պատժուիլ, վախցած եւ աշակերտը անմիջապէս մեռցուցած են:

Երրորդ գիւղին աշակերտը երբ «մարդու արձանը պաշտել սխալ է» ըսած է, զինք տեղւոյն վրայ, անմիջապէս սպաննած են:

Չորրորդ գիւղին մէջ ալ երբ աշակերտը սկսած է կրակին ինչ ըլլալը բացատրել, անմիջապէս սպաննուած է:

Մնացեալ աշակերտները իրենց ուսուցիչով նաև կը վերադառնան եւ ծով կը բացուին: Ծամբորդութեան ընթացքին ուսուցիչը այս պտոյտին վերջաւորութիւնը հետեւեալ ձևով կ'եզրակացնէ.

«Սորվեցնել, սորվելէն եւ գիտնալէն շատ աւելի դժուար է: Անոնց, որոնք գիտնալ չեն ուզեր, սորվեցնել ամենէն դժուարն է: Տգէտները միայն իրենց գիտելիքներուն կը հաւատան եւ կ'ընդդիմադրեն նոր գիտութիւններուն: Անոնք միշտ խռոված հոգեբանութեան մը մէջ են, որով կ'ատեն գիտցողները: Զանոնք կ'այրեն եւ կը մեռցնեն:»

*

Կրօնքի եւ փիլիսոփայական նիւթերու շուրջ գրել, այդ ալ առանց հակակշիռը կորսնցնելու, դժուար է: Գրութեանս նպատակը համոզել է, այլ կարծիքի արտայայտութիւն մըն է, որպէսզի ընթերցողին մտքին մէջ հարցումներ ծագին ու ան յանգի իր եզրակացութիւններուն:

Համոզել շատ խնդրական հարց մըն է, քանի որ կան բազմաթիւ կրօնքներ, յարանուանութիւններ, հաւատքներ, որոնք պատրաստ են անմիջապէս քննադատելու: Զանազան «կրօնքներու» ներկայացուցած հաւատալիքներու հետեւանք անձը ընդհանրապէս ինքզինք կը հեռացնէ ճշմարտութենէն: Իր կեանքի առաքելութեան հաւատարիմ հաւատացեալը միշտ ճշմարտութիւնը կը փնտռէ, բայց անհատին «Ես»ը՝ «սատանան», հաստատել կուտայ հիմնարկութիւն մը, որ իբրեւ թէ անձին փորձառութիւններէն ծնունդ կ'առնէ, զայն կը պաշտօնականացնէ, դնել կուտայ օրէնքներ եւ կը ստեղծէ սովորութիւններ: Հիմնարկները ունին իրենց առաքինութիւնները եւ արժանիքները, բայց նաեւ՝ իրենց թերութիւնները եւ յանցանքները:

Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կը գոհանայ այն բոլոր տուեալներով, որոնք իրեն ըսուած են իր փոքր տարիքէն ի վեր: Հետեւեալ իրողութիւնը կը պարզէ մարդուս ներկայ վիճակը.

«Երբ փիղի ձագ մը իր մէկ ոտքէն շլթայուի, ան չի կրնար որոշ շրջանակէ մը դուրս ելլել: Մեծնալէ յետոյ, եթէ նոյնիսկ ոտքէն բարակ չուանով մը կապուի, չուանին արտօնած հեռաւորութենէն աւելի չերթար»:

Նոյնպէս, մեր մանկութեան, մեզի տրուած մտային շղթաները, մեր այսօրուայ չուաններն են, որոնք արգելք կը հանդիսանան մեր հոգեկան յառաջդիմութեան:

Իսկ եթէ քիչ մը աւելին գիտնանք կամ հասկնանք, այն ատեն ալ «Ես»ին ազդեցութեան տակ, կը կարծենք թէ ամէն ինչ գիտենք:

Եթէ նոյնիսկ այս օրերուս, գիտութեան եւ իմաստութեան համար ծարաւը ընդհանուր առմամբ կը նուազի, մեզի կը վիճակի գոնէ հաւատարմօրէն, նուիրումով եւ լի ու լի կատարել մեր բոլոր պարտականութիւնները: Այն ատեն մեր կեանքերը կ'ըլլան փոփոխութիւն յառաջ բերող զօրութիւններ: Անհատին մէջ յաղթանակողը պէտք է ըլլայ տրամաբանութիւնը եւ ոչ թէ զգացականը: Գործունէութիւնները պէտք է կատարուին սիրով եւ ոչ թէ զայրոյթով: Մեր կեանքին ցանկութիւնը պէտք է ըլլայ ժամանակը՝ այսինքն երկար ապրելու ցանկութիւնը, այլ պէտք է ըլլայ վեհ անձնաւորութեան մը կերտումը: Ամէն անձ իր կեանքի վերջամտութիւն պիտի անդրադառնայ այս իրողութեան, նաեւ իր գործած սխալին, բայց աւա՛ղ շատ ուշ:

Ինչո՞ւ հիմա չըլլայ այդ անդրադարձը:

Կրօնքը եւ հոգեւորութիւնը (spirituality) իրարու հակասական չեն, նոյնիսկ կրօնքը կ'օգնէ որ հոգեւոր կեանք կերտենք: Այն անձերը, որոնք որոշ հոգեւոր յառաջացում կ'ունենան, ոչ թէ կրօնքին կը հակառակին, այլ զայն կ'ապրին: Հոս յարմար է յիշել Յիսուսի խօսքը.

«Մի Համարիչ է՞լ ելի եկի լուծանել զօրէնս»

կամ զմարգարէս. ոչ էլի լուծանել այլ

լնո՛ւ:» (Մատթէոս Ե:17)

«Մի կարծէք թէ ես եկայ օրէնքը կամ մարգարէները աւրելու: Աւրելու չեկայ, հապա՛ կատարելու:»:

Այս անձերուն համար կրօնքը կ'ըլլայ ներքին, մտքի բարոյական եւ հոգեկան գաղափար մը, հայեացք մը եւ կեցուածք մը, առանց ծէսերու եւ արտաքին զօրավիզ-

ներու: Պահպանողական դասը, իրողութեան, նամանականդ գիտութեան վերջի տուեալներուն անգիտակից, միշտ քննադատող եղած է եւ կարծէք հակառակ եւ թշնամի գիտութեան:

Պարտ ենք նուազեցնել «Ես»ին բռնապետութիւնը: Իմացականութիւնը եւ տրամաբանութիւնը լաւ եւ օգտակար են, բայց ձշմարտութիւնը հասկնալու եւ ըմբռնելու համար ասոնց կարողութիւնն ալ սահմանափակ է: Մարդ իր այս սահմանափակ կարողութիւններն ալ կը սպառէ անիմաստ հատուածական եւ փուճ վիճաբանութիւններով, նոյնիսկ կռիւներով, փոխանակ գնահատելու անձայն տիեզերական փայլը, փառքը ու փառաւորութիւնը, որ կ'արտայայտէ Յաւիտեանս յաւիտենիցը: Կ'ապրի որպէս խեղճ, անօգ եւ կարողութենէ զուրկ անձ մը: Երանի միայն կարենայ անդրադառնալ, թէ այդ տիեզերքի լուծեան մէջէն Աստուծոյ կանչը մեզ կը հրաւիրէ, գոնէ վաղանցիկօրէն, այդ ձշմարտութեան լոյսի փորձառութիւնը ունենալու: Բայց աւա՛ղ մարդ միշտ անտեսած է այդ կանչը: Մերժելով այդ լոյսը, երանութեան տեղ նախընտրած կ'ըլլայ դժբախտութիւնը եւ վիշտը:

Յաւալին այն է, որ վերջին 40-50 տարուայ ընթացքին հիմնարկութիւնը կամաց կամաց կը քանդէ մակերեսային իրողութիւնը, որ պահած ու պաշտպանած էր դարերով: Ծէսերը, որ կը ներկայացնեն անհասանելի խորհուրդներու ճշմարտութիւնը, այլեւս լիովին չեն կատարուիր, հետեւաբար կորսնցուցած են իրենց զօրութիւնը: Ըշմարտութիւնը հոս ու հոն փնտռելու պէտք չունինք, ան մեր մէջն է եւ մեր հաւատքն է:

Ձշմարիտ հաւատքը աւելի հարցում կը բերէ քան թէ պատասխան կամ լուծում: Պատասխանը ժամանակի ընթացքին կու գայ, իր հետ բերելով բազմաթիւ նոր

հարցումներ: Շատ աւելի խոր հաւատք ունի կասկած ու տարակոյս ունեցող ուղղամիտ եւ համարձակ անձ մը, քան թէ ան, որ կոյր զկուրայն կը հետեւի դաւանանքի մը: Պարտինք միշտ յարգել մեր համոզումներուն ճշմարտութիւնը եւ ուրիշներու համոզումներուն խորհուրդը (mystery): Ոչ թէ պատասխանները, այլ հարցումները մեզ պիտի առաջնորդեն դէպի «Խորհուրդ խորին»-ին: Ճշմարտութիւնը շօշափելի բան մը չէ, այլ իրողութեան եւ խորհուրդներու միջեւ եղած յարաբերութիւնն է: Հաւատալը (belief) կամ համոզումը վերջակէտ մը չէ, այլ ճանապարհին միայն սկիզբը: Մարդ այս կացութենէն անգիտակից, պատրանքային խաբէական երեւոյթի մը մէջ կ'ապրի: Միշտ կարելիութիւնը ունի ընտրելու գիտութեան (knowledge) ճամբան, բայց յաճախ կը նախընտրէ պատրանքը, որովհետեւ անոր վարժ է եւ զայն կը համարէ ապահովութիւն:

Տարբեր ժամանակներու եւ մշակոյթներու մէջ ճշմարտութեան փորձառութիւններն ալ եղած են իրարմէ տարբեր: Երբ ապագայ սերունդներ, յետագարձ ակնարկով մեր ժամանակները քննեն, մեզ պիտի համարեն նախնական եւ յետամնաց: Քանի որ այս շրջանի նոյնիսկ գիտուններն ու փիլիսոփաները, նաեւ մարգարէներն եւ յատակատեսերը կորսուած են երկու ծայրայեղութիւններու միջեւ՝ անցած եւ անհետացած անցեալի ու գոյութիւն չունեցող եւ անծանօթ ապագայի: Նախընտրելին պիտի ըլլայ կեդրոնանալ ներկային վրայ, որ գոյութիւն ունեցող միակ ճշմարտութիւնն է:

Ընդհանուր առմամբ մեր կեանքը դասաւորելու, ապրուստը ապահովելու եւ մեր պէտքերը հոգալու համար կը սպառենք մեր ժամերը, հնարքները եւ զօրութիւնը: Ոչ զօրութիւն, ոչ ժամանակ եւ ոչ ալ փափաք կը մնայ հոգեւոր գիտութեան զարգացման

համար: Քիչ անձեր կը փորձեն, բայց չեն յարատեւեր: Կը նախընտրեն հետեւիլ որոշ տուեալ հաւատալիքներու, որովհետեւ աւելի դիւրին է պատասխանատուութիւնը բեռցնել ուրիշ անձերուն՝ «մասնագէտներու» ուսերուն վրայ, որպէսզի անոնք մեզի տան այդ հաւատալիքները: Ձայնասփիւռը եւ հեռատեսիլը սկզբունք եւ հաւատք տարածելու ազդու միջոցներ են եւ կը գործածուին ամբոյններու միտքերը պնդորոշելու՝ որոշ ուղղութեամբ: Բայց, եթէ այս միջոցը սխալ անձերու ձեռք ըլլայ, այն ատեն կոյրը կ'առաջնորդէ կոյրը:

Աւանդութիւնները մեզի կը բերեն դարերու փորձառութիւններ: Յանուն բնապաշտութեան եւ հնարչութեան պէտք չէ անտեսել աւանդութիւնները: Հաւատալ միայն անձնական կարծիքի՝ թէ ինչ ճիշդ է ու բարի, կամ ինչ սխալ է ու մեղք, առանց յենելու դարերու աւանդութեան պարզեւած բարոյագիտական տուեալներու, ինքնահաւանութիւն է, սխալ ու վտանգաւոր: Միանգամայն կարեւոր է ունենալ անձնական փորձառութիւններ եւ անոնց համաձայն ապրիլ: Բայց դժուար է, քանի որ շատ մը հարցումներ ի մտի կուգան եւ նաեւ ուրիշներու նախատինքին կ'ենթարկուինք: Միայն աւանդութեան տուեալներով ապրիլ կը թուի աւելի դիւրին ըլլալ, քանի որ ոչ ջանք թափելու, ոչ ալ որոշում առնելու պէտքը կը զգանք, նաեւ վայելելով ուրիշներու հաւանութիւնը եւ վաւերացումը: Բայց ո՞րն է լաւագոյնը:

Կիլիկեան թագաւորութեան շրջանի աստուածաբան Ներսէս Լամբրոնացին (1153-1198) գրած է. «գիտութեան հետապնդումը Աստուածասիրութիւն է»: Այս գիրքին նպատակը հաշտեցնել է աւանդութիւնը անձնական փորձառութեան հետ, անձնական փորձառութիւնը՝ գիտութեան հետ եւ գիտութիւնն ալ՝ աւանդութեան հետ: Գտնել երեքին հասարակ տեսանկիւնը: Աւանդու-

Թիւնները մեկնաբանել առանց գիտութեան օրէնքներու խախտումի եւ շեշտել անձնական փորձառութեան կարեւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը հաւատարիմ Յիսուսի խօսքին.

«...Ամէն ամէն ասեմ յեւ, ինչ որ
Հաւատարայն յիս, պարթա պոր ես Գործեմ,
է- նա Գործեացէ, է- մեծամեծա է-ս շան
պնոյնս Գործեացէ. ...» (Յովհաննոս ժ.Գ:12)

« ... Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ «ան որ ինձի
կը հաւատայ, այն գործերը որոնք ես կը գործեմ, ինք
ալ պիտի գործէ. եւ անոնցմէ աւելի մեծ գործեր պիտի
գործէ» ...»:

* * *





Դրամը օգրակար է դեղ գնելու համար,
Քայց չի կրնար առողջութիւն պալ:

Դրամով կարող ես կակուղ թարձ մը գնել,
Քայց ոչ խոն բերել:

Դրամով կարելի է թիզիվական հանգիստ
Գրնել,

Քայց ոչ հաւիտենական երանութիւն:

Դրամով կարելի է շաք սարդեր գնել,
Քայց ոչ գեղեցկութիւն:

Դրամով կարելի է հեռանայն գնել,
Քայց ոչ բնական լսողութիւն:

Ձգտիր գերագոյն գանձին՝ իմաստութեան,
Ամէն ինչի կը պիտանաս:

ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ գիրքի վերջաբանին առնուած

ՄԱՐԴԸ, ԿՐՕՆՔԸ ՈՒ ԵԿԵՂԵՅԻՆ

«Հոն ուր արժէքը կը նուազի, արժէքին բարձրութիւնը ցոյց տուող ածականները կը բազմանան:»

Վերոյիշեալ ասացուածքը իրողութիւն մը կը ներկայացնէ: Երբ տարիներ առաջ հիւանդանոց բժշկութեան սկսայ, հիւանդանոցը կը կառավարուէր մայրապետներու կողմէ: Ամէն ինչ լաւ կ'ընթանար, առանց յայտարարելու որեւէ մարդասիրական լոզունգներ, որոնք արդէն լիովին կը գործադրուէին:

Երբ մայրապետները քաշուեցան եւ կառավարութիւնը ղեկավարութիւնը ձեռք առաւ, կարճ ժամանակէ մը յետոյ, սկսան հիւանդանոցի մուտքին պատերուն վրայ հիւանդանոցի առաքելութիւնը եւ մարդասիրական բոլոր օրէնքները մատնանշող յայտարարութիւններ գետեղել, որոնք պէտք էր կատարուէին: Հեզնականը այն է որ անոնք այլեւս լիովին չէին գործադրուէր: Երբ մայրապետներու օրով կը գործադրուէին, անոնց մասին չէր խօսուեր, բայց յետոյ երբ չէր կատարուեր, ամենուրէք կը խօսուէր: Նախապէս ուշադրութեան կեդրոնը հիւանդն էր, իսկ ետքը՝ նիւթականը:

Հոգեկան ճամբորդութեան ընթացքին ալ անոնք, որոնք իսկական հոգեկան գետնի վրայ յառաջացում կ'ունենան, լուռ կը մնան եւ այդ մասին չեն արտայայտուիր: Անոնք կը ճանչցուին իրենց գործերէն: Ասոնց հակապատկերն են անոնք, որոնք ասդին ու անդին կը յայտարարեն թէ «փրկուած» են կամ «վերստին ծնունդ» ունեցած: Ասոնք կը նմանին պարապ տակառի, որ վասն ոչինչի, շատ աղմուկ կը հանէ: Իսկական փրկութիւնը այս կեանքի ընթացքին

Քրիստոս ի յայտ բերել է, մեր ճշմարիտ էութիւնը՝ մեր հոգեկան «մարմին»ը գտնել է: Այս ուղղութեամբ «գիտնալը» հետեւանք չէ որոշ տուեալներու ամբարումով գիտութեան աւելացումը, կամ իմացականութեան տրամաբանութեամբ հասկնալը: Այս վերջինները ընդհանրապէս արգելք կը հանդիսանան այն «գիտնալուն», որ ինքնաբերաբար կը յայտնուի՝ առանց խորհելու: Անձը ինքզինք կը ճանչնայ ոչ այնպէս որ ինք կ'ուզէ ըլլալ, այլ այնպէս ինչպէս որ է: Ինքնաճանաչման համար քիչ մը ջանք անօգուտ է, պէտք է անձը լրիւ փոխուի, ապա թէ ոչ նախընտրելի է որ բնաւ չփոխուի: Այդ փոխուելը ինքնապատրաստութիւնն է: Բոլորս ալ կը փափաքինք «երկինք երթալ»: Այս փափաքը ծնունդ կ'առնէ միտքէն եւ խորհուրդներէն: Փափաքը պէտք է սրտէն բխի եւ ոչ միտքէն: Ճիշդ ասոր համար սէրը անհրաժեշտ է: Սիրտի փափաքը կ'ըլլայ անձին էութեան յայտնութեան իրականացումը: Այս իրականացումը անձին կու տայ զօրութիւն մը, որ ոչինչ կրնայ զայն փճացնել: Այս «գիտնալուն» իմաստը դժուար է ըմբռնել, իսկ խորհուրդին եւ մտքին տուած իմաստը շատ յստակ եւ ըմբռնելի է: Հաւատքը կարելի է մէկ կու մը փոխանցել: Ան խորհուրդներէ ալ յառաջ չի գար, այլ կը բխի ուղղակի հոգիէն ստացուած գիտութենէ եւ գիտակցութենէ: Խորհիլ, գիտնալ եւ գիտակցութիւն իրարմէ շատ տարբեր հասկացողութիւններ են:

Կան մի քանի հիմնական իրողութիւններ եւ ճշմարտութիւններ, որոնք անխախտելի են.

- ա- Աստուած խորութիւն չ'ըներ եւ արդար է
- բ- Աստուած սէր է
- գ- Աստուած ամէն տեղ է
- դ- Աստուած ամենակարող է
- ե- Աստուած ամենագէտ է

Եթէ այս տուեալներուն կը հաւատանք, անկարելի է որ

ոեւէ մէկը ատենք: Քանի որ Աստուած ամէն տեղ է, ուրեմն ամէն անձի մէջ ալ է՝ անկապակից անոր պատկանած կրօնքէն՝ Քրիստոնեայ, Մովսիսական, Մահմէտական, Հնդկական, Պոլստոյական...: Եթէ Աստուած արտօնէ որ անձ մը կրօնքի մը մէջ ծնի, որ ըստ ուրիշ կրօնքներու դատապարտուած ըլլայ «դժոխք երթալու», խտրութիւն ըրած կ'ըլլայ: Քանի որ Աստուած կրօնքներու միջեւ խտրութիւն չի դներ, ուրեմն որեւէ կրօնք իրեն համար ընդունելի է: Հետեւաբար հարկ չկայ որեւէ մէկը կրօնափոխութեան մղելու: Յիսուս ալ կրօնքներու միջեւ խտրութիւն չդրաւ: Ինք սամարացիին հետ ալ նստեցաւ եւ խօսեցաւ, հռովմայեցիին համար ալ ըսաւ թէ բոլոր Իսրայէլի մէջ ամենաշատ հաւատք ունեցող անձն է: Աշակերտներուն պատուիրեց փրկութեան ճամբան քարոզել այն օրուայ «հեթանոսներուն», այսինքն անոնց, որոնք Մովսիսական կրօնքէն չէին: Մենք ինչո՞ւ խտրութիւն կը դնենք:

Մարդիկ կը նմանին մեքենայի մը, շատ բարդ մեքենայի մը: Մարդ կարող է հասկնալ եւ պատշաճ կերպով գործածել նոյնիսկ ամենաբարդ մեքենան, բայց անկարող է հասկնալ իր մեքենան՝ իր Անձը: Կապրինք մեքենայի մը նման՝ համաձայն որոշ տուեալներու, ինչպէս պարզ մեքենայ մըն ալ կը գործէ համաձայն որոշ տուեալներու: Զարմանալիօրէն կը գոհանանք նման կեանք մը ապրելով: Խաբեբայութիւնը, նենգութիւնը եւ տգիտութիւնը թէ՛ ասոր պատճառն են եւ թէ հետեւանքը: Նոյնիսկ այսօրուայ բժշկութիւնը, որ յառաջդիմած կը համարենք, կը համապատասխանէ այս «մեքենայ»ին նկատմամբ մեր ունեցած տգիտութեան մակարդակին: Մարդ աշխարհի վրայ մեքենայի պէս կը գործէ եւ կ'ապրի անգիտակից իր ըրածէն:

Հայաստանեայց Եկեղեցին անգուգական Եկեղեցի մըն է: Անոր ծէսերուն մէջ պահուած ու պահպանուած բազմաթիւ հոգեկան ճշմարտութիւններ կան, որ աւա՛ղ ալ յլեւս ոչ կը տեսնենք, ոչ ալ կը հասկնանք:

Երբ հիւանդ մը իր նեղութեան եւ ցաւին ճար մը գտնելու համար բժիշկին կը ներկայանայ, որոշ դարմանում մը չթելադրուած հարկ է նախ ախտաճանաչութիւնը կատարել: Ախտաճանաչումը որոշելու համար բժիշկը հարցումներ կը հարցնէ, կ'որոշէ ախտանիշերը եւ հիւանդը քննելէ ետք կը հասնի եզրակացութեան մը: Ասոր վրայ կ'որոշուի դարմանումը:

Նոյն մօտեցումով քննած եմ նաեւ իմ «Հոգևոյ ծննդավայրը»՝ սիրելի Եկեղեցիս եւ անոր ներկայ վիճակը: Այս ուղղութեամբ ես մասնագէտ չեմ, բայց պէտք չկայ մասնագէտ ըլլալու: Ամենուն յայտնի է, թէ ան հիւանդ է: Ան ապրեցաւ մօտաւորապէս 1650 տարիներ՝ շատ առողջ, հակառակ հազարումէկ համաճարակներու, որոնք սպառնացին իր կեանքին: Զարմանալիօրէն վերջին 60 տարուայ ընթացքին ան տկարացած է: Արդեօ՞ք շատ ծերացաւ: Չեմ կարծեր: Հարցուփորձիս եւ քննութեանս արդիւնք ի յայտ եկան հետեւեալ ախտանիշերը եւ կը թուի թէ ասոնք ըլլան իր տկարութեան նշանները.

ա- Հայաստանեայց Եկեղեցին ունի երկու գլուխ: Արդեօք աս ի՞նչի նշան է:

բ-Ժամերգութիւնները լիովին չեն կատարուիր: Ինչպէս նաեւ Ս. Պատարագը եւ Եկեղեցւոյ Խորհուրդները (sacraments) կը կրճատուին: Նոր սերունդը լուր անգամ չունի թէ ինչ են աւանդական արարողութիւնները: Ոչ սորվեցնող կայ եւ ոչ ալ սորվող: Նոյնիակ աւելի կարճ նոր «Մաշտոց» մը հրատարակուած է:

գ- Խորհուրդները իրենց գօրութիւնները կորսըն-

ցուցած են, որովհետեւ ծէսերը լիովին չեն կատարուելիք: Նոյնիսկ «Խոստովանանք»ը լրիւ չըսուելիք: Արդեօք առնուած հաղորդութիւնը իմաստալից կ'ըլլա՞յ:

դ- Կիրակի օրուայ պատարագներուն, եկեղեցիներու մէջ, ընդհանուր առմամբ, հաւատացեալներու ներկայութիւնը շատ քիչ է, իսկ առաւօտեան կրճատուած ժամերգութիւններու ընթացքին եկեղեցին գրեթէ պարապ է: Երբ քաղաքի մը հայ բնակչութիւնը երեսուն հազար է, երեսուն հոգին աննշան ներկայութիւն մըն է: Եթէ նոյնիսկ ներկայութիւնը երեք հարիւր հոգի ըլլայ, ատիկա ժողովուրդին միայն մէկ առ հարիւրն է: Միթէ պէտք չէ՞ խորհինք թէ այս լուրջ ախտանիշ մըն է: Արդեօք ժողովուրդը չի գար, որովհետեւ խորհուրդները իրենց գօրութիւնը կորսնցուցած են:

ե- Խորհուրդները (mystery) նաեւ դադրած են խորհուրդ ըլլալէ, քանի որ զանոնք հասկնալի ընելու համար եկեղեցւոյ գրաբար լեզուն փոխուած է աշխարհաբարի: Լեզուն աշխարհաբարի փոխուելով արդեօք ոեւէ մէկը յաւելեալ հասկացողութեան մը հասած է: Ան որ «հասկնալի» է խորհուրդ ըլլալէ կը դադրի: Մարդ արարած Աստուած հասկնալու կարողութիւնը չունի, ուրեմն պէտք չէ անիմաստ կերպով խաբենք ժողովուրդը, լեզուն աշխարհաբարի դարձնելով թէ Զայն հասկնալի պիտի ընենք: Շատ աւելի լաւ կ'ըլլայ եթէ խորհուրդը առանց խանգարելու իբր խորհուրդ պահուի: Զարմանալի է, թէ Ս. Պատարագը տակաւին ինչո՞ւ «Խորհուրդ Խորին»ով կը սկսի: Հաւանաբար տակաւին քիչ մը խորհուրդ մնացած ըլլալու է: Երջանկայիշատակ Գարեգին Ա. Վեհափառ Հայրապետի վերջին Թորոնթօ այցելութեան, Նորին Սրբութեան հետ խօսելու կարճ առիթ մը ունեցայ: Այդ տեսութեան ընթացքին ի յայտ եկաւ, թէ Վեհափառն ալ աշխարհաբարին ծիսակատար-

ընթացիկներէ ներս գործածութեան համամիտ չէր:
Աստուած հոգին լուսաւորէ:

Ինչո՞ւ գրաբար եւ ոչ աշխարհաբար:

Ամէն լեզու ընդհանուր առմամբ, ժամանակի ընթացքին փոփոխութեան կ'ենթարկուի, որովհետեւ բոլորն ալ կատարեալ չեն: Բառերու իմաստները կը փոխուին՝ ի պատշաճի, նոյնիսկ մեր լեզուին երկու տարբեր բարբառներուն՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մէջ նոյն բառը տարբեր իմաստներ ունին: Օրինակի համար եթէ «Պանդոկ գացի» ըսեմ, արեւմտահայը կը հասկնայ թէ «hotel» գացի, իսկ արեւելահայը կը խորհի թէ հանրատուն «brothel» գացի:

Գրուածներուն իմաստն ալ, ժամանակի ընթացքին, կարդացողին կողմէ տարբեր կերպով կը հասկցուի:

Գրաբարի բառերուն ստուգաբանութիւնը եւ հոլովաբանութիւնը նաեւ ուղղագրութիւնը եւ քերականութիւնը՝ բոլորն ալ անփոփոխ են: Գիրերու ձայնաւորումները կատարեալ են: Գրաբար լեզուն կատարեալ ըլլալուն փոփոխութեան պէտք չունի եւ ենթակայ չէ: Ան վստահելի լեզու մըն է, քանի որ անոր բառերուն իմաստները ժամանակի ընթացքին չեն փոխուիր: Անոր ամէն մէկ տառին ձայնը հիմնուած է որոշ թրթռացումի մը վրայ, գիտակցաբար եւ շատ ճշգրտօրէն: Փառք պէտք է տանք Ս. Մեսրոպ Մաշտոցի հանձարին: Գրաբարը եթէ գիտակցաբար գործածուի, կ'ազդէ անձին: Կը փոխէ անոր միտքը եւ խորհելակերպը: Անոր խորհուրդները կ'ըլլան աւելի գեղեցիկ, ճշգրիտ եւ վստահելի: Ասոնց հետեւանք անձը կը վերանայ: Այդ վերացումը մարդուն կը պարզեւէ երջանկութիւն: Գրաբարը մտիկ ընել, նման երաժշտութեան մը ունկնդրման, հոգեկան բարձրացման առիթ կ'ըլլայ: Այս ազդեցութիւնը կը շարունակէ

նաեւ անձին առօրեայ կեանքին ընթացքին: Գրաբարը կարգ եւ կանոն ունեցող լեզու մըն է: Ինչո՞ւ կ'ըսուի թէ Ս. Գիրքի, մեր այսօր գրաբար կոչած, առաջին հայերէն թարգմանութիւնը՝ թարգմանութիւններու թագուհին է: Թարգմանութեան այդ կատարելութեան պատճառով ալ գիրքիս մէջ Ս. Գիրքէն մէջբերումները գրաբար են: Աշխարհաբարն ալ աւելցուցած եմ, պարզ այն պատճառով որ իմ այս գիրքը ծիսակատարութեան գիրք մը չէ, որով կարեւորը հասկնալի ըլլալն է: Իսկ ծիսակատարութիւնը հասկնալու համար չէ, այլ ապրելու համար է: Բառերը հասկնալ օգուտ չունի, կարեւորը ծիսակատարութեան հոգին հասկնալն է: Երբ մէջբերումներու գրաբարը եւ աշխարհաբարը իրարու հետ բաղդատուին, թարգմանութեան մէջ եղած փոփոխութիւնները եւ տարբերութիւնները երբեմն շատ յստակօրէն յայտնի կ'ըլլան:

Ներկայիս եղած բոլոր կրօնական վէճերը եւ պատերազմները համարներու սխալ հասկացողութեան հետեւանք չե՞ն: Սխալ հասկցուած են որովհետեւ ճշգրիտ չեղող լեզուներով թարգմանուած են՝ փոխելով անոնց իմաստները: Գրաբարը կարող է նաեւ տիեզերքի ներդաշնակութեան ճշմարտութիւնները յայտնել՝ շատ կարճ եւ պարզ ձեւով: Լեզու մըն է, որուն օրէնքները կարելի է հասկնալով սորվիլ, քան թէ գոց սորվիլ: Քերականութիւն մը ունի, որ ճշգրիտ է: Մի քանի տասնամեակներ առաջ ՄԱԿի մէջ առաջարկուած էր, որ Հայերէնը միջազգային լեզու ըլլայ: Արդեօք հայերէնը զատեցին, որովհետեւ գրաբարը կատարեալ լեզու մըն է՞ եւ փոփոխութեան ենթակայ չէ: Միշտ արմատ բառերէն կարելի է նոր բարդ բառեր շինել: Դժբախտաբար հայերէնի տեղ շինցու լեզու մը՝ «էսպերանթօ»ն ստեղծեցին, որ արդէն պատմութեան անցած է: Արդեօք գիտէի՞ք, թէ «NASA»ն կը խորհի

հնդկական Սանսգրիտ լեզուն «NASA»ի միջազգային լեզուն ընել: Սանսգրիտ լեզուն աշխարհի վրայ գրաբարի յատկութիւնները ունեցող միակ լեզուն է: Անգլիացի բանաստեղծ Պայրըն (Lord Byron) հայերէն սորված է եւ զայն ուսումնասիրած: Իր սորված հայերէնը գրաբարն էր: Արդեօք ինչո՞ւ հայերէն սորվեցաւ, հայերը սիրելուն համար, թէ ոչ կատարեալ լեզու մը գտած ըլլալուն համար: Կատարեալին աղօթել կարելի է միա՛յն կատարեալ լեզուով:

զ- Եկեղեցւոյ վարչականներու եւ կղերականներու մտահոգութիւնը կը թուի թէ նիւթականի վրայ է, քան թէ հոգեկանի: Արդեօք մոռցած ե՞ն Յիսուսի տուած օրինակը:

«Հայեցարո՞ւ է ընդ շո՞շանն՝ որպէս ասէ,
ոչ ջանայ՝ եւ ոչ նիւթէ. ասեմ յեւ, եւ ոչ
Սողոմոնն յամենայն՝ ի փառսն իւր պիտե-
ցաւ իբրեւ պի՛ ի նոցանէ:» (Ղուկաս ԺԲ: 27)
«նայեցէք շուշաններուն՝ ի՞նչպէս կ'աճին. ոչ
կ'աշխատին եւ ոչ կը մանեն. բայց ձեզի կ'ըսեմ որ
Սողոմոն ալ իր բոլոր փառաւորութեանը մէջ անոնցմէ
մէկուն պէս չհագուեցաւ:»

Արդեօք կը վախնա՞նք որ նիւթականի պակասի պատճառով Քրիստոս իր եկեղեցին կը լքէ: Բացարձակապէ՛ս: Անշուշտ, եթէ այդ եկեղեցին տակաւին իր ցոյց տուած ճանապարհէն կ'ընթանայ:

Եկեղեցւոյ ներկայ տաքնապալի վիճակին համար կղերականաց դասը մեղադրել եւ ամբաստանել շատ դիւրին է եւ մարդկային: Բայց մեզի չի վիճակիր զիրենք դատել: Աւետարանին մէջ գրուած է.

«Մի՛ դատէ՛ք՝ պի՛ մի՛ դատիցի՛ք:» (Մատթէոս Է: 1)
«Մի՛ դատէք, որպէս զի չդատուիք:»

Ամէն անձ ինքզինք լաւ գիտէ: Որով ամէն կղերական

Թող ինքզինք քննէ, դատէ եւ վերլուծէ, թէ ի՞նչ է իր կղերական ըլլալու նպատակը՝ կոչումը՝ ինքնագոհողութիւն եւ Աստուծոյ ծառայութիւն, թէ ոչ նիւթական վարձատրութիւնը, կամ պաշտօնին տուած փառքը եւ կամ երկուքն ալ: Ըստ իր դատողութեան իրեն կը վիճակի ի պատշաճի հրաժարիլ կամ շարունակել: Եթէ ինքզինք դատէ եւ ճշդէ թէ իր նպատակը նիւթական ապահովութիւնն է, կամ պաշտօնին տուած փառքը քան թէ ինքնագոհողութիւն եւ Աստուծոյ ծառայութիւն եւ տակաւին շարունակէ իր պաշտօնը, պէտք չէ նեղուինք: Ժողովուրդ մը միշտ կ'արժանանայ այն առաջնորդներուն, որոնք յարմար են այդ ժողովուրդին գիտակցութեան մակարդակին: Եթէ կ'ուզենք աստուածավախ եւ աստուածահաճոյ կղերականներ ունենալ, անհրաժեշտ է, որ ամէն մէկ անձ ինքզինք ենթարկէ ինքնաքննութեան եւ պատշաճ փոփոխութեան: Եթէ ժողովուրդէն բաւականաչափ թիւով անձեր կարենան կերտել աւելի վեհ անհատականութիւն մը՝ աւելի բարձր գիտակցութեան մակարդակով, այն ատեն ինքնաբերաբար կղերականները եւ առաջնորդներն ալ կը փոխուին: Անկարելի է փոփոխութիւն տեղի չունենայ:

«Աշխարհի մէջ տեսնել ուզած փոփոխութիւնդ, որուն քու մէջդ պէտք է յառաջ բերես:» (Ամնտի)

է- Ըստ իմ հասկացողութեանս եկեղեցւոյ բոլոր խորհուրդները պէտք է անվճար կատարուին: Այսօր մկրտութիւնը, պսակի խորհուրդը... փոխան բարձր սակերու կը մատակարարուին: Այսօրուայ պայմաններով նոյնիսկ մեռնիլն անգամ պէտք է խորհինք: Այս գնացքով, վստահ եմ, օր պիտի գայ հաղորդութիւնն ալ փոխան վճարումի պիտի տրուի: Եթէ մին վճարովի ըլլայ, միւսը ինչո՞ւ ոչ: Երբ Յիսուս հիւանդները բժշկեց, արդեօք այդ բժշկութիւնները փոխան

վճարումի՞ր կատարեց: Քա՛լ լիցի:

ը- Վերջերս կ'իմանանք, թէ աննախընթաց թիւերով կղերականներ փիլոնագրկուած են: Չէի գիտեր թէ այդքան մեծ թիւով հոգեւորութեան անարժան անձեր կղերական ձեռնադրուած էին: Արդեօք տակաւին քանի՞ անարժաններ կը գործեն որպէս կղերական: Որով պէտք չէ զարմանանք, թէ եկեղեցին հիւանդ է: Թէեւ նոյնիսկ հոգեվարք է:

Թ- Ըստ իմ հասկացողութեան, հիմնուած եկեղեցի մը ամենեւին չի գոցուիր, եթէ իր համայնքը՝ բուն ինքը եկեղեցին, գոյութիւն ունենալէ չէ դադրած: Այսօր ուրախութեամբ ականատես կ'ըլլանք Ս. Պատարագներու, որոնք կը մատուցուին Թուրքիոյ մէջ մօտաւորապէս 100 տարիէ ի վեր գործօն ըլլալէ դադրած մեր եկեղեցիներէն ներս, ինչպէս Ախթամարի Ս. Խաչ Եկեղեցին, նաեւ Տիգրանակերտի Ս. Կիրակոս Եկեղեցին: Բայց, Թորոնթոյի մէջ ականատես եղած եմ հաստատուած Ս. Խաչ Եկեղեցիին, վերին մարմիններու կողմէ խանութ բանալ գոցելու պէս, «գոցուելուն» եւ տեղը, նոյն համայնքին համար, Վարազայ Սուրբ Խաչ անունով ուրիշ եկեղեցիի մը հիմնուելուն եւ անոր ալ, միջոցէ մը յետոյ, փակեալ հռչակուելուն, առանց համայնքին՝ եկեղեցիին անհետանալուն:

Այս օրերուն կ'իմանանք թէ Ֆրանսայի Նիս քաղաքի մօտաւորապէս 85 տարուայ գործօն եկեղեցին ալ վերին իշխանութեան տնօրինութեամբ գործօն ըլլալէ դադրեցուեր է: Երբ եկեղեցւոյ հիմնական եւ անխախտելի օրէնքները կը խախտուին, կը խախտին նաեւ եկեղեցւոյ հիմքերը: Որով զարմանք պէտք չէ պատճառէ, թէ եկեղեցին հիւանդ է:

ժ- Եկեղեցւոյ խորանէն, Պատարագի ընթացքին, Ապրիլ 24ի առթիւ տրուած քարոզներու մէջ իմացած

եմ «գազան, վայրենի, վայրագ»ի նման ածականներ՝ խորանային պատշաճութենէ հեռու արտայայտութիւններ: Ինչ որ զիս մղած է Ապրիլ 24ի հոգեհանգստեան Պատարագներու ներկայ շրջալի:

Միթէ Յիսուս խաչին վրայէն զինք խաչողները անիծե՞ց, անոնց վրայ ածականներ տեղացո՞ւց: Ընդհակառակը զանոնք ներեց եւ անոնց համար աղօթեց. «Հայր ներէ անոնց, չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»: Պահ մը խորհինք: Արդեօք Յիսուս յարութիւն առած պիտի ըլլա՞ր եթէ զանոնք անիծած ըլլար:

Չեմ զարմանար, որ սիրելի եկեղեցիս տկարացած ըլլայ: Տարիներու ընթացքին շատ բան տեսած եմ: Գինիի չգոյութեան օղիով պատարագ մատուցանել: Ս. Պատարագի ընթացքին խորանին ետեւը ծխախոտ ծխել: Ս. Պատարագին խորանին վրայ հայհոյել: Ս. Պատարագի ընթացքին հրեւոյ՝ Ֆիզիքայէս, խորանին վրայէն ուրարակիր վար նետել: Ս. Պատարագի միջոցին «լօթօ»ի՝ բախդախաղի թուղթը սկիհին քով դնել եւ լեցնել:

Բժշկական ուսուցումը մարդկային մարմնոյն հիւանդութիւններուն եւ անոնց բուժման հետ կապակից գիտութեան մը ուսմունքն է: Ախտաճանաչումներ կարենալ կատարելու գիտութիւնն է: Եկեղեցին ալ Քրիստոսի մարմինն է: Այս «մարմին»ին վրայ ախտաճանաչումներ կատարել թէեւ մասնագէտ եպիսկոպոսներու կը վիճակի, սակայն ես, որպէս ախտաճանաչում կատարելու պատրաստուած անձ, կրնամ հասնիլ որոշ եզրակացութիւններու եւ կատարել որոշ դարմանային թելադրութիւններ:

Եկեղեցւոյ «մարմին»ին վրայ մասնագիտութիւն չունենալով, թելադրութիւններս կրնան սխալ ըլլալ, իսկ եթէ ճիշդ են կը կարօտին մասնագէտներուն վաւերացման: Երբեմն ընտանեկան բժիշկներ իրենց

սրտի հիւանդները կ'ուղարկեն՝ իրենց դարմանումի թելադրութիւններով: Երբեմն շատ յարմար երբեմն ալ կարօտ պատշաճ փոփոխութեան:

Մենք նոր զարթօնքի մը պէտք ունինք:

Այս հարցով իմ թելադրութիւններս հետեւեալներն են.

ա- Երկու գլուխը ըլլայ մէկ: Այս հարց մըն է, որ պէտք է լուծուի երկու կաթողիկոսներու միջեւ: Հարցը կը թողում իրենց: Ես հոս կը յիշեմ Յիսուսի խօսքերը.

«... ամէնայն Ռաբա-որո-թի-ն Քաթանեալ
յանջն ի-ր՝ ա-երի. Է- ամէնայն Վաղա՛
կամ Գո-ն Քաթանեալ յանջն ի-ր՝ ոչ
կայցլէ:» (Մաթէոս ԺԲ:25)

«... Ամէն թաղաւորութիւն իրեն մէջ բաժնուած
կ'աւերի. եւ ամէն քաղաք կամ տուն իրեն դէմ
բաժնուած՝ չի կրնար կենալ:»

«Է- Էթէ Գո-ն յանջն ի-ր Քաթանեայի, ոչ

կարէ կալ Գո-նն:» (Մաթէոս Գ: 25)

«Եթէ տուն մը իրեն դէմ բաժնուի, այն տունը չի
կրնար կենալ:»

«... ամէնայն Ռաբա-որո-թի-ն Քաթանեալ
յանջն՝ ա-երի, Է- Գո-ն Քաթանեալ յանջն՝
կորժանի:» (Ղուկաս ԺԼ:17)

«... Ամէն թաղաւորութիւն իրեն դէմ բաժնուած՝
կ'աւերի եւ տուն մը իրեն դէմ բաժնուած՝ կը
կործանի:»

«Որ Քարձրացո-ցանէ զանջն՝ խոնարհեացի,
Է- որ խոնարհեցո-ցանէ զանջն՝

Քարձրացի:» (Մաթէոս ԻԳ:12)

«Ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի. եւ ով
որ իր անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ»

«... այլ որ կամեցի 'ի յեմք մեծ լինել,
եղեցի յեր պաշտօնեայ. ե- որ կամեցի 'ի
յեմք առաջին լինել՝ եղեցի յեր ամենեցո-ն
ժառայ:» (Մարկոս Ժ: 43-44)

«... ձեզմէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ՝ անիկա ձեր
սպասաւորը ըլլայ: Ու ձեզմէ ով որ առաջին ըլլալ
կ'ուզէ, անիկա ամէնուն ծառայ ըլլայ:»

բ- Բոլոր արարողութիւնները պէտք է լիովին
կատարուին, ներառեալ շարահանները եւ մեղեդիները:

գ- Բոլորովին դադրեցնել աշխարհաբարի գործա-
ծութիւնը բոլոր ծիսակատարութիւններէ, ներառեալ
գիրքերու եւ աւետարաններու ընթերցումներէն:

դ- Եկեղեցւոյ նիւթական եւ հոգեւոր մատակա-
րարութեան մէջ պարտականութիւններու յստակ
բաժանում պէտք է ըլլայ: Եկեղեցւոյ նիւթականով
զբաղիլ կը վիճակի միայն ու միայն ընտրեալ
վարչականներու գլխաւորութեամբ կազմուած յանձ-
նախումբերուն: Իսկ եկեղեցւոյ՝ համայնքի հոգեւոր
մատակարարութեամբ զբաղիլ կը վիճակի կղերա-
կանին: Հոգեւորականին առաջին մտահոգութիւնը
պէտք է ըլլայ իր հոգեւոր ինամքին յանձնուած
ժողովուրդին հոգեկան բարձրացումը:

Եկեղեցւոյ Խորհուրդներու մատակարարումը
պէտք է անվճար կատարուի: Վստահ եմ ամէն անձ,
համաձայն իր նիւթական կացութեան, սրտաբուխ
նուիրատուութիւնը կ'ընէ: Ես Կ. Պոլսէն եկած եմ եւ կը
յիշեմ երջանկայիշատակ Գարեգին Խաչատուրեան
Պատրիարքի օրով, եկեղեցիները ոչ անդամատուրք
ունէին, ոչ ալ արարողութեան միջոցին եկեղեցւոյ մէջ
պնակ կը պտըտցուէր: Եկեղեցւոյ արձակումէն յետոյ,
դուրսը, բակին մէջ, ամէն անձ իր սրտաբուխ
նուիրատուութիւնը կ'ընէր: Եկեղեցւոյն նիւթականով

ամենաբարեկիճակ ժամանակը եղած էր:

Ե- Պէտք չէ մոռնանք Ապրիլ 24ը եւ մեր մէկ ու կէս միլիոն նահատակները: Իմ մայրս ալ 12 տարեկանին աքսորուած, բայց ողջ մնալու բարեբախտութիւնը ունեցած էր: Ատելութեամբ, ատելութիւնը յաղթել կարելի չէ, այլ ատելութիւնը միայն ու միայն սէրով կարելի է յաղթել: Ապրիլ 24ին յիշենք մեր նահատակները եւ անոնց համար աղօթենք, բայց աղօթենք նաեւ ցեղասպանութիւնը կատարող մեր անգիտակից եղբայրներուն համար: Մեզ ատողներուն եւ թշնամիներուն փոխան ատելութեան սէր ցոյց տանք: Հոգեհանգստի արարողութեան կից քոնէ աւելցուի աղօթքի կարճ բաժին մը, Աստուծմէ խընդրելով օրհնութիւն մեր ներկայ Թուրք եղբայրներուն համար: Եթէ Աստուած անոնց շնորհէ իր օրհնութիւնները, անոնք ալ կը դադրին մեզի թշնամանալէ:

Այսքան տարուայ հակառակութիւն եւ թշնամութիւն մեզ ո՞ւր հասցուց: Կը հաւատա՞նք Յիսուսի հետեւեալ խօսքին.

«Լուսարոտի ասպէ՛նն զի ասացաւ. «Իրեացեա պընկեր ի՞նչ, եւ արեացեա պըշնամին ի՞նչ: Եյլ ես ասեմ յեզ. «Իրեցէ՛ղ պըշնամին յեր. օրհնեցէ՛ղ պանիճիշս յեր. Բարի արարէ՛ղ արելեաց յերոց. եւ աղօթս ՚ի վերայ այնոցիկ՝ որ լլկէնն զյեզ եւ Ըալաճեն:»

(Մարտէոսի Ե: 43-44)

«Լսեր էք որ ըսուեցաւ. «Քու ընկերդ սիրես ու թշնամիդ ատես»: Բայց ես ձեզի կ'ըսեմ. «Սիրեցէք ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները, բարիք ըրէք անոնց որ ձեզ կ'ատեն եւ աղօթք ըրէք անոնց համար որ ձեզ կը չարչարեն ու կը հալածեն:»

զ- Բոլոր աշխարհին յայտարարել, թէ Հայաստանեայց Եկեղեցին համահաւասար կ'ընդունի եւ կը ճանչնայ բոլոր քրիստոնեայ յարանուանութիւնները եւ այլ կրօնքները՝ անխտիր: Եթէ որեւէ այլ կրօնքի պատկանող անձ մը խնդրէ ստանալ Եկեղեցւոյ Խորհուրդները, տալ առանց խտրութեան եւ այլեւայլի: Մենք՝ հայերս, որպէս աշխարհի վրայ առաջին քրիստոնեայ ազգ՝ 301 թուականին, զմեզ միշտ հպարտ զգացած ենք: Գուցէ շատեր լուր չունին, թէ աշխարհի առաջին եկեղեցին ալ կառուցուած է Հայաստանի մէջ, (այժմ Հայաստանեայց Եկեղեցւոյ Պարսկաստանի Ատրպատական Թեմէն ներս) որ կը կոչուի Թաղէոսի եկեղեցին՝ հիմնուած Թաղէոս առաքեալէ, 68 թուականին: Ան սեւ քարերով շինուած ըլլալուն, օտարներու կողմէ կոչուած է «Գարա Քիլիսէ»: Երկրաշարժի հետեւանք քանդուած է: Ան վերակառուցուած է 1329ին եւ 1810 թուականին ենթարկուած է ընդհանուր նորոգութեան: (տես պատկեր 1) Մինչ այդ, 68-ական թուականներուն, ուրիշ ազգերու քրիստոնեաները քարայրներու խողոչներուն մէջ կը հաւաքուէին: Եթէ կ'ուզենք իսկապէս հպարտանալ, պարտ ենք ըլլալ առաջին ազգ եւ քրիստոնեայ յարանուանութիւնը, որ բոլոր յարանուանութիւնները եւ կրօնքները կ'ընդունի համահաւասար: Ո՛չ, պէտք չէ հպարտ ըլլանք: Հպարտութիւնը կը խաբանէ Ս. Հոգիի զօրութեան ներգործումը: Մարդ պէտք չէ հպարտանայ երբ ճիշդ կը խորհի, կը խօսի եւ կը գործէ: Տարբեր կրօնքները եւ յարանուանու-

ՊԱԿՏԵՐ: 1



Թիւնները համահաւասար չընդունիլ, մարդոց միջեւ խորականութիւն դնել եւ միութեան մէջ բազմազանութիւն տեսնել է, ինչ որ սխալ խորհիլ, խօսիլ ու գործել է, որ պատճառ կ'ըլլայ ամօթ զգալու:

է- Սորվիլ եւ ժողովուրդին սորվեցնել ճշմարիտ փրկութեան ճամբան, այն ճամբան որ Յիսուս ցոյց տուաւ: Համամիտ եմ Կանտիի ըսածին:

Կը սիրեմ՝ ձեր Քրիստոսը, բայց չեմ սիրեր ձեր քրիստոնեաները: Ձեր քրիստոնեաները շատ տարբեր են ձեր Քրիստոսէն:

Ըլլանք մարդկութեան ուղիղ տեսութեան թթիւմոր՝ առանց խտրութեան ամենուրեք սփռել սէր:

Ամէն բանէ առաջ թելադրուած դարմանը պէտք է ընդունուի եւ գործադրուի: Եթէ սխալ է, մասնագէտները պէտք է որոշեն ճիշդ դարմանը:

Մեզմէ կախում ունի Քրիստոսի վերստին գալուստը, որպէսզի այս անգամ ալ Հայաստանէն բոլոր աշխարհին յայտարարենք. «Քրիստոս Յարեալ ի մեռելոց»:



ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ գիրքի վերջաբանին առնուած

ԻՆՉՊԷՍ ԱՍՏՈՒԾՈՅ «ՈՐԴԻՆ» ԸԼԼԱԿ

Ճշմարիտ ինքնաճանաչումը՝ Աստուածայայտնութիւնը շատ դժուար է բոլոր անոնց համար, որ կը հաւատան թէ Աստուած աներեւոյթ գաղափար մըն է: Դժուար է անտեսանելի Աստուծոյ մը գաղափարը ըմբռնել: Բայց անոնք, որոնք իրենց միտքերը «միամտօրէն բայց խորագիտութեամբ» կեդրոնացած Աստուծոյ վրայ, իրենց ամէն մէկ արարքով զԱյն կը պաշտեն, Ան կ'ըլլայ անոնց փրկիչը եւ յաւիտենական կեանքը: Հետեւաբար պարտ ենք մեր միտքերը կեդրոնացնել Իր վրայ: Երբ Ան, մեր կեանքի ընթացքին, անընդհատ մեր զգացումներուն եւ իմացականութեան առարկան կ'ըլլայ, անխուսափելի կ'ըլլայ նաեւ Իր յայտնութիւնը:

Իսկ եթէ անկարող ենք մեր միտքը Իր վրայ կեդրոնացնել, գոնէ պարտ ենք պարզապէս աղօթքով եւ ծիսակատարութեամբ շարունակել անկեղծ պաշտամունքը: Եթէ չկարենանք յաճախ աղօթել եւ պաշտամունքներու մասնակցիլ, գոնէ պարտ ենք մեր բոլոր պարտականութիւնները եւ աշխարհիկ արարքները կատարել որպէս Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւններ: Պարտականութիւնները կատարել առանց եսասիրութեան, բաւական է կատարելին հասնելու:

Իսկ եթէ մեր արարքները չկարենանք կատարել վերեւ յիշուած հայեացքով, գէթ պարտ ենք մեր անձը ձերբազատել անոնց արդիւնքներէն՝ յուզումներէն եւ ուրախութիւններէն, որպէսզի մեր հաւասարակշռութիւնը չկորսնցնենք եւ մեր անդորրութիւնը չխանգարուի եւ խաղաղ միտք կերտելով կարենանք ընդունիլ բոլոր պատահարները:

Գիտութիւնը կը գերազանցէ պարզ ծիսակատարութիւնը: Խոկումը (միտքի կեդրոնացումը) կը գերազանցէ գիտութիւնը: Չսեփականացնել գործքերու արդիւնքները, կը գերազանցէ խոկումը:

Այն անձը, որ չ'ատեր ոեւէ արարած, ընկեր է բոլորին, գութով լի եւ ներողամիտ, առանց եսասիրութեան, միշտ գոհունակութեամբ, խաղաղութեամբ եւ վճռականութեամբ կը բաղձայ Աստուածայայտնութիւնը, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ ուրիշները չի յուզեր եւ ինքն ալ անոնցմէ չի խանգարուիր, ձերբազատած է իր անձը նախանձէ, երկիւղէ, անձկութենէ եւ ցնծութենէ, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ փափաք եւ ցանկութիւններ չունի, սրտով մաքուր է, ինչպէս նաեւ իմաստուն, անկողմնակալ եւ արդար ու իր կեանքի տեւողութեան բոլոր արարքները ցոլացուցած են ճշմարիտ պաշտամունքը, կ'ըլլայ Անոր որդին:

Ան որ ոչ կը տխրի եւ ոչ ալ կ'ուրախանայ, ոչ համակրանք ունի ոչ ալ հակակրանք, կը մերժէ բարիի եւ չարի երկուութեան գաղափարը եւ Աստուած կը պաշտէ անձնատուութեամբ, կ'ըլլայ Անոր որդին:



(ԿԵՆՑԱՂԱԼՈՑՍ - «Փուռնջ՝ քերթուածներու» յառաջաբանէն
առնուած)

«ԳԵՂԵՑԿՈՒԹԵԱՆ» ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆԸ

Միացեալ Նահանգներու նախագահներէն Աբրահամ Լինքոլնին կառավարական պաշտօնի մը համար թեկնածու մը կը ներկայացնեն: Նախագահը թեկնածուին հետ կարճ տեսակցութենէ մը յետոյ, իր խորհրդատուներուն կը տեղեկացնէ, թէ թեկնածուն այդ պաշտօնին համար յարմար չի նկատեր: Խորհրդատուները կ'առարկեն ըսելով, թէ այդ թեկնածուն յանձնարարութիւններ ունեցող, ամենալալ պատրաստուած, պաշտօնին յարմար անձն է: Երբ անոնք իր մերժումին պատճառը կը հարցնեն, նախագահին պատասխանը պարզապէս «Շատ տգեղ է» կ'ըլլայ: Խորհրդատուներէն մին կը յիշեցնէ, թէ եթէ Աստուած մարդը տգեղ ստեղծած է, ատիկա անձին յանցանքը չէ: Նախագահին կտրուկ պատասխանը կ'ըլլայ. «Ամէն անձ, որ քառասունհինգ տարեկանը անցած է, պատասխանատու է իր դէմքին երեւոյթէն»:

Վստահ եմ բոլորս ալ կը ճանչնանք անձեր, որոնք իրենց երիտասարդութեան տգեղ եղած են, բայց տարիքի յառաջացումով իրենց դիմագիծն ալ փոխուած է: Հետզհետէ աւելի գեղեցկացած են: Ուրիշներ ալ, որոնք պզտիկութեան պուպրիկի նման գեղեցիկ երես ունեցած են, տարիներու ընթացքին, օրըստօրէ տգեղցած են: Երբեմն անձ մը կը տեսնենք, որուն դէմքին վրայ անմիջապէս փայլ մը կը նշմարենք ու «Երեսը շնորհք կայ» կ'ըսենք:

Անգլերէն ասացուածքը կ'ըսէ. «Beauty is in the eye of the beholder» (Գեղեցկութիւնը կախեալ է զայն դիտողէն): Գեղեցկութիւնը դէմքի գիծերէն, դիմագիծին համեմատութիւններէն եւ մորթին ողորկութենէն

կախեալ չէ, քանզի կան ծերունիներ՝ կին թէ այր, որոնց մորթը խորշոմած է՝ հազար ու մէկ գիծերով եւ փոսերով, բայց իրենց երեսէն գեղեցկութիւնը կը ցայտայ: Այդ գեղեցկութիւնը որ կը տեսնենք անձին ունեցած զօրութեան ճառագայթումն է, անոր փառապըսակն է: Այդ փառապսակի ճառագայթներուն զօրութենէն եւ թրթռացումի յաճախականութենէն անգիտակցաբար կ'ազդուինք: Եթէ անձին արձակած զօրութիւնը կը համապատասխանէ մեր զօրութեան, զինք կը նկատենք գեղեցիկ, ապա թէ ոչ՝ տգեղ: Այդ զօրութեան եւ թրթռացումի մակարդակը կը համապատասխանէ անձին Ս. Հոգիէն ստացած զօրութեան մակարդակին, որ կախեալ է անձին կենցաղէն:



(ԿԵՆՑԱՂԱԼՈՅՍ - «Փուռնջ՝ քերթուածներու» յառաջաբանէն
առնուած)

ՄԱՐԴԸ ՈՒ ԴՐԱԽՏԻ ՅԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Մարդիկ կը կարծեն թէ կեանքը, կրօնքը, փրկու-
թիւնը եւայլն բարդ հարցեր են: Ընդհակառակը ամէն
ինչ շատ պարզ է, բայց ըսել չէ թէ շատ դիւրին է:

Մարդ արարած կը նմանի ձկնարանի՝ (aquarium)
ապակեայ աւազանի մէջ կլոր կլոր լողացող ձուկի մը,
անգիտակից հակայ ովկիանոսի մը գոյութենէն: Են-
թադրենք, թէ ձուկը ովկիանոսի գոյութեան մասին
տեղեակ ըլլայ եւ նոյնիսկ ամէն օր «ովկիանոս» երազէ:
Երբ ձուկը ովկիանոս արձակելու համար ձկնարանէն
դուրս հանեն, խեղճ ձուկը կը դողդղայ, կը պայքարի ու
երբ ետ ձկնարանի մէջ իյնայ, կ'ուրախանայ: Նոյնն է
նաեւ մարդու վիճակը: Ամէն օր եկեղեցի կ'երթայ:
Փրկութեան համար կ'աղօթէ բայց երբ առիթը ներկա-
յանայ, այս պատրանքային աշխարհի «սա» «դա» «նա»-
ներուն հետ իր ունեցած կապը թող չտալու համար կը
պայքարի՝ ի գին ամէն բանի: Ուրեմն մարդ իր մտա-
յին անդորրութեանը համար կրօնքը կը յարմարցնէ
իր բնոյթին, քան թէ իր բնոյթը փոխէ յարմարելու
Քրիստոսի: Ինքզինք խաբելով կ'ապրի պատրանքային
կեանք մը, որուն վախճանը կը սպասէ վախով: Որպէս-
զի այդ վախն ալ չխանգարէ իր անդորրութիւնը կը
չինէ պատրանքային դրախտի յոյս մը, որ պիտի իրա-
կանանայ մահէն յետոյ: Յատկանշական է մահէ յետոյ
ըլլալը, քանի որ պատրանքին վերջ տալու կացութիւնը
անձին վրայ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր,
քանզի պատրանքն ալ մահով ինքնին վերջացած կ'ըլ-
լայ: Դժբախտաբար մարդն ալ յետ մահու այլեւս որեւէ
դրախտի գիտակցութիւնը չի կրնար ունենալ, քանզի
դրախտը աշխարհի վրայ է ու մահէ ետք մարդ այլեւս
հոս չէ: Ըստ Ծննդոց գիրքին, Ադամ եւ Եւայի օրերուն

դրախտը աշխարհի վրայ էր, չեմ կարծեր փոխուած
ըլլայ: Ճշմարիտ անդորրութիւնը Քրիստոսի հետ ըլ-
լալն է: Մարդ արարած պարտ է իր կենցաղով Զայն
յայտնաբերել:



Հեղապնդէ
Յիսուսի սորվեցուցած
մարդկայնականութեան
է-
սիրոյ կրօնէք

(ԿԵՆՑԱՂԱԼՈՑՍ - «Փուռնջ՝ քերթուածներու»-էն առնուած)

ԱՂՕԹՔ

**«ԵԱ ԷՈՒԹԻՒՆԴ ԵՒ ԱԿԻՉՔՆ ԵՄ ՔՈՒ ՎԱԽՃԱՆԻԴ
ԻՄ ԱԷՉՆ Է, ՈՐ ԴՈՒՆ ԻՆՔԴ՝ ԿԵԱՆՔԷՒ ԵՏՏՈՅ ՊԻՏԻ
ԱՊՐԻԱ:»**

Վերելի տողերը ցեղասպանութեան եօթանասուն-ամեակի առիթով հրապարակ հանուած յուշամետալի մը վրայ փորագրուած էր: Հոս տեղադրեցի, որովհետեւ ան կ'արտայայտէր այն բացարձակ իրողութիւնը, որ ջանացի ներկայացնել «Կենցաղալոյս»ի էջերուն մէջ:

Աղօթարար եմ Աստուծոյ, որպէսզի իր անհուն ողորմութեամբ, բոլորիս պարզեւէ գիտակցութեան մակարդակ մը՝ հասկնալու ճանապարհը ճշմարտութեան եւ տայ փափաք եւ կարողութիւն կերտելու այդ Աստուծահաճոյ կենցաղը, իրականացնելու համար իր յայտնութիւնը՝ մեր միջոցով: Մեր աղօթքով պէտք է ցուցաբերենք զայն իրականացնելու վճռականութիւնը եւ ջանքը: Աղօթքը խնդրել եւ սպասել չէ: Անգլերէն ասացուածքը կ'ըսէ «God helps those who help themselves» (Աստուած կ'օգնէ անոնց, որոնք իրենք իրենց կ'օգնեն): Աստուծոյ շնորհները անընդհատ կը տեղան՝ բոլորիս համար: Մենք ենք, որ կը խափանենք անոնց ներխուժումը մեր էութենէն ներս: Ուստի մեր կենցաղով եւ մեր մտքի ուղղութեամբ բանանք այդ հոսանքին ճամբան:

Այդ յայտնութիւնը ակներեւ կ'ըլլայ անձէն ցոլացած գեղեցկութեան որակէն, ինչ որ կախեալ է անձին ունեցած սիրոյ մակարդակէն, յոյսի հաստատակամութենէն, հաւատքի զօրութենէն, ինչպէս նաեւ ծառայութեան եւ զոհողութեան մակարդակէն՝ այսինքն խորհուրդէն, խօսքէն ու գործքէն:

*«Ողորմեա՛ ինձ Աստուած
ըստ մեծի ողորմութեան քում,
ըստ բազում գթութեան քում,
քաւեա՛ վանօրէնութիւնս ինձ»:*



Մի զանգի պանառ թե խանիներ
 վեպի դեմ էն,
Բայց նայե որ Լստոսաթ վեպ Ըեպ ըլլայ
 ամէն մի խայլիդ:

(ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՑ «Բ» - ԶԱՐԹՕՆՔ գիրքի յառաջաբանն
առնուած)

ԿՐՕՆՔԸ ՀԱՍԿՆԱԿ

Թէեւ տարբեր-տարբեր կրօնքներու ուսուցմանց տեղեակ եմ, սակայն ուշադիր եղած եմ, որպէսզի տեսակէտներս հիմնուած ըլլան եւ համապատասխան մեր Աստուածաշունչի տուեալներուն: Ճիշդ է թէ ներկայացուած որոշ տեսակէտները կը տարբերին ընդհանուրի հաւատացած ձեւէն, բայց չեմ կարծեր թէ անոնք կը տարբերին Յիսուսի սորվեցուցածներէն:

Կարելոր է որ ամէն անձ, փոխանակ նոյնութեամբ ընդունելու իրեն բերանացի տրուած մակերեսային հաւատալիքները, ինք պէտք է իր կրօնքին խորքը թափանցէ եւ աւելի կարելոր, պարտ է ապրի այդ կրօնքը, քան թէ պարզապէս միայն հաւատայ (believe): Անձի մը հաւատացածին ճիշդ կամ սխալ ըլլալը յայտնի կ'ըլլայ իր կենցաղէն: Երբ ականատես կ'ըլլանք համայն աշխարհի ներկայ վիճակին, անկարելի է հարց չտալ, թէ արդեօք տակաւին Աստուծոյ հաւատացող անձ գոյութիւն ունի^օ: Այո, վստահ եմ, անուանական հաւատացող շատ կայ: Աստուծոյ հաւատալ պարզապէս «կը հաւատամ» ըսել չէ, այլ զայն գործնականօրէն ցոյց տալ է: Միթէ Աւետարանին մէջ չէ^օ գրուած, թէ հաւատքը առանց գործերու մեռած է.

«Զի՞նչ օգո՞տ իցէ...եթէ ասիցէ ո՞վ
Հաւատո՞ւս ունէ՛լ՝ եւ Գործս ո՛չ ունիցի.
միթէ կարիցէ՞ն Հաւատին ապրէցո՞ցանել
պնա, ...սոյնպէս եւ Հաւատի՛լ էթէ Գործս
ո՛չ ունիցին, մեռեա՛լ էն առանձինն...պի
Հաւատի՛ առանց Գործոց դատարկ էն:

...Տէսաանէ՛վ՝ զի ՚ի Գործոց արդարանայ
մարդ՝ եւ ո՛չ ՚ի Հաւասարոց միայն: ...
Զօրօրինակ մարմին առանց Հոգւոյ մեռ-
եալ է, սոյնպէս եւ Հաւա՛սրվ առանց Գոր-
ծոց մեռեա՛լ էն»: (Թոմար Յակոբայ Բ:14-26)

«Ի՞նչ օգուտ է, ... եթէ մէկը ըսէ թէ Հաւատք ունի, ու
գործ չունենայ: միթէ Հաւատքը կրնա՞յ փրկել զանիկա:
... Այսպէս ալ Հաւատքը, եթէ իրեն հետ գործ չունենայ,
առանձինն մեռած է: ... թէ Հաւատքը առանց գործերու
մեռած է: ... Կը տեսնէ՞ք թէ մարդ գործերով
կ'արդարանայ, ո՛չ թէ՛ միայն Հաւատքով: ... Քանզի
ինչպէս մարմինը առանց Հոգիի մեռած է, նոյնպէս ալ
Հաւատքը առանց գործերու մեռած է»:

Այս նիւթերու մասին իմ գրելու եւ հրատարակե-
լու նպատակը ուրիշին սորվեցնել չէ, այլ ինքնառուսու-
ցում՝ ինքնազարգացում է: Բժշկական ասպարէզիս մէջ,
յատկապէս որպէս դասախօս, սկիզբէն հասկցայ, թէ
ուրիշին սորվեցնելու համար կատարուած պատրաս-
տութիւնը սորվելու լաւագոյն ձեւն էր: Նոթագրու-
թիւններ կատարելով ես շատ բան սորվեցայ: Եւ եթէ
գրի առի, ինչո՞ւ չհրատարակել: Գուցէ ուրիշ անձ մըն
ալ տարբեր տեսակէտ մը տեսնելով, իր կրօնքը աւելի
լաւ հասկնալու համար ինք ալ պրպտէ եւ խորքին
թափանցէ: Ես այս նիւթերու մասնագէտը ըլլալու
յաւակնութիւնը չունիմ, պարզապէս տեսակէտ մըն է,
որ կը ներկայացնեմ: Տեսակէտ մը, որ ինծի ազդու
կերպով «խօսեցաւ»: Գուցէ ուրիշի մըն ալ նմանապէս
ազդէ եւ օգնէ: Ինչ որ կը պատահի, Աստուծոյ կամ քովն
է որ կ'ըլլայ, ինչպէս Գերշ. Տէր Մեղրիկ Եպիսկոպոս
Բարիբեան «Կենցաղալոյս»իս համար իր գրած
նախաբանին մէջ կ'ըսէր. «... որ առանց Աստուծոյ
կամ քին ոչ մէկ տերեւ կը շարժի այս աշխարհի վրայ»:

Երբ իմ առաջին երկու հատորները լոյս տեսան,

Իմ բարեկամներէն ոմանք ելեկտրոնային թղթակցու-
թեամբ ինծի հետեւեալ մէջբերումները ղրկեցին.

«Աղէկ Ուսումնասիրեցէք Ժողովուրդը.
Ինչ Որ Պիտի Գրէք,
Անոր Կեանքէն Թող Ըլլայ»:¹

«Որեւէ երկրի արժէք ներկայացնող
գրականութիւն կապ պէտք է ունենայ Համա-
պատասխան ժողովուրդի ապրած կեանքին
Հեա՝ ըլլայ ան անցեալ ու յատկապէս ներկայ:
Գրողին գործածած բառերն ու յայտնած գա-
ղափարները պէտք չէ թափառին անիրականու-
թեան ու վերացականութեան անստոյգ որրոս-
ներուն մէջ, այլ անոնք պէտք է խօսին երկրի
վրայ գոյութիւն ունեցող բնութեան, մարդոց ու
իրենց ունեցած Հարցերուն մասին: Ապրուած
կեանքի մասին: Մարդկային սերտ յարաբե-
րական վիճակներու մասին: Ըստ իս, բանաս-
տեղծութիւնն ալ պէտք է արտայայտուի այս
սահմաններու ծիրին մէջ: Օգային անգոյ
երեւոյթներէն Հեռու պէտք է մնայ ան»:²

Վստահ չեմ, թէ իմ բարեկամներուս նպատակը
ի՞նչ էր: Արդեօք կը խորհէին թէ գրուածները շատ
վերացական էի՞ն եւ մեր ժողովուրդին ներկայ կենցա-
ղին հարմար չէ՞ր, որով կ'ուզէին զիս զգուշացնել, կամ
թէ գրուածներուն այժմէականութիւնը հասկնալով
կ'ուզէին զիս քաջալերել:

Վստահ եմ կան անձեր, որոնց համար այս
նիւթերը շատ վերացական են կամ՝ առասպելներ: Ճիշդ
է, թէ շատերու համար կրօնական հարցեր կրնան
անստոյգ ըլլալ: Կան անձեր, որոնց համար իրենց հինգ
զգայարանքներով զգացուածը միակ փաստացին է:

Աւելի բարձր գիտակցութեան մը տուած փորձառութիւն մըն ալ կայ, ուրկէ կը ծագի հաւատքը, որ կարելի է իրենց յայտնի չըլլայ: Եթէ իրենց կենցաղը համապատասխան չէ կերտելու բարձր գիտակցութիւն, այս հարցերը ստուգացնող փորձառութիւնն ալ կարող չեն ունենայ: Քանի որ «ինչ որ ցանենք ան կը հնձենք»:

Որպէս առաջին քրիստոնեայ ազգ, ազգովին հպարտ ենք: Մարդ արարած այն բանին որ չի հաւատար, անով հպարտ չի կրնար ըլլալ, որով մենք հաւատացեալներ ենք: Իսկ եթէ կը հաւատանք Յիսուսի սորվեցուցածներուն, ուրեմն հոգեւոր ճանապարհն ալ հարկ է որ այժմէական ըլլայ: Համամիտ եմ վերելի մէջբերումներու թելադրութիւններուն: Ճիշդ այդ պատճառով ալ իմ սորվածները հրատարակելու քաջութիւնը ունեցայ, քանի որ ինծի համար կարեւոր ու անհրաժեշտ են նման նիւթեր, նաեւ նոյնը կրնան ըլլալ իմ ազգակիցներուն, եւ ինչու չէ՝ համայն մարդկութեան: Անոնք, որոնք այս նիւթերը շատ վերացական կը համարեն, իմ կարողութեան սահմաններուն ներքեւ, ջանացի մերձեցնել վերացականը Ֆիզիքականին՝ բնագիտութեան հետ:

Աշխարհի ներկայ մութ մթնոլորտին մէջ կայ նաեւ զարթօնք մը: Կարեւոր է որ հայերս ազգովին մաս կազմենք այդ զարթօնքին, եւ ինչու չէ, նաեւ ըլլանք դրօշակակիրը, ինչպէս քրիստոնէութեան սկզբնաւորութեան արքայապէս եւ ազգօրէն դրօշակակիր եղանք: Կը խորհիմ թէ այս շարժումը մեր ազգին մէջ արդէն իսկ սկսած ըլլայ: Որպէս ցայտուն օրինակ այս զարթօնքի, ստորեւ թարգմանաբար կը տեղադրեմ Թրքահայոց Պատրիարքարանի ներկայացուցիչ հոգեւորականի մը ուղերձը՝ կատարուած «ՃէՄ Հաստատուիւն»-ի հիմնադրութեան Ժ. տարեդարձի ճաշկերոյթին:

«... Սուրբ գիրքին մէջ Համար մը կայ, ուր գրուած է. «Գեանի Հողէն մարդը ստեղծեց եւ քիթէն կեանք փչեց եւ մարդը կենդանի Հոգի եղաւ: Իր պատկերին նման ստեղծեց մարդը եւ զինքը դրահատի մէջ դրաւ, որպէսզի ինամէ եւ պահպանէ:» Մեր այսօրուայ Հարցերու մէջ մխրճուած ըլլալուն պատճառը, մարդը ու բնութիւնը ինամելու եւ պահպանելու մեր պարտականութեան մէջ թերացումէն յառաջ եկած է: Առողջ միջոցառումի մը գոյութիւնը նախ կ'իրականանայ սիրոյ գոյութեամբ, վստահութեան գոյութեամբ եւ Հաւասարութեան գոյութեամբ: Այս պատասխանատուութիւնը միայն մարդոց տրուած պարտականութիւն մըն է: Միութեան յարգելի նախագահը իր խօսքին մէջ «Յրաշտի Հետեանք գաղթեր սկսան» ըսաւ: Այսօր այդ երաշտը՝ այդ չորութիւնը մարդոց «սիրտերուն» մէջ սկսած է: Այս չորութեան Հետեանք մարդիկ զիրար կ'անտեսեն, իրարամերժ դարձած են: Մարդու մը Հանգստավայրը եւ անդորրութեան զգացումը ուրիշ վայրերէ չի գար այլ միայն ուրիշ անձի մը սիրտէն: Ճիշդ ասոր Համար եւ օրէնքներուն ինծի տուած իրաւունքները չեմ ուզեր, եւ ձեր սիրտերուն մէջ տեղ կ'ուզեմ: Եթէ եւ ձեր սիրտերուն մէջ ըլլամ, ձեզի պատկանող ամէն ինչ իմն ալ կ'ըլլայ, բայց եթէ եւ ձեր սիրտերուն մէջ տեղ չունենամ, ոչինչ ինծի կը պատկանի: Ես ձեզմէ անջատուած կ'ըլլամ: Ժողովի մը եւ ալ ներկայ էի եւ «Հաշտութիւն եւ սէր ինչո՞ւ գոյութիւն չունին» ըսի եւ ասոր երկու մարդկային պատճառներուն ալ կղերականներու եւ քաղաքագետներուն ըլլալը ըսի:

Որովհետեւ կղերականները իրենց տուած խոստումին եւ կոչումին Համաձայն չեն ապրիր եւ քաղաքագետներն ալ իրենց տուած խոստումները չեն կատարեր (ի բաձառեալ ներկաներէ): Միրելիներ այս ուղղութեամբ օրինակով մը պիտի խօսիմ եւ բացատրեմ: «Մարդուն մէկը դրախտ տարեր են, տեսեր է, որ ամէն կողմ շատ գեղեցիկ է եւ Հրեշտակները ամենուն կը սպասարկեն: Մարդը գացեր Հրեշտակին Հարցուցեր է թէ անոնք Հոն ի՞նչ կը ծախեն: Հրեշտակը պատասխաններ է. «մենք Հոս սեր, արդարութիւն, Հաշտութիւն եւ ողորմութիւն կը ծախենք»: Մարդը շատ խանդավառուէր է եւ Հարցուցեր է թէ ինք կարո՞ղ է ասոնցմէ առնել ու տանիլ: Հրեշտակը պատասխաններ է ըսելով. «ուզածիդ չափ առ եւ տար»: Մարդը ըսեր է. «ինծի 500.000 թօնօ արդարութիւն, 200.000 թօնօ սեր եւ գութ ու թօնօներով ապսպրանք կու տայ: Հրեշտակը իրեն սպասէ կ'ըսէ եւ կը Հեռանայ: Մարդը կը սկսի խորհիլ. «մէկէն խանդավառուեցայ, քանի գիտէի անոնց չգոյութեան մասին աշխարհի վրայ եւ այսքան բան ապսպրեցի, ես այսքան ապրանք ինչպէ՞ս աշխարհ պիտի տանիմ»: Երբ ան տակաւին այս խորհուրդները կ'ունենար, Հրեշտակը, Հին Ժամանակներուն մէջը մանտրօք դրամ դնելու Համար գործածուող փոքր տոպրակի մը նման տոպրակ մը սեղանին վրայ կը դնէ եւ «աՀա քու ապսպրանքդ» կ'ըսէ: Մարդը կը զարմանայ, մէջ մը Հրեշտակին կը նայի եւ մէջ մըն ալ տոպրակին եւ կ'ըսէ. «Թօնօներով սեր գութ եւ արդարութիւն ապսպրած էի, իսկ դուն փոքր

տոպրակ մը բերիր»։ Հրեշտակը կը խնդայ ու կ'ըսէ. «մենք Հոս ձեր ուղածներուն միայն հունտերը կը ծախենք եթէ անոնք առնես եւ սիրտերուն մէջ ցանես, Հոն թծածներով կը շասնայ»։ Քաղաքագէտները, Հրապարակներու վրայ եւ խորհրդարանի մէջ շատ լաւ խօսքեր կը խօսին, կղերականները մեղկիթներու եւ եկեղեցիներու մէջ շատ լաւ բաներ կ'ըսեն, բայց քանի աշխարհը տակաւին չէ բարելաւուած, Հարկ է նման քաղաքագէտներ եւ կղերականներ հեռացնել։ Պարտականութիւնը կատարող, դրական ազդեցութիւն ունեցող եւ աշխարհը բարելաւող անձերու եւ հոգիներու պէտք ունինք, այս ուղղութեամբ իմաստուն մարդոց պէտք ունինք։ Միայն խելացի ըլլալ բաւարար չէ, անոր պարտ է նաեւ ընկերակցի սերով լի սիրտ մը, ապա թէ ոչ արդիւնքը Հարստահարիչ կ'ըլլայ։ Օրէնքի մարդը եթէ իր մէջ սեր չունենայ անարդար կ'ըլլայ։ Այս երեկոյ, ինչպէս ձեր ինծի պարգեւած պատիւին բաժնեկից եղայ եւ ալ ուղեցի ձեզի բաժնեկից ընել իմ սրտիս մէջի մտահոգութիւններուն, քանի Ս. Գիրքին մէջ գրուած է. «Մարդ իր տեսած մարդը՝ եղբայրը եթէ չսիրէ, ինչպէ՞ս կրնայ Աստուած սիրել Ռրոն չի տեսներ»։ Աստուծոյ տանող ճամբան մեղկիթէն, եկեղեցիէն, նամագէն եւ ծովապահութենէ չ'անցնիր, այլ ան ուրիշ մարդու մը սիրտին՝ հոգիին մէջէն կ'անցնի։ Այդ ճամբան, ուրիշի ցաւերուն ընկերակցիլ եւ անոր արցունքները սրբելու ուղին է։ Եթէ ես, աս իրականացնելու կարող չեմ, իմ կղերականութիւնս, Հաւատքս՝ բոլորը պարսպ եւ։ Սրտա-

բուխ սերով ձեզ կ'ողջունեմ եւ շնորհակալութիւն կը յայտնեմ»:՝³

Ինչպէս նաեւ 2014 տարուայ Դեկտեմբեր ամսուայ մէջ, Օրթագիւղի Ս. Աստուածածին Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ միասնական՝ Հայ Քրիստոնեայ եւ Մահմետական Սուփիներու (Sufi) աննախընթաց հաւաքոյթ մը տեղի ունեցած է, ուր Սուփիական շարական՝ «Ալլահուլքալեր լա իլահէ իլլալլահ Հու Ալլահուլքալեր Ալլահուլքալեր ...» երգուած է: Երգողները կիներ եղած են: Այդ հաւաքոյթին Պոլսոյ Պատրիարքական ընդհանուր փոխանորդ Գերշ. Տէր Արամ Արք. Աթէշեան իր օրուայ պատգամին մէջ ըսած է, որ թէ՛ Յիսուսի եւ թէ՛ Մեվլանայի սորվեցուցածները ընդհանուր առմամբ՝ 90 առ հարիւր, իրարու համապատասխան են եւ օրինակներ տուած է:

Այս գիրքին նպատակն ալ այս զարթօնքին ծառայել է, զայն, իմ կարողութեանս սահմաններուն ներքեւ, հանրութեան ներկայացնելով:

1:- Արփիար Արփիարեան

2:- Մարգար Հարապիանեան

3:- «Cem Vakfi»ի կազմակերպման 17-երորդ տարեդարձի առիթով Տէր Զավէն ՔՀն. Պալլքճըի ներկաներուն տուած ուղերձը յանուն Պոլսոյ պատրիարքութեան: (Թղթերէնէ թարգմանուած)

* * *



(ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՑ «Բ» - ԶԱՐԹՕՆՔ գիրքի վերջաբանին
առնուած)

ԿՐՕՆՔԸ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՄՆԸ

Կրօնքի եւ փրկուածեան նկատմամբ, նոյնիսկ նոյն կրօնքին մէջ, իրարմէ շատ տարբեր հաւատալիքներ եւ տեսակէտներ կան: Վստահ եմ կան անձեր, որ նոյնիսկ գիրքս կարդալը մերժեն եւ փարին իրենց հաւատալիքներուն: Անոնց վախը այն է թէ արտաքին սատանայ մը կրնայ իրենց միտքը խանգարել: Ինձ այնպէս կը թուի թէ «սատանան-Եսը» անոնց միտքը գոցելով զայն արդէն խանգարած է, որպէսզի հոգեւոր գետնի վրայ յառաջացում չըլլայ, քանի որ նման յառաջացում մը «Ես»ին մահուան ճամբան կը բանայ: Շատ լաւ գիտենք թէ «Ես»ը ի գին ամէն բանի կը ջանայ իր բռնապետութեան շարունակականութիւնը ապահովել, գործածելով այն ինչ որ պիտոյ է: Ան նաեւ անհատին մէջ իր ունեցած հաւատալիքը (belief) կորսնցնելու վախը կ'արծարծէ: Շատ լաւ գիտենք թէ վախն ալ անհատին գործելու բոլոր զօրութիւնը եւ տրամաբանելու կարողութիւնը կը խլէ: Յիսուս իր խաչելութեան մասին շատ լաւ գիտէր եւ փախելու առիթն ալ ունէր, բայց իր մէջ վախ չունէր եւ Աստուծոյ կամքը յօժարաբար ընդունեց:

Մեր ճշմարիտ ուսուցիչը մեր ներքին Քրիստոսն է: Եթէ մենք պատրաստ ենք սորվելու, Քրիստոս ալ պատրաստ է մեզի սորվեցնելու: Կարեւորութիւն չունի թէ ինչ կը կարդանք: Քրիստոս նոյնիսկ սատանայապաշտերու գրութիւններէն կրնայ մեզի «ինչպէս չըլլալ»-ը սորվեցնել: Միայլ հասկացողութիւն չըլլայ, ես չեմ յանձնարարեր նման գրութիւններ կարդալ: Ասիկա պարզապէս ծայրայեղ օրինակ մըն էր որ տուի: Որպէսզի Քրիստոս կարենայ սորվեցնել, մեզի կը վիճակի միայն մէկ բան՝ ունենալ բաց միտք: Միտք մը

որ ընդունակ է եւ նաեւ ճշմարտութիւնը սրտանց փնտռող: Ըստ Աւետարանի համարներուն, Յիսուս այս իրողութիւնը մատնանշելու համար քանիցս «պարարտ հող» ասութիւնը գործածած է: Պարարտ հողը բաց միտքն է, այն միտքը որ սորվելու պատրաստ է: Արեւմուտքի աւետարանական եկեղեցիներու պատուելիներէն ոմանք, նամանաւանդ անոնք որոնք հեռատեսիլէն եւ ձայնասփիւռէն քարոզչութիւններ կ'ընեն, տարուած են աշակերտներու որոշ խօսքերու սխալ մեկնաբանութենէն: Իրենք մոլորած, կը մոլորեցնեն նաեւ իրենց հետեւող խեղճ ժողովուրդը: Ինչո՞ւ համար Յիսուս ըսաւ հետեւեալները.

«Թո՛ւ յլ Կոռնէ պնոսա, կո՛յրէ էն՝ կոռայ
առաջնո՛րդէ: Աոյր կոռի յորժամ առաջնորդէ՝
սխալէ՛, է- էրկոռնին՝ ՚ի խորխորայ անկանին»:
(Մարթեոսի ԺԵ:14)

«Թողուցէ՛ք զանոնք, իրենք կոյր են, ու կոյրերու
առաջնորդ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը, երկուքն ալ
փոսը պիտի կնան»:

«... Իսկ որդի մարդոյ եկեալ, Գրանիցէ՛
արդեւէ՛ Հաւա՛րս յերկրի»: (Ղուկասոս ԺԳ:8)

«... բայց երբ մարդու Որդին գայ, արդեօք Հաւատք
պիտի գանէ՞ երկրի վրայ»:

Անոնք կ'անտեսեն շատ մը համարներ որ իրենց քարոզչութեան հակառակը կը ներկայացնեն: Շատ դիւրին է ըսել. «կը հաւատամ, հետեւաբար փրկուած եմ» կամ «Յիսուս իր արիւնը թափեց իմ մեղքերուս համար, հետեւաբար փրկուած եմ»: Այս տեսակի հաւատք պարզապէս «կը հաւատամ» ըսելէ զատ որեւէ պատասխանատուութիւն չի դնէր հաւատացեալներուն ուսերուն վրայ եւ անոնք կը շարունակեն իրենց սովորական կենցաղը: Թերեւս հասարակ ժողովուրդէն քիչ մը աւելի «բարի» ըլլան: Կը ճանչնամ զոյգ մը:

Կինը նման խմբակի մը հետեւելով ամէն օր Ս. Գիրքի սերտողութեան կ'երթայ ու կ'անտեսէ իր ընտանիքը, այն աստիճան, որ «յանուն Աստուծոյ» այր եւ կնոջ բաժանման պատճառ կ'ըլլայ: Չեմ խորհիր որ նման արարք մը Աստուծոյ կամքը կրնար ըլլալ եւ կնոջ հետեւած «կրօնք»ն ալ, քրիստոնէութեան մէկ հատուածը ըլլալով հանդերձ, ճիշդ վարդապետութիւն մը ըլլար: Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիները ինչո՞ւ երկու հազար տարի է որ նման քարոզչութիւններ չըրին: Միթէ անոր համար որ չէի՞ն գիտեր: Բացարձակապէս ոչ: Ընդհակառակը: Անոնք աւելի լաւը եւ ճիշդը գիտէին: Ջարմանալիօրէն այսօր մեր խորաններէն կը լսենք քարոզներ, որոնք կ'արձագանգեն վերոյիշեալ արեւմուտքի պատուելիներու քարոզչութիւնները: Արդեօք աս ինչի՞ նշան է: Կարելի է՞ թէ մոռցած են իրենց ունեցած գանձը, կամ ժողովուրդէն որոշ անհատներու փափաքներո՞ւն կ'ընդառաջեն: Մեր եկեղեցիներուն մէջ նման քարոզչութիւններ ծիսակատարութիւններու լեզուին գրաբարէ աշխարհաբարի փոխուելուն զուգահէր սկսան: Արդեօք մեր ուղղափառ եկեղեցին այլեւս ուղղափառ չէ՞ եւ խաւարամտութեան կը հետեւի: Պէտք չէ՞ որ ան հաւատարիմ մնայ իր ուղղափառութեան եւ որպէս փարոս խաւարամիտերը առաջնորդէ: Աւելի լաւ պիտի ըլլար եթէ քարոզներու բովանդակութիւնը օրուայ Աւետարանին ուղղափառ մեկնաբանութիւնը ցոլացնէր: Ուղղափառ եկեղեցիներու համար Յիսուսի խօսքերը աշակերտներուն գրած նամակներէն շատ աւելի կարեւոր են: Պատարագի միջոցին չորս Աւետարաններէն ընթերցումը, ինչո՞ւ համար խորանի բարձունքէն եւ երկու մոմակալներու ներկայութեամբ կը կարդացուի: Բնաւ խորհած է՞ք: Մոմերուն լոյսը կը ներկայացնէ Յիսուսի խօսքերուն սփռած Լոյսը՝ գիտութիւնը:

Աւետարանը կարդացողը սարկաւազ կամ քահանայ պէտք է ըլլայ: Իսկ Հին Կտակարանը կամ Պօղոսի եւ այլ նամակներ, վարէն՝ դասի մէջէն առանց մոմակալներու կը կարդացուին, զորս ուէ՛ անձ կրնայ կարդալ: Դասը՝ ցած մակարդակի վրայ երկրայինը կը ներկայացնէ, իսկ խորանի բարձրութիւնը՝ երկնայինը: Յիսուսի խօսքերը երկնային են, իսկ աշակերտներունը՝ երկրային: Ո՞ր մէկուն պիտի ուզէիք հետեւիլ: Դարձեալ, սխալ հասկացողութիւն չըլլայ: Ես հակառակ չեմ աշակերտներուն գրած նամակներուն պարունակութեան: Անոնք ալ իրենց գիտութիւնը Յիսուսէն սորվեցան եւ Ս. Հոգիէն ալ ներշնչուեցան: Սակայն անոնք այդ նամակները այդ օրուայ ժողովուրդին գիտակցութեան մակարդակին համապատասխան գրեցին: Յիսուս ըսաւ. «պիտի լսեն բայց պիտի չիմանան, պիտի տեսնեն բայց պիտի չտեսնեն (այսինքն տեսածներնուն բուն իմաստը չհասկնան)»: Արդեօ՞ք աշակերտները, ի մտի ունենալով ժողովուրդին գիտակցութեան մակարդակը, աւելի մակերեսային, անոնց համար հասկնալի ձեւով մը գրեցին իրենց նամակները: Ինծի զարմանք պատճարողը այն է թէ 12 առաքեալներէն մեզի հասած շատ քիչ նամակներ կան եւ անոնք ալ շատ կարճ են: Մօտաւորապէս 70 տարի առաջ Թովմաս առաքեալի աւետարանը գտնուեցաւ, որ ընդունուած չորս Աւետարաններուն մաս չի կազմեր: Շատ զարմանալի է թէ Թովմասի Աւետարանին մէջ Յիսուսի կեանքին կամ ժամանակի պատահարներուն մասին բնաւ տեղեկութիւն չէ գրուած, այլ կան 114 համարներ՝ բոլորն ալ միայն Յիսուսի խօսքերը: Իսկ Նոր Կտակարանի մէջ դրուած չորս աւետարաններու կողքին գտնուող նամակներուն մեծամասնութիւնը Պօղոս գրած է, որ Յիսուսի հետ բնաւ միասին չէր եղած: Ճիշդ է թէ Քրիստոս Դամասկոսի ճամբուն վրայ իրեն յայտնուեցաւ եւ

դարձնուց տուաւ եւ ան ալ դարձի եկաւ:

Ինչպէս Գլուխ Դ-ի վերջին մասին մէջ գրած էի, Աստուած բոլորին կը յայտնուի, բայց անձը Զայն ըստ իր հասկացողութեան կամ հաւատացածին համեմատ կը տեսնէ: Նոյնպէս Աւետարանի պատգամներն ալ ամէն անձ իր հասկացողութեան, հաւատացածին եւ գիտակցութեան մակարդակին համեմատ կը հասկնայ եւ կ'ըմբռնէ: Բոլորին համար իրենց հաւատացածը իրենց համար ճիշդ է եւ համապատասխան իրենց կենցաղին եւ գիտակցութեան մակարդակին:

Բայց պէտք է⁶ որ մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու աշխատինք:

«Ողորմեա ինչ Լսոյն-աթ,
ըստ մէջի ողորմութեան խում,
ըստ Բազում Գրութեան խում,
խաւեա պանօրէնութիւնս իմ»
(Սաղմոս Կ:1)





Աղէսօրը մի անփետէր :
Դժբախտի ն ժառան
եղիւր :
Չունէցողը ունէցածիդ
բաժնէկից ըրէ :

(ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՑ «Բ» - ԶԱՐԹՕՆՔ գիրքի վերջաբանին առնուած)



ԿՐՕՆՔ ԹԷ ԶԱՐԹՕՆՔ



Աստուած մէկ է եւ մարդն ալ իր պատկերին նման ստեղծեց՝ միայն մէկ տեսակ: Բայց զարմանալիօրէն մարդիկ զանազան սովորութիւններով եւ լեզուներով իրենք զիրենք զանազան ազգերու եւ մշակոյթներու բաժնեցին: Այս բաժանումներուն ամենէն վնասակարը եւ ցաւալին մարդոց զանազան կրօնքներու բաժնուիլն է, որովհետեւ այս արարքով անոնք, գոնէ իրենց միտքերուն մէջ, Աստուած ալ զանազան մասերու բաժնած են:

Հակառակ մարդոց յանուն Աստուծոյ ստեղծած կռիւներուն եւ պատերազմներուն, հակառակութիւններուն եւ ատելութիւններուն, Աստուած դարձեալ «Մէկ» կը մնայ: Աստուծոյ յատկութիւններէն մին ալ իր «ամենուրեք» ըլլալն է:

Հակառակ մարդոց անհամաձայնութեան եւ ընտրած կրօնքներու տարբերութեան, աշխարհի ամէն կողմը՝ «ամենուրեք» միթէ նոյն Աստուծոյն չէ՞ որ կը պաշտենք: Արդեօք միայն անունները չէ՞ն որ կը տարբերին:

Աստուծոյ ուրիշ մէկ յատկութիւնն ալ «Գեղեցկութիւնն» է: Ուրեմն պէտք չէ՞ նաեւ իր պատկերին՝ մարդուն մէջ եւս ջանանք այդ գեղեցկութիւնը տեսնել: Եւ ասիկա պէտք չէ՞ որ առանց ազգ, մշակոյթ, լեզու եւ կրօնք նկատի առնուելու ըլլայ:

Աշխարհի վրայ գոյութիւն ունեցող ամէն մի

անհատ, իր հոգիին միջոցաւ, Աստուծոյ սերտօրէն կապուած է, հոգ չէ թէ Ձինք ինչ անուևով կոչէ: Բոլորս ալ իր ստեղծածներն ենք, որով իրեն կը պատկանինք՝ այո՛ նոյնիսկ մեր միջեւ գտնուող «չար»երով եւ «անհաւատ»ներով: Իւրաքանչիւր անհատի տենչանքը պէտք է ըլլայ Աստուած տեսնել եւ ճանչնալ: Աս կարելի կ'ըլլայ երբ մենք, մեր իրարու հանդէպ տածած սէրով այս աշխարհը դրախտի կը վերածենք: Բոլորս ալ կը փափաքինք երջանիկ ըլլալ, վախի թակարդէն ազատիլ, իր շնորհները ստանալ: Ասիկա միայն իրեն ապաւինելով եւ զինք պաշտելով կարելի կ'ըլլայ: Պաշտել անկարելի է, եթէ Ձինք չենք սիրեր: Իսկ եթէ Ձինք կը սիրենք, պէտք է այս սէրը ո՛չ խօսքով, այլ գործքով ցոյց տանք: Գործքով ցոյց տալն ալ Անոր ստեղծագործութիւնը, ոչ մասնակի այլ իր ամբողջութեամբը, սիրել է: Ամէն մի անհատ պէտք է իր սիրտը Աստուծոյ նուիրէ, որպէսզի այդ սիրտէն Աստուծոյ սէրը բոլորին հոսի:

Յիսուս որ Մովսիսական կրօնքին կը պատկանէր «գացէք հեթանոսները Մովսիսական կրօնքին դարձուցէք» չըսաւ: Ան «գացէք զանոնք քրիստոնեայ ըրէք» ալ չըսաւ, որովհետեւ ան նոր կրօնք մը չէր քարոզեր: Անոր նպատակը Աստուծոյ հեռացած Մովսիսականութիւնը Աստուծոյ մօտեցնել էր: Անոր նպատակը պարզապէս փրկութեան ճամբան ցոյց տալ էր եւ այդ պատճառով ալ հետեւեալ պատգամը տուաւ:

«Երթա՛յք յաշխարհ ամենայն, եւ քարոզեցէ՛ք զաւետարանն ամենայն արարածոց: որ հաւատա՛յ եւ մկրտի՛ կեցցէ՛, եւ որ ո՛չն հաւատայ՝ դատապարտեսցի՛»: (Մարկոս ԺԶ: 15-16)

«Գնացէ՛ք այսուհետեւ՝ աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս. մկրտեցէ՛ք զանոնք յանուն Հօր՝ եւ Որդւոյ՝ եւ Հոգւոյ սրբոյ: Ուսուցէ՛ք նոցա պահե՛լ զամենայն՝ որ

ինչ պատուիրեցի ձեզ»: (Մատթէոս ԻԸ:19-20)

Յամայն մարդկութեան ամէն մի անհատին հոգին Աստուծոյ որդին է: Իր կանչը բոլորիս համար է: Ինչո՞ւ կ'անտեսենք այդ կանչը: Աս ի՞նչ խաւարամտութիւն է, որ մեզ թէ' խուլ եւ թէ' կոյր ըրած է: Ո՛հ սիրելի ազգակիցներս, գիտեմ թէ աշխարհիկ՝ քաղաքական հարցերը, նամանաւանդ հարիւրամեակի առիթով, առաջագոյն նիւթն է որ մեզ կը զբաղեցնէ, բայց պէտք չէ մոռնանք, որ Աստուծոյ սէրը բոլոր դժուարութիւնները կը լուծէ: Զարթօնքի ժամը հասած է: (Կարդալ Մատթէոս Ե: 38-48)





Ու՛ե-է մէկը մի ապեր :
Մի իժբժեր ,
բժախնդեր մի ըլլա՛ր :
Բիւրդ մի ըլլա՛ր ,
ու՛ե-է առնի Հեդ կոշոյ մի
վարու՛իր :

(ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ «Գ»
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԸ գիրքին յառաջաբանին առնուած)

ՀԱՒԱՏԱԼԻՔՆԵՐ ԹԷ ՀԱՒԱՏՔ

Կան անձեր, որոնք կ'ըսեն թէ Աստուծոյ գոյութեան կը հաւատան: Բայց կան ուրիշներ ալ, որոնք կը պնդեն թէ Աստուած գոյութիւն չունի, որով Աստուծոյ չեն հաւատար: Անտարակոյս, Աստուծոյ հաւատալը լաւ է, որով անձը թերեւս, աւելի պատշաճ կերպով, կրօնքի բարոյական օրէնքներուն գոնէ երբեմն կը հետեւի, որպէսզի «պատիժ»ի չենթարկուի: Իրականութեան մէջ վերոյիշեալ երկու անձերուն միջեւ մեծ տարբերութիւն մը չկայ: Ան որ կը հաւատայ եւ ան որ չի հաւատար նոյն մակարդակի վրայ են: Երկուքն ալ կը հաւատան բանի մը, որ իրենք փորձառութեամբ ձեռք չեն ձգած: Հաւատացողը Աստուծոյ մը կը հաւատայ, որ չէ տեսած եւ այդ եզրակացութեան իր փորձառութեամբ չէ հասած: Ան պարզապէս կը հաւատայ, որովհետեւ իրեն ըսուած է թէ Աստուած կայ: Ան որ Աստուծոյ գոյութեան չի հաւատար, անոր ալ հաւատացածը այն է, թէ Աստուած չկայ: Ան ալ, Աստուծոյ գոյութիւն չունենալուն մասին իր անձնական փորձառութեան փաստը չունի: Ան իր հինգ զգայարանքներով Աստուծոյ գոյութեան փորձառութիւնը չէ ունեցած, որով կը կարծէ թէ Աստուած գոյութիւն չի կրնար ունենալ: Մինչեւ այսօր տակաւին ոեւէ անձ, ներառեալ գիտունները, հիւլէ մը չեն տեսած, բայց անոր գոյութեան կը հաւատան եւ կը հաւատան, թէ բոլոր նիւթերը հիւլեներէ կազմուած են: Թէեւ հիւլէն չենք տեսած, սակայն այդ չի նշանակեր թէ ան գոյութիւն չունի: Հիւլէն չենք տեսած, բայց անոր զօրութիւնը գործածելու գիտութիւնը ունինք, թէ օգտակար եւ թէ վնասակար նպատակներու համար: Միթէ պէտք չէ՞ Աստուծոյ զօրութեան ազդեցութիւնը թէ՛ բնութեան եւ թէ՛ մեր

մէջ տեսնելու համար ջանք թափենք եւ այդպէսով իր ներկայութեան փորձառութիւնը ունենանք:

Աւետարանին մէջ գրուած է. «Աստուած լոյս է»: «Զարթօնք» գիրքին մէջն ալ ցոյց տրուած էր, թէ ինչպէս լոյսի եւ Աստուծոյ յատկութիւնները նոյնն էին: Ինչպէս լոյսը տեսնել կարող չենք, (տես այս գիրքին «Մարդակազմութիւն» գլուխը) նմանապէս կարող չենք նաեւ Աստուած տեսնել: Բայց լոյսին փորձառութիւնը ունինք: Մարդ արարած կը տեսնէ միայն լոյսին ցոլացումը, որովհետեւ ոչ թէ լոյսը տեսանելի է, այլ անոր ցոլացումը տեսանելի է:

Նմանապէս պարտ ենք տեսնել Աստուծոյ ցոլացումը ընդհանուր տիեզերքի՝ ամէն մի անհատի եւ բոլոր բնութեան մէջ: Այն նիւթը, որ լոյսը չի ցոլացընէր, կամ լոյսին թափանցիկ է, կարելի չէ տեսնել:

Դժբախտաբար մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը իր բռնուած հաւատալիքի թակարդէն ինքզինք չի կրնար ազատել: Հաւատալիքները (beliefs) անկաշկանդ, աննախապաշար միտքերը նախապաշարելով անոնց լուսաբանուելուն արգելք կ'ըլլան, որով հաւատալիքները իսաւարամտութեան սկիզբն են: Մարդ արարած կարծելով թէ իր հաւատացածը ճշմարտութիւն մըն է, կը փարի անոր եւ այլեւս լուսաբանուելու համար պէտք եղած պրպտումները չի կատարեր: Եթէ նոյնիսկ իրեն տարբեր տեսակէտ մը ներկայացուի, ան, առանց քննելու այդ տեսակէտին առաւելութիւնները եւ թերութիւնները, անմիջապէս զայն կը մերժէ: Որեւէ յառաջացման համար, ներառեալ հոգեկան գետնի վրայ, մարդ բաց միտք մը պէտք է ունենայ: Հաւատալիքները կը վերածուին համոզումներու: «Կենցաղալոյս» քերթուածներու հատորին մէջ «Ճանապարհը Հաւատքի» բանաստեղծութեան մէջ յետեւեալը գրուած է.

Սկիզբն է Հաւատքի
Նշոյլներ վարանումի
Հանդէպ Համոզումներու
Որ պարտ են վերջանալու:

Հաւատքը (faith) անխախտելի է, քանի որ ան անձնական փորձառութեամբ ձեռք ձգուած գիտութեան եւ գիտակցութեան արդիւնքն է: Հոգեկան գետնի վրայ, երբ մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կ'ըսէ, թէ կը հաւատայ, իրենց այդ հաւատալը միայն հաւատալիքներ (belief) ու համոզումներ են եւ ոչ թէ հաւատք (faith): Այս բաղդատութիւնը իրողութիւն մըն է, որովհետեւ անոնք արդէն ինքնայայտ կ'ըլլան անձին կենցաղէն: Միթէ աշխարհի ներկայ անբաղձալի վիճակն ալ մարդու վարած կենցաղին հետեւանքը չէ՞:

Մարդ կը խորհի թէ իր հինգ զգայարանքներուն միջոցաւ ստացած տեղեկութիւններէն զատ որեւէ բան գոյութիւն չունի եւ ինք միայն այդ զգայարանքներէն ստացուած տեղեկութիւններէն վստահ կրնայ ըլլալ: Սակայն, այսօր ամբողջական բնագիտութեան (quantum physics) կատարած բազմաթիւ յայտարարութիւններու կողքին, նաեւ կը յայտարարուի, թէ նիւթական աշխարհը կը թուի գոյութիւն չունենալ: Իսկ մենք այս աշխարհը, որ մեր զգայարանքներու փորձառութեան սահմաններուն մէջն է, գոյութիւն ունեցող ճշմարտութիւն մը կը նկատենք: Անոնք կ'ըսեն, թէ աշխարհը, նաեւ բոլոր տիեզերքը ողջագիր (hologram) մըն է: Միթէ չէ՞նք ըսեր թէ այս կեանքն ալ պատրանքային է եւ երազի տարբեր մակարդակ մը: Նաեւ չէ՞նք ըսեր թէ միայն Աստուած ճշմարտութիւնն է: Կ'ըսենք, բայց արդեօք մենք մեր ըսածին չէ՞նք հաւատար:

Մարդիկ կոյրզկուրանց նաեւ իրենց աւանդութիւններուն փարած են: Տարբեր ժողովուրդներու

աւանդութիւններն ալ, անտարակոյս, իրարմէ կը տարբերին: Աւանդութիւնները շատ մեծ օգուտ ունին, որովհետեւ անոնց մեծ մասը ծագում առած է անցեալին զարթօնք ունեցած անձերու անձնական փորձառութիւններէն եւ մեզի կը հաղորդէ իրենց գիտակցութեան յայտնի եղող ճշմարտութեան թաքուն տուեալները, որոնք հասարակաց են ընդհանուր մարդկութեան, ինչպէս նաեւ տիեզերական օրէնքները: Մարդիկ, ընդհանրապէս, փոխանակ ուրիշներու աւանդութիւնները հասկնալ ջանալու, կը մերժեն եւ կը ջրեն զանոնք: Աւանդութիւնները ունին իրենց թէ՛ լաւ եւ թէ՛ վատ կողմերը: Վատը այն է թէ նոյն սխալները կը կրկնուին սերունդէ սերունդ: Օգտակար է հասկնալ, սորվիլ եւ բաղդատել զանազան տարբեր ազգերու աւանդութիւններուն մէջ պահուած տիեզերական օրէնքները, ոչ թէ անոնց աւանդութիւնները որդեգրելու, այլ հասկնալու եւ մատնանշելու մեր աւանդութիւններուն մէջի սխալները, որպէսզի կարելի ըլլայ զանոնք բարելաւել: Հազար փառք պէտք է տանք Ս. Ներսէս Շնորհալիի եւ Ս. Գրիգոր Նարեկացիի նման մեր նախահայրերուն: Բաւ է միայն իմաստը հասկնալով երգել Շնորհալիին Գիշերային ժամերգութեան «Առաւօտ Լուսոյ»ն, ինչպէս նաեւ Արեւագալի ժամերգութեան «Լոյս 'ի Լուսոյ»ն: Հետեւաբար աւանդութիւնը մեզի կը յայտնէ Աստուծոյ կամքը եւ առանց մեր տեղեկութեան զայն կը փոխանցէ մեր ենթագիտակցութեան:

«Տիեզերական Օրէնքները» խորագրեալ այս հատորով ջանացի ներկայացնել այն օրէնքները, որով համայն մարդկութիւնը, ինչպէս նաեւ բոլոր տիեզերքը կը կառավարուին: Ամէն անհատ որ աշխարհ կու գայ պարտականութիւն մը ունի: Այն կեանքը որ իրեն տրուած է բարեշրջման առիթ մըն է, որ պէտք է փախցնէ: Կեանքը նաեւ մեծ պատասխանատուութիւն

մըն է: Կեանքը պարզապէս ծնիլ, ուտել, խմել, բազմանալ, ծերանալ եւ մեռնիլ չէ: Կեանքը ինքնազարգացման եւ գիտակցութեան մակարդակի բարձրացման առիթն է: Ամէն անձի հոգիէն՝ Քրիստոսէն, գեղեցկութիւն, համերաշխութիւն, խաղաղութիւն, կարգապահութիւն եւ պարտաճանաչութիւն պէտք է ցոլայ, անշուշտ, եթէ անձը արտօնէ: Կեանքը զարթօնքի եւ անհատին իր անձին մէջ Աստուածայայտնութեան առիթն է: Մարդը իր կենցաղով իր մէջ Քրիստոսին արտայայտուիլը պէտք չէ խափանէ: Անձին կենցաղովն է որ կը յայտնուի իր հոգիէն բղխած առաքինութիւնները: Ամէն անձ ճշմարտութիւնը գտնելու համար պարտ է անձնապէս պրպտումներ կատարել, որպէսզի ինք անձնական փորձառութեամբ Զայն գտնէ եւ ճանչնայ: Անհատը կը հասկնայ թէ «երկինք»ը՝ Աստուծոյ թագաւորութիւնը, ամէն անհատի ներսը՝ սրտին մէջն է եւ այդ գիտակցութիւնը իր ունեցած առաքինութիւններէն կախեալ է:

«Եւ շատիցէ՛ն թէ ահա-ասիկ ա՛ստ է՛ կամ անո՞ր,
չի ահա արեւայտութիւնն Աստուծոյ՝ ի նե՛րէն ՚ի
յեզ է»: (Ղուկաս ԺԷ:21)

«Եւ պիտի չըսեն. «Ահա՛ հոս է, կամ՝ Ահա՛ հոն,
որովհետեւ ահա՛ Աստուծոյ թագաւորութիւնը ձեր
ներսն է»»:

Երբ անհատը այս գիտակցութեան հասնի, անկարելի կ'ըլլայ որ իր սորվածը ուրիշին չփոխանցէ, քանի որ ինք նաեւ կը գիտնայ, թէ այդ իր պարտականութեան եւ պատասխանատուութեան մաս կը կազմէ:

Երբ մարդ տիեզերական օրէնքներու դէմ կը գործէ, մեղք գործած կ'ըլլայ՝ պատիժի ենթակայ: Դժբախտաբար, նամանաւանդ, Հին Կտակարանի մէջ Աստուած մեզի ներկայացուած է որպէս վրէժխնդիր,

բարկացող եւ պատժող Աստուած մը: Այս հայեացքը կը ներկայացնէ մարդուն խաւարամտութիւնը՝ գիտակցութեան ցած մակարդակը, քան թէ Աստուծոյ բնոյթը:

«Զի այսպէս ասէ Տէր պօրոշեանց Ասորոսած Իսրայելի. Որպէս կաթեաց արգամբոշիւն Քարկոշեան իմոյ՝ ՚ի վերայ Բնակչաց Երոսասաղեմի, նոյնպէս կաթեաց արգամբոշիւն իմ՝ ՚ի վերայ Յէր . . . » (Երեմիայ ԽԲ:18)

«Արդարեւ գօրքերու Տէրը՝ Իսրայելի Աստուածը սա՛ կը յայտարարէ, «Ինչպէս իմ բարկութիւնս եւ ցասումս Երուսաղէմի բնակիչներուն վրայ թափուեցան, այնպէս իմ ցասումս ձեր վրայ պիտի թափուի . . . »»

«Բանսի յայտնելո՞ց է Քարկոշիւն Ասորոսածոյ յերկնից ՚ի վերայ ամենայն ամպարչորոշեան եւ անիրասոշեան մարդկան որվ պճճարգորշիւնն անիրասոշեամբ ունի» : (Հոսիմայեցիս Ա:18)

«Արդարեւ Աստուծոյ բարկութիւնը երկինքէն կը յայտնուի մարդոց ամբողջ ամբարշտութեան եւ անիրաւութեան վրայ՝ քանի անոնք անիրաւութեամբ գերի բռնած են ճշմարտութիւնը»:

Յիսուս յայտնեց թէ Աստուած սէր է, մեզի համար միայն լաւագոյնը կը բաղձայ եւ չի պատժեր: Սակայն այդ չի նշանակեր թէ մենք մեր ցանած հոնտերուն հոնձքերը պիտի չքաղենք: Վատ հոնձքերուն՝ կեանքի պատահարներուն համար պէտք է Աստուած մեղադրել, անոնք, ըստ տիեզերական օրէնքներուն, հետեւանքն են մեր կերտած ճակատագրին: Միալ հաւատալիքներ եւ ըմբռնումներ, զարմանալիօրէն, շատ աւելի հրապուրիչ կը թուին ըլլալ, որովհետեւ անձը չուզեր վատ պատահարներուն պատասխանատուութիւնը իր վրայ առնել: Սակայն անոնք արգելք կը հանդիսանան

«գարթօնքին», մարդը կը խոտորեցնեն ուղիղ ճանապարհէն եւ ձախորդութեան կ'առաջնորդեն:

Այս երրորդ հատորովս՝ «Տիեզերական Օրէնքները» գիրքով, նամանաւանդ որպէս սարկաւազ՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ ծէսերուն սպասաւոր, կը ջանամ կատարել ինծի վիճակուած պատասխանատուութիւններէն եւ պարտականութիւններէն մին: Ինչպէս անցեալին գրած էի, ես այս նիւթերու մասնագէտը ըլլալու յաւակնութիւնը չունիմ: Ներկայիս այս տեսակէտը իմ վրաս դրական ազդեցութիւն ունեցաւ, հետեւաբար կը ներկայացնեմ նաեւ իմ ազգակիցներուն, ոչ իբրեւ բացարձակ իրողութիւն, այլ իբր տարբեր տեսակէտ մը, որ շեղում մը չէ մեր վարդապետին՝ Յիսուսի սորվեցուցածներէն: Յուսալից եմ, որ այս գիրքը իման մը ըլլայ մեզ մղելու դէպի ինքնուղղեաց պրպտումի եւ անձնական փորձառութեամբ հասնիլ ճշմարիտ հաւատքի (faith), քան թէ պարզապէս, մեր հաւատալիքներուն (belief) ազդեցութեան տակ, ըսել՝ «կը հաւատամ հետեւաբար փրկուած եմ» եւ սպասել մահուան, որպէսզի «երկինք» երթանք: Դրախտը հո՛ս՝ աշխարհի վրայ է, եթէ մեր զարթօնքով եւ կենցաղով զայն ստեղծենք ներկայ կեանքի մէջ: Պրպտումը պէտք է ըլլայ ինքնուղղեաց, որովհետեւ Աստուծոյ թագաւորութիւնը՝ Քրիստոս մեր ներսիդին է: «Զարթօնք» գիրքին մէջ «Նուիրեալը» խորագրեալ քերթուածին հետեւեալ տունը հոս մէջբերել յարմար կը նկատեմ.

Ամէն անձ պարտ է ճանչնալ
Ճշմարտութիւնը իր Էութեան,
Ապա թէ ոչ ինչպէ՛ս գիտնալ
Էութիւնը Ճշմարտութեան:

Համայն մարդկութիւնը կը փնտռէ Աստուածամենուրեք: Հետեւեալ պատմութիւնը, իբր փոխաբերութիւն, մարդուն ներկայ կացութիւնը հասկնալու

համար կը յուսամ օգտակար կ'ըլլայ:

Ովկիանոսին մէջ շատ խելացի ձուկ մը կար: Բոլոր ձուկերը իրենց խնդիրները այս խելացի ձուկին կը ներկայացնէին: Ան ալ անոնց կը յորդորէր եւ խրատներ կու տար: Բոլոր ձուկերը զինք կը յարգէին: Երբ իրեն խօսք կ'ուղղէին, ոչ թէ անոր անունը կ'ըսէին, այլ որպէս մեծարանք «փիլիսոփայ» կը կոչէին: Օր մը ձուկերէն մին երբ ժայռի մը քովէն կ'անցնէր, կը տեսնէ որ փիլիսոփայ ձուկը ընկճուած եւ տխուր, ժայռին շուքին տակ կեցած կը խորհէր: Ձուկը փիլիսոփային կը մօտենայ եւ հարց կու տայ, թէ ինչո՞ւ տխուր կ'երեւի: Փիլիսոփայ ձուկը կը պատասխանէ. «Իմացայ թէ հսկայ ովկիանոս մը կայ: Ձայն գտնելու համար երկար ժամանակ է ի վեր շատ հեռուներ լողացի, դէպի հիւսիս, դէպի հարաւ, դէպի արեւելք եւ դէպի արեւմուտք, բայց ովկիանոսը չկրցայ գտնել: Ես շատ անբախտ ձուկ մըն եմ»:

Ձուկին այս կացութիւնը՝ ովկիանոսին մէջ ըլլալով հանդերձ, ովկիանոսին մէջ գտնուելու անգիտակցութիւնը, զարմանք պէտք չէ պատճառէ: Ձուկը որքան ալ խելացի ըլլայ, իր ուղեղը ձուկի ուղեղ է: Մարդ արարածն ալ Աստուծմով շրջապատուած է, բայց Ձայն չի տեսներ եւ անընդհատ Ձայն կը փնտռէ ասդին-անդին: Արդե՞օք մարդու ուղեղն ալ ձուկի ուղեղի մը չափ է, ապա թէ ոչ, մարդ տակաւին չէ սկսած իր ուղեղը պատշաճ կերպով գործածել:

Այս գիրքին նպատակը ցոյց տալ է, թէ ներկայ կեանքը, Աստուծայայտութիւնը իրականացնելու համար մեր միակ առիթն է եւ ոչ թէ յետ մահու փրկուիլը: Փրկութիւնը հոս է եւ հիմա պէտք է ըլլայ:

(ԼՈՅՍ Ի ԼՈՒՍՈՅ «Գ»
ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ՕՐԻՆՔՆԵՐԸ գերբին վերջաբանին առնուած)

ՃՀՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՃԱՆՉՆԱԼ

Եւ սժափեալ վերստին ի ննջմանէ ծանրութեան
ամենազգաստ արթնութեամբ, Հոգենորոզ
զուարթութեամբ ի քեզ արձանացեալ,
զայս ձայն մտղթանաց՝ բուրմամբ Հաւատոյ քեզ՝
ամենօրհնեալ թագաւոր փառաց անճառից,
փառաբանողաց երկնագումար խմբից երգակցեալ՝
յերկինս առաքել:

Գրիգոր Նարեկացի (Բան ԺԲ.)

Ժամանակը եւ ձեւը՝ նիւթը կամ մարմինը պատրանքային են, կացութիւններ՝ պատահարներ կու գան ու կ'երթան: Այս իրողութեամբ շատ աւելի դիւրին կը տպաւորուինք, երբ ժամանակի անցքով նկարուած (time lapse photography)՝ ծաղիկի մը բացուիլը, գեղեցկութիւնը եւ յետոյ ալ թոռմիլը եւ մահը ներկայացնող ժապաւէն մը դիտենք: Աշխարհի վրայ ամէն բանի ընթացքն ալ նոյնն է, միայն ժամանակամիջոցները քիչ մը իրարմէ կը տարբերին: Ամէն ինչ նոյն անտեւականութեան (impermanence) ենթակայ է: Օրինակը մեզի համար այժմէական է, երբ կը տեսնենք Արեւմտահայաստանի դարաւոր կոթողները՝ եկեղեցի եւ վանքերը, միայն մի քանի քար մնացած: Պատճառը կարելոր չէ, այլ՝ միայն այդ ընթացքին իրողութիւնը:

Եթէ տիեզերքի մէջ ամէն ինչ անտեւական ըլլար, մենք ալ անտեւականութեան մասին գաղափար անգամ պիտի չունենայինք: Երեւակայենք թէ աշխարհի վրայ ամէն ինչ կապոյտ է: Արդեօք պիտի կարողանայի՞նք կապոյտը գիտնալ, կամ որեւէ բան տեսնել եւ իրարմէ զանազանել: Միայն բաղդատելով կարող ենք ամէն ինչ տեսնել եւ հասկնալ: Կապոյտ գոյնը գիտենք, որովհետեւ զայն կը բաղդատենք միւս գոյներուն հետ: Նմա-

նապէս անտեւականութեան տեղեակ ենք, որովհետեւ տեւականութիւնը՝ անմահութիւնը՝ յաւիտենականութիւնը մեր հոլութիւնն է: Անտեւականին փարիլ «Ես»ին՝ սատանային կամքն է, իսկ մեզի կը մնայ կեանքին ազդէ: Մարդ կը կարծէ թէ երթալիք տեղ մը կայ, կամ ըլլալիք բան մը կայ, անգիտակից՝ թէ Ան իր հոլութիւնն է: Հետեւաբար իրեն կը պարտի միայն այս իրողութեան անդրադառնալ: Այս ընթացքը հորիզոնական չէ, այլ՝ ուղղահայեաց, դէպի իր հոլութեան խորքը: Բոլոր բնութիւնը միականութեան ներդաշնակութեամբ կ'ընթանայ, միայն մարդիկ են, որ տառապանք կը ստեղծեն: Եթէ մարդ չմիջամտէ բնութեան ընթացքին, պիտի գիտակցի կեանքին աստուծի գեղեցկութեան, կայտառութեան, աշխուժութեան եւ սրբութեան:

«Նայեցար՝ Վ ընդ շո-շանն՝ ո՛րպէս ասէ, ո՛չ ջանայ՝ ե- ո՛չ նի-նէ՛: Եսէ՛մ Յէզ, ե- ո՛չ Սողոմոն՝ն յամենայն ՚ի փառ-ան ի-ր պիեցա- իբրե- պմի ՚ի նոցանէ: Իսկ եթէ պխոյն՝ որ այսօր ՚ի Բայբ՛ է՝ ե- վաղի- ՚ի Ընոց արկանելի, Եսրո-աթ այնպէս պիեցո-ցանէ, ո՞րչափ ե-ս աս-ա-ել պէեզ թէ՛րաւա-արփ»: (Ղուկաս ԺԲ 27-28)

«Դիտեցէ՛ք շուշանները, թէ ինչպէս կ'աճին: Ո՛չ կ'աշխատին եւ ո՛չ կը մանեն. բայց կը յայտարարեմ ձեզի թէ Սողոմոն ալ՝ իր ամբողջ փառաւորութեան մէջ՝ չհագուեցաւ անոնցմէ մէկուն պէս: Ուստի եթէ խտր, որ այսօր դաշտի մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի՝ Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, ո՛րչափ աւելի ձե՛զ, թերահաւատները»:

Նմանապէս, եթէ մարդ չմիջամտէ իր կեանքի ընթացքին, ինք ալ պիտի գիտակցի իր հոլութեան երանութեան:

Մարդու միջոցաւ է որ բնութիւնը ինքն իրեն գիտակից կ'ըլլայ: Մենք կը պարտինք միայն «արթուն» ըլլալ: Անձնատուութիւնը այդ արթնութեան արդիւնքն է, ինչպէս նաեւ կեանքի ընթացքին յանձնուիլ է, քան թէ ջանալ զայն փոխել: Հարկաւ «Ես»ը նման հայեացք մը տկարութիւն կը համարէ: Երբ կեանքի ընթացքին կը յանձնուինք, աւելի կարեւոր կ'ըլլան մեր արարքները, քան թէ անոնց արդիւնքները, ինչպէս նաեւ մեր արարքներուն որակը, քան թէ անոնց քանակը: Նման հայեացք կը ներկայացնէ ներկային մէջ ապրիլ: Ներկան յաւիտեան է: Երբ մեր բոլոր արարքները նման հայեացքով կը գործենք, անկարելի է որ ինքնափոփոխութիւն տեղի չունենայ: Երբ «փոփոխութիւն» կ'ըսենք, մարդ արարած միշտ կը ջանայ փոփոխութիւն յառաջացնել արտաքինը փոխելով: Այս ընթացքը միշտ կը ձախողի: Երբեմն մարդ արարած կեանքի հարուածին՝ հիւանդութեան կամ աղէտի մը կը կարօտի, որպէսզի անդրադառնայ, թէ յաջողութեան համար փոփոխութիւնը ներքին՝ իր անձին մէջ պէտք է ըլլայ: Աստուածահաճոյ գործունէութիւնը կարելի չէ մարզուելով սորվիլ, այլ ան ինքնաբերաբար կ'իրականանայ, երբ մենք «ներքին» փոփոխութիւն կերտենք՝ գիտակցօրէն գործենք:

Ամէն մի անհատ կը պարտի այդ ինքնափոփոխութիւնը իր մէջ իրականացնել: Մեր հայեացքը երկուութեան վրայ հիմնուած կը թուի ըլլալ: Երբ զատողութիւն կը յառաջացնենք, սէր գոյութիւն չի կրնար ունենալ: Աստուած ամէն մի անհատի մէջ է, ուրեմն երբ մենք որեւէ տեղ մը ներկայ ենք, կը նշանակէ, թէ Աստուած ալ հոն է: Աստուած սէր է, ուրեմն ինչո՞ւ սէրը մեզմէ բոլորին չի հոսիր: Երբ զատողութիւնը անհետանայ եւ բոլորին միականութիւնը տեսնենք եւ հասկնանք, այդ պարագային սէրն

ալ կը հոսի մեզմէ դէպի բոլորին: Աս ալ մեզի նշան մըն է, թէ որոշ չափով յաջողած ենք «ներքին» փոփոխութիւն մը իրականացնել: Ուրեմն այս ուղղութեամբ մեզի առաջնորդող նշաններ կան: Վախազդու երազները մեր զարթուցիչ ազդակներն են: Երազները ծագում կ'առնեն մեր զօրութեան «մարմին»ներէն: Անձկութիւն, ճնշում, ջղայնութիւն, խուճապ, սոսկում եւ բարկութիւն բոլորն ալ վախու երեւոյթներ են, բայց ընդհանուր առմամբ չենք անդրադառնար անոնց ետին գտնուող վախին: Այն վախերը, որ քունի մէջ վախազդու երազներու պատճառ կ'ըլլան, այս մեր արթուն կոչած կեանքին մէջ ալ մտային (paranoia or phobias) եւ այլ հիւանդութիւններու պատճառ կ'ըլլան: Յոյսը եւ վստահութիւնը վախը կը վանեն:

Վերոյիշեալ կարճ վերաքաղէն յետոյ, ինձ կը մնայ միայն մէկ բան՝ իմ անձիս մէջ իրագործել այն ինչ որ սորվեցայ հրատարակած երեք գիրքերուս պատրաստութեան միջոցին: Եթէ ձախողիմ, բոլոր աշխատանքս ի գուր է: Ինչպէս նախորդ երկու գիրքերուն մէջն ալ մատնանշած էի, ես այս նիւթերուն մասնագէտը ըլլալու հաւակնութիւնը չունիմ: Այս երեք գիրքերուն միջոցաւ ներկայացուցի հոգեւոր կեանքի եւ Յիսուսի բոլոր սորվեցուցածներուն նկատմամբ իմ հասկացողութիւնը: Շատ հաւանական է, շատերու համար անոնք համապատասխան չըլլան աշակերտներու ըսածներուն, մանաւանդ եթէ անոնց մակերեսային եւ բառացի իմաստները նկատողութեան առնուին: Իմացական հասկացողութիւնը հրապուրիչ կրնայ ըլլալ, բայց անօգուտ է, եթէ չկարենանք այդ կեանքը նաեւ գործնականօրէն ապրիլ: Իմացական հասկացողութիւնը հոգեւոր ճանապարհին միայն առաջին քայլն է: Երկրորդ քայլը պաշտամունքն է: Պաշտամունքը ծիսակատարութիւն չէ: Ան, կը նշանակէ

Աստուած այնքան սիրելի, որ իր հետ միանալու տենչանքը գերազանց մեր սիրելիներուն եւ աշխարհի հետ մեր ունեցած կապը: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «... Ես բաժնեւոր եկայ»:

«Համարիչ է՞նչ խաղաղութի՞նն եկի Կալ յերկիր,
ո՛չ, ասե՛մ յեզ, այլ բաժի՛նս»: (Ղուկաս ԺԲ: 51)
«Կը կարծէք թէ ես եկայ՝ երկրի վրայ խաղաղութի՞ւնս
տալու: Կ'ըսեմ ձեզի. «Ոչ՝ հապա բաժանում»:

Երրորդ քայլն ալ մեր անձը «Հարսանիք»ին պատրաստել է՝ գործնականը, այսինքն պատշաճ կենցաղ մը կերտելն է: Իսկ եթէ հասկացողութիւնը, ենթագրեալ բազմազանութեան միականութիւնը գիտակցիլն է, հետեւաբար անձն ալ կը հասկնայ թէ ինք մէկ է՝ բոլորին հետ: Ան նաեւ կը հասկնայ թէ ինք ուր որ է Աստուած ալ հոն է: Աստուած սէր է: Ուրեմն եթէ ինքզինք պատշաճ կերպով պատրաստած ըլլայ, Աստուծոյ սէրն ալ իրմէ կը հոսի դէպի բոլորին: Նաեւ, քանի որ բոլոր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ Աստուծոյ «մարմինը», հետեւաբար սէրն ալ կ'ըլլայ Աստուծոյ հանդէպ: Ապա թէ ոչ բոլորն ալ կ'ըլլան պարզ հաւատալիքներ, որոնք մեր փորձառութեան մաս չեն կազմեր: Անոնք թէ մեզի եւ թէ ուրիշներուն աւելի վնաս կը հասցնեն քան թէ օգտակար կ'ըլլան:

Այս ուղղութեամբ յարմար կը նկատեմ հոս պզտիկ պատմութիւն մը ներկայացնել: «Լոյս ի Լուսոյ» գիրքիս «Ի՞նչ են մարդկային բնութիւնները» խորագրեալ Գ. գլխուն մէջ ներկայացուցած էի երեք տարբեր բնութեան տէր անձեր՝ գործնական մարդը, զգացական մարդը եւ իմացական մարդը: Այս պատմութեան մէջ կան երեք աստուածավախ հաւատացեալներ, որոնք Աստուած տեսնելու տենչանքը ունին, եւ իրենց կեանքը նուիրած են այդ տենչանքը իրականացնելու համար: Մին, որ բնութեամբ գործնա-

կան մարդ մըն է, իր կեանքի տեւողութեան անընդհատ Աստուած կը պաշտէ իր ծառայութեամբ, գթասրտութեամբ եւ բոլորին օգնութեամբ: Երկրորդը, իր բնութեամբ զգացական մարդ մը, Աստուած կը պաշտէ անընդհատ աղօթքով եւ ժամերգութեամբ: Երրորդը, իմացական մարդ մը, անընդհատ Աւետարանը կ'ուսումնասիրէ, կը ջանայ գրուածները մեկնաբանել՝ հասկնալ անոնց բուն վերացական իմաստները եւ զանոնք այժմէականացնել բաղդատելով գիտութեան (science) տուեալներուն հետ եւ գիտութեամբ (knowledge) իրականացնել իր տենչանքը: Ինչպէս «Լոյս ի Լուսոյ» գիրքին մէջ գրուած է, այս երեք տարբեր բնութիւններու տէր անձերը անկարելի է որ իրարու հայեացքները հասկնան եւ ընդունին: Հետեւաբար իրարու հետ չեն ընկերակցիր: Բախտը այնպէս մը կը բերէ որ օր մը այս երեքը, ամայի վայր մը, նոյն ուղղութեամբ կը ճամբորդեն: Դարձեալ իրենց բախտին, տեղատարափ կ'անձրեւէ: Երեքն ալ անձրեւէն պաշտպանուելու համար միջոց կը փնտռեն: Զգացական մարդը կ'ըսէ, թէ մօտը լքուած հին վանք մը կայ եւ կարելի է հոն պատսպարուիլ: Երեքն ալ վազելով վանքը կը գտնեն, բայց կը տեսնեն որ ան քանդուած է եւ միայն խորանին գտնուած տեղին գմբէթը կայուն կը կենայ՝ չորս սիւներու վրայ: Պատերը բոլորը փլած, գմբէթին տակն իսկ պատշաճ կերպով անձրեւէն կարելի չէր պաշտպանուիլ: Գմբէթին տակը, գետինը ճիշդ մէջտեղը, երկաթէ խաչ մը կանգուն մնացած էր: Անոնք կը նշմարեն, թէ միայն այդ խաչին անմիջական շուրջը չոր է: Երեքն ալ խաչը իրենց մէջտեղը առած, իրար փաթթուած, անձրեւին դադրիլը կը սպասեն: Գմբէթին տակը մէկէն կը լուսաւորուի եւ Յիսուս Քրիստոս իրենց կը ներկայանայ: Իրենք անմիջապէս ծոնկի կու գան եւ կ'երկրպագեն: Աստուծոյ հարց կու տան, թէ

ինչո՞ւ այս վայրկեանը գտաւ իրենց յայտնուելու, երբ իրենք պատշաճ կերպով չէին կրնար Զինք մեծարել, վերէն վար թրջած եւ ամէն կողմերնին ցեխոտ: Քրիստոս կը պատասխանէ. «Առաջին անգամն է որ ձեզ երեքդ միասին իրար փաթթուած գտայ»:

Եթէ իսկապէս կը փափաքինք Աստուածայայտնուեթիւնը իրականացնել մեր անձերուն մէջ, պարտենք պատշաճ գիտութիւն ամբարել, որպէսզի գիտնանք թէ ինչպէս պէտք է լաւագոյնս գործենք եւ զայն իրականացնենք իբր անհուն սիրոյ եւ տենչանքի մը արտայայտութիւնը: Ամէն մի անհատի կեանքի նպատակը իր ներքին Քրիստոսի կանթեղը վառելն է: Այդ կանթեղին ամանը անձին Աստուածապաշտութիւնն է, իսկ ամանին մէջի իւղն ալ՝ սէրը. կանթեղին պատրոյղը (wick) հանդարտ միտքն է, իսկ պայծառ բոցն ալ՝ անձին ինքնաճանաչումը: Երբ համայն մարդկութիւնը այս ուղղութեամբ յաջողի, Քրիստոսի կանթեղն ալ մեծաշխարհային չափի վրայ կը յայտնուի, աշխարհը կ'ըլլայ կանթեղին ամանը, ովկիանոսին ջուրերն ալ իւղը եւ արեւն ալ՝ անոր բոցը:

Ա ու Մ ԱՄԷՆ

*Աղբիւր անմահութեան, աղբերացո՛ւ ի սրտէ իմմէ
զարտասուս ապաշխարութեան՝ որպէս պոռնկին, զի
լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զեքանեքն իմ՝
յաշխարհէս. եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ
բազմամեղիս:*





Ահանձի թռչող փոթորիկներուն
դէմ Ես դուրս եմ գալիս
է եւ դու միակ պարտաւորանքը:
Ես դուրս եմ գալիս
մի ինքնակամ էլ եւ դու
Հանգստանալու:

(ԽՈԿՈՒՄ գիրքին յառաջաբանէն առնուած)

ԻՆՉՈՒ ԽՈԿԱԼ

Նկատելով, թէ խոկումը աղօթքին ամենավեհ, ամենա-
ազդեցիկ եւ ամենաարդիւնաբեր կերպն է, որոշեցի
խոկումի առնչութեամբ ցարդ գրած բոլոր գրութիւն-
ներս ամփոփել սոյն գրքոյկին մէջ: Կեանքին նպատա-
կը, ինչպէս զանազան գրութիւններու մէջ մատնա-
նըչած եմ, անհատին իր մէջ Աստուածայայտնութեան
իրականացումն է: Աս ալ կարելի է բարձր գիտակցու-
թեան մակարդակի մը կերտումով, ինչ որ կարելի է
Յիսուսի սորվեցուցածներուն հետեւելով: Այս է փրկու-
թեան միակ միջոցը: Գիտակցութեան մակարդակի
բարձրացման միակ միջոցն ալ խոկումն է: Ինչպէս
Կանտի ըսած է. «Աղօթքը խնդրանք չէ: Ան հոգիին
կարօտն է»: Աղօթքը նոյնիսկ փրկութիւն խնդրել կամ
փափաքիլ չէ, որովհետեւ փրկութիւն խնդրելով ցոյց
կու տանք, թէ մենք տակաւին մեր «Ես»ին կապուած
ենք, այլ «Ան հոգիին կարօտն է», ան Քրիստոսի
միանալու տենչանքն է, ոչ թէ մահէ յետոյ, այլ՝ հիմա,
հոս՝ աշխարհի վրայ: Ան իւրաքանչիւր անհատի իր
խաչը առնել եւ Յիսուսի հետեւիլն է: Խոկումն ալ այս
կարօտը՝ տենչանքը իրականացնելու համար, աղօթքին
միակ ձեւն է: Աւետարանին մէջ գրուած յափշտակու-
թիւնը գիտակցութեան մակարդակի յանկարծակի փո-
փոխութիւնն է: Անձը պարտ է խոկումի չսկսած նախ
ինքզինք այդ յափշտակութեան պատրաստէ՝ փոխելով
իր հայեացքը եւ կենցաղը՝ այն ինչ որ կրօնքը մեզի կը
սորվեցնէ: Մեր Աստուածատուր Ս. Եկեղեցիին բոլոր
ժամերգութիւններուն, արարողութիւններուն եւ Պա-
տարագին նպատակը, իրենց պարունակած խորհրդա-
ւոր (mystical) իմաստասիրութեամբ, մեզի սորվեցնել է
մեր անձերուն մէջ կերտել վերոյիշեալ հայեացքը եւ

տենչանքը՝ ճշմարիտ հոգեւոր ճանապարհը: Իսկ մենք մակերեսային հասկացողութեամբ մը, ընդհանուր առմամբ զգացական, նաեւ նուազ քանակով ալ իմացական ըմբռնումով, զանոնք վերածած ենք որոշ չափով հրապուրիչ, բայց պարզ աւանդութեան մը: Նման հայեացքով ալ, Ս. Գիրքը մակերեսային, զգացական եւ բառացի հասկացողութեամբ մը ըմբռնելով, չենք կարողացած Յիսուսի սորվեցուցածներուն բուն խորհրդաւոր իմաստը տեսնել կամ հասկնալ: Ս. Գիրքի սերտողութիւնն ալ պէտք է ըլլայ խորհրդածութեամբ, որ կը նշանակէ խոկալով:

Ինչպէս Հռովմէական Կաթողիկէ Եկեղեցւոյ Սուրբերէն Հայր Փիօ (Padre Pio) ըսած է. «Գիրքեր կարդալով ստացուած գիտութեամբ մարդ Աստուած կը փնտռէ, իսկ խոկալով՝ Աստուած կը գտնէ»: Ուրեմն մենք ալ պարտ ենք նախ զմեզ պատրաստել, եւ յետոյ սկսիլ խոկալ, անշուշտ, եթէ կը փափաքինք Աստուած գտնել եւ չենք գոհանար միայն Ձինք փնտռելով: Իսկ եթէ չենք ուզեր աշխարհէն բաժնուիլ ու Աստուած գտնել, կամ կը փափաքինք միայն մահէ վերջ Քրիստոս գտնել, պէտք է սկսինք խոկալ:

Կարելի է ոմանք կը խորհին, թէ Ս. Գիրքին մէջ խոկումի մասին որեւէ տեղեկութիւն չկայ: Այս հայեացքը սխալ է: Գրութիւններու մէջ թէ՛ Նոր եւ թէ՛ Հին Կտակարաններէն հետեւեալ մէջբերումները ըրած են, թէ ինչպէս պէտք է ըլլայ ճշմարիտ աղօթքը.

«Կանխեցէ՛ք է- ծաներո-՛ւն պի ես եմ Աստու-ած»:

(Սաղմոսաց ԽԵ:11)

«Հանդարտ կեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ՛ ես եմ Աստուած»:

(Սաղմոսաց ԽԶ:10)

«Ե՛յլ որ- յորժամ կայցես յաղօթս, մո՛տոս ՚ի սենեակ ին՝ է- փակեա՛ւ պարտոս ին, է- կա՛յց

յաղօթա առ Ըայր ին թաթո՛ւն, եւ Ըայրն ին
որ ցեաանէ ՚ի թաթո՛ւն, Ըայրոսցե ի՛նչ
յայրնապէս» : (Մաթթէոս 9:6)

«Իսկ դո՛ւն՝ երբ աղօթես՝ մտի՛ր ներքին սենեակդ, գոցե՛
դուռդ, եւ աղօթե՛՛ Հօրդ՝ որ գաղտնի տեղ կը գտնուի-
ու Հայրդ՝ որ կը տեսնէ գաղտնիքը, բացայայտօրէն
պիտի հատուցանէ քեզի»:

*Բայց անոնք շատերու կողմէ կարելի է բացայայտ չնը-
կատուին: Ճիշդ է, թէ անոնք խոկում ին նկատմամբ ան-
ուղղակի ակնարկներ են: Բայց Հին Կտակարանի հետեւ-
եալ համարները խոկում ի բացայայտ ակնարկներ են :*

«Եւ ել Իսահակ պօօանէլ ՚ի դաշտին ընդ երեկոս
ամբարշտ պաշտ իւր՝ եւ երես պի գային ուղտի
ցասն» : (Օնոնդի ԻԴ:63)

«Եւ Իսահակ իրիկուան դէմ դուրս ելած էր՝ դաշտին
մէջ խոկալու համար: Երբ իր աչքերը վերցուց ու
նայեցաւ, ահա՛ ուղտեր կու գային»:

“And Isaac went out to meditate in the field at the eventide;
and he lifted up his eyes and saw, and behold, the camels
were coming.”

«Սիրոյ՛ արդարոց խոկան պահասոս, քերան
ամբարշտի պարասխանի ցայ պշարիս : Ընդունելի
են առաջի Տէառն Ճանապարհի մարդոց
արդարոց, վասն նոցա եւ թշնամի՛ թարեկամի
լինին» : (Լուսկայ ԺԵ:28)

«Արդարին սիրտը կը խորհրածէ՛ պատասխանելու
համար, Իսկ ամբարիչտներուն բերանը չարիք
կ'արտաբերէ»:

«Զի թէ յիշէի պի՛նչ յանկողնի իմում, ընդ
առասօցոս կանխեալ խօսէի ընդ ինչ» : (Սաղմոս ԿԲ:7)

«Երբ անկողինիս վրայ քեզ կը յիշեմ, գիշերուան
պահերուն մէջ քու մասիդ կը խորհրվածեմ» : (Սաղմոս
ԿԳ:6)

«Եւ անչինէ յեր խոկասցեն յերկեւոյ Տեառն...»:


(Լուսայի 1Գ:18)

«Քու սիրտդ աներու մասին պիտի խորհրդածէ ...»:

«Եւ մի մերժիցես ըստի որ օրինացս այսոցիկ 'ի բերանոյ ինձմէ, եւ խոկասցես 'ի դոսս 'ի ցոռէ եւ 'ի Գեշերի, զի իմասցես ասնել զամենայն Գրեալսոց 'ի դմա, եւ ապա աջողեսցես եւ ուղղեսցես զճանապարհս ին, եւ ապա ինչամոտոց լինիցես: Եւ ապա որոնք մէջ զօրացիցի եւ ինձ լեր մի՛ զանգիտիցես. եւ մի՛ երկնչիցես. զի ընդ ինձ է Տեր Աստուած ին յամենայն ցեղիս ուր եւ երթայցես»: (Յեսայ 45:8-9)

«Այս Օրինքին գիրքը բերանիդ թող չհեռանայ, հապա գիշեր-ցերեկ անոր մասին խորհրդածէ, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները զգուշութեամբ գործադրես, քանի որ ա՛յն ատեն քու ճամբաներդ պիտի յաջողցնես, եւ ա՛յն ատեն, պիտի յառաջդիմես: Ահա՛ քեզի կը պատուիրեմ. Ուժովցի՛ր եւ քա՛ջ եղի՛ր, մի՛ անաբեկի՛ր ու մի՛ գարհուրի՛ր. որովհետեւ Տերը՝ քու Աստուածդ քեզի հետ է՝ ո՛ւր որ երթաս»:

Հետեւաբար խորհրդածելը՝ խոկումը, Ս. Գրային հանգամանք ունեցող, աղօթելու ամենապիտէ ձեւն է:



(ԽՈԿՈՒՄ գիրքին վերջաբանէն առնուած)

ՀԱՄԿՆԱԼ ԽՈԿՈՒՄԸ

«Մենիլ երբ տակաւին ողջ եմք»:

(Ուէյն Տայլըր)

“To die while we are alive”

(Wayne Dyer)

Մտադիր եմ այս գրքոյկին պարունակութիւնը
ամփոփել այս գրութեան մէջ:

Աշխարհը եւ անհուն տիեզերքը, բոլորն ալ ստեղծուած՝ յառաջ եկած են Աստուծմէ, Իր զօրութեան՝ «Բան»ին՝ Ս. Հոգիին միջոցաւ: Իսկ այդ Զօրութեան Ֆիզիքական արտայայտութիւնն ալ կը կոչենք Քրիստոս: Ըստ Յովհաննու Աւետարանին Ա:1-14, բոլոր ստեղծագործութիւնը, ներառեալ իւրաքանչիւր անհատ, այդ Զօրութեան՝ Ս. Հոգիին արտայայտութիւնն է: Հետեւաբար, քանի որ Ֆիզիքական գոյութիւն ունինք, Քրիստոսն ալ ամէն մի անհատին էութիւնը կը ներկայացնէ: Ամէն մի անհատի կեանքը, միտքը՝ խորհուրդներու, զգացումներու, յուզումներու եւ իմացականութեան միջոցը, իր ունեցած բոլոր գիտութիւնները եւ իր մարմինը կազմուած են նոյն Զօրութեամբ: Հետեւաբար միակ ճշմարտութիւնը այդ Զօրութիւնն է:

Երբ իւղաներկ նկարի մը նայինք, կը տեսնենք գեղեցիկ տեսարան մը, բայց ճշմարտութիւնը այն է, թէ կը տեսնենք պաստառ մը՝ վրան ալ զանազան գոյներով ներկուած ձեւեր, որոնք իրենց ներդաշնակութեամբ տեսարան մը կը ներկայացնեն: Շատ անգամ նոյնիսկ այդ ճշմարտութեան չենք անդրադառնար, միայն կը տեսնենք պատկերը՝ տեսարանը: Կան նաեւ նկարներ, որոնք հաճելի եւ գեղեցիկ չեն եւ զանոնք կ'անտեսենք: Դարցեալ չենք անդրադառնար, թէ անոնց ճշմարտութիւնն ալ պաստառը եւ ներկերն են: Անոնք միայն չեն ներկայացներ ներդաշնակու-

Թիւնը, որ ներկայ էր առաջին նկարին մէջ: Պաստառը եւ ներկերը վատ նկարներուն պատասխանատու պատճառները չեն, այլ՝ նկարիչն է:

Երբ աշխարհի՝ բնութեան եւ մարդոց վարած կենցաղին կը նայինք, դարձեալ կը տեսնենք երբեմն գեղեցիկ եւ երբեմն ալ վատ «տեսարաններ» եւ չենք անդրադառնար, թէ բոլորն ալ նոյն զօրութեան արտայայտութիւններն են: Մարդ արարած ստեղծուած է ըստ Աստուծոյ պատկերին, հետեւաբար է նաեւ ստեղծագործիչ: Ինք կը ստեղծէ, կը կերտէ իր կենցաղը եւ իր միջնորոտը: Աստուծոյ Զօրութիւնը ճշմարտութիւնն է եւ կը հայթայթէ «պաստառ»ը՝ աշխարհը եւ «զանազան ներկեր»ը, այսինքն ամէն մի անհատը, անոնցմով ինչ կ'ընենք կախեալ է մեզմէ, քանի որ մեր միջավայրին «նկարիչ»ները մենք ենք: Երբեմն կը «ներկենք» ներդաշնակ գեղեցիկ «նկարներ», հաճելի կենցաղ մը եւ երբեմն ալ վատ: Պաստառը եւ ներկերը չեն ազդուիր նկարիչին վարպետութենէն կամ տհասութենէն, անփորձութենէն: Անոնք կը ներկայացնեն այն ինչ որ նկարիչը կը փափաքի ներկայացնել եւ նկարիչը զայն կ'իրականացնէ իր կարողութեան մակարդակին համաձայն: Մեր վատ խորհուրդ, խօսք ու արարքներն ալ ազդեցութիւն չունին Աստուծոյ վրայ, այլ անոնք միայն կը կերտեն մեր միջավայրին՝ կենցաղին եւ միջնորոտին «պատկերը»: Ընդհանուր առմամբ կը տեսնենք յառաջ եկած «պատկերը» եւ չենք տեսներ՝ անդրադառնար ամէն ինչը կազմող ճշմարտութեան՝ Աստուծոյ: Խոկումին նպատակը այս անդրադարձը իրականացնելն է եւ հասկնալ՝ դիտակցիլ թէ մենք այդ Զօրութիւնն ենք եւ մեզմէ կախեալ է, թէ ինչ որակով Զօրութիւն կը ստանանք եւ ինչպէս զայն կ'օգտագործենք: Ս. Հոգիի շնորհները կը ներկայացնեն որակը այդ Զօրութեան՝ Ս. Հոգիի զօրութեան ներգործումը

մեր էութեան մէջ՝ Քրիստոսի յայտնութեան չափը մեր մէջ: Այս վերջինն ալ կախեալ է մեզմէ: Աստուած մարդուն տուած է բացարձակ ազատ կամք եւ հայթայթած է ան ինչ որ պիտոյ է իրականացնելու համար իր բոլոր փափաքները մինչեւ Աստուածայայտնութիւն իր անձին մէջ: Անշուշտ եթէ անձը փափաքի զայն իրականացնել: Յիսուս յաջողեցաւ զայն իրականացնել եւ սորվեցուց ու ըսաւ, թէ մենք ալ կարող ենք զայն իրականացնել: Չարմանալի է, թէ ինչո՞ւ կը գոհանանք մի քանի ճղճիմ ստացուածքով, երբ բոլոր տիեզերքին հետ կրնանք նոյնանալ: Չարմանալի է, թէ ինչո՞ւ կը գոհանանք մի քանի հոգի սիրելով, երբ կրնանք բոլոր ստեղծագործութեան սիրահարուիլ: Չարմանալի է, թէ անցողակի, ժամանակաւոր եւ կարճ հաճոյքներով կը գոհանանք, երբ անհուն եւ յաւիտենական երանութիւնը կրնանք վայելել: Երբ մարդ, ոչ իմացական այլ փորձառականօրէն, կ'անդրադառնայ իր ճշմարիտ էութեան, թէ ինք Քրիստոսի մէկ արտայայտութիւնն է, այն ատեն ինք ամէն կերպով՝ կենցաղով, խորհելակերպով, խօսքով եւ արարքներով կը փոխուի: Աս է վերստին ծնունդը՝ հետեւանք հոգեւոր ճանապարհին յաջող աւարտին:

Այս գրութեան սկիզբը տեղադրած էի հետեւեալ մէջբերումը. «Մեռնիլ երբ տակաւին ողջ ենք»: Անտարակոյս «մեռնիլ»ը հոս չի նշանակեր մարմնին մահը՝ այլ անձին աշխարհիկ հետապնդումներուն, ցանկութիւններուն ... կապուածութեան մահը, եսասիրութեան մահը: Ան պատկերին մեռնիլն է, որպէսզի տեսնենք թէ՛ «պաստառը» եւ թէ՛ «զանազան գոյները»: Այն ատեն մենք ալ Յիսուսի պէս կրնանք ըսել. ես այս աշխարհին մէջ եմ, բայց

«... ես՝ շեմ յայսմ աշխարհէ»: (Յովհաննուս Լ: 23)

«... ես աս աշխարհէն չեմ»:

Աղօթքին ամենավեճ ձեւին՝ «խոկում»ին նպատակը անձին իր էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդակցելն է: Երբ անձը կը կարողանայ զայն իրականացնել Ս. Հոգիի զօրութիւնն ալ անձէն ներս առատապէս կը ներգործէ: Մեր դպրոցական շրջանին, բնագիտութեան դասերու ուսուցման ատեն սորված ենք, թէ երբ բարձր որակով ելեկտրականութիւն (10.000 վոլթ) բարակ թելերէ անցնի, թելերուն ցուցաբերած բարձր ընդդիմութեան հետեւանք, անոնք կը տաքնան, կը հալին եւ հրդեհի պատճառ կ'ըլլան: Նմանապէս, երբ անձը իր մէջ բարձր որակով Ս. Հոգիի զօրութեան հոսքին համար պատրաստ չէ, պէտք չէ խոկայ: Եթէ իր «թել»ը՝ անձը, այդ որակով «ելեկտրականութեան»՝ Զօրութեան յարմար չէ, պէտք չէ ինքզինք «հոսանքին» կապէ՝ իր էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդակցի: Անձը կրնայ ինքզինքին աւելի վնաս հասցնել՝ քան թէ օգուտ: Եթէ անձին աղօթելու նպատակը պարզապէս վախի եւ ցանկութիւններու հետեւանք խնդրանքներ ներկայացնել չէ, այլ Քրիստոսի հետ հաղորդակցելու տենչանքն է, այն ատեն պէտք է զատէ աղօթքին ամենավեճ ձեւը՝ խոկալը: Խոկումի միջոցով աղօթելը զանազան հանգրըուաններ ունի: Անոնք հետեւեալներն են.

ա- Խոկալու չսկսած, առաջին հերթին անձը պարտ է ինքզինք պատրաստել: Այս իրողութիւնը բազմիցս անգամ այս գրքոյկին մէջ նշուած է: Հոս բաւ է միայն ըսել մահացու մեղքերէ, աշխարհիկ ցանկութիւններէ եւ եսասիրութենէ ձերբազատուիլ ու առաքինութիւններ կերտել:

Եթէ մանուկները ուշադրութեամբ ուսումնասիրենք անոնցմէ կարելի է շատ բան սորվիլ: Ամէն անձ մտային տարրական որոշ տուեալներով կը ծնի :

1: Հետախոյզ ըլլալ. Մանուկները միշտ հարցում կը հարցնեն եւ սորվիլ՝ գիտնալ կ'ուզեն: Չափահաս

ըլլալէ յետոյ՝ համալսարաններ աւարտելէ վերջ, կը կարծենք թէ այլեւս ան ինչ որ պիտոյ է սորված ենք եւ պրպտելէ կը դադրինք: Պէտք է մեր մանկական այդ պրպտելու, սորվելու եւ գիտնալու փափաքը անտեսենք եւ կորսնցնենք, այլ պէտք է զայն վերագտնենք: Միթէ Յիսուս չըսա՞ւ, թէ Աստուծոյ թագաւորութիւնը մանուկի պէս եղողներուն համար է:

2: Խաղալ, այսինքն երջանիկ ըլլալ: Նոյնիսկ չափահաս տարիքին ալ մարդիկ իրենց «երջանկութեան» համար շատ մը խաղեր չէ՞ն ստեղծած: Աս, նշան մըն է, թէ ամէն անձ իր մանկական երջանկութիւնը կը փնտռէ եւ ան արտաքին բաներու մէջ գտնել կը ջանայ: Մանուկները երջանիկ են, որովհետեւ այդ երջանկութիւնը ներքին է եւ տակաւին չեն սորված անոր արտայայտութիւնը խափանել:

3: Հոգատար ըլլալ: Խնամելու զգացումը այն աստիճանի զօրաւոր է, որ մայր մը կը նախընտրէ ինք վնասուիլ քան թէ իր զաւակը: Մանուկներն ալ նման ձեւով կը վարուին: Եթէ շունի կամ կատուի ձագ նուէր տաք մանուկի մը, բոլոր օրը անով կը զբաղի եւ զայն ըստ իր կարողութեան ամենայն ուշադրութեամբ կը խնամէ:

4: Խուճապի զգացումը: Երբ պատիկ մանուկ մը օտար տեղ մը առանձին մնայ խուճապահար (panic) կ'ըլլայ: Չափահասներուն մէջ ալ բազում կացութիւններ խուճապի պատճառ կ'ըլլան:

5: Վախի զգացումը: Մանուկները շատ մը բաներէ կը վախնան, նամանաւանդ այն բոլոր բաներէն, որոնք իրենց օտար են: Իսկ երբ մարդ չափահաս կ'ըլլայ, այն պատճառները, որ վախի տեղի կու տան, կը փոխուին, բայց վախը չ'անհետանար: Վախը, նոյնիսկ երեւոյթով քաջ մարդոց մէջ տարբեր զգացումներու ետին պահոււցած կ'արտայայտուի իբր այդ տարբեր զգացումները:

6: Բարկուլթեան զգացումը. Բոլոր ժխտական զգացումներուն ետին պահուլտած վախի զգացումի արտայայտութեան ամենակարեւոր օրինակներէն մին բարկուլթիւնն է: Բարկուլթիւնը «Ես»էն կը ծագի, որով երկու կամ երեք տարեկանէն պզտիկ մանուկներ ամենեւին չեն բարկանար: Բայց մանուկ մը երկու տարեկանէն սկսեալ կը սկսի իր «Ես»ին անդրադառնալ, հետեւաբար կ'ըլլայ նաեւ բարկուլթեան տէր:

Խոկումէ առաջ ինքնապատրաստութեան մաս կը կազմէ նաեւ բոլոր ժխտական զգացումները անհետացընել: Վերոյիշեալ «յուզում»ներուն վերջին երեքը՝ խուճապ, վախ եւ բարկուլթիւն պէտք է անհետացնել, իսկ առաջին երեքը յառաջացնել: Պրպտելու՝ Աստուած գտնելու փափաքը՝ տենչանքը անձը կը մղէ դէպի խոկալ: Խոկումը կ'ըլլայ երանութեան «խաղ»ը ու սէր, գուլթ եւ կարեկցութիւն կերտելու միջոցը եւ ասոնք կ'ըլլան հանդէպ բոլոր բնութեան եւ համայն մարդկութեան:

Ուրեմն, խոկումին այս առաջին հանգրուանը ինքնապատրաստութիւնն է, որ բուն խոկումը չէ: Ան կը համապատասխանէ Աւետարանէն հետեւեալ մէջբերումին, ուր «սեղան»ը Քրիստոսի ներկայութիւնն է եւ «պատարագ»ը՝ զոհն ալ անձին «Ես»ը.

«Եթէ մարտօնացանիցես պարարագ ինձի վերայ սեղանոյ, եւ անոր յիշիցես՝ եթէ եղբայր ինձ անիցի ինչ իւր պէն, թող պարարագն ինձ աստի սեղանոյն, եւ երբ նախ հարցես ընդ եղբոր ինձ, եւ աստ եկեալ մարտօնացիր պարարագն ինձ»: (Մարթէոս Ե:23-24)

«Ուրեմն երբ քու ընծադ գոհասեղանին վրայ բերես, ու հոն յիշես թէ եղբայրդ բան մը ունի քեզի դէմ, հոն ձգէ ընծադ՝ գոհասեղանին առջեւ. նախ գնա՛ հաշտուէ՛ եղբորդ հետ, եւ ա՛յն ատեն եկուր՝ որ մատուցանես ընծադ»:

բ- Խոկոումին երկրորդ հանգրուանը պարզապէս միտքը կեղբոնացնելու եւ խորհուրդները զսպելու՝ կասեցնելու համար մարզանք մըն է: Աս, շատ պարզ կը թուի ըլլալ, բայց ամենադժուար մասն է, որովհետեւ կամշոտ, քմայքոտ միտքը, կատղած կապիկի մը նման, շատ դժուար կը մարզուի: Միտքը, անձին կեանքի բոլոր ընթացքին, վարժուած է «Ես»ին հնազանդիլ: «Ես»ն ալ՝ «սատանան» անձնասէր, չ'ուզեր իր անձին վրայ ունեցած իշխանութիւնը կորսնցնել, հետեւաբար շատ դիւրութեամբ կը գործածէ իրեն հնազանդելու վարժուած միտքը: Անձը պէտք է զօրաւոր կամք մը կերտէ, որ կարենայ Յիսուսի պէս ըսել. «Երթ յետս իմ սատանայ» եւ մտքին վրայ եղած իշխանութիւնը ինք ձեռք առնէ: Հետեւաբար խոկոումին այս հանգրուանին յաջողութիւնը տարիներու յարատեւութեան եւ համբերութեան կը կարօտի: (Տես նաեւ այս «Խորհրդածութիւններ» գրութեան վերջի «Յաւելուածական» մասը):

Խոկոումին երրորդ եւ չորրորդ հանգրուանները զուգահեռաբար կ'ընթանան, որովհետեւ մին միւսին թէ՛ պատճառն է եւ թէ՛ արդիւնքը: Անոնք ներկայացուած են իբր զատ հանգրուաններ, որպէսզի հասկացողութեան մէջ շփոթութիւն մը չըլլայ:

գ- Խոկոումին երրորդ հանգրուանը զսպուած մտքին, կամ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, խորհուրդներէ սրբուած մտքին՝ (սուրբ սիրտ) անձին իշխանութեան ենթակայ մտքին, գիտակցաբար (consciously) անձին իր էութեան՝ Քրիստոսի վրայ կեղբոնացումն է: Այս հանգրուանին, Աստուած գտնելու տենչանքը պէտք է գերազանցէ աշխարհիկ ամէն ինչ, նոյնիսկ ընտանիք եւ մեր սիրելիները: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Համարի՛ք ելլել խաղաղութի՞ւն եկի՞ր Կալ յերկիր,
ո՛չ, ասե՛մ յեզ, այլ Բաժի՛նս»: (Լուկաս ԺԲ: 51)
«Կը կարճէք թէ ես եկայ՝ երկրի վրայ խաղաղութի՞ւն

տալու: Կ'ըսեմ ձեզի. «Ոչ՝ Հապա բաժանում»:

Տիեզերքի մէջ միայն մէկ գիտակցութիւն (*consciousness*) կայ, որ է Աստուծոյ գիտակցութիւնը: Մարդու գիտակցութիւնը այդ Աստուածային գիտակցութեան փոքր սահմանափակ մէկ մասնիկն է: Ուրեմն, խոկումին այս հանգրուանին նպատակը գիտակցութեան, գիտակցութեան միջոցով, գիտակցիլ է գիտակցութեան: Թ. Ս. Էլիօթի (*T. S. Eliot*) հետեւեալ գրութիւնը յարմար կը նկատեմ հոս ներկայացնել.

“We shall not cease from exploration and at the end of all exploring will be to arrive where we started and to know the place for the first time”.

«Բնաւ պիտի չդադրինք պրպտելէ, եւ ի վերջոյ պիտի հասնինք հոն՝ ուրկէ սկսած էինք, եւ պիտի անդրադառնանք թէ առաջին անգամն է, որ անոր կը գիտակցինք»:

Իր ըսել ուզածը այն է, թէ մարդ (գիտակցաբար կամ անգիտակցաբար) բնաւ պիտի չդադրի պրպտելէ: Խոկումը գիտակցաբար պրպտելն է: Անձը ի՞նչ կը պրպտէ: Ան պիտի պրպտէ մինչեւ որ Աստուած գտնէ: Գիտակցաբար պրպտումը կը սկսի անձին իր սահմանափակ գիտակցութեամբը: Այդ գիտակցութեան միջոցաւ ինք կ'ուզէ գիտակից ըլլալ անհուն (*Աստուածային*) գիտակցութեան: Երբ Թ. Ս. Էլիօթ կը գրէ. «եւ ի վերջոյ պիտի հասնինք հոն՝ ուրկէ սկսած էինք», կ'ուզէ ըսել, թէ գիտակցութեամբ սկսած էինք եւ պրպտումի արդիւնք կը հասնինք նաեւ գիտակցութեան: Եւ երբ ան կ'ըսէ. «եւ պիտի անդրադառնանք թէ առաջին անգամն է, որ անոր կը գիտակցինք»: Այս ըսածը կը համապատասխանէ այն բարձր գիտակցութեան մակարդակին, որ խոկումի հետեւանք անհատը կը «յափշտակուի»: Մարդ արարած, իր ուղեղը պատշաճօրէն գործածելու անկարողութեան հետեւանք, կը վայելէ գիտակցութիւն

մը, որ իր այդ ուղեղին կողմէ պայմանաւորուած է եւ սահմանափակուած: Երբ ինք խոկումով կը մարզէ ուղեղը եւ կը սորվի զայն պատշաճօրէն գործածել՝ կը սորվի աջ ուղեղն ալ ձախին պէս կարենալ գործածել: Հետեւաբար, կը կարողանայ բարձր որակով գիտակցութեան ներկայութեան անդրադառնալ: Առաջին անգամ ըլլալով կը հասկնայ՝ կ'ըմբռնէ՝ կը գիտակցի գիտակցութեան անհունութեան: Քանի որ գիտակցութիւնն ալ Աստուծոյ ներկայութիւնն է, անձն ալ կը գիտակցի իր մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութեան: Այն ատեն կը հասկնայ, թէ ինք, ինչպէս նաեւ բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ զանազան արտայայտութիւններն են: Կը մոռնայ իր «Ես»ը եւ կ'ըսէ.

«Ես եւ Հայր իմ մի եմք» (Յովհաննոս Ժ:30)

«Ես ու Հայրը մէկ ենք»:

դ- Խոկումին չորրորդ հանգրուանը, մտքին վրայ եղած իշխանութեամբ, գիտակցաբար ապրիլն է: Անձը, երբ գիտակցաբար կ'ապրի, իր առօրեայ բոլոր պարտականութիւնները կը կատարէ ամենալաւագոյն կերպով, ուրախութեամբ եւ եռանդով եւ միայն ներկայ արարքին վրայ կեդրոնացումով: Առհասարակ մեր կեանքը կ'ապրինք անգիտակցաբար: Երբ անձ մը մեզի կ'արհամարէ կը բարկանանք եւ իրեն հանդէպ մեր խօսք եւ արարքներն ալ բարկութեամբ կ'ըլլան: Ճիշդ է, թէ կը գիտակցինք մեր խօսքերուն եւ արարքներուն, բայց անոնք մեր գիտակցութենէն ծագում չեն առներ՝ ապա մեր յուզումներէն եւ զգացումներէն: Հետեւաբար նման վարմունք մը գիտակցաբար ապրիլ չէ: Այն անձը, որ իր զգացումները զսպելու կարողութիւնը ունի նման հակազդեցութեամբ մը չի պատասխաներ: Վստահաբար շատերու պատահած է: Երբ ինքնաշարժով կը ճամբորդենք եւ երբ մեր նպատակակէտին կը հասնինք երբեմն չենք գիտեր, թէ ինչպէս հոն հասանք:

Գիտակից չենք, թէ երբ եւ որ կարմիր լոյսին կեցանք, կամ որ կանանչ լոյսէն անցանք, որ փողոցներէն ընթացանք: Մեր միտքը զանազան խորհուրդներով զբաղ ըլլալով ներկայ արարքին վրայ չէ կեդրոնացած, որով մենք ալ ճամբորդութեան գիտակից չենք եղած, բայց եւ այնպէս մեր ենթագիտակցութեամբ (subconscious) ինքնաշարժը շատ ապահով ձեւով գործածած ենք: Աս ալ գիտակցաբար ապրիլ չէ: Երբ մեր առօրեայ կեանքը կ'ապրինք միտքը կեդրոնացած միայն ներկային վրայ եւ մեր ստանձնած ներկայ արարքին վրայ եւ ոչ անոր արդիւնքին վրայ կամ ուրիշ խորհուրդներով վրայ, գիտակցաբար ապրած կ'ըլլանք: Մեր ընդհանուր կեանքն ալ կ'ըլլայ անընդհատ շարունակական աղօթքի՝ խոկումի պահ մը: Պէտք չէ մոռնանք, թէ ներկան յաւիտենական է: Անհուն՝ Աստուածային գիտակցութեան փորձառութիւնը ունեցած ըլլալով, Աստուած կը տեսնենք բոլոր ստեղծագործութեան մէջ, բոլոր բնութեան եւ ամէն մի անհատի մէջ: Այն ատեն կ'ըմբռնենք Յիսուսի կեանքին իմաստը եւ մենք ալ իր խօսքին հնազանդ շատ դիւրաւ «կ'առնենք մեր խաչը եւ իր ետեւէն կ'երթանք»:

Այս խորհրդածութիւնը պիտի վերջացնեմ դարձեալ «Լոյս ի Լուսոյ» (Ա) գիրգին մէջ (էջ 126-128) ներկայացուած պատմութեան մը մէջբերումով: Նպատակս այս պատմութեան միջոցաւ, ցոյց տալ է խոկումին այս վերջին երկու հանգրուաններուն մէջ ներկայացուած Աստուած տեսնելու տենչանքին որակը եւ գիտակցաբար ապրիլը :

Հնդկաստանի մէջ երիտասարդ մը կը փափաքի Աստուած տեսնել եւ կը սկսի պրպտել եւ վերջապէս կը սորվի, որ երկրին հիւսիսային կողմը լեբան մը վրայ, քարայրի մը մէջ ճգնաւոր մը կայ, որու համար կ'ըսուի թէ

Աստուած տեսած է եւ եթէ հաւանի կրնայ իրեն այդ գաղտնիքը յայտնել: Տղան մեծ եռանդով կը ճամբորդէ եւ կը հասնի այդ վայրը: Հոն կը գտնէ տարիքոտ, մորուսաւոր, խաղաղ մարդ մը, աչքերը գոց նստած՝ կը թուի քնանալ: Երբ ինք կը վարանէր ծերունին արթնցնել, մարդը աչքերը կը բանայ եւ կը հարցնէ, թէ ի՞նչ կ'ուզէ: Տղան իր փափաքը կը յայտնէ. «Աստուած տեսնել կ'ուզեմ»:

Ճգնաւորը կը հասկնայ թէ տղան անկեղծ է: Կ'ընդունի իր քով պահել որպէս աշակերտ ու իրեն սորվեցնել, պայմանաւ որ տղան առանց առարկութեան իր բոլոր ըսածները լիովին կատարէ: Տղան կը համակերպի եւ յաջորդ ամիսներուն իրենց կրօնական գիրքերու մեկնաբանութեան դասաւանդութիւնները կ'ըլլան: Օրեր եւ ամիսներ կ'անցնին: Ճգնաւորը միշտ իրեն գործ կուտայ՝ կրակի համար չորցած ծառի ճիւղեր հաւաքել, կերակուր եփել, ամանները լուալ, քարայրը աւլել, գետէն ջուր կրել...: Տղան երկար ժամանակ առանց գանգատի գործերը կը կատարէ:

Տարի մը կ'անցնի եւ օր մը տղան ճգնաւորին հարց կու տայ. «Դուն ալ կ'ուտես՝ ես ալ, դուն գետ կ'երթաս եւ կը լուացուիս՝ ես ալ նոյնը կ'ընեմ, դուն խոկումի պահ կը պահես՝ ես ալ նոյնը կ'ընեմ, դուն կը քնանաս՝ ես ալ ուրեմն ո՞ւր է մեր տարբերութիւնը, ինչո՞ւ բոլոր գործերը ես կ'ընեմ եւ դուն բնաւ գործ չես ըներ, ինչո՞ւ դուն Աստուած տեսած ես եւ ես տակաւին չեմ կրնար տեսնել:»

Ճգնաւորը շատ հանդարտ, կամաց կամաց գլուխը վեր կը բարձրացնէ ու կը պատասխանէ. «Քեզի

ո՞վ ռսաւ որ նոյնը կ'ընենք: Երբ դուն կը լողնաս՝ ուտելու մասին կը խորհիս, երբ կը ճաշես՝ խոկումի մասին կը խորհիս, իսկ խոկումի (meditation) պահուն ալ քնանալ կը խորհիս. իսկ ես երբ կը լողնամ՝ միայն լուացուելու մասին կը խորհիմ, երբ կը ճաշեմ՝ միայն ուտելու մասին կը խորհիմ, իսկ խոկումի պահուն ալ ոչ մէկ բան կը խորհիմ:» Երիտասարդը շնորհակալութիւն կը յայտնէ որ դաս մը եւս սորված է: Կը հասկնայ սորված դասին կարեւորութիւնը եւ այնուհետեւ միշտ կը ջանայ իր խորհուրդներու ողորումը զսպել եւ զայն միշտ իր ներկայ ստանձնած աշխատանքին վրայ կեդրոնացնել: Միջոց մը յետոյ տղան կամաց կամաց կը յաջողի ինք իր միտքին ղեկը իր ձեռքը առնել: Ճգնաւորն ալ այդ կը հասկնայ եւ կ'ուրախանայ:

Երկու տարի եւս կ'անցնի, բայց երիտասարդը տակաւին Աստուած չէ տեսած: Դարձեալ անհամբերութիւն կը ծագի իր մէջ: Կը ներկայանայ ճգնաւորին, կը խոնարհի անոր առջեւ եւ կը հարցնէ, թէ երբ պիտի տեսնէ Աստուած եւ կ'ուզէ գիտնալ զաղտնիքը: Ճգնաւորը, առանց բառ մը ըսելու, նշան կ'ընէ որպէսզի աշակերտը իրեն հետեւի եւ զայն կը տանի գետ: Ինք ջուր մտնելէ յետոյ, նշան կ'ընէ որ տղան ալ մտնէ: Տղուն գլուխը ջուրին մէջ կը մխրձէ եւ չի ձգեր որ դուրս հանէ: Մէկուկէս վայրկեան կ'անցնի եւ տղան այլեւս անկարող շունչը բռնելու, կը սկսի պայքարիլ, որպէսզի կարենայ շնչել: Խեղդուելու մօտ, ճգնաւորը իր աշակերտին

գլուխը ջուրէն դուրս կը հանէ: Երիտասարդը հեւհեւ, վերջապէս ինքզինք կ'ամփոփէ եւ հարց կու տայ, թէ ինչու համար խեղդուելու աստիճան իր գլուխը ջուրին մէջ պահած էր: Ճգնաւորը հարցումին պատասխան չի տար, բայց ինք հարցում մը կը հարցնէ. «Գլուխդ ջուրէն դուրս հանելէս մէկ երկվայրկեան առաջ մտածումդ ի՞նչ էր»: Աչակերտը զարմացած կը պատասխանէ. «Օդ չնչել կ'ուզէի»: Այն ատեն ճգնաւորը կ'ըսէ. «Դուն տակաւին շատ ժամանակ կ'ուզես Աստուած տեսնելու համար: Դուն նախ պէտք է Աստուած տեսնել ուզես քու բոլոր էութիւնովդ, քու բոլոր գորութեամբդ, քու բոլոր մտքովդ ու քու բոլոր սրտովդ, այն աստիճանի որ նոյնիսկ այդ խեղդուելու պահուն անգամ պէտք էր քու խորհուրդդ Աստուծոյ վրայ ըլլար, քան թէ օդի եւ շնչելու վրայ»:

ՅԱԷԼՈՒԾԱԿԱՆ

Միտքը բանի մը՝ մէկ խորհուրդի վրայ կեդրոնացնել բաւական դժուարին արարք մըն է: Նոյնիսկ սովորական շնչառութեան վրայ կեդրոնանալէ շատ կարճ ժամանակէ մը յետոյ միտքը դարձեալ կը սկսի խորհուրդէ խորհուրդ ոստոստել: Ուստի, որպէսզի կեդրոնացումը աւելի յաջող ըլլայ, հետեւեալը կը յանձնարարուի.

- Հանգիստ տեղ մը նստիլ, ոտքերը գետինը քով-քովի, բայց ոչ իրարու դպած, արեւը վեր դարձուած եւ ձեռքերը զիստերուն (thigh) վրայ հանգչեցուած, աչքերը փակ, կրնակը՝ ողնայարը շիտակ՝ ուղղահայեաց, գլուխը առանց որեւէ տեղ կռթնցնելու, միտքը կեդրոնացնել շնչառութեան վրայ: Շնչառութիւնը ընդհանրապէս անգիտակցաբար կ'ընենք, հետեւաբար միտքը

զայն շատ դիւրութեամբ ենթադրտակցութեան կը թողու եւ ինք կը սկսի ոստոստել: Որպէսզի մտքի կեդրոնացման յաջողութիւնը երկարատեւ ըլլայ, թելադրելի է սովորական շնչառութիւնը քիչ մը փոփոխութեան ենթարկել եւ շնչել հետեւեալ ձեւով. Քիթէն կամաց-կամաց խորունկ ներշնչել (4-5 երկվայրկեան), յետոյ շունչը բռնել, դարձեալ 4-5 երկվայրկեան եւ յետոյ կամաց-կամաց բերնէն արտաշնչել (4-5 երկվայրկեան), 4-5 երկվայրկեան սպասելէ յետոյ ներշնչել . . . : Հաւանական է, որ ժամանակի ընթացքին այդ ձեւ շնչելն ալ մեր ենթադրտակցութեան մէջ տեղաւորուի եւ կարենանք նման ձեւով շնչել՝ առանց շնչառութեան վրայ կեդրոնանալու: Այս մարզանքին նպատակը մտքին մէկ նիւթի վրայ կեդրոնացման արարքին վարժուելու ձեւ եւ նպատակն է, որպէսզի մտքի ոստոստումներ չսկսի: Հետեւաբար պարտ ենք միշտ արթուն եւ զգուշօրէն հսկել որպէսզի մտքի կեդրոնացումը չչեղի:

Ա ՈՒ Մ ԱՄԷՆ



(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Ա ՅԽԱՆԱԻ ԿԵԱՆՔԷՆ
ԳՐՈՒԱԳՆԵՐ ԳԻՐՔԻՆ ԵՍՏԱՉԱՔԱՆԷՆ ԱՆՆՈՒԱԾ)

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԿՐՕՆՔԸ ՀԱՄԿՆԱԼ

Երբ Առաքելական եկեղեցւոյ սկզբնական շրջաններուն, Քրիստոնէական հաւատքին հիմքերը որոշելու համար տիեզերական ժողովները կը գումարուէին, այդ ժողովներու ընթացքին բաւական տարակարծութիւններ գոյութիւն ունեցած են, որոնք նոյնիսկ պատճառ եղած են որպէսզի եկեղեցւոյ մէջ բաժանումներ տեղի ունենան: Բաժանման գլխաւոր պատճառներէն մին Յիսուս Քրիստոսի բնոյթն էր:

451ին գումարուեցաւ Քաղկեդոնի ժողովը, որուն գլխաւոր հարցն էր Յիսուս Քրիստոսի բնոյթը. Ան մէկ բնոյթ ունէ՞ր՝ Աստուածային, թէ ոչ երկու բնոյթ՝ Աստուածային եւ մարդկային: Հայերը Աւարայրի պատերազմի պատճառով այս ժողովին չմասնակցեցան: 506 թուականին արեւելեան քրիստոնեաներուն Դուին գումարած ժողովին, Քաղկեդոնի ժողովին առնուած որոշումները վերջնականապէս կը մերժուին: Որով քրիստոնէութեան մէջ կը գոյանայ երկու տեսակէտ եւ երկու դաւանանք: Ոմանք կը պնդէին, թէ Քրիստոս միայն մէկ բնոյթ ունէր՝ Աստուածային, իսկ ուրիշներ Յիսուս Քրիստոսին կը վերագրէին երկու բնոյթ՝ թէ՛ Աստուածային եւ թէ՛ մարդկային: Եկեղեցիներու միջեւ, մինչեւ այսօր, այս «հաւատք»ի տարբերութիւնը կը շարունակուի: Այս կացութիւնը ինծի մեծ զարմանք կը պատճառէ: Անտարակոյս Քրիստոս Աստուած է եւ Երրորդութեան «Անձ»երէն մին: Հետեւաբար Աստուած միայն մէկ բնոյթ ունի՝ Աստուածային: Բայց Յիսուս Քրիստոս ունէր երկու բնոյթ, թէ մարդկային եւ թէ Աստուածային: Եթէ Յիսուս մարդկային բնոյթ չունենար, գերմարդկային (superhuman) կ'ըլլար, հետեւաբար մեր՝ մարդոց մակարդակին վրայ չէր ըլլար,

որով իր հետեւեալ ըսածն ալ անիմաստ կ'ըլլար.

«... Ամէն ամէն ասէ՛մ թէ որ Հասարակացն
յիս զԳործս զոր էս Գործեմ, էս նա՛
Գործեսցէ էս մեծամեծս է՛սս ինն զնոյնս
Գործեսցէ . . . » : (Յովհաննէս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի.
Ա՛ն որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

Եթէ Յիսուս մարդկային բնոյթ չունենար, մարդիկ շատ դիւրութեամբ պիտի ըսէին. «Ան Աստուած է եւ հրաշքներ կը գործէ, մենք մարդ ենք եւ չենք կրնար նման հրաշքներ գործել»: Նոյնիսկ այսօր, շատեր այս նոյն գաղափարը ունին: Բայց այդ գաղափարը սխալ է եւ Յիսուսի ըսածները անտեսել ու անոնց չհաւատալ կը նշանակէ: Քանի որ ըստ վերեւ տեղադրուած Յիսուսի խօսքին՝ մէջբերումին, մենք ալ կարողութիւնը ունինք նման արարքներ՝ «հրաշքներ» գործելու, անշուշտ, եթէ իր ըսածներուն հաւատանք, հետեւինք եւ գործադրենք, որպէսզի նման կարողութեան տէր ըլլանք: Միթէ իր աշակերտներն ալ, մարդ ըլլալով հանդերձ, նման հրաշքներ չգործեցի՞ն:

«Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալն Աստուծոյ Հօրէ Միածին, այսինքն՝ յեութենէ Հօր: Աստուած Աստուծոյ ըյս ՚ի լուոյ, Աստուած ճշմարիտ, Աստուծոյ ճշմարտէ ծնունդ եւ ոչ արարած: Նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր՝ որով ամենայն ինչ եղէ յերկինս եւ ՚ի վերայ երկրի, երեւելիք եւ աներեւոյթք: Որ յաղագս մեր մարդկան եւ վասն մերոյ փրկութեան՝ իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ

սրբոյ կուսէն՝ Հոգևոյն սրբով: Արով էառ մարմին, Հոգի, եւ միտ, եւ զամենայն որ ինչ է՝ ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:

Վերեւ տեղադրուած «Հաւատամք»-էն առնուած մասը ցոյց կու տայ, թէ Յիսուս Քրիստոս երկու բնոյթ ունէր: Առաջինը իր Աստուածային բնոյթն էր, որ շեշտուած է այս բառերով. «յեովթէնէ Հօր» եւ «Աստուած ճշմարիտ»: Իր երկրորդ բնոյթն ալ իր մարդկային բնոյթն էր, որ դարձեալ շեշտուած է հետեւեալ նախադասութիւնով. «Արով էառ մարմին, Հոգի, եւ միտ, եւ զամենայն որ ինչ է՝ ի մարդ, ճշմարտապէս եւ ո՛չ կարծեօք»:

Հետեւաբար, Աւետարանին մէջ ներկայացուած Յիսուս Քրիստոսի խօսքերը պարտ ենք նման հայեացքով եւ նման հասկացողութեամբ մեկնաբանել:

Ան երբեմն խօսած է իբր Աստուած՝ Քրիստոս եւ երբեմն ալ իբր մարդ՝ Յիսուս: Այս գիրքին մէջ երբ գրուած է. «Յիսուս» ըսաւ կամ ըսած է, կը նշանակէ թէ Ան խօսած է իբր մարդ: Իսկ եթէ գրուած ըլլայ «Քրիստոս» ըսաւ կամ ըսած է, կը նշանակէ թէ Աստուած է որ խօսած է:

«Եւ մարդուցեալ աշակերտքն ասէն ցնա. Ընդէ՞ր աստեղծ խօսիս ընդ նոսա: Մա պարասխանի եր է- ասէ՛ ցնոսա. Բանսն յեզ րոտա՛լ է Գիրել զխորհորտս արժայո-թեանն երկնից, է- նոցա շէ՛ րոտալ: Զի ոյր Գոցէ՛ րացի՛ նմա է- յաւելցի, է- ոյր ոշն Գոցէ՛ է- զոր ո-նիցին Բարձրի ՚ի նմանէ: Վասն ա՛յնորիկ աստեղծ խօսիմ ընդ նոսա. զի րեասնէն՝ է- ո՛չ րեասնէն, է- լսէն՝ է- ո՛չ լսէն, է- ո՛չ ասնոսն ՚ի մից: Ե-

կատարելու անհատ մարդարեւութիւնն Լեւոնայ՝ որ
ասէ. Լուելով լուծելի՛ է՝ մե՛ իմաստընէ՛, է-
յրեսանելով որեւէնէ՛ է՝ մե՛ որեւէնէ՛: Չի
Լեւոնայրայսա՝ սիրոյ ժողովրդեանս այսորելի, է-
ակընջօղի իրելանց ժանո՛ւնս լուսն. է՝ սաշս
իրելանց կատարեցին, սի մե՛ երբէնէ՛ որեւցեն ասօղի՛
է՝ ականջօղն լուծեցն՝ է՝ սրորեւն իմաստըն, է-
դարձեցին՝ է՝ թշուարեցի՛ց սնոսա: Բայց Յեր
երանի՛ է՝ սաշսդ՝ սի որեսանեն, ակընջաց Յերոց՝
սի լսեն: Լսեն ասէ՛մ սի թաստեմ մարդարեւէ՛ է-
արդարեւ զանկացան որեսանել սոր որեսանէ՛դ՝ է-
ո՛չ որեւն, է՝ լսել սոր լսէ՛դ՝ է՝ ո՛չ լուսն»:
(Մարթէոս ԺԳ:10-17)

«Աշակերտները մօտենալով՝ ըսին իրեն. «Ինչո՞ւ
առականերով կը խօսիս անոնց»: Ինք ալ պատասխանեց
անոնց. «Քանի որ ձեզի՛ տրուած է գիտնալ երկիրքի
Թագաւորութեան խորհուրդները, բայց անոնց տրուած
չէ: Որովհետեւ ո՛վ որ ունի անոր պիտի տրուի ու
առատութեան մէջ պիտի ըլլայ. իսկ ո՛վ որ չունի,
ունեցածն ալ անկէ պիտի առնուի: Ուստի առականերով
կը խօսիմ անոնց, քանի որ տեսնելով՝ չեն տեսներ, ու
լսելով՝ չեն լսեր, ո՛չ ալ կը հասկնան: Անոնց վրայ
պիտի իրագործուի Եսայիի մարգարէութիւնը՝ որ կ'ըսէ.
Շատ պիտի լսէք՝ բայց պիտի չհասկնաք. շատ պիտի
տեսնէք՝ բայց պիտի չըմբռնէք: Որովհետեւ այս
ժողովուրդին սիրալը թանձրացաւ, եւ իրենց
ականջներով ծանր լսեցին ու գոցեցին իրենց աչքերը,
որպէսզի աչքերով չտեսնեն, ականջներով չլսեն,
սիրտով չհասկնան, եւ դարձի չգան, ու ես չբժշկեմ
զանոնք: Բայց երանի՛ ձեր աչքերուն՝ որ կը տեսնեն, եւ
ձեր ականջներուն՝ որ կը լսեն: Որովհետեւ ճշմարտապէս
կը յայտարարեմ ձեզի թէ՛ շատ մարգարէներ եւ արդարներ
ցանկացին տեսնել ձեր տեսածները՝ ու չտեսան,
եւ լսել ձեր լսածները՝ ու չլսեցին»»:

«Եւ ի թրեւ եղեւ ատանջինն, Հարցին ցնա որ
վնովան էին աշակերտո՞վն Հանդերձ՝ պատահան:
Եւ ասէ ցնոսա. Ձեզ Գոտալ է Դիտէ՛լ վնոր-
Հոտորա արժայոթեան Եսգոտոյ: Բայց նոցա
որ արտախնն էն՝ ամենայն ինչ ատակո՞վ լինի:
Ձի Գեսանելով Գեսցեն՝ էւ մի՛ Գեսցեն, էւ
լսելով լսոխցեն՝ էւ մի՛ իմասցին. վն մի՛ երթէ՛վ
դարձցին՝ էւ թողցին նոցա:» (Մարկոս Դ:10-12)

«Երբ առանձին էր, իր շուրջը եղողները՝ տասներկուքին
հետ Հարցուցին իրեն այս առակին մասին: Եւ ըստ
անոնց. «Ձեզի տրուած է զխնալ Աստուծոյ
Թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն
են՝ ամէն ինչ առեղծուած կ'ըլլայ. որպէսզի շատ
տեսնեն՝ բայց չըմբռնեն, շատ լսեն՝ բայց չհասկնան, ու
դարձի չգան եւ իրենց մեղքերը չներուին»:

«Հարցանելին վնա աշակերտո՞վն՝ Եւ վննչ իցէ
ատահան: Եւ նա՛ ասէ. Ձե՛զ Գոտա՛լ է
վնորՀոտորա արժայոթեան Եսգոտոյ, Բայց
այլոցն ատակո՞վ վն Գեսցեն՝ էւ մի՛ Գեսցեն, էւ
լսոխցեն՝ էւ մի՛ իմասցին»: (Ղոսկաս Ը:9-10)

«Իր աշակերտները Հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը
այս առակին»: Ան ալ ըստ. «Ձեզի՛ տրուած է Հասկնալ
Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդները, բայց
ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝
չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»:

*Վերեւ տեղադրուած այս երեք մէջբերումները,
առնուած երեք տարբեր Աւետարաններից, կը ներկա-
յացնեն Յիսուսի եւ իր աշակերտներուն միջեւ տեղի
ունեցած նոյն դէպքը՝ խօսակցութիւնը: Ըստ այս հա-
մարներուն բացայայտօրէն յայտնի է, թէ Յիսուս
Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդին (mystery) թա-
գուն՝ զաղտնի գիտութիւնը կը սորվեցնէր իր աշա-*

կերտներուն, որպէսզի անոնք եւս կարենային Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալ: Յիսուս դարձեալ բացայայտ կը շեշտէ, թէ հասարակութեան միայն առականերով կը խօսէր, որպէսզի անոնք, որոնք այդ թագուն գիտութիւնը ստանալու պատրաստ չեն եւ հետեւաբար արժանի չեն, ճշմարտութիւնը լսելով հանդերձ զայն չհասկնան: Յիսուս տարբեր բառերով ալ իր այս գաղափարը կը յայտնէ, երբ Ան կ'ըսէ.

«Մի՛ գայէ պարբո-րի-ն՝ շանց, եւ մի՛ արկանելի
պատուարի՛ գո յէր ատաջի խոսաց, պի մի՛ ատ-
ո՛րն կոխիցեն պնաս, եւ դարձեալ
երգիծո-ցանիցե՛ն պշեպ»: (Մատթեոս Է:6)

«Սուրբ բանը մի՛ տաք շուներուն՝ ու ձեր
մարդարիտները մի՛ նետէք խոզերուն առջեւ, որպէսզի
չկոխկրտեն զանոնք իրենց ոտքերուն տակ, եւ
դառնալով չբզքտեն ձեզ»:

Այս վերջին մէջբերումը միանգամայն Յիսուսի կողմէ իր աշակերտներուն տրուած ազգարարութիւն մըն էր, որպէսզի իրենց սորված Աստուծոյ թագաւորութեան թագուն գիտութիւնը հասարակ հանրութեան չպարզեն: Անտարակոյս աշակերտները՝ բոլորն ալ հաւատարիմ Յիսուսի, չհակասեցին իրենց տրուած այս պատգամին: Ուրեմն Նոր Կտակարանին մէջ չորս աւետարաններէ զատ կան բոլոր նամակաները, որոնց մեծամասնութիւնը Պօղոս գրած է, անոնք կը ներկայացնեն պարզապէս բարոյական օրէնքներ՝ տրուած հանրութեան, որոնք օգտակար են անհատին, որպէսզի ան կարենայ Աստուածահաճոյ կենցաղ մը կերտել: Բայց անոնք, Յիսուսին իր աշակերտներուն սորվեցուցած, վերոյիշեալ թագուն գիտութիւնը բացայայտօրէն չեն ներկայացներ: Անտարակոյս անոնք ալ գրութեան մէջ թագնուած որոշ տեղեկութիւններ կու տան, բայց այս վերջինները միայն բացայայտ կ'ըլլան անոնց, որոնք

պատրաստ են զանոնք «տեսնելու» եւ հասկնալու: Ապա թէ ոչ անոնք կու տան միայն մակերեսային հաւատալիքներ: Առաքեալները այս թագուն գիտութիւնը տուին որոշ անձերու, որոնք արժանի նկատեցին այդ գիտութեան գաղտնիքը ստանալու: Եւ այդ անձերը եղան աշակերտներուն յաջորդողները եւ «եկեղեցին» առաջնորդողները, որ այսօր մենք եպիսկոպոս կը կոչենք, հետեւաբար իրենց հովանաւորած եկեղեցին ալ կոչուեցաւ «առաքելական»: Այս առաջնորդներն ալ, նման իրենց նախնիքներուն, գաղտնի պահեցին այդ թագուն գիտութիւնը եւ հասարակութեան չպարզեցին: Բայց տարիներու եւ դարերու ընթացքին կամաց կամաց անոնք ալ մոռցան այդ թագուն գիտութիւնը:

Ինչպէս վերեւ յիշուած Քաղկեդոնի ժողովը, նմանապէս 325 թուականին գումարուած Նիկիոյ տիեզերական ժողովը այդ մոռացութեան ցայտուն վկայութիւններէն է: Նիկիոյ ժողովին յայտնի էր թէ ներկայ եպիսկոպոսներուն մէջ անհամաձայնութիւն կը տիրէր: Կը թուէր թէ անոնք ոչ տեղեակ էին եւ ոչ ալ կը գործադրէին այդ թագուն գիտութեան տուեալները, որպէսզի գոնէ իրենք՝ եկեղեցւոյ առաջնորդները, այդ Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենային: Իսկ եթէ ունենային, անհամաձայնութիւն ալ գոյութիւն պիտի չունենար: Հարկաւ, բացառութիւնները միշտ յարգելի են: Ներկայ եպիսկոպոսներուն 318-ը համաձայնած են:

Այս թագուն գիտութեան նկատմամբ եղած է հետեւեալ բաղդատականը. «Մոմին բոցը մարելու նման պիտի պլպլայ, բայց բնաւ պիտի չմարի, օր մը դարձեալ պիտի փայլի»:

«Գեղեզնի ջախջախե՛ալ ո՛չ փշրեացե՛ եւ
պարսպոյն ասկայթեալ ո՛չ շեջոսացե՛ մինչեւ Հան-

ցէ՛ ՚ի յաղթո՞ւմի՛ն պղտորաստանն» : (Մատթէոս ԺԳ : 20)
«Պիտի չփշրէ ջախջախուած եղէգը ու պիտի չմարէ
պլպլացող պատրոյգը, մինչեւ որ իրաւունքը հասցնէ
յաղթուիթեան»:

Ինչպի՞սի «քրիստոնեաներ» պէտք է ըլլանք.
Յիսուս Քրիստոսի հետեւող քրիստոնեաներ, ապա թէ
ոչ Պօղոսի եւ աշակերտներուն սորվեցուցածներուն՝
գրութիւններուն մակերեսային հասկացողութեան հե-
տեւող քրիստոնեաներ: Չեմ ըսեր, թէ անոնք պէտք չէ
կարգալ, բայց պէտք է հասկնանք, թէ անոնք թագուն
գիտութեան մասին բացայայտ չեն գրուած: Ուրեմն
պէտք չէ այդ գրութիւնները մակերեսային՝ բառացի
հասկացողութեամբ ընդունինք եւ այդ հայեացքը
փոխարինենք Յիսուսի բուն սորվեցուցածներուն հետ:
Այս ուղղութեամբ պարզ եւ նիւթերը հանրածանօթ
օրինակ մը տալ պատշաճ կը նկատեմ եւ օգտակար
կրնայ ըլլալ վերեւ ներկայացուած տեսակէտը աւելի
լաւ հասկնալու համար: Կան համարներ որոնք կ'ակնար-
կեն Յիսուսի արիւնին մասին (Եբեսացիս Բ:13, Եբրա-
եցիս Ժ:19, ԺԲ:24, ԺԳ:20, Ա. Պետրոս Ա:2, Ա. Յովհաննու
Ա:7), բայց անոնց սխալ մեկնաբանութեամբ կան յառաջ
եկած յարանուանութիւններ, որոնք կ'ըսեն. «Յիսուսի
արիւնով լուացուած ու սրբուած եմ, հետեւաբար՝
փրկուած»: Իսկ Յիսուս կ'ըսէ. «Նաչդ առ եւ ինծի
հետեւէ» (Ղուկաս Թ:23): Ո՞րն է ճիշդը:

Անտարակոյս նամակներուն մէջ ալ պահուած
բազմաթիւ ճշմարտութիւններ կան, ինչպէս նաեւ շատ
հրաշալի եւ օգտակար յորդորներ, արտայայտութիւն-
ներ՝ ինչպէս Պօղոսի «սիրոյ» մասին գրածը (Ա.
Կորնթացիս ԺԳ:1-13):

Միջնադարեան շրջանին Մարթին Լութէր (Martin
Luther) Հռովմի Կաթողիկէ Առաքելական Եկեղեցին
մեղադրած է Աւետարանը հանրութենէ պահած ըլլա-
լուն համար: Ինք, Կաթողիկէ Եկեղեցւոյ բռնած այդ

ընթացքին իբր բողոք, Աւետարանը հանրութեան մատ-
չելի կ'ընէ եւ կը հիմնէ «բողոքական» եկեղեցին, որ
այսօր «Աւետարանական եկեղեցի» անուամբ կը կոչուի:
Կաթողիկէ Առաքելական եկեղեցւոյ բռնած ընթացքը
արդեօ՞ք ճիշդ էր: Այն օրուայ հանրութեան գիտակ-
ցութեան կամ, աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, խաւարամը-
տութեան մակարդակին համաձայն, անոնք արդեօք կը
խորհէին, թէ Աւետարանին մէջ գրուածները հանրու-
թեան կողմէ սխալ պիտի հասկցուէին եւ «Քրիստոնէ-
ութիւնը»՝ Յիսուսի սորվեցուցած փրկութեան ճանա-
պարհէն ալ աւելի՞ պիտի շեղէր: Բոլոր անոնք, որոնք
այդ թագուն գիտութիւնը հասկնալու եւ իւրացնելու
պատրաստ չէին, Աւետարանին գրութիւնները մակերե-
սային, բառացի եւ սխալ հասկացողութեամբ մը պիտի
մեկնաբանէին: Աս ըսել չէ թէ առաքելական եկեղեցի-
ները իրենց թերութիւնները չունէին: Բայց պէտք չէ
հոս անոնց մասին աւելի արտայայտուիլ, քանի որ այս
գիրքին նիւթը եւ նպատակը այդ չէ: Մարթին Լութէրի
բռնած ընթացքին բուն պատճառն ալ այդ թերութիւն-
ներն էին: Աւետարանին հանրութեան մատչելի դառնա-
լէն յետոյ, այսօր կը տեսնենք, թէ ինչպիսի սխալ
մեկնաբանութիւններու հետեւանքով բազմաթիւ «բողո-
քական» յարանուանութիւններ ի յայտ եկած են:
Ընդհանրապէս մէկ համարի մը վրայ հենելով, եւ ընդ-
հանուր առմամբ անոր ալ սխալ մեկնաբանութեամբ,
նոր-նոր եկեղեցական յարանուանութիւններ կազմուած
են: Յայտուն օրինակ մըն է՝ այսօրուայ «վերստին
ծնունդ» ունեցողներու խմբակ՝ եկեղեցին, որ յառաջ
եկած է Յիսուսի Նիկողեմոսին ըսած «պէտք է մարդ
վերստին ծնանի որպէսզի կարենայ Աստուծոյ թագաւո-
րութիւնը մտնել» խօսքէն: Արդեօք իսկապէս գիտե՞ն
թէ Յիսուս ինչ ըսել ուզեց Նիկողեմոսին: Յիսուս
ուրիշներուն ալ տարբեր պատուէրներ տուաւ: Ունեւոր

երիտասարդին, որ կ'ուզէր յաւիտենական կեանքին արժանի ըլլալ, ըսաւ. «գնա՛ ունեցածդ ծախէ եւ աղքատներուն բաժնէ եւ հետեւէ ինծի»: (Մատթէոս ԺԹ:16-22) Զարմանալիօրէն այդ յորդորին ոչ ոք հետեւած է եւ այդ հիման վրայ ալ նոր «եկեղեցի» մը չէ կազմուած, որովհետեւ մարդ աշխարհին կապուած է եւ նիւթապաշտ է: Որով մարդ Յիսուսի սորվեցուցածներէն զատած է անոնք, որոնք իր վրայ ոչ մէկ պարտականութիւն կամ պատասխանատուութիւն կը դնեն, ի բաց առեալ՝ «կը հաւատամ, հետեւաբար փրկուած եմ» նախադասութիւնը տեւաբար կրկնելէ: Կարելի է շատ մը յարանուանական օրինակներ տալ, բայց մեր նպատակին համար այսքանը բաւ է:

Յիսուս կը քարոզէր «ներքին»-ին մասին, իսկ հրեաներուն միտքը զբաղ էր «արտաքին»-ով, հետեւաբար չհասկցան Յիսուսի ըսածները: Նմանապէս այսօր դարձեալ Աւետարանը կը գրէ «ներքին»-ին մասին, իսկ մենք զբաղ «արտաքին»-ով, չենք հասկնար գրուածներուն բուն իմաստները: Նմանապէս, քարոզիչներուն մեծամասնութիւնն ալ գրուածներուն սխալ ըմբռնումով կը քարոզեն սխալ «քրիստոնէութիւն» մը, քան թէ Յիսուսի սորվեցուցած «քրիստոնէութիւն»ը: Աս ալ կը համապատասխանէ Յիսուսի հետեւեալ ըսածին.

«Թո՛ւյլ քո՛ւն գնաս. կո՛յրէ ե՛ն՝ կո՛րաց առաջնո՛րդէ: Աոյր կո՛րի յորժամ առաջնորդէ՛ սխալէ՛, եւ երկո՞վին ՚ի խորխորաց անկանին»: (Մարթէոս ԺԷ:14)

«Թողուցէ՛ք զանոնք. իրենք կոյր են, ու կոյրերու առաջնորդ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը՝ երկուքն ալ փոսը պիտի խնան»:

«... Անի՛նէ կարեցէ՞ կոյր կո՛րի՛ առաջնորդել, ոչ ապա՞վեն երկո՞վին ՚ի խորխորաց անկանիցին»: (Ղուկաս 9:39)

«... Կոյրը կրնա՞յ առաջնորդել կոյրը. միթե երկո՛ւքն
ալ փոսը պիտի չիչնա՞ն»:

Երջանկայիչատակ Գարեգին Ա. կաթողիկոսի
վախճանումէն յետոյ հրատարակուած «Աստուածա-
բանութիւն» խորագրեալ իր գիրքին մէջ գրուած է
հետեւեալը. (էջ30)

«Քայց նոյն ատեն խորքով կը տարբերի այլ
գիտութիւններէ, որովհետեւ մինչ ամէն գիտու-
թիւն իր փորձարկումին ենթակայ ունի իր առար-
կան, եւ կամ՝ ինք կը ստեղծէ զայն, աստուածա-
բանութիւնը իր նիւթին տարրերը ունի ի
յառաջագունէ տուեալ, աւելի ճշգրիտ՝ յայտնեալ:
Սակայն պէտք է գիտնալ, թէ այն տարրերը
տրուած են կամ յայտնուած ոչ թէ Համանուագ,
միաժամանակ կամ միաւորեալ ձեւով, այլ յառա-
ջատուական ընթացքով, մարդկային ընկալչու-
թեան Համապատասխան եղանակով»:

Վեհափառը նաեւ կը մատնանշէ, թէ Աստուածաշունչը
Աստուածայայտնութեան արտայայտութիւն մըն է, որ
Հին Կտակարանի մէջ սկսած է նուազ քանակով՝ ըստ
մարդու հասկացողութեան մակարդակին եւ իր
գազաթնակէտին հասած Յիսուս Քրիստոսով: Ուրեմն
այս Աստուածայայտնութիւնն ալ կը կազմէ մեր՝
եկեղեցիին կրօնքը եւ դաւանանքը: Այս ուղղութեամբ
վեհափառը գրած է. (էջ36)

«Դաւանանքը եկեղեցւոյ Համար արժէք ունի
մանաւանդ անով, որ Հաւատացեալներու կրօ-
նական կեանքի զսպանակը կը կազմէ: Սուսնց
խոր Համոզման եւ նոյն ձեւով ըմբռնման՝
ճշմարտութիւն մը կարելի չէ ապրիլ եկեղեցւոյ
պահանջած Համայնական կերպով եւ կենդանի
եղանակով: Այդ իմաստով է, որ Գրիգոր
Տաթեւացի կ'ըսէ. «Դաւանութեամբ հաւատոյն՝

Աստուած ի մարդ հանգչի եւ մեր յԱստուած յարիմք»»:

Մարթին Լութէրի շրջանի միջնադարեան խաւար դարերէն մինչեւ այսօր համայն մարդկութեան գիտակցութեան մակարդակը որոշ չափով յառաջացում մը ունեցած է, ինչպէս նաեւ գիտութիւնը եւ արուեստագիտութիւնը (technology): Գիտութիւնը արտաքինը քննելով հասած է տեղ մը, որ այլեւս կարող չէ անկէ անդին անցնիլ աւանդական միջոցառումներով: Գիտունները որոշ չափով շուարած, կամաց կամաց կը հասնին այն եզրակացութեան, թէ պրպտումը պէտք է ուղղութիւն փոխէ՝ արտաքինէն դէպի ներքինին: Հետեւաբար իրենց հետազօտութիւնները կը սկսին կեդրոնանալ գիտակցութեան (consciousness) վրայ: Անոնք տակաւին գայն կը փնտռեն արտաքինին մէջ: Դժուար է վարժութիւններէ ձերբազատուիլ: Այս հիման վրայ այսօրուայ մարդը, ընդհանուր առմամբ աւելի ուսեալ եւ լայնախոհ, պէտք է կարող ըլլայ իր միտքը աւելի բաց պահելով եւ գայն հաւատալիքներով չզբաղեցնելով, չխափանել իր անձին մէջ Աստուածայայտնութեան կարելիութիւնը:

Վեհափառը գրած է. (էջ48)

«Արդ, եկեղեցին ալ հետեւողութեամբ Քրիստոսի յայտնութեան ուղիղ հասկացման համար, ոնի իր պաշտօնական մեկնաբանութիւնը, որ Ս. Հոգւոյն առաջնորդութեամբ կատարուած ըլլալուն համար ոնի բացարձակ արժէք:

«Ասով Հանդերձ եկեղեցին իրեն չի վերապահեր Ս. Գրքի ընթերցման մենաշնորհը: Ս. Գրքի ընթերցումը ոչ թէ ի՛ր իրաւունքն է միայն, այլեւ իրեն մասնակցող ամէն անդամի՝ հաւատացեալի պարտականութիւնը, իբրեւ Հոգւոր կրթութեան, կրօնական ապրումի եւ դաստիարակութեան աղբիւր»:

Ոչ թէ Հայ ըլլալու հպարտութեան պատճառով,

այլ եթէ լրջօրէն եւ հասկնալու նպատակով ուսումնասիրենք, պիտի տեսնենք թէ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին, աննման ուրիշ եկեղեցիներու, իր ծէսերուն ինչպէս նաեւ խորհուրդներուն մէջ կը պարունակէ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին, որով անոր ժամերգութիւններու շարգաւորումը կը ներկայացնէ մարդկային կեանքը եւ զայն կ'ուղղէ քայլ առ քայլ դէպի այդ կատարելութեան:

Վեհափառը դարձեալ գրած է. (էջ50)

«Բայց Աւետարանները բնականաբար յայտնութեան բացարձակ ամբողջութիւնը չէին ներկայացներ: Նաեւ Պօղոս Առաքեալ իր կարգին ներկայացուց միայն այն՝ որ իրեն ծանօթ էր, այլեւ այն՝ որ պարագաներուն Հետ անհրաժեշտ գտաւ պարզելու: Ո՛չ Աւետարաններուն Հեղինակները եւ ո՛չ Պօղոս Առաքեալ ունեցած էին ծրագիր մը ամբողջական եւ Համադրեալ ձեւով ներկայացնելու Քրիստոսի յայտնութիւնը: Ինչ որ կը յիշէին եւ պարագաներու բերումով օգտակար կը Համարէին՝ զանոնք յայտնեցին»:

Վեհափառին ըսածն ալ այն է, թէ ինչպէս վերեւ նշեցի, Աւետարանին մէջի գրութիւնները Յիսուսին Իր աշակերտներուն սորվեցուցած Աստուծոյ թագաւորութեան թագուն գիտութիւնը՝ Աստուծայայտութեան միջոցը բացայայտօրէն չէին ներկայացներ:

Այս հիման վրայ պարտ ենք ուսումնասիրել Ս. Գիրքը եւ ասիկա ամէն հաւատացեալի պարտականութիւնն է, որպէսզի ան կարենայ իմաստաւորել իր կեանքը: Պէտք է նաեւ հասկնանք, թէ հոն կայ թագուն գիտութիւն մը, որ ան հոն բացայայտօրէն չէ ներկայացուած եւ պարտ ենք Ս. Հոգու առաջնորդութեամբ զայն գտնել եւ հասկնալ:

Յիսուս մեզի սորվեցուց եւ տուաւ «կատարելութեան ուղին»՝ այսինքն կատարեալ ըլլալու միջոցը: Ինք բացայայտօրէն մեզի ըսած է, թէ մեր կեանքի նպատակը կատարեալ ըլլալն է: Յիսուս ըսաւ.

«Արդ եղեր՞ ո՛ւր է դու՛ն կատարեա՛լն, որպէս եւ
Հայրն Յէր երկնաւոր կատարեա՛լ է»: (Մատթէոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
Հայրը կատարեալ է»:

«Ո՛ր է աշակերդ լա՛ւ ինչն սլաքապէտի իւր,
ամենայն կատարեալն՝ եղիցի իբրեւ սլաքապէտի
իւր»: (Ղուկաս 9:4)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ. բայց ամէն
կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի
ըլլայ»:

Ըստ Յիսուսի յորդորին արդեօք մեր պարտականութիւնը չէ՞ կատարեալ ըլլալ եւ իրեն նմանիլ: Միթէ Յիսուս մեր վարդապետը չէ՞: Մարդուս աշխարհիկ կեանքը այդ կատարելութեան ձգտելու համար մեզի տրուած առիթ մըն է եւ զայն իրականացնել մեր կեանքերուն՝ անձերուն մէջ մեր պարտականութիւնն է: Ահա՛ աս է փրկութիւնը եւ ոչ սպասել մահուան, որպէսզի «փրկուինք»: Հետեւեալ մէջբերումը առնուած է Պէյրուսի հրատարակուած «Կատարելութեան ուղին» խորագրեալ գիրքին յառաջաբանէն՝ Խաժակ Գալուստեան եւ Արմէն Կոկիկեան ստորագրութեամբ: (էջ19)

«Այս առումով, կրօններն ու տարբեր բնոյթի գաղափարախօսութիւնները առհասարակ ի յայտ կու գան որպէս գաղափարներու սպառաք, կենդանի ու թափանցիկ ամբողջութիւն կամ Համակարգ: Յիսուս Քրիստոսի կեանքն ու պատգամը, արդարեւ, ա՛յլ բան էին քան պատասխան՝ մէկ կողմէ ընդհանրապէս մարդու գոյութեան եւ, անկախաբար ժամանակի Հաս-

կացողութենէն, մարդու գոյութեանական Հարցին, իսկ միւս կողմէ տուեալ պատմական ժամանակաշրջանի պայմաններէն բխող Հասարակական Հարցերուն: Իբրեւ այդ Հարցերուն պատասխան, Յիսուսի կեանքը ապրող օրինակ է, իսկ անոր պատգամը՝ Թափանցիկ, Հասկնալի Համարեայ բողոքին կողմէ:

«Նոյն այդ կրօններն ու գաղափարախօսութիւնները, սակայն, շատ յաճախ ժամանակի ընթացքին կը կորսնցնեն իրենց կենդանութիւնն ու Թափանցիկութիւնը, կը դառնան կաղապարուած, քարացած պարունակով գաղափարներու Համակարգ, շարժումը կը դառնայ անկենդան Հաստատութիւն, սկզբնական յստակ ու Թափանցիկ պատգամը կը պարուրուի շղարշներով ու քօղելով եւ կը դառնայ խորհրդաւոր ու անթափանց: Չեւակերպութիւնը, սովորամոլութիւնը, ծէսերը եւ նախապաշարումները յաճախ կու գան առաջնակարգ տեղ գրաւելու սկզբնական էական գաղափարին նկատմամբ: Վարդապետութիւններն ու գաղափարախօսութիւնները Հետզհետէ կը մասնուին էպիօխոսութեան ենթարկուելու, ինչպէս նաեւ անհասններու ու խաւերու կողմէ քաղաքական նպատակներով շահագործուելու վտանգին»:

Մարդ արարած ընդհանուր առմամբ կատարելութեան ուղիէն շեղած ըլլալուն պատճառաւ, Աստուծոյ շնորհներէն մին՝ իմաստութիւնն ալ իրմէ կը խուսափի: Ասոր հետեւանք ինք կ'ըլլայ խաւարամտութեան տէր եւ այդ խաւարամիտ միտքով ալ կը մեկնաբանէ Ս. Գիրքը: Ներկայացուած արարքները եւ խօսքերը, որ պէտք են իրենց բառացի իմաստով հասկցուին,

որովհետեւ անոնք իր յիշողութեան՝ փորձառութեան մաս չեն կազմեր, ան կը կարծէ, թէ անոնք վերացական, փոխաբերական իմաստ ունին եւ նման հայեացքով զանոնք կը մեկնաբանէ: Տարօրինակը այն է, թէ երբ արարք մը կամ խօսք մը մասնաւոր վերացական, փոխաբերական իմաստով մը ներկայացուած է, ան կը նախընտրէ զայն իր բառացի իմաստովը ընդունիլ, որովհետեւ փոխաբերական իմաստը իր բռնած ուղիին համապատասխան չէ: Նման մօտեցում մը Յիսուսի սորվեցուցածները ամբողջովին կը խեղաթիւրէ:

Այս գիրքին նպատակը ինքնառուսուցման ջանք մըն է, սորվելու եւ հասկնալու Յիսուս Քրիստոսի սորվեցուցած եւ Աւետարաններուն մէջ ներկայացուած, երբեմն բացայայտ եւ ընդհանուր առմամբ թազուն իմաստասիրութեան եւ աւելի կարեւոր փրկութեան, կատարելութեան ուղին:

**Իմաստութիւն Հօր Յիսուս, սո՛ւր կը ինձ իմաստութիւն՝
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն
ժամ: Ի չար խորհրդոց, Ի բանից եւ Ի գործոց փրկեա՛ վիս.
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:**

* * *



(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Ա ՅԽԱՆԱԻ ԿԵԱՆՔԷՆ
ՂՐՈՒԱԳՆԵՐ ԳԻՐՔԻՆ ՎԵՐՉԱՔԱՆԷՆ ԱՆՆՈՒՄԸ)

ՀԱՍԿՆԱԿ ՄՏԱՃՅԻՆ «ՄԱՐՄԻՆ»-Ը

Մարդ իր կարգացածը միտքովը կ'ըմբռնէ, որ կախեալ է իր միտքի որակէն: Նմանապէս, երբ մենք Ս. Գիրքը կը կարդանք, մեր միտքին որակէն կախեալ է, թէ ինչպէս կ'ըմբռնենք հոն մեզի ներկայացուած կատարելութեան ուղին: Հետեւաբար կարեւոր է հասկնալ միտքը, անոր գործելու եղանակը եւ անոր կազմուածքը:

Միտքը սերտ կապ մը ունի գիտակցութեան (consciousness) մակարդակի հետ: Մարդ արարած, նման միւս բոլոր կենդանիներուն, ունի նախնական միտք մը, որ իր ենթագիտակցութեամբը կը գործէ (sub-conscious mind): Միտքին այս մասը կը պարունակէ բազմաթիւ տեղեկութիւններ եւ մարդ արարած կը խորհի, կը խօսի եւ կը գործէ ըստ այդ տեղեկութիւններուն: Մենք ալ մեր կեանքին 95%-ը կ'ապրինք օգտագործելով միայն մեր միտքին ենթագիտակցութեան մասը: Ասիկա ապրիլ է ըստ մեր բնոյթին: Բոլոր անասուններն ալ կ'ապրին ըստ իրենց բնոյթին: Անհատին բնոյթը իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած տեղեկութիւններուն արդիւնքն է: Ինչպէս «Լոյս ի Լուսոյ Գ. - Տիեզերական Օրէնքները» գիրքիս «Մարդը եւ իր Յիմարութիւնը՝ Կենցաղը» խորագրեալ Գ. գլխուն մէջ յիշուած է (էջ 130) մարդ արարած ութը տարբեր յիշողութիւններու ենթակայ է, որոնք մաս կը կազմեն ենթագիտակցական մտքի մէջ գտնուած բոլոր տեղեկութիւններուն: Հետեւեալ մէջբերումը «Տիեզերական Օրէնքները» գիրքէս կը ներկայացնէ այդ ութը յիշողութիւնները:

«Մարդ արարած ութը տարբեր յիշողութիւններու ենթակայ է. տարրական (elemental),

հիւլէական (atomic), բարեշրջական (evolutionary), ճակատագրական՝ թէ Ֆիզիքական եւ թէ հոգեբանական (psychological), զգայարանական (sensory), անգիտակից յիշողութիւն (inarticulate memory), գիտակից յիշողութիւն (articulate memory), անապական իմացականութիւն»:

Ենթագիտակցական միտքին մէջ տեղաւորուած այս բոլոր յիշողութիւններն են որ մեր կեանքը կը կառավարեն: Նոյնիսկ անձին հոգին իր մէջ նախկին կեանքերէն մնացած տեղեկութիւն կը պարունակէ, որ ենթագիտակցական միտքին մէջի տեղեկութիւններուն եւ գիտութիւններուն մաս կը կազմէ: Ենթագիտակցական միտքին մէջ գոյութիւն ունին նաեւ բոլոր վատ զգացումները՝ ցանկութիւններ, նախանձ, ազահութիւն, ատելութիւն, բարկութիւն ...: Բայց կան նաեւ վեհ զգացումներ՝ գութ, սէր, կարեկցութիւն, ներողամտութիւն ..., որ յառաջ կու գան այն անձերուն մէջ, որոնք որոշ չափով կատարելութեան ուղիին մէջ կը յաջողին յառաջանալ: Այս կերտուած զգացումներն ալ կարելի է ենթագիտակցութեան մէջ անցնել: Այս վերջինը կը կարօտի գիտակից միտքի մը: Ենթագիտակցական միտքը նաեւ կը կառավարէ մեր Ֆիզիքական մարմնի բոլոր ներքին գործարաններուն գործառնութիւնը առանց մեր գիտակցութեան:

Ենթագիտակցական միտքը չի կրնար զանազանել ճշմարտութիւնը սուտէն, երեւակայութենէն, պատրանքէն կամ երագէն: Մանկական վատ պատահարի փորձառութիւն մը կարող է տեղաւորուիլ ենթագիտակցական միտքին մէջ եւ տարիներ յետոյ չափահաս տարիքին պատճառ ըլլալ անձկութեան եւ խուճապի: Հոգեբոյժները քնածութեան (hypnosis) միջոցաւ կարող են այդ վատ պատահարին հակասող նոր տեղեկութիւն դնել ենթագիտակցական միտքին մէջ եւ հիւանդը բուժել:

իր անձկույթենէն կամ խուճապէն: Հոգեբուժին համար կարելի կ'ըլլայ հիւանդը նման միջոցառումով մը բուժել, որովհետեւ ենթագիտակցութիւնը ճշմարիտը սուտէն՝ թելադրութենէն զանազանելու կարողութիւնը չունի: Մարդ արարած մանկութենէ սկսեալ իր կեանքի ընթացքին, ենթարկուած փորձառութիւններուն հետեւանք, բազմաթիւ տեղեկութիւններ կը տեղաւորէ իր ենթագիտակցական միտքին մէջ: Այս տեղեկութիւններուն մեծ մասն ալ ասդիէն անդիէն իր հաւաքած հաւատալիքներն են, նոյնիսկ եթէ անոնք ոչ մէկ հիմք, կապ ունենան ճշմարտութեան հետ: Միթէ նոյն կրօնքներուն մէջ զանազան հաւատալիքներու յենելով յառաջ եկած բազմաթիւ յարանուանութիւններու ներկայութիւնը ասոր ցայտուն փաստը չէ՞:

Միտքին, ենթագիտակցական միտքէն աւելի բարձր գիտակցութեան տէր երկրորդ մասը կը կազմէ մարդուն «գիտակից միտքը» (conscious mind): Գիտակից միտքն է, որ իմացականութիւն ունի ինչպէս նաեւ դատելու եւ զատելու կարողութիւն: Միտքին այս մասն է, ուր մարդուն ազատ կամքը կը գործէ: Որոշ անասուններ նախնական «գիտակից միտք» մը ունին, բայց մարդուն մէջ այդ «գիտակից միտքը» լրիւ կազմուած է: Մարդ ամենալաւ իր ենթագիտակցութեամբը կը գործէ: Երբ մանուկ մը քալել կը սկսի զայն նախ կը ջանայ գիտակցաբար ընել, հետեւաբար կոշտ ու կոպիտ կը քալէ, յաճախ իյնալով: Կ'ըսենք թէ քալել կը սորվի: Ճիշդը այն է, թէ ան քալելը իր ենթագիտակցութեան կը սորվեցնէ: Երբ քալելու տեղեկութիւնը ենթագիտակցութեան մէջ լաւ մը տեղաւորուի, ոչ թէ ան միայն կը քալէ այլ նաեւ կը վազէ: Հարցը չափահասներուն համար ալ նոյնը չէ՞: Երբ ինքնաշարժ վարել կը սորվինք, նախ զայն կը ջանանք գիտակցաբար ընել: Մեր քովի ուսուցիչը մեզ յաճախ կը յորդորէ եւ վտանգէ ու արկածէ

կը պաշտպանէ: Երբ ան վստահ կ'ըլլայ, թէ ինքնաշարժ վարելը լաւ մը մեր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած է, կը յանձնարարէ կառավարական քննութեան ենթարկուիլ: Արհեստի եւ որեւէ գործի համար ալ աշկերտութեան շրջանը եւ միջոցը, պատշաճ տեղեկութիւնները բազմիցս կրկնելով ենթագիտակցութեան մէջ տեղաւորելն է: Միայն այն ատեն անձը մասնագէտ կ'ըլլայ եւ լաւագոյնս կը գործէ: Ուրեմն «գիտակից միտք»-ին նպատակը ենթագիտակցութեան նոր տուեալներ սորվեցնելն է: Աս ալ գիտակցաբար ապրելու մաս կը կազմէ: Ահա՛, աս է անձին իր բնոյթը փոխելու ջանքին իմաստը: Որպէսզի այդ փոփոխութիւնը յաջողի յարատեւութեան եւ ժամանակի կը կարօտի: Կը թուի, թէ ընդհանուր առմամբ, մարդ իր այս կարողութիւնը պատշաճ կերպով չի գործածեր: Երբ անձը նոր տեսակէտ կամ գաղափար մը կ'իմանայ, որ իր ենթագիտակցութեան մէջի հաւատալիքներուն կը հակասէ, առանց քննելու այդ գաղափարին ճշմարտութիւնը, զայն կ'անտեսէ: Բաղդատմամբ միւս բոլոր կենդանիներուն, գիտակից միտքը մարդուն առանձնաշընորհեալ անհատականութեան մասն է, որով անհատը դատելու եւ գատելու կարողութիւնը ունի: Ան կարող է դատել եւ գատել իր անհատականութեան դրական բեւեռը՝ Քրիստոս, կամ ժխտական բեւեռը՝ իր «Ես»-ը, սատանան: Մարդ արարած հազուագիւտօրէն կը գործածէ իրեն շնորհուած այս պարգեւը եւ կը նախընտրէ կառավարուիլ իր ենթագիտակցութենէն: Գիտակից միտքին պարտականութիւնը վեհ տեղեկութիւններ տեղադրել է ենթագիտակցութեան մէջ, քան թէ՛ վատերը: Ահա՛, աս է կատարելութեան ուղին: Մարդուն միտքը անհուն կարողութիւններ ունի, որ ընդհանուր առմամբ մարդ զանոնք չ'օգտագործեր: Երբ մարդ արարած կ'անդրադառնայ այս իրողութեան եւ կը սկսի իր իմա-

ցականութիւնը պատշաճօրէն գործածել, ինքնագիտակցութեան ճամբան կը բանայ: Այս վերջինն ալ ճամբան կը բանայ կատարելութեան ուղիին: Ինքնագիտակցութեան ձգտումը առաջին նշանն է, թէ անձը սկսած է իր իմաստութիւնը գործածել:

Ինչպէս վերեւ յիշուած է, ենթագիտակցութիւնը կը պարունակէ բոլոր անասնական զգացումները: Երբ «արթուն» մարդուն գիտակից միտքը կը յառաջանայ կատարելութեան ուղիէն, անձը կ'անդրադառնայ իր բոլոր անասնական զգացումներուն եւ ինք կամացկամաց կը սորվի զանոնք զսպել: Միթէ Ծննդոց Գիրքին մէջ, մարդուն ստեղծագործութենէն վերջ, Աստուծոյ, մարդուն բոլոր անասուններուն վրայ տուած իշխանութիւնն ալ աս չէ^օ, որ կը նշանակէ՝ իր անասնական բնոյթին վրայ իշխանութիւն ունենալու կարողութիւնը: Երբ անձը կը յաջողի իր իմացականութիւնը դրական եւ լաւագոյն կերպով օգտագործել, ճամբան կը բանայ աւելի բարձր գիտակցութեան՝ գերգիտակցութեան (superconsciousness) եւ ներգիտակցութեան կամ ներհայեցողութեան (intuition): Անհատին գիտակից միտքը որքան որ կը յարի դէպի իր բարձրագոյն միտքին՝ ներգիտակցութեան, իր անասնական միտքը՝ ենթագիտակցութիւնն ալ զինք միշտ դէպի վար կը քաշէ: Անձը որքան յառաջանայ կատարելութեան ուղիին մէջ, ինչ չափով կարողանայ բարձրացնել իր գիտակցութեան մակարդակը, այնքան ալ աւելի կը ստանայ Ս. Հոգիի շնորհները, ներառեալ իմաստութիւնը: Ինք աւելի կը գիտակցի ճշմարտութեան եւ կը նշմարէ Անոր «լոյսը» ամենուրեք: Այդ մակարդակին շատ մը թագուն գիտութիւններ իրեն կը յայտնուին եւ ինք ալ շատ մը կարողութիւններու տէր կ'ըլլայ: Մենք մեր գիտակցութեան ցած մակարդակին՝ խաւարամտութեան հետեւանք այդ կարողութիւնները գերմարդկային կը համա-

րենք: Այս հայեացքը սխալ է: Միթէ Յիսուս չըսա՞ւ թէ իր ըրածներէն աւելի մեծ բաներ կրնանք ընել: Նմանապէս մեր իսլամաւարամտութեան արդիւնք, մեր ենթագիտակցութեան մէջ տեղադրուած հաւատալիքներու հետեւանք, առանց մեր իմացականութիւնը եւ տրամաբանելու կարողութիւնը գործածելու, կը կարգանք եւ կը մեկնաբանենք Աւետարանին մէջ գրուածները եւ կը ստեղծենք քրիստոնէութիւն մը, որ շատ հեռու է Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիէն:

Ինչպէս այս գիրքին յառաջաբանին մէջ գրած էի, Աւետարանին գրութիւնները, ըստ Յիսուսի յորդորին, բացայայտօրէն չեն ներկայացներ Աստուծոյ թագաւորութեան զաղտնիքը, հետեւաբար կատարելութեան ուղին, այն ինչ որ Յիսուս անուղղակի կերպով սորվեցուց:

Այս գիրքին նպատակը ներկայացնել է այն նախնական մէկ կամ երկու քայլերը, զորս կը ջանամ առնել այդ ուղղութեամբ, որպէսզի ապագային յաջողիմ իրականացնել ինքնագիտակցութիւն եւ փորձառութեամբ ճանչնամ իմ ճշմարիտ էութիւնս՝ Քրիստոս: Միթէ Քրիստոս ամէն անհատի էութիւնը չէ՞: Միթէ Քրիստոս ամէն անհատի հոգին չէ՞: Միթէ Քրիստոս ամէն անհատի մէջ Աստուծոյ ներկայութիւնը չէ՞: Միթէ մարդ Աստուածայայտնութեան միջոցը չէ՞: Միթէ աս չէ՞ր, որ Յիսուս մեզի ցոյց տալով սորվեցուց:

«Ողորմեա ինչ Լսարոս-աժ,
ըստ մէջի ողորմութեան խում,
ըստ Բազում Գրութեան խում,
խաւեա պանօրէնութիւնս իմ»
(Սաղմոս Կ:1)

(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Բ ՅԻսուսի Առակաները
գիրքին յառաջաբանէն առնուած)

ԹԱԳՈՒՄՆ ԳԻՏՈՒԹԵՆԷՆ ՍՈՐՎԻԼ

Այս գիրքին նպատակին՝ առականերու մեկնաբանութեան չանցած, յարմար կը նկատեմ հոս ներկայացնել այդ թագուն գիտութեան նկատմամբ իմ այսօրուայ տեսակէտը: Այս ուղղութեամբ դարձեալ յարմար է կարդալ Աւետարանէն հետեւեալ մէջբերումը:

«Եւ աւա՛ յարեաւ ոմն օրինական՝ փորձէ՛ր պնաս եւ ասէր. Վարդապետ՝ պի՞նչ Գործեցից՝ պի պկեանան յափտեանական ժառանգեցից: Եւ նա՛ ասէ ցնա. Յօրէնս պի՞նչ Գրեալ է, ո՞րպէս ընթեանոս: Սա պատասխանի եր՛ էւ ասէ. Սիրեացես պՏէր Ըստոսա՞ ի՞նչ յամենայն սրտէ ի՞նձմէ, էւ յամենայն անձնէ ի՞նձմէ, էւ յամենայն սրտութենէ ի՞նձմէ, էւ յամենայն մտաց ի՞նչ. էւ սրնկեր ի՞նչ ի՞նչ պնն ի՞նչ: Եւ ասէ ցնա. Ուղի՛ղ ետո՛ր սպատասխանիդ, սա՛յտ արա՛՛ էւ կեցցէ՛ս: (Ղուկաս Ժ:25-28)

«Ահա՛ օրինական մը կանգնեցաւ, ու փորձելով զայն՝ ըսաւ. «Վարդապետ, ի՞նչ ընեմ՝ որ ժառանգեմ յաւիտեական կեանքը»: Ան ալ ըսաւ անոր. «Ի՞նչ գրուած է Օրէնքին մէջ, ի՞նչպէս կը կարդաս»: Ան ալ պատասխանեց. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ մտքովդ, ու ընկերդ՝ քու անձիդ պէս»: Ինք ալ ըսաւ անոր. «Շիտա՛կ պատասխանեցիր, ըրէ՛ ատիկա՛ ու պիտի սպրիս»:

Վերեւի համարներով Յիսուս կը ստուգէ ճշգրտութիւնը յաւիտեական կեանքը ժառանգելու համար Մովսիսական կրօնքի գիրքերուն մէջ գրուած պատշաճ ընթացքը: Աս ալ փաստ մըն է, թէ բոլոր կրօնքները

նոյն իմաստասիրութիւնը կը քարոզեն, բայց մարդիկ իրենց խաւարամտութեան հետեւանք եւ հետեւաբար մակերեսային հասկացողութեամբ, զանոնք ամբողջովին փոխած են եւ յարմարցուցած իրենց վատ կենցաղին: Ուրեմն ի՞նչ է այս համարներուն սորվեցուցածը:

Առաջին յորդորը «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ» է: Այսօր որու որ հարցնենք, թէ զԱստուած կը սիրե՞ս, վստահաբար, ի բաձառեալ անոնցմէ, որոնք Աստուծոյ չեն հաւատար, կամ Զինք կ'ընդունան, բոլորն ալ պիտի ըսեն, թէ Աստուած կը սիրեն: Բայց, արդեօք գիտե՞ն, թէ ինչ կը նշանակէ Աստուած սիրել: Այս նիւթին շուրջ ստորեւ յաւելեալ տեղեկութիւն պիտի տրուի: Մէջբերումին երկրորդ մասն ալ կը յորդորէ ինչպէս Աստուած սիրել. «... ամբողջ սիրտովդ, ամբողջ անձովդ, ամբողջ զօրութեամբդ եւ ամբողջ միտքովդ»: Պէտք է, որ այս վերջինը շփոթենք «ի՞նչ է Աստուած սիրել»-ուն հետ: Բայց երբ վերլուծենք Աստուած սիրելու զանազան կերպերը, այն ատեն Աստուած սիրելուն ինչ ըլլալն ալ բացայայտ պիտի ըլլայ: Հետեւաբար վերլուծենք, թէ ինչպէս պէտք է սիրենք Աստուած:

Գրուած է. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ ամբողջ սիրտովդ», որով նախ պէտք է Աստուած սիրենք մեր սրտով եւ աս տրուած է իբր սիրելու նկատմամբ եղած յորդորներուն առաջինը: Ի՞նչ է «սիրտով սիրել»-ուն իմաստը: Սիրտը, փոխաբերական իմաստով, զգացումներու կեդրոնն է եւ սէրն ալ զգացումներուն ամենակարեւոր եւ ամենագորաւորներէն մին է: Երբ զգացական գետնի վրայ սէրը գոյութիւն չունենայ, միւս յաջորդող սիրոյ միջոցառումներուն մէջն ալ սէրը չի կրնար գոյութիւն ունենալ: Երբ երկու երիտասարդ կը սիրահարուին, միշտ իրարու հետ ըլլալ եւ իրարու հետ ժամանակ անցնել կը տենչան: Աս իրենց համար բացառիկ երջանկութեան առիթը կու տայ: Ահա աս է

սրտանց սիրելը եւ սիրոյ արտայայտութիւնը, ինչպէս նաեւ անոր տուած երջանկութիւնը: Երբ կ'ըսենք թէ Աստուած կը սիրենք, արդեօք Իրեն միանալու մեր տենչանքին քանակը կը համապատասխանէ՞ երկու երիտասարդներուն իրարու հետ ըլլալու համար ունեցած տենչանքին: Եթէ երկուքն ալ իրարու համապատասխան են, ինչո՞ւ այդ ուղղութեամբ՝ Աստուծոյ հետ միանալու ջանք չենք թափեր: Ճշմարտութիւնը այն է, թէ սիրահարուած երկու երիտասարդներուն իրար միանալու տենչանքը մեր մէջ գտնուող տենչանքի կարողութեան միայն 10%-ն է: Իսկ Աստուծոյ միանալու տենչանքին որակն ալ պէտք է բազմիցս գերազանցէ սիրահարներու այդ ճղճիմ տենչանքը եւ պէտք է յայտնուի որպէս մեր տենչանքի կարողութեան 100%-ը: Երբ իրար կը միանան երիտասարդներուն զգացած երջանկութիւնն ալ ճղճիմ երջանկութիւն մըն է, որ կը համապատասխանէ անձին ունեցած տենչաքին ճղճիմութեան: Զարմանալին այն է, թէ մարդ արարած կը գոհանայ իր ապրած կեանքին՝ կենցաղին տուած այդ ճղճիմ երջանկութիւններով, երբ ինք Աստուծոյ հետ միանալու երանութիւնը վայելելու կարողութիւնը ունի: Բայց եթէ մարդ Աստուծոյ միանալու այդ բարձր որակով տենչանքը չունի, իրեն համար ալ անկարելի կ'ըլլայ այդ Աստուածային երանութիւնը վայելել: Ահա՛, աս է բոլոր սրտով Աստուած սիրել եւ ոչ թէ աջ ու ձախ . «Ես Աստուած կը սիրեմ եւ կը պաշտեմ» ըսելը: Ուրեմն, երբ մարդ «Աստուած կը սիրե՞ս» հարցումին դրական պատասխան կու տայ, ինք սուտ չէ որ կը խօսի, այլ իր խաւարամտութեան հետեւանք չի գիտեր, թէ ինչ է իսկական, բարձր որակով սէրը, որովհետեւ բնաւ անոր փորձառութիւնը չէ ունեցած եւ իր ենթագիտակցութեան մէջ այդ տեղեկութիւնը եւ անոր տուած երանութիւնը գոյութիւն չունին: Ան նաեւ չի գիտեր,

Թէ ինք նման կարողութեան տէր է եւ Աստուած այդ կարողութիւնը իրեն տուած է: Ահա՛, աս էր, որ Յիսուս կը ջանար մեզի սորվեցնել: Սէրը զգացական է, սակայն բարձր որակով սէրը մարդու մօտ զգացական գետնի վրայ կը թուի գոյութիւն չունենալ: Հետեւաբար, արդեօք կը խորհի՞նք, թէ վերելի համարներուն մէջ ներկայացուած մնացեալ միւս սիրոյ միջոցառումները կարող կ'ըլլանք պատշաճ կերպով գործադրել:

Աստուած սիրելու երկրորդ յորդորը հետեւեալն է. «Սիրէ՛ Տերը՝ քու Աստուածդ ... ամբողջ անձովդ...»: Ի՞նչ կը նշանակէ ամբողջ անձով Աստուած սիրել: Մարդուն «անձ»-ը իր անհատականութիւնն է եւ այդ անհատականութիւնն ալ ունի ազատ կամք եւ կը գործէ մարմնի միջոցով: (Տես «Աւետարանի Խորհուրդները Ա.-Յիսուսի կեանքէն դրուագներ» խորագրեալ առաջին հատորին «Յիսուս կ'ուտէ զատիկը իր աշակերտներուն հետ» գլուխը: էջեր 108-114) Հոն նկարագրուած է, թէ ինչպէս մարդու անհատականութիւնը երկու բեւեռներ ունի եւ մարդը կը գործէ ըստ իր բնոյթին: Բայց, ան ազատ կամք ունի զատելու իր անհատականութեան ժխտական բեւեռ՝ իր «Ես»-ը եւ ըստ այնմ գործել, այսինքն ըստ իր «Ես»-ին յառաջ բերած բնոյթին, կամ զատել իր անհատականութեան դրական բեւեռը եւ գործել ըստ Քրիստոսի յառաջացուցած բնոյթին: Ուրեմն բոլոր անձով Աստուած սիրելն ալ կը համապատասխանէ անձին իր ազատ կամքով իր անհատականութեան դրական բեւեռը զատել եւ այդ բնոյթին համաձայն ալ գործել: Յիսուս ըսած է.

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ց տերանց թառայել. զի եթէ
զմին՝ ասրիցէ, եւ զմեւսն սիրէ՛. կամ զմին՝
մեծարիցէ, եւ զմեւսն արհամարի- ցէ՛: Ո՛չ
կարէ՞ Մարտո՛ս, թառայել եւ մամոնայի»: (Ղուկաս Ժ. 9:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ.

որովհետեւ կա՛մ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կա՛մ
մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: **Չէք** կրնար
ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

**Բայց մարդ իր խորամանկութեամբ կը ջանայ երկու
բեւեռներուն միջեւ ճօճիլ, անգիտակից թէ այդ կարելի
չէ, եթէ մեր «ամբողջ անձով» Աստուած պէտք է
սիրենք: Մարդ նաեւ կը գործէ իր մարմինով, որ
Աստուծոյ տաճարն է:**

«Ո՞չ Գեորգէ՛ էջէ Կաճար է՛ Նարո-ձոյ, է- Ըոգի
Նարո-ձոյ բնակեալ է 'ի յեզ» (Ն. Կորնթացիս Գ:16)
«**Չէ՞ք** գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ
Հոգին ձեր մէջ կը բնակի»:

**Հետեւաբար Աստուած սիրել կը նշանակէ իր տաճարին
լաւ հոգ տանիլ: Աս կը համապատասխանէ մեր մարմին-
ներուն նկատմամբ բացարձակ ուշադրութեամբ վար-
ուիլ եւ զանոնք լաւագոյն կերպով խնամել, առանց
զանոնք չարաչար գործածելու եւ առանց զանոնք
պղծելու՝ այսինքն առանց որկրամոլութեան, առանց
ծխախոտ ծխելու, առանց խմիչքներով արբենալու,
առանց թմրեցուցիչ դեղերով մտային այլակերպման
եւ մոլորութեան: Նաեւ պարտ ենք պատշաճ կերպով,
այսինքն արողջապահական պայմաններու համաձայն,
մարմինը կերակրել: Իսկ մենք, մեր «Ես»-ին յառաջ
բերած ցանկութիւններով, կարճ ճղճիմ հաճոյքներու
համար, համեղ ուտելիքներ եւ ըմպելիներ կը փնտը-
ռենք եւ Աստուծոյ տաճարը՝ մեր մարմինները յաճախ
կը պղծենք: Ասոր պատիժն ալ ապագային կը կրենք՝
հիւանդանալով: Միթէ որկրամոլութիւնը մահացու
մեղքերէն մին չէ՞: Անհատը նաեւ կը գործէ իր մարմնի
միջոցով: Ուստի մեր բոլոր արարքներն ալ պէտք են
ըլլալ ըստ Աստուծոյ՝ մեր ներքին Քրիստոսի կամքին,
քան թէ մեր «Ես»-ին: Մարդկութեան ջախջախիչ մեծա-
մասնութիւնը կը գործէ եսասիրութեամբ: Երբ ինք շահ
չ'ակնկալեր, ընդհանրապէս չի գործեր: Սակայն եւ**

այնպէս միշտ կան մանր-մունր բազմաթիւ այլասիրական գործունէութիւններ: Ինչպէս Աստուած՝ Քրիստոս ամէն անհատի մէջ ներկայ է, նմանապէս Աստուած բոլոր ստեղծագործութեան մէջ ալ ներկայ է: Հետեւաբար մեր բոլոր արարքներն ալ պարտ են նման հայեացքով ըլլալ: Ուրեմն պէտք չէ որեւէ բոյսի, անասունի վնաս հասցնել, այլ զանոնք լաւագոյն կերպով խնամել: Մեր բոլոր արարքները պէտք են բոլորին՝ ընդհանուր հանրութեան՝ ընկերութեան եւ բնութեան օգտին համար ըլլալ: Նոյնիսկ եթէ օգտակար չենք, գոնէ պէտք չէ որեւէ վնաս հասցնենք: Ահա՛, աս է «մեր բոլոր անձով Աստուած սիրել»-ուն իմաստը:

Աստուած սիրելու երրորդ յորդորը. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ... ամբողջ զօրութեամբ ...» է: Վերլուծենք թէ ի՞նչ է զօրութեամբ Աստուած սիրելուն իմաստը: Այսօր բնագիտութիւնը փաստած է, թէ բոլոր տիեզերքը, ներառեալ աշխարհը եւ մենք, զօրութեամբ կազմուած է: Նիւթն ալ զօրութենէ յառաջ եկած է: Բայց որովհետեւ բնագէտները տակաւին այդ զօրութեան բնոյթը չեն հասկցած, զայն «մութ զօրութիւն» կը կոչեն: Բայց Յիսուս այդ զօրութիւնը, մեզի ծանօթացուց Ձայն Ս. Հոգի կոչելով, որովհետեւ Ան Աստուծմէ բղխած է: Ուրեմն ամէն ինչ Աստուծոյ զօրութեամբ՝ Ս. Հոգիով յառաջ եկած է: Հետեւաբար բոլորս ալ՝ անասուն կամ անհատ, Ս. Հոգիի զօրութեան մէկական ծրարներ ենք: Յիսուս նաեւ կը յանձնարարէ սիրել մեր «ընկերը» մեր անձին պէս, որովհետեւ ամէն անհատ նոյն զօրութեան մէկ արտայայտութիւնն է, հետեւաբար այդ սէրը Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին սիրելն է: Ամէն անհատ զօրութեան «մարմին» մը ունի: Ամէն զօրութիւն իր ուրոյն թրթռացումը ունի: Ամէն մի անհատի զօրութեան մարմնին թրթռացումն ալ անհատը ինք կը կերտէ եւ կը համապատասխանէ իր

կենցաղին: Ամէն թրթռացում իր փոփոխական յաճախականութեամբ իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ: Մեր զօրութեան մարմնի թրթռացումին մէջի տեղեկութիւններն ալ մենք մեր խորհուրդ, խօսք ու արարքներով հոն տեղաւորած ենք: Այդ տեղեկութիւններն են, որ կը կազմեն եւ կ'որոշեն մեր ճակատագիրը: Եթէ իսկապէս Աստուած կը սիրենք եւ այդ խօսքը չենք գործածեր իբր բերնի ծամոց, իրեն միանալու տենչանքն ալ, որ սրտով սիրելուն հետեւանքն է, մեզ պէտք է մղէ մեր զօրութեան մարմնին յաճախականութիւնը բարձրացնելու այնպիսի մակարդակի մը, որ տեսանելի ըլլայ հանրութեան, ինչպէս Յիսուսի եղաւ իր այլակերպութեան ատեն: Զօրութեան յաճախականութիւնը բարձրացնելն ալ կարելի կ'ըլլայ մեր ամբողջ անձով Աստուած սիրելով: Բղջախոհութիւնը մահացու մեղքերէն մին է, որովհետեւ սեռային յարաբերութիւնները բարձրը որակով զօրութիւն կը վատեն: Հետեւաբար նպատակը պէտք է ըլլայ ծննդաբերութիւն եւ ոչ թէ հաճոյք, որպէսզի զօրութիւնը վատնուած չըլլայ: Երբ զօրութիւնը կը նուազի հիւանդութիւնները եւ վատ պատահարներն ալ կը թուին յաճախ մեզ գտնել: Պարտ ենք ընդունիլ կեանքի բոլոր վատ պատահարները եւ չգանգատիլ, որովհետեւ անոնք բոլորն ալ մեր կերտած ճակատագրին հետեւանքներն են: Եթէ ընդունինք եւ փոխանակ գանգատելու մեր պատշաճ դասը սորվինք եւ այնուհետեւ նման արարքներով զօրութեան յաճախականութիւնը չապականենք, կը կարողանանք կամաց կամաց յաճախականութիւնը բարելաւել: Միանգամայն վատ պատահարներն ալ կը դադրին կրկնուելէ: Ահա՛, աս է ամբողջ զօրութեամբ Աստուած սիրելուն իմաստը: Եօթը մահացու մեղքերը, որովհետեւ բոլորն ալ Ս. Հոգիի կենսատու զօրութեան անձէն ներս հոսքը կը կաշկանդեն, կամ ներգործած զօրութիւնը կը վատեն,

անձը հոգեպէս կը մեռցնեն, նոյնիսկ ժամանակի ընթացքին Ֆիզիքսպէս ալ: Այն աստիճանի պէտք է սիրել զԱստուած, որ մեր բոլոր ջանքը ընենք, որպէսզի մեր զօրութեան որակը նմանի Իրենինին: Իսկ մենք նոյնիսկ լուր անգամ չունինք, թէ զօրութեան մարմին մը ունինք եւ մեր «Ես»-ին փարած, մեր բռնած ընթացքով կը կերտենք զօրութեան որակ մը, ինչ որ մեզ աւելի կը հեռացնէ Աստուծմէ եւ պատճառ կ'ըլլայ մեր կեանքի բոլոր անբաղձալի պատահարներուն: Կ'ըսենք, թէ Աստուած կը սիրենք մեր ամբողջ զօրութեամբ, բայց իսկական սէրը խօսքով չէ, այլ միայն գործքով յայտնի կ'ըլլայ: Կան յարանուանութիւններ, որոնց անհատները կը կարծեն, թէ քարոզիչին իրենց ճակտին դպչելով Ս. Հոգիի զօրութիւն ստացած կ'ըլլան եւ այդ զօրութեան արդիւնք ալ վար կ'իյնան: Ասոնք բոլորն ալ զգացական գետնի վրայ ինքնախաբէութիւններ են: Քրիստոս իր աշակերտներուն ըսաւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի ղրկեմ»: Ս. Հոգին ալ Պենտեկոստէի օրը «կրակէ լեզուի» ձեւով աշակերտներուն տեսիլքով երեւցաւ: Կրակը զօրութեան նշան է, հետեւաբար Ս. Հոգիի զօրութիւնը բարձր որակով հոսեցաւ իրենց մէջ, փոխելով անոնց զօրութեան մարմնին յաճախականութիւնը: Իրենց բոլոր էութիւնը ցնցուեցաւ, որովհետեւ բարձր գիտակցութեան մակարդակի յափշտակուեցան եւ զանազան գիտութիւններու տէր եղան: Ս. Հոգիի այդ զօրութիւնը իրենց եկաւ Քրիստոսէն՝ իրենց ճշմարիտ էութենէն: Միթէ Քրիստոս չէ՞ր ըսած. «Ձեզի Ս. Հոգին պիտի ղրկեմ»: Ս. Հոգիի Ֆիզիքսական գետնի վրայ ներկայութիւնը Քրիստոսն է, որ ամէն անձի ճշմարիտ էութիւնն է: Հետեւաբար զօրութեան մարմինը Ս. Հոգիի զօրութիւնն է եւ մեր ամբողջ զօրութեամբ Աստուած սիրելն ալ այդ զօրութեան որակը բարձրացընելն է, որպէսզի գիտակցութեան (consciousness) աւելի

բարձր մակարդակի մը յափշտակուինք:

Աստուած սիրելու չորրորդ յորդորը հետեւեալն է. «Սիրէ՛ Տէրը՝ քու Աստուածդ՝ ... ամբողջ միտքովդ ...»: Ի՞նչպէս Աստուած սիրել միտքով: Մարդուն միտքը երբ կը գործէ սրտի միջոցաւ տեղի կու տայ զգացումներու: Ասոր մասին, վերեւ առաջին յորդորին՝ «բոլոր սրտով Աստուած սիրել»-ուն մէջ, անդրադարձանք: Այս յորդորին նպատակը մտքին ուղեղին միջոցաւ ունեցած գործառնութեան համար է: Միտքը խորհուրդներու եւ իմացականութեան միջոցն է: Դժբախտաբար մարդ արարած իր իմացականութիւնը պատշաճ կերպով չի գործածեր որպէսզի անկէ օգտուի: Մարդուն միտքը, բազմազան եւ ընդհանուր առմամբ անպէտ եւ անօգուտ խորհուրդներու ողողումով մը զբաղ, կարող չէ յայտնաբերել մտքին ունեցած կարողութիւնները եւ իր իմացականութիւնն ալ դրականօրէն գործածել: Պէտք չէ մոռնանք, թէ մարդ ինչ որ կը խօսի եւ ինչ որ կը գործէ նախ ծնունդ կ'առնեն իբր խորհուրդներ իր մտքին մէջ: Հետեւաբար իր մտքին որակը շատ կարեւոր է, ոչ միայն իր ամբողջ մտքով Աստուած սիրելուն, այլ նաեւ կարեւոր է նախորդ միւս երեք Աստուած սիրելու միջոցառումներուն համար ալ: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Երանի այնոցիկ՝ որ սո՛ւրբ են սրտի՛ւն, զի՛

նո՛ւա պէ՛տքո՛ւս ա՛յս ցեղն է:» (Մատթէոսի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Ինչպէս նախկին գիրքերուս մէջ բազմիցս կրկնած եմ, «սուրբ սիրտ»-ը խորհուրդներէ սրբուած եւ մաքրուած միտքն է: Հետեւաբար այն անձը, որ իր ամբողջ մտքով Աստուած կը սիրէ, պարտ է իր մտքին ղեկը ինք իր ձեռքը առնել եւ զգացումները զսպել եւ բոլոր խորհուրդները դադրեցնել եւ միտքը կեդրոնացնել Աստուծոյ՝ Քրիստոսի՝ իր ճշմարիտ էութեան վրայ: Միթէ հին

յունական ասացուածքն ալ չ'ըսեր. «Մանիր զքեզ»: Աս ալ կարելի է խոկումով՝ աղօթքին ամենավեհ ձեւովը: Ահա՛, աս է ամբողջ մտքով Աստուած սիրելը:

Յիսուսի առականերուն մեծամասնութեան, չըսելու համար բոլորին, նպատակը յայտնաբերել է Աստուծոյ թագաւորութեան թագուն գաղտնիքները, որով պարտ ենք զանոնք մեկնաբանել վերոյիշեալ տուեալներու լոյսին տակ: Որովհետեւ վերեւ տեղադրուած համարները կ'ամփոփեն Աստուծոյ թագաւորութեան հասնելու կամ յաւիտենականութիւնը ժառանգելու միջոցը, հոն նշուած են չորս հրամայականներ: Անոնք են Աստուած սիրելու չորս «եղանակները»: Ինչո՞ւ չորս: Որովհետեւ մարդ ունի անհատականութիւն մը, որ կը գործէ մարմնին միջոցաւ եւ մտքին միջոցաւ, որ ենթակայ է թէ խորհուրդներու եւ թէ զգացումներու՝ յուզումներու: Մարդ նաեւ է եւ ունի գօրութեան մարմին մը, որ պատճառն է միւս երեքին: Հետեւաբար Յիսուսի յորդորն ալ այն է, թէ մարդ փրկութեան համար պարտ է սիրել Աստուած իր ամբողջական էութեամբը՝ իր կեանքին չորս միջոցառումներովը:



(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Բ ՅԻՍՈՒԻ ԱՌԱԿՆԵՐԸ
ԳԻՐՔԻՆ ԵՍՏՈՒՄԵՆԿՆ ԽՈՒՆՈՒՄԸ)

ԻՆՉՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

«Եւ իբրեւ եղեւ ասանչինն, Հարցին ցնա որ
սնովան էին աշակերտո՞ւն Հանդերձ՝ սառական:
Եւ ասէ ցնասա. Չե՛ս ցոտեալ է Գերե՛ւլ սխոր-
Հոտորա արժայտութեան Աստուծոյ: Բայց նոցա
որ արցախինն էն՝ ամենայն ինչ ասակո՞ւ լինի:
Ձի ցեասնելով ցեացեն՝ էւ մի՛ ցեացեն, էւ
լսելով լսեցեն՝ էւ մի՛ իմասցին. սի մի՛ երբէ՛կ
դարձցին՝ էւ խոցին նոցա:» (Մարկոս Դ:10-12)

«Երբ առանձին էր, իր շուրջը եղողները՝ տասներկուքին
Հետ Հարցուցին իրեն այս առակին մասին: Եւ ըստ
անոնց. «Ձեզի տրուած է գիտնալ Աստուծոյ
Թագաւորութեան խորհուրդը, բայց անոնց որ դուրսէն
են՝ ամէն ինչ առեղծուած կ'ըլլայ. որպէսզի շատ
տեսնեն՝ բայց չըմբռնեն, շատ լսեն՝ բայց չհասկնան, ու
դարձի չգան եւ իրենց մեղքերը չներուին»:

«Հարցանէին սնա աշակերտո՞ւն թէ սի՞նչ իցէ
ասական: Եւ նա՛ ասէ. Չե՛ս ցոտեալ է
սխորՀոտորա արժայտութեան Աստուծոյ, Բայց
այլոցն ասակո՞ւ սի ցեացեն՝ էւ մի՛ ցեացեն, էւ
լսեցեն՝ էւ մի՛ իմասցին»: (Ղուկաս Ը:9-10)

«Իր աշակերտները Հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը
այս առակին»: Ան ալ ըստ. «Ձեզի՛ տրուած է հասկնալ
Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդները, բայց
ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝
չտեսնեն, ու լսելով՝ չհասկնան»:

*Հստ այս համարներուն, բացայայտորէն յայտնի է,
թէ Յիսուս Աստուծոյ Թագաւորութեան խորհուրդին
(mystery) Թագուն՝ գաղտնի գիտութիւնը կը սորվեցնէր*

իր աշակերտներուն, որպէսզի անոնք եւս կարենային Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալ: Յիսուս բացայայտօրէն կը շեշտէ, թէ հասարակութեան միայն առակներով կը խօսէր, որպէսզի բոլոր անոնք, որոնք այդ թագուն գիտութիւնը ստանալու պատրաստ չէին, հետեւաբար արժանի չէին ճշմարտութիւնը լսելով հանդերձ զայն չհասկնան: Յիսուս իր աշակերտները կը զգուշացնէ, որպէսզի անոնք ալ անխոհեմութեամբ այդ գիտութիւնը հանրութեան չպարզեն եւ միայն արժանի անձերու փոխանցեն:

«Մի՛ գայէ պարէութիւնն՝ շանց, եւ մի՛ արկանելի պատգամարի՛ց յի՛ յեր առաջի խոսաց, պի՛ մի՛ առ ո՛րքն կոխիցեն պնաս, եւ դարձեալ երգիծողացանիցէ՛ն պչեպ»: (Մատթէոս Է:6)

«Սուրբ բանը մի՛ տաք շուներուն՝ ու ձեր մարգարիտները մի՛ նետէք խոզերուն առջեւ, որպէսզի չկոխկրտեն զանոնք իրենց ոտքերուն տակ, եւ դառնալով չբզքտեն ձեզ»:

Երբ կը տեսնենք աշխարհի ներկայ վիճակը եւ ընդհանուր քրիստոնէութեան՝ քրիստոնեաներուն բռնած ընթացքը՝ կենցաղը, կը թուի, թէ Յիսուսի սորվեցուցած այդ թագուն գիտութիւնը ամբողջովին կորսուած ըլլայ: Բայց, ըստ Աւետարանի հետեւեալ համարին, իրողութիւնը այն է, թէ այդ ճշմարտութեան, այդ թագուն գիտութեան տեղեակ անձերու թիւը այն աստիճան պիտի նուազի, որ պիտի կարծուի թէ այդ գիտութիւնը կը կորսուի, բայց պիտի չկորսուի եւ օր մը դարձեալ պիտի ընդհանրանայ:

«Զեղեգն ջախջախէ՛ ալ ո՛չ փշրեացե եւ պոսորոյնն առկայժեալ ո՛չ շիջողացե մինչեւ հանցե ՚ի յաղթութիւնն պրասպասանն» : (Մատթէոս ԺԲ: 20)

«Պիտի չփշրէ Չախջախուած եղէգը ու պիտի չմարէ
պլպլացող պատրոյգը, մինչեւ որ իրաւունքը Հասցնէ
յաղթուլթեան»:

*Արդեօք ժամանակը եկա՞ծ է, որ այդ գիտութիւնը
դարձեալ յայտնուի եւ ընդհանրանայ: Պէտք է մոռ-
նանք, թէ «Զկներ»-ի շրջանին վերջաւորութիւնն է որ
կ'ապրինք եւ յաջորդ շրջանը «Զրկիր/Զրհոս»-ի շրջանն
է: Եւ ըստ Յիսուսի սորվեցուցածին, այս շրջանին է, որ
մարդ պիտի հաղորդուի Քրիստոսի հետ: (Տես «Աւետարա-
նի Խորհուրդները Ա.-Յիսուսի կեանքէն դրուագներ» խորագրեալ
առաջին հատորին մէջ «Յիսուս կ'ուտէ գատիկը Իր աշակերտներուն
հետ» գլուխը: Էջեր 101-104 եւ 114-125)*

*Ուրեմն ի՞նչ է այդ թագուն գիտութիւնը, զորս
Յիսուս բացայայտ կերպով չսորվեցուց, այլ առակ-
ներով խօսեցաւ եւ ինչո՞ւ Յիսուս չուզեց այդ գաղտ-
նիքը հանրութեան պարզել: Անոնք զօրութեան օրէնք-
ներուն գիտակցելու միջոցառումներն են: Մեր ունե-
ցած փորձառութենէն գիտենք, թէ ամէն տեսակի զօրու-
թիւն իր ուրոյն օրէնքները ունի եւ եթէ մարդ այդ
օրէնքները սորվի, կը կարողանայ այդ զօրութիւնները
պատշաճօրէն գործածել:*

*Աշխարհի վրայ կան զանազան զօրութիւններ: Կայ
Ֆիզիքական զօրութիւն եւ մարդ, ինչպէս նաեւ անա-
սունները կարող են զայն յայտնաբերել օգտուելով
իրենց մկանային ուժէն: Բնութիւնն ալ ունի Ֆիզիքա-
կան զօրութիւն, ինչպէս հովերուն փոթորիկները, որոնք
կարող են աւերներ գործել: Կայ նաեւ հոսող կամ շար-
ժուն ջուրին զօրութիւնը, ինչպէս նաեւ երկրաշարժը,
հրաբուխը եւայլն: Մարդ արարած որոշ չափով կարող է
այդ զօրութիւններէն օգտուել, որովհետեւ սորված է
զանոնք կառավարող մի քանի օրէնքները: Մարդ կա-
րող եղած է հողմաղացով (windmill) օդին ուժէն օգտուել:
Վերջին մի քանի տարիներուն սկսած են հովին զօրու-
թիւնը օգտագործել նաեւ ելեկտրականութիւն հայթայ-*

Թեև չկան համար: Մարդիկ նաև սորված են ջուրի զորութեան մի քանի օրէնքները եւ դարերով գայն օգտագործած են ջաղացքի միջոցաւ: Այսօր տակաւին ջուրի ուժով յառաջ եկած ելեկտականութիւն կը գործածենք: Բայց որովհետեւ մարդ տակաւին այդ զորութիւնները կառավարող բոլոր օրէնքները չի գիտեր, կարող չէ գանոնք ամբողջովին գապել եւ անոնց գործած աւերներուն առաջքը առնել: Տակաւին նոր-նոր կը ջանան որոշ վայրեր ամպերը «սերմանելով» անձրեւ տեղացնել: Որովհետեւ իրենց գիտութիւնը նախնական է, որով իրենք գանոնք կառավարող բոլոր օրէնքներուն տեղեակ չեն, ուստի կարող չեն հասկնալ իրենց ըրածներուն հետեւանքը որով կը խանգարեն ընդհանուր աշխարհի օդերեւութաբանական ներդաշնակութիւնը: Յիսուս տեղեակ ըլլալով այդ զորութիւնները կառավարող օրէնքներուն, դիւրութեամբ դադրեցուց թէ՛ հովի եւ թէ՛ ծովի փոթորիկները:

Մարդ նաև տեղեակ է քիմիական տարրական կապերու (chemical bonds) միջեւ գոյութիւն ունեցող զօրութեան եւ որոշ չափով գանոնք կառավարող օրէնքները սորված, կարող է գանոնք գործածել եւ անոնցմէ օգտուիլ: Նախ միայն փայտ, յետոյ ածուխ եւ աւելի վերջ ալ քարիւղ կամ օդային կազ վառելով, անոնց քիմիական բաղադրութիւնները թթուածինի (oxygen) յաւելումով եւ տարրական կապերուն փոխուելովն ալ արձակուած զօրութենէն կարողացած է օգտուիլ: Այս արարքով անոնք ապականած են օդը եւ աշխարհի ընդհանուր ջերմութեան բարձրացման պատճառ եղած ու խանգարած են բնութեան ներդաշնակութիւնը:

Տակաւին միայն հարիւր տարի առաջ մարդ գիտակցեցաւ նաև հիւլէական զօրութեան, բայց որովհետեւ բոլոր օրէնքներուն լրիւ տեղեակ չէ, միշտ վտանգ կայ որ արկածի մը հետեւանք, ցոլարձակ (radio-

active) ապականութեամբ, երկիրը անբնակելի դառնայ: Պէտք է մոռնանք մի քանի տասնեակ տարի առաջուան «Չէրնոպիլ»-ի աղէտը: Մօտաւորապէս հարիւր յիսուն տարի առաջ ալ մարդ սորվեցաւ ելեկտրոններու հոսքին որոշ օրէնքները եւ սկսաւ շատ մը մարզերու մէջ ալ ելեկտրականութիւնը օգտագործել:

Մարդ վերջին հարիւր տարուայ ընթացքին ելեկտրամագնիսական զօրութիւնը կառավարող որոշ օրէնքները սորվեցաւ եւ գանոնք գործածեց զանազան մարզերու մէջ, ինչպէս ձայնասփիւռի եւ հեռատեսիլի իրականացումը, մանրալիքային (microwave) ճառագայթներով կերակուր եփելը եւ այլ կերպերով օգտուելը, «Ք» ճառագայթներով (X rays) բժշկութեան մէջ մարդկային մամինի ներքին մասերը նկարելը: Տակաւին վերջին մի քանի տասնեակ տարիներու ընթացքին է, որ մարդ նաեւ սկսած է արեւի լոյսին զօրութիւնը օգտագործել ելեկտրականութիւն հայթայթելու համար: Հայտ մը Ռ. Վ. Տամատեանի ըրած գիւտով այսօր նաեւ կարող ենք մարմնի ներքին նկարը հանել մագնիսական զօրութիւնը օգտագործելով (magnetic resonance imaging), իսկ Միքայէլ Տէր-Պօղոսեանի գիւտով ալ «PET scan»-ով:

Այս վերոյիշեալ զանազան զօրութիւններու նկատմամբ կը թուի թէ մարդ երբ զօրութիւնները կառավարող օրէնքներուն կը գիտակցի, կը ջանայ գանոնք օգտագործել ընդհանուրի օգտին համար: Բայց մարդ, որովհետեւ ընդհանուր առմամբ անձնասէր է եւ հետեւաբար իսաւրամիտ, տակաւին բաւարար իմաստութիւն չունի եւ գանոնք կ'օգտագործէ իր անձնական շահին համար: Թէսլա (Tesla) առանց թելերու հանրութեան ելեկտրականութիւն բաշխելու գիւտը ըրած էր, բայց ներգրուածի բաժնետէրերը հասկցան թէ պիտի չկարենան դրամի փոխարէն բաշխել ու շահ ընել, որով ումբակոծեցին անոր շինած աշտարակը եւ չարտօնեցին

որ ան իր գիւտը գործադրութեան դնէ:

Մարդ իր ըրած գիւտերուն եւ իր սորված գանազան զօրութեան օրէնքներուն վերոյիշեալ օգտակար նպատակներու գործածութենէն զատ, ան, իր խաւարամըտութեան եւ եսասիրութեան հետեւանք, զանոնք գործածած է նաեւ վատ նպատակներու համար՝ աւերներ գործելով: Մարդու գիտակցութեան մէջ զօրութեան ամենէն պարզը եւ նախնականը Ֆիզիքական զօրութիւնն է: Շատ վաղուց մարդ սկսաւ իր Ֆիզիքական զօրութիւնը վատ նպատակի համար գործածել՝ կայէն իր եղբայրը՝ Աբելը սպաննեց: Մարդ նաեւ աղեղ եւ նետը շինեց եւ սկսաւ պատերազմիլ: Երբ ան քիմիական տարրական կապի ուժը գտաւ, զայն գործածեց նաեւ վատ նպատակներու համար. նախ թնդանօթի համար, յետոյ ալ ռումբի, զանոնք պայթեցնելով հազարներ մեռցուց: Պատերազմները շատ աւելի սաստկացուց: Իսկ հիւլէական զօրութեամբ ալ պատերազմներու սաստկութիւնը իր գագաթնակէտին հասցուց, որով մէկ ռումբով հարիւր հազարաւոր մարդիկ մահացան: Ան ելեկտրականութիւնն ալ գործածած է մարդ տանջելու, ինչպէս նաեւ մահապատիժներու կիրարկման համար: Մարդը լոյսի զօրութիւնովն ալ՝ «laser»-ի միջոցաւ, օդանաւեր վար առած է, մարդ կուրցուցած, ինչպէս նաեւ մեռցուցած է:

Այս բոլոր տեղեկութիւններէն յայտնի կ'ըլլայ, թէ երբ մարդ սորված է որեւէ զօրութիւն մը կառավարող օրէնքները, ան, այդ զօրութիւնները օգտակար նպատակներու գործածելով հանդերձ, զանոնք զուգահեռաբար գործածած է վատ նպատակներու համար ալ: Յիսուս գիտնալով մարդուն խաւարամտութեան մակարդակը եւ իր բոլոր գիտելիքները անձնասիրաբար վատ նպատակներու գործածելու միտումը, չփափաքեցաւ որ կարողութիւնը ունենայ հսկայական աւերներ

գործելու, նոյնիսկ կործանելու աշխարհ, հետեւաբար բացայայտօրէն հանրութեան չտուաւ Ս. Հոգիի՝ տիեզերական զօրութեան թագուն օրէնքները: Յիսուս անոնց խօսեցաւ առականերով, որպէսզի իմանալով չհասկնան: Յիսուս նոյնիսկ իր առականերուն մէջ Ձօրութեան այդ թագուն օրէնքները չէ յայտնած: Ան, առականերով, միայն բարձր գիտակցութիւն կերտելու գիտութիւնը տուած է: Իսկ այն անձը, որ կը հասկնայ առականերուն մէջի թագուն գիտութիւնը եւ կը յաջողի բարձր գիտակցութեան տիրանալ, նաեւ տէր կ'ըլլայ բոլոր թագուն օրէնքներուն, որոնք կը կառավարեն Ձօրութիւնը: Յիսուս իբր մարդ հասնելով այդ բարձր գիտակցութեան մակարդակին եւ յայտնաբերելով Քրիստոս իր անձին մէջ, տեղեակ էր Ձօրութիւնը կառավարող բոլոր օրէնքներուն, հետեւաբար կարող էր ընել այն բոլորը, զորս մենք հրաշք կը համարենք: Միթէ Յիսուս չըսա՞ւ, թէ Իր ըրածներէն աւելի մեծ գործեր կրնանք ընել:

«... Ամէն ամէն ասե՛մ թէ որ Հասարակն յիս
սգործս սոր ես գործեմ, եւ նա՛ գործեսցե՛ եւ
մեծամեծս է՛ս իան սնոյնս գործեսցե՛ ... »:
(Յովհաննուս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

Ուրեմն այս հիման վրայ պէտք է կարդանք եւ մեկնաբանենք Յիսուսին առակաները, սորվինք հոն ներկայացուած թագուն գիտութիւնները, որպէսզի կարողանանք բարձրացնել մեր գիտակցութեան մակարդակը եւ Իրեն նման կատարեալ ըլլանք:

«Արդ եղերո՛ւի դուի կարարեա՛լի, որպէս եւ
Հայրն յեր երկնսոր կարարեա՛լ է»:(Մարտէոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր

հայրը կատարեալ է»:

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ - ինն սվարտապետ իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ սվարտապետ իւր» : (Ղուկաս 9:4)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

Յիսուսին նպատակը մեզի սորվեցնել էր կատարելութեան ուղին: Ան իր կեանքի օրինակով եւ իր խօսքերով, նամանականդ առականերով, մեզի սորվեցուց այդ ուղին: Եթէ իրեն չհաւատանք եւ չսորվինք, մեր բռնած ընթացքով միշտ Ս. Հոգիին՝ Աստուծոյ զօրութեան դէմ կը մեղանչենք, հետեւաբար կ'ենթարկուինք այդ մեղքերուն յառաջ բերած անբաղձալի հետեւանքներուն: Եթէ հասկնանք եւ սորվինք առականերուն մէջի թագուն գիտութիւնները, բայց չգործադրենք զանոնք, մեր մեղքը կը թուի բազմապատկուիլ՝ ըստ հետեւեալ համարին.

Եւ ծառայ որ Գիտիցե սկսան տեսն իւրոյ՝ եւ ոչ պարտապետացի ըստ կամայ նորա, արժեք Գան Բապտիսմ: Եւ որ ոչն Գիտիցե՝ եւ արժանի Գանի ինչ Գործիցե, արժեք Գան սակա՛ւ: Եւնեանայն որո՛ւմ շար պո՛սաւ, շա՛ր խնդրեացի ՚ի նմանեւ. եւ որո՛ւմ Բապտիսմ աւանդեցաւ, առաւել էւս պահանջեացեն ՚ի նմանեւ» : (Ղուկաս ԺԲ:47-48)

Այն ծառան՝ որ գիտէ իր տիրոջ կամքը եւ չի պատրաստուիր, ո՛չ ալ կը գործէ անոր կամքին համաձայն, շա՛տ պիտի ծեծուի: Բայց ա՛ն որ չի գիտեր ու ծեծի արժանի բաներ ընէ, քիչ պիտի ծեծուի: Որո՛ւն որ շատ տրուեցաւ՝ շատ պիտի պահանջուի անկէ, եւ որո՛ւն որ աւելի յանձնուեցաւ՝ ա՛լ աւելի պիտի ուզուի անկէ»:

Եթէ Յիսուսի սորվեցուցածները գիտնալով հանդերձ չենք գործադրեր, կը նշանակէ թէ իրեն չենք հաւատար: Յիսուսի հաւատալ կը նշանակէ իր բոլոր սորվեցուցած-

ները լիովին գործադրել: Բայց մենք, իր ըսած եւ սորվեցուցածները չենք գործադրեր, այլ պարզապէս կ'ըսենք. «Ես Յիսուսի կը հաւատամ թէ ան Աստուծոյ որդին է եւ իմ մեղքերուս համար մեռաւ. հետեւաբար փրկուած եմ»: Այս տեսակէտը խեղաթիւրել՝ ոչնչացրնել է Յիսուսի սորվեցուցածները եւ կը համապատասխանէ յաջորդ համարներուն մէջի գրուածներուն:

«Թո՛ղ յո՛ւր Կոյր կոչուի. Կոյր էն՝ կոչուի աստուծո՛րդէ: Կոյր կոչուի յորժամ աստուծո՛րդէ՛ սխալէ՛, եւ երկո՛վին՝ ՚ի խորխորաց անկանին» :
(Մարբէնոս ԺԵ :14)

«Թողուցէ՛ք զանոնք. իրենք կոյր են, ու կոյրերու առաջնորդէ: Եթէ կոյրը առաջնորդէ կոյրը՝ երկուքն ալ փոքր պիտի լինան»:

«... Միշէ կարծե՞՞ր Կոյր կոչուի՛ աստուծո՛րդէ, ոչ ապա՛վէն երկո՛վին՝ ՚ի խորխորաց անկանիցին» :
«... Կոյրը կրնա՛յ առաջնորդել կոյրը. միթէ երկուքն ալ փոքր պիտի չլինա՞ն»: (Ղուկաս Գ :39)

Յիսուս նաեւ առականերով խօսեցաւ որպէսզի իրագործուի մարգարէներուն ըսածը, թէ Ինք առականերով պիտի սորվեցնէր:

«Չայս ամենայն խօսեցաւ Յիսոս աստուծո՛վ ընդ ժողովո՛րդան. եւ ասանց ասակն՝ ո՛չինչ խօսէր ընդ նոսա: Գի 19ցի ասացեալն ՚ի մարգարէէ. Բայցից աստուծո՛վ զբերան իմ, Բողբեցն՝ ց զժած կեալան՝ ՚ի սկզբանէ աշխարհի»: (Մարբէնոս ԺԳ :34-35)

«Յիսուս առականերով խօսեցաւ բազմութեան այս բոլոր բաները: Առանց առակի չէր խօսեր անոնց՝ որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը. «Առականերով պիտի բանամ բերանս՝ եւ պիտի արտայայտեմ աշխարհի հիմնադրութեանն ի վեր ծածկուած բաները»:

Ինչպէս Հին Կտակարանի մէջ ներկայացուած

Մոփսիսական կրօնքին մարգարէներն ալ նման թագուն գիտութիւնները բացայայտ չեն քարոզած, Յիսուս ալ, անոնց նման, որեւէ թագուն գիտութիւն բացայայտ չտուաւ: Յիսուս հետեւեալ համարներուն նման խօսքեր յաճախ գործածած է շէշտելու համար, թէ Իր ըսածներուն մէջ, անոնց բառացի իմաստներէն զատ, վերացական հասկնալիք մը եւս կար:

«... Որ ունիցի ականջա լսելոյ՝ լոռիցէ՛ » :
(Մարշէնոս ԺԳ:9,43) (Մարշէնոս ԺԼ:15)

(Մարկոս Դ:9,16) (Ղուկաս Ը:8) (Ղուկաս ԺԴ:35)
«... Ան որ ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

«Երբե ո՛վ ունիցի ականջա լսելոյ, լոռիցէ՛ » :
(Մարկոս Դ:23)

«Եթէ մէկը ականջ ունի լսելու՝ թող լսէ»:

«Ըշէ Գ՛ն՝ եւ ո՛չ ԳԵ՛սանէ՛, ականջէ՛ են՝ եւ ո՛չ լսէ՛ եւ ո՛չ իմանայ՛ ԳԵ՛սան» : (Մարկոս Ը:18)

«Աչքեր ունիք եւ չէ՞ք տեսներ՝ ականջներ ունիք ու չէ՞ք լսեր՝ եւ չէ՞ք յիշեր»:

«Եւ դարչեալ ասանջիան աս աշակէ՛րբան՝ ասէ՛ .
Երանի՛ աշաց՝ որ ԳԵ՛սանիցէն զոր ԳԵ՛սանիցէ՛ր » :
(Ղուկաս Ժ:23)

«Աշակերտներուն դառնալով՝ առանձին ըսաւ. «Երանի՛ այն աչքերուն՝ որ կը տեսնեն ձեր տեսածները»»:

Վստահաբար, Ձինք մտիկ ընողներ խուլ չէին: Յիսուսի ըսել ուզածը այն էր, թէ անոնք, որոնք հասկնալու կարողութիւնը ունին, թող հասկնան: Հին կտակարանի մարգարէներն ալ յաճախ նման արտայայտութիւններ ունեցած են:

«... Եւ Հանի պժողո՞վորդն կոյր: Եւ Ինչպէս Եւ աշէ՛ են. ասկայն նոյնպէս կորացեալ են, Եւ իցեալ են ականջէ՛ իրեանց » : (Եսայայ ԽԳ:8)

«Դ՛ո՛ւրա հանցեք աչք ունեցող կոյր ժողովուրդը, եւ

ականջ ունեցող խուլերը»:

«Լուսարոտի պայս ժողովուրդի յիմար է- անմիտ,
որոց աշի էն է- ոչ ցիտասանեն, է- ականջի է- ոչ
լսեն» : (Երեմիայ 17:21)

«Հիմա սա՛ մտիկ ըրէք՝ ո՛վ անմիտ է և անխելք
ժողովուրդ, որ աչքեր ունիք՝ բայց չէք տեսներ,
Ականջներ ունիք՝ բայց չէք լսեր»:

«Լըդը՛ ընդ ո՞ւմ խօսեցայց, է- ո՞ւմ էդից
վկայութիւն՝ է- լուիցէ, աւա-ադիկ անբըլ- փապ
էն ականջի նոցա, է- ոչ կարեն լսել: Եւա Բան
Տեառն էդէ- նոցա ՚ի նախադինս, է- ոչ է-ս
ախորժեացէն պնա» : (Երեմիայ 9:10)

«Որո՞ւ խօսիմ, ո՞վ վկայ կանչեմ, որ լսեն. Ահա՛ անոնց
ականջները անթլփատ են, ու չեն կրնար ուշադիր
ըլլալ: Ահա՛ Տէրոջ խօսքը անոնց առջեւ նախատուեցաւ.
Անկէ չեն ախորժիր»:

«Ե- էդէ- Բան Տեառն ա- իս՛ է- ասէ: Որդի
մարդոյ՛ ՚ի մէջ անօրէնութեանց նոցա Բնակեալ
է- դո- որ աշս ո-նին ցիտասանելոյ՛ է- ոչ
ցիտասանեն. է- ականջս լսելոյ՛ է- ոչ լսեն. պի
դո-ն դառնացողաց էն» : (Եպեֆէլ ժԲ:2)

«Տէրը խօսեցաւ ինձի՛ ըսելով. «Մարդո՛ւ որդի, դուն
ըմբոստներու տան մէջ կը բնակիս: Անոնք աչքեր
ուսին՝ տեսնելու համար, բայց չեն տեսներ. ականջներ
ուսին՝ լսելու համար, սակայն չեն լսեր. որովհետեւ,
անոնք ըմբոստներու տուն են»:

*Նմանապէս ալ Մարդու Որդին՝ Քրիստոս մեր մէջ
կը բնակի, բայց որովհետեւ մեր տուները՝ անհատակա-
նութիւնը ըմբոստ է, Իր յորդորները չենք լսեր եւ կա-
տարելութեան ուղին չենք տեսներ: Պարտ ենք Դաւիթի
նման ըլլալ: Դաւիթ ալ իր Սաղմոսներուն մէջ մարգա-
րէներուն նման արտայայտութիւններ ունեցած է, բայց
ինք չարախօսէն՝ իր «Ես»-էն եկած յորդորներուն եւ*

հրահանգներուն նկատմամբ կոյր, խուլ եւ համր եղած է:

«Այլ էս որպէս խուլ զի ոչ լսէ, որպէս համր որ
ոչ բանայ զբերան իւր: Եղէ էս որպէս մարդ որ
ոչ լսէ, էս ոչ զոն խօսի՛ ՚ի բերան նորս»: (Սաղմոս ԼԸ:14-15)

«Սակայն ես խուլի պէս չեմ լսեր, համրի պէս բերանս
չեմ բանար. Այնպիսի մարդու մը պէս եմ՝ որ չի լսեր,
ու պատասխան չկայ իր բերանը: (Սաղմոս ԼԸ:14-15)

Մենք ալ Դաւիթի նման պարտ ենք մեր «Ես»-էն
եկած յորդորներուն նկատմամբ կոյր եւ խուլ ըլլալը:
Սակայն, բանալ մեր աչքերը եւ ազնայնները ու հետեւիլ
մեր ներքին Քրիստոսի լուռ ձայնին: Բայց ճշմարտութիւնը
այն է, թէ մենք ճիշդ հակառակը կ'ընենք՝
կ'անտեսենք ներքին լուռ ձայնը եւ կը հետեւինք
«Ես»-էն եկած հրահանգներուն: Երբ նոյնիսկ կը փափաքինք
կատարելութեան ուղիէն ընթանալ եւ այս ուղղութեամբ կը
կարգանք եւ կ'ուսումնասիրենք Ս. Գիրքը, չենք հասկնար հոն գրուածներուն բուն իմաստը
եւ չենք կրնար ըմբռնել հոն ներկայացուած ինչպէս
նաեւ Յիսուսի սորվեցուցած իմաստասիրութիւնը:

**Իմաստովին Հօր Յիսուս, տո՛ւր ինձ իմաստովին
զբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն
ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա՛ վիս.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ՝ բազմամեղիս:**

* * *



(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Բ Յխուսի Առակները
գիրքին վերջաբանէն առնուած)

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՆ

Մարդ արարած, ըստ իր ճակատագրին իրեն տրուած ընտանիքին եւ կացութեան մէջ կը ծնի: Ան, իրեն տրուած կեանքի պայմաններուն համաձայն, նաեւ ունի կատարելիք պարտականութիւն մը: Այս պարտականութիւնը, ընկերութեան (society) մէջ իր ունեցած բաժինն է, որ պէտք է լաւագոյնս կատարէ յօգուտ ընդհանուրին: Երբ անհատը կը յաջողի իր այս պարտականութիւնը լաւագոյնս կատարել բոլոր ընկերութեան անդամներուն հետ սիրով, բացարձակ հաւատարմութեամբ, յօգուտ բոլորին, նոյնիսկ ինքնագոհողութեամբ եւ կարեկցութեամբ, ինքզինք աւելի բարձր մակարդակի կը բարձրացնէ: Իր ինքնագոհողութիւնը, բարեսիրութիւնը եւ բարեգործութիւնը եղած կ'ըլլան ոչ միայն իր անմիջական ընկերութեան, այլ յամայն մարդկութեան համար: Նման կենցաղ մը անձը կը դնէ կատարելութեան ուղիին սեմին, որպէսզի անձը այդ ուղիէն յառաջանայ եւ իրականացնէ իր կեանքին բուն նպատակը, որ ըստ Յիսուսի յորդորին, կատարեալ ըլլալ է, ինչպէս մեր երկնաւոր Հայրը կատարեալ է:

«Արդ եղեր՝ — է դո՛ւ — է կադարեա՛լ է, որպէս է —

Հայրն Յէր երկնաւոր կադարեա՛լ է» : (Մատթէոս Ե:48)

«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Կատարելութեան ուղիին մէջ յառաջանալ առանց յարատեւութեան եւ համբերութեան անկարելի է: Անոնք, որոնք ոչ իբր բերնի ծամոց, այլ ճշմարտապէս եւ լրջութեամբ կը ցանկան յաւիտենական կեանքի՝ Աստուծոյ թագաւորութեան արժանանալ, պէտք չէ որեւէ ջանք խնայեն: Այս ջանքերուն ամենէն դժուարն ու ամենէն կարեւորը ինքնագոհումը եւ անձնատիրու-

Թիւնն են: Անհատը պէտք է իր անձին, միտքին եւ զգացումներուն վրայ բացարձակ իշխանութիւն կերտէ: Երբ ան այս ուղղութեամբ կը յաջողի, այն բոլոր աշխարհիկ ցանկութիւնները, որոնց մարդ արարած ընդհանրապէս կ'ենթարկուի, զանոնք բոլորն ալ կ'անտեսէ: Այն ատեն իրեն կարելի կ'ըլլայ այնպիսի գիտակցութեան մակարդակի մը հասնիլ, որ նոյնիսկ հոգեւոր ճանապարհին մէջ յառաջդիմութեան ցանկութիւնն անգամ կ'անտեսէ: Կարելի է այս վերջին նախադասութիւնը շատերու զարմանք պատճառէ: Ճշմարտութիւնը այն է, թէ երբ անձը «Ես հոգեւոր ճանապարհէն պիտի յառաջանամ» կ'ըսէ, ըսել է թէ իր «Ես»-ը տակաւին իր մէջ կը գործէ: Նոյնիսկ եթէ մինչեւ կատարելութեան ուղիին վերջը հասնի, հպարտութիւնը, որ «Ես»-ին վերջին յաղթուկն (*trump card*) է, իրեն յաջողած ըլլալու հպարտութիւնը կու տայ եւ անձն ալ իր նպատակին՝ յաւիտենական կեանքին չի կրնար արժանանալ: Մինչ այդ, եթէ անձին թափած բոլոր ջանքերը ճշմարտութենէն իրեն նշոյլ մը կը սորվեցնեն, իր ջանքերը պարպի վատնած չ'ըլլար եւ ինք անոնց պարգեւները կը ստանայ: Երբ անհատը առօրեայ ինքնագսպումի եւ անձնատիրութեան մէջ կը յաջողի, ան նաեւ կեանքին իրեն ներկայացուցած բոլոր վատ պատահարներուն հանդարտութեամբ եւ արիութեամբ կը հանդուրժէ: Մարդ իր կեանքի ընթացքին միշտ լաւ ու վատ պատահարներու կ'ենթարկուի: Լաւը՝ բարին եւ վատը՝ չարը, պէտք չէ Ֆիզիքական մակարդակի պատահարներով չափուին: Երբ անձին կենցաղը չի համապատասխաներ այն բարձր մակարդակին, որ ինք կարենայ կատարելութեան ուղիին մէջ յառաջանալու ցանկութիւնը իրականացնել, պէտք չէ յուսահատի: Ընդհակառակը, այն ինչ որ կեանքը իրեն կը ներկայացնէ, այդ բոլորին համար պէտք է գոհունակութիւն յայտնէ: Բոլոր ձախողութիւն-

ներուն պատճառը մտային թուլամտութիւնն ու բարոյական անհոգութիւնն է: Անձը ինքն է որ կ'արտօնէ, որպէսզի կեանքի հոսանքները զինք քշքշեն «ասդին-ու-անդին», քան թէ ինք իր կեանքին նոր ուղղութիւն մը տայ: Ընդհանուր մարդկութեան ըստ ներկայ գիտակցութեան մակարդակին, իր կատարելութեան ուղիին մէջ յառաջացումը շատ ճղճիմ է: Մարդ իր կարծածէն, հետեւաբար իր կատարածէն շատ ակելին ընելու կարողութիւնը ունի:

Ներկայիս մարդկութեան ընդհանուր դաստիարակութիւնը հիմնուած է այնպիսի տուեալներու վրայ, որոնք մարդուն մէջ նիւթապաշտութիւնը կը յառաջացնեն եւ հոգեւոր կեանքի ձգտումները արմատախիլ կ'ընեն: Հետեւաբար մարդուն ստացած ուսումը, իրեն համար անեծք մը կ'ըլլայ: Ան չի կրնար նոյնիսկ հասկնալ եւ ըմբռնել Աւետարաններուն մէջ մեզի ներկայացուած իմաստասիրութիւնները: Բայց, երբ անհատը հետաքրքրութեամբ, բացարձակ հաւատքով եւ վճռականութեամբ ինքզինք կը դաստիարակէ, իր մտային դռները կը բացուին «ոսկեայ դար»-ու մը: Հաւատքը շատ կարեւոր է, որովհետեւ առանց հաւատքի չի փնտռեր Յիսուսի սորվեցուցած այն բոլոր թագուն գիտելիքները եւ զանոնք կառավարող օրէնքները, որով չ'ըմբոստանար ալ պարզ, աշխարհիկ եւ հասարակ իմացականութեան մը դէմ: Բայց, եթէ ան իր հաւատքին եւ յարատեւութեան հետեւանք զանոնք գտնէ, այն ատեն կը հասկնայ թէ այն բոլորը, որ ինք «հրաշք» կը կարծէր, անոնք հրաշքները չեն, այլ ամէն ինչ՝ բոլոր ստեղծագործութիւնը, հրաշք մըն է: Այն ատեն բոլոր ակելորդապաշտութիւնները (superstitions) կ'անհետանան եւ այն ատեն կ'ըմբռնէ Յիսուսի ըսած հետեւեալ խօսքին իմաստը.

«... Ամէն ամէն ասե՛մ թէ որ Հաւարա՛յն յիս»

ստորագրած ստորագրած, ե- նա՛ Գործեացե է-
մեծամեծա է՛-ս խան սնոյնս Գործեացե . . . » :
(Յոյճանն- ԺԳ:12)

«Ճամարտապէս, ճամարտապէս կը յայտարարեմ ձեզի:
Ա՛ն որ կը հաւատայ ինծի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ՛ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

Այս ուղղութեամբ համբերութիւնը ամենակարե-
ւոր յատկութիւններէն մին է, որ մարդ արարած պարտ
է կերտել իր անձին մէջ: Որեւէ արժէքաւոր բան մը
չուտ մը ձեռք ձգել կարելի չէ: Հետեւաբար կատարե-
լութեան ուղիին մէջ յառաջանալու համար, մարդ
պարտ է իր պարզ եւ հասարակ իմացականութիւնը
(intellect) մարզէ եւ բարելաւէ: Առանց կենսատու զօրու-
թեան, իմացականութիւնը ինքիւրմէ որեւէ զօրութիւն
կամ կարողութիւն չունի: Ուրեմն մարդուն իմացա-
կանութիւնը «լուսաւորող»-ը իր ներքին Քրիստոսին
«Լոյս»-ն է: Հետեւաբար մարդուն ունեցած իմացակա-
նութեան որակը կախեալ է Քրիստոսէն ստացած «Լոյս»-
ին քանակէն: Իսկ իր Քրիստոսէն ստացած «Լոյս»-ին
քանակն ալ կախեալ է իրմէ: Երբ անձը իր ազատ
կամքով իր բնոյթը կը փոխէ եւ զայն կը մօտեցնէ իր
անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսի, քան
թէ յարի դէպի ժխտական բեւեռին՝ «Ես»-ին, բարձր
քանակով Քրիստոսի «Լոյս»-էն այն ատեն կ'օգտուի:
Երբ իր իմացականութիւնն ալ Քրիստոսէն յաւելեալ
«Լոյս» կը ստանայ, աւելի լաւ կը հասկնայ եւ կ'ըմբռնէ
Աւետարաններուն մէջ գրուածներուն իմաստը: Իր
ստացած գիտութիւնն ալ կ'ըլլայ մտային սնունդ,
ինչպէս ուտեստեղէնն ալ սնունդն է մարմնոյն: Այդ
մտային սնունդով ալ միտքը կատարելութեան ուղիին
մէջ աւելի կ'աճի: Անգլերէն առածը կ'ըսէ. «Knowledge is
power»՝ գիտութիւնը զօրութիւն է: Նմանապէս կատարե-

լուծեան ուղիին մէջ ալ երբ անհատը յաւելեալ գիտութեան կը տիրանայ, ինք աւելի կը զօրանայ: Հարկաւ այս զօրացումը Ֆիզիքականը չէ, այլ իր հաւատքին, վճռականութեան, համբերութեան եւ յարատելութեան զօրացումն է: Այն անձը որ ինքզինք աշխարհիկ հետապնդումներէն չի ձերբազատեր եւ կատարելութեան ուղիին չի ձգտիր, իր ստացած գիտութիւնն ալ կը նմանի մուրացկանի մը ստացած մեծահարուստին սեղանէն թափած «փշրանքներուն»:

Ինչպէ՞ս յաջողիլ կատարելութեան ուղիին մէջ: Ինչպէ՞ս մեր բնոյթը փոխել եւ զայն մօտեցնել մեր անհատականութեան դրական բեւեռին՝ Քրիստոսին: Նախ, անձը պարտ է իր բոլոր անասնական կիրքերը ու ցանկութիւնները զսպել եւ ամէն տեսակի եսասիրութենէ ինքզինք ձերբազատել: Իր բոլոր ձգտումները պէտք են այլասիրական ըլլալ: Ամէն անհատ, ըստ իր բնոյթին, կ'որոշէ, թէ ինչպէս եւ ինչ արագութեամբ պէտք է կատարելութեան ուղիին մէջ ընթանայ: Կատարելութեան ուղիին մէջ ընթանալ կարելի չէ դասախօսութիւններ մտիկ ընելով, սուրբերու պատկերներու առջեւ աղօթելով, վիզէն խաչ կախելով, Աւետարան համբուրելով, կամ նոյնիսկ պարզապէս եկեղեցի յաճախելով: Երբ անձը ժամերգութիւններուն եւ Ս. Պատարագին բուն իմաստը եւ անոնց իրենց ցոյց տուած ու սորվեցուցածները կարող չէ հասկնալ, եւ նոյնիսկ եթէ հասկնայ, բայց սորված փոփոխութիւնը իր անձին մէջ չիրականացնէ, եկեղեցի յաճախելն ալ ի գուր է: Եկեղեցական արարողութիւնները եւ նամանաւանդ Ս. Պատարագը, Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին ցոյց տուող ամենակարեւոր ամփոփումն են: Մինչ այդ, վերոյիշեալ բոլոր միջոցառումները կը յանձնարարուին, որովհետեւ անոնք անհատը կը պատրաստեն կատարելութեան ուղիին համար, բայց անոնք

այդ ուղիին չեն: Ընդհանուր առմամբ կը յանձնարարուի ծոմապահուածութեամբ աղօթել: Բայց այս պարագային աղօթելը Աստուծմէ աս ու ան խնդրելը չէ, այլ աղօթքին ամենավեհ ձեւը՝ խոկալն է: Խոկալը լռութեան ժամանակ մըն է: Այդ լռութեամբ կ'արտօնենք, որ Աստուած բնութեան միջոցաւ մեզի «խօսի»: Ասոնց առընթեր խորհուրդի, խօսքի եւ գործքի ողջախոհութիւնը եւ ինչպէս նաեւ վերեւ գրուած յարատեւութիւնը եւ համբերութիւնն ալ անհրաժեշտ են:

Մինչեւ որ անհատը կատարելութեան ուղիին մէջ որոշ գիտակցութեան մակարդակի մը չհասնի, Յիսուսի ըսած թագուն գիտութիւններն ալ իրեն բացայայտ չեն ըլլար: Պէտք է մոռնանք, թէ գիտակցութեան «Լոյս»-ը իր ներքին Քրիստոսէն կու գայ: Անձը կրնայ շատ բաներ ցանկալ, նոյնիսկ կատարելութեան ուղիին մէջ: Միթէ ամէն մարդ չի՞ ցանկար Աստուծոյ թագաւորութեան փորձառութիւնը ունենալ: Փրկուածներու աղանդին անդամներուն փրկութիւն ստանալու ցանկութիւնը շատ բարձր որակ ունի: Բայց միայն ցանկալը, նոյնիսկ ցանկութեան բարձր որակը բաւարար չեն, այլ անձը նոյն չափով ալ պարտ է ընդունակ ըլլալ: Միթէ եկեղեցւոյ մեծ պահքի շրջանը իր պատշաճ արարողութիւններով եւ Աւագ Շաբթուայ երեք օրուայ ծոմապահութիւնով եւ Զատիկուայ առաւօտեան Յարութեան տօնակատարութիւնով եւ հաղորդութեան խորհուրդով մեզի չի սորվեցնէր նոյնը ընել մեր կեանքին մէջ, որպէսզի մեր ներքին Քրիստոսն ալ մեր մէջ Յարութիւն առնէ եւ իր հետ հաղորդուինք եւ ընդունակ ըլլանք իր «Լոյս»-ին:

Կատարելութեան ուղին իր մէջ շատ մը խոչնդոտներ ունի, հետեւաբար այդ ուղիին մէջ յառաջացումը զօրաւոր կամքի, վճռականութեան եւ յարատեւ ջանքի կը կարօտի: «Ճամբան», «փուշ»-երով լեցուն, կը դժուար-

րացնեն յառաջացումը: Վարանում, կասկածամտութիւն, ծաղրանք, արհամարանք, նախանձ, փորձութիւն, անհամբերութիւն եւ անհաստատ կամք կը ներկայացնեն այդ «փուշ»-երը: Այդ «փուշ»-երուն նպատակը անհատին վճռականութիւնը, ցանկութեան որակը եւ լրջութիւնը ստուգելու համար է: Հետեւաբար անհատը պարտ է «երկաթեայ» զօրաւոր կամք մը ունենալ, բայց միանգամայն պարտ է հեզ, ազնիւ եւ խոնարհ ըլլալ ու զինք դէպի չարութեան մղող մարդկային բոլոր կիրքերէն ձերբազատուած: Պարզապէս որոշ սովորութիւններու զսպում անօգուտ է, եթէ այդ «հոգին» իր մէջ չէ արթնցած կամ այդ «սերմը» իր մէջ չէ ծլած: Շատեր կը խոստանան մեծ պահքի շրջանին ծխախոտ չծխել, կամ արբեցուցիչ ըմպելիներ չգործածել, կամ միս չուտել...: Նման զսպումներ անտարակոյս լաւ եւ օգտակար են յաջա առողջապահութեան եւ նոյնիսկ նախնական «քայլեր»-ը ապագային աւելի լուրջ ինքնազըսպումներու ճամբան բանալու: Բայց երբ եօթը շաբաթ յետոյ Չատկի տօնը անցնի եւ իրենք վերադառնան հին սովորութիւններուն, կը նշանակէ թէ այդ «սերմ»-ը իրենց մէջ տակաւին չէ ծլած:

Ընդհանուր առմամբ հետեւեալ երեք զգացումները՝ բարկութիւն, ազահութիւն եւ խաբեբայութիւն, ոչ միայն կատարելութեան ուղիին մէջ յառաջացման արգելք կը հանդիսանան, այլ նոյնիսկ կատարելութեան ուղիի մը գոյութիւնը մեր գիտակցութենէն կը խափանեն: Իսկ մարդու բնութեան հետեւեալ հինգ յատկութիւնները՝ նախանձ, կիրք, փոփոխամտութիւն, ծուլութիւն եւ անհաւատութիւն մարդուն մէջ խաւարամտութիւն կը յառաջացնեն, հետեւաբար մարդն ալ չի կարողանար ճշմարտութիւնը տեսնել: Մարդոց սըրտերը ունայնամտութեամբ եւ չարութեամբ, կամ անզգամութեամբ ապականած, կարող չեն իրենց ճշմա-

ըիտ էութեան՝ Քրիստոսի փորձառութիւնը ունենալ: Կեանքը մեզի բազմաթիւ պայքարներ եւ փորձութիւններ կը ներկայացնէ: Եթէ անոնց չյաղթենք կատարելութեան ուղիին մէջ յաջողիլ անկարելի կ'ըլլայ: Երբ Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիին օրէնքներուն դէմ գործենք, դարձեալ անկարելի կ'ըլլայ յաջողիլ: Իսկ եթէ անհուն «հորիզոնը» տեսնել կը փափաքինք, պարտ ենք լերան մինչեւ դազաթը բարձրանալ: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ուզեցէք եւ պիտի տրուի»: Հետեւաբար մեզի կը մնայ միայն ուզել: Ի՞նչ է, որ կ'ուզենք: Պէտք է ուզենք անհուն «հորիզոնը» տեսնել: Բայց ուզելը միայն «տուր» ըսել չէ, այլ գործքով ցոյց տալ է, անձնապէս լեռը մագլցիլն է: Ինչպէս վերեւ յիշուած է, «Ես»-ին վերջին յաղթուկը, յաջողած ըլլալու հպարտութիւնն է, որ դարձեալ եսասիրութեան նշան է: Այդ հպարտութիւնը պատճառ կրնայ ըլլալ, որ լերան դազաթը հասնելէ յետոյ չկարողանանք «հորիզոնը» տեսնել եւ լեռնէն վար գլորիլ եւ մենք մեզի աւելի վնաս հասցնել, քան թէ օգուտ: Հակառակ այս բոլորին ամէն անձ իր կարողութեան սահմաններուն ներքեւ, պարտ է հետապնդել կատարելութեան ուղին, որովհետեւ կամ պիտի յաջողինք կամ պիտի փճանանք: Միթէ չէ՞ գրուած.

«Զի Քոչակն մեղաց մահ է.» (Հանգամանքս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»



(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Գ ՅԽՈՒԱ ՔՐԽԱՍՈՒԻ ԽՍՊԵՐՐ
ԳԻՐՔԻ ԵՄԱՐՁԱՔԱՆԿՆ ԽՈՒՆՈՒՄԸ)

ԻՆՉ ԵՒ ԻՆՉՊԷՍ ՍՈՐՎԻԼ

Նիւթ մը սորվիլ շատ դիւրին է երբ անձը կ'ընդունի թէ ինք այդ նիւթին մասին ոչինչ գիտէ: Բայց եթէ անձը կը կարծէ, թէ ինք այդ նիւթին մասին ամէն ինչ գիտէ, կամ նուազագոյն այն ինչ որ իրեն պիտոյ է գիտէ, այդ անձին համար, այդ նիւթին նկատմամբ նորութիւններ սորվեցնել շատ դժուար կ'ըլլայ, չըսելու համար անկարելի կ'ըլլայ: Սորվիլ կարելի կ'ըլլայ երբ անձը բաց միտք մը ունի եւ ինք միշտ ճշմարտութիւնը կը փնտռէ:

Ընդհանուր բնութեան մէջ «մագնիսական քաշողութեամբ» մը անոր բոլոր պարունակութիւնը իրար կը յարին եւ մէկ են: Այդ մագնիսական քաշողութիւնը մեր գիտակցութենէն կամ փորձառութենէն կը խուսափի: Եւ այդ Ս. Հոգիի ներկայութիւնն է: Որքան որ այս իրողութեան մէջ ամէն անհատ իր անհատական ծիրը ունի, ան նաեւ մաս եւ բաժինն է ընդհանուրին եւ բնաւ անջատ չէ: Եւ ի՞նչ է անհատականութիւնը եթէ ոչ անպատին մէջի կրկներեւոյթի (mirage) մը, կամ երազի մը նման անցողակի հիւր մը: Անհատը չի հասկնար, թէ իր կեանքը կրկներեւոյթ կամ երազ մըն է եւ զայն ճշմարտութիւն կարծելով կը կեդրոնանայ ամբողջական Ենթակային առարկայացուած անցեալ, ներկայ եւ ապագայի երեւոյթին վրայ, որոնք չնչին եւ ողորմելի գաղափարներ են: Այս հիման վրայ, մարդ իր խաւարամբտութեամբ ինքզինք կը սահմանափակէ: Այդ սահմանափակումը պատճառ կ'ըլլայ, որ ինք հետեւեալ երեք «մեղքերը» գործէ:

ա- Աստուած իմ, Դուն ամենուրեք ես, բայց ես Քեզ միայն «հոս» (տաճարին մէջ) կը պաշտեմ:

բ- Աստուած իմ, Դուն ձեւ եւ կերպ չունիս, բայց

ես միայն Քու այս կերպդ կը պաշտեմ:

դ- Աստուած իմ, Դուն փառաբանութեան պէտք չունիս, բայց ես միշտ կ'աղօթեմ եւ Քեզ կը փառաբանեմ:

Միթէ Յիսուս Քրիստոս ալ նոյնը չըսա՞ւ:

«Ո՛չ ամէնայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մտցէ յարձայո-թիւն երկնից, այլ որ ասնէ պկամս Ըօր իմոյ որ յերկնսն է» : (Մատթէոս Է:21)
«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թագաւորութիւնը, Հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:

«... Ամէն ամէն ասէ՛մ թէ որ Հասարակայն յիս պտորթս պոր ես գործեմ, ե- նա՛ գործեացե ե- մեծամեծս է՛ս իան պնոյնս գործեացե ... » :
(Յովհաննոս ԺԴ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինծի, ի՛նք պլ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ ասելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

Յիսուս մեզի ներկայացուց եւ սորվեցուց իր երկնաւոր Հօրը՝ Աստուծոյ կամքը: Ան, այս երկու համարներով, մեզի նաեւ սորվեցուց ճշմարիտ պաշտամունքը, եւ ճշմարիտ հաւատքը: Յիսուս չըսաւ զիս պաշտեցէք, այլ Ան բացայայտ կ'ըսէր, թէ պարտ ենք մենք ալ իրեն նմանիլ եւ իր ըսածներուն հաւատալ եւ զանոնք կիրարկել: Հարկ է, որ Յիսուս Քրիստոս պաշտենք, բայց ճշմարիտ պաշտամունքը իր սորվեցուցածները գործադրելն է եւ ոչ միայն Տէր Տէր ըսելը: Պաշտամունքը սրտէն բղխող «անուշուրթիւնն» է: Աս տարբեր իմացականութիւն մըն է, որ պարզ իմացականութիւնը զայն չի կրնար հասկնալ, որովհետեւ ան ամբողջովին տարբեր ուղղութիւն մըն է:

Աստուած գտնելու միջոցը կը կարօտի մարդուն զգացական, իմացական եւ գործնական կարողութիւններուն միականութեամբ արտայայտութեան: Հետեւաբար մարդուն ստացած «գիտութիւնը» պաշտամունքը ճշգրիտօրէն կատարելը կ'ապահովէ: Աստուած իր մէջ յայտնաբերելու տենչանքը, կ'արտայայտէ իր Աստուծոյ նկատմամբ ունեցած զգացումներուն որակը, որ զինք կը մղէ գործունէութեան, որ կը ցոլացնէ իր կենցաղը եւ ապրելակերպը, որոնք պիտի իրականացնեն այդ տենչանքը: Կարելի է Աստուած «տեսնել» միայն նուիրեալի մը աչքով: Այդ աչքը «հոգեւոր աչքն» է: Նուիրումը ճշմարիտ պաշտամունքն է: Պաշտամունքն ալ վստահութենէ յառաջ կու գայ: Արդեօք ո՞րքան Յիսուսի կը վստահինք: Իսկ եթէ կը վստահինք, պէտք է՞ որ մեր կենցաղը այդ վստահութիւնը, հետեւաբար պաշտամունքը ցոլացնէ: Ճշմարիտ հաւատքն ալ պաշտամունքի երեւոյթ մըն է: Հետեւաբար առանց հաւատքի պաշտել անկարելի է: Ուր վստահութիւն կայ, հոն նաեւ համբերութիւն գոյութիւն կ'ունենայ: Հաւատք եւ համբերութիւն անհրաժեշտ են Աստուած գտնելու համար: Իսկ այդ փորձառութիւնը անձին կու տայ իմաստութիւն եւ գիտութիւն տեսնելու եւ ճանչնալու ճշմարտութիւնը: Ընդհանուր առմամբ քիչ մը գիտութիւն կ'աւելցնէ յոխորտանքը, բայց վերոյիշեալ փորձառութեան տուած գիտութիւնը կ'անհետացընէ յոխորտանքը եւ անձին կու տայ գոհունակութիւն, յաջողութիւն, գեղեցկութիւն, առողջութիւն եւ երանութիւն: Մարդուն եւ Աստուծոյ միջեւ միայն մէկ արգելք մը կայ, ան ալ մարդը ինքն է:

Կարելի է քնացող անձ մը արթնցնել, բայց ի՞նչպէս «արթնցնել» անձ մը որ կը կարծէ ու կը պնդէ թէ «արթուն» է:

«...արի որ ննջեադ, եւ կանգնեա՛ց ՚ի մեռելոց»,

Է- լուսաորեացե պէւզ Բրիտոս» : (Եփեսացիս Ե:14)
« ...Արթընցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ
մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»:

Եթէ ուսեալ անձ մը հեզ եւ խոնարհ չէ, կը նշանակէ թէ ան իսկական «ուսեալ» մը չէ: Միայն այն անձը որ յոխորտանք չունի կարող է հեզ եւ խոնարհ ըլլալ: Յոխորտանքը անձը թէ՛ կը խռովեցնէ եւ թէ՛ անկայուն կ'ընէ: Յոխորտանքը եսասիրութիւն կ'արծարծէ եւ անձն ալ իր ճշմարիտ հոլթիւնը կը մոռնայ: Ո՞վ է իր ճշմարիտ հոլթիւնը: Երբ ինք Ջայն «գտնէ», աւելի ճիշդ է ըսել Անոր գոյութեան անդրադառնայ, այն ատեն Աստուած կը «տեսնէ» թէ՛ իր մէջ եւ թէ՛ բոլոր աշխարհին մէջ: Այն ատեն կը հասկնայ, թէ որեւէ բանի վնասել Աստուծոյ «վնասել»՝ Աստուծոյ դէմ անարգանք եւ մեղք է: Ուր եսասիրութիւն կայ հոն նուիրում գոյութիւն չի կրնար ունենալ: Ուր աշխարհիկ ցանկութիւններ կան, հոն պաշտամունք գոյութիւն չի կրնար ունենալ: Ուր ազահոլթիւն կայ, հոն երջանկութիւն գոյութիւն չի կրնար ունենալ:

Դիւրին չէ անձի մէջ հաւատք արծարծել: Հաւատքը իմացականութեամբ կարելի չէ ձեռք ձգել: Իմացականութիւնը կարելի է մեզի հաւատալիքներ տալ (beliefs), բայց ոչ հաւատք (faith): Հաւատքը ուղղակի փորձառական գիտութեան հետեւանքն է: Մեր հասկացողութեան որակը կախեալ է այն անձէն, որ մեզի կը ջանայ սորվեցնել: Անոնք, որոնք իմացականութեամբ կը քարոզեն, կ'ազդեն մեր իմացականութեան վրայ եւ կը կարողանան մեզ հրապուրել, բայց կարճ ժամանակ յետոյ տուեալները կը «չողիանան» եւ կ'անհետանան: Անոնք, որոնք զգացականօրէն կը քարոզեն, կ'ազդեն մեր զգացականութեան վրայ եւ նոյնիսկ մոլորած խաղաղութիւն մը գտած ըլլալու զգացումը կու տան: Դժբախտութիւնը այն է, թէ այս երկու քարոզչութիւն-

ներու եղանակներն ալ կարող են մեզի տալ ճշմարտութիւնը գտած ըլլալու գաղափարը: Անոնք մեր միտքերը զանազան հաւատալիքներով կը զբաւեն, որով միտքերը կը գոցեն ու հոգեւոր ճանապարհին մէջ մեր յառաջացման արգելք կը հանդիսանան: Իսկ Յիսուս քարոզեց իր էութենէն, հետեւաբար իր կեանքին եւ իր քարոզներուն՝ սորվեցուցածներուն ազդեցութիւնն ալ կ'ըլլայ մեր էութեան վրայ, որով կ'ըլլան մնայուն: Խորհիլ եւ գիտնալ իրարմէ շատ տարբեր բաներ են: Յիսուս մեզի սորվեցուց, թէ մեր կեանքին նպատակը Աստուած գտնելն է: Ուրեմն պէտք չէ՞ որ մեր կեանքին մէջ ալ աս ըլլայ մեր էութեան առաջնակարգ փափաքը:

Մարդիկ յաճախ կը ջանան ուժով եւ սուրով ուրիշներուն վրայ տիրապետել: Նման միջոցառումով միայն կարելի է զանոնք նուաճել եւ իրենց կամքը անոնց պարտադրել: Բայց կարելի չ'ըլլար վստահութիւն, հաւատք եւ յարգանք ձեռք ձգել: Իսկ Յիսուսի նման, միայն սէր եւ ողորմածութեամբ վստահութիւն եւ հաւատք կարելի է արծարծել եւ սիրտերը զբաւել: Կարելի է անձեր դրամով հրապուրել եւ սիրաշահիլ, բայց այն անձը, որ Յիսուս Քրիստոսի նման, դրամին կարեւորութիւն չի տար, ի՞նչպէս սիրաշահիլ: Այդ կարելի է միայն սիրով եւ ողորմածութեամբ: «Սիրտ» մը սիրաշահելու համար նման «սիրտի» մը պէտք կայ: Իսկ Աստուած «սիրաշահելու» համար անհրաժեշտ է լրիւ նուիրում:

Յիսուս մեր վարդապետն ու ուսուցիչն է եւ մենք ալ իր աշակերտները: Որպէսզի իր սորվեցուցածները կարողանանք պատշաճ կերպով սորվիլ, պարտ ենք մեր խորհելակերպը փոխել եւ յարմարիլ իր խորհելակերպին: Աշակերտը լաւագոյնս կը սորվի երբ ուսուցչին եւ աշակերտին միտքերը իրարու համապատասխան են: Այն աշակերտը, որ պրպտող միտք մը ունի եւ

յաճախ հարցում կը հարցնէ, լաւագոյնս կը սորվի: Ուսուցիչը յաճախ աշակերտը քննութեան կ'ենթարկէ: Աշակերտը պարտ է միշտ ճշմարտութենէն չչեղիլ, նոյնիսկ երբ զանազան հրապուրիչ եւ գրաւիչ կացութիւններ զինք փորձութեան մատեն: Ուսուցիչը, աշակերտը այդ քննութիւններուն կ'ենթարկէ, որպէսզի յայտնաբերէ աշակերտին իսկական բնոյթը: Կան անձեր, որոնք արտաքնապէս կարող են իրենց եսասիրութիւնը պահել: Անոնք իրենց «Ես»-երուն այնպէս մը կապուած են, որ ամէն ինչ խեղաթիւրուած կը տեսնեն եւ կարող չեն սխալը ճիշդէն զանազանել: Մարդիկ կը տեսնեն եւ կը դատեն մակերեսայինը եւ զայն առաքինութիւն կը կոչեն: Ինքզինքնին սուտերով կը շրջապատեն: Եթէ նոյնիսկ ճշմարտութիւնը իրենց յայտնուի, զայն չեն ընդունիր եւ զայն սուտ կը համարեն: Անոնք, որոնք աշխարհիկ յարումներ եւ զգացումներ ունին չեն կրնար ճշմարտութիւնը տեսնել: Յիսուսի բոլոր սորվեցուցածները, առանց զանոնք խեղաթիւրելու, պէտք է բացարձակ վստահութեամբ ընդունինք եւ գործադրենք, որովհետեւ Ան ամենագէտ եւ ամենաիրմաստ է: Ամէն անձ իր մէջ ունի անհուն կարողութիւններ: Ահա՛, աս էր, որ Յիսուս մեզի կը սորվեցնէր, նաեւ կը սորվեցնէ ինչպէս օգտագործել այդ կարողութիւնները:

«Լինիջի՛վ առնելի՛վ Բանին է- մի՛ լսելի՛ միայն
Համարեաջի՛վ յանձինս: Գի եթէ ո՛վ լսող միա՛յն
իցէ Բանին՝ է- ոչ առնելի նման է նա մարդոյ
որ պշո-ցեալ Հայիցի՛ ընդ երեսս ի-ր՝ որ Ձնա-
նիցին՝ ի Հայելւ-ոջ: Կի Հայեցեալ եդես Կինձն է-
Կա՛նց արար, է- անդէն մոռացա- թէ որպիսի ո՛վ
էր: Իսկ որ յառեալ՝ ի կարարեա՛լ օրէնս ասա-

յոս-Դեւանն Հայեցի ե- 'ի նմին կայցե ո՛չ եղե-
 նա լսող մոտացո-Դեւան, այլ առնելի՛ Գործոյն:
 Սա՛ յառնելն ի-րոմ լիցի երանելի՛: ԵԴե ո՛վ
 կամիցի կրօնա-որ լինել, ե- ո՛չ սանձաՀարեացե
 պէս-ի-ր այլ պէտղեցո-ցանիցե պիւրքն ի-ր
 այնպիս-ոյն զայրապա՛ր ե կրօնա-որո-Դի-նն:
 Կրօնա-որո-Դի-նն սո՛րք ե- անարապ առ- 'ի յԼա-
 րո-ժոյ ե- 'ի Հօրե՛ անյս ե այցելո- լինել որքոց
 ե- այրեաց 'ի նեղո-Դեւանց անարա՛յ պահել
 պանձն յաշխարհէ» : (Թո-ղը Յակոբայ Լ:22-27)

«Սակայն խօսքը գործադրողներ եղէք, եւ ո՛չ միայն
 լսողներ՝ դուք ձեզ խաբելով: Արդարեւ, եթէ մէկը
 միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու
 մը՝ որ Հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը,
 որովհետեւ կը դիտէ ինքզինք ու կ'երթայ, եւ իսկոյն
 կը մոռնայ թէ ի՛նչպէս էր: Բայց ա՛ն որ ակնկառոյց
 կը նայի ազատութեան կատարեալ Օրէնքին ու կը
 կենայ անոր մէջ,- ո՛չ թէ մոռացկոտ լսող մը ըլլալով,
 Հապա՛ գործը կատարող մը,- երանելի պիտի ըլլայ իր
 ըրածին մէջ: Եթէ մէկը կը կարծէ կրօնասէր ըլլալ ու
 չի սանձեր իր լեզուն, այլ կը խաբէ իր սիրտը, անոր
 կրօնասիրութիւնը փուճ է: Աստուծոյ եւ Հօրը առջեւ՝
 մաքուր եւ անարատ կրօնասիրութիւնը սա՛ է,- այցելել
 որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու
 ինքզինք անբիժ պահել աշխարհէն»:

*Նա մանաւանդ հոգեւոր նիւթերու նկատմամբ ան-
 կարելի է անձի մը պարզ բառերով հասկացողութիւն
 տալ: Անձին համար աւելի բարձր մտակարողութիւն
 մը պէտք է, որ այդ բառերուն թազուն իմաստները
 յայտնաբերէ: Ասոր կ'ըսեն «հոգեւոր աչքով» տեսնել,
 որպէսզի բառերուն բուն իմաստները իրեն համար
 հասկնալի ըլլան, ապա թէ ոչ անոնք կ'ըլլան պարզապէս
 հաւատալիքներ, որոնք իր կեանքին մէջ որեւէ
 օգտակարութիւն չեն ունենար:*

«Բայց դուք ուրախ մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մեկ է՝ այսինքն Քրիստոս: ... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մեկ է՝ այսինքն Քրիստոս»:

Հետեւաբար նման հայեացքով մը պարտ ենք մեկնաբանել եւ հասկնալ մեր Վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները: Քրիստոս, Յիսուսի միջոցաւ, շատ բան սորվեցուց, բայց Քրիստոս ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է եւ նոյնիսկ այսօր մեզի կը սորվեցնէ, եթէ պատրաստ ենք զինք մտիկ ընել: Կարելի է մենք զմեզ խաբել, բայց կարելի չէ Քրիստոս խաբել, հետեւաբար ըստ այնմ խորհինք, խօսինք եւ գործենք:

«Մի՛ խաբի՛, Աստուծո՛ւն ո՛չ արժամարժի: Զո՛ք պար ինչ սերմանէ մարդ պնոյն է- Ընչեպե՛՛»:
(Գաղատացիս .2:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

Այս ուղղութեամբ յաջողութեան համար հետեւեալ եօթ ազդակները կարեւոր են:

ա- Սերտ վճռականութիւն մը անհրաժեշտ է: Պարտ ենք ընդունիլ կեանքի բոլոր պատահարները առանց յուսահատելու՝ հոգ չէ թէ անոնք ըլլան հաճելի կամ տառապալից: Ընդունիլ այլոց մեզի նկատմամբ զաղափարները, անոնք ըլլան լաւ կամ վատ: Համայն մարդկութիւնը, ընդհանուր առմամբ, կարելի է երեք խումբերու բաժնել.

- Անոնք, որոնք որեւէ պատասխանատուութիւն չեն առներ:

- Անոնք, որոնք պատասխանատուութիւն կ'առ-

նեն, բայց երբ դժուարութիւններու եւ փորձութիւններու հետ ղէմ-առ-ղէմ կու գան, կը յուսահատին եւ չեն յարատեւեր:

- Անոնք, որոնք անխախտելի վճռականութեամբ մը կը յարատեւեն, հակառակ այն բոլոր դժուարութիւններուն որոնց կ'ենթարկուին եւ իրենց ստանձնած պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը իր ակարտին կը հասցնեն: Հետեւաբար մենք ալ պարտ ենք նման վճռականութեամբ մը յարատեւել, մինչեւ որ յաջողինք:

բ- Ճշմարտութեան հասնելու միջոցը հասկնալ եւ որեւէ ջանք ու կարողութիւն չխնայել, մինչեւ որ նպատակակէտին հասնինք:

գ- Վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ բացարձակ սէր եւ յարգանք ունենալ եւ Զինք պաշտել: Քրիստոսն է, որ անձին խաւարամտութիւնը պիտի փարատէ:

դ- Անձը պարտ է իր մտային հաւասարակչութեան վրայ պահել առանց ստորադասութեան կամ գերադասութեան զգացումներու եւ առանց որեւէ վախի:

ե- Ինքնագսպումը անհրաժեշտ է: Անձը պարտ է իր բոլոր խորհուրդները եւ զգացումները զսպել, ինչպէս նաեւ իր ցանկութիւնները, յարումները եւայլն:

զ- Ուտեստեղէնը պէտք է օգտակար ըլլայ թէ՛ մարմնին, թէ՛ մտքին եւ թէ՛ հոգիին համար: Միւր մարմնին օգտակար կրնայ ըլլալ, բայց միտքին եւ հոգիին համար լաւ չէ:

է- Կատարելութեան ուղիէն չչեղիլ:

Կեանքին նպատակը Աստուածայայտնութիւնն է, իսկ մարդուն նպատակն ալ իր կեանքի ընթացքին իր մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնելն է: Ահա աս էր, որ մեր անցեալի մեծերը հասկցած, սորված եւ սորվեցուցած էին: Ինչո՞ւ մեր անցեալի մեծերէն

Ներսէս Ծնորհալին, Գրիգոր Նարեկացին, Գրիգոր Տաթեւացին եւ շատ մը ուրիշներ սուրբ կը կոչենք: Իրենք այն ինչ որ սորվեցան՝ հասկցան, մեզի փոխանցեցին մեր Աստուածատուր եկեղեցւոյ միջոցաւ: Իբր օրինակ նկատողութեան առնենք եւ ուսումնասիրենք Ներսէս Ծնորհալիի գրած Գիշերային ժամերգութեան մէջի «Առաւօտ Լուսոյ» երգին միայն առաջին վեց տուները:

Առաջին տունը հետեւեալն է.

«Առաւօտ լուսոյ,

Արեգակն արդար,

Առ իս լոյս ծագեալ»:

Այս բառերով Ծնորհալին Աստուծոյ Երրորդութիւնը կը ներկայացնէ եւ մեր կեանքին նպատակը: Երբ «Առաւօտ լուսոյ» բառերը կը կարդանք, շատեր կը կարծեն թէ անոր իմաստը «առտուան լոյսն» է: Երգին մէջ չէ գրուած «Լոյս առաւօտու», այլ «Առաւօտ լուսոյ»: Առաւօտը օրուան սկիզբն է, հետեւաբար հոս այդ բառը գործածուած է փոխաբերական իմաստով, այսինքն մատնանշելու համար սկիզբ մը: Իսկ ի՞նչի սկիզբը: Լոյսին սկիզբը: Լոյսը գօրութիւն կը ներկայացնէ ինչպէս նաեւ գիտութիւն, հետեւաբար գիտակցութիւն եւ Աւետարանին մէջ գրուած է. «Աստուած Լոյս է»: Հետեւաբար ակնարկը Հայր Աստուծոյ համար է, որ ամէն ինչի սկիզբն է եւ ամէն ինչ Իրմէ բղխած: Երկրորդ տողին մէջ կը կարդանք. «Արեգակն արդար»:

Արեգակը Աստուծոյ լոյսն է: Այդ բառն ալ հոս փոխաբերական իմաստով գործածուած է: Արեգակը կը ներկայացնէ Աստուծոյ կենսատու գօրութիւնը, այսինքն Ս. Հոգին: Միթէ կենսաբանները (biologists) չե՞ն ըսեր. «Առանց արեւի աշխարհի վրայ կեանք գոյութիւն պիտի չունենար» (տես նաեւ Ա. հատորին մէջ էջեր 46-50): Արեգակը նաեւ ներկայացուած է իբրեւ արդար: Ճիշդ

ասոր համար էր որ Յիսուս մեզի ըսաւ. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Հետեւաբար ինչ մեղք որ կը գործենք Ս. Հոգիի դէմ, այդ մեղքերուն յառաջ բերած բոլոր արդար հատուցումներուն պիտի ենթարկուինք: Նման հասկացողութեամբ ամենեւին պէտք է զժգոհինք մեր կեանքի անբաղձալի պատահարներուն համար, որովհետեւ մեր կեանքի բոլոր պատահարները՝ լաւ ու վատ, մենք կերտած ենք: Երբորդ տողին մէջ կը կարդանք. «Առ իս Լոյս ծագեալ»: Ս. Հոգիին այդ լոյսը, որ մեր մէջ, ինչպէս նաեւ ընդհանուր ստեղծագործութեան մէջ, ծագած է եւ կը ծագի Որդի Աստուծոյ՝ Քրիստոսն է: Քրիստոս ամէն անհատի «հոգին»՝ էութիւնն է: Բայց մարդ իր խաւարամտութեամբ եւ եսասիրութեամբ կը խափանէ այդ լոյսին իր մէջ եւ իր միջոցաւ լրիւ յայտնութիւնը: Այս տողով Շնորհալին մեզի կը ներկայացնէ նաեւ մեր կեանքին նպատակը, որ է Քրիստոս լրիւ յայտնաբերել մեր մէջ: Աղերսանք մըն է, որ այդ Լոյսը լրիւ ծագի մեր մէջ: Ճիշդ է, թէ Քրիստոսի այդ բարձր գիտակցութեան (Christ consciousness) յափշտակութիւնը Աստուծմէ է, բայց մենք զմեզ պարտ ենք այդ բարձր գիտակցութեան յափշտակուելու արժանի ընել: Միթէ մեր գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան մեր սահմանափակած փոքր մէկ մասնիկը չէ՞: Այդ բարձր գիտակցութեան յափշտակութիւնը Քրիստոսի յայտնութիւնն է անձին մէջ: Ինչպէս մարդ կարող չէ ինքզինք քնացնել, բայց ինքզինք կը պատրաստէ քնանալու, նմանապէս ալ մարդ կարող չէ գիտակցութեան բարձր մակարդակի մը իր յափշտակութիւնը իրականացնել, քանզի այդ Աստուծմէ է, բայց մարդ կարող է ինքզինք այդ յափշտակութեան պատրաստել: Այսինքն մարդ կարող է իր բնոյթը, հետեւաբար իր կենցաղը, փոխելով ինքզինք արժանի ընել այդ բարձր գիտակցութեան:

Ինչպէս քունը առանց անձին ջանքերուն անոր գիտակցութիւնը ակնթարթի մը մէջ արթուն մակարդակէն ակնի ցած քունի մակարդակի, կամ քունի մակարդակէն ալ արթուն մակարդակի կը յափշտակէ, նմանապէս գիտակցութեան մեր արթուն կոչած մակարդակէն շատ ակնի բարձր մակարդակի յափշտակութիւնն ալ կ'ըլլայ ակնթարթի մը մէջ ըստ Աստուծոյ կամ քին:

Երգին երկրորդ տունը հետեւեալն է.

«Բղխումն 'ի Հօրէ,
Բղխեա 'ի Հոգոյս,
Բան քեզ 'ի Հաճոյս»:

Առաջին տողը «Բղխումն 'ի Հօրէ» դարձեալ կը ներկայացնէ Ս. Հոգին՝ Աստուծոյ զօրութիւնը, որ Հօրմէն բղխած է: Երկրորդ տողը «Բղխեա 'ի Հոգոյս»-ը աղերսանք մըն է, որ Ս. Հոգիի յաւելեալ զօրութիւնը մեր մէջ ալ բղխի եւ հոսի: Մեր մէջ ալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր ներքին Քրիստոսէն կը բղխի: Միթէ Քրիստոս իր աշակերտներուն չըսա՞ւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի զրկեմ» եւ աշակերտները Պենտեկոստէի օրը Ս. Հոգիի զօրութեան արժանացան եւ իրենց բոլոր էութիւնով ցնցուեցան ու բարձր գիտակցութեան յափշտակուեցան: Երրորդ տողը «Բան քեզ 'ի Հաճոյս»-ը կը թուի ներկայացնել Աստուած փառաբանելու մեր խօսքերը: Նոյն ատեն այդ տողերը ակնարկ մըն են մեր կենցաղին, որ պէտք է հաճելի ըլլայ Աստուծոյ: Պէտք է մոռնանք թէ խօսքերը յառաջ կուգան խորհուրդներէ եւ տեղի կու տան արարքներու: Հետեւաբար այս տողն ալ խոստում մըն է Աստուծոյ, որ պիտի ջանանք մեր կենցաղը եւ մեր բնոյթը Աստուծոյ հաճելի ընել:

Երրորդ տունն է.

«Գանձդ ողորմութեան,
Գանձիդ ծածկելոյ,
Գլտող զիս արա»:

Գանձ բառը գործածելով Շնորհալին կը մատնանըչէ արժէքաւոր գանձի մը ներկայութիւնը: Հարկաւ, այդ Գանձը Քրիստոսի ներկայութիւնն է մեր մէջ: Եւ այդ Գանձը՝ Քրիստոս, ողորմած է եւ ներողամիտ: Պէտք չէ մոռնալ, թէ Որդւոյն դէմ գործուած մեղքը ներելի է: Հետեւաբար մեզի կը մնայ միայն այդ մեղքին անդրադառնալ եւ մեր հայեացքը փոխել: Երկրորդ տողը «Գանձիդ ծածկելոյ»-ն ակնարկ մըն է այն իրողութեան թէ Քրիստոսի ներկայութիւնը մեր ցած գիտակցութեան մակարդակին պատճառաւ մեր գիտակցութենէն ծածկուած է եւ նոյնիսկ տեղեակ անգամ չենք, թէ կարողութիւնը ունինք այդ Գանձը՝ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել եւ այդ Գանձին շնորհած բարձր գիտակցութեան արժանանալ: Երրորդ տողը դարձեալ աղերսանք մըն է, որ մեզ արժանի ընէ այդ Գանձը գտնելու, այսինքն Քրիստոս մեր մէջ յայտնաբերելու:

Չորրորդ տունը հետեւեալն է.

«Դուռն ողորմութեան,

Դաւանողիս բաց,

Դասեցոյ վերնոցն»:

Առաջին տողը «Դուռն ողորմութեան»-ը ակնարկ մըն է մեր ներքին Քրիստոսի, որ «դուռն» է Ս. Հոգիի զօրութեան հոսքին մեր մէջ: Ս. Հոգիի զօրութիւնը երբ պատշաճ կերպով եւ առատապէս հոսի անձէն ներս, բոլոր ֆիզիքական եւ մտային հիւանդութիւններ, զգացումներ, յուզումներ կ'անհետանան: Ինչպէս վերել երկրորդ տունին մեկնաբանութեան մէջ յիշուած է, միթէ Քրիստոս չէ՞ որ Ս. Հոգիի զօրութեան հոսքը կ'արտօնէ: Երկրորդ տողը «Դաւանողիս բաց»-ը աղերսանք մըն է, որ Քրիստոս Ս. Հոգիի զօրութեան հոսքին դուռը բանայ: Բայց որպէսզի այդ «դուռը» բացուի անձը պարտ է նախ Քրիստոս դաւանող ըլլալ: Քրիստոս դաւանիլ պարզապէս «ես Յիսուս Քրիստոսի կը հաւա-

տամ» ըսել, բայց միևս կողմէ ալ իր «Ես»-էն եկած բոլոր յորդորներուն համաձայն ապրիլ չէ, այլ ինչպէս Յիսուս մեզի յորդորած էր «Ես»-ը ամբողջովին անտեսելն է: Ապա թէ ոչ ողորմութեան դուռը չի բացուիր եւ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւնը մեր մէջ չի հասիր: Ըստ Յիսուսի սորվեցուցածներուն առանց «Ես»-ը անտեսելու յաւիտենական կեանքի արժանանալ կարելի չէ: Այս տունին երրորդ տողը «Դասեցոյ վերնոցն» է: Հոս բացայայտ կ'ըմբռնենք անձին բարձր գիտակցութեան յափշտակուելու գաղափարը: Դարձեալ աղերսանք մըն է, որ դասաւորուինք, այսինքն արժանի ըլլանք աւելի բարձր գիտակցութեան մը, որ ամփոփուած է «վերնոցն» բառին մէջ:

Հինգերորդ տունն է.

«Երբեակ միութիւն,

Եղելոց ինամուղ,

Եւ ինձ ողորմեա»

Վերեւ ներկայացուած առաջին տունին մէջ ինչպէս Աստուծոյ երրորդութիւնը նկարագրուած էր, այս տունին առաջին տողն ալ կը մատնանչէ այդ Երրորդութեան միականութիւնը: Այսինքն երեք ըլլալով հանդերձ Աստուած մէկ է: Հետեւաբար բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ արտայայտութիւնը ըլլալով նաեւ կը ներկայացնէ միականութիւնը: Երբ այս տողը կ'երգենք պէտք է հասկնալ թէ մեր կարծեցեալ այն բոլոր զանազանութիւնները, որ ընդհանուր առմամբ կը հաւատանք իրարմէ անջատ եւ անկապակից ըլլալ, բոլորն ալ մէկ են եւ նոյն միականութեան զանազան արտայայտութիւններն են: Այս տունին յաջորդ երկու տողերը կը յայտնեն, թէ Աստուած է, որ կը խնամէ բոլոր ստեղծագործութիւնը եւ կը ներկայացնէ մեր աղերսանքը, որ Աստուած մեզի ողորմի եւ մեզ իր խնամքէն չզրկէ: Հարկաւ պէտք է գիտնալ թէ Աստու-

ծոյ խնամքը անընդհատ կը տեղայ բոլորին վրայ՝ թէ բարիներուն եւ թէ չարերուն: Այս կէտը շատ բացայայտ շեշտուած է Աւետարանին մէջ: Բայց մարդն է, որ ինք ինքզինք ընդունակ չ'ըներ Աստուծոյ շնորհներուն:

Վեցերորդ տունը եւ այս մեկնաբանութեան վերջին տունը հետեւեալն է.

«Չարթիր Տէր յօգնել,

Չարթոյ ըզթմրեալս,

Չուարթնոց նմանիլ»:

Այս տունին երեք տողերն ալ մէկական աղերսանքներ են: Մեր ներկայ արթուն կոչած գիտակցութեան մակարդակն ալ իսկութեան մէջ տարբեր «երազի» մակարդակ մըն է եւ իսկական արթնութիւնը վերեւ յիշուած բարձր գիտակցութեան յափշտակուիլն է եւ Յիսուս Քրիստոսի նմանիլն է (Christ consciousness): Աղերսանքը Աստուծոյ օգնութիւնը խնդրելն է, որպէսզի յաջողինք Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: Երկրորդ տողը բացայայտ կ'ընէ, թէ մեր գիտակցութեան մակարդակը շատ ցած է, որով մեր ուղեղը թմրած է եւ կարող չենք այդ բարձր գիտակցութեան փորձառութիւնը ունենալ: Աղերսանքը այդ թմրութենէն՝ քունէն, երազէն արթննալու համար է: Այս տունին վերջին տողն ալ կը ներկայացնէ նման զարթօնքի մը հետեւանքը, այսինքն նմանիլ անոնց, որոնք արթնցած են այսինքն նմանիլ Յիսուս Քրիստոսի:

Այս «Առաւօտ Լուսոյ» երգին մնացեալ տուներն ալ բոլորը իրարմէ աւելի հիանալի են: Անոր 36 տուններուն մեկնաբանութիւնը կրնայ տարբեր գիրքի մը նիւթը ըլլալ:

Եթէ եկեղեցիի արարողութիւններէն՝ ժամերգութիւններէն եւ Ս. Պատարագէն այս դասերը պիտի չսորվինք, որպէսզի զանոնք կիրարկենք մեր կեանքերուն մէջ, ի՞նչ օգուտ կ'ունենայ մեզի...:



Աւանդի նկատմամբ պաշտօնի պա-
անպարֆեր մի ըլլար :
Անոնք շէն կարարելութեան ուղին :
Մառայէ թուորին :
Արեժիւնդեր մի ըլլար :
Սիրէ թուորը՝ թուորին հանդէպ
Բարեպաշտման եղիւր :

(ԱԻԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Գ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԽՕՍՔԵՐԸ
ԳԻՐՔԻ ՎԵՐՉԱՔԱՆԿՆ ԱՈՆՈՒԱԾ)

ԻՆՉ Է ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻՒՄԸ

Քրիստոնէութիւնը կրօնք մը չէ: Յիսուս նոր կրօնք մը չքարոզեց: Յիսուս հին «մովսիսական» հրեաներուն կրօնքն ալ չքարոզեց: Յիսուս գործադրեց Մովսէսի սորվեցուցած կատարելութեան ուղին, որ հրէական կրօնքին մէջ զանազան անպէտ օրէնքներով խեղաթիւրուած եւ կորսուած էր:

«Մի՛ Համարի՛ք եթէ եկի լուծանել զօրէնս կամ
զմարտարէս, ո՛չ եկի լուծանել՝ այլ լնոսլ»:
(Մարտէոս Ե:17)

«Մի՛ կարծէք ես եկայ՝ աւրելու Օրէնքը կամ
Մարգարէները: Եկայ ո՛չ աւրելու՝ Հապա՛ գործադրելու»:

Պօղոս առաքեալ էր, որ նոր կրօնք մը ստեղծեց որ յառաջիկային Քրիստոնէութիւն անուանուեցաւ:

Քրիստոնէութիւնը Յիսուսի բոլոր սորվեցուցածները հասկնալ, իւրացնել եւ կիրարկելն է: Ի՞նչ են Յիսուսի սորվեցուցածները: Աստուծոյ հաճելի որդի ըլլալ, ինչպէս ինք Աստուծոյ հաճելի Որդին էր: Կերտել Աստուածահաճոյ կենցաղ մը եւ նմանիլ իրեն: Յիսուս իր արարքներով, առականերով եւ խօսքերով այդ բոլորը մեզի սորվեցուց:

Քրիստոնէութիւնը ապրելակերպ մըն է, կենցաղ մըն է, որպէսզի իրականացնենք Հայր Աստուծոյ մեզի տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը: Քրիստոնէութիւնը ծիսակատարութիւն մըն ալ չէ: Բայց ծիսակատարութիւնները կարեւոր են մեզի սորվեցնելու համար անոնց մէջ թաղնուած կատարելութեան ուղին՝ Աստուծոյ մեզի տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը: Պէտք չէ որեւէ ջանք խնայել հասկնալու համար անոնց մէջ գտնուող իմաստասիրութիւնները: Ուրեմն, Ի՞նչ է Աստուծոյ մարդուն

տուած պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը, որ մարդ պարտ է իր ներկայ կեանքին ընթացքին կատարել եւ լաւագոյնս կատարել: Մարդուն տրուած պատասխանատուութիւնը սիրել է ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ բոյս, անասուն եւ բոլոր անհատները, անոնք ըլլան ընտանեկան անդամ, բարեկամ, ընկեր, օտար կամ թշնամի, ինչպէս նաեւ որեւէ բանի վնաս չհասցնել: Իսկ մարդկային կեանքի պարտականութիւնն ալ Աստուածայայտնութիւնը իր անձին մէջ իրականացնելն է: Մարդ կը կարծէ, թէ նման արարք մը մարդուն համար անկարելի է եւ կ'ըսէ. «Յիսուս կարողացաւ Քրիստոս յայտնաբերել, որովհետեւ Ան Աստուծոյ Որդին էր»: Նման հայեացք մը Յիսուսի սորվեցուցածներուն հակառակ է: Մենք ալ բոլորս Աստուծոյ որդիներ ենք: Մենք միայն իր հաճելի Որդիները չենք: Իրեն հաճելի ըլլալու համար ինչո՞ւ ջանք չենք ընել:

«Ո՛չ է աշակերտ լա՛ւ ինն սովորապէս իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ սովորապէ՛ս իւր»: (Ղուկաս 9:4)

«Աշակերտը իր վարդապետն գերիվեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Արդ եղերո՛ւ չի դո՛ւ ի կարարեա՛լ չի, որպէս եւ Հայրն յեր երկնաւոր կարարեա՛լ է»: (Մատթէոս 10:40)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

«... Ամէն ամէն ասե՛մ թէ որ Հասարակայն յիս սգորթս սոր ես գորթեմ, եւ նա՛ գորթեսցե եմեթամեթս է՛ս ինն սնոյնս գորթեսցե ... »:
(Յովհաննէս ԺԴ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն

գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

**Քրիստոնէութիւնը մկրտուելին ալ չէ: Այլ ան ըստ
յաջորդող համարներուն Ս. Հոգիի յաւելեալ զօրու-
թեամբ օժտուելին է: Ան Քրիստոսի տուած «Չուր»-ով
մկրտուելին է: Այդ համարներուն մէջ Յիսուս «Չուր»-ը
օգտագործած է իր փոխաբերական իմաստով, որ Ս.
Հոգին կը ներկայացնէ: Քրիստոնէութիւնը որեւէ ջանք
չխնայելն է, որպէսզի Ս. Հոգիի զօրութիւնը առատա-
պէս մեր մէջ հոսի:**

«Պատասխանի՛ եր Յիսուս՝ եւ ասէ. Ամէն ամէն
ասե՛մ չեւ ելե՛ն ոչ ո՛ր թնցի ՚ի ջրոյ եւ ՚ի
Լուսոյ ո՛չ կարէ մտանել յարեայո-թիւն
Ասորո-թոյ»: (Յովհաննոս Գ:5)

«Յիսուս պատասխանեց, ձշմարտապէս, ճշմարտապէս կը
յայտարարեմ քեզի, եթէ մէկը Չուրէն ու Հոգիէն չծնի՛
չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը»:

«Պատասխանի՛ եր նմա Յիսուս եւ ասէ.
Ամէնայն որ ըմպէ ՚ի ջրոյ յայտմանէ, մի-սան-
Գամ Ժարաւե՛, Բայց որ ըմպէ ՚ի ջրոյն զոր ես
դաս մնա մի՛ Ժարաւեացէ յա-իցեան: Այլ ջրոն
զոր ես դաս նմա եղիցի աղբի-ր ջրոյ Բղիւտոյ ՚ի
կէանան յա-իցեանկան»: (Յովհաննոս Գ:13-14)

«Յիսուս պատասխանեց անոր. Ո՛վ որ խմէ այս Չուրէն՝
դարձեալ պիտի ծարաւնայ, բայց ո՛վ որ խմէ այն
Չուրէն՝ որ ես պիտի տամ անոր, յաւիտեան պիտի
չծարաւնայ: Հապա այն Չուրը՝ որ ես պիտի տամ անոր,
պիտի ըլլայ անոր մէջ Չուրի աղբիւր մը՝ որ կը բխի
յաւիտեանական կեանքի համար»:

«Որ Լա-սորայ յիս որպէս եւ ասէն Գիրի՛,
Գե՛ր յորովայնէ նորա Բղիւտացեն ջրո՛ց
կէնդանո-թեան»: (Յովհաննոս Է:38)

«Ան որ հաւատայ ինձի, կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր փորէն, ինչպէս Գիւրքը կ'ըսէ»:

Ս. Հոգիի զօրութիւնը ի՞նչպէս առատապէս մեր մէջ հոսեցնել: Այս կարելի է միայն աղօթքով եւ աղօթքին ամենավեճ ձեւով, որ խոկումն է: Խոկումին նպատակը բացարձակ իշխանութիւն կերտել է մեր զգացումներուն եւ մտքին վրայ, որպէսզի կարենանք զսպել բոլոր զգացումները, յուզումները եւ խորհուրդները եւ տէր ըլլալ «սուրբ սրտի», այսինքն զգացումներէ եւ խորհուրդներէ սրբուած՝ մաքրուած միտքի մը: Երբ այդ միտքը կը կեդրոնացնենք Քրիստոսի վրայ, իրմէ կը ստանանք Ս. Հոգիի առատ զօրութիւնը:

«Երանի այնոցիկ՝ որ սո՛ւրբ էն սրտի-ւ, պի նո՛ւս
պէսօրո՛ւս յեւոցէն»: (Մարթէոսի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Քրիստոնէութիւնը նաեւ պարզապէս եկեղեցի երթալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստուածապաշտութիւն մըն է: Աստուածապաշտութիւնն ալ սիրել եւ խնամել է ընդհանուր ստեղծագործութիւնը, որ Աստուծոյ ձեռագործը՝ «ներկած նկարն» է: Ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինը, արտայայտութիւնը, ներկայութիւնն է:

Ինչպէ՞ս Աստուածապաշտ ըլլալ: Վերեւը արդէն գրուած է սիրել եւ խնամել Աստուծոյ ձեռագործը: Բայց Աստուածապաշտ ըլլալու համար պարտ ենք մեր «Ես»-ը չէզոքացնել՝ զայն խաչը հանել եւ մահուան դատապարտել: Կարելի չէ թէ՛ «Ես»-ը պահել, եւ թէ՛ ալ Աստուած պաշտել՝ Անոր ծառայել: Չենք կրնար երկու տիրոջ ծառայել:

«... Ո՛չ կարելի Եսօրո՛ւս ծառայել ես
մամոնայի»: (Ղոսկաս Ժ:9:13)

«... Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Քրիստոնէութիւնը հաղորդութիւն առնելն ալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը հասկնալ է, թէ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնն է եւ այս աշխարհիկ կեանքի ընթացքին Աստուծոյ՝ Քրիստոսի հետ հաղորդուիլն է: Երբ եկեղեցի կ'երթանք եւ հաղորդութիւն կ'առնենք, ահա՛, աս է որ պէտք է սորվինք այս արարքով: Սորվիլ, թէ մենք ալ մեր կեանքին մէջ պարտ ենք իրականացնել եւ հաղորդուիլ մեր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ հետ:

Ինչպէ՞ս հասկնալ, թէ Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնն է: Վերեւ ներկայացուած առատ Ս. Հոգիի զօրութեան հոսքը ապահովելու միջոցառումը, որ «սուրբ սիրտ» կերտելն է, մեզի կու տայ, ոչ իմացական հասկացողութիւն, այլ Քրիստոսի մեր մէջ ներկայութեան փորձառութիւնը: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Երանի անոնց, որ սուրբ են սրտով, անոնք Աստուած պիտի տեսնեն»: Աս կ'ըլլայ զիտակցութեան մակարդակի բարձրացումով, որ Քրիստոսի կողմէ յափշտակուիլն է: Անձն ալ Քրիստոսի հետ կը նոյնանայ, հետեւաբար փորձառականօրէն հաղորդակցած կ'ըլլայ Անոր հետ:

«Իսկ մեխիթարիշն չոգին Սուրբ՝ սոր առաջեացե
չայր յանուան իմ, նա՛ որ առաջե յեզ սամէնայն
որ ինչ ասացի յեզ եւ յըջեցորացե՛ յեզ»:
(Յովհաննուս ժԴ:26)

«Բայց Միխիթարիչը՝ Սուրբ Հոգին, որ Հայրը պիտի
ըրկէ իմ անունովս, անիկա՛ պիտի սորվեցնէ ձեզի
ամէնը՝ եւ ինչ որ ըսի ձեզի՝ պիտի յիշեցնէ ձեզի»:

«Բայց յորժամ եկեացե մեխիթարիշն, սոր է՛ս
առաջեցից յեզ ՚ի չորե սուրբին ճշմարտութեան
որ ՚ի չորե ելանէ նա՛ վկայեացե վասն իմ»:
(Յովհաննուս ժԵ:26)

«Բայց երբ Միխիթարիչը գայ՝ որ ես Հօրմէն պիտի
ըրկեմ ձեզի, ճշմարտութեան Հոգին՝ որ կը բղի
Հօրմէն, անիկա՛ պիտի վկայէ իմ մասին»:

Քրիստոնէութիւնը «Ես Յիսուս Քրիստոսի կը հաւատամ, որ Ան Աստուծոյ Որդին է եւ իմ մեղքերուս համար մեռաւ եւ ես իր արիւնով լուացուած եւ սրբուած եմ, հետեւաբար փրկուած եմ» ըսել ալ չէ: Քրիստոնէութիւնը, ըստ Յիսուսի սորվեցուցածին, պարզապէս Զինք պաշտելը չէ, այլ Անոր նման ըլլալն է եւ Անոր Հօրը կամքը կատարելն է: Այն ատեն է, որ Զինք իսկապէս պաշտած կ'ըլլանք:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, մոցե յարժայտութիւն երկնից, այլ որ ասնէ զհամա Ըօր իմոյ որ յերկնան է» : (Մատթէոս Է:21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկինքի թաղաւորութիւնը, Հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:

Անտարակոյս Յիսուս Քրիստոսը պարտ ենք պաշտել: Ան մեր ուսուցիչն է: Ան Աստուծոյ հաճելի Որդին է: Ան Աստուծոյ յայտնութիւնն է: Յիսուս Քրիստոս չպաշտել Աստուած չպաշտել կը նշանակէ: Բայց ինչպէս վերեւ գրուած է Յիսուս Քրիստոս պաշտել իր Հօրը կամքը կատարել է եւ պարզապէս «կը սիրեմ, կը պաշտեմ» ըսելը չէ:

«... Եթէ ո՛չ սիրէ զիս զբանն իմ պահեսցէ եւ Ըայր իմ սիրեսցէ զնա» : (Յովհաննոս ԺԳ:23)

«... Եթէ մէկը սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Հայրս պիտի սիրէ զայն»:

Իսկ փրկուութիւնը պարզապէս կը հաւատամ ըսելով կարելի չէ ձեռք ձգել, այլ փրկուութիւնը կու գայ անոր, որուն կեանքը կ'ըլլայ անընդհատ աղօթք մը եւ իր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները՝ բոլորն ալ կ'ընդունի ուրախութեամբ իբր Աստուծոյ կամքը:

«Բայց որ Համբերեսցն ՚ի սպառ-, նա կ'եցցէ՛» : «Բայց ո՛վ որ տոկայ մինչեւ վախճանը՝ անիկա՛ պիտի փրկուի»: (Մատթէոս ԻԳ:13)

«... առ այն՝ թէ որո՞րոր է յամենայն ժամ կա՞լ
նոցա յաղօթն՝ եւ մի՞ շանցրանալ» : (Ղուկաս ԺԼ:1)
«... որ գլխունան թէ պէտք է ամէ՛ն ատեն աղօթել՝
առանց ձանցրանալու»:

Քրիստոնէութիւնը մահէն վերջ երկիրնք երթալ եւ
յաւիտեան՝ անվերջ ժամանակ երջանիկ ապրիլ չէ: Կամ
դժոխք երթալ եւ յաւիտեան կրակով այրիլ եւ
տառապիլ ալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստուծոյ
երանութեան մասնակից ըլլալ է եւ մարմինը՝ միջոցը
եւ ժամանակը յօժարաբար թողուլ եւ յաւիտեանակա-
նութեան ձգտիլ է: Ժամանակի դրութենէ դուրս ըլլալն
է, այսինքն միայն ներկային մէջ ապրիլն է:

Երբ Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ ըլլանք՝
բարձր գիտակցութեան տէր, կը նմանինք Իրեն: Աս ալ
կարելի է եթէ Իր Հօրը կամքը լիովին կատարած ենք:
Այն ատեն կը վայելենք Աստուածային երանութիւնը
եւ կ'ապրինք միայն ներկան, որ յաւիտեան է: Աստու-
ծոյ սէրն ալ մեզմէ կը հոսի դէպի բոլորին, նոյնիսկ
այն խաւարամտին որ կու գայ մեզ սպաննելու եւ կը
փաթթուինք իրեն սիրոյ արտայայտութեամբ եւ
կ'աղօթենք իրեն համար: Աս ալ ապաւինիլ է Աստուծոյ
եւ հասկնալ թէ այդ խաւարամտին մեզ մեռցնելու
արարքը պէտք է Աստուծոյ կամքը ըլլայ:

Քրիստոնէութիւնը պատժող եւ վրէժխնդիր Աս-
տուծոյ մը հաւատալ չէ: Այլ Քրիստոնէութիւնը Աստու-
ծոյ սիրոյն արտայայտութիւնը ապահովել եւ իրակա-
նացնելն է: Աստուած սէր է: Աստուած չի պատժեր:
Բայց մարդ պարտ է իր ցանած հունտերուն հունձքը
ինք քաղել:

«Մի՛ խաբի՛վ, Լսորո՛ւած ո՛չ արժամարճի: Զի
պոր ինչ սերմանէ մարդ պնոյն եւ Հնչեաց՛»:
(Գաղաթապիս Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ի՛նչ որ մարդ կը սերմանէ՝ գա՛յն ալ պիտի հնձէ»:

«ասե՛մ չե՛ս, ո՛չ ելանիցես անոր՝ մինչեւ Հասո-
ո-ցանիցես սլեպի՛ն թե-խոնն»»: (Ղուկաս ԺԲ:59)

«Դուքս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին լուման»:

Քրիստոնէութիւնը սիրոյ Աստուծոյ հետ մէկ ըլլալ է, իր ներողամտութիւնը եւ իր ողորմածութիւնը վայելել է: Քրիստոնէութիւնը Աստուծոյ ապաւինիլ, կեանքի բոլոր լաւ թէ վատ պատահարները ընդունիլ եւ անոնց համար փառք տալ է: Որովհետեւ մեզի ինչ որ կը պատահի՝ լաւ թէ վատ, մեր օգտին համար է եւ Աստուծոյ կամքն է:

Բայց մարդ իր խաւարամտութեամբ բոլոր վերոյիշեալ (Քրիստոնէութիւնը ... չէ)–երը առած եւ անոնց հիման վրայ կրօնք մը ստեղծած եւ այդ կրօնքին ալ հետեւելով ինքզինք կը համարէ Քրիստոնեայ: Նման հասկացողութեամբ մը մարդ արարած կը շարունակէ իր «Ես»–ին «երկրպագել» եւ նոյն ժամանակ ինքզինք համարել քրիստոնեայ:

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ւց տերանց Ժառանգել. սի ելե՛ն
սմին՝ ասորցէ, եւ սմե-սըն սիրե՛. կամ սմին՝
մեծարիցէ, եւ սմե-սըն արհամարի- ցե՛: Ո՛չ
կարե՛ղ Ասոո-ժո՛յ Ժառանգել եւ մամոնայի»:
(Ղուկաս ԺԶ:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ. որովհետեւ կամ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կամ մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: Չէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Վերոյիշեալ «Քրիստոնէութիւնը չէ»–երը իրաւացիօրէն շատ կարեւոր են իբրեւ առաջին քայլ: Անտարակոյս պարտ ենք մկրտուիլ, եկեղեցի յաճախել, հաղորդութիւն առնել: Բայց անոնք երբեք պէտք չէ վեր-

Չակէտ մը ըլլան: Այլ անոնք պէտք է խթան մը ըլլան մեզի, որպէսզի անոնց մէջ թազնուած իմաստասիրութիւնը պրպտենք, գտնենք եւ մեր կեանքերուն մէջ ալ կիրարկենք: Անոնք միայն առաջին քայլն են կատարելութեան ուղիին մէջ: Զինական առածը կ'ըսէ. «Հազար մղոն հեռաւոր ճամբորդութիւն մը կը սկսի առաջին քայլով»: Եթէ մեր կենցաղը չէ փոխուած կը նշանակէ, թէ մեր առաքելութեան մէջ ձախողած ենք: Կատարելութեան ուղիին մէջ առաջին քայլէն անդին չենք յառաջացած: Կատարելութեան ուղին անհուն ճամբորդութիւն մըն է, որովհետեւ անոր վերջակէտը Քրիստոսի յայտնութիւնն է, Աստուծոյ հետ մէկ ըլլալ է: Միթէ Աստուած ալ անհուն չէ⁶: Հաղորդութիւն առնելը պարզապէս մեր մեղքերուն ներուած ըլլալը կարծել եւ դարձեալ նոյն մեղքերը գործել ու դարձեալ հաղորդութիւն առնել չէ: Մեղքերը կը ներուին երբ մենք մեր դասը սորված կ'ըլլանք եւ նոյն մեղքերը դարձեալ չենք կրկնել:

Աղօթքն ալ պէտք է Քրիստոսի հետ հաղորդուելու տենչանքը ըլլայ եւ ոչ Աստուծմէ աս ու ան խնդրել նա մանաւանդ մեր կեանքի վատ ժամանակներուն: Այդ վատ պատահարները բոլորն ալ մեր ցանած հունտերուն հունձքերն են: Յիսուս Քրիստոս ողորմած է եւ կարող մեզ այդ դժուարութիւններէն ազատել: Բայց պէտք չէ մոռնալ թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքը աններելի է եւ այդ կ'ըլլայ մեր պարտքը, որ ուշ թէ կանուխ պարտ ենք վճարել: Յիսուս երկու հազար տարի առաջ իր ողորմածութեամբ շատեր բուժեց եւ անոնց մեղքերը ներեց: Բայց այդ «պարտքերը» չանհետացան, այլ ինք զանոնք իր վրայ առնելով, ինք այդ պարտքերը խաչին վրայ վճարեց: Աս ցոյց կուտայ իր անհուն ողորմածութիւնը: Ես իմ գործած մեղքիս յառաջ բերած «պարտքէն» ազատելու համար արդեօք

պիտի ուզէի՞, որ Յիսուս մեղքիս պատիժը քաշէ: Աս կ'ըլլայ եսասիրութեան զազաթնակէտը: Եթէ այդ չարչարանքը կրելով մենք մեր դասը սորված ենք, մեր աղօթքը պէտք է ըլլայ խնդրել, որ Աստուած մեզի այդ մեր կեանքի վատ պատահարներուն համար ընդունակութիւն եւ տոկալու համբերութիւնը տայ: Որովհետեւ Աստուած ողորմած է եւ մարդասէր, եթէ իսկապէս դասերնիս սորված ենք եւ վճռականօրէն որոշած չկրկնել նոյն մեղքը, Աստուած ինք կը մեղմացնէ մեր տառապանքը առանց մեր Իրմէ խնդրանքին: Իսկ եթէ մենք մեր դասը չենք սորված, որքան ալ աղօթենք կարեւորութիւն չունենար, ինչպէս նաեւ օգուտ:

Ի՞նչ կը խորհինք: Արդեօ՞ք պէտք է գոհանանք պարզապէս անուանի Քրիստոնեաներ ըլլալով: Ո՛չ ընդհակառակը, պէտք է որ ջանք չխնայենք եւ ճշմարիտ Քրիստոնեաներ ըլլանք: Դիւրին է անուանի Քրիստոնեայ ըլլալ բայց շատ դժուար է իսկական Քրիստոնեայ մը ըլլալ: Յիսուս այս երկուքէն ո՞րը ապրեցաւ եւ Իր կեանքով ալ մեզի անոնցմէ ո՞րը սորվեցուց:



(ԱՒԵՏԱՐԱՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ - Գ ՅԻսուս Քրիստոսի Խօսքերը
գլխի վերջաբանէն առնուած)

ԻՆՉ Է ԿՐՕՆՔԸ ԵՒ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԸԼԼԱՅ

Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները կատարելութեան ուղին էին: Յիսուս Քրիստոսի սորվեցուցած կատարելութեան ուղին հետեւողները կը կազմեն եկեղեցին, ինչ որ կը նշանակէ հաւատացեալներու հաւաքական խումբ: Այս խումբը առաջին անգամ Անտիոքի մէջ է որ «Քրիստոնեայ» կ'անուանուի: 325-ին գումարուած Նիկիոյ ժողովին կայսրին տնօրինութեամբ «Քրիստոնէութիւն» կոչեալ նոր կրօնք մը կը հիմնուի:

Ի՞նչ է կրօնքի մը անպատեհութիւնը:

Որեւէ կրօնքի մը պատկանողներ իրենք զիրենք աւելի արդարացեալ կը նկատեն, քան թէ բոլոր անոնք, որոնք այլ կրօնքներու կը պատկանին: Օրինակը բացայայտ է: Ըստ Մահմէտականներու քրիստոնեայ մը մեռցնել դրախտ երթալու համար արժանիք եւ վաստակ կը համարուի: Ահա՛, այսպէսով Մահմէտականները իրենք զիրենք արդարացեալ կը նկատեն: Միթէ Քրիստոնէութեան մէջ ալ «փրկուածներու եւ վերստին ծնունդ ունեցողներու» խմբակներուն անդամներն ալ միւս բոլոր կրօնքները «սատանայական» կամ կռապաշտութիւն չե՞ն համարեր: Այլ կրօնքներուն հետեւողները, վերեւ յիշուած խմբակներու հետեւողներուն միտքերուն մէջ դժոխք երթալու արդէն իսկ դատապարտուած են, անշուշտ, եթէ անոնք իրենց կրօնքը չփոխեն եւ իրենց նման «Քրիստոնեայ» չըլլան: Յաւալին այն է, թէ անոնք նոյնիսկ Քրիստոնեայ կրօնքին պատկանողները, որոնք իրենց հաւատացած ձեւով չեն հաւատար, զանոնք ալ դժոխքի կը դատապարտեն:

Աստուած մէկ է, եւ միականութիւն կը ներկայացընէ: Աստուած արդար է: Նաեւ չե՞նք ըսեր. «Առանց Աստուծոյ հրամանին տերեւ մը անգամ չի շարժիր»:

Ուրեմն, եթէ կան զանազան կրօնքներ, բոլորն ալ պէտք է ծնունդ առած ըլլան համաձայն Աստուծոյ կամքին: Զանազան ժողովուրդներ իրենց իմացականութեամբ եւ նամանաւանդ իրենց գիտակցութեամբ տարբեր մակարդակներու վրայ կը գտնուին: Ուստի Աստուած ալ անոնց տուած է անոնց մակարդակին համապատասխան եւ անոնց համար ըմբռնելի կրօնք մը: Բոլոր կրօնքները իրենց խորքին մէջ, նոյն իմաստասիրութիւններն են որ կը սորվեցնեն: Բայց մարդիկ, մակերեսային հասկացողութեամբ մը, զանոնք հարմարցուցած են իրենց վատ կենցաղներուն եւ իրենք զիրենք կը համարեն բացարձակ հաւատացեալ, այսպէսով ուրիշներ եւ կը շարունակեն երկրպագել իրենց «Ես»-ին: Բոլոր տիեզերքը Աստուծոյ մարմինն է եւ իր Որդին՝ Քրիստոսն է: Քրիստոս ամէնուն մէջ ներկայ է եւ միականութիւնը եւ լիութիւնը կը ներկայացնէ: Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցածը աս էր: Ան բնաւ խտրութիւն չդրաւ ոչ Սամարացի կնոջ, ոչ Հրովմէացի հարիւրապետին, ոչ Հրեային եւ ոչ ալ «Տեթանոս»-ին միջեւ: Իսկ մենք (իբր Քրիստոնեայ) եթէ իսկապէս Յիսուս Քրիստոսի կը հետեւինք, ինչո՞ւ խտրութիւն կը դնենք մարդոց եւ կրօնքներու միջեւ: Ինչպէս վերեւ գրուած է, ի՞նչ է կրօնքին անպատեհութիւնը: Երբ մարդ արարած ինքզինք կը համարէ որոշ կրօնքի մը պատկանող անձ, զատողութիւն է որ կը յառաջացնէ: Երկուութիւնը՝ զատողութիւնը խաւարամտութեան հետեւանք է: Ծշմարտութիւնը այն է թէ ամէն ինչ մէկ է: Միթէ չէ՞ գրուած. «Ես եմ Ալֆան եւ Օմէղան», այսինքն «Առաջինն եւ Վերջինը»: Ան, որ առաջինը եւ վերջինն է, ամէն բան է: Երբ մարդ կը սկսի իր կրօնքին եւ այլ կրօնքներու միջեւ զատողութիւն դնել, շուտով կը սկսի իր կրօնքն ալ տարբեր տարբեր զատ մասերու բաժնել: Ինչո՞ւ չէ: Մարդ միշտ իր վարժուած բնոյթին

Համաձայն կը գործէ: Եթէ իր բնոյթը գատողութիւն կը յառաջացնէ, ինք ալ ամէն ինչ կը սկսի գատել: Նման բնոյթ մը «Ես»-էն կը ծագի: Ծիշդ այս պատճառով Յիսուս բազմիցս կրկնեց ու սորվեցուց «Ես»-ը անտեսել: Այս հասկացողութեամբ մարդիկ աշխարհն ալ բաժնած են զանազան ազգերու, զանազան լեզուներու եւ զանազան երկիրներու: Քրիստոնեայ կրօնքը հիմնուեցաւ Նիկիոյ մէջ: Կարճ ժամանակէ մը վերջ պատահեցաւ Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիներու բաժանումը: Իսկ Միջնադարեան շրջանին Մարթին Լութէրի (Martin Luther) կազմած «բողոքական» եկեղեցիէն վերջ բաժանումները ալ աւելի արագ ընթացան: Նամանականը վերջին հարիւր տարուայ ընթացքին հազարաւոր «Քրիստոնեայ» յարանուանութիւններ, աւելի ճիշդը աղանդներ, գոյացած են: Արդեօք ա՞ս էր Յիսուսի սորվեցուցածները: Արդեօք մարդ արարած ե՞րբ պիտի արթննայ իր հոգեկան թմբիւրէն: Պարտ ենք սորվիլ Յիսուսի սորվեցուցածները եւ պարտ ենք ըլլալ Աստուածասէր եւ Աստուածապաշտ, ոչ թէ կրօնասէր եւ կրօնապաշտ: Այլուր գրուած է, թէ ինչ է Աստուածապաշտութիւնը եւ Աստուածասիրութիւնը: Պարտ ենք յարգել այլ կրօնքները: Անոնք, որոնք տարբեր կրօնքներու հանդէպ որոշ հետաքրքրութիւն ունին, պէտք է ազատ զգան զանոնք ուսումնասիրել: Իսկ եթէ հասկնան անոնց մէջ թագնուած իմաստասիրութիւնները, բայց ոչ հարեւանցի, մակերեսային հասկացողութեամբ մը, պիտի տեսնեն, թէ անոնք ալ կը քարոզեն նոյն իմաստասիրութիւնները, այն ինչ որ Յիսուս սորվեցուց: Բայց «Ես»-ը՝ սատանան խորամանկ է եւ խաբեբայ: Եթէ այլ կրօնքներ ուսումնասիրենք, ան մեզի կու տայ մեր կրօնքին դաւաճանած ըլլալու գաղափարը եւ դժոխք երթալու վախը: Այդ ազգեցութեամբ ան կը յաջողի մեր միտքերը գոցել: Գոց միտքով ալ մարդ

անկարող կ'ըլլայ նոյնիսկ իր պատկանած կրօնքին մէջ
թագնուած իմաստասիրութիւնները հասկնալ: Ան մի-
այն մակերեսային հասկացողութեամբ մը կ'ապրի իր
կեանքը, աւելի ճիշդ է ըսել, հոգեւոր յառաջացման
մէջ, կը վատնէ իր կեանքը: Ժողովրդային ասացուած-
քը կ'ըսէ. «Մարդու միտքը նման է անկարգելի (parachute),
եթէ չբացուի օգուտ չունի»:

Ի՞նչու բոլոր կրօնքները իրենց առաքելութեան
մէջ ձախողած են: Որովհետեւ, դժբախտաբար, կառա-
վարութիւններ, իմբալիններ եւ անհատներ, շահագործե-
լով ամբոխներու խաւարամտութիւնը, խաբած են
ընդհանուր ժողովուրդը օգտագործելով կրօնքներուն
խեղաթիւրուած եւ մակերեսային մեկնաբանութիւնը
եւ այդ մեկնաբանութիւնն ալ ներկայացնելով որպէս
ճշմարտութիւն: Այս ձեւով իրենց համար կարելի եղած
է ընդհանուր մարդկութիւնը աւելի դիւրաւ կառավա-
րել, գանոնք իրենց անձնական շահերուն համար օգտա-
գործել եւ ստրուկի նման գործածել:

Պարտ ենք խաւարամտութիւնը վանել, մեր միտ-
քերը «բանալ» եւ ջանք չխնայել ու յարատեւ պրպտել
մինչեւ որ գտնենք եւ հասկնանք մեր ճշմարիտ վար-
դապետին՝ Յիսուսի սորվեցուցած բոլոր իմաստասիրու-
թիւնները ինչպէս նաեւ կատարելութեան ուղին եւ
չչեղիլ այդ ուղիէն ու կերտել համապատասխան
կենցաղ մը: Այս ուղղութեամբ մարդուն ամենամեծ
թշնամին իր «Յս»-ն է: «Յս»-ը կը քանդէ մարդուն խիղ-
ճը ու անհատին կատարելութեան ուղիին մէջ յառաջաց-
ման արգելք կ'ըլլայ եւ անոր հոգեկան կործանումին
ճամբան կը բանայ: Յիսուսի սորվեցուցած կենցաղը՝
կատարելութեան ուղին, պէտք է ըլլայ մեր «կրօնք»-ը,
այսինքն հասկնալ մեր պատասխանատուութիւնները
եւ մեր պարտականութիւնները ու գանոնք լաւագոյնս
կատարել: Մանուկները եւ պատանիները պարտ են յար-

գել երէցները, իրենց ծնողքը եւ իրենց ուսուցիչները, եւ գերազանցել ուսման մէջ: Զօրաւորները պարտ են պաշտպանել տկարները, իսկ ուսեալներն ալ՝ ընկերութիւնը առաջնորդել դէպի բարգաւաճում, ինչպէս նաեւ դէպի կատարելութեան ուղին: Ճշմարիտ «կրօնք»-ը Աստուծոյ ձգտիլ եւ Աստուծոյ հետ ըլլալն է: Աստուած ներկայ է հոն, ուր սէրը գոյութիւն ունի: Աստուած ներկայ է հոն, ուր մարդկայնականութիւնը եւ յարգանքը գոյութիւն ունին: Աստուած ներկայ է հոն, ուր թէ՛ բնութեան եւ թէ՛ անասուններու հանդէպ սէր, հոգատարութիւն եւ կարեկցութիւն գոյութիւն ունին: Աստուած ներկայ է հոն, ուր անձնուիրում կայ: Նման «կրօնք»-ի մը հետեւիլ կը նշանակէ կեանքը վերածել շարունակական «աղօթք»-ի մը՝ միտքը կեդրոնացած միշտ ներկային վրայ, որ յաւիտեան է, ինչպէս նաեւ Քրիստոսի վրայ, որ անձին ճշմարիտ էութիւնն է: Սէրը, հաւատքը, վստահութիւնը եւ համբերութիւնն ալ կ'ըլլան անհատին իր կեանքին ընթացքին կերտած առաջնակարգ առաքինութիւնները, ինչ որ Աստուած գտնելու ճամբան կը բանայ: Երբ մարդ Աստուծոյ կը «նայի» առանց որեւէ ուրիշ շահագոգութեան, կ'անդրադառնայ թէ Աստուած ալ միշտ իրեն կը նայի: Երբ անձը իր անհատականութեամբ կը նուիրուի իր ներքին Քրիստոսին, միշտ Աստուծոյ օգնութեան կ'արժանանայ՝ առանց որեւէ ծիսակատարութեան: Երբ անձը իր հաւատքը կը դնէ իր ներքին Քրիստոսին վրայ առանց որեւէ վարանումի, Աստուած ալ իրեն կը յայտնէ իր կեանքին նպատակը՝ իր պատասխանատուութիւնները եւ իր պարտականութիւնները: Այդ հաւատքը ան է, թէ Աստուած է մեր կեանքերուն մէջ միակ գործողը, ամէն մի պատահարին եւ կացութեան ստեղծիչը, գոյատեւեցնողը եւ դադրեցնողը: Այս հիման վրայ մարդն ալ կը հասկնայ Երրորդութեան իմաստը: Ի՞նչ է այդ նուիրումը: Մար-

դուն Աստուծոյ տալիք ամենայարգելի նուէրը ճշմարիտ ապաշխարութեան արցունքի մը կաթիլն է: Ահա՛, աս է ճշմարիտ պաշտամունքի նշանը: Երբ անձը իր անհատականութիւնը Քրիստոսի կը նուիրէ, պարտ է զոհած ըլլայ յոխորտանքը, ինքնահաւանութիւնը, սնապարծութիւնը, բարկութիւնը եւ ազահութիւնը ու ձերբազատուած այս բոլորէն: Այս ուղղութեամբ ներողամտութիւնն ալ կարեւոր է: Ներել կարելի է երբ դիմացինը դատաստանի չենք ենթարկեր: Կարեւորը կրօնքը չէ, այլ՝ մարդուն բռնած դիրքը՝ իր կենցաղը, որ կ'ըլլայ Յիսուսի սորվեցուցած ճշմարիտ «կրօնք»-ը: Մարդ այնպէս է ինչպէս ինք ուրիշները կը «տեսնէ»: Մարդ, առանց անդրադառնալու, թէ՛ ինքն իրեն եւ թէ՛ ուրիշներուն յանցաւոր եղած ըլլալու զգացումը կու տայ: Ներողամտութիւնը անհատին իր «Ես»-ը անտեսած ըլլալու փաստն է: Ահա՛, աս է փրկութեան ճամբան: Եւ ի՞նչ է փրկութիւնը: Ան Աստուծոյ հետ ըլլալն է: Մարդ որքան իր անհատականութիւնը Աստուծոյ՝ ներքին Քրիստոսին կը մօտեցնէ ինք ալ նոյնքան դրախտին կը մօտենայ: Իսկ երբ անհատականութիւնը հեռանալով Քրիստոսէն կը յարի «Ես»-ին, ինք ալ կ'ըլլայ դժոխքին մէջ: Երկիրքը՝ դրախտը Աստուծոյ հետ մէկ ըլլալն է: Երբ միականութենէ կը հեռանանք դժոխքին կը մօտենանք:

Մարդ, Աստուծոյ իրեն շնորհած իմացականութիւնը պարտ է պատշաճ կերպով գործածել: Պարտ է Աստուածաբանութիւն ուսումնասիրել եւ Աստուծոյ եւ կեանքի նկատմամբ գիտութիւն ամբարել: Բայց եթէ ինք անձնապէս ճշմարտութեան փորձառութիւնը չունենայ, բոլոր ստացած գիտութիւնները անօգուտ կ'ըլլան: Ինք պէտք է հասկնայ, թէ այս աշխարհը պատրանք մը՝ երազ մըն է: Երբ ինք փորձառութիւնը կ'ունենայ ներքին Քրիստոսի Լոյսին միայն այն ատեն խաւարամտութիւնը կ'անհետանայ եւ ինք ալ կը ցոլացնէ այդ Լոյսը:



ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Բ



«ԵՍ»-Ը

Երբ «Մարմարա» օրաթերթի 12 Յունուար 2015 Երկուշաբթի օրուայ թիւին մէջ «Մարդը իր «Ես»ին հետ գլուխ գլխի» խորագրեալ յօդուածը կարդացի, որոշեցի այս յօդուածը գրել: «Մարմարա»-ի յօդուածին մէջ մէջբերումներ կային Լիբանանահայ բանաստեղծ Խաչիկ Տէտէեանի «Իմ երկրորդ կէսը» խորագրեալ բանաստեղծութենէն, ինչպէս նաեւ Իրանահայ բանաստեղծ, ողբացեալ Գալուստ Խանենցի «Հարցազրոյց եսիս հետ» խորագրեալ բանաստեղծութենէն: Կը փափաքիմ այդ երկու քերթուածներէն մէջբերումներ կատարել ու զանոնք վերլուծման ենթարկել:

ԻՄ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԸ

«Գտնել իմ միւս կէսը խորհրդաւոր
Իմ երազները ու տագնապները
Հաւատքն ու գալիքը պատկերող՝
Նշանաւոր միւս եսը:

...

Կտորած Հայելիին փշուրներուն մէջ
Կը տեսնեմ բազմերես եսերս

...

Պիտի միանան բոլոր բեկորները
Ու ես դառնամ կրկին ամբողջական
Գլխագիր ու մէկ Հատիկ ես մը
Որ Հայելիին կը նայի որոշ
Ու իր անձը կը տեսնէ Հարազատ»:

Խաչիկ Տէտէեան

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԵՍԻՍ ՀԵՏ

- «Ինչո՞ւ է չես պարում երբ ես նուագում եմ:
- Որովհետեւ դու միշտ ալ անժամանակ ու սխալ ես նուագում:
- Ինչո՞ւ է դուն արթուն ես երբ ես քնած եմ:

- Որովհետեւ դու միշտ ալ քնած ես:
- Ասա, դու ե՞րբ պիտի ծիծաղես:
- Ես ծիծաղում եմ երբ դու անդիմակ ես:
- Ասա դու ի՞նչ ես սիրում:
- Ես սիրում եմ անկարելի բաներ: Դու ոտքերդ դնում ես Հողի վրայ, ես քայլում եմ նիւթից դուրս: Դու ապրում ես Հացով ու ջրով, ես ապրում եմ ալիքներով ու բանով»:

Գալուստ Խանենց

Այս երկու բանաստեղծութիւններուն մէջ շատ յատկանշական կէտեր կան: Գրութիւնները ներկայացուած են «ամէն անհատ երկու ես ունի» հասկացողութեամբ. ընդհանուր առմամբ մին գլխագիրով, իսկ միւսն ալ փոքր գիրով գրուած: Օտար գրութիւններու մէջ ալ յաճախ հանդիպած եմ երկու «ես»-երու: Այդ գրութիւններուն մէջ ալ «Ես»-ը գլխագիր «Ե»-ով գրուած է երբ ակնարկութիւնը անհատականութեան դրական բեւեռին՝ հոգիին՝ ճշմարիտ էութեան՝ ներքին Քրիստոսին է, իսկ «ես»-ը գրուած է փոքր «ե»-ով, երբ ակնարկութիւնը անձին անհատականութեան ժխտական բեւեռին՝ անկեալ «Լուսաբեր հրեշտակ»-ին՝ սատանային է (ego): Կը խորհիմ, թէ մարդիկ Քրիստոս բառը գործածելէ խուսափելու համար այդպէս կ'արտայայտուին: Որովհետեւ իրենց միտքերուն մէջ Քրիստոս եւ Յիսուս նոյնացած են: Մինչդեռ Քրիստոս Աստուծոյ որդին է եւ ամէն մի անհատի հոգին՝ էութիւնը: Յիսուս իբր մարդ, իր անձին մէջ Քրիստոսը ի յայտ բերաւ եւ ըսաւ թէ մենք ալ նոյնը կարող ենք ընել: Միթէ Աւետարանին մէջ Յիսուսի համար «Որդի մարդոյ» չէ՞ գրուած: Արդեօք կարելի՞ է Աստուած մեռցնել: Յիսուս մարդն էր, որ խաչին վրայ մեռաւ եւ որպէս Յիսուս Քրիստոս յարութիւն առաւ: Չորս Աւետարաններուն մէջ Յիսուսի համար 82 անգամ «Որդի մարդոյ» ասոյթը գործածուած

է, իսկ Գործք Առաքելոցին մէջ մէկ անգամ եւ Յայտնութեան մէջ ալ՝ երկու անգամ: Յիսուս իրեն համար միշտ «Որդի մարդոյ» ըսած է: Իսկ «Աստուծոյ Որդի»-ն չորս Աւետարաններուն մէջ 25 անգամ, մէկ անգամ Գործք Առաքելոցի եւ մէկ անգամ ալ Յայտնութեան մէջ գործածուած է: Ուրիշներն են, որ Յիսուսի համար «Աստուծոյ Որդի» ըսած են: Իբրեւ օրինակ.

«... նոյնպէս է- որդի՝ մարդոյ շարշարելո՛ց Ե ՚ի նոյնանէ»: (Մարգէնոս ԺԷ:12)

«... նոյնպէս ալ մարդու Որդին պիտի չարչարուի անոնցմէ»:

«... ասէ ցնոսա Յիսուս. Մարնելո՛ց Ե որդի մարդոյ ՚ի Յեոս մարդկան, է- ապանցէն Կնա, է- յերիբ ա-ո-ր յարիցէ՛»: (Մարգէն ԺԷ:21-22)
«... Յիսուս ըսաւ անոնց. «Մարդու Որդին պիտի մատնուի մարդոց ձեռքը՝ ու պիտի սպաննեն զինք. բայց յարութիւն պիտի առնէ երրորդ օրը»:

«... Երտարէ- որդի Լսարո-ժոյ էս դոս-»: (Մարգէնոս ԺԴ:33)

«... ճշմարտապէս դուն Աստուծոյ Որդին ես»:

«... ապրեցո՛ւ Կէեւ, Դէ որդի էս Լսարո-ժոյ՝ Եջ ՚ի խաշէդ»: (Մարգէնոս ԻԷ:40)

«... փրկէ՛ դուն քեզ: Եթէ Աստուծոյ Որդին ես՝ իջի՛ր այդ խաչէն»:

Ես իմ բոլոր գիրքերուս եւ յօդուածներուս մէջ մարդուն անհատականութեան երկու բեւեռները ներկայացուցած եմ իբրեւ դրական բեւեռ՝ Քրիստոս եւ Ժիստական բեւեռ «Ես»-ն ալ, դարձեալ գլխագիրով գրած եմ, այն ինչ որ ուրիշներ փոքր «ե»-ով գրած են: Մարդուն մարմինը Աստուծոյ տաճարն է եւ մարդուն հոգին ալ Աստուծոյ որդւոյն՝ Քրիստոսի այդ տաճարին՝ մեր մէջ ներկայութիւնն է:

Կը խորհիմ վերոյիշեալ բանաստեղծութիւններուն

հակիրճ վերլուծումները կատարել:

Տէտէեան այդ «Ես»-ը կը համարէ «խորհրդաւոր» ինչպէս նաեւ «նշանաւոր»: Այդ «Ես»-ը նաեւ կը թուի գիտակից ըլլալ մեր «երազներուն», «տագնասպներուն», «հաւատքին» եւ «գալիքին», այսինքն ապագային: Ուրեմն բանաստեղծին ակնարկութիւնը մեր ներքին Քրիստոսի համար է, որով այդ «Ես»-ը գլխազիրով պէտք է գրուի: Միթէ Քրիստոսի մեր մէջ ներկայութիւնը չէ՞ որ մեզի կու տայ մեր կեանքը եւ Աստուծոյ անհուն գիտակցութեան մէկ մասնիկը: Տէտէեան այդ կոտրուած հայելիին բեկորներով կ'ուզէ ներկայացնել մեր կեանքի բազմապատիկ ու իրարմէ տարբեր փորձառութիւնները: Բանաստեղծը հայելին գործածած է փոխաբերական իմաստով, որ կը ներկայացնէ մարդուն միտքը: Բազում կտորներու բաժնուած հայելին կը ներկայացնէ բազում խորհուրդներով զբաղ միտքը, որով անձը կարող չէ ճշմարտութիւնը՝ «իր Ես-ը»՝ Քրիստոս պատշաճ կերպով տեսնել: Երբ Տէտէեան կը գրէ. «պիտի միանան բոլոր բեկորները Ու ես պիտի դառնամ կրկին ամբողջական», ըսել կ'ուզէ, թէ երբ միտքը ողողող բոլոր խորհուրդները դադրին, միտքն ալ պիտի ըլլայ մէկ եւ «ամբողջական», այսինքն կեդրոնացած միայն իր «Ես-ին»՝ Քրիստոսի վրայ եւ հասկնայ բոլորին միականութիւնը: Միայն այն ատեն է որ մարդ կարող պիտի ըլլայ տեսնել իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, որ կը նշանակէ Զայն յայտնաբերել:

Իսկ Խանենցին բանաստեղծութիւնը կը թուի նոյն-իսկ ալ աւելի բացայայտ ներկայացնել նախորդ տողերուն մէջ յիշուած ճշմարտութիւնը: Որովհետեւ մարդ ընդհանուր առմամբ դէպի իր «Ես»-ին (ժխտական բեւեռին) կը յարի եւ անոր կամքն է որ կը կատարէ: Կը թուի թէ իր բոլոր արարքներն ալ «անժամանակ եւ սխալ» կը «նուագէ»: Բանաստեղծը նաեւ կը գրէ. «Որով-

Հետեւ դռն միշտ ալքնած ես»: Այն ինչ որ մենք արթուն գիտակցութեան մակարդակ կը համարենք, քունի ու երագի տարբեր մակարդակ մըն է: Աւետարանին մէջ գրուած «յափշտակութիւնը» այս «քունի» մակարդակէն արթննալ եւ Քրիստոսի բարձր գիտակցութեան մակարդակին հասնիլն է, որ անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնն է: Երբ բանաստեղծը կը գրէ. «Ես ծիծաղում եմ երբ դու անդիմակ ես:», ինք ըսել կ'ուզէ Քրիստոս կը յայտնուի (ծիծաղում եմ) երբ մենք մեր «Ես»-էն ձերբազատուած ենք (անդիմակ ենք): Երբ Քրիստոս մեր մէջ յայտնուի մենք ալ կը կարողանանք ընել «անկարելի բաներ»: Երբ բանաստեղծը կը գրէ. «Դուն ոտքերդ դնում ես Հողի վրայ», կ'ուզէ ըսել, թէ մենք աշխարհին է որ կապուած ենք: Իսկ Քրիստոս «նիւթից դուրս», այսինքն նիւթին՝ աշխարհին չէ կապուած: Մարդ կ'ապրի «Հացով ու ջուրով», որովհետեւ նիւթականին հետ նոյնացած է: Իսկ Քրիստոս կ'ապրի «ալիքներով ու բանով»: Ալիքները զօրութիւնը կը ներկայացնեն, որովհետեւ ամէն զօրութիւն ալիք մըն է եւ որոշ յաճախականութիւն ալ ունի: Իսկ «Բան»-ն ալ Աստուծոյ խօսքը՝ Աստուծոյ զօրութիւնը՝ Ս. Հոգին է: Միթէ Յիսուս ալ անապատին մէջ 40 օր Աստուծոյ «Բան»-ով՝ Ս. Հոգիի զօրութեամբ՝ երկնային մանանայով չապրեցա՞ւ:

«Ես»-ը լաւ հասկնալու համար պարտ ենք նախ ստեղծագործութեան նպատակը լաւ հասկնալ եւ մարդուն կազմուածքը՝ ծառայելու այդ նպատակին: Այս ուղղութեամբ տես նաեւ «Զարթօնք» գիրքիս առաջին գլխուն վերջաւորութեան «Մարդկային Բնութիւնը» բաժինը (էջ 80), ինչպէս նաեւ «Տիեզերական Օրէնքները» գիրքին «Մարդակազմութիւն» խորագրեալ առաջին գլուխը (էջ 35): Մարդ կազմուած է հինգ տարրերէ: Անոնք են. «պինդ նիւթ», այսինքն հող, «ջուր», «օդ», «կրակ» եւ «էթեր»:

Առաջին տարրը անհրաժեշտ է մարդուն մարմինը կազմելու համար: Միթէ մարդուն մարմինը հողէն եկած չէ՞: Միայն մարդու միջոցով է, որ նիւթը՝ հողը՝ աշխարհը կարող է Աստուած պաշտել: Երկիրը լի է բազմաթիւ յատկութիւններով: Ան առանց խտրութեան իր բարիքները մարդուն կու տայ՝ ապահովելով անոր գոյատեւումը: Հետեւաբար ան մօր մը յօժարակամութիւնը եւ գուրգուրանքը կը ներկայացնէ: Միթէ անգլերէնի մէջ չէ՞ն ըսեր. «mother earth»: Այդ գուրգուրանքը մեզի յառաջդիմութեան առիթը կու տայ: Անտարակոյս նիւթը մարդուն Ֆիզիքական մարմինը կը կազմէ:

Երկրորդ տարրը՝ «ջուր»-ը, անհրաժեշտ է մարմնի հաւասարակշռութիւնը եւ առողջութիւնը պահելու համար: Ջուրը կեանք է: Ճիշդ ասոր համար ալ Աւետարանին մէջ ջուրը յաճախ փոխաբերաբար գործածուած է ներկայացնելու համար Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը: Միթէ արիւնն ալ, որ կեանքի գոյատեւումը կ'ապահովէ, հեղուկ չէ՞, մեծամասնութեամբ ջուր չէ՞: Միթէ մարմնին 70%-ը ջուր չէ՞: Մարդ պարտ է իր էութեան հաւասարակշռութիւնը պահել եւ նայիլ որ ան չխանդարուի: Աս կը կարօտի նաեւ պատշաճ մարզանքի, խոհեմութեան եւ անապականութեան: Յիսուսի փոթորիկը դադրեցնելու արարքէն յայտնի է, թէ ջուրի ալիքներու փոթորիկին փոխաբերական իմաստը անհատին զգացումներուն յառաջ բերած փոթորիկն է, հետեւաբար անհատը պարտ է զանոնք հաւասարակշռեալ պահել՝ ժխտականները զսպել եւ դրականներն ալ կերտել՝ յառաջացնել: Դրականներն են սէր, գութ, ներողամըտութիւն ...: Այս տարրը անհատին զգացական «մարմինը» կը կազմէ, որ իր մտային «մարմնին» մէկ մասն է:

Երրորդ տարրը «օդ»-ն է, որ կեանքի գոյատեւման համար անհրաժեշտ է: Ըստ Յիսուսի վերեւ յիշուած արարքին, օդին հովերուն փոթորիկին փոխաբերական

Իմաստն ալ խորհուրդներուն փոթորիկն է: Հետեւաբար երրորդ տարրը պէտք չէ որ ուժգին ըլլայ: Խորհուրդները պարտ են զսպուել: Օդը պէտք չէ տկար, ինչպէս նաեւ՝ ապականած ըլլայ, ապա թէ ոչ մարմինը իր հաւասարակչուութիւնը կը կորսնցնէ եւ հիւանդութիւններն ալ մեզ կը գտնեն: Այս տարրը անհատին մտային «մարմնին» երկրորդ՝ խորհուրդներուն մասը կը կազմէ: Մարդուն մտային մարմնին ամբողջութիւնը սերտ կապ ունի իր Ֆիզիքական մարմնին հետ, որով ան կը գործէ թէ՛ ուղեղի եւ թէ՛ ալ սրտի միջոցաւ:

Չորրորդ տարրը «կրակ»-ն է, որ կը ներկայացնէ տաքութիւնը, լոյսը եւ փոխաբերաբար ալ՝ գիտութիւնը: Ինչպէս մոմին բոցը կրակ է, տաքութիւն եւ լոյս կը սփռէ, նմանապէս մարդն ալ կարող է «տաքութիւն»՝ Աստուածային սէրը եւ Քրիստոսի Լոյսը սփռել: Այս տարրը անհատին զօրութեան «մարմինը» կը կազմէ եւ իր անհատականութեան վայրն է: Այս մարմինն ալ սերտ կապ ունի առաջին երկու մարմիններուն հետ, բայց նաեւ սերտ կապ ունի մարդուն հոգիին՝ յաջորդ տարրին հետ: Միայն մարդն է որ ինքնագիտակցութիւն կրնայ կերտել, ինչպէս նաեւ հասնիլ Աստուածային գիտակցութեան: Անհատին համար ինքնագիտակցութիւնը ճանչնալ է իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, ինչպէս նաեւ հասկնալ, թէ ինք հինգերորդ տարրին՝ Ս. Հոգիի մէկ արտայայտութիւնն է:

Հինգերորդ տարրը «եթեր»-ն է: Եթերը՝ «միջոց»-ը՝ Ս. Հոգիի զօրութեան գտնուած վայրն է, հետեւաբար Ս. Հոգիի ներկայութիւնն է: Ան մարդուն կու տայ իմաստութիւն՝ անոր մտքին եւ սրտին միջոցաւն ալ՝ խիղճ: Ան Քրիստոսի ներկայութիւնն է եւ մարդը կ'առաջնորդէ դէպի կարեկցութիւն, ներողամտութիւն, խաղաղութիւն, որպէս ամփոփում՝ խաւարամտութենէ դէպի լոյս ու գիտութիւն: Եթերը բոլոր ստեղծագոր-

ծուծիւնը իր մէջ կը պարունակէ եւ միանգամայն ստեղծագործութեան մէջ ամենուրեք է: Այս հիման վրայ բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմինը» կը ներկայացնէ: Ուրեմն մենք ալ թէ՛ Աստուծոյ մէջ ենք եւ թէ՛ ալ Աստուած մեր մէջն է: Ս. Հոգիի՝ Աստուծոյ այդ ներկայութիւնը մեր մէջ Քրիստոսն է, Աստուծոյ Որդին: Մեզի ալ կը մնայ մոմին նման, որ ինք սպառելով իր բոլորտիքը լոյս կը սփռէ, մեր «Ես»-ը սպառելով մեր բոլորտիքը Քրիստոսի Լոյսը սփռել:

Ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է եւ մարդն ալ ստեղծագործութեան մէջ կը թուի այդ Աստուածայայտնութեան միջոցը ըլլալ: Ճիշդ այս նպատակով ալ Աստուծոյ կատարած ստեղծագործութեան վերջին արարքը մարդուն անհատականութիւն տալ եղաւ: Ուրեմն մարդուն անհատականութիւնը միջոցն է Աստուածայայտնութեան: Առաւօտեան աստղը՝ Արուսեակն է, որ կ'աւետէ լոյսին՝ արեւին գալուստը՝ ծագումը: Նմանապէս մարդն ալ իր անհատականութեամբ կ'աւետէր եւ պարտ է աւետել եւ իրականացնել Քրիստոսի յայտնութիւնը: Ս. Գիրքին մէջ Լուսաբեր հրեշտակը փոխաբերաբար ներկայացուած է նաեւ իբրեւ «առաւօտեան աստղը», որ կ'աւետէր Քրիստոսի գալուստը՝ յայտնութիւնը (տես նաեւ «Լոյս Ի Լուսոյ» գիրքի «Աստղագիտութիւն» խորագրեալ գլուխը՝ էջեր 242-244): Մարդուն մարմինը Աստուծոյ տաճարն է, իսկ իր անհատականութիւնն ալ Աստուծոյ գահը: Լուսաբեր կ'աւետէր Քրիստոսի Լոյսին գալուստը: Ճիշդ ասոր համար ալ կոչուած էր Լուսաբեր, այսինքն լոյսը բերող: Ուրեմն Լուսաբեր պէտք էր ըլլալ մարդուն «Ես»-ը (այս անգամ գրուած գլխագիր «Ե»-ով): Բայց ըստ Ս. Գիրքին, Լուսաբեր ուզեց նստիլ Աստուծոյ գահը, այսինքն կառավարել մարդուն անհատականութիւնը, քան թէ ինք միայն աւետէր Քրիստոսի յայտնութիւնը

մարդուն մէջ: Ուժգին եղաւ իր անկումը (այս անգամ շատերու կողմէ «ես»-ը գրուած է փոքր «ե»-ով): Լուսաբեր իր անկումէն ետք նաեւ կոչուած է սատանայ: «Ես»-ը՝ սատանան ալ մարդը մղած է խաւարամտութեան մէջ սահմանափակելով անոր գիտակցութեան մակարդակը՝ պատրանքը ներկայացուցած է իբր ճշմարտութիւն: Մարդն ալ իր ցած գիտակցութեան մակարդակով, մոռցած է իր մէջ գանձի մը գոյութեան ներկայութիւնը, որովհետեւ իր Ֆիզիքական մարմնի հինգ զգայարանքներն ալ իրեն կու տան միայն արտաքին աշխարհէն տեղեկութիւններ: Խոկումին նպատակը գիտակցութեան մակարդակի բարձրացումով այդ գանձին փորձառութիւնը ունենալ է: Խոկումը զօրաւոր կամքի, հաւատքի, եւ յարատեւութեան կը կարօտի, որովհետեւ «Ես»-ը ամէն տեսակի նենգութիւն ու խաբէութիւն կ'օգտագործէ որպէսզի Աստուծոյ գահէն վար չիջնէ: Ան կը յառաջացնէ եսասիրութիւնը, որմէ ծագում կ'առնեն բոլոր մահացու մեղքերը եւ մասամբ սոցին: «Ես»-ին կառավարած մարդկային կենցաղը ամենեւին մնայուն երջանկութիւն չի կրնար տալ: Այս հիման վրայ մարդն ալ միշտ կ'ենթարկուի դժգոհութեան, անհաճոյ ու անհանգիստ կացութիւններու, խռովութիւններու, անձկութիւններու, մտահոգութիւններու, ընկճումի ...:

Բայց երբ մարդ կը կարողանայ անտեսել իր «Ես»-ը, ինչպէս Յիսուս յանձնարարեց, չ'ազդուիր վերոյիշեալ անբաղձալի զգացումներէն: Ինք բազմաթիւին մէջ միականութեան փորձառութիւնը կ'ունենայ: Ինք կը դառնայ գործիք մը ի ձեռն Աստուծոյ ու կ'ըլլայ կարեկից եւ գթասիրտ՝ հանդէպ բոլորին: Ինք կը ցուցնէ Աստուծոյ պատկերը՝ Լոյսը եւ կամքը: Աստուծոյ այս կեանքին մէջ իրեն տուած պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը լիովին կը կատարէ՝ առանց

վարանումի: Կը ցոլացնէ Աստուծոյ սէրը, որ ամենէն կարեւորն է: Աշխարհի վրայ ամենասուրբ եւ ամենաբարեպաշտ զգացումը սէրն է, որովհետեւ սէրէն կը ծագին հաւատք, վստահութիւն եւ նուիրում: Մարդուն կեանքին մէջ սէրը կը յայտնուի զանազան կերպարանքներով: Ան մօր մը եւ իր զակին միջեւ խանդաղատանք է: Աստուծոյ եւ անհատի մը միջեւ նուիրում է: Այր եւ կնոջ միջեւ յարգանք է: Քոյր եւ եղբօր միջեւ վստահութիւն է: Հրապուրուիլ եւ սիրել իրարմէ շատ տարբեր են: Հրապուրուիլ առաջին քայլ կրնայ ըլլալ նոյնիսկ սիրելուն մէջ, բայց ուշագիւր պէտք է ըլլալ, որովհետեւ հրապուրուիլ կը նշանակէ կապուիլ: Ան մեզ աշխարհին կը կապէ: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ես աշխարհին մէջ եմ բայց չեմ յայտնաւորուիլ»: Յիսուս աշխարհին չէր կապուած, հետեւաբար կարող էր Աստուծային սէրը ցոլացնել: Նման սէր կը ծագի նուիրումէ, սակայն կապուածութիւնն ալ նուիրումին արգելք կը հանդիսանայ: Առանց սիրոյ կեանքը «անհամ» ու անօգուտ կ'ըլլայ: Սէրը Աստուծոյ աներեւոյթ ներկայութիւնն է: Միթէ չե՞նք ըսեր. «Աստուած սէր է»: Սէրը կեանքին գոհունակութիւն կու տայ: Մարդ ծնած օրէն մինչեւ մահ սէրով կ'ապրի: Չկայ որեւէ ուրիշ զգացում, որ սիրոյ համահաւասար ըլլայ: Սէրը իր մէջ կը պարունակէ գթասրտութիւն, գոհողութիւն ուրախութիւն, երջանակութիւն եւ երանութիւն: Սէրը կեանքն է:

Իսկ մենք մեր «Ես»-ին յառաջացուցած պատրանքային, խաբէական եւ հրապուրիչ աշխարհային ցանկութիւններով կը կապուինք մեր «Ես»-ին եւ աշխարհին, կ'ըլլանք եսասէր ու կ'անտեսենք ամենաբարեպաշտ Աստուծային սէրը եւ կը զրկուինք անոր տալիք բոլոր վե՛հ զգացումներէն:

Ահա՛, ճիշտ ասոր համար Յիսուս Քրիստոս բազմիցս յանձնարարեց անտեսել մեր «Ես»-ը:



ԻՔՐ ԶԱՐԴ

ՕՐԷ ՕՐ

ՃՐԱԳ ԱՆ,

ՊԱՀԷ ՎԱՊ՝

ՄՏՔԻՊ ԼԱՐ,

ԼՈՒԱՏՈՒ,

ՆՈՐԷԱ ԱՈՐ

ԿՐԱԿ ՏԱՐ

ԱՆԱՊԱՊ՝

ՄՐՏԻՊ ԼԱՐ,

ՅՈՒԱՏՈՒ:

ԿՈՒՐՏԱՆ ՎԱՐՊԱՄԵՏ



ԱՍՏՈՒԱԾ ԻՄ


ՄԻՐՈՅ ԱԵՐԱԸ ՁԱՏԵՅԻՐ,
ՀՐՈՅ ԶԵՐԱԸ ԴԱՏԵՅԻՐ,
ՀՈՊԻՆ ՇՈՒՆՉՊ ՓՉԵԼՈՎ՝
ՀՈԳԻ ԿԵԱՆՔԻ ԿԱԹԵՅԻՐ,

ԵՒ ԱՐԵՒԻ ԼՈՒԲԻՆ ԱՐՈՄԱԷՍ ԱՊԿԵՅԱԷ,
ԵՒ ԻՎ ՀՈԳԻՆ ՀՈԳՈՒԻ ՅՈՊՈՎ ՇԱՊԵՅԱԷ,
ԻՎ ԱՐՏԻԿԻ ԱԷՐՆ ՈՒ ԲՈՅԸ, ԱՐՐՈՅ ԽՈՅԸ՝
ԱՄՈՒԵՐԻ ԱԷԶ, ՈՐՊԷՍ ԿԱՅԾԱԿ ԱՎՀԵՅԱԷ:

ԿՈՄԻՏԱՍ ԱՐՐՈՒՄԵՏ

ԳԻՏԱԿՅՅՈՒԹԻՒՆ

Այսօր գիտնականները սկսած են գիտակցութիւնը նկատողութեան առնել եւ այդ ուղղութեամբ հետազոտութիւններ կատարել: Ժուլիօ Թօնինի (Giulio Tonini - International Relations Expert focused on European Union and Trade Law. Former Ambassador of Italy to OSCE in Vienna) հետեւեալը գրած է. «Knowing what consciousness is, and how it came about, is crucial to understanding our place in the universe and what we do with our lives», «Գիտակցութեան ի՞նչ ըլլալը եւ ուրկէ՞ գալը հասկնալ կարեւոր է, որպէսզի հասկնանք մեր տեղը տիեզերքի մէջ եւ նպատակը մեր կեանքին»: Թօնինիի «Intigrated information theory» գրութեան ազդեցութեամբ Դաւիթ Ռօպսօն (David Robson-a science journalist specialising in the extremes of the human brain, body and behaviour) հարց կու տայ, թէ արդեօք լուծումը պիտի գտնուի մաթեմատիկով, փիլիսոփայութեամբ, կամ թէ բժշկութեամբ: Ան կը ծանրանայ բժշկութեան եւ ուղեղին վրայ, նաեւ հարց կու տայ թէ արդեօք խեցդետինը գիտակցութիւն ունի՞ թէ ոչ: Ռօպսօնի «Are we close to solving the puzzle of consciousness?» խորագրեալ յօդուածը, որմէ վերելի մէջմերումները ըրի, պատճառ եղաւ որ այս յօդուածը գրեմ:



Այս նկարը Դաւիթ Ռօպսօնի (David Robson) յօդուածէն առնուած է:

Մարդ արարած կը կարծէ, թէ գիտակցութիւնը (consciousness) ուղեղային գործառնութիւն մըն է եւ ուղեղէն կը ծագի: Այս տեսակէտը կը հիմնուի այն իրողութեան վրայ, թէ երբ ուղեղին որոշ մէկ մասը վնասուի մարդն ալ իր գիտակցութիւնը կը կորսնցնէ եւ ոչ մէկ բանէ տեղեակ կ'ըլլայ: Այս կացութիւնը «թմբիր» (coma) կը կոչուի: Բոլոր կենդանիները որոշ գիտակցութիւն մը ունին, որով կարելի է ըսել, թէ անոնց գիտակցութեան մակարդակն ալ համապատասխան է իրենց ուղեղային որակին: Հետեւաբար, ուղեղը կը թուի գիտակցութեան պատճառը ըլլալ: Բոյսերը ուղեղ չունին, բայց կը թուի թէ անոնք ալ որոշ չափով գիտակցութիւն մը ունին, որովհետեւ անոնց տերեւները գիտեն դէպի արեւ դառնալ եւ արմատներն ալ՝ դէպի ջուր: Փոխակենսիկներն (amoeba) ալ, որոնք միաբջջային էակներ են, ուղեղ չունին, բայց գիտեն վտանգէ հեռանալ եւ դէպի սնունդ երթալ: Ուրեմն գիտակցութիւնը ուղեղին հետ սերտ կապ ունենալով հանդերձ կը թուի անկէ անկախ ըլլալ: Այս երկսայրը (dilemma) հասկնալու համար հետեւեալ փոխաբերութիւնը գուցէ օգտակար ըլլայ: Երբ ձայնասփիւռ (radio) մտիկ կ'ընենք, ձայնը՝ երաժշտութիւն կամ խօսակցութիւն, կը թուի ձայնասփիւռի տուփէն գալ: Երբ հոսանքը կտրենք կամ ձայնասփիւռը աւրուի, ձայնն ալ կը դադրի: Բայց աս չի նշանակեր թէ ուրիշ անձ մը, ուրիշ վայրի մը մէջ, ուրիշ ընկալուչով մը կարող չէ նոյն երաժշտութիւնը կամ խօսակցութիւնը ստանալ եւ ունկնդրել: Հետեւաբար մարդուն ուղեղը կը համապատասխանէ ձայնասփիւռին, իսկ ռատիոկայանէն սըփռուած ալիքներն ալ, որ երաժշտութեան կամ խօսակցութեան տեղեկութիւնը կը պարունակեն, կը համապատասխանեն գիտակցութեան: Ուրեմն երբ մարդուն ուղեղը վնասուի եւ անհատը թմբիրի մէջ է, կը

նշանակէ, թէ իր «ձայնասփիւռը»՝ ալիքները ստացող «գործիք»-ը, գիտակցութիւնը յայտնաբերելու կարող է: Բայց աս չի նշանակեր թէ գիտակցութիւնը գոյութիւն չունի: Ան գոյութիւն ունի, ինչպէս ռատիոկայանէն սփռուած ալիքները, եթէ նոյնիսկ ստացող ձայնասփիւռ չըլլայ, կամ ան չգործէ: Նմանապէս այդ անձն ալ կարող է յայտնաբերել գոյութիւն ունեցող գիտակցութիւնը: Մարդ կարող է ձայնասփիւռին ձայնի ուժգնութիւնը նուազեցնել կամ բարձրացնել եւ համապատասխան չափով յայտնաբերել երաժշտութիւնը կամ խօսակցութիւնը: Մարդն ալ երբ կը քնանայ իր գիտակցութեան յայտնութիւնը կը նուազեցնէ զանազան մակարդակներու: Երբ կ'ուզենք լաւագոյն եւ հաճելի կերպով ունկնդրել երաժշտութիւնը ակելի որակաւոր ձայնասփիւռ մը կը գնենք: Իսկ ճղճիմ արժաննոց ձայնասփիւռ մը կարելի է որ ձայն յայտնէ, բայց ընդհանուր առմամբ ան կ'ըլլայ տկար եւ խանգարուած (interference): Աս ալ կը համապատասխանէ ուղեղին որակին: Ճանճի մը գիտակցութիւնը տարբեր է թուունի մը գիտակցութենէն, ինչ որ տարբեր է շունի մը գիտակցութենէն, որ իր կարգին տարբեր է մարդու գիտակցութենէն: Ի բաց առեալ մարդէն, միւս բոլոր կենդանիներուն գիտակցութիւնը յայտնաբերելու կարողութիւնները առաջուց սահմանուած են եւ անոնք կարող չեն իրենց յայտնաբերած գիտակցութեան մակարդակը փոխել: Ինչ որ անզգամ նիւթ կը կոչենք, նոյնիսկ անոր ամէն մէկ հիւլէն իր ուրոյն գիտակցութեան մակարդակը ունի: Մարդը ունի առանձնաշնորհեալ ուղեղ մը եւ այդ ուղեղին միջոցաւ ալ իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակը փոխելու կարողութիւնը: Դժբախտութիւնը այն է, որ մարդն ալ, որեւէ ջանք չ'ըներ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու ու կ'ապրի նման անասուններուն՝ սահմանափակ գիտակցութեամբ:

Ի՞նչ են գիտակցութեան տարբեր մակարդակները եւ անոնք ինչի՞ կը ծառայեն: Նախ քննենք այն բոլորը, որոնք ընդհանուրի փորձառութեան ներքեւ են: Մարդ ամէն օր իր գիտակցութեան մակարդակը միշտ կը փոխէ: Այն ինչ որ մենք արթուն կը կոչենք, կը յայտնաբերէ որոշ գիտակցութեան մակարդակ մը: Նոյնիսկ այս «արթուն» կոչուած ու յայտնաբերուած գիտակցութեան մակարդակը անձէ անձ որոշ չափով կը տարբերի, նոյնիսկ նոյն անձին մէջ՝ տարբեր ժամանակներու: Երբ անհատը գիշերը կը քնանայ, իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակն ալ կը նուազի: Ճշմարտութիւնը այն է թէ երբ յայտնաբերուած գիտակցութեան մակարդակը նուազի ինքն ալ քունի մէջ կը մտնէ: Քունը զինք կը յափշտակէ: Քունի ընթացքին ան կը յայտնաբերէ գիտակցութեան զանազան մակարդակներ: Երբ ան կ'երազէ իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակը արթուն մակարդակէն աւելի ցած է: Այս մակարդակին, քանի որ ինք այլեւս գիտակից չէ արտաքին աշխարհէն՝ արտաքին աշխարհի հետ կապը խզուած է, առանց արտաքին աշխարհի տեղեկութիւններուն տուած խանգարումին, ինք տեղեկ կ'ըլլայ իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած յուշերուն, յուզումներուն ..., եւ անոնց ազդեցութեան տակ կը յօրինէ հաճելի կամ վախազդու պատմութիւն մը, ինչ որ երազ կը կոչենք: Երազներուն պատմութիւնը իր ստեղծագործութիւնն է եւ ինք ալ այդ երազին մասն ու բաժինն է: Բայց ինք երազին մէջ ըլլալով եւ երազին մէջ զանազան փորձառութիւններ ունենալով հանդերձ ինքզինք հոն չի տեսներ: Ինք երազին ստեղծիչն է: Երբ անհատը երազի մակարդակէն կ'անցնի աւելի ցած գիտակցութեան մակարդակի, ան այլեւս ոչ կը գիտակցի իր արթուն կոչած աշխարհին, ոչ ալ՝ իր ենթագիտակցութեան: Այս մակարդակը կը կոչենք «խորունկ քուն»-ի

գիտակցութեան մակարդակ: Մարդուն միտքը այս գիտակցութեան մակարդակին բացարձակ հանդարտ է եւ «սուրբ»:

«Երանի այնոցիկ՝ որ սուրբ էն սրբիւն, զի նոյն
զԼսարուստ Կիսկիս»: (Մարգէնի Ե:Թ)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք
պիտի տեսնեն Աստուած»:

Երբ անհատը «սուրբ սիրտ» ունի, այսինքն միտք մը առանց խորհուրդներու, զգացումներու ու յուզումներու, կարող կ'ըլլայ հաղորդակցիլ իր ներքին Քրիստոսին հետ եւ Անկէ ստանալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը: Առաւօտուն անհատը կ'արթննայ, որովհետեւ իր ստացած կենսատու զօրութեամբ կարող է յայտնաբերել աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը: Մարդուն համար, դժբախտաբար, Քրիստոսի հետ հաղորդակցիլը կ'ըլլայ այնքան ցած գիտակցութեան մակարդակի մը վրայ, որ ինք գիտակից չ'ըլլար այդ հաղորդութեան: Ինչո՞ւ համար մարդուն ամենահաճելի ժամերը իր խորունկ քունի ժամերն են: Միթէ՞ դժբախտութիւն չէ՞, հաղորդակցիլ Քրիստոսի հետ եւ անտեղեակ ըլլալ: Խոկումին նպատակը «սուրբ սիրտ» կերտել է, այսինքն խորհուրդներէ, զգացումներէ եւ յուզումներէ սրբուած միտք մը, այն ինչ որ ամէն գիշեր կ'ընենք ինքնաբերաբար, բայց անգիտակցաբար, որպէսզի անձը կարող ըլլայ դարձեալ Քրիստոսի հետ հաղորդուիլ, բայց այս անգամ բարձր գիտակցութեան մակարդակով եւ ինք ալ գիտակից եւ տեղեակ այդ հաղորդութեան: Որքա՛ն հաճելի պիտի ըլլար այդ փորձառութիւնը իրեն համար: Ահա՛, աս է որ կը կոչուի երանութիւն: Եթէ շատ ցած գիտակցութեան մակարդակը՝ խորունկ քունը հաճելի է, չէ՞նք խորհիր, որ ալ աւելի ցած մակարդակը, կամ գիտակցութեան արտայայտութեան բացակայութիւնը ալ աւելի հաճելի կ'ըլլայ: Այս մակարդակը մահ

կը կոչենք: Ուրեմն մարդ պէտք չէ մահէն վախնայ: Մարդուն հոգին, որ Աստուծոյ որդին է՝ Քրիստոս, անմահ է եւ կը միանայ Հօրը: Երբ մարդ կապուած կ'ըլլայ իր «Յս»-ին, այն ատեն է, որ մահէն կը վախնայ:

Վերեւ յիշեցինք թէ մարդ արարած իր սովորական արթուն կոչուած գիտակցութեան մակարդակը աւելի բարձր մակարդակի մը բարձրացներու կարողութեամբ ստեղծուած է: Բայց մարդ ի՞նչ պէտք ունի իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու: Իր յայտնաբերած ներկայ մակարդակը կը թուի բաւ ըլլալ իր կեանքը ապահով ապրելու համար: Վերեւ նաեւ տեսանք թէ գոնէ իր փորձառութեան ներքեւ եղող մակարդակներուն, ինք ճշմարտութիւնը տարբեր ձեւերով կ'ըմբռնէ: Խորունկ քունի մէջ, ինք ոչինչէ գիտակից է եւ կարծէք թէ ոչ աշխարհ եւ ոչ ալ ստեղծագործութիւն գոյութիւն ունին: Երազի մակարդակին, որ խորունկ քունի մակարդակէն աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մըն է, անհատին կեանքը կը թուի ամբողջովին տարբեր ըլլալ: Ինք երազին մէջ ամէն ինչ կ'ըմբռնէ եւ կ'ընդունի իբրեւ ճշմարտութիւն, ապա թէ ոչ ինչու իր երազի անտառին մէջ իր ետեւէն եկող վագրէն վախնայ եւ վազելով փախչի: Անձը անոր ճշմարտութիւն չըլլալը եւ միայն երազ՝ պատրանք մը ըլլալը կը հասկնայ այն ատեն, երբ իր գիտակցութեան մակարդակը կը բարձրանայ «արթուն» մակարդակի:

Մեր «արթուն» կոչած ներկայ գիտակցութեան մակարդակն ալ անձէ անձ եւ ժամանակէ ժամանակ մանր չափով կը փոխուի: Գիտունները երբ նիւթի մը կապակցութեամբ երկար ժամանակ «կը խոկան» կը պարզեւատրուին իրենց գիւտով: Այդ պարզեւը իրենց այդ ուղղութեամբ կերտած աւելի բարձր գիտակցութեան հետեւանքն է, որով իրենք կը գիտակցին իրենց փնտռած լուծումին: Մարդուն ներկայ գիտակ-

ցութեան մակարդակով, մարդկութիւնը տեղեակ է այն ինչ որ ինք կը կոչէ տիեզերք, աշխարհ, բնութիւն, համայն մարդկութիւն, զանազան ցեղեր, զանազան երկիրներ, զանազան լեզուներ, զանազան կրօնքներ ..., եւ ինք ասոնց բոլորը կը համարէ ճշմարտութիւն: Անտարակոյս մարդուն փորձառութեան մէջ ամէն ինչ ճշմարտութիւն է, որովհետեւ ամէն ինչ Աստուծոյ «մարմինը» կը ներկայացնէ: Միթէ չե՞նք ըսեր միակ ճշմարտութիւնը Աստուած է: Միթէ մարդուն համար երազն ալ ճշմարտութիւն չէ՞ր: Ընդհանուր ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ երազն է: Այդ երազը Աստուծոյ մէջ է: Միթէ չե՞նք ըսեր Աստուած ամենուրեք է: Ինչպէս մենք մեր երազներուն մէջ ըլլալով հանդերձ մենք զմեզ հոն չենք տեսներ, նմանապէս ալ Աստուած ստեղծագործութեան մէջ ըլլալով հանդերձ կարող չենք Ձինք՝ երազողը տեսնել: Հօր երազին մէջ Որդին Քրիստոս, որ Հօր մէջ է եւ Հօր հետ եւ այդ երազին մէջ ամէն անհատի էութիւնն է, նաեւ կ'երազէ անձին կեանքը: Միթէ չե՞նք ըսեր Քրիստոս ամէն անհատի էութիւնն է եւ կը քնանայ: Յիսուս մեզի ճիշդ աս էր որ սորվեցուց փոթորիկի միջոցին նաւուն մէջ Իր քնանալովը: Երբ Քրիստոս այդ քունէն արթննայ երազն ալ կ'անհետանայ, այսինքն փոթորիկն ալ կը դադրի: Նմանապէս երբ մենք կ'արթննանք, մեր երազներն ալ վերջ կը գտնեն: Մարդ կարող է մէկ գիշերուան մէջ, նոյն քունի ընթացքին, քանիցս իր գիտակցութեան մակարդակը փոխել՝ խորունկ քունի եւ երազի մակարդակներու միջեւ: Այս հիման վրայ անհատը կարող է մէկ գիշերուան մէջ բազմաթիւ երազներ տեսնել: Դժբախտաբար ան միայն արթննալու մօտ տեսած երազը կը յիշէ եւ ոչ միւսները: Ուրեմն կարելի չէ՞, որ մեր ներքին Քրիստոսն՝ մեր հոգին ալ բազմաթիւ երազներ տեսնէ, որ մենք մեր այս արթուն

կոչած գիտակցութեան վրայ վերամարմնացում կը կոչենք: Միթէ չե՞նք ըսեր Աստուծոյ մէկ օրը մեր մարդկային գիտակցութեան մակարդակի վրայ միլիոնաւոր տարիներ են: Միթէ չէ՞ փաստուած թէ ժամանակը յարաբերական է: Այն ինչ որ մեր երազներուն մէջ օրեր, ամիսներ նոյնիսկ տարիներ տեւած է, գիտունները մեզի կ'ըսեն թէ այս մեր արթուն կոչած մակարդակի վրայ միայն մէկ կամ երկու վայրկեան տեւած է: Մարդու կեանքն ալ որ 70-էն 100 տարի կը տեւէ, ինչ որ Աստուծոյ համար միայն ակնթարթ մըն է: Մարդուն յայտնի գիտակցութեան մակարդակները լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք հետեւեալ փոխաբերութիւնը: Մարդ կը տեսնէ տերեւ մը եւ կը կարծէ թէ ինք ծառը տեսած է: Երբ իրեն կ'ըսեն թէ ան ծառը չէ, ինք չի հաւատար: Եթէ երազին մէջն ալ մարդ մը ելլեր եւ վագրէն փախչող անձին ըսէր. «Մի վագր երազ է', սուտ է'», արդեօք վագրը եւ փախչողը մտիկ պիտի ընէ՞ր: Հաւանաբար ոչ: Տերեւը կը ներկայացնէ երազը: Բայց երբ իրեն լման ճիւղ մը ցոյց տան, ան կ'ըսէ. «Ո՛հ, սխալեր եմ, հիմա հասկցայ ծառին ինչ ըլլալը»: Դարձեալ եթէ իրեն ըսեն թէ աս ալ ծառը չէ, ինք դարձեալ անոնց չի հաւատար եւ իր տեսակէտը կը պնդէ, թէ ճիւղը ծառն է: Այսօր մեր «արթուն» կոչած գիտակցութեան մակարդակն ալ «ճիւղ»-ն է, որուն յամառօրէն «ծառ»՝ ճշմարտութիւնն է կ'ըսենք: Բայց պատահի որ օր մը մարդ հսկայ «ծառ»-ը տեսնէ, ինք ճիւղը մէկդի կը դնէ եւ կ'երկրպագէ «ծառ»-ին: Այդ ատեն է, որ ինք տեսած կ'ըլլայ ճշմարտութիւնը: Աս ալ կարելի է միայն իր յայտնաբերած ներկայ գիտակցութեան մակարդակէն աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը յայտնաբերելով: Միայն այն ատեն է որ մարդ պիտի հասկնայ ճշմարտութիւնը: Զանազան գիտակցութեան մակարդակներուն մարդն ալ ճշմար-

տուր թիւնը կը տեսնէ զանազան սահմանափակ ձեւերով:
Միթէ Պօղոս առաքեալ չըսա՞ւ.

«Լ'յժմ որեւանէնէ իբրեւ ընդ Հայելի՛ օրինակա-
այլ յայնժամ որեւ յանդիման» : (Լ. Կորնթացիս ԺԳ:12)
«Հիմա կը տեսնենք Հայելիի մէջէն՝ աղօտ կերպով՝
բայց այն ատեն՝ պիտի տեսնենք երես առ երես»:

Երբ մարդ կարողանայ ինքզինք աւելի բարձր գիտակ-
ցութեան մակարդակի մը յափշտակման արժանացնել
այն ատեն կը գիտակցի ճշմարտութեան, թէ ինք
Քրիստոսի տաճարն է: Այն ատեն է որ ինք լրիւ կը
յայտնաբերէ Քրիստոս իր մէջ եւ կը յայտարարէ. «Ես
եւ Հայր իմ մի եմք»: Աս փորձառութիւն մը չէ, նորու-
թիւն մըն ալ չէ, այլ՝ միայն անդրադարձ մը: Երբ անձը
ըսէ թէ փորձառութիւն մը ունեցած է, կը նշանակէ թէ
ինք տակաւին իր «Ես»-ին կապուած է: Իր ճշմարիտ
էութիւնը Քրիստոսն է, հետեւաբար միայն այդ բարձր
գիտակցութեամբ անհատը կարող կ'ըլլայ այս ճշմար-
տութեան անդրադառնալ: Այս անդրադարձը այդ բար-
ձրը գիտակցութեան յափշտակման հետեւանքն է: Մարդ
չատ պարզօրէն կը կարողանայ այդ անդրադարձը ունե-
նալ եթէ ինքզինք ձեռքազատէ իր «Ես»-էն եւ անոր
ստեղծած երկուութենէն: Մեր այս ապրած գիտակցու-
թեան մակարդակը սահմանափակուած է մեր «Ես»-ին
յառաջ բերած բազում խորհուրդներով, յուզումներով
եւ զգացումներով: Ասոնց բոլորը ծագում կ'առնեն
երկուութեան գաղափարէն: Այդ հիման վրայ ալ մարդ
ենթակայ է կենաց եւ մահուան երկու երեւոյթներուն:

Որ սիրէ պաննն իւր՝ արշակէ պնա. եւ որ սորեայ
պաննն իւր յաշխարհիս յայտնիկ, 'ի կէանսն յա-
-իորենականս պաւէսցէ պնա» : (Յովհաննոս ԺԲ:25)
«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ
ան որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝
յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն»:

«Զի որ կամիցի պաննն իւր կէցոցանէլ,
կորոսցէ՛ պնա. եւ որ կորոսցէ պաննն իւր
վանն իմ՝ կէցոսցէ՛ պնա» : (Ղուկաս Թ՝:24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ վայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ վայն»:

Մարդ արարած իր կերտած գիտակցութեան մակարդակին համաձայն կը ստեղծէ այն բոլորը, որոնց փորձառութիւններուն ինք կ'ենթարկուի: Մարդ իր փորձառութիւնները ձեռք կը ձգէ իր Ֆիզիքական մարմնի միջոցաւ՝ հինգ զգայարանքներով, իր մտային մարմնի միջոցաւ՝ անոր խորհուրդներով եւ զգացումներով, ինչպէս նաեւ իր իմացականութեան միջոցաւ: Բայց մարդուն համար կարելի է նաեւ փորձառութիւն ձեռք ձգել առանց այդ միջոցներուն: Այն ատեն բոլոր զգացումները կը վերածուին սիրոյ զգացումի, որովհետեւ կ'ըլլայ Աստուածայայտնութիւն: Միթէ Աստուած ալ սէր չէ՞: Աս կը համապատասխանէ ներքին Քրիստոսի քունէն արթննալուն: Մարդ ինքն է որ իր կենցաղով եւ իր տենջանքով Զայն պիտի արթնցնէ, ինչպէս առաքեալները նաևուն մէջ Յիսուս արթնցուցին: Եւ ահա՛, աս է Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ: Այդ գիտակցական մակարդակին վրայ ժխտական ոչինչ գոյութիւն կրնայ ունենալ: Անձին գիտակցութիւնը կը բարձրանայ Քրիստոսի գիտակցութեան մակարդակին: Անձը կ'ապրի միայն ներկան: Միթէ ներկան յաւիտենականութիւն չէ՞: Մարդ միշտ կը ջանայ իր միտքով հասնիլ «հոն», ուր կարելի չէ միտքով երթալ: Ստեղծագործութեան մէջ ամենամեծ խորհուրդը Աստուածային ճշմարտութիւնն է, որ մարդու միտքէն եւ իմացականութենէն միշտ թազնուած մնացած է: Ընդհանուր ստեղծագործութեան մէջ միայն մէկ գիտակցութիւն կայ, որ է Աստուծոյ գիտակցութիւնը եւ ներկայութիւնը: Նոյն

գիտակցութիւնն է, որ կը յայտնուի զանազան մակարդակներով: Ճիշդ ասոր համար կ'ըսենք, թէ Աստուած ամենագէտ է: Երբ անձը կը յափշտակուի այդ բարձր գիտակցութեան, Քրիստոսի Լոյսը կը յայտնուի իր մէջ, որ անձը կը ձեռքագատէ բոլոր կրօնքներէն եւ կը յառաջացնէ դէպի միայն մարդկայնականութիւն եւ կը սփռէ սէր ամենուրեք, առանց խտրութեան: Ինք կը թուի ըլլալ աննմանելի եւ անօրինակելի:

«Լոյս Տեարն շոնշ մարդկան, ...» : (Լուսնայ Ի:27)

«Մարդուն Հոգին Տերջը Լոյսն է»:

«... եւ Հոգին է որ վնայէ, պի Հոգին իսկ է
Ճշմարտութիւն» : (Լ Յովհաննու Ե:6)

«... ու Հոգին է, որ կը վկայէ, որովհետեւ Հոգին ճշմարտութիւն է»:

Միթէ մեզի համար Յիսուս Քրիստոս ալ աննմանելի եւ անօրինակելի չէ՞ր: Բայց ինք բացայայտօրէն ըսաւ, թէ աշակերտը պէտք է վարդապետին պէս ըլլայ:

«Ո՛չ է աշակերտը լա՛ւ - լան պարտապէս ինչ, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ պարտապէ՛ս ինչ» : (Լուսնայ Գ:4)

«Աշակերտը իր վարդապետէն գերիվեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

Ուրեմն պէտք չէ՞ որ Իրեն հաւատանք եւ Իրեն նմանելու համար որեւէ ջանք չխնայենք: Քանի որ միայն մարդու միջոցաւ Աստուածայայտնութիւնը կարելի է, արդեօք մեզի չի՞ վիճակուիր մեր մարդկային պարտականութիւնը լիովին կատարել: Իսկ մենք զբաղ մեր «Ես»-ին յառաջացուցած ցանկութիւններով, խորհուրդներով, զգացումներով եւ յուզումներով կը խափանենք մեզի շնորհուած ուղեղի կարողութիւնները եւ կ'օգտագործենք միայն այդ կարողութիւններուն 5-10%-ը եւ անով կը գոհանանք՝ կը գործենք աժանոց ձայնասփիւռի մը նման, քան թէ ձայնասփիւռ մը, որ յստակ, մաքուր եւ բարձր որակի երաժշտութիւն կը սփռէ:



**Ուսանք փոխաջ մը վարդի մէջ
միայն փոխերը Կը Տեսնեն, Իսկ
ուրիշներ երբ վարդի բոյսը մը
նային անոր ծաղիկը:**



**Երանսագիտութեան գլխաւոր
բնոյանձոնօժիջը անՀասին
Հայեանձքն է, Իսկ
երջանկութեանն Ա՛յ
Երանսագիտութիւնը:**

ԽՈԿՈՒՄՐ ԵՒ ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ

Որպէսզի այս նիւթը՝ «Խոկումը եւ Գիտակցութիւնը», որու մասին պիտի գրեմ, աւելի հասկնալի ըլլայ, նախ պիտի ներկայացնեմ հետեւեալը:

Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ զօրութեամբ յառաջ եկած է: Աստուծոյ զօրութիւնը Ս. Հոգին է: Այդ զօրութեան՝ Ս. Հոգիի մարմնացումն ալ, որ «զօրութեան մարմին» կը կոչուի, Քրիստոսն է: Ուրեմն ստեղծագործութեան մէջ ամէն ինչ իր մէջ Աստուծոյ զօրութիւնը ունի: Այդ զօրութիւնն է, որ ամէն ինչի կու տայ նաեւ գիտակցութիւն մը: Այս գիտակցութեան մակարդակը կախեալ է զօրութեան որակէն: Անզգամ քարի կտոր մը իսկ ունի իր ուրոյն զօրութեան որակը եւ համապատասխան գիտակցութեան մակարդակ: Անտարակոյս քարին գիտակցութեան մակարդակը շատ ցած է, հաւանաբար գիտակից է միայն իր ներքին ենթահիւլէական մասնիկներուն:

Երբ Աստուած մեր հասկացողութեամբ կեանքը ստեղծեց, նախ սկսաւ միաբջիջային էութեամբ: Աս չի նշանակեր, թէ անզգամ քարը կեանք չունի: Կեանքը կը բնորոշուի որպէս շարժելու կարողութիւն: Մենք, որովհետեւ քարին շարժումը չենք տեսներ, կը խորհինք թէ քարը կեանք չունի: Այսօր գիտունները փաստած են, թէ բոլոր հիւլէները ինչպէս նաեւ անոնց կորիզին մէջի փրօթօնները, նիւթրօնները եւ կորիզին շուրջ շրջող ելեկտրօնները, բոլորն ալ շարժման մէջ են: Քանի որ անզգամ նիւթն իսկ Աստուծոյ զօրութիւնը ունի, հետեւաբար ունի նաեւ կեանք եւ գիտակցութիւն: Անտարակոյս, անոնց մէջի կեանքի եւ գիտակցութեան մակարդակները այնքան ցած են, որ մենք կը համարենք, թէ անոնք կեանք չունին: Միաբջիջային էակներու շարժումները եւ բազմանալը կարող ենք մանրագիտակով տեսնել, որով այն եզրակացութեան կը յանգինք, թէ

անոնք կեանք ունին: Նաեւ կը նշմարենք որ անոնք որոշ գրգռմաներէ կը խուսափին, իսկ ուրիշներուն ալ կը յարին, հետեւաբար ասկէ ալ կարելի է եզրակացնել, թէ անոնք նաեւ ունին որոշ գիտակցութեան մակարդակ մը, հոգ չէ թէ այդ ըլլայ ցած:

Ստեղծագործութեան մէջ յաջորդ հանգրուանը միաբջիջներուն իրարու միանալով, մէկ նպատակի համար միասնաբար գործելով, բազմաբջիջային «խմբակ» (colony) մը՝ էակ մը կազմելն է: Ինչպէս այդ խմբակին ամէն մէկ բջիջը ունի իր կեանքը եւ գիտակցութիւնը, խմբակին ամբողջութիւնը՝ էակն ալ, ունի իր ուրոյն կեանքը եւ գիտակցութիւնը: Նախ կազմուեցան զանազան բոյսերը, յետոյ ալ զանազան կենդանիները՝ ներառեալ մարդը: Որքան որ ամէն մէկ բջիջ իր ուրոյն կեանքը եւ գիտակցութիւնը ունի, էակն ալ զինք կազմող բջիջներուն կեանքէն եւ գիտակցութենէն անջատ ունի իր ուրոյն կեանքը եւ գիտակցութիւնը: Բոյսերը գիտեն իրենց տերեւները դէպի արեւ դարձնել եւ արմատներն ալ՝ դէպի ջուր: Շատ լաւ գիտենք, թէ բոլոր կենդանիները նաեւ ունին թէ՛ կեանք, թէ՛ ալ որոշ գիտակցութիւն: Մարդը, որ ստեղծագործութեան գազաթնակէտն է, ունի իր կեանքը եւ ուրոյն գիտակցութեան մակարդակը: Կեանքի եւ գիտակցութեան ներկայութիւնը անձին մէջ Աստուծոյ՝ Քրիստոսի ներկայութիւնն է, ինչ որ անձին Հոգին կը կոչենք: Մարդ, հետեւանք իր խաւարամտութեան կը կարծէ թէ միայն մարդն է որ հոգի ունի եւ միւս կենդանիները հոգի չունին: Երբ մարդ մը մեռնի, «հոգին աւանդեց» կ'ըսենք: Աս կը նշանակէ թէ մարմինը կազմող բջիջներու խմբակին՝ էակին, կեանք ու գիտակցութիւն տուող զօրութիւնը՝ հոգին, այդ «խմբակ»-ը թողած է: Բայց Աստուծոյ զօրութիւնը, շատ աւելի ցած մակարդակի վրայ, դիակին ամէն մէկ բջիջին մէջ

տակաւին կը գործէ: Բոլոր բջիջները գիտակից են իրենց պարտականութեան եւ կը շարունակեն գործել: Ճիշդ այս պատճառով ալ դիակին մորուքը կ'երկարի: Դիակի ցուցադրութենէն առաջ, մեռելատան մէջ, կը ստիպուին դիակը ածիլել: Բջիջներու գոյատեւումը կախեալ է շրջող արիւնէն իրենց ստացած թթուածինէն: Թէեւ էակին մահէն յետոյ անոնք որոշ շրջան մը եւս կը տոկան, սակայն էակին մահով անոնք ալ դատապարտուած են մահուան: Բայց կեանքը հիւլէններուն մէջ աւելի ցած մակարդակի վրայ տակաւին կը շարունակէ: Ուղեղային բջիջը ամենէն շուտ կը մեռնի, իսկ մորթի բջիջը շատ աւելի ուշ:

Կենդանիներուն գիտակցութեան մակարդակը սահմանափակ է: Անոնք իրենց հոգիին գոյուլթեան գիտակցելու կարողութիւնը չունին: Աստուած մարդուն այդ կարողութիւնը տուած է: Անհասկնալի է, թէ մարդն ալ ի՞նչու կ'ապրի նման այլ կենդանիներու եւ իր ունեցած կարողութիւնը չի գործածեր: Մարդ արարած իր շուրջիններէն կ'իմանայ, թէ հոգի մը ունի: Որով իմացականօրէն կը գիտնայ թէ հոգի մը ունի: Այս գիտցածը պարզապէս հաւատալիք մըն է: Ինք իր անձնական փորձառութեամբ այս եզրակացութեան չէ հանգած: Մարդ իր ուղեղը զանազան խորհուրդներով ու ցանկութիւններով զբաղ կը պահէ, ուստի կարող է ըլլար իր ուղեղը լրիւ կերպով գործածել սորվիլ: Որովհետեւ ան իր ուղեղային կարողութեան միայն սահմանափակ յատկութիւնները կը գործածէ, որով կը սահմանափակէ իր գիտակցութեան մակարդակը: Մարդ անընդհատ զբաղ իր Փիզիքական մարմնի հինգ զգայարաններէն եկած տեղեկութիւններով եւ անոնց հետեւանք իր մտային մարմնին ստեղծած զգացումներով եւ խորհուրդներով, ջանք անգամ չ'ընեն փորձառութիւնը ունենալու իր երրորդ՝ զօրութեան մարմնին:

Ան նոյնիսկ չի գիտեր թէ ինք զօրութեան մարմին մը եւս ունի: Այդ «զօրութեան մարմին»-ը իր մէջ Քրիստոսի ներկայութիւնն է: Շնորհիւ այդ զօրութեան մարմնին, անձը թէ՛ կեանք ունի եւ թէ՛ ալ գիտակցութիւն: Եթէ ինք փորձառութիւնը ունենայ իր զօրութեան մարմնին, ինչպէս ինք փորձառութիւնը ունի իր Ֆիզիքական եւ մտային մարմիններուն, այն ատեն պիտի գիտակցի Քրիստոսի իր մէջ ներկայութեան եւ պիտի նոյնանայ Անոր հետ եւ պիտի վայելէ անհուն գիտակցութեան մակարդակ մը: Ինք ալ Յիսուսի նման պիտի ըսէ. «Ես եւ Հայր իմ մի եմք»:

Որովհետեւ մարդ արարած այս աշխարհին վրայ կ'ապրի, պէտք ունի իր Ֆիզիքական մարմնին, ինչպէս նաեւ իր մտքին, որպէսզի պատշաճ կերպով գործածէ իր Ֆիզիքական մարմինը: Անոնք անհրաժեշտ են: Բայց անձը նաեւ պէտք է գիտնայ, թէ անոնք առանց իր հոգիին՝ զօրութեան մարմնին, անկարող են առանձինն գոյատեւել: Թէ՛ Ֆիզիքական մարմինը թէ՛ ալ մտային մարմինը, որ Ֆիզիքական մարմնի սրտին եւ ուղեղին գործառնութեանց արդիւնքն է, կը պատկանին աշխարհին եւ ենթակայ են մահուան: Իսկ զօրութեան մարմինը, որ անմահ է, մարդ ամբողջովին կ'անտեսէ:

Ֆիզիքական մարմնոյ զգայարանքներէն եկած տեղեկութիւնները անտեսելու համար խոկումը անհրաժեշտ է: Խոկացողը պարտ է նստիլ հանգիստ տեղ մը առանց աղմուկի, աչքերն ալ փակ, որպէսզի հինգ զգայարանքներէ եկած որեւէ Ֆիզիքական տեղեկութիւն զինք անհանգիստ չընէ եւ միտքը չզբաղեցնէ: Առանց Ֆիզիքական մարմինէն եկած տեղեկութիւններուն, միտքն ալ հանդարտ կ'ըլլայ: Դժբախտաբար, ուղեղին մէջ տեղադրուած բազմաթիւ անցեալի յուշեր, կամ ապագային իրականացուելիք ցանկութիւններ կը կազմեն խորհուրդներու ողողում մը, միտքը զբաղ

պահելու նպատակով: Աս «Ես»-ին ամենաազդեցիկ զէնքն է, որովհետեւ «Ես»-ը չ'ուզեր անձին վրայ իր ունեցած իշխանութիւնը կորսնցնել: Խոկումին բուն նպատակը այս խորհուրդներու ողորումը դադրեցնելն է: Միտքը, որ նաեւ Աստուծոյ գիտակցութեան միջոցառումն է, երբ ազատ կ'ըլլայ, կը կարողանայ անձին մէջ բարձր որակով գիտակցութիւն յայտնաբերել: Քանի որ գիտակցութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է, Աստուծոյ յայտնութիւնն ալ անձին մէջ կ'իրականանայ: Անձը եթէ ինքզինք լաւագոյնս պատրաստած է իր կենցաղով եւ սիրոյ արտայայտութեամբ, նուիրումով եւ ինքնազոհողութեամբ ու կարեկից է հանդէպ բոլորին, հետեւաբար արժանի, կը յափշտակուի այդ բարձր գիտակցութեան եւ կը ստանայ Ս. Հոգիի զանազան շնորհները, նաեւ իմաստութիւն, որոնք բոլորն ալ իր զօրութեան մարմնի յատկութիւններն են: Անոնք առաջուց մնացած էին իբր հունտ, այժմ կը ծլին ու կը յայտնուին: Անոնք չէին յայտնուած, որովհետեւ անձը իր միտքին ղեկը իր ձեռքը չէր առած, այլ զայն յանձնած էր իր «Ես»-ին: «Ես»-ն ալ չէր արտօներ որ անձը իր ուղեղը ու միտքը պատշաճօրէն գործածել սորվի: Այդ բարձր գիտակցութեան տէր անձը կը գիտակցի զօրութեան բազում թագուն օրէնքներուն եւ տէր կ'ըլլայ բազում կարողութիւններու, որ ինք առաջուց զանոնք միայն հրաշք կը նկատէր, որովհետեւ իր նախկին կարողութիւններէն վեր էին:

Ահա աս է խոկումին եւ գիտակցութեան իրարու հետ ունեցած կապը: Խոկումը՝ աղօթքին ամենավեհ ձեւը, կը ցոլացնէ անհատին իր մէջ Քրիստոս գտնելու տենչանքին որակը: Խոկումը պարզապէս ոտքերը ծալած նստիլ եւ զանազան խորհուրդներ ունենալ չէ, այլ Փրկիքական եւ մտային մարմիններու տուեալները անտեսել է, որպէսզի անձը կարողանայ գիտակցիլ իր

գօրութեան մարմնին եւ Անոր բոլոր տուեալներուն: Մենք հիմա գօրութեան մարմնին որոշ տուեալները կը վայելենք՝ անգիտակցաբար, իսկ յաջող խոկումի արդիւնք ալ կրնանք վայելել անոր բոլոր տուեալները՝ գիտակցաբար: Այս ուղղութեամբ հաւատքը, համբերութիւնը եւ յարատեւութիւնը անհրաժեշտ են: «Ես»-ը ամէն տեսակի հնարք եւ նենգութիւն պիտի օգտագործէ, որպէսզի անձը չյաջողի: Հետեւաբար «Ես»-ը անտեսելու համար անհրաժեշտ են գօրաւոր կամք եւ վճռականութիւն:

ԱՄԷՆ



Ո՞Ր Է ԱՍՏՈՒԱԾ

Մեծ եղեռնի ժամանակ հայերէն շատեր հարց տուած էին, այժմ ալ նոյն հարցումը տակաւին կը հարցուի. «Ո՞ր է Աստուած»: Մեր մանկութեան, թէ՛ մեր ծնողքը եւ թէ՛ մեր կղերականները մեզի Աստուծոյ գոյութիւնը սորվեցուցին: Մանկական ուղեղը տակաւին լրիւ չէ կազմուած, հետեւաբար իր միտքն ալ տակաւին անկազմ է, որով մանուկները իմացականութիւն ալ չեն ունենար: Անոնք գիտութիւն ալ չունին: Այս հիման վրայ, համաձայն մանուկին ըմբռնումի կարողութեան, Աստուած ճերմակ մորուքով մարդումը երեւոյթով ամպերէն վեր տեղ մը՝ երկինքի մէջ նստած մեզ՝ աշխարհը կը դիտէ եւ որովհետեւ ամենակարող է, միաժամանակ ամէն ինչ կը տեսնէ: Պատանիները լրիւ կազմուած միտք մը ունին, բայց տակաւին ոչ լրիւ կազմուած իմացականութիւն մը: Պատանիներուն գիտութիւնն ալ սահմանափակ է ինչպէս նաեւ իրենց տրամաբանելու կարողութիւնը: Անոնք ակելի զրգռանիւթերուն յառաջ բերած թէ՛ Փիզիքական եւ թէ՛ զգացական փոփոխութիւններէն տարուած կ'ըլլան: Մարդ 21 տարեկանէն վերջ իր լրիւ կազմուած միտքով եւ իմացականութեամբ դժբախտաբար տակաւին կը շարունակէ հաւատալ այն ինչ որ իրեն սորվեցուցած էին իր մանկութեան: Նա մանաւանդ երբ ան համալսարաններ կ'աւարտէ ու ինքզինք գիտուն մը կը համարէ կը դադրի պրպտելէ: Շատ հաւանաբար, ան որոշ նիւթի մը մասին մասնագէտ գիտուն մը կրնայ ըլլալ, բայց այդ չի նշանակեր, թէ ան ամէն ինչ գիտէ կեանքի՝ Աստուծոյ նկատմամբ: Միթէ Աստուած կեանք չէ՞: Միթէ Քրիստոս չըսա՞ւ. «Ես եմ կեանքը»: Ամենամեծ սխալը, որ մարդիկ կը գործեն, պրպտելէ եւ սորվելէ դադրելն է: Աս կը նշանակէ միտքը գոցել, ինչ որ խաւարամտութեան սկիզբն է:

Ուրեմն ո՞ւր է Աստուած:

Աստուծոյ յատկուլթիւններէն մի քանին ամենուրեք, յաւիտենական եւ ամենագէտ ըլլալն են:

Ի՞նչ կը նշանակէ ամենուրեք ըլլալ: Անձ մը որ ինքզինք «Վերստին ծնած» եւ «փրկուած» կը համարէ, ըսաւ, թէ եթէ իր հաւատացած ձեւին ես ալ չհաւատամ դժոխք պիտի երթամ: Հարցումով մը պատասխանեցի. «Կը հաւատա՞ս, որ Աստուած ամէն տեղ է»: Ինք անմիջապէս «Այո» ըսաւ: Պատասխանս եղաւ. «Եթէ Աստուած ամէն տեղ է, եւ ես դժոխք պիտի երթամ, այն ատեն հոգս չէ, Աստուած հոն ալ է»: Ան յանկարծ միջամտեց ու ըսաւ. «Աստուած հոն չէ»: Ես ալ ըսի. «Ուրեմն դուն Աստուած կը սահմանափակես: Կ'երեւի դուն չես հաւատար, որ Ան ամէն տեղ է»: Արդեօք կարելի է, որ Աստուած «հոս» ու «հոն» ըլլայ: «Հոս» ու «հոն» ստեղծագործութեան մէջ երկուութեան արտայայտութիւն մըն է: Զանազան վայրեր իրարմէ կը տարբերին «միջոց»-ին մէջ: Աստուած երկուութեան ենթակայ չէ, քանի որ Ան միականութիւն կը ներկայացնէ:

Ի՞նչ կը նշանակէ յաւիտենական ըլլալ: Մարդիկ կը կարծեն թէ յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ է: Այս հիման վրայ ալ կը խորհրդածեն եւ կը ջանան պատշաճ կենցաղ մը կերտել, կամ համապատասխան հաւատալիքներու հաւատալ, որպէսզի մահէ յետոյ «երկինք» երթան եւ անվերջ ժամանակ հաճելի՝ առանց տառապանքի եւ չարչարանքի կեանք մը ապրին: Իսկ եթէ չյաջողին նման կենցաղ մը կամ հաւատալիքներու տէր ըլլալ, կը խորհին դժոխքի արժանի ըլլալ եւ անվերջ ժամանակ կրակով այրիլ եւ տառապիլ: Յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ան ժամանակի դրութենէ դուրս ըլլալն է: Հետեւաբար յաւիտենականութիւնը միայն ներկան է, որովհետեւ

միայն ներկան յաւիտեան է: Այս հասկացողութեամբ, թէ՛ դրախտը եւ թէ՛ դժոխքը ներկային մէջն են, ինչ որ մեր այս կեանքն է, որ միշտ ու միայն ներկային մէջն է որ կ'ապրինք:

Ուրեմն ի՞նչ կը նշանակէ երբ կ'ըսենք. «Աստուած թէ՛ յաւիտենական է եւ թէ՛ ամենուրեք է»:

Աստուած ո՛չ ժամանակին եւ ո՛չ ալ միջոցին (space) ենթակայ է: Ճշմարտութիւնը այն է, թէ ժամանակը եւ միջոցը Աստուծոյ մէջն են: Երբ քունի մէջ կ'երազենք, բնական է որ երազին մէջ կը տեսնենք շատ մը վայրեր եւ շատ մը բաներ, ինչպէս նաեւ անձեր: Արդեօք կարելի է՞ ըսել թէ երազին մէջ հոս ու հոն էինք: Ճիշդ է, երբ մեր երազը ուրիշի մը կը պատմենք նման արտայայտութիւններ կ'ունենանք: Բայց ճշմարտութիւնը այն է, թէ երազը եւ այդ վայրերը մեր մէջն էին: Երազին մէջ մեր տեսած այդ վայրերուն եւ պատահարներուն ստեղծիչը ո՞վ էր: Միթէ անկողինին մէջ քնացողը «մենք» չէի՞նք: Երազն ալ մեր միտքերուն՝ մեր մէջը չէ՞ր: Բայց երազը մեր մէջը ըլլալով հանդերձ նոյն ժամանակ մենք ալ մեր երազներուն մէջն էինք եւ այդ ձեւով ալ թափանցած երազին մէջ ամենուրեք:

Դարձեալ երբ կ'երազենք, ո՞վ ակնատես է այդ երազին, ո՞վ է որ այդ երազին փորձառութիւնը կ'ունենայ: Այդ բոլորը կ'ըլլան մեր գիտակցութեան մէջ: Ճիշդ է թէ մեր գիտակցութեան մակարդակը ցած ըլլալով մենք անտեղեակ ենք, թէ իսկութեան մէջ մենք մեր անկողիններուն մէջ պառկած կը քնանանք: Որովհետեւ երազը մեր «մէջ»-ն է մենք ալ գիտակից ենք երազին մէջի բոլոր անցուդարձերուն, ինչպէս նաեւ հոն գտնուող զանազան անձերուն խորհուրդներուն, որովհետեւ անոնք բոլորն ալ մեր միտքերէն ծնունդ առած են: Հետեւաբար երազներուն պարունակութեան

նկատմամբ մենք ամենագէտ ենք: Մեր գիտակցութիւնն է, որ թափանցած է երազներուն մէջ եւ անոնց տուած փորձառութիւններուն մեզ գիտակից կ'ընէ: Զարմանալին այն է, թէ մենք, մեր երազին մէջ ըլլալով հանդերձ եւ երազին մէջի ամէն ինչի լաւ ու վատ փորձառութիւնը ունենալով հանդերձ մենք զմեզ հոն չենք տեսներ: Երբ երազ կը տեսնենք մեր երազները եւ անոնց բոլոր պարունակութիւնը կը թուին բացարձակ ճշմարտութիւն մը ըլլալ: Երբ քունէն արթնանաք կը հասկնանք, թէ այն բոլորը զորս երազեցիք, հաճելի կամ տառապալից, ճշմարտութիւն չէին, այլ միայն պատրանքային՝ միայն երազ մը: Մեր երազները մեզմէ բղխան: Իսկ ստեղծագործութիւնն ալ Աստուծմէ բղխաւ: Այս աշխարհիկ կեանքն ալ Աստուծոյ «երազ»-ն է: Վերոյիշեալ ժամանակը եւ միջոցը երազին մաս կը կազմեն: Հետեւաբար Աստուած ժամանակի եւ միջոցի ենթակայ չէ եւ ժամանակի եւ միջոցի մէջ չէ, այլ ժամանակը եւ միջոցը Աստուծոյ մէջն են: Որովհետեւ երազը՝ ստեղծագործութիւնը Աստուծմէ բղխած է, Աստուծոյ գիտակցութիւնն է, որ կը գործէ ընդհանուր ստեղծագործութեան մէջ: Հետեւաբար Աստուած ամենագէտ է: Պէտք չէ մոռնալ, թէ մեր գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան սահմանափակ փոքր մէկ մասնիկն է: Քանի որ մեր գիտակցութիւնը Անոր գիտակցութեան մաս կը կազմէ, այն բոլոր բաներուն, որ մենք գիտակից ենք, Աստուած ալ գիտակից է:

Ուրեմն ո՞ւր է Աստուած:

Ինչպէս մեր երազները մեր մէջ են, ստեղծագործութիւնն ալ Աստուծոյ մէջն է: Հետեւաբար մենք ալ ստեղծագործութեան մէջ շրջապատուած ենք Աստուծոյ մով: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է եւ իր գիտակցութեան

լոյսով ալ յայտնաբերուած: Հետեւաբար պէտք չէ՞ որ սիրենք ամէն ինչ եւ ըստ այնմ վարուինք բնութեան եւ համայն մարդկութեան հետ: Թովմասի Աւետարանին* մէջ Քրիստոս ըսած է. «... վերցուցէք գետնի քարը եւ Ջիս հոն կը գտնէք»: (*1945ին Եգիպտոսի մէջ գտնուած երկու օրինակ Յունարէն եւ մէկ օրինակ ալ Ղպտիերէնով գրուած Թովմասի Աւետարանը Նոր Կտակարանին մէջ ընդունուած եւ տեղադրուած Աւետարաններուն մաս չի կազմեր:) Ինչպէս երազները մեր մէջն են, այդպէս ըլլալով հանդերձ, մենք ալ մեր երազներուն մէջն ենք: Նմանապէս մենք՝ ստեղծագործութիւնը Աստուծոյ մէջ ըլլալով հանդերձ, Աստուած ալ մեր մէջ է: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Ձեր մարմինները Աստուծոյ տաճարներն են»:

Եթէ Աստուած ստեղծագործութեան մէջն է ինչո՞ւ Ջինք չենք տեսներ: Մենք ալ մեր երազներուն մէջ ըլլալով հանդերձ մենք զմեզ չենք տեսներ, որովհետեւ մեր գիտակցութեան մակարդակը շատ ցած է: Միայն երբ քունէն արթննանք, այսինքն մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնենք փորձառութիւնը կ'ունենանք երազողը տեսնելու: Երազը վերջ կը գտնէ երբ անձը խորունկ քունի մէջ մտնէ կամ եթէ քունէն արթննայ: Այն ինչ որ մենք մեր արթուն կեանքը կը նկատենք, ան ալ տարբեր երազի մը մակարդակն է: Այս երազն ալ կրնայ վերջ գտնել, երբ խորունկ քունի մէջ մտնենք, ինչ որ մահ կը կոչենք եւ մեռնողներն ալ՝ ննջեցեալ, այսինքն քնացող: Որով մահը խորունկ քուն մըն է՝ շատ ցած գիտակցութեան մակարդակ մը: Կարելի է նաեւ մեր արթուն կեանքին՝ այս երազին վերջ տալ արթննալով: Այս արթննալը կարելի է միայն շատ բարձր գիտակցութեան մը յափշտակուելով եւ միայն նման զարթօնքով կարելի է «տեսնել»՝ փորձառութիւնը ունենալ եւ գիտակցիլ երազողին՝ Աստուծոյ:

Ահա՛, աս է փրկութիւնը, միանալ Աստուծոյ եւ անտեսել երազը: Իսկ մենք երազին կապուած կը սպասենք մահուան որպէսզի փրկուինք: Մահը խորունկ քունն է: Անկարելի է խորունկ քունի մէջ երազողը տեսնել: Կարելի է գիտակցութեան որոշ մակարդակի մը բարձրացմամբ դարձեալ երազել: Ահա՛, առիթ մը եւս արթննալու: Միթէ Յիսուս մեզի չսորվեցուց անտեսել աշխարհի հարստութիւնը՝ շլացուցիչ «սա», «դա» (տա) եւ «նա»-ն եւ խզել մեր բոլոր կապուածութիւնը անոնցմէ, որպէսզի կարողանանք մեր այս արթուն կոչած քունէն արթննալ:

Ուրեմն ո՞ւր է Աստուած:

Եթէ ստեղծագործութիւնը Աստուծոյ մէջ է եւ Աստուած ալ բոլոր ստեղծագործութեան մէջ, կարելի է ըսել թէ ստեղծագործութիւնը իր ամբողջութեամբ Աստուծոյ մարմինն է: Ամէն մի անհատ Աստուծոյ մարմինն մէջ «բջիջ» մըն է: Աստուած միականութիւն կը ներկայացնէ, հետեւաբար ստեղծագործութիւնն ալ, Աստուծոյ մարմինը ըլլալով կը ներկայացնէ միականութիւնը: Մեր մարմիններուն մէջ ալ կան միլիառաւոր բջիջներ, բայց մենք մեր մարմինն ամբողջութիւնն ենք եւ մէկ ենք: Ուրեմն Աստուծոյ մարմինն մէջ ալ բոլորս մէկ ենք, ինչո՞ւ զիրար կ'ատենք: Ինչպէս մեր մարմիններուն ամէն մի բջիջը կը գործէ ի շահ ընդհանուր մարմինն, պէտք չէ՞, որ մենք ալ իբրեւ բջիջ մը Աստուծոյ մարմինն մէջ, գործենք յօգուտ ընդհանուր մարմինն՝ բնութեան եւ ընկերութեան, առանց խտրութեան եւ առանց եսասիրութեան: Բայց մենք եսասիրութեամբ կը գործենք քաղցկեղի բջիջի մը նման՝ արժանի մահուան: Բայց Աստուած ողորմած է եւ ներողամիտ եւ կը ներէ եւ առիթը կու տայ դարձեալ «երազելու», որպէսզի այս անգամ յաջողինք:

Ուրեմն ուր մնաց բարեկամիս ըսած դժոխքը կամ մեր մանկուլթեան մեզի սորվեցուցած դրախտն ու դժոխքը: Միթէ Յիսուս մեզի չսորվեցուց, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Մեր կեանքի ընթացքին մեր ցանած բոլոր «հունտ»-երը, միշտ իբր հունձք կ'իրականանան մեր «երազ»-ներուն՝ կեանքին մէջ անոնց որակով եւ պարունակութեամբ՝ հաճելի կամ վատ: Հետեւաբար թէ՛ դրախտը եւ թէ՛ ալ դժոխքը հոս են աշխարհի վրայ՝ «երազ»-ին մէջ: Մեզմէ կախեալ է մեր կեանքերը վերածել դրախտի մը, կամ թէ դժոխքի մը: Իսկ երեւակայական՝ մեր մանկական սորված դրախտը եւ դժոխքը մարդիկ կարենալ կառավարելու համար ստեղծուած գաղափարներ են: Երբ մարդ էակը դրախտի արժանանալու փափաքի, կամ դժոխքի վախազդու գաղափարէն վախնայ ու սարսափի, այն ատեն է որ կառավարելի վիճակի մէջ կը մտնէ: Երբ մենք զմեզ Աստուծմէ կը հեռացնենք կ'ըլլանք դժոխքի մէջ, իսկ երբ կը յարինք առ Աստուած կ'ըլլանք դրախտի մէջ:

Մարդ, Աստուած գտնելու համար, Երուսաղէմ, Մէքքա կամ Հիմալայաներ երթալու պէտք չունի: Ամէն անձ թէ Աստուծմով շրջապատուած է եւ թէ ալ Աստուած իր մէջն է, իր էութիւնն է: Ինք եթէ նոյնիսկ իմացականօրէն գիտէ, բայց փորձառականօրէն այս իրողութեան անգիտակից է: Փրկութիւնն ալ քունէն արթննալ եւ այդ փորձառութիւնը ունենալն է:

Ողորմեա ինձ Աստուած ըստ մեծի ողորմութեան քում:





Անհունն Գրեպերէը ինկո
է:

Ան ին մարմինդ է:

Ամբողջ աշխարհը ին
Գունդ է:

ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

Աշխարհի վրայ գոյութիւն ունեցած են եւ ունին զանազան կրօնքներ: Բոլորն ալ Աստուծոյ գոյութիւնը եւ ներկայութիւնը կը քարոզեն: Սակայն մարդոցմէ ոմանք, իրենց խաւարամիտ հասկացողութեամբ, կը պաշտեն Աստուծոյ զանազան յատկութիւնները եւ յայտնութիւնները: Հետեւաբար կը թուի, թէ անոնք շատ մը «չաստուած»-ներ պաշտեն: Հոգ չէ, թէ այդ զանազան կրօնքները Աստուծոյ եւ Անոր զանազան յատկութիւնները եւ յայտնութիւնները ներկայացնող արձաններուն ինչ ինչ անուններ տան, Աստուած միշտ մէկ է եւ նոյնը բոլորին համար: Հին Յունական եւ Հռովմէական կրօնքներուն մէջ ալ կային զանազան անուններով կոչուած «չաստուած»-ներ, որոնք կը ներկայացնէին Աստուծոյ զանազան յատկութիւնները եւ կարողութիւնները: Այսօր ալ ըստ Հնդկական կրօնքին, անհատներ կը պաշտեն զանազան արձաններ, որոնք Աստուծոյ զանազան յատկութիւնները եւ յայտնութիւնները կը ներկայացնեն: Կան նաեւ կրօնքներ, ինչպէս ճափոնական, չինական եւ պոլտոտայական, որոնք որեւէ արձան կամ պատկեր չունին եւ կը պաշտեն միայն Աստուծոյ աներեւոյթ գօրութիւնը: Պոլտոտայականները իրենց վարդապետին արձանը դրած են եւ կը պաշտեն նաեւ զայն, ինչպէս մենք ալ կը պաշտենք մեր վարդապետը՝ Յիսուս Քրիստոսը: Մահմետականները կը պաշտեն Աստուծոյ միականութիւնը եւ միւս բոլոր կրօնքները կը համարեն հեթանոսական, ներառեալ Քրիստոնէութիւնը, որովհետեւ կ'ըսեն, թէ քրիստոնեան երեք Աստուածներ կը պաշտէ եւ իրենք Քրիստոսի կամ Ս. Հոգիի Աստուածութեան չեն հաւատար:

Մենք Քրիստոնեաներս կը հետեւինք մեր վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի մեզի սորվեցուցած միաստուածութեան: Ս. Գիրքին մէջ յստակ գրուած է, թէ

Աստուած մէկ է: Բայց Յիսուս մեզի նաեւ սորվեցուց երրորդութեան գաղափարը: Հետեւաբար ինչպէս Աստուած մէկ է կ'ըսենք, նոյնպէս ալ կ'ըսենք. «Մէկ Աստուած, երեք անձիք»: «Աստուածպաշտութիւն» յօդուածին մէջ (էջ 264), ջուրին զանազան երեւոյթները իբրեւ երրորդութեան օրինակ փոխաբերաբար ներկայացուած են: Անտարակոյս ջուրը որպէս շոքի, հեղուկ կամ սառ, դարձեալ նոյն քիմիական ջուրն է «Ջջ» (H₂O): Յիսուսի մեզի սորվեցուցած երրորդութիւնն ալ Աստուծոյ զանազան երեւոյթներն են եւ Աստուած դարձեալ միայն մէկ է: Բոլոր ստեղծագործութիւնը Հայր Աստուծոյ «երազ»-ն է: Երբ մենք կ'երագենք մենք մեր երազին մէջն ենք եւ երազն ալ մեր մէջը, նմանապէս Աստուած ալ իր ստեղծագործութեան մէջն է եւ ստեղծագործութիւնն ալ՝ Աստուծոյ մէջ: Երագողը կարելի չէ երագին մէջ տեսնել: Հետեւաբար մենք որ այդ երագին մէջն ենք, մեզի համար կարելի չէ Աստուած տեսնել: Բայց եթէ երագը Աստուծոյ մէջն է, ուրեմն ընդհանուր երագն ալ պէտք է ներկայացնէ Աստուծոյ «մարմինը»: Միթէ Աստուծոյ մարմնացումը Քրիստոս չէ՞նք կոչեր: Քանի որ ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ մարմինն է, հետեւաբար Ֆիզիքական տիեզերքն ալ Քրիստոսի զանազան արտայայտութիւններն են: Ահա՛, ճիշդ աս էր, որ Յիսուս, Աստուծոյ ամենուրեք ըլլալը եւ ամէն անհատի մէջ՝ իբրեւ անձին հոգին Անոր ներկայութիւնը, Ջայն իր Անձին մէջ յայտնաբերելով, մեզի սորվեցուց իրողութիւնը: Քրիստոսի՝ Աստուծոյ յայտնութիւնը նիւթական տիեզերքի մէջ, միայն Հայր Աստուծմէ բղխած զօրութեան օժանդակութեամբ կարելի է: Այդ զօրութիւնն ալ, որ Աստուծոյ գործօն զօրութիւնն է, Յիսուս մեզի սորվեցուց Ս. Հոգի կոչել: Միթէ մեր երագին մէջ մեր բոլոր ստեղծած անձերը վայրերը եւ

առարկաները մեզմէ՝ մեր միտքէն չե՞ն բղխիր եւ մեր մտային զօրութեան արգիւնքները չե՞ն:

Առանց երրորդութեան, կամ երեքէն մէկուն բացակայութեան, որեւէ բան գոյութիւն չէր կրնար եւ չի կրնար ունենալ: Եթէ կը կարծենք թէ երրորդութիւնը միայն Քրիստոնէութեան մէջ գոյութիւն ունի, կը սխալինք: Հնդկական կրօնքը, որուն հետեւողները Աստուծոյ զանազան յատկութիւնները կը պաշտեն, նաեւ ունի հիմնական երրորդութիւնը: Անոնք ունին «Վիշնու»-ն, որ Հայր Աստուծոյ համար իրենց տուած անունն է: «Պրահմա»-ն որ «Վիշնու»-էն բղխած է եւ ընդհանուր տիեզերքը գոյացուցած: Ասիկա Ս. Հոգիին համար իրենց տուած անունն է: Միթէ Ս. Հոգին ալ Հայր Աստուծմէ չէ՞ բղխած: Իսկ «Շիվա»-ն որ աշխարհի վրայ կը գտնուի, Քրիստոսի համար իրենց գործածած անունն է:

Ընդհանուր ստեղծագործութեան գոյատեւումը եւ կայունութիւնը կախեալ է երրորդութեան գոյութենէն: Միթէ երկրաչափութեան մէջ ալ ամենակայուն ձեւը հաւասարակողմ եռանկիւնը չէ՞:

Աստուած անհուն եւ անարատ գիտակցութիւն է: Հետեւաբար ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ ան ինչ որ անզգամ նիւթ կը կոչենք, ինչպէս նաեւ բոյս, անասուն մինչեւ մարդ արարած, բոլորն ալ որոշ չափով, նուազ կամ աւելի, գիտակցութեան մակարդակ մը ունին: Գիտակցութիւնը Ս. Հոգիի զօրութեան հետ գուգահեռ կը յայտնուի: Մարդուն գիտակցութիւնը Աստուծոյ անհուն գիտակցութեան մարդուն կողմէ սահմանափակուած փոքր մէկ արտայայտութիւնն է: Յիսուս մեզի սորվեցուց, որ մարդ արարած, իր աշխարհիկ կեանքի ընթացքին, աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը կերտելով, Աստուծային՝ Քրիստոսի գիտակցութիւնը յայտնաբերելու կարողութիւնը

ունի: Երբ մարդ կարողանայ զայն իրականացնել Գիտցողը, Գիտցուածը եւ Գիտնալը՝ երեքը կ'ըլլան մէկ եւ միականութիւն: Գիտակցութիւնը Հայր Աստուծոյ գիտակցութիւնն է: Հետեւաբար Գիտցողը Հայր Աստուած է: Գիտակցութեան արտայայտութիւնը Ս. Հոգիի միջոցաւ է: Հետեւաբար Գիտնալը կամ ըսենք գիտնալու միջոցառումը Ս. Հոգիի միջոցաւ է: Իսկ Գիտցուածն ալ Աստուծոյ Որդին Քրիստոսն է, որ մարդուն հոգին է: Երբ մարդ արարած բարձր գիտակցութեան մակարդակ մը կերտելով, Քրիստոս իր մէջ լրիւ յայտնաբերել կը յաջողի, երեքը՝ Գիտցողը, Գիտնալը եւ Գիտցուածը, կը միանան եւ կ'ըլլայ միականութիւն, եւ ճիշդ ասոր համար Յիսուս Քրիստոս ըսաւ. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Գիտցողը, գիտնալը եւ գիտցուածն ալ միասին կը կազմեն երրորդութիւն մը: Մարդ արարած իր խաւարամտութեան հետեւանք եւ ցած գիտակցութեամբ չի կրնար ըմբռնել ճշմարտութիւնը եւ կը պնդէ զանազանութեան ճշմարիտ ըլլալը: Այս ուղղութեամբ յարմար է նաեւ կարգալ այս գիրքին 94-րդ էջը:

Մենք՝ Քրիստոնէաներս, երբ կը պաշտենք երրորդութիւնը, ոչ թէ երեք աստուածներ կը պաշտենք, այլ՝ միայն մէկ Աստուած՝ երեք երեւոյթներով: Մահմետականները տակաւին չեն հասկցած թէ Աստուած եւ ստեղծագործութիւնը բոլորն ալ մէկ են: Հետեւաբար անոնք կը տեսնեն երկուքը իրարմէ անջատ եւ չեն կրնար հասկնալ Աստուծոյ երեք զանազան երեւոյթները: Ստեղծողը, ստեղծագործելը եւ ստեղծուածը միասին նոյն երրորդութիւնն է որ կը կազմեն:

Այսօրուայ մարդուն հասկացողութիւնը Աստուծոյ եւ Երրորդութեան նկատմամբ ի՞նչ է : Մարդ արարած, իր խաւարամտութեան, կամ աւելի ճիշդ է ըսել իր յայտնաբերած ցած գիտակցութեան մակարդակին համաձայն, կարող չէ ճշմարտութիւնը «տեսնել»՝ հասկը-

նալ կամ ըմբռնել, ինչպէս որ է Ան:

Մարդը, դժբախտաբար, իր երեւակայութեամբ կը կարծէ թէ Աստուած մարդու կերպարանքով գերմարդկային կարողութիւններով էակ մըն է, որ կը գտնուի աշխարհէ դուրս վայր մը, զոր մարդ «երկինք» կը կոչէ: Մարդկային ուղեղը եւ անոր յայտնաբերած իմացականութիւնը ու նա մանաւանդ այդ ուղեղին միջոցաւ մարդուն կերտած ներկայ գիտակցութեան մակարդակը, կարողութիւնը չունի հասկնալ կամ ըմբռնել Աստուած, այսինքն Հայր Աստուած: Եթէ մարդ Աստուածը հասկնալու կարողութիւնը չունի, հետեւաբար իր այս «ստեղծած» հասկացողութիւնն ալ անտարակոյս սխալ է: Հայր Աստուծոյ նկատմամբ Ս. Գիրքը մեզի տուած է մէկ հասկացողութիւն՝ հետեւեալ նախադասութիւնով. «Ես եմ (A եւ Ω) Ալֆան եւ Օմէղան», այսինքն ամէն ինչի սկիզբը եւ վախճանը: Իսկ Հայաստանեայց Եկեղեցին Ջայն նաեւ ներկայացուցած է «Է» տառով, որ կը ներկայացնէ էութիւն կամ գոյութիւն նաեւ ներկան: Մարդկային միտքը Հայր Աստուծոյ բնոյթը ասկէ աւելի կարող չէ ըմբռնել, միայն կարող է հասկնալ թէ Հայր Աստուած գոյութիւն ունի եւ ամէն բանի սկիզբն եւ թէ վախճանն է: Այս երկուքէն զատ ամէն ինչ, որ մարդ կ'ըսէ Հայր Աստուծոյ նկատմամբ իր երեւակայութեան ստեղծագործութիւնն է: Նոյնիսկ այսօր ամբողջական բնագիտութեան գիտուններն ալ չեն հասկըցած ստեղծագործութեան սկիզբը՝ Հայր Աստուծոյ բնոյթը եւ Ջայն կոչած են միականութիւն (singularity), այն ինչ որ Ս. Գիրքն ալ կը վաւերացնէ. «Աստուած մէկ է»:

«Մի Աստուած էւ Հայր ամենեցուն, որ 'ի վերայ ամենայնի, էւ ընդ ամենեայն, էւ յամենեայն 'ի մէջ» : (Եփեսացիս Դ:6)

«Մէկ է Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորէն վեր, բոլորին հետ եւ ձեր բոլորին մէջն է»:

Հայր Աստուած նաեւ սիրոյ ակն է, Ան ոչ կը դատէ եւ ոչ ալ կը պատժէ: Միթէ սէրը կը դատէ՞ կամ կը պատժէ՞: Պօղոս առաքեալ, հետեւեալ համարներուն մէջ, սիրոյ յատկութիւնները լաւագոյնս ամփոփած է .

«Աէր՝ երկայնամիտ է. չաղցրանայ. սէր՝ ո՛չ նախանշի, ո՛չ ամպարհաւածէ, ո՛չ Ըտարբանայ. ո՛չ յանդիմանի. ո՛չ խնդրէ պիտի, ո՛չ Գրգռի. ո՛չ խորհի պշար. ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն. այլ խնդայ ընդ սրտաւորութիւն. ամենայնի՛ր կեւէ. ամենայնի՛ր Ըստարայ. ամենեւնի՛ն յոսայ. ամենայնի՛ր Ըամբերէ»: (Լ. Աորնթացիս ԺԳ:4-7)

«Այրը համբերատար է, քածցը է. սէրը չի նախանձիր. սէրը չի գոռոզանար, չի հպարտանար. անվայել վարմունք չ'ունենար, իրենը չի փնտռեր, չի գրգռուիր, չարութիւն չի մտածեր. անիրաւութեան համար չ'ուրախանար, հապա ճշմարտութեան ուրախակից կ'ըլլայ. ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը տոկայ»:

Ի՞նչ է մարդուն Ս. Հոգիին նկատմամբ հասկացողութիւնը: Ներկայ հասկացողութիւնը այն է, թէ Ան Հայր Աստուծմէ բղխած զատ էութիւն մըն է: Այս հիման վրայ Աստուծային Երրորդութեան համար կ'ըսենք «Երեք անձիք»: Ս. Հոգին «անձ» մը չէ, այլ Աստուծմէ բղխած զօրութիւնն է: Այսօր ամբողջական բնագիտութեան գիտնականները այդ զօրութիւնը հասկցած են որ թափանցած է ընդհանուր տիեզերքին մէջ՝ ամենուրեք եւ անջրպետը պարապութիւն մը չէ, այլ զօրութեան վայր մը: Որովհետեւ անոնք տակաւին այդ զօրութեան բնոյթը չեն գիտեր, Զայն կոչած են «Մութ զօրութիւն» (Dark energy): Միթէ Աւետարանին մէջ չէ՞ գրուած. «Ես եմ Լոյսը»: Լոյսը կը ներկայացնէ զօրութիւն: Միթէ բնագիտութեան մէջ ալ լոյսը, ըլլայ տեսանելի կամ անտեսանելի, ելեկտրամագնիսական

գորութիւնն չէ՞: Իսկ Լոյսին փոխաբերական իմաստն ալ գիտութիւնն է, այսինքն գիտնալ, որ կարելի է միայն գիտակցութեան (consciousness) միջոցաւ: Միթէ բոլոր տիեզերքի մէջ միայն Աստուծոյ գիտակցութիւնը չէ՞ որ կը գործէ: Ամէն էակի գիտակցութիւնը այդ նոյն Աստուածային գիտակցութիւնն է՝ սահմանափակուած զանազան մակարդակներու յայտնութեամբ: Մարդ արարած ինքն է, որ կը սահմանափակէ իր յայտնաբերած գիտակցութեան մակարդակը եւ այդ սահմանափակ մակարդակին համաձայն ալ կ'ըմբռնէ իր կեանքը, իր կեանքին նպատակը, ինչպէս նաեւ ձգտարտութիւնը: Ս. Հոգին ուրեմն Աստուծոյ գործօն գորութիւնը եւ գիտակցութիւնն է: Զօրութիւնը ինքնին չէգոք է: Զօրութիւնը ոչ կը դատէ, ոչ ալ կը պատժէ: Բայց Յիսուս մեզի սորվեցողց թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են:

«Եւ՝ ամենայն որ ասէ թան զորդոսոյ մարդոյ,
Թողցի նմա. Թայց որ զԿոգիին սորթ ԸայԿոյեցէ,
մի Թողցի նմա»: (Ղուկաս ԺԲ:10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր»:

Եթէ մեղքերը աններելի են, ո՞վ է որ այդ մեղքերուն հատուցումը պիտի տայ: Ամէն գորութիւն ենթակայ է զանազան օրէնքներու, որոնք կը կառավարեն այդ գորութիւնը: Աստուծոյ գորութիւնը՝ Ս. Հոգին ալ կը գործէ Աստուծոյ դրած անխախտելի օրէնքներուն համաձայն: Այս օրէնքները կը կոչուին «Տիեզերական օրէնքներ»: Անոնց մեծ մասը թագնուած են մեր ներկայ գիտակցութեան մակարդակէն: Մարդ իր փորձառութեամբ սորված բնագիտութեան օրէնքներուն դէմ եթէ գործէ, գիտէ թէ ինք պիտի վնասուի: Արդեօք կարելի՞ է ըսել թէ մէկը գինք պատժեց: Ամենեւին:

Յիսուս մեզի սորվեցուց կատարելութեան ուղին, որպէսզի չգործենք Աստուծոյ զօրութիւնը կառավարող օրէնքներուն՝ Ս. Հոգիին դէմ եւ չենթարկուինք այդ օրէնքներուն հակազդեցութիւններուն, եւ ահա՛ անոնք են մեր կերտած ճակատագիրը, որոնց կ'ենթարկուինք ապագային, այսինքն. «կը հնձենք այն ինչ որ ցանած ենք»: Յիսուս Քրիստոս իր բարձր գիտակցութեան մակարդակին հետեւանք տեղեակ էր Զօրութիւնը կառավարող օրէնքներուն եւ ինք այդ օրէնքներուն ներդաշնակ գործելով, շատ մը «գերմարդկային» արարքներ ըրաւ, որոնք մենք «հրաշք» կը կոչենք (Այս գիրքին մէջ, տես նաեւ «Ի՞նչ է Հրաշքը» խորագրեալ յօդուածը):

Հետեւաբար ի՞նչ է ներկայ մարդկութեան «Որդին Աստուծոյ»-ին նկատմամբ հասկացողութիւնը: Ընդհանուր առմամբ անոնք կը կարծեն թէ միայն Յիսուս Քրիստոս Աստուծոյ որդին է, որ մարմնացաւ որպէս մարդ: Այս հայեացքը հակառակ է Ս. Գիրքի տուած տեղեկութիւններուն: Ըստ Ս. Գիրքի մենք բոլորս ալ Աստուծոյ որդիներ ենք:

«Ես ասացի թէ ասորւած է իցէ՛, կամ որդի՛ է Բարձրելոյ ամենե՛կեան»: (Սաղմոս 2Ը:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ եք. Դուք բոլոր Ամենաբարձրին որդիներն եք»»: (Սաղմոս 2Բ:6)

«Սոյն ինչն Ըոգին վկայէ Ըոգոյս մերոմ, եթէ եմէ՛ որդի՛. ապա եւ ժառանգէ՛. ժառանգէ՛ Ասորւածոյ՛ եւ ժառանգակիցէ՛ Քրիստոսի»: (Հոովմայեցիս Ը:16-17)

«Նոյնիքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. Եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

Ուրեմն, Յիսուսի հետ մեր տարբերութիւնը ո՞ր է եւ

ինչո՞ւ Յիսուսի համար կ'ըսենք. «Աստուծոյ միածին Որդին»: Ի՞նչպէս կ'ըլլայ որ Յիսուս Աստուծոյ միածին Որդին է եւ մենք ալ Աստուծոյ որդիները ըլլալով Իր միածին Որդիները չենք: Տեսանելի եւ շօշափելի տիեզերքը իր ընդհանրութեան մէջ կազմուած է Ս. Հոգիի զօրութեամբ: Այդ զօրութեան Ֆիզիքական գետնի վրայ յայտնութիւնն ալ կը կոչենք Քրիստոս՝ Աստուծոյ Որդին: Միթէ ամէն անհատի հոգին իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը չէ՞: Միթէ ըստ Աւետարանի մեր մարմինները Աստուծոյ տաճարները չեն: Ըստ «Հաւատամք»-ին Յիսուս ալ մեզի պէս կատարեալ մարդ էր: Բայց ան իր բարձր գիտակցութեամբ Աստուծոյ անհուն գիտակցութիւնը իր մէջ յայտնաբերած էր: Հետեւաբար Յիսուս միջոցն էր Աստուածայայտնութեան: Ուրեմն այս հիման վրայ ինք միածին էր եւ ունէր նաեւ Աստուածային բնոյթ: Ըստ Յիսուսի ըսածին, մենք ալ Իրեն նման ըլլալու կարողութիւնը ունինք, ինչպէս նաեւ Հայր Աստուծոյ պէս կատարեալ:

«Արդ եղեր՝ չէ որ չէ կարարեալ լի, որպէս ե-
ւայրն յեր երկնա-որ կարարեալ է»: (Մարգեևոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
հայրը կատարեալ է»:

Քրիստոս ներկայ է ստեղծագործութեան մէջ՝ ամենուրեք: Ճիշդ այդ պատճառով ալ Քրիստոս ստեղծագործութեան մէջ ամէն ինչ է: Քրիստոս մեր մէջ կը ննջէ: Մենք մեր իսաւրամտութեամբ եւ պատրանքայինին կապուածութեամբ, փոխանակ փնտռելու ճշմարտութիւնը, չենք արտօներ որ Քրիստոս մեր մէջ ալ Յարութիւն առնէ: Յիսուս իր անձին մէջ Քրիստոսի Յարութիւնը ցոյց տալով մեզի սորվեցուց նոյնը ընել մեր անձերուն մէջ եւս: Ամէն անհատ Քրիստոսի մէկական արտայայտութիւնն է: Ինչպէս մարդ արարած ծնելէ առաջ իր մօր արգանդին մէջ գոյ է իբրեւ

սաղմ, անգիտակից արտաքին աշխարհէն, մենք ալ նմանապէս հոգեւոր գետնի վրայ տակաւին սաղմեր ենք տիեզերքի «արգանդին» մէջ անգիտակից ձգմարտութենէն: Ինչպէս մայր մը կը սպասէ իր զաւկին ծնիլը, Աստուած ալ կարծէք կը սպասէ որ մենք՝ այսինքն մեր հոգին՝ մեր մէջ ննջող Քրիստոսն ալ մեր մէջ «ծնի»՝ Յարութիւն առնէ, ինչպէս Յարութիւն առաւ Յիսուսի մէջ:

**ՀԱՍՏՈՎ ԽՈՍՏՈՎԱՆԻՎ ԵՒ ԵՐԿՐՊԱԳԱՆԵՎ ՔԵՉ,
ԱՐԱՅԱՆԵՒԻ ԼՈՅԱ.
ՄԻԱՆԱԿԱՆ ՍՈՒՐ ԵՐՈՐԴՊՈՒԹԻՒՆ
ԵՒ ՄԻ ԱՍՏՈՒԾՈՒԹԻՒՆ,
ԱՐԱՐԻՉ ԵՒ ԼՈՒՈՅ ԵՒ ՀԱԼԱԾԻՉ ԽԱՎԱՐԻ.
ՀԱԼԱԾԵԱ՛ Ի ՀՈԳՈՅ ԻՄԱԷ
ՉԽԱՎԱՐ ԱԵՂԱՅ ԵՒ ԱՆԳԻՏՈՒԹԵԱՆ.
ԵՒ ԼՈՒԱՒՈՐԵԱ՛
ՉՄԻՏԱ Ի ՄԻ ԺԱՄՈՒ յԱՅՄԻԿ
ԱՊՕԹԵՂ ՔԵՉ Ի ՀԱՃՈՅԱ,
ԵՒ ԱՆՊՈՒՄԻՂ Ի ՔԷՆ ՉԽՆՊՐՈՒՄԾՍ ԻՄ.
ԵՒ ՈՂՈՐԵԱ՛ ՔՈ ԱՐԱՐԱԾՈՅ,
ԵՒ ԻՆՉ՝ ԲԱՉԱՄԵՂԻՍ:**



ԼՈՅՍԸ

Քրիստոս աշխարհի Լոյսն է: Քրիստոս ըսաւ. «Ես եմ լոյս աշխարհի. ...»: Քրիստոս նաեւ ըսաւ. «Ես եմ ճանապարհն, ճշմարտութիւնը եւ կեանքը ...»: Ուրեմն, միակ ճշմարտութիւնը Քրիստոսն է եւ միւս բոլորը, որ մենք ճշմարտութիւն կը համարենք ու մեր փորձառութեան մաս կը կազմեն ճշմարտութիւն չեն: Քանի որ ինք նաեւ «Կեանք»-ն է եւ մենք ալ ողջ ենք ու կ'ապրինք, կը նշանակէ, թէ Քրիստոս ալ մեր կեանքը՝ էութիւնն է: Ծնորհիւ իր մեր մէջ ներկայութեան, կ'ապրինք: Հետեւաբար, իր Լոյսը՝ Զինք մեր մէջ լրիւ յայտնաբերել, ամէն անձի համար բնական արարք մը պէտք է ըլլայ: Յիսուս դարձեալ ըսած է. «Չի ամենայնի որ ունիցի՝ տացի՝ եւ յաւելցի, եւ որ ո՛չն ունիցի, եւ զոր ունիցի՞ն՝ բարձցի՝ ՚ի նմանսէ»: Յիսուս այս խօսքով մեզի կը բացատրէ, թէ ան, որ «հարուստ» է, անոր աւելին պիտի տրուի եւ ան, որ աղքատ է, իր ունեցածն ալ իրմէ պիտի առնուի: Հոս «հարուստ»-ը հոգեկան հարստութիւնն է եւ ոչ նիւթական: Ան, որ հոգեպէս հարուստ է, Քրիստոսի Լոյսը իր մէջ աւելի պիտի փայլի եւ յայտնուի: Աւելիով իրեն պիտի տրուին (տացի՝ եւ յաւելցի) իմաստը աս է: Անձն ալ հոգեւոր ճանապարհին մէջ ալ աւելի կը յառաջանայ, մինչեւ Քրիստոսի իր մէջ յայտնութիւնը: Իսկ ան, որ աղքատ է (որ ո՛չն ունիցի) պիտի կորսնցնէ այն ինչ որ ինք կը խորհի ունենալ (զոր ունիցի՞ն՝ բարձցի՝ ՚ի նմանսէ): Այն անձը, որ հոգեպէս աղքատ է, իր ներքին Քրիստոսի լոյսը չի կրնար յայտնաբերել: Ան նոյնիսկ չի գիտեր, թէ Քրիստոսի Լոյսը իր էութիւնն է եւ իր ներսիզին: Իր այս սխալ հայեացքը եւ խաւարամտութիւնը յառաջ եկած է այն իրողութենէն, թէ ինք պատրանքը՝ աշխարհի շլացուցիչ ամէն ինչը, որ իր առօրեայ

փորձառութեան մաս կը կազմեն, ընդունած է իբր ճշմարտութիւն: Այս հիման վրայ ան նաեւ կը խորհի, թէ իր բոլոր հաւաքած ինչքերը, իր հարստութիւնն են: Ուրեմն զարմանք պէտք չէ պատճառէ, թէ ան այդ բոլորն ալ պիտի կորսնցնէ: Արդեօք որեւէ անձ, երբ մահանայ, իր հետ լուծայ մը իսկ տարա՞ծ է: Մարդ միշտ կարելիութիւնը եւ կարողութիւնը ունի ճշմարտութիւնը գիտնալու եւ «տեսնելու» եթէ ինք ձերբազատուի պատրանքէն:

Յիսուս, ասոր յաջողութեան միջոցը, լերան քարոզին մէջ բացայայտ կերպով ըսաւ. «Երանի սգաւորաց, զի նորա միսիթարեսցին»: Հասկնանք այս երկու գաղափարներուն իրարու հետ ունեցած կապը: Երբ անձը ինչքերով կամ գիտութեամբ «հարուստ» է, ինքզինք «հարուստ»՝ բաւարարուած կը համարէ եւ հետեւաբար ուրախ կ'ապրի: Այս ուրախութիւնը արգելք կը հանդիսանայ, որ ան հոգեւոր կեանքի մէջ յառաջանայ: Բայց, երբ ան կ'անդրադառնայ իր «հոգեկան աղքատութեան» եւ այդ ուղղութեամբ կ'ողբայ, այսինքն սուգ կը բռնէ, որովհետեւ իր մէջ Քրիստոսի Լոյսը չէ յայտնաբերած, այն ատեն ինք պիտի միսիթարուի: Այս միսիթարանքը իր մէջ Քրիստոսի Լոյսին յայտնութիւնն է: Անտարակոյս, ամէն անձ սգալու փորձառութիւնը ունեցած է: Բայց ի՞նչ բանի համար: Ընդհանուր առմամբ մարդիկ կը սգան, որովհետեւ կորսնցուցած են սիրելի մը՝ ընտանեկան անդամ մը, որեւէ աշխարհիկ հաճոյք մը, կամ ստացուած քներ: Յիսուսի ակնարկած սուգը այդ սուգերը չեն: Այն սուգը, որ Յիսուս երանելի կը կոչէ հազուադիւս կը գտնուի, որովհետեւ ան կը ծագի հոգեկան կորուստէ եւ հոգեկան մենատիրութենէ: Նման սուգ անհրաժեշտ է, որպէսզի անձը ստանայ Աստուծոյ միսիթարանքը: Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը գոհ է իր ապրած մակերեսային կեանքէն:

Շատ հաւանաբար շատերու մտքին խորքը պահուած գաղափար մը կայ, թէ իրենց կեանքին մէջ բան մը կը պակսի: Բայց անոնք միշտ կը յուսան որ օր մը կարելի կ'ըլլայ այդ պակասն ալ լրացնել՝ իրենց փորձառու- թեան մէջ գտնուող աշխարհիկ ստացուածքներով:

Մարդիկ արցունքի գետեր կը հոսեցնեն, որովհետեւ գաւակ մը չեն ունեցած, կամ նիւթապէս չեն կրնար հարստանալ: Բայց, ով նոյնիսկ մէկ կաթիլ արցունք կը թափէ, եթէ Աստուած «չէ տեսած»: Արժանիքի նկատմամբ մեր սխալ հասկացողութիւնը պատճառն է մեր խաւարամտութեան: Ինչպէ՞ս հասկնալ խաւարամտութիւնը: Ենթական՝ ան որ գիտակից է՝ անձին ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոս, որքան կ'ընդդիմադրէ առարկային՝ ան որ գիտացուածն է՝ ոչ ենթական՝ նիւթը, նոյն չափով ալ Լոյսը կը հակասէ խաւարին: Հակառակ այս իրողութեան, խաւարամտութեան անբացատրելի զօրութեամբը մարդ արարած իր մտքին մէջ ենթական եւ առարկան իրարու հետ յաճախ շփոթած է եւ այս հիման վրայ ինք ըստ սովորութեան կը կարծէ, թէ առարկան իր ինքնութիւնն՝ հոլթիւնն է: Պէտք է իմացականօրէն պարզ ըլլայ հասկնալ, թէ ճշմարիտ էութիւնը մարմինէն անջատ է, ինչպէս մենք տարբեր ենք մեր հագած հագուստներէն: Բայց երբ մարմինը հիւանդանայ, յաճախ կ'ըսենք. «Ես հիւանդ եմ»: Կարելի է իմացականօրէն հասկնալ թէ ճշմարիտ էութիւնը մարմինէն տարբեր է: Հակառակ այս գիտութեան, երբ զանազան կացութիւններու փորձառութիւնները կ'ունենանք, յաճախ կ'ըսենք. «Ես ուրախ ու երջանիկ եմ՝ կամ տխուր», կախեալ փորձառութենէն: Մենք նաեւ մեր ինքնութիւնը կը տեսնենք մեր ազգականական կապերուն մէջ եւ ինչու չէ նաեւ մեր բարեկամութիւններու միջոցաւ: Դարձեալ մենք մեր ինքնութիւնը կը գտնենք մեր ստացուածքներուն միջոցաւ: Եթէ ամէն

ինչ կորսնցնենք կը խորհինք թէ մենք զմեզ կորսնցուցած ենք: Միթէ 1930-ներու առեւտրական ձախորդութեան ժամանակ, արդիւնաբերութեան լճացման արդիւնք, շատեր իրենց բոլոր հարստութիւնը չկորսնցուցի՞ն: Անոնց մէջ նոյնիսկ անձնասպան եղողներ գտնուեցան: Նման խաւարամտութիւն մը համայն մարդկութեան համար սովորական ըլլալ կը թուի: Այս խաւարամտութիւնը կարելի է անհետացնել միայն Քրիստոսի Լոյսով՝ մեր մէջ իր ներկայութեան ուղղակի փորձառական գիտութեամբը: Երբ կը սկսինք զգալ այդ հոգեկան պակասը մեր մէջ եւ այդ կորուստին համար ալ ճշմարտապէս սգալ, ինչպէս Յիսուս ըսաւ, եթէ նոյնիսկ միայն մէկ կաթիլ ճշմարիտ արցունք թափենք, արդէն Աստուածային խաղաղութիւնը ստանալու ճամբան բացած կ'ըլլանք, որ կու գայ իր ներկայութեան փորձառութեամբը: Միթէ Քրիստոս չըսա՞՞. «Խաղաղութի՛ն թողում՝ ձեզ զխաղաղութի՛ն զիմ տամ՝ ո՛չ որպէս աշխարհս տայ՝ տա՛մ ես ձեզ»:

Յիսուսին լերան քարոզին ակնարկած սուգը նկարագրուած է նաեւ «Նմանութիւն Յիսուսի Քրիստոսի» (Imitation of Christ) խորագրեալ գիրքին մէջ. (Թարգմանաբար կարճ մաս մը ներկայացնեմ) «Աստուած իմ ե՞րբ Քեզի հետ մէկ պիտի ըլլամ եւ Քու սիրոյդ մէջ հալիմ (կորսուիմ), որպէսզի ինքզինքս ամբողջովին մոռնամ: Իմ մէջս յայտնուէ եւ ես ալ քու մէջդ ըլլամ: Շնորհէ որ յաւիտեան նման կերպով միասին ըլլանք»:

Մենք կարող կ'ըլլանք այս աստիճանին հասնիլ երբ կը հասկնանք թէ ոչ մի բան կարող է մեզի խաղաղութիւն տալ, բացի Աստուծոյ «տեսիլքը»: Այն ատեն Աստուած մագնիսի մը նման կը քաշէ մարդուն միտքը դէպի իրեն, ինչպէս մագնիսը իրեն կը քաշէ ասեղը: Այն ատեն է որ միտքարանքն ալ կու գայ եւ Լոյսը կը յայտնուի անձին մէջ:



ԿՈՅՐԸ
ՏԷ՛ր ԻԱ,
ՍԷ՛ր ԻԱ,
ԶԱՐԿԻԱ ՔԱՉՔԵՐ՝
ԿՈՒՐԱՅՐԻ՛Ն ԻԱ ԱՉՔԵՐ,
ԼՈ՛ՅՍ ՏՈՒՐ,
ՅՈ՛ՅՍ ՏՈՒՐ,
ԱՍԱ՛Ն ԱՎԷ՛Ն
ԻԱ ԱՉԵՐՈՒՄԻ ԽԱՎԷ՛:
ԿՈՒՐՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ԱՂԵՐՍ
ԿԱ՛Յ, ՏԷ՛ր, ՏԷ՛ր ԻԱ,
ԲԱ՛Յ, ՏԷ՛ր, ԱԷ՛ր ԻԱ,
ՋԱՐԿԻՆ ՊԵԿԵՐ
ԻԱ ԹԵԿԵՐ,
ՏՈ՛ՒՐ, ՏԷՐ,
ՀՈ՛ՒՐ ՏԷՐ,
ՈՐՊԷԱ ԽՈՏԵՐ
Է՛Լ ՉՊՈՊԱՆ
ԻԱ ՈՏԵՐ...

ԿՈՄԻՏԱՆ ՎԱՐՊԱՄԵՏ

ՄԱՐԴՈՒՆ ՏԵՂԸ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Այս գրութեան մէջը իմաստասիրութիւնները նախորդ գիրքերուս, նոյնիսկ այս գիրքին այլ գրութիւններուն մէջ ալ ներկայացուած են: Հոս անոնց ամփոփումն է որ կը ներկայացուի:

Ընդհանուր ստեղծագործութեան մէջ մարդուն տեղը հասկնալու համար կարեւոր է նախ հասկնալ մեծաշխարհի (macrocosm) եւ մանրաշխարհի (microcosm) իրարու հետ ունեցած փոխ-յարաբերութիւնը: Հերմիտական առածը կ'ըսէ. Ինչպէս վերը, այնպէս ալ վարը (As above, so below): Հանրութեան կողմէ որպէս «հրեաներու աստղ» ճանչցուած խորհրդանշանին իմաստն ալ ճիշդ աս է: Մարդ իր կեանքի մէջ իր հինգ զգայարանքներով տեղեկութիւն կը ստանայ եւ փորձառութիւններ կ'ունենայ մանրաշխարհեան չափի վրայ: Ան իր կեանքի տեւողութեան ընթացքին միայն տեղեակ է մանրաշխարհէն: Ուրեմն մարդ մանրաշխարհը լաւ մը հասկնալու կարելիութիւնը եւ կարողութիւնը ունի: Մեծաշխարհը կարենալ հասկնալու համար, ընդհանուր մարդկութեան ներկայ գիտակցութեան մակարդակին համապատասխան, մանրաշխարհի մէջ ամէն ինչ տրուած է: Աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել, թէ մեծաշխարհեանը կըրկնուած է մանրաշխարհի մէջ: Այս հիման վրայ, եթէ մարդ հետաքրքրուի, հետապնդէ, տեսնէ եւ սորվի մանրաշխարհի պատահարներուն, դէպքերուն մեզի տուած դասերը եւ չապրի նման անասուններու՝ միայն ուտել, խմել եւ բազմանալով, հոն թագնուած ճշմարտութիւնները հասկնալու կարելիութիւնը կ'ունենայ: Իսկ, եթէ հասկնայ եւ սորվի այդ իմաստասիրութիւնները եւ փոխանցէ զանոնք մեծաշխարհեան չափին, ինք ալ կը հասկնայ իր եւ Աստուծոյ հետ ունեցած յարաբերութիւնը եւ իր տեղը ստեղծագործութեան՝

տիեզերքի մէջ:

Հետեւաբար, նախ հասկնանք այն ինչ որ մեր փորձառութեան մաս կը կազմէ, այսինքն, հասկնանք այն ինչ որ մեզի յայտնուած է մանրաչիտարհի մէջ: Բայց բուն հարցին չսկսած կարելոր է հետեւեալ երեք սկզբունքները (axioms) նկատողութեան առնել:

ա- Բոլոր տիեզերքի ստեղծիչը Աստուած է:

բ- Աստուած մարդը ստեղծեց իր «պատկերին» նման, հետեւաբար մարդն ալ ստեղծիչ է:

գ- Նաեւ ըսուած է թէ Աստուծոյ մէկ օրը մարդուն միլիոնաւոր տարիներն են: Այսօր գիտունները նաեւ փաստած են ժամանակին յարաբերական ըլլալը (Այս ուղղութեամբ թելադրելի է կարգաւ «Տիեզերական Օրէնքները» գիրքին «Գիտակցութիւնը եւ ժամանակը» խորագրեալ է. գլուխը, էջ:203):

Ուրեմն այն ինչ որ մեզի կը թուի, թէ պատահած է տարիներու, դարերու եւ հազարամեակներու ընթացքին, բոլորն ալ պատահած են Աստուծոյ մէկ օրուան ընթացքին: Հետեւաբար մեր մէկ օրն ալ բաւ պէտք է ըլլայ հասկնալու համար այն ինչ որ հոն թագնուած է: Իսկ մենք փորձառութիւնը ունենալով հանդերձ զանոնք կ'անտեսենք եւ չենք հասկնար մեծաչիտարհեանը:

Ուրեմն մարդոց մէկ օրուայ փորձառութիւնը ի՞նչ է: Մարդիկ մէկ օրուայ մէջ ինչ կ'ընեն, որ հասարակաց է անխտիր բոլորին փորձառութեան ներքեւ: Մարդ դպրոց կ'երթայ եւ կ'ուսանի, կ'ամուսնանայ, զաւակ կ'ունենայ, կ'աշխատի, կը «խաղայ»՝ կը զուարճանայ ...: Բայց այս բոլորը ընդհանուրին հասարակաց չէ: Մին դպրոց կ'երթայ, ուրիշ մը չ'երթար: Մին բժշկութիւն կ'ուսանի, ուրիշ մը՝ փիլիսոփայութիւն: Ոմանք կ'ամուսնանան, ուրիշներ՝ ոչ: Ոմանք շատ զաւակներ կ'ունենան, ոմանք՝ բնաւ: Ամէն մի անձ տարբեր գործերով կը զբաղի: Ոմանք կը զուարճանան մարզական խաղեր դիտելով կամ մասնակցելով, ուրիշներ՝ երաժշտութիւն մտիկ ընելով եւ կամ

տարբեր զբաղումներով: Ասոնցմէ ոչ մէկը բոլորի հասարակաց է: Ուտելը եւ խմելը կարելի է հասարակաց նկատել: Ճիշդ է թէ գոյատեւելու՝ մարմինը ապրեցնելու համար մարդ պարտ է ուտել եւ խմել: Հակառակ որ ուտելը եւ խմելը անհրաժեշտութիւն է, եւ ուտել եւ խմելու փորձառութիւնը բոլորին հասարակաց կը թուի ըլլալ, բայց կան օրեր որ մարդիկ ուտելիք չեն ունենար եւ սովամահ կ'ըլլան: Կան անձեր որոնք անապատին մէջ կը կորսուին եւ խմելու ջուր չեն գտներ եւ այդ օրերուն խմելու փորձառութիւն չեն ունենար: Նաեւ կան անձեր որոնք կամաւոր, շրջան մը ծոմ կը պահեն եւ չեն ուտեր: Հետեւաբար ուտելու եւ խմելու փորձառութիւնը, ամէն օր բոլորին հասարակաց չէ: Չանագան մշակոյթներու ուտելիքները իրարմէ կը տարբերին, հետեւաբար ուտելու եւ խմելու փորձառութիւններն ալ իրարմէ տարբեր կ'ըլլան: Միայն ծնունդը եւ մահը կը թուին բոլորին հասարակաց ըլլալ: Բայց ծնիլ, մեծնալ, ծերանալ եւ մեռնիլ մէկ օրուայ մէջ չեն ըլլար: Հետեւաբար ի՞նչ բաներ հասարակաց են յամայն մարդկութեան, որոնք տեղի կ'ունենան մէկ օրուայ մէջ եւ ամէն օր: Մին շնչառութիւնն է, իսկ միւսն ալ՝ գիտակցութեան մակարդակի փոփոխութիւնը:

Մարդ մէկ օրուայ մէջ փորձառութիւնը կ'ունենայ նուազագոյն երեք զանազան գիտակցութեան մակարդակներու: Ան կը վայելէ իր առօրեայ գործունէութեան գիտակցութեան մակարդակը, որ կը կոչուի «արթուն» գիտակցութեան մակարդակ: Նոյնիսկ այս մակարդակն անգամ ժամէ ժամ կը յայտնաբերէ մանր մակարդակի փոփոխութիւններ: Նոյնիսկ այն անձը որ կարող է օր մը չքնանալ, իր «արթուն» գիտակցութեան մակարդակը զգալիօրէն կը պակսի եւ իր գործելու եւ տրամաբանելու կարողութիւնն ալ կը նուազի: Զգալի գիտակցութեան մակարդակի փոփոխութիւն տեղի

կ'ունենայ երբ մարդու գիտակցութիւնը կը յափշտակուի «արթուն» մակարդակէն աւելի ցած «քունի» գիտակցութեան մակարդակի: Քունի ընթացքին ալ մարդուն գիտակցութեան մակարդակը բազմիցս կը փոխուի «խորունկ քունի» եւ «երազի» մակարդակներու միջեւ: Այսօր գոյութիւն ունին թեւի ժամացոյցներ, որոնք անձին սրտին զարկին յաճախականութիւնը, ինչպէս նաեւ անձին երբ եւ որքան քնանալը եւ քունի ընթացքին քանի անգամ եւ ինչ տեւողութեամբ խորունկ քունի մէջ ըլլալը եւ քանի անգամ եւ ինչ տեւողութեամբ իր գիտակցութեան աւելի բարձր երազի մակարդակի մէջ ըլլալը ցոյց կու տան: Ուրեմն այս երեք հիմնական եւ սովորական՝ հասարակաց գիտակցութեան մակարդակները պարտ ենք լաւ ուսումնասիրել եւ հասկնալ:

Քունի մէջ երբ մարդ կ'երազէ, ինք այդ երազին ստեղծիչն է: Երազը մարդուն մէջն է որ կը գոյանայ եւ անկողինին մէջ քնացող մարդուն ստեղծագործութիւնն է: Մարդ ինք իր բոլոր երազներուն մէջն է եւ ինք է որ բոլորին փորձառութիւնը կ'ունենայ: Ուրեմն ինք երազին՝ իր ստեղծագործութեան մէջի ամէն ինչէն տեղեակ է: Թէեւ ինք իր երազին մէջն է եւ երազին մէջի զանազան հաճելի կամ վախազդու փորձառութիւնները կ'ունենայ, սակայն ինք զինք երազին մէջ չի տեսներ: Երազողը, երազին մէջ ըլլալով հանդերձ, հոն չի տեսնուիր: Նաեւ պէտք է հասկնանք թէ երազին մէջ իր ներկայութիւնը անհրաժեշտ է: Առանց իր երազին մէջ իր ներկայութեան երազն ալ գոյութիւն չի կրնար ունենալ: Երբ մարդուն գիտակցութեան մակարդակը երազի ցած մակարդակին վրայ է, իրեն համար երազին մէջ ինները ճշմարտութիւն են: Ճիշդ այդ պատճառով վախազդու երազները անձին բնախօսութեան (physiology) վրայ զգալի ազդեցութիւններ կ'ունենան, որովհետեւ

անձը զանոնք կը նկատէ իբրեւ ճշմարտութիւն եւ ցոյց կու տայ պատշաճ հակազդեցութիւն: Ան, այդ բոլորին ճշմարտութիւն չըլլալը եւ միայն երազ մը՝ պատրանք մը ըլլալը կը հասկնայ երբ երազէն արթննայ, այսինքն իր գիտակցութեան մակարդակը երազի մակարդակէն ակելի բարձր արթուն մակարդակի յափշտակուի: Մէկ գիշերուայ քունի ընթացքին մարդ բազմաթիւ երազներ կարող է տեսնել, բայց բարեբախտաբար կամ դժբախտաբար ան միայն արթննալու մօտ ստեղծած ու տեսած երազը արթննալէ վերջ կը յիշէ: Երազը՝ իր ստեղծագործութիւնը վերջ կը գտնէ երկու ձեւով: Մին, երբ քունէն արթննայ: Իսկ միւսը՝ երբ ան խորունկ քունի՝ ալ ակելի ցած գիտակցութեան մակարդակին յափշտակուի: Ասկէ յայտնի է թէ մարդուն համար իր գիտակից եղած ճշմարտութիւնը կախեալ է իր գիտակցութեան մակարդակէն: Խորունկ քունի մէջ՝ շատ ցած գիտակցութեան մակարդակին, ան ոչ մէկ բանէ տեղեակ է: Քիչ մը ակելի բարձր գիտակցութեան մակարդակին, այսինքն երազի մէջ, ան տեղեակ է իր ստեղծագործութեանէն՝ միայն իր ստեղծած երազէն: Միայն շատ ակելի բարձր՝ «արթուն» գիտակցութեան մակարդակին, ան տեղեակ կ'ըլլայ այս աշխարհին: Ոչ երազի եւ ոչ ալ խորունկ քունի մէջ ան տեղեակ է այս աշխարհէն: Այդ պարագաներուն իրեն համար աշխարհը գոյութիւն չունի: Հարցը այն է, թէ մեր արթուն գիտակցութեան մակարդակին այս աշխարհի նկատմամբ մեր ունեցած փորձառութիւնը մենք կը նկատենք ճշմարտութիւն ըլլալ, նաեւ՝ ճիշդ: Կենդանաբանները մեզի կ'ըսեն, թէ զանազան անասուններու այս աշխարհի փորձառութիւնը շատ տարբեր են մարդկային փորձառութեանէն: Առիւծի մը համար բոլոր աշխարհը միայն սեւ եւ ճերմակի զանազան նրբերանգներ են: Զղջիկի մը համար աշխարհ արձագանգներու վայր մըն է: Իսկ ճանճը

աշխարհը ամբողջովին տարբեր կը տեսնէ: Ան ունի երկու բաղադրեալ աչքեր եւ այդ երկուքին միջեւ երեք պարզ աչքեր: Ան միանգամայն մէկէ աւելի ուղղութիւններ կը տեսնէ եւ նաեւ՝ շարժումները դանդաղ: Մէկ պատկերը կը տեսնէ կտորներու բաժնուած: Անոնց բոլորն ալ գիտակցութիւն մը ունին եւ արթուն են: Արդեօք կարելի չէ՞, որ աշխարհի նկատմամբ մեր ունեցած փորձառութիւնը, որ մենք ճշմարտութիւն կը նկատենք, ճշմարտութիւնը չ'ըլլայ եւ միայն՝ մեր «արթուն» կոչած «ցած» գիտակցութեան մակարդակին մեզի տուած հասկացողութիւնը: Եթէ մեր ներկայ «արթուն» գիտակցութեան մակարդակէն աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը կարողանանք յափըշտակուիլ, արդեօք կարելի է՞, որ մեր աշխարհի նկատմամբ ունեցած փորձառութիւնը ամբողջովին տարբեր ըլլայ: Միթէ աս չէ՞ Աւետարանին մէջ գրուած յափշտակութիւնը: Միթէ աս չէ՞ որ Յիսուս մեզի սորվեցուց, այսինքն բոլորին միականութիւնը: Չե՞նք խորհիր, որ եթէ աւելի բարձր գիտակցութեան մակարդակի մը յափշտակուինք մենք ալ փորձառութիւնը կ'ունենանք միականութեան եւ կը հասկնանք թէ ամէն ինչ նոյն «Աստուծոյն» զանազան դրսերեւումներն են, քան թէ միայն տեսնենք զանազանութիւն եւ յամառօրէն ըսենք թէ անոնք բոլորն ալ իրարմէ անջատ են: Մեր այս «արթուն» կոչած ցած գիտակցութեան մեզի տուած փորձառութիւնը կը յառաջացնէ «ես»-ի եւ «ան»-ի երկուութիւնը: Այս հայեացքն է, որ կը ստեղծէ եսասիրութիւնը: Այսօր ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) մեզի կ'ըսէ թէ բոլոր գիտցուած զօրութիւնները մէկ զօրութեան զանազան դրսերեւումներն են: Անոնք տակաւին չեն հասկցած այդ «միացեալ» զօրութեան բնոյթը ու զայն կառավարող օրէնքները, որով զայն կոչած են «մութ զօրութիւն» եւ այդ

զօրութեան վայրն ալ՝ միացեալ ազդավայր (unified field): Յիսուս ասոնք մեզի սորվեցուց եւ այդ զօրութիւնը կոչեց Ս. Հոգի: Մեր գիշերուան քունի ընթացքին մեր ունեցած երազին մէջի ամէն ինչ եւ ամէն անհատ, որ մեր ստեղծագործութիւնն է, մեր միտքին յառաջ բերած զանազան արտայայտութիւնները չե՞ն: Միտքը մէկ չէ՞: Քնացողին միտքը «միացեալ ազդավայրն» է եւ երազին մէջի բոլորին կեանք տուողը: Երազին մէջի անհատները կարող չեն երազը ստեղծել կամ անոր վերջ տալ: Երազին թէ՛ սկիզբը եւ թէ՛ վախճանը կախեալ է քնացող անհատէն: Ճիշդ է թէ քնացողին միտքը կը գործէ գլխաւորապէս անհատին ուղեղով եւ սրտով, բայց ան նաեւ ներկայ է ընդհանուր մարմնին ամէն մի բջիջին մէջ եւս: Հետեւաբար մարդուն երազը գոյ է իր ընդհանուր մարմնին մէջ: Այս հիման վրայ ճիշդ կ'ըլլայ ըսել թէ իր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ իր մարմինը:

Մանրաշխարհեան չափի վրայ, այն ինչ որ սորված ենք, եթէ զայն փոխանցենք մեծաշխարհեան չափի, պէտք է կերտենք որոշ հասկացողութիւն տիեզերքի ու ստեղծագործութեան նկատմամբ եւ հասկնանք ու գիտնանք մեր՝ մարդուն տեղը ստեղծագործութեան մէջ: Եթէ «ինչպէս վերը, այնպէս ալ վարը» առածը ճիշդ է, մենք ալ պէտք է կարող ըլլանք մեր մանրաշխարհեան սորվածը՝ փորձառութիւնը փոխանցել մեծաշխարհեանին:

Այս ուղղութեամբ Աւետարանէն հետեւեալ մէջբերումը կարելի է օգտակար ըլլայ հասկնալու համար այս փոխանցումին իմաստը:

«Ե՛ս եմ ո՛րքն ճշմարիտ՝ եւ Հայր իմ մշակէ՛: Ամենայն ուր որ յի՛ս է՝ եւ ո՛չ բերե պրոպետս կորե՛ս. եւ ամենայն որ բերե պրոպետս՝ ո՛րքե՛»

սնա, սնա առաւել էա պարզաբեր լիցի: Դոստ
արդէն իսկ սո՛րբ էի վասն բանին՝ սոր խօսեցայ
ընդ Յէս: Ասցէի յիս՝ էա էա ՚ի Յէս: Որպէս
սո՛ւն ո՛չ կարէ պարօղ բերել յանձնէ իրմէ ելել
չիցէ՛ Ըստարարեալ յորձն, նոյնպէս էա դո՛ստ՝
ելել ո՛չ յիս Ըստարարեալ իցէի: Ես էմ որք՝ է-
դոստ ո՛ւր որ Ըստարարեալ է յիս՝ էա էա ՚ի
նա՛, նա՛ բերէ պարօղ յոյժ. սնա առանց իմ
ո՛չնչ կարէի առնել: Ելել ո՛չ է Ըստարարեալ
յիս, էլ նա արդար իբրեւ սո՛ւն, է-
ցամակեցա՛ւ էա ժողովէն սնա, էա ՚ի Ըստ-
արարեալն՝ էա այրի: Ելել կացէի յիս, էա բանի
իմ ՚ի Յէս կայցեն, սոր ինչ կամիցի ինդրեա-
ջի՛ի էա լինիցի Յէս: Յա՛յամիկ սոսա-արեցա՛ւ
Ըստ իմ, սնա պարօղ յոյժ բերիցէի, էա եղիջի
իմ աշակերտի»: (Յովհաննու ժե: 1-8)

«Ես էմ ճշմարիտ որթատունկը, եւ իմ Հայրս՝ մշակն է:
Ամէն ճիւղ՝ որ իմ վրաս է ու պտուղ չի բերեր, կը
վերցնէ գայն. իսկ ամէն ճիւղ որ պտուղ կը բերէ՝ կը
մաքի գայն, որպէսզի ա՛լ աւելի պտուղ բերի: Դուք
արդէն մաքուր էք այն խօսքով՝ որ ըսի ձեզի: Իմ մէջս
մնացէք՝ ու ես՝ ձեր մէջ. ինչպէս ճիւղը չի կրնար
ինքիւրմէ պտուղ բերել՝ եթէ որթատունկին վրայ չմնայ,
նոյնպէս ալ դուք չէք կրնար՝ եթէ իմ մէջս չմնաք: Ես
որթատունկն էմ, եւ դուք ճիւղերն էք. ան որ իմ մէջս
կը մնայ, ու ես՝ անոր մէջ, անիկա՛ շատ պտուղ պիտի
բերի, որովհետեւ առանց ինծի ոչինչ կրնաք ընել: Եթէ
մէկը իմ մէջս չմնայ, ան դուրս կը նետուի՝ ճիւղի մը
պէս, եւ կը չորնայ. գանոնք կը ժողվեն ու կրօնը կը
նետեն, եւ անոնք կ'այրին: Եթէ դուք մնաք իմ մէջս, ու
իմ խօսքերս ալ մնան ձեր մէջ, ի՛նչ որ ուզէք՝ պիտի
խնդրէք, եւ պիտի ըլլայ ձեզի: Իմ Հայրս կը

փառաւորութի՛ երբ դուք շատ պտուղ բերէք. այսպէս՝ իմ
աշակերտներս կ'ըլլաք»:

Եթէ մեր երազը մեր ստեղծագործութիւնն է, ուրեմն տիեզերքն ալ, որ Աստուծոյ ստեղծագործութիւնն է, պարտ է ըլլալ Աստուծոյ երազը: Այս հիման վրայ ալ ընդհանուր տիեզերքը կը ներկայացնէ Աստուծոյ մարմինը: Ինչպէս մեր երազներուն մէջի բոլոր անհատներուն կեանքը մեզմէ՝ քնացողէն կը բղխի, նմանապէս Աստուծոյ երազին մէջի բոլոր հակներուն կեանքն ալ Աստուծմէ կը բղխի: Այդ կեանքը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Միթէ ամէն անհատի հոգին Քրիստոս չէ՞: Միթէ ամէն անհատի մարմինը Աստուծոյ տաճարը չէ՞: Միթէ Աստուած՝ Քրիստոս իր տաճարին մէջ չ'ըլլա՞ր: Ինչպէս երազը Աստուծոյ մէջ է, Աստուած ալ իր երազին մէջ ամենուրեք է: Բայց Աստուած իր երազին մէջ ներկայ ըլլալով հանդերձ, Ան հոն չի տեսնուիր: Մարդ ցած գիտակցութեան մակարդակ մը ունի, Հետեւաբար իր ստեղծած երազին մէջի անհատները կարողութիւնը չունին երազողին ունեցած գիտակցութեան մակարդակէն աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը կերտել: Հետեւաբար մեր երազները կարող են ցուցաբերել անհատներ զանազան գիտակցութեան մակարդակներով, բայց ոչ մեր ունեցած մակարդակէն աւելի բարձր: Եթէ ընդհանուր տիեզերքը Աստուծոյ երազն է, ամէն մի անհատի կեանքի պատահարները եւ ընթացքն ալ իր ներքին ննջող Աստուծոյ Որդւոյն՝ Քրիստոսի երազն է: Այս երազին մէջ մարդ կարողութիւնը ունի իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել մինչեւ երազողին գիտակցութեան մակարդակին, որ Քրիստոսի գիտակցութեան մակարդակն է: Երբ անկողինին մէջ քնացող անձին երազին գիտակցութեան մակարդակը կը բարձրանայ երազի մակարդակէն արթուն մակարդակի, երազը եւ երազին մէջի բոլորն ալ կը լուծուին երազողին մտքին մէջ: Երբեմն

կարող ենք երազէն արթննալ ու գիտենք թէ արթուն ենք բայց երազը, եթէ հաճելի է, տակաւին կը շարունակէ: Այն ատեն երազի մէջի անձը կարող է ըսել. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Յիսուս իր կերտած բարձր գիտակցութեամբ յայտնաբերեց Աստուծոյ Որդին՝ Քրիստոս իր մէջ եւ ըսաւ թէ մենք ալ կարող ենք նոյնը ընել: Ինչո՞ւ չենք ըներ:

Ինչպէս մարդ մէկ քունի ընթացքին բազմիցս երազներ կրնայ տեսնել՝ նմանապէս Քրիստոս ալ: Մեր գիտակցութեան մակարդակի վրայ մարդիկ զայն կոչած են վերամարմնացում: Որովհետեւ մեր գիտակցութեան մակարդակին ժամանակը շատ աւելի արագ կ'ընթանայ, սակայն մեզի կը թուի թէ տարիներ տեւած է: Ինչպէս մեր երազները, որոնք կը կարծենք թէ ժամեր տեւած են, գիտունները կ'ըսեն թէ հազիւ մէկ վայրկեան տեւած են: Ուրեմն այն կեանքը որ կ'ապրինք, որ մօտաւորապէս 70-էն 100 տարի կը տեւէ, մեր ներքին ննջող Քրիստոսի համար միայն ակնթարթ մըն է: Երբ Քրիստոսի երազը վերջանայ մեր «կեանքն» ալ կը վերջանայ եւ կը լուծուինք Քրիստոսի մէջ: Միթէ չե՞նք ըսեր թէ միակ ճշմարտութիւնը Աստուած է: Հետեւաբար մեր կեանքը երազ մըն է: Այդ երազը կարող է հաճելի ըլլալ կամ վախազդու: Այդ մեր Քրիստոսէն ստացած Ս. Հոգիի զօրութեան որակէն եւ ասոր հետեւանք ալ մեր կերտած գիտակցութեան մակարդակէն կախեալ է: Եթէ մենք Քրիստոսի այս երազին մէջ, որ մեր աշխարհիկ կեանքը կը համարենք եւ ճշմարտութիւն կը կարծենք, կարողանանք մեր գիտակցութեան մակարդակը բարձրացնել մինչեւ Քրիստոսի գիտակցութեան մակարդակին, այն ատեն Քրիստոս յարուցիւն կ'առնէ մեր մէջ, իր քունէն կ'արթննայ, ինչպէս Յիսուս յաջողեցաւ ընել: Եւ ահա՛, աս է փրկութիւնը: Յիսուս իր կեանքով ցոյց տուաւ ու

մեզի սորվեցուց փրկութեան «ճամբան»: Ինչպէս վերեւ գրուած է ամէն անհատի կեանքը եւ իր կեանքի բոլոր պատահարները իր ներքին Քրիստոսի երազն են: Երբ Քրիստոս խորունկ քունի մտնէ երազն ալ՝ մեր կեանքը վերջ կը գտնէ եւ եթէ դարձեալ երազէ մենք ալ կը նկատուինք վերամարմնացեալ: Հետեւաբար ո՞ր է դրախտը եւ դժոխքը, եթէ ոչ հոս՝ աշխարհի վրայ, ըստ մեր կերտած գիտակցութեան մակարդակին ու կենցաղին:

Իսկ Հայր Աստուած, մեր՝ յամայն մարդկութեան հաւաքական կերտած գիտակցութեան մակարդակին համաձայն, կարող է երկիրը երազել իբրեւ դրախտ կամ իբրեւ դժոխք: Մեր խաւարամտութեամբ ստեղծած պատերազմները աշխարհը կը վերածեն դժոխքի: Յամայն մարդկութիւնը նաեւ կարող է զայն վերածել դրախտի: Ինչո՞ւ չենք ըներ: Ըստ Մինդոց գիրքին Աստուած երազեց դրախտը, բայց մարդ զայն փոխեց դժոխքի: Երբ Հայր Աստուծոյ երազը վերջանայ ընդհանուր տիեզերքն ալ իր վախճանին կու գայ:

Մարդ մահէն կը վախնայ, որովհետեւ տակաւին չէ հասկցած թէ այս աշխարհը եւ ինք միայն երազ՝ պատրանք մըն են: Իր ճշմարտութիւնը գինք երազող Քրիստոսն է: Իր ճշմարիտ հուծիւնը իր ներքին Քրիստոսն է եւ ոչ իր մարմինը, իր միտքը կամ իր իմացականութիւնը, ոչ ալ իր անունը, իր ընտանիքը, իր ստացուածքները կամ իր բարեկամներուն ու թշնամիներուն հետ ունեցած յարաբերութիւնները: Քրիստոս անմահ է, հետեւաբար անձին իր ճշմարիտ հուծիւնն ալ անմահ է: Այս հիման վրայ, ոեւէ անձ պէտք չէ վախնայ մահէն: Երբ մարդ իր քունի ընթացքին երազի մակարդակէն կ'անցնի խորունկ քունի գիտակցութեան մակարդակի, իր բոլոր զգացումները ու խորհուրդները կը դադրին, հետեւաբար իր միտքը կ'ըլլայ սրբուած՝

«սուրբ սիրտ», այդ միջոցին ինք իր էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդակցութեան մէջ ըլլալուն Անկէ կը ստանայ յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութիւն եւ երբ արթննայ կազդուրուած ու զօրացած կ'ըլլայ: Բայց ինք այս բոլորը կ'ընէ շատ ցած գիտակցութեան մակարդակի վրայ, հետեւաբար անտեղեակ է Քրիստոսի հետ հաղորդակցելէն: Ան եթէ իր միտքը «սրբէ» երբ ինք «արթուն» գիտակցութեան մակարդակի վրայ է, այն ատեն ինք դարձեալ կը հաղորդակցի իր ներքին Քրիստոսի հետ, բայց այս անգամ գիտակցաբար եւ ինք կը վայելէ Աստուածային երանութիւնը: Եւ ասա՛, աս է ամենավեհ եւ ճշմարիտ աղօթքին՝ խոկումին նպատակը՝ կերտել «սուրբ սիրտ»՝ գիտակցաբար:

Ինչպէս վերեւ գրուած է, Հայր Աստուծոյ երազը ընդհանուր ստեղծագործութիւնն է: Ըստ վերեւի Աւետարանէն մէջբերումին Հայր Աստուած «որթատունկին մշակն» է: Այդ երազը գոյ է միայն Հայր Աստուծոյ գիտակցութեան հետեւանք: Այդ գիտակցութիւնը, կամ յայտնուած է կամ ալ՝ ոչ: Ան ենթակայ չէ զանազան մակարդակներու: Իսկ եթէ Ան չյայտնուի տիեզերքն ալ կ'անհետանայ: Հայր Աստուծոյ երազը միայն մէկ մակարդակ ունի, որ անհուն գիտակցութիւնն է: Ս. Հոգին, որ Հայր Աստուծմէ բղխած է Հայր Աստուծոյ երազն է: Բայց բոլոր ստեղծագործութիւնը կազմուած է Ս. Հոգիի զօրութեամբ: Կարելի է ըսել թէ Ս. Հոգիի յայտնութիւնն ալ միայն երկու մակարդակ ունի: Մին գոյատեւել միայն իբրեւ զօրութիւն, իսկ երկրորդն ալ յայտնուած իբրեւ Ֆիզիքական տիեզերք: Այս Ֆիզիքական տիեզերքը Աստուծոյ Որդին՝ Քրիստոսն է: Քրիստոս ալ իբրեւ ամէն անհատի հոգին, կ'երազէ անհատին կեանքը: Քրիստոսի յայտնութիւնն ալ երեք մակարդակներու վրայ է: «Խորունկ քուն», որ իր երազին վերջ կու տայ, այսինքն մարդուն կեանքին՝ Քրիստոսի երազին

վախճանը, որ մահ կը կոչենք: Երկրորդ մակարդակը Քրիստոսի «երազի» մակարդակն է, որ մարդուն կեանքը կ'երազէ: Իսկ երրորդ մակարդակն ալ կ'ըլլայ մարդու միջոցաւ, որ Քրիստոսի քունէն արթննալն է: Մարդուն մէջ Քրիստոսի յայտնութիւնն է: Մարդուն գիտակցութեան մակարդակով Քրիստոսի գիտակցութեան մակարդակին յափշտակուելն է: Աստուած կը յայտնուի մարդու միջոցաւ: Միթէ աս չէ՞ ստեղծագործութեան նպատակը՝ Աստուածայայտնութիւն: Քրիստոս «որթատունկն» է իսկ ամէն մի անհատ անոր զանազան ճիւղերը: Եթէ պտղաբեր չըլլանք պիտի «նետուինք», իսկ եթէ պտղաբեր ըլլանք պիտի «խնամուինք»:

Ինչպէս վերեւ գրուած է, Քրիստոսի երազին մէջ, մարդ ունի զանազան գիտակցութեան մակարդակներ: Իր «արթուն» մակարդակն ալ ունի իր ուրոյն զանազան մակարդակները: Մարդուն արթուն գիտակցութեան մակարդակն ալ փոփոխութեան ենթակայ է: Քունի պակասով եւ այլ Ֆիզիքական պատճառներու հետեւանք եղած մանր փոփոխութիւնները անտեսելով քննենք «արթուն» մակարդակը: Մարդ իր արթուն կոչաց գիտակցութեան մակարդակը կարող է ապրիլ չորս զանազան մակարդակներու վրայ: Ընդհանուր մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը կ'ապրի առաջին մակարդակի վրայ: Այս մակարդակին մարդ կը հաւատայ իրեն տրուած բոլոր տեղեկութիւններուն եւ հաւատալիքներուն եւ ըստ այնմ կ'ապրի: Այն բոլորը, որ ընկերութիւնը (society), իր ծնողքը, իր կրօնքը, իր ուսուցիչները, կղերականները, ձայնասփիւռի եւ հեռատեսիլի քարոզիչները՝ անոնք ըլլան կրօնական, քաղաքական կամ ընկերային, իր կեանքի ընթացքին իրեն սորվեցուցած են, զինք կը կալանաւորեն այս առաջին գիտակցութեան մակարդակին մէջ եւ ինք ալ իր կեանքը կ'ապրի ըստ այնմ առանց գիտնալու թէ

ինք կարող է այդ «բանտէն» դուրս գալ: Այս մակարդակին մարդ իր կեանքի 95%-ը կ'ապրի ըստ այն հաւատալիքներուն, որոնք իր ենթագիտակցական մըտքին մէջ տեղադրուած են: Ամէն մարդ լաւագոյնս կ'ապրի ըստ իր ենթագիտակցութեան, բայց եթէ ենթագիտակցութեան մէջի տուեալները հոն դրուած են ուրիշներու կողմէ, անձն ալ կ'ապրի ըստ ուրիշներու կամքին՝ նման ստրուկի: Հետեւաբար ո՞ւր մնաց իր ազատ կամքը, իր դատելու եւ զատելու կարողութիւնը եւ իր իմացականութիւնը: Ասոնք են, որ նման անասուններուն՝ ուրիշներու կողմէ իրենց կաղապարուած բնոյթին համաձայն կ'ապրին: Միթէ անասուններուն բնոյթն ալ առաջուց որոշուած ու կաղապարուած չէ՞: Այս մակարդակի վրայ մարդուն բոլոր աղօթքները կ'ըլլան Աստուծոյ աղաչել եւ խնդրել զանազան բաներ՝ առողջութիւն, հարստութիւն, խաղաղութիւն, լաւ ամուսնութիւն, զաւակներ ...: Կան անձեր, թիւով քիչ, դժգոհ նման կեանքէ մը, կը ձգտին եւ կը փնտռեն աւելի իմաստալից եւ նպատակաւոր կեանք մը: Ասոնք, անոնք են, որ հոգեկան արթնութիւն մը կ'ունենան եւ զայն ցոյց կու տան կերտելով ինքնագիտակցութիւն: Անոնք կ'ուզեն հասկնալ կեանքին իմաստը: Անոնք կ'ուզեն գիտնալ իրենց կեանքին բուն նպատակը եւ այս աշխարհիկ կեանքի մէջ իրենց պատասխանատուութիւնը եւ պարտականութիւնը: Անոնք իրենց գիտակցութեան մակարդակը կը բարձրացնեն «արթուն» կոչուած մակարդակին առաջին մակարդակէն աւելի բարձր երկրորդ մակարդակին: Երբ ընդհանուր մարդկութիւնը «արեւմուտք» կ'երթայ, անոնք «արեւելք» կը դառնան: Կ'ուսումնասիրեն զանազան կրօնքներ, կը հետաքրքրուին զանազան իմաստասիրութիւններով, զատողութիւն չեն դնել կրօնքներու, ցեղերու, աւանդութիւններու, անհատներու եւ սեռերու միջեւ: Երբեմն կը

ծուլանան եւ իրենց տրուած պարտականութեան հետեւանք կը յուսահատին եւ ետ՝ առաջին մակարդակին կը վերադառնան: Առաջին մակարդակը ապահով է եւ որեւէ անձնական պատասխանատուութիւն չի տար մարդուն իր կենցաղը կերտելու համար: Բոլորը իրեն առաջուց տրուած են: Բայց անոնց մէկ մասը կը հասկնան իրենց կեանքին դեկը իրենք իրենց ձեռքը առնելու կարեւորութիւնը: Անոնք վճռականօրէն կը ջանան իրենց կենցաղը փոխել: Այս երկրորդ մակարդակը տակաւին միայն իմացական հասկացողութիւն մըն է: Երբ անոնք յարատեւ ջանք կ'ընեն ու կ'աշխատին ինքնափոփոխութեան համար, կը յառաջանան «արթուն» գիտակցութեան մակարդակին երկրորդ մակարդակէն՝ երրորդին: Այս հանգրուանին անոնք իրենց գիտակից միտքը, իմացականութիւնը եւ դատելու եւ զատելու կարողութիւնը օգտագործելով կը տեղաւորեն նոր տեղեկութիւններ իրենց ենթագիտակցութեանց մէջ եւ կամաց կամաց հիները կը չէզոգացնեն՝ կ'անհետացնեն: Անոնք կը վանեն մահացու մեղքերը եւ անոնց տեղ ենթագիտակցութեան մէջ կը դնեն առաքինութիւններ: Ահա աս է նպատակը գիտակից մտքին: Ճիշդ ասոր համար Աստուած մարդուն շնորհեց անհատականութիւն մը, պատշաճ ուղեղ մը, խիղճ մը, գիտակից միտք մը, ազատ կամք մը, զատելու եւ դատելու կարողութիւն մը եւ իմացականութիւն մը: Եւ ահա՛ աս էր որ Յիսուս մեզի սորվեցուց իր խօսքերով՝ յորդորներով եւ իր առականերով, կերտել այդ առաքինութիւնները: Երբ անձը կը յաջողի նոր եւ վեհ տեղեկութիւնները իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորել, ինք կը հասնի իր «արթուն» գիտակցութեան չորրորդ մակարդակին: Այս գիտակցութեամբ ինք կը գործէ աշխարհի մէջ ընդհանուրի եւ ընկերութեան հաւաքական օգտին համար: Ինք կ'ըլլայ սէրով լի հանդէպ բոլորին, նոյնիսկ

Իր թշնամիին: Ասոնք թիւով շատ քիչ են, բայց մարդկութեան յառաջացման մէջ մեծ դեր ունեցած են: Ասոնք հանճար գիտուններն են բոլոր մարգերու մէջ: Իրենց նպատակը միշտ օգտակար ըլլալ է հանրութեան: Այս մակարդակին մարդուն աղօթքը կ'ըլլայ միայն աղօթքին ամենավեհ ձեւը, որ խոկումն է: Այն անձը որ այս չորրորդ մակարդակին չէ հասած, կարելիութիւնը չունի յափշտակուելու Քրիստոսի բարձր գիտակցութեան մակարդակին: Այս յափշտակութիւնը մարդ ինք չի կրնար իրականացնել: Ան իր ներքին Քրիստոսի քունէն արթննալն է: Մարդ միայն ինքզինք կարող է այդ չորրորդ մակարդակին հասցնել, ինչ որ ինքզինք այդ յափշտակութեան պատրաստելն է: Ահա՛, աս էր, որ Յիսուս մեզի սորվեցուց: Իսկ մենք զինք կը պաշտենք եւ իր սորվեցուցածները չենք կիրարկեր: Այս չորս մակարդակներն ալ մաս կը կազմեն «արթուն» գիտակցութեան մակարդակին:

Ահա՛, աս է մարդուն տեղը ստեղծագործութեան մէջ: Յիսուսի նման յայտնաբերել իր ներսիդին ննջող Քրիստոսի յարութիւնը՝ «քունէն արթննալը»: Աստուծոյ յայտնութիւնը: Յիսուս իր կեանքով՝ արարքներով մեզի ցոյց տալով աս էր որ սորվեցուց: Եթէ կ'ընդունինք զինք իբրեւ մեր վարդապետը, պէտք չէ՞ հաւատանք Իրեն, հասկնանք իր սորվեցուցածներուն բուն իմաստները եւ զանոնք կիրարկենք մեր կեանքին մէջ: Ամէն:



ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի՞նչու կրօնքներու մակերեսային երեւոյթը կը թուի Աստուածապաշտութիւն ըլլալ: Այս աստուածապաշտութիւնն ալ ընդհանրապէս կ'ըլլայ թէ՛ խմբային՝ եկեղեցի յաճախելով, ժամերգութիւններուն մասնակցելով երգեցողութեամբ՝ զանազան երգերով եւ շարականներով, ինչպէս նաեւ աղօթքներով եւ թէ՛ ալ առանձին՝ տան մէջ աղօթելով: Արդեօք Աստուած փառաբանութեան պէ՞տք ունի: Ոչ՛, Աստուած փառաբանութեան պէտք չունի: Բայց մարդ արարած պէտք ունի Աստուած փառաբանելու:

Յիսուս մի քանի անգամ Իր Հօր (Հայր Աստուծոյ) փառաւորութիւն կապակցութեամբ ակնարկութիւն ըրած է: Ստորեւ տեղադրուած երկու համարները այս իրողութեան օրինակներէն են: Մին, երբ Յիսուս բուժեց ի ծնէ կոյր մարդը, անոր շնորհելով տեսողութիւն: Աշակերտները Իրեն հարցուցին, թէ ան կոյր ծնած էր ի՞ր մեղքերուն համար, ապա թէ ոչ իր ծնողքին մեղքերուն համար: Յիսուսի պատասխանը հետեւեալն էր.

«Եւ մինչդեռ անցանէր, ետեա այր մի կոյր ՚ի թնէ. եւ Լարցին ցնա աշակերտին նորա՝ եւ ասէն. ուսէի՛ր ո՞յր վնաս է, ցորա՞ լնէ Լօր եւ մօր իւրոյ՝ զի կոյր թնաս: Պարասխանի ետ Յիսուս. ոչ դորա վնաս է, եւ ոչ Լօր եւ մօր իւրոյ. այլ զի յայտնի լիցին Գործին Աստուծոյ ՚ի դմա:» (Յովհաննոս Թ:1-3)

«Երբ կ'անցնէր, մարդ մը տեսաւ կոյր ծնած: Իր աշակերտները հարցուցին իրեն ու ըսին. «Ռաբբի,

որո՞ւնն է մեղքը, ասո՞ր թէ իր ծնողքին, որ անիկա կոչը ծնաւ»: Պատասխան տուաւ Յիսուս. «Ո՛հ ատորն է մեղքը, ո՛չ ալ իր ծնողքին, Հապա որպէս զի Աստուծոյ գործերը ատոր վրայ յայտնի ըլլան»:

Յիսուս այս խօսքով ի՞նչ ըսել ուզեց: Աստուծոյ գործերը Աստուծոյ փառքն են: Ուրեմն այս արարքով Յիսուս Քրիստոս Աստուծոյ փառքը ցոյց տալով Հայրը փառաբանած եղաւ:

Միւսը. երբ Յիսուս իմացաւ, թէ Ղազարոս հիւանդ է, ըսաւ հետեւեալը.

«Ի՞՞՞՞րէն լո՛ւսն Յիսուս, ասէ. Եյն
Հիւանդոս-Թիւն չէ՛ ՚ի մահ այլ վասն
փառացն Եսորո-ժոյ. զի փառասո՛ր լիցի
որորի Եսորո-ժոյ այնմիկ»: (ՅովՀաննոս ԺԷ:4)
«Այս հիւանդութիւնը մահուան Համար չէ՛ Հապա
Աստուծոյ փառքին Համար, որպէսզի Աստուծոյ Որդին
փառաւորուի անով»:

Ուրեմն Աստուծոյ փառքը կը յայտնուի Որդւոյն փառաւորութեամբ: Որդին ի՞նչպէս կը փառաւորուի: Երբ Որդին Աստուծոյ փառքը կը յայտնաբերէ, Աստուծոյ փառքով ինք ալ փառաւորուած կ'ըլլայ: Հետեւաբար ի՞նչ է Աստուծոյ փառքը: Ընդհանուր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ Աստուծոյ փառքը, որով ան կը ցոյլացնէ Աստուծոյ «Լոյսը» եւ Աստուծոյ «Գիտակցութիւնը»: Այս հիման վրայ, ստեղծագործութեան մէջ ամէն ինչ՝ ամենափոքր հիւլէէն մինչեւ ամենամեծ կենդանին, ներառեալ մարդը, թէ՛ Աստուծոյ «Լոյս»-ին եւ թէ՛ Աստուծոյ գիտակցութեան արտայայտութիւններն են: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ զանազան չափերով կը յայտնաբերեն այս արտայայտութիւնները: Նամանականը գիտակցութիւնը ենթակայ է արտայայտութեան բազմաթիւ մակարդակներու: Հիւլէի մը յայտնաբերած գիտակցութեան մակարդակը շատ

ցած է: Բոյսերը ունին աւելի բարձր Աստուածային գիտակցութեան մակարդակ: Անոնց տերեւները գիտեն դէպի արեւ դառնալ եւ արմատներն ալ՝ դէպի ջուր: Աս փաստ մըն է, թէ Աստուծոյ գիտակցութիւնն է, որ կը գործէ բոյսին մէջ: Բայց բոյսը այս բոլորը կ'ընէ առանց տեղեակ ըլլալու: Բոյսը ինք Աստուծոյ գիտակցութիւնը ունենալով եւ զայն յայտնաբերելով հանդերձ ինք անգիտակից է այս բոլորէն: Անասունները աւելի բարձր գիտակցութեան տէր են: Բայց անոնց գիտակցութեան մակարդակն ալ նախապէս որոշուած եւ հաստատուած ըլլալով, անոնք կարողութիւնը չունին իրենց գիտակցութեան մակարդակը փոխելու՝ աւելի բարձրացնելու: Հետեւաբար անասունները կ'ապրին ըստ իրենց բնոյթին եւ Աստուծոյ հետ ըլլալով հանդերձ, նոյնիսկ չեն գիտեր, թէ Աստուած մը կայ: Աստուած մարդուն տուած է անասուններէ աւելի բարձր գիտակցութեան մակարդակ մը: Հետեւաբար մարդ արարած գիտակից է, թէ Աստուած գոյութիւն ունի: Անշուշտ մարդոց մէջ ալ յայտնաբերուած գիտակցութեան մակարդակը անձէ անձ կը տարբերի: Միթէ չկա՞ն անձեր, որոնք Աստուծոյ գոյութեան չեն հաւատար: Մարդ արարած առանձնաշնորհեալ է, որովհետեւ ան իր գիտակցութեան մակարդակը բարձրացնելու կարողութիւնը եւ կարելիութիւնը ունի, նոյնիսկ իր մէջ մինչեւ Աստուածայայտնութիւն: Մարդ իր ապրած կեանքով՝ իր ազատ կամքով առած որոշումներով, իր խորհուրդ, խօսք ու արարքներով կը կերտէ համապատասխան գիտակցութեան մակարդակ: Այն անձը, որուն կենցաղը Աստուածահաճոյ է եւ կը կարողանայ իր գիտակցութեան մակարդակը բարձրացնել, յայտնաբերած կ'ըլլայ Աստուծոյ փառքը: Երբ ինք կը յայտնաբերէ Աստուծոյ փառքը, ինք յայտնաբերած կ'ըլլայ իր ներքին Քրիստոսը, հետեւաբար Քրիստոս ալ այդ փառքով

փառաւորութեամբ կ'ըլլայ: Եւ աս է Որդւոյն փառաւորութիւնը: Միթէ բոլորս ալ Աստուծոյ որդիները չե՞նք: Միթէ աս չէ՞ր որ Յիսուս մեզի սորվեցուց: Յիսուս Հայր Աստուծոյ «հաճելի» Որդին էր, իսկ մենք՝ Հօր որդիները ըլլալով հանդերձ իրեն «հաճելի» չենք, որովհետեւ մեր կենցաղը արդիւնքն է մեր «Ես»-ին կամքին, քան թէ Քրիստոսի կամքին: Քրիստոս մեր ճշմարիտ էութիւնը ըլլալով հանդերձ մենք կը զատենք պատրանքային «Ես»-ը եւ չենք յայտնաբերեր Քրիստոս եւ կը ձգենք, որ Ան «նաւուն մէջ քնանայ» եւ Զինք «չենք արթնցներ», որպէսզի մեր «փոթորիկները» դադրեցնէ: Մեր նաւն ալ կ'ընկղմի եւ մենք ալ կը մեռնինք: (Տես Մատթէոս Ը:23-27)

Եթէ իսկապէս կը փափաքինք Աստուած փառաբանել, պարտ ենք զայն ընել մեր կենցաղը փոխելով եւ իր կամքը կատարելով, որպէսզի իր գործերը մեզմով յայտնի ըլլան: Մեր կեանքին մէջ ինչ աստիճանով որ ցոլացնենք իր «Լոյսը» եւ իր «Գիտակցութիւնը» այն աստիճանով ալ Զինք փառաբանած եւ փառաւորած կ'ըլլանք, որով այդ աստիճանով ալ իր փառքը յայտնաբերած: Աստուծոյ «Լոյս»-ին արտայայտութիւնը մեր մէջ կախեալ է իր «Գիտակցութեան» արտայայտութեան մակարդակէն: Երբ Յիսուս այլակերպեցաւ, իր բարձր գիտակցութեամբ միթէ իր մէջ Աստուծոյ «Լոյս»ը չյայտնաբերե՞ց: Յիսուս այս բոլորը ըրաւ որպէսզի մեզի ցոյց տայ, թէ մենք ալ մեր կեանքի ընթացքին կարող ենք նոյնը ընել:

Իսկ մենք ի՞նչ կ'ընենք: Մեզի տրուած կարողութիւնները չենք օգտագործեր եւ կ'անտեսենք Աստուծոյ մեզի տուած շնորհքները: Կ'ապրինք անասուններու նման, անգիտակից թէ կարող ենք Աստուծայայտնութիւնը մեր մէջ իրականացնել: Կը գոհանանք եկեղեցի երթալով, մի քանի շարական կամ երգ երգելով եւ կը

կարծենք թէ Աստուած փառաբանած կ'ըլլանք: Անտա-
րակոյս, ասոնք որպէս նախնական քայլեր կարեւոր են:
Սակայն անձին մէջ Որդիին՝ Քրիստոսի յայտնութիւնն
է որ կը յայտնաբերէ Հօրը փառքը եւ այս փառքով ալ
Որդին՝ Քրիստոս փառաւորուած կ'ըլլայ: Միթէ ամէն
անձի հոգին իր մէջ Քրիստոսի ներկայութիւնը չէ՞:
Քրիստոս Աստուծոյ երրորդութեան «անձ»-երէն մին
չէ՞: Հետեւաբար Որդւոյն՝ Քրիստոսի փառաբանու-
թեամբ ալ Աստուած փառաբանուած կ'ըլլայ: Ահա՛, աս
է Աստուած փառաբանութեան ճշմարիտ իմաստը:

Առաւօտեան ժամերգութեան «Փառք ի բարձունս»
երգը Աստուած փառաբանելու երգ մըն է: Առաջին
նախադասութիւնն իսկ մեզի կը յայտնէ, թէ ինչ կը
պատահի երբ բարձրեալն Աստուծոյ փառքը կը
յայտնուի: Երկրի վրայ կ'ըլլայ խաղաղութիւն եւ
մարդոց միջեւ ալ «հաճութիւն» այսինքն համերաշ-
խութիւն: Ահա՛ աս է աշխարհը դրախտի վերածելու
միջոցը եւ ոչ սպասել, որ մահէն ետք «դրախտ»
երթանք:

**«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր
խաղաղութիւն ի մարդիկ հաճութիւն»:**





Ասորո-ժոյ ժառանգութեան մէջ միշտ
աշալուորջ է ժրաջան եղեր ու հասկցեր
Բէ ինչու դուն չէզ կը յերբապարտ
աշխարհիկ հեղապնդումներէն :

ԱՍՏՈՒԱԾԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ինչպէ՞ս Աստուած պաշտել: Աստուած մէկ է: Աստուած անհուն, աներեւոյթ եւ անկերպ է: Սովորական սահմանափակ մարդուն համար իր չտեսած եւ չճանչցած Աստուածը պաշտել դժուար է: Բայց Աստուած նաեւ յայտնուած է իր ստեղծագործութեան մէջ եւ իր յայտնութիւնը եղանակաւորած եւ սահմանած է ըստ մարդկային հասկացողութեան: Բոլոր ստեղծագործութիւնը Աստուծոյ յայտնութիւնն է եւ այդ յայտնութիւնը Յիսուս Քրիստոսով իր գազաթնակէտին հասաւ: Մարդ աշխարհը կը տեսնէ միայն իր Ֆիզիքական աչքերով եւ նաեւ միւս չորս զգայարանքներով: Այս միջոցառումներով անկարելի է «տեսնել»՝ ճանչնալ Աստուած, որ անհուն, աներեւոյթ եւ անկերպ է: Բայց միւս կողմէ Աստուծոյ յայտնութիւնը թէ՛ տեսանելի եւ թէ՛ ճանաչելի է: Աստուած է միակ ճշմարտութիւնը:

Աստուած մէկ է կ'ըսենք, նաեւ կ'ըսենք թէ Երրորդութիւն է՝ Հայր Աստուած, Որդի Աստուած եւ Ս. Հոգի: Որպէսզի մարդ կարենայ որոշ չափով «արթննալ» եւ այդ ուղղութեամբ մտածել, Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց Երրորդութեան գաղափարը: Այն կրօնքներուն հետեւողները, որոնք չեն հաւատար, թէ ստեղծագործութիւնը Աստուծոյ «մարմին»-ն է ու իր յայտնութիւնը եւ Աստուած ներկայ է ընդհանուր ստեղծագործութեան մէջ, չեն կրնար հասկնալ Երրորդութեան գաղափարը: Անոնք Քրիստոսի Աստուածութեան ալ չեն հաւատար:

Աստուածային գաղտնիքները հասկնալու համար Աստուած բնութեան մէջ ամէն ինչ օրինակով սորվեցուցած է՝ մարդուն հասկնալու կարողութեան սահմաններուն համաձայն, հարկաւ, եթէ մարդն ալ գոնէ քիչ մը ջանք թափէ եւ այդ ուղղութեամբ ալ խորհրդածէ: Այս ուղղութեամբ, Աստուած մեզի

սորվեցնելու նպատակաւ, Իր ստեղծագործութեան մէջ, փոխաբերաբար, բնութեան մէջի «Զջթ»-ի (H_2O)՝ ջուրի օրինակով տուած է երրորդութեան գաղափարը: Միթէ չե՞նք ըսեր ջուրը կեանք է, կամ առանց ջուրի կեանք գոյութիւն չի կրնար ունենալ: Միթէ Քրիստոս ալ չըսա՞ւ. «Ես եմ կեանքը»: Ջուրը, երբ շոգի վիճակի մէջ է, աներեւոյթ է եւ կարելի չէ գայն տեսնել: Նմանապէս, Հայր Աստուած ալ աներեւոյթ է եւ կարելի չէ Զինք տեսնել: Ջուրը, որպէս հեղուկ, յառաջ եկած է շոգիէն: Հեղուկ ջուրը թէ՛ կեանք կու տայ, թէ՛ ալ աւերներ կրնայ գործել, որովհետեւ զօրութիւն կը ներկայացնէ: Ան նաեւ կարող է շոգիանալ: Ջուրը Ս. Հոգին կը ներկայացնէ: Ս. Հոգին ալ, որ Հայր Աստուծմէ բղխած է, կարող է Հայր Աստուծոյ ետ վերադառնալ: Միթէ Աւետարանին մէջ, փոխաբերական իմաստով, Ս. Հոգին չէ՞ ներկայացուած իբր հոսող ջուրը՝ գետը: Հոսող ջուրը զօրութիւն կը ներկայացնէ, Աստուծոյ զօրութիւնն ալ Ս. Հոգին՝ կենսատու հոսող զօրութիւնն է:

«Եւ եցոյց ինչ մաշոօր Գեորգ կենդանի ջրոյ՝ սասնաբեասկ որ Ելանէր յաթոօոյն Աստուծոյ Եւ Գառնն» : (Յայրնորինն ԻԲ: 1)
«Նաեւ ցոյց տուաւ ինծի կեանքի ջուրի գետ մը՝ բիւրեղի պէս փայլուն, որ կը բղխէր Աստուծոյ ու Գառնուկին գահէն»:

Մեր կեանքի անբաղձալի պատահարներն ալ Ս. Հոգիի զօրութեան գործած աւերները չե՞ն: Որով Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են եւ այդ մեղքերով մենք կը կերտենք մեր ճակատագիրը եւ կ'ենթարկուինք անոր յառաջ բերած հարուածներուն: Ջուրը երբ հաստատուն մարմնի վերածուի, գայն սառ կը կոչենք: Միթէ գիտութիւնն ալ (science) մեզի չէ՞ սորվեցուցած, որ նիւթը զօրութեան խտացումն է եւ բոլոր ենթանիւթերը զօրութեան փոքր «ծրար»-ներ են:

Գրիտունները այդ զօրութիւնը «Մութ զօրութիւն» կոչած են, որովհետեւ Անոր բնոյթը չեն գիտեր: Այդ զօրութիւնը Յիսուսի մեզի սորվեցուցած Ս. Հոգին է: Ս. Հոգիի Ֆիզիքական տիեզերքի մէջ արտայայտութիւնն ալ Քրիստոսն է, որ Աստուծոյ Որդին կը կոչենք: Հետեւաբար ամէն ինչ Քրիստոս կը ներկայացնէ եւ ճիշդ ասոր համար ստեղծագործութեան առաջին վեց օրուան բոլոր ստեղծուածներուն համար գրուած է. «Եւ Աստուած տեսաւ, որ բարի են»: Տակաւին վերջերս գտնուած Թովմասի Աւետարանին մէջ Քրիստոս ըսած է. «Վերցուցէք գետնի քարը եւ զիս հոն կը գտնէք» (Հմբ.77):

«Որպէս մարմին մի է, եւ անդամս Քաղոմս ունի. եւ ամենայն Քաղոմ անդամով մարմնոյն՝ մի մարմին է. նոյնպէս եւ Քրիստոս: (Ը. Արք. Գ. 12)
«Քանզի ինչպէս մարմինը մէկ է եւ շատ անդամներ ունի, եւ այն մարմինն բոլոր անդամները, թէեւ շատ են, բայց մէկ մարմին են, նոյնպէս Քրիստոս ալ»:

«Մի Աստուծոյ էւ Ընդամենա մեծագոյն, որ ՚ի վերայ ամենայնի, եւ ընդ ամենեանի, եւ յամենեանի մէջ»: (Եփեսոս Գ: 6)

«Մէկ է Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորն վեր, բոլորն հետ եւ ձեր բոլորն մէջն է»:

«Կի եղիջի՞ որդի՞ Ըօր յերոյ որ յերկնան է. Կի Կարեգանն իւր Ժաբէ ՚ի վերայ շարաց եւ Քարեաց, եւ աժէ անչրէ՛ ՚ի վերայ արդարոյ եւ մեղաւորաց»: (Մատթէոսի Ե: 45)

«Որպէս զի ձեր երկնաւոր Հօրը որդիներն ըլլաք. վասն զի իր արեւը կը ծագեցնէ թէ՛ չարերուն եւ թէ՛ բարիներուն վրայ եւ անձրեւ կը զրկէ թէ՛ արդարներուն եւ թէ՛ մեղաւորներուն վրայ»:

«Պատասխանի ետ նոցա Յիսուս. Ո՞չ յօրէնան յեր գրեալ եւ ասացի թէ աստուծո՞վ իցե՞լ»:

(Յովհաննոս Ժ:34)

«Յիսուս պատասխանեց անոնց. «Միթէ ձեր Օրէնքին մէջ գրուած չէ՞. Ես ըսի. Դուք աստուածներ էք»:

«Ես ասացի թէ աստուածութի իցէ՛, կամ որդի՛ թառնի՛ց ինչո՞ւ ասէ՛ս աստուածներ էք»: (Սաղմոս 2Լ:6)

«Ես ըսի. «Դուք աստուածներ էք. Դուք բոլորդ Ամենաբարձրին որդիներն էք»»: (Սաղմոս 2Բ:6)

«Սոյն ինչն Ընդհանրեալ զկայէ Ընդհանրեալ մերոսմ, եթէ եմք որդիք. աստ էս ժառանգութի. ժառանգութի Ընդհանրեալ էս ժառանգակիցիք Քրիստոսի»:

(Հոսովայեցիս Ը:16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին Հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. Եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

«... Ամեն ամեն ասե՛մ թէ որ Հասարակն յիս
յգործս զոր էս գործեմ, էս նա՛ գործեացէ էս
մեծամեծս է՛ս ինչն զնոյնս գործեացէ ... »:

(Յովհաննոս ԺԳ:12)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

«Տեսէ՛ ի՛ որպիսի՛ սեր շնորհեաց մեզ Հայր, զի
որդի՛ք Ընդհանրեալ կոչեացութի մեք»:(Լ. Յովհաննոս Գ:1)

«Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սեր շնորհեաց մեզի, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք. ...»:

«Ո՛չ գիտէ՛ք եթէ Կաճար է՛ Ընդհանրեալ, էս Հո-
գի Ընդհանրեալ թնայեալ է ՚ի յեզ»:(Լ.Յորնիստոս Գ:16)

«Ձե՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

«Եթէ ո՞չ գիտէ՛ք, զի մարմին յեր Կաճար էն
Ընդհանրեալ որ է ՚ի յեզ՝ զոր ունի՛ն յԸնդհանրեալ:

Եւ շէ՛ղ անշանց Կէր ... փառասոր արարէ՛ղ
պԼսարոսաթ 'ի մարմինս յէր եւ յոգիս յէր»։ (Լ

Կորնթացիս Գ։19-20)

«Ձէ՞ք գիտեր որ ձեր մարմինները տաճար են Սուրբ
Հոգիին, որ ձեր մէջն է, որ Աստուծոյ առած էք ու
դուք ձեր անձին տէրը չէք. ... ուստի փառաւորեցէ՛ք
Աստուած ձեր մարմիններուն ու Հոգիներուն մէջ, որոնք
Աստուծոյ կը պատկանին»։

Երբ Աստուած մարդուն անհատականութիւնը տուաւ,
չըսաւ որ ան բարի է։ Բայց այդ անհատականութիւնը
անհրաժեշտ էր, որպէսզի մարդ գիտակցաբար լրիւ
յայտնաբերէր Քրիստոսը իր մէջ, ան ինչ որ ինք ար-
դէն է, բայց անգիտակցաբար։ Աստուած այս կարողու-
թիւնը մարդուն իր անհատականութեանը միջոցաւ
տուաւ։ Որովհետեւ այս ուղղութեամբ մարդ անգիտա-
կից է, իր խաւարամտութեան հետեւանք յաճախ կը
խափանէ Աստուածայայտնութիւնը իր մէջ։ Ահա՛ աս
էր, որ Յիսուս իր մարդկային կեանքով մեզի ճշմար-
տութիւնը ցոյց տալով ճշմարտութիւնը սորվեցուց։

Իբր քրիստոնեայ կը հետեւինք մեր վարդապետին՝
Յիսուս Քրիստոսի եւ Ձինք կը պաշտենք իբր մեր
Աստուածը։ Յիսուս Քրիստոս Աստուծոյ մարդկային
կերպով եղանակաւորուած եւ սահմանուած տեսանելի
եւ շոշափելի յայտնութիւնն էր։ Յիսուսով Աստուած
մեզի ցոյց տուաւ, թէ ստեղծագործութեան մէջ մարդ
արարած լրիւ Աստուածայայտնութեան միջոցը ըլլա-
լու կարողութիւնը ունի։ Ահա՛ աս էր, որ Յիսուս
Քրիստոս իր մարդկային կեանքի ընթացքին իբր մեր
վարդապետը ջանաց մեզի սորվեցնել։ Եթէ իսկապէս
Ձինք կը պաշտենք, պէտք է բացարձակ հաւատք
ունենանք իր վրայ եւ ծայրահեղ սէր իրեն հանդէպ։
Առանց սէրի եւ առանց հաւատքի պաշտել անկարելի է։
Իսկ եթէ իսկապէս Ձինք կը պաշտենք՝ Ձինք կը սիրենք

եւ իրեն կը հաւատանք, պէտք չէ՞ որ իր սորվեցուցածները մեր կեանքին մէջ կիրարկենք եւ մենք ալ իրեն նման ջանք ընենք Աստուածայայտնութեան մեր մէջ իրականացման: Ահա՛ աս է ճշմարիտ պաշտամունքը: Յիսուս ամենեւին չըսաւ Ինծի պաշտեցէք, այլ ըսաւ հետեւեալը.

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր,
մոցէ յարձայո՞ւթիւն երկնից, այլ որ ասնէ
պէսմա Ըօր իմոյ որ յերկինսն է»: (Մատթէոս Է: 21)
«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՝ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ
երկինքի թագաւորութիւնը, հասկան՝ որ կը գործադրէ
իմ երկնաւոր Հօրս կամքը»:

Եւ Յիսուս իր Հօրը՝ անհուն, աներեւոյթ եւ անկերպ Աստուծոյ կամքը մեզի սորվեցուց: Մարդ արարած մարմին եւ ձեւ ունի, հետեւաբար շատ աւելի դիւրին է իրեն համար Աստուծոյ սահմանափակ եւ եղանակաւորուած եւ կերպարանք ունեցող յայտնութիւնը՝ իր Որդին պաշտել: Աս պաշտամունքին առաջին քայլն է: Նման պաշտամունքով, որ Յիսուս Քրիստոսի սորվեցուցածները կիրարկելն է, անձին մէջ սիրոյ եւ գիտակցութեան քանակը եւ հորիզոնը կ'ընդլայնի եւ ինք կը «տեսնէ»՝ կը հասկնայ, թէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Աստուծոյ մէյմէկ արտայայտութիւններն են, եւ ինք բոլորին հանդէպ սէր ցոյց կու տայ եւ նաեւ այն բոլորը, որ սէրէն կը բղխին՝ գութ, կարեկցութիւն, ողորմածութիւն, ինքնագոհողութիւն եւ այլն: Երբ մարդ կը հասնի պաշտամունքին այս մակարդակին, ան նաեւ կը հասկնայ թէ ինք ալ Աստուծոյ մէկ արտայայտութիւնն է եւ կը փոխէ իր մտքի ուղղութիւնը իրմէ գուրսէն դէպի իր ներսիդին եւ կը փնտռէ իր ճշմարիտ էութիւնը՝ Քրիստոսը: Երբ ինք Քրիստոսը գտնէ կը ստանայ յաւելեալ Ս. Հոգիի զօրութիւն եւ

այդ գորութեան տուած կարողութիւններն ալ Ս. Հոգիի շնորհները կը կոչենք: Միթէ Քրիստոս չըսա՞ւ.

«Եւ ահա ես առաջէ՛մ պատրիս Ըօր իմոյ՝ ՚ի Երուսաղէմ ինչպէ՛ս յԵրուսաղէմ մինչեւ պատրիսո՛ւն յօրո՞ւն ՚ի Բարձրանց» :
(Ղուկաս ԻԴ:49)

«Եւ ահա՛ ես կը դրկեմ ձեր վրայ իմ Հօրս խօստովը. բայց դուք կեցէ՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ՝ մինչեւ որ բարձրէն դրկուած գորութիւն հագնիք»:

«Եյլ առջի՛կ պօրո՞ւն ՚ի Հասանել Հոգւոյն Սրբոյ ՚ի վերայ յեր եւ եղիջի՛ ինչ վկայ յԵրուսաղէմ եւ յամենայն Հրեաստանի, եւ ՚ի Սամարիայ, եւ մինչեւ ՚ի Չաօս Երկրի» :
(Գործք Լուսնայ Լ:8)

«բայց Սուրբ Հոգիին ձեր վրայ եկած ատենը՝ գորութիւն պիտի ստանաք՝ եւ ինծի համար վկաներ պիտի ըլլաք Երուսաղէմի մէջ՝ ամբողջ Հրեաստանի ու Սամարիայի մէջ եւ մինչեւ երկրի ծայրերը»:

Ս. Հոգիի շնորհներն ալ մարդուն մէջ ճամբան կը բանան Անհուն աներեւոյթ եւ անկերպ Աստուծոյ երանութիւնը գիտակցաբար վայելելու, Որուն արտայայտութիւնը արդէն ինքն ալ է: Կարելի է Հիզիքական աչքերով աներեւոյթ Աստուածը տեսնել, բայց մարդ արարած կարող է իր հոգեկան «աչքով» իր մէջ Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը ունենալ: Ահա՛ աս է Աստուածայայտնութիւնը անձին մէջ: Յիսուս իբր մարդ իրականացուց այս իրողութիւնը եւ փորձառականօրէն գիտնալով ամէն ինչի միականութիւնը, թէ ամէն ինչ Աստուծոյ մէկական արտայայտութիւններն են, յայտարարեց.

«Ես եւ Հայր իմ մի ենք» : (Յովհաննոս Ժ:30)
«Ես ու Հայրը մէկ ենք»:

Յիսուս Քրիստոս նաեւ ըսաւ.

«Եւ ես զփառան զոր ետրտր ինչ՝ ետրտր նոցա
յի իցեն մի՛ որպէս եւ մե՛կ մի՛ եմէ՛. Եւ ա՛ ի
նոսա եւ տրտր՝ յի՛ս...» : (Յովհաննէս ժԷ : 22-23)

«Այն փառքը՝ որ դուն տուիր ինձի, ես տուի անոնց,
որպէսզի մէկ ըլլան՝ ինչպէս մենք մէկ ենք. ես՝ անոնց
մէջ, ու դուն՝ իմ մէջս ...»:

*Իսկ մարդ իր «Ես»-ին փարած եւ իր կենցաղով կը
խափանէ Աստուածայայտնութիւնը իր մէջ: Ան ինչ որ
մարդ կը խորհի թէ ինք է, ան ալ կ'ըլլայ: Բայց երբ ան
կը հասկնայ թէ ինք, այսինքն իր անհատականութիւնը՝
իր «Ես»-ը ոչնչութիւն մըն է, այն ատեն ինք «ամէն
ինչ» կ'ըլլայ, այսինքն միականութեան փորձառու-
թիւնը կ'ունենայ:*

«Եւ ասէ՛ր աս ամենեւին. Եթէ ո՛ր կամի զնի
իմ Դաւ, որասցի՛ զանչն, եւ ասցէ զիսաչ իւր
Հանապառ, եւ եկէսցէ՛ զԷտր իմ» : (Ղուկաս Թ : 23)

«Եւ կ'ըսէր բոլորին. «Եթէ մէկը ուզէ դալ իմ ետեւս՝
թող ուբանայ ինքզինք, ամէն օր վերցնէ իր խաչը ու
Հետեւի ինձի.» ...»:

«Չի որ կամիցի զանչն իւր կեցոցանել,
կորոսցէ՛ զնա. եւ որ կորոսցէ զանչն իւր
զանն իմ՝ կեցոսցէ՛ զնա» : (Ղուկաս Թ : 24)

«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի
համար, պիտի փրկէ զայն»:

«Որ իներիցէ զանչն իւր ասրեցոցանել,
կորոսցէ զնա. եւ որ կորոսցէ, ասրեցոսցէ
զնա : » (Ղուկասոս ժԷ : 33)

«Ով որ իր կեանքը* կ'ուզէ ապրեցնել՝ պիտի կորսնցնէ
զանիկայ եւ ով որ կը կորսնցնէ՝ պիտի ապրեցնէ
զանիկայ» : (*- գրաբարին մէջ անձը գրուած է)

*Կան անձեր որ կ'ըսեն. «Մենք միայն Երրորդութիւնը
կը պաշտենք եւ իբր մարդ կարող չենք Աստուածայայտ-*

նույն ժամանակ մեր մէջ իրականացնելը: Նման հայեացք մը սխալ է եւ Յիսուսի սորվեցուցածներուն հակառակ: Յիսուս Քրիստոս կատարեալ էր, որովհետեւ Աստուծոյ յայտնութիւնն էր իբր մարդ: Միթէ Յիսուս Քրիստոս չըսա՞ւ.

«Արդ եղեր՝ ո՞չ որ ու՛րեք կարարեա՛լ է, որպէս եւ
Լայրն յեր երկնաւոր կարարեա՛լ է»: (Մարգեհոն Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր
հայրը կատարեալ է»:

Աստուածապաշտութիւնը կը սկսի Եկեղեցական ծէսերով եւ ժամերգութիւններով: Հետեւաբար անհրաժեշտ է, որ մեր զաւակները փոքր տարիքէն վարժուին ծիսակատար եկեղեցի յաճախել, նամանաւանդ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցի, որուն ժամերգութիւնները եւ ծէսերը թագուն հոգեկան ճշմարտութիւններու արտայայտութիւններն են Ֆիզիքական գետնի վրայ՝ որպէս ծէս: Բոլոր ժամերգութիւններու շարքաւորումը կը ներկայացնէ մարդկային կեանքը՝ անկումը եւ վերադարձը առ Աստուած: Անոնց գագաթնակէտն ալ Ս. Պատարագն է, որ կը ներկայացնէ մարդուն Աստուծոյ հետ հաղորդուելը (Տես «Լոյս ի Լուսոյ» (Ա) գիրքս էջ:41-44): Եթէ ամէն անձ մտքի կեդրոնացումով եւ սորվելու նպատակով հետեւի բոլոր արարողութիւններուն՝ ծէսերուն, պիտի տեսնէ անոնց մէջ պահուած իմաստասիրութիւնները եւ իւրացնէ զանոնք եւ իր կեանքին մէջ եւս զանոնք իրագործէ: Ծէսերը հասկնալի կ'ընեն եւ կ'այժմէականացնեն այն ինչ որ մեզի համար անհասկնալի եւ անհասանելի է: Հոն կը սորվինք, թէ մենք կարող չենք Աստուած գտնել, այսինքն Աստուծոյ թագաւորութիւնը գտնել մեր սովորական հինգ զգայարանքներով:

«... ոչ Գայ արեւոյտ-թիւն Լսորո-ծոյ խորանօ՛ւ.
եւ շասիցեն թէ աւա-ասիկ ասոր է՝ կամ անոր, պի

աճա արվայո-բիւն Աստուծոյ 'ի ներվա 'ի Յեզ
է» : (Ղուկասոս ժէ: 20-21)

«... Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն
երեւցած բաներով: Եւ պիտի չըսեն թէ 'Աճա հոս է',
կամ 'Աճա' հոն', Որովհետեւ աճա Աստուծոյ
թագաւորութիւնը ձեր ներսն է»:

Երբ հաւատացեալներու հաւաքականութեան բոլորին
մտային կեդրոնացումը, հաւատքով եւ առանց վարա-
նումի, նոյն նպատակին վրայ սեւեռուած է, եկեղեցին
կարող է հրաշքներ գործել: Բայց ընդհանուր առմամբ
մեր «Ես»-ը զանազան անպէտ խորհուրդներու ողորդու-
մով, կը գրաւէ մեր միտքը եւ կ'արգիլէ մտային
կեդրոնացումը: «Ես»-ը սատանան՝ օձը կամ վիշապն է,
որ կը խափանէ հոգեկան ճանապարհը դէպի մեր
ներքին գանձին՝ Քրիստոսի, որպէսզի չկարողանանք
Զինք յայտնաբերել: Խորանը, ուր Սուրբ Պատարագը
կը մատուցուի, զոհի սեղանն է: Յիսուս, որ Սուրբ
Պատարագն էր, իր «Ես»-ը զոհեց խաչին վրայ եւ
Քրիստոս յարութիւն առաւ: Ասով պէտք է սորվինք
մենք ալ այդ սեղանին վրայ մեր «Ես»-ը զոհել,
որպէսզի Քրիստոս մեր մէջ ալ յարութիւն առնէ:
Միթէ Յիսուս չըսա՞ւ. «... եւ ապա պիտի ինչ
Լուսնայէ՛ պէտք իմ»: Մարդուն միտքը անընդհատ
աշխարհիկ հարցերու վրայ կը խորհրդածէ: «որքա՞ն
պիտի շահիմ, ո՞ւր պիտի ապրիմ, ի՞նչ գործ պիտի
ընեմ, ի՞նչ պիտի ուտեմ ...» եւ հազուադէպ՝ հոգեկանին
վրայ: Աշխարհիկ հարցերը «Ես»-էն կը ծագին եւ
եսասիրութեան եւ ազահութեան արդիւնքներն են: Երբ
անձը իր միտքը անընդհատ կը կեդրոնացնէ
հոգեկանին վրայ, ինք ալ իր կեանքին մէջ միշտ կը
գտնէ ներդաշնակութիւն, կը հասկնայ այն ինչ որ իրեն
անհասկնալի էր եւ կեանքի գեղեցկութիւնը կը տեսնէ,
որովհետեւ սկսած է հասկնալ կեանքին ակը: Ան կը

բարձրացնէ իր գիտակցութեան մակարդակը եւ կը հասնի «տեղ» մը, ուր ինք կ'անտեսէ իր «Ես»-ը, հետեւաբար աշխարհիկ բոլոր ցանկութիւնները, վախը եւ բոլոր ընկերային անպէտ պարտականութիւնները: Ան կը հասկնայ, թէ Աստուծոյ գիտակցութիւնը կը գործէ ընդհանուր ստեղծագործութեան մէջ: Երբ ան կը տեսնէ անզգամ բոյսին տերեւը, որ արեւին կը դառնայ, կը հասկնայ Աստուծոյ գիտակցութեան ներկայութիւնը ամենուրեք: Դժբախտաբար բոյսը զայն կ'ընէ անգիտակցաբար: Բոյսը չի կրնար հասկնալ թէ Աստուծոյ գիտակցութիւնն է որ իր տերեւը դէպի արեւին կը դարցնէ: Բայց Աստուած մարդուն տուած է կարողութիւնը իր գիտակցութեամբ գիտակցիլ Աստուծոյ գիտակցութեան: Չարմանալի է, թէ մարդ ինչու բոյսին պէս կ'ապրի եւ չի գործածեր իրեն շնորհուած կարողութիւնները: Աստուած մարդը հողէն շինեց, հետեւաբար մարդ երկրին մաս եւ բաժինն է եւ երկրին գիտակցութիւնն (consciousness) է: Կեանքը իր բոլոր երեւոյթներով եւ արտայայտութիւններով կեդրոնացած կամաց կամաց կը յառաջանայ դէպի իր Ակը, կարծէք կը խոկայ, բայց անգիտակցաբար: Մարդ կարողութիւնը ունի զայն գիտակցաբար ընելու, բայց աւա՛ղ այդ ուղղութեամբ շատ ծոյլ է: Միթէ չէ՞ ըսուած, թէ ծուլութիւնը մահացու մեղքերէն մին է: Մարդը փարած իր «Ես»-ին, կը վախնայ զայն կորսնցնելէ եւ չի ձգտիր աւելի բարձրեալին, աւելի վեհին: «Ես»-ը իրեն ծանօթ է եւ երկու տարեկանէն ի վեր անոր ազդեցութիւնը վայելած է իր կեանքին մէջ: Հոգ չէ թէ ան երբեմն զինք ենթարկէ ցաւի եւ վիշտի: Որովհետեւ Աստուծոյ երանութեան փորձառութիւնը իր ենթագիտակցութեան մէջ գոյութիւն չունի, իր գիտցածը՝ ունեցածն ալ կորսնցնելէ կը վախնայ: Այդ պատճառով ալ չի հետապնդեր կատարելութեան ուղին:

Ան նաեւ կը վախնայ իր մարմնին մահէն, որովհետեւ անգիտակից է, թէ աշխարհիկ կեանքը մահուան եւ կենաց շարունակականութիւն մըն է: Ամէն գիշեր, խորունկ քունի մէջ, ինք մեռած է աշխարհին եւ չ'անդրադառնար, թէ այդ խորունկ քունը իր կեանքի ամենահաճելի ժամերն են, որովհետեւ աշխարհի հետ իր կապը խզուած է, ինչպէս նաեւ իր «Ես»-ին հետ: Իր բոլոր խորհուրդները կը դադրին: Խորունկ քունի մէջ մարդ որեւէ խորհուրդ չ'ունենար, հետեւաբար առանց խորհուրդներու միտքն ալ՝ «...ըբ անբը» ազատ է իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի հետ հաղորդակցելու: Այս հաղորդութիւնն է որ խորունկ քունը հաճելի կ'ընէ եւ այդ հաղորդակցութեան միջոցին ինք Քրիստոսէն Ս. Հոգիի կենսատու զօրութիւնը կը ստանայ եւ առաւօտուն երբ արթննայ կազդուրուած կ'ըլլայ: Այդ նոր կորովը իր ստացած Ս. Հոգիի զօրութեան արդիւնքն է: Բայց խորունկ քունի մէջ մարդ այս բոլորը կ'ընէ անգիտակցաբար, որովհետեւ խորունկ քունի ընթացքին իր գիտակցութեան մակարդակն ալ շատ ցած կ'ըլլայ: Անոնք, որոնք քունի մէջ կ'երազեն խորունկ քունէն քիչ մը աւելի բարձր գիտակցութիւն մը ունին եւ իրենց միտքերը խորհուրդներով լի են, որոնք երազ կը կոչենք: Անոնք, որոնց քունը միշտ թեթեւ եղած է եւ հազուադիւր խորունկ քունի փորձառութիւնը կ'ունենան, ընդհանուր առմամբ առաւօտուն յոգնած կ'արթննան: Մարդ կարող է խորունկ քունի մէջ Քրիստոսի հետ ունեցած հաղորդութիւնը վայելել նաեւ երբ ինք արթուն է, անշուշտ եթէ կարողանայ իր կապը աշխարհէն խզել եւ իր բոլոր խորհուրդները դադրեցընել: Ահա՛ աս է նպատակը ճշմարիտ եւ վեհ աղօթքին՝ խոկումին, գիտակցաբար ընել այն ինչ որ ամէն օր անգիտակցաբար կ'ընենք եւ գիտակցաբար ունենալ Աստուծոյ՝ Քրիստոսի փորձառութիւնը: Ինչպէս վերեւ

գրուած է մարդկային կեանքը անընդհատ կենաց եւ մահուան ժամանակ մըն է: Մարդ մօրը արգանդին մէջ ինը ամիս կ'ապրի իբր սաղմ՝ իբր մակաբոյժ մը մօրը մէջ: Յետոյ կը ծնի, այսինքն կը մեռնի այդ «սաղմ»-ային՝ մակաբուծային կեանքին եւ կը ծնի երախայի մը կեանքին, ամէն ինչով տակաւին կարօտ մօրը խնամքին: Մի քանի տարի յետոյ ինք կը մեռնի երախայական կեանքին եւ կը ծնի մանկական կեանքին, դարձեալ կարօտ իր ծնողքին խնամքին: Մի քանի տարի յետոյ ինք կը մեռնի մանկական կեանքին եւ կը սկսի պատանեկան կեանքը: Այս միջոցին աւելի ըմբոստ, կը ջանայ ինքնաբաւ ըլլալ: Գրգռանիւթերը (hormones) կը սկսին իր վրայ ազդել եւ իր մէջ ինքնավստահութիւն արծարծել: Մի քանի տարի վերջ ինք դարձեալ կը մեռնի իր պատանեկան կեանքին եւ կը ծնի երիտասարդ հասուն մարդու կեանքին: Ինք կը վայելէ մարդուն լրիւ կազմուած մարմին, միտքին եւ իմացականութեան միացեալ կարողութիւնները եւ գրգռանիւթերուն տուած հաճոյքները: Ասոր կը յաջորդէ երիտասարդութեան մահը եւ միջին տարիքի ծնունդը: Այս հանգրուանին գրգռանիւթերուն ազդեցութիւնը նուազած ինք աւելի զգայուն, կը յայտնաբերէ սէր: Մարդուն տարիքը քանի յառաջանայ, կարծէք ժամանակն ալ աւելի արագ կ'ընթանայ: Շատ չանցած ինք կը մեռնի միջին տարիքին եւ կը ծնի ծերութեան: Ինք աւելի իմաստութեան տէր, վերջապէս կը սկսի մտածել թէ ի՞նչ էր իր կեանքին նպատակը: Ան երբեմն կը յաջողի այս հարցումին պատասխանը գտնել, բայց աւա՛ղ, ընդհանրապէս ոչ: Զարմանալի է, թէ մարդ ինչո՞ւ կը վախնայ մահէն երբ ինք այս աշխարհի վրայ յաճախ կենաց եւ մահուան փորձառութեան ենթարկուած է:

«Ինչպէս այս մարմինի մէջ, մարմնացեալ անձը
կ'անցնի մանկութենէ պատանեւութեան եւ

վերջապէս խոր ծերութեան, նմանապէս նաեւ ուրիշ մարմնի մը: Ասոր գիտակից մարդը (մահուան նկատմամբ) վիշտով չի տառապիր»: (Պակապատ Կիթա 2:13)

Որովհետեւ այդ բոլոր մահերը զինք աշխարհէն չեն բաժնած, ինք զանոնք յօժարաբար ընդունած է, բայց ան չ'ուզեր ընդունիլ վերջին մահը, որովհետեւ աշխարհին՝ նիւթին կապուած է եւ չ'ուզեր նիւթէն՝ իր մարմինէն բաժնուիլ, հետեւաբար մահէն կը վախնայ: Ան չէ հասկցած թէ ինք իր մարմինը չէ, այլ ինք այդ մարմինը գործածողն է, ինչպէս ինքնաշարժ մը կը գործածենք: Ինք անմահ է: Երբ մահը գայ ինք պէտք է զայն ուրախութեամբ ընդունի, որովհետեւ մարմինէն բաժնուելու որոշումը իր ճշմարիտ հոլթեան՝ Քրիստոսի որոշումն է, որովհետեւ այդ մարմինը այլեւս իր նպատակին պատշաճ կերպով կարող չէ ծառայել: Երբ մեր ինքնաշարժը յաճախ աւրուի եւ ճամբան մնանք, միթէ զայն չե՞նք նետեր եւ նորը չե՞նք գներ:

«Ինչպէս մարդ մը իր հինցած զգեստները կը նետէ եւ նորը կը հագուի, նմանապէս մարմնացեալ անձը կը նետէ իր մաշած եւ հինցած մարմինը եւ կ'առնէ մարմին մը որ նոր է»: (Պակապատ Կիթա 2:22)

Մարդու հոլթիւնը՝ Քրիստոս անմահ է, միայն «Ես»-ն է որ կը մեռնի: Մահէն ինչո՞ւ վախնանք: Մահէն կու գայ կեանք: Ճէլալէթի Րումի հետեւեալը ըսած է.

«Քար էի ու մեռայ եւ բոյս եղայ, բոյս էի ու մեռայ եւ անասուն եղայ, անասուն էի ու մեռայ եւ մարդ եղայ: Ինչո՞ւ վախնամ մեռնելէ: Մեռնելով ե՞րբ նուազեցայ որ: Մարդ եմ ու պիտի մեռնիմ եւ հրեշտակ պիտի ըլլամ»:

Յիսուս Քրիստոս յաճախ այս իրողութիւնը մեզի սորվեցուց: Ինք, այս գաղափարը մեզի սորվեցնելու

համար, սերմին օրինակը բազմիցս օգտագործած է: Եթէ հունար՝ սերմը չմեռնի ինք միայն կը մնայ, իսկ եթէ մեռնի բազում արդիւնք կու տայ: Իսկ չմեռած, եթէ մեր կեանքը ապրինք ինքնագոհողութեամբ, սէրով լի, գթասիրտ եւ կարեկից հանդէպ բոլորին, այն ատեն կ'արժանանանք Աստուածային երանութեան: Այդպիսի կեանք մըն է որ կը ներկայացնէ ճշմարիտ Աստուածապաշտութիւնը: Նման կեանք մը Աստուծոյ «մարմինը» խնամել է, ինչ որ ընդհանուր ստեղծագործութիւնն է: Պէտք է հասկնանք, թէ ան, որ մեր փորձառութեան մէջ չէ, կը կառավարէ ամէն ինչ, որ մեր փորձառութեան մէջ է:

Մարդ արարած մոռցած է իր կեանքի նպատակը ու շեղած անկէ: Ինչպէս վերեւ գրուած է մարդ կ'ըլլայ այն ինչ, որ ինք կը խորհի թէ ինք է, որով իր արտայայտութիւններն ալ կը ցոլացնեն իր միտքին հակումը: Միջնադարուն ամենաբարձր շէնքերը եկեղեցիները՝ տաճարներն էին: Տասնօթերորդ դարէն սկսեալ կառավարական շէնքերուն բարձրութիւնը գերազանցած էր եկեղեցիներունը: Իսկ ներկայ դարուս տնտեսական կազմակերպութիւններու շէնքերուն բարձրութիւնը կը գերազանցէ բոլորին: Այս փոփոխութիւնը նշան մըն է, թէ մարդ ընդհանուր առմամբ նիւթապաշտ եղած է:

Մեր եկեղեցական ծէսերը մեզ հոգեւոր կեանքի առաջնորդող զօրաւոր ազդակներ են: Դժբախտաբար այսօր, նոյնիսկ մեր Աստուածատուր եկեղեցւոյ մէջ իսկ, ծէսերը այլեւս սկսած են իրենց զօրութիւնը կորսնցնել: Երբ ծէսերը լրիւ չեն կատարուիր եւ կը կրճատուին, կամ լեզուն գրաբարէն աշխարաբարի կը փոխուի անհասկնալին հասկնալի ընելու նպատակով, ծէսը իր խորհուրդը կը կորսնցնէ: Առանց խորհուրդի ծէսն ալ կ'ըլլայ միայն աւանդութիւն մը: Եկեղեցին՝

տաճարը սուրբ վայր մըն է: Բայց եթէ ան իր սրբութիւնը կորսնցնէ խեղճ ժողովուրդը ի՞նչ պիտի ընէ, ո՞ւր պիտի ստանայ իր ներշնչումը: Մէսին նպատակը մեր էութիւնը արձակել է քան թէ Չայն խափանել: Քրիստոս յստակ եւ միտքով հասկնալի գոյութիւն մըն է, բայց ոչ հինգ զգայարանքներով: Այս գոյութեան կեդրոնը ամենուրեք է եւ անոր շրջագիծը ոչ մէկ տեղ, հետեւաբար դուք ուր որ էք կեդրոնն ալ հոն է, ուստի Քրիստոս ալ ձեր ներսիդին է: Կարող եմ նոյնը ըսել ես ինծի համար, հետեւաբար բոլորս՝ համայն մարդկութիւնը նոյն Քրիստոսի արտայայտութիւններն ենք: Ուրեմն ո՞ւր են մեր տարբերութիւնները: Սուրբ տեղերը Երուսաղէմ, Մէքքա կամ Հիմալայաները չեն, այլ սուրբ տեղը ամէն անհատի «սրտին» մէջն է, քանի որ Քրիստոս հոն է: Միթէ Յիսուս Քրիստոս չըսա՞ւ, թէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներն են: Աստուած ամենեւին չի մոռնար անոնք, որոնք Ձինք չեն մոռնար: Նուիրեալի մը ջերմեռանդ ճշմարիտ պաշտամունքը զինք Աստուծոյ մէջ կը լուծէ եւ ահա՛ աս է միականութեան փորձառութիւնը:

Կարելի է միականութեան գաղափարը իմացականօրէն հրապուրիչ գտնենք, բայց ան մտապատկեր մը չէ այլ ան գիտակցութեան մակարդակի բարձրացմամբ գործնական ըմբռնում մը՝ փորձառական իրողութիւն մըն է: Ան Աւետարանին մէջի գրուած յափշտակութիւնն է: Այսօր ամենուրեք կը քարոզուի քրիստոնէութիւն մը, որ շատ շեղած է Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներէն: Շեղումը արդէն քրիստոնէութեան սկզբնական շրջաններուն սկսած էր: Այս շեղումը աւելի արագ ընթացաւ Մարթին Լութէրէն վերջ: Այսօր կան բազմաթիւ յարանուանութիւններ, որոնք կը հաւատան զանազան հաւատալիքներու (beliefs), որոնք Յիսուսի սորվեցուցածներուն հետ կապակցութիւն իսկ չունին:

Ասոնք կ'ըսեն, թէ իրենք ճշմարտութիւնը գիտեն: Բայց անոնցմէ ո՞րմէկն է ճիշդը: Ան, որ կ'ըսէ թէ ինք գիտէ վստահ եղէք, որ չի գիտեր: Իսկ ան, որ կ'ըսէ թէ չի գիտեր, շատ հաւանական է, որ ան գիտէ:

Այս գրութեանս մէջ ներկայացուցի այն ինչ որ մինչեւ հիմա ես սորվեցայ: Աս տեսակէտ մըն է, որ այսօր ինծի լրջօրէն կը «խօսի», իսկ վաղը չեմ գիտեր: Ասոնք բոլորն ալ հաւատալիքներ (beliefs) են: Յոլսամ օր մը փորձառութիւնն ալ ունենալու կ'արժանանամ, որպէսզի հաւատալիքները փոխուին անխախտելի հաւատքի (faith): Ճիշդ է թէ բոլոր գիրքերուս մէջ ներկայացուցած տեսակէտներս իմ հաւատալիքներս են, բայց ասոնք հիմնուած են Յիսուսի սորվեցուցածներուն վրայ եւ ոչ թէ Պողոսի բոլոր գրածներուն վրայ: Մարդ պէտք չէ պրպտել դադրի: Մարդուն համար ամենամեծ, ամենահոգելի եւ ամենացաւալի աղէտը «Ես ճշմարտութիւնը գիտեմ» ըսել եւ իր միտքը «գոցել»-ն է, այս արարքով ինք ալ Աստուածայայտնութիւնը իր մէջ իրականացնելու առիթը կը կորսնցնէ եւ անոր իրականացումը խափանած կ'ըլլայ: Ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է, հետեւեալը Աստուած պատրաստ է մեր մէջ յայտնուելու որուն անհամբեր կը սպասէ: Բայց եթէ մենք դէպի Աստուած չդառնանք եւ իրեն չնայինք, ինչպէ՞ս պիտի տեսնենք, որ ան մեզի կը նայի եւ մեզի կը սպասէ:





**ՀԱԲՏՈՎ ԽՈԱՏՈՎԱՆԻՄ ԵՒ
ԵՐԿՐՊԱԳԱՆԵՄ ՔԵՉ,
ՀԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ ԵՒ ՍՈՒՐԲ ՀՈԳԻ,
ԱՆԵՂ ԵՒ ԱՆԱՀ ԲՆՈՒԹԻՒՄ,
ԱՐԱՐԻՉ ՀՐԵՇՏԱԿԱՅ ԵՒ
ՍԱՐԴԿԱՆ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ԵՂԵԼՈՅ.
ՈՂՈՐՄԵԱ՛ ՔՈ ԱՐԱՐԱԾՈՅ
ԵՒ ԻՆՁ՝ ԲԱՉՄԱՄԵՂԻԱ:**

«ԱՍՏՈԹՈՅ ԵՐԿՐՊԱԳԵՍՅՈՒՔ»

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ բոլոր ժամերգութիւններուն ընթացքին, ինչպէս նաեւ Ս. Պատարագին սարկաւազը խորանէն կը ձայնէ. «Աստուծոյ երկրպագեսցուք»: Հրահանք մը, որ հաւատացեալներուն բազմիցս կը տրուի:

Ի՞նչ է երկրպագութիւնը: Երկրպագել բառը բարդ բառ մըն է կազմուած երկու բառերէ. «Երկիր» եւ «պագենել», այսինքն համբուրել: Ուրեմն երկրպագութիւնը պարտ է տեղի ունենալ նման ձեւով: Մանկութեանս եկեղեցին կը տեսնէի ծերունի այրեր եւ կիներ, որոնք ընդհանուր առմամբ նստարաններուն եզերքը կը նստէին եւ ամէն «Աստուծոյ երկրպագեսցուք» հրահանգին նստարանէն դուրս կ'ելլէին եւ ծունկի գալով իրենց ճակատը մինչեւ գետին կը դպցնէին: Անոնք բառացի իմաստով «Երկիր»-ը՝ գետինը կը պագնէին, նման Մահմետականներուն, որոնք նամագի ընթացքին կ'ընեն: Այսօր մեր եկեղեցիներուն մէջ այլեւս երկրպագութիւն ընող չկայ: Հին ժամանակներուն, նման մզկիթներու, մեր եկեղեցիներուն մէջ ալ նստարան գոյութիւն չունէր եւ ընդհանուր հաւատացեալները ամէն մէկ հրահանգին միասնաբար կ'երկրպագէին: Արդեօք ներկայ դարուս մարդ այլեւս կարիքը չ'զգար Աստուծոյ երկրպագելու, կամ թէ այլեւս ինք հեզ եւ խոնարհ չէ եւ միայն հպարտ: Այժմ ալ կան հազուագիւտ անձեր, որոնք ամէն մէկ հրահանգին գոնէ թեթեւ մը գլուխնին կը ծռեն:

Ի՞նչ է իմաստը երկրպագութեան: Եւ ի՞նչ է, որ պարտ ենք սորվիլ՝ խորանէն եկած այդ հրահանգին հնազանդելով: Ինչպէս վերեւ գրուած է, երկրպագութիւնը առաջին հերթին հեզութեան եւ խոնարհութեան նշան մըն է: Երբ մարդ մը կը գտնուի թագաւորի կամ կայսրի մը ներկայութեան, ան կը խոնարհի կայսրին

առջեւ եւ իր այս արարքով ցոյց կու տայ թէ ինք կ'ընդունի անոր իր վրայ ունեցած իշխանութիւնը եւ իր ալ՝ անոր հպատակ ըլլալը: Հետեւաբար մեզի համար ալ երկրպագութիւնը պէտք է ունենայ նման իմաստ մը: Իսկ եթէ կ'ընդունինք Աստուծոյ գերիշխանութիւնը մեր անձերուն վրայ, ինչո՞ւ չենք հնազանդիր հրահանգին եւ պատշաճ կերպով չենք երկրպագեր: Եթէ կ'ընդունինք Աստուծոյ մեր վրայ ունեցած գերիշխանութիւնը պարտ ենք նաեւ Ջինք պաշտել: Երկրպագութիւնն ալ կ'ըլլայ պաշտելու արտայայտութիւն մը: Հետեւաբար երկրպագութիւնը պէտք է ըլլայ այն էութեան, որուն գերիշխանութիւնը ընդունած ենք եւ մենք զմեզ կը նկատենք Անոր հպատակ: Երբ եկեղեցիին մէջ կ'երկրպագենք զայն կ'ընենք դէպի խորան, որովհետեւ կը նկատենք, թէ Աստուած խորանին վրայ ներկայ է: Բայց կ'ըսենք թէ Աստուած ամենուրեք է: Իսկ ըստ Յիսուսի սորվեցուցածներուն, եթէ մեր մարմինները Աստուծոյ տաճարներ են եւ Աստուած՝ Քրիստոս ամէն անհատի հոգին, արդեօք կարելորութիւն կ'ունենայ թէ ինչ ուղղութեամբ եւ «ինչի» երկրպագութիւն կ'ընենք: Տարբեր կրօնքներու մէջ հաւատացեալներ կ'երկրպագեն զանազան արձաններու եւ կ'ըսենք թէ անոնք կուռք կը պաշտեն: Ս. Գիրքին մէջ գրուած է.

«Մի արասցես չեզ կոռոս . . .» (Ելից Ի:4)

«Ո՛չ մէկ կուռք չինէ դուն քեզի, ...»

«Կի Գրեալ Տեառն Աստուծոյ չոմ երկիր պագցես, եւ քնա միայն պաշտցես» :
(Մատթէոս Դ:10)

«որովհետեւ գրուած է. Տէրո՛ջ՝ քու Աստուծոյդ երկրպագէ, ու միայն զի՛նք պաշտէ»:

Հետեւաբար ի՞նչ է այս բոլորին իմաստը: Եթէ Աստուած ամենուրեք է, ուրեմն այլ կրօնքներու արձանները մարդու ստեղծած կուռքերն են: Ապա թէ ոչ Ս.

Գիրքի մէջը ըստած կուռքը, որ պէտք է մարդ իրեն համար շինէ, տարբեր իմաստ մը ունի: Եթէ Քրիստոս ամէն անհատի հոգին է, ի՞նչպէս Աստուծոյ երկրպագել: Անտարակոյս Փիզիքական երկրպագութիւնը դրսերեւումն է մտային երկրպագութեան՝ հեզութեան, խոնարհութեան, հնազանդութեան եւ հպատակութեան: Բայց կարելի է Փիզիքական երկրպագութիւնը ընել, բայց եթէ ան չի ցոլացներ մտային երկրպագութիւնը, ի զուր է: Քանի որ Աստուած ամէն անհատի ներսիդին է, ճշմարիտ երկրպագութիւնն ալ պէտք է ըլլայ ներքին գործառնութիւն մը: Քանի որ մարդուն միտքն ալ իր մարմնէն դուրս է եւ ներքին է, պատշաճ է որ երկրպագութիւնն ալ պարտ է մտային արարք մը ըլլալ: Այս հիման վրայ բոլոր այն կուռքերը որ մարդ կը պաշտէ եւ որոնց կ'երկրպագէ այդ արտաքին արձանները չեն, այլ այն բոլորը որ մարդ իր միտքին մէջ կը համարէ իրեն համար պաշտելի ըլլալ: Կան անձեր, որ նիւթական հարստութիւնը՝ դրամը կը պաշտեն, ինչպէս նաեւ անձնական փառքը ...: Այս ուղղութեամբ Յիսուս բացայայտ ըսած է.

«... Ո՛չ կարէի Լսարձո՛յ թառայել եւ մամոնայի»: (Ղուկաս Ժ:9:13)

«... Ձէք կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Բայց հակառակ Յիսուսի սորվեցուցածներուն, մարդ յաճախ երկուքին միջեւ կը ճոճի: Յիսուս անպատին մէջ իր «Ես»-էն փորձուելով եւ զայն յաղթելով մեզի սորվեցուց թէ ի՞նչ է կուռքը եւ ինչ է երկրպագութիւնը:

«Եւ Հանեալ զնա՝ ի լեառն մի Բարձր՝ Եցո՛յց նմա զամենայն Խաղա՛որոս-Թիւնս աշխարհի՝ ի վայրկեա՛ն ժամանակի: Եւ առէ ցնա սարանայ. Ի՛նչ ո՞րաց զայս ամենայն իշխանոս-Թիւն եւ

պիտանա սոցյա, պի ինչ ցոտեալ է ում կամիմ՝
ցոտ պոս: Արդ ցոտ էլէ անկեալ էրկիր
պաշանիցեա առաջի իմ, չէ՛ պ եղիցի ամենայն:
Պարասխանի էր նմա Յիսոսա՝ էա սաէ. Գրեալ
է, էրկիր պաշեա Տէառն Աստուծոյ չոտ, է-
պնա՛ միայն պաշտեացեա»: (Ղոկաս Գ:5-8)

«Չարախօսը՝ Հանելուկ վայն բարձր լեռ մը՝ ցուցուց
անոր երկրագունդին բոլոր թագաւորութիւնները
վայրկեանի մը մէջ, ու Չարախօսը ըսաւ անոր. «Այս
ամբողջ իշխանութիւնը եւ անոնց փառքը պիտի տամ
քեզի. որովհետեւ ինծի յանձնուած է, ու որո՛ւն որ
ուզեմ՝ կու տամ վայն: Ուրեմն եթէ դուն իմ առջեւ
իշխալով երկրպագես, բոլորը քուկդ պիտի ըլլան»:
Յիսուս պատասխանեց անոր. «Գրուած է. Տէրո՛ջ՝ քու
Աստուծո՛յդ երկրպագէ, եւ միայն զի՛նք պաշտէ»»:

*Հետեւաբար ամենամեծ կուռքը, որ կը պաշտենք
եւ որուն կ'երկրպագենք մեր «Շս»-ն է: Մարդ արարած
երբ նոյնիսկ արտաքնապէս եւ Ֆիզիքապէս եկեղեցին
խորանին առջեւ երկրպագէ, ինք ներքնապէս եսասիրու-
թեամբ անընդհատ կ'երկրպագէ իր «Շս»-ին՝ սատանա-
յին եւ կ'ըլլայ կռապաշտ: Յիսուսի սորվեցուցած ճշմա-
րիտ երկրպագութիւնը հնազանդիլ եւ ապրիլ է ըստ
ներքին Քրիստոսի կամքին եւ չհետեւիլ եւ չենթար-
կուիլ իր «Շս»-էն եկած յորդորներուն՝ ցանկութիւն-
ներուն, յուզումներուն, զգացումներուն ...: Իսկ եթէ
հնազանդի իր «Շս»-ին, եկեղեցիին մէջի երկրպագու-
թիւնը կ'ըլլայ կեղծաւորութիւն: Թերեւս ասոր համար
է, որ եկեղեցիներուն մէջ այլեւս երկրպագողներ չենք
տեսներ: Հաւանաբար մարդիկ չեն ուզեր կեղծաւոր ըլ-
լալ: Բացառութիւնները միշտ յարգելի են: Կան անձեր,
որոնց Ֆիզիքական երկրպագութիւնը ցուցումն է ա-
նոնց ներքին ու մտային երկրպագութեան՝ իրենց
ներքին Քրիստոսին: Այս անձերը յայտնի կ'ըլլան իրենց
կենցաղով եւ վարուելակերպով, որովհետեւ անոնք կը*

կատարեն միայն Աստուծոյ կամքը եւ ոչ՝ իրենց «Ես»-ինը: Անոնց երկրպագութիւնը նոյնիսկ եթէ չունենայ արտաքին՝ Ֆիզիքական երեւոյթ, իրենց կենցաղը կը յայտնէ ներքին երկրպագութիւնը: Եւ կարեւորը այս վերջինն է: Ինչպէս այլուր գրուած է, մարդուն անհատականութիւնը ունի երկու բեւեռներ, մին՝ դրականը, որ ներքին Քրիստոսի հետ հաղորդութեան մէջ է, իսկ միւսը՝ ժխտականը՝ իր «Ես»ը: (Այս ուղղութեամբ թեւադրելի է կարգալ «Տիեզարական Օրէնքները» գիրքին «Անհատականութիւն» խորագրեալ Զ. գլուխը, էջ:193): Մարդուն անհատականութիւնը ընդհանուր առմամբ կը կառավարուի իր «Ես»-ին կողմէ եւ ահա՛, Լուսաբեր հրեշտակին Աստուծոյ գահը նստիլ ուզելուն իմաստն ալ այս է: Աստուծոյ գահը իր տաճարին մէջն է: Տաճարն ալ մարդն է:

«Ո՛չ գիտէ՛ ե՞նչ Կաճար է՛ Լսարանոյ, Եւ
Ընդի Լսարանոյ Բնակեալ է 'ի յեւ»: (Լ.
Կորնթացիս Գ:16)

«Զէ՞ք պիտե՛ր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

Հետեւաբար սատանան՝ մարդուն «Ես»-ը, կը կառավարէ մարդը եւ մարդն ալ, այսինքն մարդուն անհատականութիւնը կ'արտօնէ, որ ինք կառավարուի իր ժխտական բեւեռին՝ «Ես»-ին կողմէ: Մարդն ալ երկրպագած կ'ըլլայ իր «Ես»-ին՝ սատանային եւ անոր ստեղծած գանազան կուռքերուն: Միթէ Յիսուս իր անապատին մէջի առած որոշումով մեզի չսորվեցո՞ւց անտեսել «Ես»-ը եւ նաեւ բացայայտ խօսքերով ալ չչէշտե՞ց:

Որ ո՛րք է պաննն իւր՝ արձակէ պնա. Եւ որ արեւայ
պաննն իւր յաշխարհիս յայամիկ, 'ի կէանան յաւի-
րենականս պաւեացի պնա»: (Յովհաննոս ԺԲ:25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ
ան որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝
յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ զայն»:

«Զի որ կամիցի պաննն իւր կէցոօցանել,
կորոօսցէ՛ պնա. եւ որ կորոօսցէ պաննն իւր
վանն իմ՛ կէցոօսցէ՛ պնա»: (Ղոսկաս Թ: 24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ զայն»:

«Որ սիրէ պահար կամ պահար առատել վանն պնա,
ո՛չ է իննն արժանի: Եւ որ սիրէ պոօսոր կամ
պոօսոր առատել վանն պնա, չէ՛ իննն արժանի:
Եւ որ ո՛չ առնոօ պնա՛ չ իւր՛ եւ Գայ պնն իմ,
չէ՛ իննն արժանի: Որ Գրանէ պաննն իւր՛
կորոօսցէ՛ պնա, եւ որ կորոյս պաննն իւր վանն
իմ, Գրացէ՛ պնա»: (Մարթէոս Ժ: 37-39)

«Ա՛ն որ ինձմէ աւելի կը սիրէ իր հայրը կամ մայրը՝
ինծի արժանի չէ, եւ ա՛ն որ ինձմէ աւելի կը սիրէ իր
որդին կամ աղջիկը՝ ինծի արժանի չէ: Ա՛ն որ իր խաչը
չ՛առներ ու իմ ետեւէս չի գար, ինձի արժանի չէ: Ա՛ն
որ կը գտնէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն, եւ ա՛ն որ
կը կորսնցնէ իր անձը ինծի համար՝ պիտի գտնէ զայն»:

**Եթէ Զինք կ'ընդունինք իբրեւ մեր վարդապետը
եւ իրեն կը հաւատանք, ինչո՞ւ իրեն նման չենք ըներ եւ
չենք անտեսեր մեր «Ես»-ը: Ամէն մարդ Աստուծոյ
որդին է: Ամէն մարդ Աստուծոյ տաճարն է: Քրիստոս
ամենուն հոգին է: Յիսուս Քրիստոսի համար կ'ըսենք
Թէ երկու բնոյթ ունէր. Թէ՛ Աստուածային եւ Թէ՛
մարդկային: Ի՞նչ է ասոր իմաստը: Յիսուս Քրիստոսի
համար կ'ըսենք Աստուծոյ միածին Որդին: Ինչո՞ւ:
Որովհետեւ Յիսուս անտեսեց Իր «Ես»-ը եւ յայտնա-
բերեց Քրիստոսի բնոյթը իր մէջ: Միթէ մարդու
անհատականութիւնն ալ երկու բեւեռներ չունի՞: Մին
Աստուածային եւ միւսն ալ սատանայական՝ իր «Ես»-ը,
որ կը նկատենք մեր մարդկային բնոյթը: Մենք Աստու-
ծոյ որդիները ըլլալով հանդերձ միածին որդին չենք:**

Միայն Յիսուս էր, որ իր մէջ յայտնաբերեց Աստուած՝ Քրիստոս: Իսկ մեր մէջ Քրիստոս կը քնանայ, հետեւաբար Աստուածայայտնութիւնը մեր մէջ յայտնաբերելու կարողութիւնը ունենալով հանդերձ մենք կ'երկըրպագենք մեր «Ես»-ին եւ կ'անտեսենք Քրիստոս: Մարդուն իր բնոյթը փոխելու համար տարած ջանքը, սկզբնական քայլերն են յայտնաբերելու իր ներքին Քրիստոս եւ երկրպագել Անոր, քան թէ երկրպագել իր «Ես»-ին:

Յիսուս նաեւ ըսած է, թէ աշակերտը պարտ է իր վարդապետին նմանիլ:


«Ո՛չ է աշակերտ չա՛ն ինչն սովորողեալ իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի ի՞բրեւ սովորողեալ իւր»: (Գուկաս .9:4)

«Աշակերտը իր վարդապետին գերիւեր չէ. բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Մտք եղերո՛ւ ի դո՛ւ ի կարարեա՛լ ի՛, որպէս եւ Հայրըն յեր երկնա՛որ կարարեա՛լ է»: (Մարտեոս 16:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Ուրեմն պէտք չէ՞ որ մենք ալ Յիսուսի նման մեր ներքին Քրիստոսի երկրպագենք եւ ոչ մեր «Ես»-ին: Այս արարքով նմանինք իրեն ու նման մեր Երկնաւոր Հօր կատարեալ ըլլանք:

Ահա՛, սարկաւազին «Աստուծոյ երկրպագեսցուք» հրահանգէն աս է, որ պէտք է սորվինք եւ ոչ միայն Փիզիքական երկրպագութիւնը կատարենք, որ այսօր նոյնիսկ այդ անգամ չենք ընել:





Համբերադար եղեր

Մնարայ եղեր

Պարզ եղեր

Խոնարհ եղեր

ՄԸՍ՛, աս է վերային թնոնդը

ՄԸՍ՛, աս է կարարելո-բեան ուղին

ՄԸՍ՛, աս է Հոգե-որ կեանիք

ԻՆՉ Է ՎԵՐՍՏԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Այսօր Քրիստոնէութիւնը ունի աղանդներ, որոնց հետեւորդները կը յայտարարեն, թէ վերստին ծնունդ ունեցած են եւ փրկուած: Իրենց այս հասկացողութիւնը ծագում կ'առնէ Յիսուսի Նիկողեմոսի ըսած խօսքէն՝ ներկայացուած Աւետարանի յաջորդական համարներով:

«Եւ էր՝ ա՛յր մի՛ ՚ի փարիսէացոց անոր՝ Նիկո-
ղեմոս անուն նորա իշխան Հրէից: Սա՛ էկն առ-
նա Գիշերի՛ եւ առ ցնա. Ռա՛թթի՛ Գիցեմէ՛ թէ
յԼսորո-ժոյ էկեալ էս վարդապետս զի ո՛չ ո՛ղ կարէ
զայտ նշանս առնել՝ զոր դո-դ առնես. եթէ ոչ
Լսորո-աթ իցէ ընդ նմա: Պարասխանի՛ եր Յի-
սուս՝ էւ առ ցնա. Ըմէն ամէն ասէ՛մ զէզ. եթէ
ոչ ո՛ղ ծնցի ՚ի վերստին ո՛չ կարէ րեսանել զար-
ժայո-թիւն Լսորո-ժոյ: Ըսէ ցնա Նիկողեմոս.
Զի՛րոդ կարէ մարդ ծնանէ՛լ որ ծնեալն իցէ մի
եթէ՛ մարդ ինչ իցէ անորէն յորովայն մօր
ի-րոյ կրկին մտանէ՛լ էւ ծնանել: Պարասխանի՛
եր Յիսուս՝ էւ առ. Ըմէն ամէն ասէ՛մ զէզ.
եթէ ոչ ո՛ղ ծնցի ՚ի ջրո՛յ էւ ՚ի Հոգո-ոյ ո՛չ
կարէ մտանել յարժայո-թիւն Լսորո-ժոյ: Զի
ծնեալն ՚ի մարմնոյ մարմին է էւ ծնեալն ՚ի
Հոգո-ոյ՝ Հոգի՛ է: Դո-՛ մի՛ զարմանար, թէ
ասացի զէզ՝ ո՛րք է յէզ ծնանել վերստին: Զի
Հողմ՝ ո-ր կամի շնչէ՛. էւ զՅայն նորա լսեա-
այլ ո՛չ Գիցես ո-սոր՛ Գայ՝ կամ յո՛ երթայ
սոյնպէս՝ էւ ամենայն ծնեալն ՚ի Հոգո-ոյն:
Պարասխանի՛ եր Նիկողեմոս՝ էւ առ ցնա.

Ջրա՞րդ մարտի այդմ լինել: Պատասխանի եր
Յխոտո՞ւ՝ եւ ասէ ցնա. Դո՞ւ ես վարդապետ
Իւրայելի՛ եւ պայտ՝ ո՛չ Գրիգէս: Ըմէն ամէն
ասեմ ի՛նչ. զի զոր ինչ Գրիգէմէ՛ խօսեմէ՛ եւ զոր
դեպտէ՛ վկայեմէ՛ եւ պղկայո՞ւթի՞նն մեր ո՛չ
ընդո՞ւնի: Իսկ արդ՝ եթէ պերկրա՞որս ասացի յեւ
եւ ո՛չ Ըստարայի. զի՞նչ եթէ պերկնա՞որսն
ասացից՝ Ըստարայի: Եւ ո՛չ ո՛վ յերկննս ել
եթէ ո՛չ՝ որ է՛ջն յերկնից որդին մարդոյ՝ որ է՛ն
յերկննս: Եւ որպէս Մովսէս Բարձրացոյց զօ՛ջն
յանապարհն. նո՛յնպէս Բարձրանալ պա՛րզք է
որդո՞ւյ մարդոյ: Ջրի ամէնայն որ Ըստարայ ՚ի
նմա՛ ընկալցի պկեաննս յա՞րիտեանկանս: Ջրի
ա՛յնպէս սիրեաց Ըստարայ զաշխարհ, մինչէ՛ւ
զորդին ի՞ր միաժին եր զի ամէնայն որ
Ըստարայ ՚ի նա՛ մի՛ կորիցէ, այլ ընկալցի՛ պկեան՝
սըն յա՞րիտեանկանս: Ջրի ո՛չ առա՛վեաց Ըստարայ
զորդի ի՞ր յաշխարհ՝ թէ դարպեացի զաշխարհ,
այլ զի փրկեացի աշխարհ նովա: Որ Ըստարայ
՚ի նա՛ ո՛չ դարպարարեացի եւ որ ո՛չ Ըստարայ
նա՛ արդէ՛ն իսկ դարպարարեալ զի ո՛չ Ըստարայ
յանո՞ւն միաժին որդո՞ւյն Ըստարայ: Եւ
ա՛յս իսկ է դարպարարն. զի լոյս էկն յաշխարհ,
եւ սիրեցին մարդիկ զիսա՞ւր առա՞ւել ի՛նչն զլոյս
զի էին Գործի ի՞րեանց շարո՞ւթեան: Ջրի
ամէնայն որ զա՞ւր Գործէ՛՛ արեա՛յ զլոյս եւ ո՛չ
Գայ առ լոյսն. զի մի՛ յանդիմանեացին Գործի

նորա: Իսկ որ ասանէ պճշմարտութիւնն Գայ աս-
լոյսն. պի յայտնի լիցին Գործի նորա՝ Թէ
Լսարո-ժող Գործեցան»: (Յովհաննէս Գ:1-21)

«Փարիսեցիներէն մարդ մը կար՝ Նիկողեմոս անունով,
որ Հրեաներու պետ մըն էր: Ասիկա գիշերուան մէջ
եկաւ Յիսուսի քով եւ ըսաւ անոր. «Ռաբբի՛, գիտե՞նք թէ
դուն Աստուծոյ վարդապետ եկած ես. որովհետեւ մէկը
չի կրնար ընել այն նշանները՝ որ դուն կ'ընես, եթէ
Աստուած իրեն հետ չըլլայ»: Յիսուս պատասխանեց
անոր. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ
քեզի. եթէ մէկը վերստին չծնի՝ չի կրնար տեսնել
Աստուծոյ թագաւորութիւնը»: Նիկողեմոս ըսաւ անոր.
«Ի՞նչպէս կրնայ ծնիլ մարդ մը՝ որ ծերացած է: Կարելի՞
է, որ երկրորդ անգամ մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»: Յիսուս
պատասխանեց. «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը
յայտարարեմ քեզի. եթէ մէկը ջուրէն ու Հոգիէն չծնի՝
չի կրնար մտնել Աստուծոյ թագաւորութիւնը:
Մարմինէն ծնածը՝ մարմին է, եւ Հոգիէն ծնածը՝ Հոգի
է: Դուն մի՛ վարմանար որ ըսի քեզի. Դուք պէտք է
վերստին ծնիք: Հովը կը փչէ ո՛ւր որ ուզէ: Կը լսես
անոր ձայնը, բայց չես գիտեր ուրկէ՛ կու գայ, կամ
ո՛ւր կ'երթայ: Ո՛վ որ Հոգիէն կը ծնի՝ ա՛յսպէս է»: Նիկողեմոս
ըսաւ անոր. «Ի՞նչպէս կրնայ ըլլալ
ատիկա»: Յիսուս պատասխանեց անոր. «Դուն Իսրայէլի
մէջ վարդապետ մըն ես, ու չե՞ս գիտեր այս բաները:
Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ քեզի թէ
ինչ որ գիտենք՝ կը խօսինք, եւ ինչ որ տեսանք՝ կը
վկայենք, ու չէք ընդունիր մեր վկայութիւնը: Եթէ
երկրային բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չէք
հաւատար, ի՞նչպէս պիտի հաւատաք՝ եթէ երկնային
բաներու մասին խօսիմ ձեզի: Ո՛չ մէկը երկինք
բարձրացաւ, բացի անկէ՛ որ երկինքէն իջաւ, մարդու
Որդին՝ որ երկինքն է: Եւ ինչպէս Մովսէս բարձրացուց
օձը անապատին մէջ, այնպէս պէտք է որ բարձրանայ
մարդու Որդին. որպէսզի ո՛վ որ հաւատայ անոր՝
չկորսուի, հապա ունենայ յաւիտենական կեանքը:
Որովհետեւ Աստուած ա՛յնպէս սիրեց աշխարհը, որ
մինչեւ անգամ տուաւ իր միածին Որդին, որպէսզի ո՛վ
որ հաւատայ անոր՝ չկորսուի, հապա ունենայ
յաւիտենական կեանքը: Քանի որ Աստուած աշխարհ

զրկեց իր Որդին՝ ո՛չ թէ աշխարհը դատապարտելու, հապա՛ որպէսզի աշխարհը փրկուի անով: Ա՛ն որ կը հաւատայ անոր՝ չի դատապարտուիր, իսկ ան որ չի հաւատար՝ անիկա արդէն դատապարտուած է, որովհետեւ չհաւատաց Աստուծոյ միածին Որդիին անունին: Սա՛ է դատապարտութիւնը, որ լոյսը աշխարհ եկաւ, բայց մարդիկ սիրեցին խաւարը՝ փոխանակ լոյսին, քանի որ իրենց գործերը չար էին: Որովհետեւ ո՛վ որ չարիք կը գործէ, անիկա կ'ատէ լոյսը եւ չի գար լոյսին քով, որպէսզի չկշտամբուին իր գործերը: Բայց ան որ կը կիրարկէ ճշմարտութիւնը՝ կու գայ լոյսին քով, որպէսզի իր գործերը յայտնաբերուին թէ գործուեցան Աստուծմով»:

Նախ քննենք այն հասկացողութիւնը եւ հայեացքը անոնց, որոնք կը պատկանին Քրիստոնէութեան այն աղանդին, որուն հետեւորդները կ'ըսեն թէ «վերստին ծնունդ» ունեցած են եւ փրկուած: Անտարակոյս, անոնց հետապնդած նպատակը փրկութիւնն է: Անոնց հասկացողութիւնը այն է թէ «Չուրէն» եւ «հոգիէն» ծնիլը կը ներկայացնէ մկրտութիւնը եւ կնունքը՝ դրոշմը կամ Ս. Հոգիի իրենց մէջ ներգործումը: Աս ալ կ'ըլլայ իրենց պատուելիին ձեռքը իրենց ճակտին դպցնելովը: Անոնք կ'անտեսեն իրենց մանկութեան շրջանի մկրտութիւնը եւ դարձեալ կը մկրտուին: Մկրտութիւն եւ կնունք եկեղեցական կարեւոր Խորհուրդներէն (Sacrament) են: Բայց, եթէ այդ արտաքին արարողութեան ներկայացուցած խորհուրդները (mysteries) չեն հասկցուիր եւ չեն բացատրուիր, անոնք կ'ըլլան միայն աւանդութիւններ: Այս աղանդին անդամներուն տեսակէտը այն է թէ որպէս մանուկ չէին գիտեր թէ ինչ կ'ըլլար եւ հասկնալով չեն տուած իրենց հաւանութիւնը: Անտարակոյս այս հայեացքը ճիշդ է: Միթէ կնքահօր պարտականութիւնը ի՞նչ է: Երբ անոնք չափահաս ըլլան, անոնց բացատրել կատարելութեան ուղին նաեւ իմաստը մկրտութեան եւ կնունքին: Կնքահօր պարտականութիւնը պատիկին միայն խաղալիքներ նուիրել չէ,

այլ իրեն վստահուած այս հոգեկան պարտականութիւնը լիովին կատարելն է: Շատ հաւանական է, որ աղանդին անդամներուն կնքահայրերը անոնց չեն տուած պատշաճ տեղեկութիւնները: Այս հիման վրայ անոնք ալ կ'որոշեն դարձեալ մկրտուիլ: Բայց մկրտութիւնը խաղալիք չէ, շատ լուրջ Խորհուրդ մըն է: Համայն աշխարհի մէջ շատ մը կրօնքներ ունին մկրտութեան Խորհուրդը եւ զայն կ'ընեն միայն մէկ անգամ, ի բաց առեալ հրեաներէն, որոնք մեղքերութողութեան համար կարող են բազմիցս մկրտուիլ: Բայց նման կրօնական օրէնքներ կ'ըլլան միայն «կրօնք» եւ ոչ Յիսուսի սորվեցուցած «վերստին ծնունդ»-ը: Այս ուղղութեամբ Յիսուս հետեւեալները ըսած է.

«Ձո՛ւր պաշտօնն պիտի ուսուցանեն վարդապետներնս՝ յիշատակելու զմարդկան պարտութեանս»: (Մատթէոս ԺԷ: 9)
«Եւ պարապ տեղը կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները սորվեցնելով իբր վարդապետութիւն»:

(Տես նաեւ Մարկոս Է: 7)

«Եւ նա՛ն առէ. Եւ յէ՛ւ վա՛յ օրինականացո՛ւ պիտի առնայի մարդկան թեօթեան դժուարակիրս. Եւ դո՛ւք մարդմբ միով ՚ի թեօթեան ո՛չ մեր յիշատակելու»: (Ղուկաս ԺԷ: 46)

«Իսկ ան ըսաւ. «Ձեզի՛ ալ վա՛յ՝ օրինականներովդ, որ դժուարակիր բեռներ կը բեռցնէք մարդոց, բայց դուք՝ ձեր մէկ մատով չէք հպիլր այդ բեռներուն»:

Վերոյիշեալ աղանդին անհատները նաեւ Յիսուս Քրիստոս կը հրաւիրեն, որ Ան դուրսէն իրենց մէջ գայ: Այս հայեացքն ալ սխալ է, որովհետեւ Քրիստոս ամէն մի անհատի հոգին է: Առանց հոգիին՝ Քրիստոսի, անձին մէջ ներկայութեան անհատը գոյութիւն չի կրնար ունենալ: Ս. Գիրքէն հետեւեալ մէջբերումը բացայայտ կը շեշտէ այդ իրողութիւնը.

«Լոյս Տէարն շոնշ մարտկան, ...» : (Լուսկայ Ի:27)
«Մարդուն հոգին Տէրջը լոյսն է»:

Բայց Քրիստոս բոլորին հոգին ըլլալով հանդերձ չի յայտնուիր անձին մէջ եւ կը ննջէ: Շատ հաւանական է անոնց ըսել ուզածը այն է, թէ Քրիստոս իրենց մէջ յայտնուի: Բայց այս յայտնութիւնը միայն փափաքելով եւ ըսելով չ'ըլլար, այլ միայն պատշաճ «երկրպագութեամբ», այսինքն լրիւ անտեսելով «Ես»-ն ու աշխարհը: Միթէ Յիսուս չէ՞ ըսած. «Ես չեկայ խաղաղութիւն բերելու, այլ սուր»: Սուրը պատերազմելու համար է եւ այդ պատերազմն ալ անձին իր «Ես»-ին հետ է: Սուրին նպատակը մեզ բաժնել է մեր «Ես»-էն եւ աշխարհիկ բոլոր ցանկութիւններէն, խորհուրդներէն, յուզումներէն ...:

Քննենք հարց մը եւս, փրկուած ըլլալու հարցը: Այս ուղղութեամբ պէտք է հասկնանք թէ, բոլոր անոնք, որոնք կը նկատեն փրկուած ըլլալ, կը յայտնեն թէ իրենց կեանքին նպատակը փրկութիւնն է: Անոնք չեն անդրադառնար, թէ այս հայեացքը Յիսուսի բոլոր սորվեցուցածներուն հակառակ է: Աս յայտնի կ'ըլլայ Յիսուսի հետեւեալ խօսքէն.

«Զի որ կամիցի պանշն իւր կեցոցանել,
կորոսցէ՛ պնա. եւ որ կորոսցէ պանշն իւր
վանն իմ՝ կեցոսցէ՛ պնա» : (Լուկաս Թ:24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ վայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի համար, պիտի փրկէ վայն»:

Անտարակոյս Յիսուս սորվեցուց փրկութեան միջոցը, բայց երբեք չըսաւ թէ այդ պէտք է ըլլայ մարդուն կեանքին նպատակը: Փրկութիւնը Աստուծմէ տրուած շնորհք՝ պարզեւ մըն է եւ մարդ ինք չի կրնար զայն իր ջանքերով ձեռք ձգել: Փրկութիւնը անհատին իր անձը՝ անհատականութիւնը, մարմնին մահէն վերջ, պահելն է:

Միթէ Յիսուսի անհատականութիւնն ալ մարմնին մահէն վերջ յարութիւն չարա՞ւ: Իսկ եթէ անհատը այդ Աստուածային պարգեւին չէ արժանացած, իր անհատականութիւնն ալ մարմնին հետ կը մեռնի կ'երթայ: Միթէ չէ՞ գրուած.

«Զի Ռոշակն մեղաց մահ է»: (Հովհաննէս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

Իսկ, Յիսուսի սորվեցուցածը այն է, թէ Աստուած փրկութիւնը կը շնորհէ անոնց, որոնք իրենց աշխարհիկ պարտականութեան մէջ յաջողած են: Եւ ի՞նչ է այս պարտականութիւնը: Այս գիրքին այլ էջերուն մէջ, այս մարդկային կեանքի ընթացքին, մարդուն պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնները բազմիցս ներկայացուած են: Մարդուն պարտականութիւնը իր անձին մէջ Աստուածայայտնութիւնը իրականացնել է:

Ուրեմն ի՞նչ էր Յիսուսի ըսած «վերստին ծնունդ»-ը:

Յիսուս նոյն դասերը մեզի զանազան ձեւերով՝ Իր խօսքերով, առականերով եւ արարքներով բազմիցս ջանացած է սորվեցնել: Այս գիրքին մէջ, «Աստուծոյ Երկրպագեցուք» խորագրեալ նախորդ յօդուածին մէջ ներկայացուած է կեանքին նպատակը իբրեւ մտային երկրպագութիւն ներքին Քրիստոսին, քան թէ երկրպագութիւնը անձին իր «Ես»-ին: Եւ ահա՛, աս է իմաստը «վերստին ծնունդին»: Մարդ արարած իր մանկութեան օրերէն (երկու տարեկանէն) սկսեալ իր «Ես»-ին է որ կ'երկրպագէ: Յիսուսի ըսած «վերստին ծնունդը» պէտք է ըլլայ «հոգիէն» եւ «ջուրէն»: Անձին հոգին՝ Քրիստոս դուռն է Ս. Հոգիի անձին մէջ ներգործման: Միթէ Քրիստոս չըսա՞ւ թէ ինք պիտի զրկէ Ս. Հոգին.

«Ես եմ դուռն, ընդ իս թէ ո՛վ մտնիցէ,
կեցցէ՛, ...»: (Յովհաննէս Ժ:9)

«Ես եմ դուռը, եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի

վրկուի ...»:

«Եւ ահա ես առաջի՛մ պատերիս Ըօր իմոյ՝ ՚ի Երոտի՛ նստարո՛ւի ՚ի խաղաղիս յԵրոտասողեմ մինչեւ պիտենոցո՛ւի պօրոտիւնն ՚ի Բարձանց»:
(Ղուկաս ԻԴ: 49)

«Եւ ահա՛ ես կը ղրկեմ ձեր վրայ իմ Հօրս խօստումը. բայց դուք կեցե՛ք Երուսաղէմ քաղաքին մէջ՝ մինչեւ որ բարձրէն ղրկուած զօրութիւն հագնիք»:

Ուրեմն երբ անձը կ'անտեսէ իր «Ես»-ը եւ չի հետապնդեր աշխարհիկ փառքերը, երկրպագած կ'ըլլայ իր ներքին Քրիստոսին: Աս կը նշանակէ արտօնել, որ Քրիստոս իր քունէն արթննայ եւ անձին կեանքին ղեկը ինք ձեռք առնէ: Այս հիման վրայ անձին կենցաղը՝ բոլոր խորհուրդ, խօսք ու արարքները կ'ըլլան ըստ Քրիստոսի՝ Աստուծոյ կամքին: Եւ ահա՛, աս է հոգիէն «վերստին ծնանիլը»: Եթէ Քրիստոս դուռն է Ս. Հոգիի զօրութեան անհատին էութեան մէջ ներգործման, ջուրէն «վերստին ծնանելն» ալ կ'ըլլայ անհատին մէջ Ս. Հոգիի առատ զօրութեան ներգործումը: Միթէ ջուրին փոխաբերական իմաստը Ս. Հոգին չէ՞: Այս ուղղութեամբ բազմիցս համարներ կան Ս. Գիրքին մէջ, որ այլ գրութիւններու մէջ այդ մէջբերումները ներկայացնուած են: Ս. Հոգիի զօրութեան ներգործումը Քրիստոսի կողմէ անձին տրուած շնորհքն է, որով Քրիստոս անձը նկատած է արժանի այդ շնորհքին: Քանի որ Ս. Հոգիի զօրութեան Ֆիզիքական աշխարհի մէջ ներկայութիւնը Քրիստոսն է, այդ յաւելեալ Ս. Հոգիի զօրութեան հոսքն ալ կը ներկայացնէ Քրիստոսի յայտնութիւնը անձին մէջ, ինչպէս Յիսուսի պատահեցաւ իր Այլակերպութեան ատեն: Երբ մարդ կը կարողանայ իր աշխարհային պարտականութիւնը լաւագոյնս կատարել եւ Աստուածայայտնութիւնը իրականացնել իր անձին մէջ այն ատեն կը պարզեւատրուի իր անհատականու-

Թեան փրկութիւնը եւ ոչ թէ միայն «կը հաւատամ հետեւաբար փրկուած եմ» ըսելով: Յիսուս իր մահով եւ յարութեամբ ճիշդ աս էր, որ մեզի սորվեցուց: Յիսուս ապրեցաւ մարդկային կեանք մը, որ կը ներկայացնէր Քրիստոսի յայտնութիւնը: Իր ընդհանուր կեանքին նպատակը մարդկութեան օգնել էր եւ սորվեցնել իրենց կեանքին նպատակը: Այս ուղղութեամբ ալ ինք յօրինեց եւ ապրեցաւ կենցաղ մը՝ որպէս օրինակ մեզ սորվեցնելու:

Ուրեմն եթէ մենք ալ վերստին չծնանինք եւ մեր պարտականութիւնը լիովին չկատարենք արժանի չենք ըլլար փրկութեան: Բայց ինչպէս վերեւ յիշուեցաւ անձը զայն պէտք չէ ընէ փրկութեան համար, այլ պէտք է ընէ Աստուծոյ նպատակին ծառայելու համար: Միթէ չէ՞նք ըսեր թէ ստեղծագործութեան նպատակը Աստուածայայտնութիւնն է: Այն անձը որ իսկական «վերստին ծնունդ» ունեցած է, իր կենցաղը կը յայտնաբերէ միայն սէր, կարեկցութիւն, գութ, ողորմածութիւն, օգնութիւն ..., առանց խտրութեան բոլորին՝ ընտանեկան անդամ, ազգականներ, արու կամ էգ, բարեկամ, ազգակից, օտարազգ, թշնամի ... ինչպէս նաեւ յարգանք բոլոր կրօնքներու ու դաւանանքներու: Ան չ'ատեր անոնցմէ որեւէ մին, այլ կը ջանայ անոնց մէջ գտնել այն բոլորը որ Յիսուս մեզի սորվեցուց: Պէտք չէ մոռնալ թէ Աստուած ամենուրեք է եւ առանց Աստուծոյ կամքին տերեւ մը իսկ չի շարժիր: Ուրեմն այլ կրօնքներն ալ պէտք են Աստուծոյ կամքը եղած ըլլան: Միթէ Քրիստոս Աստուծոյ Որդին չէ՞ եւ իրմով մենք ալ Աստուծոյ որդիներ չէ՞նք: Եւ Աստուծոյ Որդույն՝ Քրիստոսի հաւատալն ալ «Ես»-ը անտեսել եւ մեր ներքին Քրիստոսի երկրպագելն է: Իսկ մենք կ'ըսենք. «Յիսուս Քրիստոսի կը հաւատամ» եւ կը շարունակենք մեր «Ես»-ին երկրպագելու: Ինչո՞ւ:



*Քաւարանը վայր մը չէ, այլ ընթացք մը:
Քաւարանը մաքրող կրակն է որ կ'այրէ
անձը ներքնապէս: Ան գործուած մեղքերուն
զղջումին յառաջ բերած տառապանքի
փորձառութիւնն է:
Մեղքով արատաւորուած
անհատականութեամբ մարդը Աստուծոյ չի
կրնար ներկայանալ:
Պապ Բենետիկտոս ԺԶ
(Թարգմանութիւն Վ.Ս.)*

ՃԱԿԱՏԱԳԻՐ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

Նախորդ գիրքերուս մէջ ճակատագրի մասին պատշաճ տեղեկութիւններ տրուած էր: Այս գրութեան բուն նիւթին չսկսած, որ է «Հայ ազգը եւ իր ճակատագիրը», յարմար կը նկատեմ ճակատագրի մասին հետեւեալ ամփոփումը ներկայացնել:

Ընդհանուր առմամբ մարդ կը կարծէ, թէ ճակատագիրը անձէն անկախ Աստուծոյ կողմէ տրուած բախտ մըն է: Այս հայեացքը անտարակոյս սխալ է: Նախ քննենք անհատական ճակատագիրը: Ինչպէս նախորդ գիրքերուն մէջ բազմիցս յիշուած է, թէ ամէն մարդ զօրութեան մարմին մը ունի եւ բոլոր զօրութիւնները թրթռացում մը եւ այդ թրթռացումներն ալ յաճախականութիւն մը ունին: Ամէն զօրութիւն, իր թրթռացումին յաճախականութեան եղանակաւորումով, իր մէջ տեղեկութիւն կը պարունակէ, ինչպէս ձայնասփիւռի զօրութեան ալիքները, եւ այլն: Չայնասփիւռի ալիքներուն մէջ ի տեղեկութիւնը կը դրուի ռատիոկայանի մէջ: Իսկ մարդու զօրութեան մարմնին մէջ ի տեղեկութիւնը կը դրուի մարդուն իսկ կողմէ՝ իր խորհուրդ, խօսք ու արարքներուն հետեւանք: Այս տեղեկութիւնը, նոյնիսկ մարդու մարմնին մահէն յետոյ ալ անոր հոգիին զօրութեան մէջ կը գոյատեւէ: Երբ այդ հոգին կը վերամարմնանայ, այդ տեղեկութիւնն ալ նոր ծնող մանուկին զօրութեան մարմնին մաս կը կազմէ: Մարդ երբեմն չի հասկնար իր եւ իր ճակատագրին իրարու հետ ունեցած կապը, որովհետեւ ինք իր հոգիին անցեալ կեանքերու յիշողութեան անտեղեակ է: Նոյնիսկ նոյն կեանքի ընթացքին, երբ քսան տարու էր, իր կերտած ճակատագրին՝ «ցանած հունտին» յառաջ բերած պատահարը՝ «հունձքը» երեսուն կամ քառասուն տարի վերջ կը քաղէ եւ չի կրնար այդքան տարի յետոյ երկուքին միջեւ եղած կապը ըմբռնել կամ հասկնալ:

Որեւէ անձ պէտք չէ իրեն պատահած անբաղձալի պատահարներուն համար Աստուած կամ որեւէ ուրիշ անձ մը մեղադրէ: Անհատին յառաջ բերած իր զօրութեան այս թրթռացումներու յաճախականութիւնները, երկու մագնիսներու երկու հակառակ բեւեռներուն նման, իրենց կը քաշեն պատահարներ, որոնք «հունձք» կը կոչենք, որոնց թրթռացումի յաճախականութիւնները իրենց թրթռացումի յաճախականութեան հետ ներդաշնակ են: Իսկ այն պատահարները, որոնց թրթռացումի յաճախականութիւնները ներդաշնակ չեն անձին զօրութեան մէջի թրթռացումին յաճախականութեան հետ, անոնք գիրար կը վանեն, ինչպէս երկու մագնիսներու նման բեւեռները, եւ այդ պատահարները անկարելի են որ այդ անձին պատահին: Պատահարները կրնան ըլլալ հաճելի կամ տհաճ: Հետեւաբար ամէն անհատ իր ճակատագրին ճարտարապետը ինքն է: Ինքն է, որ կերտած է իր ճակատագիրը:

«**Կմեղաօրս՝** Ըալաթեն շարիֆ. Է- արդարօրոց՝ Ըասցեն Բարուշիննի»: (Լուսկայ ԺԳ: 21)
«Մեղաւորներուն ետեւէն ձախորդութիւն կ'երթայ. Բայց արդարներուն բարիք կը հատուցուի»:

«**Մի խաբիֆ, Լսրոսաթ** ոչ արԸամարի: Կի Կոր ինչ սերմանէ մարդ, Կնոյն Ընձէսցէ: որ սերմանէ ՚ի մարմին իօր, ՚ի մարմնոյ անորի Ընձէսցէ Կասրականոֆինն. Է- որ սերմանէ ՚ի Ըոգին, ՚ի Ըոգոյ անորի Ընձէսցէ Կէլանս Եասիօրենից»: (Գաղատայիս 9: 7-8)

«Մի խաբուիք, Աստուած ծաղր չըլլար: Վասն զի ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ: Ան որ իր մարմինին կը սերմանէ, այն մարմինէն ապականութիւն պիտի հնձէ ու ան որ Հոգիին կը սերմանէ, այն Հոգիէն յաւիտեանական կեանք պիտի հնձէ»:

Այն ինչ որ գիտութիւնը՝ գիտունները տակաւին

չեն գտած, կամ հազիւ կը սկսին նոր գտնել, Յիսուս Քրիստոս մեզի երկու հազար տարի առաջ սորվեցուց:

«... ամենայն մեղէ էւ Հայհոյութիւնէ թողցին մարտկան, բայց ստորոյն Հայհոյութիւն մի թողցին»: (Մարտիոս ԺԲ:ՅԼ)

«... Ամէն մեղք ու Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց. բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած Հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց»:

«Կի զոր ինչ սերմանէ մարդ, պնոյն Հնչեացէ»:

«Վասն զի ինչ որ մարդ կը սերմանէ, նոյնը պիտի հնձէ»:

«Benjamin Schumacher PhD.» հետեւեալը ըսած է. «Աշխարհի ներկայ հասկացողութիւնը այն է, որ տիեզերքը հսկայ տեղեկութեան օղակաւոր (information network) մըն է: Տիեզերքը համակարգիչ մըն է, որ ներկան կ'առնէ եւ այդ հիման վրայ ապագան կ'որոշէ՝ «կը հաշուէ» (computes): Տիեզերքը զայն կ'ընէ ըստ բնական տեղեկութիւն գործարկութեան ընթացքով (by natural information processing), որ կը հետեւին բնագիտութեան օրէնքներուն (laws of physics)»: Այն ինչ որ ինք բնագիտութեան օրէնքները կ'ըսէ, տակաւին մարդկութեան կողմէ լաւ չգիտցուած տիեզերական օրէնքները՝ Ս. Հոգիի օրէնքներն են, որ Յիսուս Քրիստոս զանոնք շատ լաւ գիտէր եւ կ'օգտագործէր: Մենք մեր իսլամաւորութեան հետեւանք զանոնք չենք հասկնար եւ Յիսուսի ըրածները հրաշք կը կոչենք: Մարդուն շուքը միշտ իր հետ կ'երթայ: Երբ անձը դէպի արեւ կ'երթայ շուքն ալ իր ետեւէն կ'երթայ, իսկ եթէ անձը արեւէն հեռանայ, շուքն ալ իր առջեւէն կ'երթայ: Ինք իր շուքէն կրնայ ազատիլ, երբ ինք արեւին հետ մէկ ըլլայ: Նմանապէս մարդուն ճակատագիրն ալ կամ իր ետեւէն կ'երթայ, կամ ալ իր առջեւէն: Ան կ'անհետանայ միայն երբ ինք «արեւ»-ին՝ Քրիստոսի հետ մէկ կ'ըլլայ:

Մարդուն ամէն մէկ խորհուրդը իր ուղեղին մէջ

Ելեկտրականութեան հոսք մը կը ներկայացնէ: Ամէն ելեկտրական հոսք իր շուրջը մագնիսական զօրութիւն մը կ'արձակէ: Այդ մագնիսական զօրութիւնը մարդուն ունեցած խորհուրդին համաձայն իր թրթռացումին մէջ ուրոյն յաճախականութիւն մը կ'ունենայ: Կատարուած են փորձեր, որ հաստատած են այդ մագնիսական զօրութեան գոյութիւնը եւ կարողացած են անձին խորհածը յայտնաբերել: Անձին գլուխէն 1 սմ. հեռու առանց գլուխին դպչելու յայտնակներ (sensors) դրած են եւ այդ յայտնակներէն ստացուած տեղեկութիւնը համակարգիչի մը փոխանցուած է, որ խաղալիք օղանաւ մը կը կառավարէր: Երբ անձը «աջ գնա՛» խորհած է համակարգիչը այդ տեղեկութիւնը ստացած եւ օղանաւը դէպի աջ դարձուցած է: Երբ անձը «դէպի ձախ գնա՛» խորհած է, օղանաւն ալ դէպի ձախ դարձած է: Անտարակոյս մէկ անձի մէկ խորհուրդին յառաջ բերած այս մագնիսական դաշտը շատ տկար է: Բայց ենթադրենք, թէ հազար կամ երկու միլիոն հոգի նոյն ատեն նման խորհուրդ մը ունենան, այդ բոլորին յառաջ բերած տկար մագնիսական զօրութիւնը հազարով կամ միլիոնով կը բազմապատկուի եւ հսկայ զօրութիւն մը յառաջ կը բերէ: Կառավարութիւններ պատերազմի սկսելէ առաջ, որպէսզի ժողովուրդի կողմէ հակառակութիւն մը չըլլայ, հանրային միտքերը այդ ուղղութեամբ կը պատրաստեն: Պատերազմէն երկար ժամանակ առաջ գաղափարը կը տարածեն (propaganda) եւ հանրութեան միտքերը կը պատրաստեն: «Լոյս ի լուսոյ Բ. Ջարթօնք» վերնագիրով երկրորդ գիրքիս առաջին գլխուն մէջ Փրինսթըն (Princeton) համալսարանի մէջ կատարուած փորձ մը տեղեկացուցած էի: Անոնք աշխարհի զանազան վայրերը յայտնակներ (sensors) գետեղած էին եւ անորոշ կամ անյայտ տեղեկութիւն մը հաւաքած էին: Նկատած էին

որ այդ հաւաքուած թիւերը ճշգրտօրէն գուշակած էին թէ՛ բնութեան եւ թէ՛ մարդոց կողմէ գործուած ապագայ մեծածաւալ աղէտները: Այդ տեղեկութիւնը կը թուէր համապատասխան ըլլալ հանրութեան՝ ընկերութեան ընկերային գիտակցութեան (social consciousness): Հետեւաբար այն ինչ որ կը պատահի հաւաքականութեան մը, ընկերութեան մը, ազգի մը կամ երկրի մը կը համապատասխանէ այդ հաւաքականութեան իւրաքանչիւր անհատներուն մեծամասնութեան հաւաքական ընկերային գիտակցութեան, այսինքն մեծամասնութեան յառաջ բերած մագնիսային զօրութեան եւ անոր թրթռացումի յաճախականութեան:

Դժբախտաբար Հայ ազգը 1915-ին իմբովին ճակատագրական սոսկալի աղէտի մը ենթարկուեցաւ: Նոյնիսկ նախ քան մեծ աղէտը բազմաթիւ փոքր աղէտներ ինչպէս Ատանայի կոտորածը եւայլն, ցոյց կուտային Հայութեան գլխուն գալիք աւելի մեծ աղէտը: Հայ հաւաքականութեան անդամ մարդիկ ի՞նչ ըրին: Ո՞վ իր հայեացքը կամ խորհելակերպը փոխեց: Այսօր ամենուրեք կը տեսնենք աշխարհի վրայ տեղի ունեցող բնութեան յառաջ բերած ջուրի աղէտները: Արդեօք որեւէ մէկը իր հայեացքը կամ խորհելակերպը փոխած է: Տակաւին կառավարութիւններ կ'անտեսեն աշխարհի ջերմութեան բարձրացումը եւ կը շարունակեն օդը ապականել: Զրկիրի դարաշրջանին մօտաւորապէս հարիւր տարի մնաց: Արդե՞օք մարդկութեան բռնած ընթացքին հետեւանք աշխարհ դարձեալ մեծածաւալ ջրհեղեղի աղէտի մը պիտի ենթարկուի, ինչպէս պատահած էր Նոյի ժամանակ՝ մօտաւորապէս 25.000 տարի առաջ, անցեալ ջրկիրի դարաշրջանին: Այս այժմէական փոքր տեղեկութիւնը հոս ներկայացուցի ցոյց տալու համար, թէ Աստուած ողորմած է եւ միշտ մեզի համար լաւագոյնը կը բաղձայ, հետեւաբար

մասնակի փոքր աղէտները մեզ զգալիորեն բերելու եւ արթնցնելու համար են, որպէսզի մեր կենցաղը՝ խորհուրդները, խօսքերը եւ գործքերը փոխենք, որպէսզի մեր կերտած ճակատագրին ուժգին հարուածին չեն թարկուինք:

Հրեայ ազգը ՅՔ 70 թուականին ճակատագրական ահռելի աղէտի մը ենթարկուեցաւ: Երուսաղէմը կործանեցաւ: Ողջ մնացողներն ալ աշխարհի չորս կողմը տարածուեցան: Իրենց այս ճակատագրական հարուածին պատճառը, շատ հաւանաբար, Յիսուսը խաչելնուն հետեւանքն էր, քանի որ երբ «խաչը հանէ» կը պոռային, նաեւ կ'ըսէին. «Անոր արիւնը մեր եւ մեր զաւակներուն վրայ ըլլայ»: Հայ ազգին գլխուն եկած ճակատագրական հարուածն ալ, հրեաներուն հարուածին նման, ահռելի եւ ուժգին էր: Արդեօք մեր մեղքը ի՞նչ էր: Կարելի է՞, որ մենք ալ հոգեպէս Քրիստոս Իր «տաճարին մէջ» «խաչը կը հանենք», մեր կենցաղով՝ խորհուրդ, խօսք ու արարքներով մենք զմեզ հոգեւոր ճանապարհէն կը հեռացնենք եւ արդեօք աս է՞ մեր մեղքը:

Անտարակոյս ամէն անձ իր ազգը եւ իր երկիրը կը սիրէ եւ այդ սէրը նաեւ կարող է ծայրահեղ սէր մը ըլլալ: Բայց նոյնիսկ ազգին եւ երկրին ամենագորաւոր կապուածութիւնը եւ անձերուն ի սէր իրենց ազգին զոհուելու պատրաստակամութիւնը, կարող չեն ճակատագրին յառաջ բերելիք ակերները կասեցնել: Հետեւաբար ազգովին՝ հաւաքականօրէն պէտք է զգուշանանք վատ ճակատագիր կերտել: Հայ ազգին պատահած աղէտին նման ճակատագրական զօրաւոր հարուած մը նշան է ընկերութեան մէջ ընդհանուր կենցաղի վատթարացման եւ ընդհանուր առմամբ վատթարացումը իր հոգեկան կեանքին: Արդեօք իբր ազգ, հպարտութեամբ որպէս առաջին քրիստոնեայ պետութիւն,

մոռցած մեր նախնիքներուն եւ սուրբերուն կենցաղը, ինչպէս նաեւ Յիսուս Քրիստոսի վարդապետութիւնները ու շեղեցանք կատարելութեան ուղիէն: Այսօր ունինք ազատ Հայաստան մը: Ահա՛, Աստուած մեզի անգամ մը եւս մեր հին հաւատքին եւ կատարելութեան ուղիին դառնալու եւ մեր ազգային անդորրութիւնը վերագտնելու առիթը կու տայ: Վստահ եմ հայութիւնը իր բոլոր անդամներով ուր որ ալ ըլլայ, կը փափաքի որ մեր ազգը, ընկերութիւնը եւ երկիրը բարգաւաճի եւ պայծառանայ: Աս կարելի չէ պարզապէս փափաքելով: Երկրի մը բարգաւաճումը կարելի չ'ըլլար երբ ընդհանուրին խորհուրդները եսասիրութեան վրայ կը կայանան: Այսօր Հայաստան աշխարհի մէջ փարոս մը ըլլալու կարելիութիւնը ունի: Բայց, եթէ մեծամասնութիւնը նախ իր անձին մէջ ինքնափոփոխութիւն չի կերտեր, կարելի չէ որ ազգը կարենայ բարգաւաճիլ: Առանց ինքնափոփոխութեան ծայրահեղ հայրենասիրութիւնն իսկ փոճ է, որովհետեւ անհատական խորհուրդներուն ամբողջութիւնն է, որ կ'որոշէ ազգին կամ հաւաքականութեան ճակատագիրը: Իսկ ճակատագիրէն ալ փախուստ չկայ: Երբ երկրին կառավարիչները կը հետապնդեն հոգեւոր ճանապարհը՝ կատարելութեան ուղին, ժողովուրդն ալ գիրենք տեսնելով, կը հետեւին անոնց: Սխալ եւ սուտ տուեալներ, հաւատալիքներ կը կասեցնեն ազգին մէջ տեղի ունեցող զարթօնքը: Ազգը կը թուի ծածկուած ըլլալ նիւթապաշտութեան խաւար միջնորոտով մը: Սա անհատներու անձնական խաւարամտութեան եւ եսասիրութեան հաւաքական արտայայտութեան հետեւանքն է:

Ճակատագրին վրայ ողբալ, զոհ ըլլալու զգացումը, հատուցում ուզելու եւ վրէժ լուծելու գաղափարը, բոլորն ալ կը ներկայացնեն այս սխալ հասկացողութիւնները եւ հաւատալիքները: Մենք հայերս թուրքե-

ըռւ դէմ նախապաշարուած, զանոնք կը նկատենք մեր թշնամին: Աս տեսակէտին հիմքը, որոշ չափով, մեր կրօնքներուն տարբերութեանը մէջն է: Այն ինչ որ մենք կը կարծենք թէ ենք ան կ'ըլլանք: Այն բանէն որ կը վախնանք դէպի մեզի կը քաշենք: Երբ մենք զանոնք թշնամի կը նկատենք, մենք ալ մենք զմեզ անոնց թշնամի կ'ընենք: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Միւրէ քու թշնամիդ»: Եթէ հետեւինք Յիսուսի սորվեցուցածներուն պէտք չէ՞, որ սիրենք Թուրքերը: Իսկ եթէ չենք սիրեր Թուրքերը, հակառակ առաջին քրիստոնեայ ըլլալու հպարտութեան, շատ հեռու ենք Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղիէն եւ իր սորվեցուցած քրիստոնէութենէն: Ուրեմն, ինչո՞ւ զարմանանք թէ վատ ճակատագիր մը կերտած ենք եւ հետեւաբար այդ ճակատագրին ալ հարուածին ենթարկուած: Մենք միայն պէտք է մենք զմեզ մեղադրենք եւ ուրիշ ոչ ոք: Թուրքը պարզապէս ճակատագիրը կատարող միջնորդըն էր: Աս չի նշանակեր, թէ Թուրքը իր ըրածին, իրեն համար կերտած ճակատագրին ահռելի հարուածին պիտի չենթարկուի: Այդ հարուածը ե՞րբ կու գայ մարդ չի գիտեր: Օրինակը մեզի տրուած է: Յիսուսի մահը Հին Կտակարանին մէջ արդէն գուշակուած էր եւ Յիսուս Ինքն ալ գուշակած էր մի քանի անգամ: Յիսուս Յուդային ըսաւ. «Ինչ որ պիտի ընես՝ շուտով ըրէ»: Սակայն գրուած է. «բայց վա՛յ այն մարդուն՝ որուն միջոցով կը մատնուի ան: Այդ մարդուն լաւ պիտի ըլլար՝ որ ծնած չըլլար»: Յուդան կատարեց այն ինչ որ պէտք էր ըլլալ, բայց ինք իր ըրածին պատիժը քաշեց: Նմանապէս Թուրքերը ըրին այն ինչ որ պէտք էր ըլլալ, բայց անոնք ալ պարտ են իրենց ըրածներուն պատիժը քաշել:

Ահա՛, հոս կը կայանայ Հայ ազգին կերտելիք իր ապագայ ճակատագրին կորիզը: Եթէ Թուրքէն պիտի

պահանջենք ցեղասպանութեան ճանաչում եւ հատուցում, կը նշանակէ թէ մենք տակաւին մեր դասը չենք սորված: Մենք տակաւին վրէժխնդրութեամբ կը վարուինք եւ զիրենք կը տեսնենք իբր թշնամի: Ապագայի համար դարձեալ անբաղձալի ճակատագիր մը կը կերտենք: Աս չի նշանակեր թէ պէտք չէ պահանջենք: Պէտք է պահանջենք որպէսզի Թուրքերն ալ անդրադառնան իրենց գործած ոճիրին եւ ճանչնան ցեղասպանութիւնը: Բայց այս պահանջը պէտք է սէրէ ծնունդ առնէ, ապա թէ ոչ մեզի աւելի վնաս պիտի հասցնէ, քան թէ անոնց: Իրենց պէտք է հասկցնենք, թէ եթէ իրենք ընդունին իրենց գործած ոճիրը, այն ատեն կարելի է, որ իրենց կերտած ճակատագրին իրենց վրայ բերելիք հարուածն ալ քիչ մը մեղմանայ: Իսկ եթէ իրենք որոշեն հատուցում տալ եւ ոչ թէ անոր համար որ մենք կը պահանջենք, այն ատեն անոնք կարելիութիւնը կ'ունենան իրենց գալիք ճակատագրական հարուածին յաւելեալ մեղմացման: Ահա՛, աս պէտք է ըլլայ մեր ճանաչման պահանջքին դրդապատճառը: Ազգովին աղօթենք Աստուծոյ որ մեղմացնէ անոնց «պատիժը»: Միթէ Յիսուս ալ խաչին վրայէն չըսա՞ւ. «Հայր ներէ, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն»: Թուրքերն ալ իրենց խաւարամտութեան հետեւանք չէին գիտեր թէ ինչ կ'ընէին: Հարկաւ շատեր պիտի ըսեն, թէ շատ լաւ գիտէին թէ ինչ կ'ընէին: Անոնք կ'ուզէին Հայաստանը մէջտեղէն վերցնել, որպէսզի միանային Միջին Ասիոյ իրենց ազգակիցներուն, այսինքն կը հետեւէին «Փանթուրանիզմ»-ի գաղափարին: Աշխարհիկ գիտակցութեան մակարդակով, հարկաւ գիտէին թէ ինչ կ'ընէին, սակայն հոգեկան գետնի վրայ լուր անգամ չունէին թէ ինչ կ'ընէին: Շատ հաւանական է որ մեծամասնութեամբ լուր անգամ չունէին թէ հոգեկան վիճակ մը եւս կայ: Կարծէք այդ խաւարամտութիւնը մեր

հայերուս մէջ ալ կը թուի գոյութիւն ունենալ: Եթէ աս ճիշդ է ի՞նչ արժէք ունի մեր եկեղեցասիրութիւնը: Մարդ կարող է ինքզինք խաբել, բայց չի կրնար Աստուած խաբել:

Անտարակոյս, ամէն հայ ծայրահեղ սէր պէտք է ցոյց տայ իր ազգին, երկրին եւ իր եկեղեցիին: Եթէ այդ սէրը անկեղծ է, ան կ'ըլլայ առաջին քայլը դէպի համայն մարդկութեան նկատմամբ սէր, նոյնիսկ հանդէպ անոնց, որոնք իրենք զիրենք մեր թշնամիները կը նկատեն: Ահա՛, աս է Յիսուսի սորվեցուցած մարդկայնականութիւնը: Եթէ հայ ազգին պատահած աղէտը մեզի իր պատշաճ դասը սորվեցուց, այն ատեն ուրախ պէտք է ըլլանք: Իսկ եթէ մեր դասը չենք սորված, նստինք ողբանք մեր ճակատագրին վրայ եւ մեղադրենք թուրքերը եւ Աստուած: Այս պարագային վա՛յ մեզի: Ինչպէս վերեւ յիշուեցաւ, երբեմն անբաղձալի պատահարներ անհատի մը կամ հաւաքականութեան մը կը տրուին իբր դաս եւ երբեմն ալ իբր քննութիւն: Քննութիւնը Աստուծոյ համար չէ, քանի որ Աստուած՝ Քրիստոս ամէն մի անհատի հոգին է, հետեւաբար ամէն ինչ գիտէ: Քննութեան արդիւնքը անհատին կամ հաւաքականութեան իրենց համբերութիւնը, իրենց հաստատամտութիւնը, իրենց մարդկայնականութիւնը, իրենց սէրը եւ ամենէն կարեւորը իրենց հաւատքին որակը ցոյց տալու համար է: (Տես նաեւ այս գիրքին մէջի «Ի՞նչ է Հրաշքը» խորագրեալ յօդուածը՝ էջեր 314-316 եւ 317)



ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԷՆ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ԽՕՍՔԵՐ



«ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԸ ԷԶՄԻԱԾՆԻ ՄՕՏ»
Յ. Այսաշոպապի - 1885 թ.



«Մարդիկ Հաւասար ծնունդ են, անհաւասար ապրում, Հաւասար էլ մեռնում են»:

Ճերքին անհամերաշխութիւնը աւելի շատ է Հայրենիքը կորստեան մատնում, քան եկած թշնամին»:

Մարդու ազնուութեան ամենափայլուն փաստը նրա մեծահոգութիւնն է եւ ոչ թէ ոննեցած Հարստութիւնը»:

Ճա է իսկական ազնիւ անձ, որ դէպի ժողովուրդը ոննեցած սիրոյ մէջ է փնտռում իր փառքը»:

«Տէրը իր իշխանական կահոյքը դնելով երկնքում, ամբողջ տիեզերքը կառավարում է բնական եւ յաւիտենական օրէնքներով: Նրանք անքակտելի եւ անփոփոխ են, ոչ ոք չի կարող քանդել կամ փոխել նման աշխարհական կանոնների, որոնք մի ձեռքով գրում են, իսկ միւսով ջնջում»:

«Մի՛ թէ կարելի է մերձաւորից խլած Հացով կշտանալ: Ոչ, գողացուած եւ ուժի զօրութեամբ ձեռք բերած Հացը շուտ է վերջանում: Անհատների եւ արդար է այն Հացը, որ ձեռք է բերում ճակատի քրտինքով: Ով այս սկզբունքը ունատակ տալով է Հաց ուտում, նա քանդում է Աստու պատուիրանը»:

ՄԿՐՏԻՉ Ա. ՎԱՆԵՁԻ - ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԻՆՉ Է ՀՐԱՇՔԸ

Մարդիկ կը համարեն թէ բոլոր այն արարքները, որոնք իրենց կարողութենէն վեր են եւ կը կարօտին գերմարդկային կարողութիւններու, իրենց համար հրաշք կը նկատուին: Այս հիման վրայ ալ Յիսուսի շատ մը արարքները հրաշք կը նկատեն: Ճիշդ է որ Յիսուս շատ մը արարքներ գործեց, որոնք հասարակ մարդու կարողութիւններէն շատ վեր էին: Օրինակները բազմաթիւ են. Յիսուս ջուրը գինիի փոխեց, ջուրին վրայ քալեց, փոթորիկը դադրեցուց, հացը եւ ձուկը բազմացուց եւ անգամ մը հինգ հազար եւ անգամ մըն ալ չորս հազարէ աւելի մարդիկ կերակրեց, զանազան հիւանդութիւններ բուժեց եւ մեռելները յարուց: Հասարակ մարդը ասոնցմէ որեւէ մէկը կարող չէ ընել, հետեւաբար զանոնք կը նկատէ հրաշք: Որով հրաշքը կատարողն ալ կը նկատէ գերմարդկային, որով Ան գերմարդկային կարողութիւններ ունի: Միթէ մեր ժողովուրդն ալ չըսե՞ր թէ Յիսուս Աստուծոյ Որդի էր, հետեւաբար Աստուծոյ ստեղծած բնութեան վրայ իշխանութիւն ունէր եւ կարող էր բնութեան օրէնքները գերազանցել եւ հրաշքներ գործել: Իսկ մենք, պարզ մահկանացուներ, բնութեան օրէնքներուն վրայ իշխանութիւն չունինք, հետեւաբար չենք կրնար այդ օրէնքները գերազանցել եւ փոխել: Անտարակոյս, այս հայեացքը կամ հասկացողութիւնը սխալ է: Հետեւեալ համարները այդ հասկացողութեան սխալ ըլլալը ցոյց կու տան:

«Լ՛մէն ամէն ասե՛մ թէ որ Հաւարա՛յն յնս պարթա-
 թա պոր ես գորթեմ, եւ նա՛ գորթեացել եւ մեթա-
 մեթա է՛ս իան պնոյնս գորթեացել» : (Յովհաննէս Ժ՛Գ:12)
 «Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր պիտի ընէ, ...»:

«Սոյն ինչն Լոգին վկայե Լոգոսյս մերոսմ,
Եթե եմէ որդիո՛ւ ասա եւ ժառանգո՛ւ ժառանգո՛ւ
Լսարո՛շոյ՝ եւ ժառանգակիցո՛ւ Քրիստոսի»:

(Հոռովմայեցիս Ը:16-17)

«Նոյնինքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին
հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ
զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ
ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

«Եւ ասէն ասալեալն ցՏէր. Յաւել մեզ
Լաւասրս: Եւ ասէ՛ Տէր. Եթե ունիցիո՛ւ Լաւասրս
վան զԼա՛ր մանանսոյ, եւ ասիցելո՛ւ Թրթենո՛յս
այսմիկ. խլեա՛ց եւ րնկեաց ՚ի շովոս, եւ
Ընապանորեացի՛ յեզ»: (Ղ.ուկաս ԺԷ:5-6)

«Առաքեալները ըսին Տէրոջ. «Աւելցո՛ւր մեր Հաւատքը»:
Տէրը ըսաւ. «Եթէ մանաների հատիկի չափ Հաւատք
ունենայիք, կրնայիք ըսել այս թիֆեհին. Արմատախի՛լ
եղիր եւ տնկուէ՛՛ ծովուն մէջ. ան ալ պիտի հնազանդէր
ձեզի»»:

*Ըստ Յիսուսի, կը թուի թէ մենք ալ իրեն նման
կարող ենք գործել արարքներ, որ հիմա մեր գիտակ-
ցութեան մակարդակին համաձայն, «հրաշք» կը համար-
ենք: Եթէ այդ «հրաշք» համարուած արարքները մեր
կարողութիւններուն մաս կը կազմեն եւ մենք կարող
չենք զանոնք կատարել, կը նշանակէ թէ մենք տակաւին
չենք սորված եւ չենք գիտեր մեր ունեցած կարողու-
թիւնները պատշաճօրէն գործածել: Աս ալ մեր ցած
գիտակցութեան մակարդակին, կամ աւելի ճիշդ է ըսել,
մեր խաւարամտութեան հետեւանքն է: Աշխարհի վրայ
ոչ մէկ արարք «հրաշք» է, ի բաց առեալ ստեղծագործու-
թենէն: Ընդհանուր տիեզերքի գոյութիւնը, ինչպէս
նաեւ ձեր եւ իմ գոյութիւնը մաս եւ բաժին են այդ
հրաշքին: Ասկէ դուրս ոչ մէկ արարք «հրաշք» է: Երբ
կ'ըսենք, թէ Յիսուս իշխանութիւն ունէր բնութեան*

վրայ հետեւաբար՝ բնութեան օրէնքները գերազանցելու կամ զանոնք փոխելու կարողութիւնը, կը սխալինք: Յիսուս ոչ թէ գերազանցեց եւ ոչ ալ փոխեց բնութեան օրէնքները, այլ զանոնք օգտագործեց:

Երբ մարդ չի գիտեր օրէնքները ուրեմն կը համարէ թէ արարքն ալ գերմարդկային է: Այս կէտը լաւ մը հասկնալու նպատակաւ պիտի ներկայացնեմ հետեւեալը, որ չեմ գիտեր ինչո՞ւ տարիներէ ի վեր միտքս մնացած է: Հաւանաբար հետեւեալ դասն էր որ սորված էի: Պատանեկան շրջանիս, շարժանկարի մը մէջ Եւրոպացի (ճերմակ ցեղէն) պետի մը եւ հիւսիսային Ամերիկեան բնիկ (կարմրամորթ ցեղէն) պետի մը հետ գերիշխանութեան վէճը ներկայացնող կարճ դրուագ մը, որ այդ ժապաւէնէն՝ պատմութենէն միտքս մնացած միակ բաժինն է: Եթէ չեմ սխալիր Եւրոպացի ցեղէն պետի դերը խաղացողն ալ «Կէրի Քուփր»-ն էր: «Ճերմակը» ըսաւ թէ ինք բարձր կարողութիւններու տէր էր: Ընդհանրապէս նման վէճերը կռուելով կը լուծուին: Բայց այս անգամ կռուելու տեղ «ճերմակ» մարդը գրպանէն կողմնացոյց մը հանեց եւ ըսաւ թէ ինք կողմնացոյցին մէջի ասեղին վրայ իշխանութիւն ունէր եւ ասեղը իրեն կը հնազանդէր եւ պահանջեց որ «կարմրամորթն» ալ իր կարողութեամբ ասեղը ուզած կողմ դարձնէ: Առաջ ինք ասեղին հրահանգեց դէպի հիւսիս ցոյց տալ: Անտարակոյս կողմնացոյցը միշտ դէպի հիւսիս կը ցուցնէ: Կարգը «կարմրամորթին» եկաւ ան ալ իր աւանդութեան համաձայն տեսակ տեսակ «աղօթքներ» ըրաւ եւ ուզեց որ ասեղը տարբեր մէկ ուղղութեան դառնայ: Բայց ապարդիւն: Ի վերջոյ ան հասկցաւ թէ ասեղը միշտ ու միայն դէպի հիւսիս ցոյց կու տայ եւ պահանջեց որ «ճերմակ» մարդը զայն ուրիշ ուղղութեան մը դարձնէ: «Ճերմակ» մարդը ըսաւ թէ պիտի հրահանգէր որ ասեղը դառնար եւ միայն

«Կարմրամորթ» պետը ցոյց տար, նոյնիսկ եթէ «Կարմրամորթը» ահռելի ուժ եւ կարողութիւն ցոյց տար, ասեղը անկէ պիտի չվախնար եւ միշտ զայն ցոյց պիտի տար: Այդ զօրութիւնն ալ յայտնաբերելու համար առաջարկեց որ ոչ թէ միայն մէկ կացին, այլ չորս կամ հինգ կացին տային անոր: Ան ալ բոլոր կացիները իր գոտիին վրայ անցուց: «Ճերմակ» մարդը հրամայեց ասեղին որ դէպի հիւսիս դարձած էր, դառնար դէպի «Կարմրամորթ» պետին եւ մօտեցաւ անոր: Կացիներուն երկաթի մասերը իրենց մագնիսականութեամբ ասեղը դարձուցին դէպի «Կարմրամորթ» պետին: Ասոր վրայ «Կարմրամորթ» պետը ընդունեց «ճերմակ» մարդուն գերիշխանութիւնը: «Ճերմակ» պետը «Կարմրամորթ» պետէն աւելի կարողութիւններ չունէր ոչ բնութեան ոչ ալ ասեղին վրայ որեւէ գերիշխանութիւն ունէր: Ան միայն մագնիսականութեան տեղեակ էր եւ գիտէր անոր մի քանի օրէնքները եւ զանոնք օգտագործեց: Խեղճ «Կարմրամորթը» նոյնիսկ մագնիսական զօրութեան գոյութենէն լուր չունէր, ինչպէս նաեւ՝ աշխարհին ալ մագնիսականութիւն ունենալէն:

Երբ մարդ որոշ արարքները կառավարող օրէնքները չի գիտեր, զանոնք կը համարէ գերմարդկային արարքներ, իր կարողութեան սահմաններէն դուրս, հետեւաբար «հրաշք»: Ուրեմն, եթէ Յիսուսի արարքները, որոնք մենք «հրաշք» կը համարենք, մեր կարողութիւններու սահմաններէն դուրս չեն, ինչո՞ւ Յիսուս զանոնք կարողացաւ ընել եւ մենք կարող չենք:

Միջնադարեան խաւարատութեան շրջանէն մինչեւ ներկան, մարդուն գիտութիւնն ալ բաւականաչափ զարգացած է: Կան բնութեան զանազան օրէնքներ, որոնց մարդ տեղեակ է: Կան, մեր փորձառութեան մէջ գտնուող, Փիզիքական տիեզերքը կառավարող օրէնքներ, որոնց մօտաւորապէս բոլորէն մարդ տեղեակ է եւ

զանոնք պատշաճօրէն լաւ կամ վատ նպատակներու համար կ'օգտագործէ: Այս օրէնքները բնագիտութեան մէջ ճանչցուած են իբրեւ «Նիւլթօն»-եան (Newtonian physics) օրէնքները: Անոնք անխախտելի կը թուէին ըլլալ: Քանի որ մարդու փորձառութեան մէջ միայն այս օրէնքները կը գիտցուէր եւ անոնք կը համարուէին անխախտելի, որովհետեւ մարդ կարող չէր անոնց դէմ գործել: Այս օրէնքներէն մին այն էր թէ կարելի չէր նիւթ գոյացնել կամ անհետացնել, այլ միայն կարելի էր անոր երեւոյթը փոխել: Բայց վերջին հարիւր տարուայ ընթացքին մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան ամբողջական բնագիտութեան (quantum physics) գիւտերով: Այդ գիւտերուն հիման վրայ վերոյիշեալ օրէնքը փոխուած է եւ անոր տեղ նոր օրէնք մըն է որ ընդունուած է: Այս օրէնքն է. «Կարելի չէ զօրութիւն ստեղծել կամ անհետացնել»: Անոնք նաեւ փաստած են թէ կարող են զօրութենէ նիւթ յառաջ բերել եւ նիւթն ալ զօրութեան փոխել: Գիտնականներուն ըրած գիւտերուն մէջ կան մի քանի յատկանշականներ: Անոնք են.

Ա- Էյնշթէյնի «Ժամանակին յարաբերականութիւնը» (Einstein's Relativity theory): Ասոր մասին այլուր գրուած է եւ հոս կրկնելու կարիքը չկայ: (Տես «Լոյս Ի Լուսոյ - Զարթոնք» գիրքիս Ա. գլուխը. էջ 42, նաեւ «Լոյս Ի Լուսոյ - Տիեզերական օրէնքները» գիրքիս Ե. գլուխը. էջ 203)

Բ- Հայզնպէրկի «Անորոշութեան սկզբունքը» (Heisenberg's Uncertainty principle): Ան ցոյց տուած է թէ ենթահիւլէական մասնիկները կը փոխուին ըստ մարդուն միտքին եւ գիտակցութեան (awareness):

Գ- Ենթահիւլէական մասնիկները, որ պինդ մարմիններուն կազմիչները՝ նիւթօն եւ փրօթօնները կը կազմեն, իրենք մնայուն չեն եւ կ'անհետանան եւ կը գոյանան:

Դ- Տիեզերքի մէջ գիտցուած բոլոր զօրութիւն-

ները նոյն զօրութեան զանազան արտայայտութիւններն են: Այդ միականութեան՝ նախնական զօրութեան բնոյթը եւ օրէնքները տակաւին թագնուած կը մնան, հետեւաբար ան կոչուած է «Մութ զօրութիւն»: Ուրեմն զօրութեան դաշտ մը կայ ուրկէ կը բղիւի ստեղծագործութիւնը: Յիսուս Ջայն կոչեց Ս. Հոգի:

Ե- Լոյսի բնոյթը կը թուի զօրութեան ակիք ըլլալ, բայց երբ զայն կը դիտեն բնոյթը կը փոխուի եւ իբրեւ ֆօթօն՝ «նիւթ»-ի նման «գործել»:

Ձ- Վերելի տուեալներուն համաձայն, մեր մնացուն կոչած պինդ (solid) աշխարհը ողջագիր (hologram) մը կը թուի ըլլալ եւ յաճախ կը ցայտայ: Այս ուղղութեամբ «Աւետարանի Խորհուրդները Բ - Յիսուսի Առակաները» գիրքին վերջաւորութեան յաւելուածական բաժնին մէջ թարգմանաբար տեղագրուած գիտնականներու յօդուածը պատշաճ է հոս մէջբերել:

«Նոպէլ մրցանակի արժանացած ամբողջական բնագիտութեան (Quantum physics) գիտնականները աներկբայօրէն փաստած են, թէ աշխարհը հսկայ զօրութեան «ծով»՝ դաշտ մըն է, որ շարունակ կը ցայտայ, այսինքն կը գոյանայ եւ կ'անհետանայ: Աս կ'ըլլայ հազար անգամ ամէն մէկ երկվայրկեանի մէջ:

Ոչ մէկ բան հաստատուն նիւթ է: Ահա՛ աս է ամբողջական բնագիտութեան աշխարհը:

Անոնք փաստած են, թէ խորհուրդներն են որ այս անընդհատ փոփոխութեան մէջ եղող զօրութեան դաշտին կ'ազդեն, կը միացնեն եւ կը կաղապարեն այն բոլոր առարկաները, որոնք կը տեսնենք: Հետեւաբար, ինչո՞ւ անհատ մը կը տեսնենք, քան թէ շարունակ ցայտող զօրութեան «ծրարներ»:

Նկատողութեան առնենք շարժանկարի մը ժապաւէնը, որ կը դիտենք: Ան մէկ երկվայրկեանի

տեւոդութեան մէջ 24 գատ նկարներու հաւաքականութիւնը եւ շարունակականութիւնն է: Իւրաքանչիւր նկար միւսէն անջատ է, իրարմէ պարապ միջոցով մը բաժնուած: Բայց, որովհետեւ պատկերները արագութեամբ կը փոխուին, մեր աչքերը կը խափուին: Կը կարծենք, թէ շարունակական շարժուն նկար մը կը դիտենք:

Նկատողութեան առնենք նաեւ հեռատեսիլը: Հեռատեսիլի պատկերներն ալ պարզապէս ելեկտրոններու հաւաքածոներ են, որոնք անընդհատ որոշ ուղղութեամբ ապակիին կը զարնեն եւ ձեւ ու շարժումի խաբէական երեւոյթ մը կը ստեղծեն:

Բոլոր առարկաներն ալ ասոր նման են: Մարդ հինգ զգայարանքներ ունի.– տեսողութեան, լսողութեան, շօշափելու, հոտոտելու եւ համտեսելու կարողութիւններ: Այս բոլոր զգայարանքները իրենց յատուկ սահմանափակումները ունին: Օրինակ, շուներուն լսողութեան սահմանները մարդոցմէն կը տարբերին: Օձերուն ալ տեսանելի լոյսի սահմանները մարդոց տեսողութեան սահմաններէն տարբեր են.....:

Հետեւաբար, մարդ իր զգայարանքներուն միջոցաւ զօրութեան «ծովի»՝ դաշտի փորձառութիւնը կ'ունենայ՝ սահմանափակ ձեւով եւ ամէն ինչ կ'ըմբռնէ միայն որոշ տեսանկիւնէ մը «դիտելով» ու այդ ստացած տեղեկութեամբ ալ կը կազմէ պատկեր մը:

Այդ պատկերը կատարեալ, ամբողջական եւ ճշգրիտ չէ, այլ միայն մէկ մեկնաբանութիւն մըն է: Մեր բոլոր մեկնաբանութիւնները հիմնուած են իրողութեան նկատմամբ մեր ունեցած ներքին «քարտէսի» մը համաձայն եւ ոչ ճշմարտութեան

վրայ: Մեր ներքին քարտէսը, մեր անձնական կեանքի բոլոր փորձառութիւններու հաւաքակա- նութեան արդիւնքն է: Մեր խորհուրդները շրջ- թայուած են անտեսանելի զօրութեան եւ կ'որո- շեն այն ինչ որ զօրութիւնը պիտի յայտնաբերէ: Մարդուն խորհուրդները, տառականօրէն, տիե- ղերքը շարժման կ'ենթարկեն մասնիկ-առ-մաս- նիկ ստեղծելու համար մարդուն Ֆիզիքական կեանքը:

Դիտեցէք ձեր շրջակայքը: Այն ինչ որ կը տես- նէք մեր Ֆիզիքական աշխարհին մէջ, նախ ծա- գում առած են իբրեւ գաղափար: Գաղափար մը, որ տարածուելով եւ բազմանալով, ժամանակի ընթացքին որոշ հանգրուաններէ անցնելով, Ֆի- զիքական առարկայ մը եղած է:

Մարդ, ժամանակի ընթացքին կ'ըլլայ ան, որուն մասին յաճախ կը խորհի: Անոր կեանքը կ'ըլլայ այն ինչ որ անընդհատ նախատեսած էր: Աշխար- հը, տառականօրէն, մարդուն հայելիին ցոլացու- մըն է եւ մարդուն Ֆիզիքական գետնի վրայ փորձառութիւնը ունենալու կարողութիւնը կու տայ այն բոլորին, որ ինք նկատած էր իբրեւ ճշմարտութիւն ... մինչեւ որ տեսակէտը կամ հաւատալիքները փոխէ:

Ամբողջական բնագիտութիւնը մեզի ցոյց կու տայ, թէ աշխարհը մեր կարծածին նման անփո- փոխ եւ հաստատ բան մը չէ: Հակառակ այդ մա- կերեսային երեւոյթին, ան բացարձակ հեղուկի նման վայր մըն է, որ յաճախ կը կազմուի ըստ մեր անհատական ինչպէս նաեւ հաւաքական խորհուրդներուն:

Ան ինչ որ մենք կը կարծենք, թէ իրողութիւն մըն է, իսկութեան մէջ պատրանք մըն է: Բարե-

*բախտաբար սկսած ենք պատրանքը հասկնալ եւ
աւելի կարեւորը՝ զայն փոխելու միջոցը»:*

*Գիտնականները տակաւին շատ հեռու են այդ
գորութիւնը հասկնալէ եւ «պատրանքը» փոխելէ: Եթէ
մարդ կարողանայ Յիսուսի նման իր գիտակցութեան
մակարդակը բարձրացնելով փորձառութիւնը ունենալ
այդ Զօրութեան դաշտին եւ հասկնալ Զայն կառավա-
րող օրէնքները եւ խորհի, խօսի եւ գործէ այդ օրէնք-
ներուն ներդաշնակ, ինք ալ կը կարողանայ ընել այն
բոլորը որ Յիսուս ըրաւ: Իսկ ան, ընդհանուր առմամբ
անգիտակից այդ օրէնքներու գոյութենէն, ի բախտի
երբեմն կը գործէ ներդաշնակօրէն եւ կը յաջողի որոշ
ուղղութեամբ եւ երբեմն ալ՝ օրէնքներուն հակառակ եւ
կը կերտէ ճակատագիր մը որուն յառաջ բերած
անբաղձալի պատահարներուն կ'ենթարկուի:*

*Այս հիման վրայ ուրեմն ի՞նչ է հրաշքը: Բոլոր
այն ինչ որ մենք առաջուց հրաշք կը նկատէինք հրաշք
չեն, այլ ըստ Յիսուսի սորվեցուցածներուն, բոլորն ալ
մարդկային կարողութեան սահմաններուն մէջ են:
Բայց մարդ արարած զբաղ «պատրանքով» չի գործա-
ծեր իր ուղեղային կարողութիւնները եւ կը գոհանայ
միայն այդ կարողութիւններուն 10%-ը օգտագործելով:*

*Իսկական հրաշքը պիտի ըլլայ երբ համայն մարդ-
կութիւնը հասկնայ ամէն ինչի միականութիւնը եւ
հաւաքաբար ստեղծէ դրախտը հոս աշխարհի վրայ:
Մարդ այն ատեն պիտի հասկնայ թէ ընդհանուր ստեղ-
ծագործութիւնը հրաշք մըն է եւ ոչ անոր մէջի
զանազան արարքները:*





**ՀՐԱՇՔՆԵՐԸ ԿԸ
ՊԱՏԱՀԻՆ ՈՉ ԹԷ
ԲՆՈՒԹԵԱՆ ՀԱԿԱՊԱԿ, ԱՅԼ
ՀԱԿԱՊԱԿ՝ ԻՆՉ ՈՐ ՄԵՆՔ
ԳԻՏԵՆՔ ԲՆՈՒԹԵԱՆ
ՄԱՍԻՆ:**

ՄՈՒՔ ՕԳՈՍԻՆՈՍ

(ԹԵՐԳԱՆՈՒԹԻՒՆ Վ.Ս.)

ԴԱՏԵԼ ու ՆԵՐԵԼ

Ի՞նչ է ներողամտութիւնը: Նման հարցումի մը պատասխանը կը թուի շատ պարզ ըլլալ: Ոեւէ անձ՝ ընտանեկան անդամ, բարեկամ, օտար կամ թշնամի մեզի դէմ ցոյց տուած ժխտական խորհուրդով, խօսքով կամ արարքով, կրնայ մեր վրայ վատ ազդեցութիւն մը ունենալ եւ մեզ վիրաւորել: Այս ժխտական ազդեցութեան պատճառը կրնայ ըլլալ անարգանք մը, հայհոյանք մը, զրպարտութիւն մը, դաւաճանութիւն մը, գողութիւն մը, նիւթական վնասի պատճառ մը, լքում կամ նոյնիսկ ֆիզիքական վնաս մը ... եւ ասոնց հետեւանքով անձին ստացած վիրաւորանքն ալ կրնայ ըլլալ ֆիզիքական, նիւթական, հոգեբանական եւ նոյնիսկ իմացական: Այս կացութիւնը պատճառ կ'ըլլայ, որ անձն ալ զինք վիրաւորողին նկատմամբ իր համակրանքը, վստահութիւնը, հաւատքը եւ սէրը կորսնցնէ, նոյնիսկ շատ անգամ այդ անձին հետ իր ունեցած յարաբերութիւնները բոլորովին խզէ:

Ընդհանուր առմամբ, մարդկային կացութիւնը այն է, թէ անհատը ինքզինք չարագործին զոհը կը համարէ եւ առաջին հերթին բարկութեամբ հակազդեցութիւն մը ցոյց կու տայ եւ իր մէջ կը ծագի վրէժխնդրութեան գաղափարը: Նման գաղափար մը հետեւանքն է խաւարամտութեան եւ անձին «Ես»-էն կը ծագի: Միթէ անձին «Ես»-ն ալ իր խաւարամտութեան պատճառը չէ՞: Ըստ Հին Կտակարանին մարդ արարած իր խաւարամտութեան հետեւանք նոյնիսկ Աստուած իբրեւ վրէժխնդիր եւ պատիժ տնօրինող ներկայացուցած է:

«Ե- ասէ Ղամէ՛՛ յկանայս ի-ր յԼ-դդ-ա ե-
 յՍէլլա. Լ-ու-արո-ւ-՛ յայնի իմո-մ կանայ՛
 Ղամէ՛-՛այ, ե- ո-նկն դի-՛ Քանից իմոց, շի այր

ապանի ՚ի վերա ինչ, եւ երրորտարտ՚ ՚ի
Հարոսաթա ինչ: Զի ինչ եւ ինչ անգամ վրէժի
խնդրոյն ՚ի Ասյեան, ապա եւ ՚ի Ղամեշայ
եւ ինչանանկին եւ ինչ»: (Ծննդոց Գ: 23-24)

«Ղամեք իր կիներուն՝ Ադդայի եւ Սեւլայի ըսաւ.
«Ձայնա մտիկ ըրէք՝ Ղամեքի՝ կիներ. խօսքս
ուսկնդրեցէք, որովհետեւ ես մարդ մը սպաննեցի՝ իմ
վերքիս, ու երեսասարկ մը՝ իմ հարուածիս համար: Եթէ
Կայէնի համար եօթնապատիկ վրէժ առնուի, Ղամեքի
համար ալ՝ եօթնասուսեօթը անգամ»:

*Այն անձը, որ քիչ մը արթնութիւն ցոյց կու տայ,
հետեւաբար քիչ մը աւելի գիտակից, վրէժխնդրու-
թիւնը իր պարտականութիւնը չի նկատեր եւ զայն կը
թողու Աստուծոյ: Կ'անիծէ չարագործը եւ կ'աղօթէ, որ
Աստուած զայն պատժէ: Ան իր այս հայեացքը կը հիմնէ
հետեւեալ համարին վրայ՝ ըստ իր մակերեսային
հասկացողութեան.*

«Մի՛ սանձանց վրէժխնդրէ՛ն սի՛րելի՛ն այլ քո՛ւն
դեղնի՛ Բարկո-իեան: Բանսի գրեալ ՚ի մ ե
վրէժխնդրո-րի-ն եւ ես Հարոս-ցից՝ ասէ Տէր»:
(Հրովմաէցիս ԺԲ: 19)

«Սիրելիներ՛ը, վրէժխնդիր մի՛ ըլլաք դուք ձեզի համար,
հապա տե՛ղ տուէք Աստուծոյ բարկութեան՝ որովհետեւ
զրուած է. «Վրէժխնդրութիւնը ի՛մս է, ե՛ս պիտի
հատուցանեմ,- կ'ըսէ Տէրը»:

*Ըստ անհատին հասկացողութեան, որ տակաւին որոշ
չափով խաւարամիտ է, դարձեալ կը կարծէ թէ
Աստուած վրէժխնդիր է: Այս համարով Պօղոս կը
սորվեցնէր վրէժխնդիր չըլլալ: Իսկ այս մէջբերումին
վերջին նախադասութիւնն ալ կը համապատասխանէ
Յիսուսի ուրիշ բառերով սորվեցուցած. «Ինչ որ ցանես
ան կը հնձես»-ին:*

*Այն անձը, որ քիչ մը աւելի արթնութիւն ունի, կը
համարէ թէ չարագործը մեղաւոր մըն է, բայց*

կ'անդրադառնայ, թէ ինքն ալ մեղաւոր մըն է: Դարձեալ ըստ իր մակերեսային հասկացողութեան, կը մեկնաբանէ Տէրունական Աղօթքին հետեւեալ տողերը եւ կը խորհի ներել իր չարագործը, որպէսզի իր ներած չափով իր մեղքերն ալ ներուին: Աս Աստուծոյ հետ սակարկութեան մտնելու կը նմանի. «Ես զինք կը ներեմ, Դուն ալ զիս ներէ»:

«Հայր մեր ... Է- թող մեզ պարտիս մեր,

որպէս Է- մե՛կ թողո՞ւմէ՛ մերոց պարտասանաց .»

«Հայր մեր՝ ... Մեզի ներէ՛ մեր պարտքերը՝ ինչպէս մենք ալ կը ներենք մեր պարտասաններուն.»

Երբ Պետրոս Յիսուսին հետեւեալ հարցումը կը հարցնէ, Յիսուսի պատասխանը կ'ըլլայ միւսներէն տարբեր.:

«Յայնժամ մարեա- առ նա Պէ՛րրոս՝ Է- ասէ .

Տէր՝ ինչո՞ք անգամ թէ մեղիցէ ինչ եղբայր իմ,

Է- թողից նմա . մինչէ- ցե՞-թն անգամ: Լա՛ն

ցնա Յիսուս . Ո՛չ ասեմ ինչ՝ թէ մինչէ- յե-թն

անգամ, այլ՝ մինչէ- յե-թնասնէկէ՛ն Է-թն»:

(Մարքէոս ԺԲ: 21-22)

«Այն ատեն Պետրոս մօտեցաւ անոր եւ ըսաւ. «Տէ՛ր, եթէ եղբայրս մեղանչէ ինձի դէմ՝ քանի՞ անգամ ներեմ անոր. մինչեւ եօ՞թը անգամ»: Յիսուս ըսաւ անոր. «Քեզի չեմ ըսեր՝ մինչեւ եօթն անգամ, հապա՛ մինչեւ եօթանասուն անգամ եօթը»:

Յիսուսի պատասխանը կը թուի տրուած ըլլալ անհատի մը, որուն գիտակցութեան մակարդակը ընդհանուրի գիտակցութեան մակարդակէն աւելի բարձր էր: Պետրոս, Յիսուսի աշակերտը, պարտ էր կերտած ըլլալ շատ աւելի հոգեկան արթնութիւն մը: Յիսուսի այս խօսքերուն հիման վրայ կը թուի, թէ անձը պէտք չէ վրէժխնդիր ըլլայ, ինչպէս նաեւ պէտք չէ անիծէ եւ վրէժխնդրութիւնը Աստուծոյ ձգէ: Ան նաեւ պէտք չէ

որ իր գործած մեղքերուն թողութիւնը գտնէ, որովհետեւ ինք ալ ուրիշ անձ մը ներած է, այլ՝ ան պարտ է միայն յաճախ եւ անդադար ներէ: Հետաքրքրական եւ զարմանալի ըլլալ կը թուի 77 անգամը, կամ 70x7 թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններու մէջբերումներուն մէջ: Նոր Կտակարանի որոշ թարգմանութիւններն ալ 70x7-ի տեղ 77 անգամ գրած են (տես նաեւ «Լոյս ի Լուսոյ» գիրքի «Ինչ է Թուագիտութիւնը» գլուխը՝ էջեր 271-272):

Վերոյիշեալ մէջբերումներէն ի յայտ կու գայ, թէ երբ մարդ իրեն դէմ գործուած վատ արարքի մը ենթարկուի ինք հակազդեցութիւն ցոյց կու տայ ըստ իր գիտակցութեան մակարդակին: Եւ ինք իր հասկացողութեան եւ ընթոնումին համաձայն ալ կը ներէ իր չարագործը: Բայց այդ բոլորը՝ իր զանազան վարմունքները, ծագում կ'առնեն այն իրողութենէն, թէ ինք կացութիւնը եւ անհատը դատած է եւ որոշած, թէ իրեն դէմ անարդարութիւն մը գործուած է եւ անարդարութեան պատճառ եղողն ալ չարագործ մըն է: Դարձեալ, իր բոլոր ցուցաբերած հակազդեցութիւնները ինքզինք զոհ նկատելուն արդիւնքն են: Արդեօք ի՞նչ պիտի ըլլար իր յայտնաբերած հակազդեցութիւնը եթէ իր գիտակցութեան մակարդակը շատ աւելի բարձր ըլլար, այսինքն ինք հոգեկան գետնի վրայ շատ աւելի բարձր արթնութեան մը տէր ըլլար: Յիսուսի այդ բարձր գիտակցութիւնը մեզի համար բացայայտ օրինակ մըն է: Յիսուս իր մարդկային կեանքի միջոցին իր մէջ յայտնաբերած էր Քրիստոսի գիտակցութեան մակարդակը: Յիսուս իր կենցաղով եւ իր արարքներով մեզի սորվեցուց ճշմարիտ ներողամտութիւնը: Տիեզերքի մէջ ամենաահռելի եւ վատ չարագործութիւնը անձի մը Ֆիզիքական ցաւ պատճառելէ յետոյ զայն սպաննելն է: Ահա Յիսուս, անմեղ ըլլալով հանդերձ, այս ահռելի չարագործութեան ենթարկուեցաւ: Արդեօք Աւետարա-

նին մէջ, որեւէ տեղ գրուած է^օ, որ Յիսուս իր
չարագործներէն իր վրէժը առաւ, կամ զանոնք անիծեց
եւ Հօրը աղօթեց, որ զանոնք պատժէ, կամ ինք Հօրմէն
խնդրեց, որ եթէ ինք զանոնք ներէ ինք ալ Յարութեան
արժանանայ, կամ առանց առ-եւ-տուրի ինք անոնց
պարզապէս ներեց: Բացարձակապէս ո՛չ:

Յիսուս ի՞նչ ըրաւ: Առաջին հերթին Յիսուս
աշխարհ եկաւ իր Հօրը կամքը կատարելու: Ոեւէ անձ
չ'ախորժիր Փիզիքական ցաւ քաշելէ: Յիսուս ինք ալ
նման խորչանք մը ցոյց տուաւ իր ակնկալած
Փիզիքական չարչարանքին.

«Յայնժամ ասէ ցնոսս. Տրդո՛ւմ է անշն

իմ մինչեւ՝ ՚ի մաւ,» (Մարկոս ԺԷ:34)

«Հետեւաբար ըսաւ անոնց. «Իմ անձս չափազանց
տրտում է՝ մեռնելու աստիճան.»»

Ճիշդ ստոր համար Գեթսեմանիի պարտէզին մէջ
աղօթեց իր Հօրը, որպէսզի եթէ կարելի է ազատի
զալիք Փիզիքական չարչարանքէն.

«Եւ ասէր. Հա՛յր՝ եթէ կամիս՝ անց՛ ո՞չ քաշակս

զայս յինչն. Բայց ո՛չ իմ կամէ՛ն՝ այլ ի՛նչ ո՞ր

լիցի»: (Դուկաս ԻԲ:42)

«Եւ կ'ըսէր. «Հա՛յր, եթէ վախաբիս՝ հեռացո՛ւր այս
բաժակը ինձմէ. բայց ո՛չ իմ կամքս՝ հապա քո՛ւկը
թող ըլլայ»:

Բայց Յիսուս այդ չարչարանքը չնկատեց իրեն հանդէպ
գործուած չարագործութիւն մը, այլ զայն նկատեց
իբրեւ իր երկնային Հօր կամքը: Հետեւաբար անոնք,
որոնք մենք չարագործ կը նկատենք, միայն մեր
բոլորին Հօրը կամքը կատարողներն են: Ուրեմն
Յիսուս ալ իր Հօրը կամքը կատարելու համար աշխարհ
չէ՞ր եկած: Ուրեմն ինչո՞ւ համար Հօրը կամքը
կատարողները չարագործ համարէ: Իսկ եթէ գիրենք
չարագործ չհամարէ, արդեօք ներելու կարիքը կա՞յ:

Հետեւաբար Յիսուս Զինք խաչողները չներեց, որովհետեւ չմեղադրեց, ուստի ներելու պէտք ալ չզգաց: Ինքզինք չարագործներուն զոհին տեղ չդրաւ, այլ՝ Հօրը կամքը կատարող: Իր խաչելութիւնը եւ չարչարանքն ալ նկատեց Հօրը կամքը: Ուրեմն Յիսուսի տեսանկիւնէն ոճիր մը, կամ անարդարութիւն մը չէր գործուած: Միայն Հօրը կամքն էր, որ կատարուած էր: Բայց Յիսուս յաճախ քարոզած եւ սորվեցուցած էր. «Մարդ ինչ որ ցանկէ, ան ալ կը հնձէ»: Ինք շատ լաւ գիտէր զինք չարչարող եւ խաչելով մեռցնողներուն ցանած հունտերուն հետեւանքը՝ ապագային իրենց քաղելիք հունձքերը: Հետեւաբար Ան իր ամենատաժանելի եւ տառապալից վիճակին մէջ Հօրը աղօթեց, որ Հայրը զանոնք ներէ: Ինք չէր, որ անոնց ներեց, քանզի ինք ներելու պէտքը չունէր:

«Եւ Յիսուս ասէ. Հայր՝ Ի՞նչ դոցա՛ս՝ զի ոչ»

Գիթէն զինչ գործէն»: (Ղուկաս ԻԳ:34)

«Յիսուս ըսաւ. «Հայր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՞նչ կ'ընեն»»:

Ուրեմն ի՞նչ կը խորհինք, թէ ի՞նչ է ճշմարիտ ներողամտութիւնը: Երբ նկատենք, թէ ժխտական արարք մը գործուած է մեզի դէմ, ընդհանուր առմամբ մենք մեզ կը նկատենք մեզի դէմ չարագործութիւն ընողին զոհը եւ նամանաւանդ եթէ չարագործութիւն ընողը առաջուց կը սիրէինք, մեր «սիրտն ալ կը կոտրի»՝ շատ հաւանաբար անոր հանդէպ մեր կորսնցուցած սէրին պատճառով: Եթէ արժէքաւոր ծաղկաման մը կոտրի, երբեմն զայն չենք նետեր: Կտորները իրարու կը փակցընենք եւ ծաղկամանը կը նորոգենք: Թէեւ նորոգուած ծաղկամանը գործածելի կը դառնայ, սակայն կոտորուած եւ բակցուած տեղերուն զիծերն ալ միշտ կը մնան՝ բոլորին երեւելի: Մարդկային կեանքին մէջ ալ, որեւէ կացութիւն՝ այր եւ կնոջ միջեւ անհաւատարմութիւն,

խոստումի մը դրժում կամ ոեւէ անհատի մը հետ անհամաձայնութիւն, նոյնիսկ եթէ ներուրի, հետքը մարդու ենթագիտակցութեան մէջ կը մնայ, եւ օր մը չյուսացուած պահու մը, յանկարծ կը յայտնուի:

Ուրեմն ո՞ւր մնաց ներողամտութիւնը: Որպէս Քրիստոնեայ, որպէս Յիսուսի աշակերտ, որպէս Յիսուսի սորվեցուցածներուն հետեւող եւ որպէս մեր այդ սորվածներն ալ կիրարկող, ի՞նչ պէտք է ընենք: Պէտք է՞ ընենք այն ինչ որ Յիսուս ըրաւ՝ մեզի սորվեցնելու համար: Արդեօք մեր նպատակն ալ Աստուծոյ կամքը կատարել է՞: Արդեօք կը հաւատա՞նք, թէ Աստուած ամենուրեք է եւ ամենակարող: Արդեօք կը հաւատա՞նք թէ առանց Աստուծոյ կամքին տերեւ մը իսկ չի շարժիր: Ուստի, եթէ կը հաւատանք, ամէն ինչ՝ լաւ թէ վատ, որ կը պատահի մեր կեանքի ընթացքին, պէտք է՞ որ ընդունինք որպէս Աստուծոյ կամքը: Մեր կեանքին բոլոր լաւ պատահարները արդիւնքները՝ «հունձք»-երն են մեր «ցանած» բարի խորհուրդ, խօսք ու արարքներուն, իսկ վատ պատահարներն ալ՝ «հունձք»-երը մեր «ցանած» վատ խորհուրդ, խօսք ու արարքներուն: Կարող է, որ անոնք Աստուծոյ մեզի տրուած փորձառութիւններ ըլլան, որպէսզի անոնց մէջ թագնուած դասերը սորվելով հոգեւոր ճանապարհին մէջ ալ աւելի արագ յառաջանանք: Եթէ նման հայեացքով մը ընդունինք մեր կեանքի բոլոր վատ պատահարները, ո՞ւր է թշնամին, ո՞վ է չարագործը, ո՞վ պիտի ներենք: Ընդհակառակը, պէտք է՞, որ մեզի տուած դասին համար, շնորհակալութիւն յայտնենք այն անձին, որ նախապէս մեր չարագործը նկատած էինք: Սակայն աս կը կարօտի բարձր գիտակցութեան մակարդակի: Անոնք, որոնք իրենց գիտակցութեան մակարդակով տակաւին խաւարամտութեան ստուերներուն մէջ կը սաւառնին, անտարակոյս նման տեսակէտ

մը անհիմաստ պիտի համարեն եւ խենդութիւն: Խաւարամիտ մարդը կամ պիտի ուզէ վրէժ լուծել եւ կամ ալ պիտի ջանայ ներել, բայց ամենեւին պիտի չկարենայ կատարելապէս ներել: Իսկ հոգեպէս արթուն մարդը բնաւ ներելու կարիքը պիտի չունենայ: Իսկ եթէ մարդ իր կեանքի պատահարներով իրեն տրուած դասը իսկապէս սորվի, ինք ալ կը հասկնայ թէ միայն ներելիք մէկ անձ կայ, ան ալ ինքն է: Մարդ պարտ է ինքզինք ներէ, եւ ինք իր անցեալին հետ հաշտուի, որպէսզի կարողանայ ինքզինք անկէ ձեռքազատել, ապա թէ ոչ անոնց յառաջ բերած զգացումները, յուզումները իր միտքը յաճախ գրաւելով արգելք պիտի հանդիսանան, որ ան «սուրբ սիրտ» կերտէ եւ «Աստուած տեսնէ»: Ահա՛, աս է ճշմարիտ ներողամտութիւնը, որ արդիւնքն է «Ձարթօնք»-ին եւ ճամբան կը բանայ Աւետարանին մէջ գրուած «յափշտակութեան»՝ յանկարծակի գիտակցութեան մակարդակի բարձրացումին, նոյնիսկ մինչեւ Քրիստոսի հետ հաղորդութեան, անշուշտ եթէ անձը ինքզինք արժանի ըրած ըլլայ:

Հաւանաբար ոմանք ըսեն. «Ես անարդարութեան մը ենթարկուեցայ հետեւաբար ինքզինքս զոհ կը նկատեմ»: Անտարակոյս անկարելի է նման հայեացքի մը դէմ, որեւէ տրամաբանութեամբ վիճիլ: Բայց պէտք է հասկնանք թէ մենք չարագործին զոհը չենք այլ մենք մեր խորհուրդ, խօսք եւ արարքներուն զոհն ենք: Քանի որ մեր խորհուրդները, խօսքերը եւ արարքները ընդհանուր առմամբ մեր «Ես»-էն կը ծագին, բնական է ըսել թէ մենք մեր «Ես»-երուն՝ սատանային զոհն ենք: Ճիշդ ասոր համար Յիսուս յաճախ մեզի յորդորեց մեր «Ես»-ը անտեսել: Յիսուս իր «Ես»-ը անտեսած էր, ուրեմն ինք որո՞ւ զոհն էր, եթէ ոչ Ջինք խաչող չարագործներուն: Իր զոհողութիւնը յօժարակամ էր եւ ինք իր ողորմածութեան զոհն էր: Ինք իր բժշկած

բազմաթիւ անձերու պարտքերը իր վրայ առնելով ինք յօժարաբար անոնց գործած մեղքերուն զոհը եղաւ: Ահա՛, աս է Աստուածային սէրը:

Ինչպէս վերեւ գրուած է, եթէ չդատենք, ուրեմն ներելու ալ կարիքը չենք ունենար: Բայց աս ըսել չէ թէ չարագործը իր ըրածներուն պատասխանատու չէ: Անոնք կը ներկայացնեն իր «ցանած հունտերը», որ ապագային պիտի հասուննան եւ ստեղծեն իր կեանքի զանազան պատահարները: Ուրեմն ո՞վ է, որ կը դատէ եւ արդար հատուցումը կ'ընէ: Միթէ Յիսուս չէ՞ր ըսած. «Մ. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Ստեղծագործութեան մէջ ամէն ինչ Մ. Հոգիի գործութեամբ կազմուած եւ ի յայտ եկած է, ուրեմն որեւէ բանի՛ նիւթի, բոյսի, անասունի կամ անհատի դէմ գիտակցաբար եղած կամ գործուած ժխտական խորհուրդ, խօսք ու արարք կը նկատուի Մ. Հոգիի դէմ գործուած մեղք:

«Լյսոս-Ըեդէս որ անարգէ ո՛չ պմարդ անարգէ
այլ պԼսորոսած որ է- էր պԼոգին սոսրբ ի
յեզ»: (Լ. Թեադոնիկէցիս Գ:8)

«Ուստի ան որ կ'անարգէ՝ կ'անարգէ ո՛չ թէ մարդ մը,
հապա Աստուած՝ որ իր Սուրբ Հոգին ալ տուաւ մեզի»:

Այս մէջբերումէն անմիջապէս առաջ գրուած վերջին նախադասութեան մէջ յատկանշական բառը «գիտակցաբար»-ն է: Գիտակցաբար կամ անգիտակցաբար գործուած արարքի մը տարբերութիւնը եւ հետեւանքը նոյն իմաստասիրութիւնը յայտնաբերող հետեւեալ երկու համարներէն յայտնի կ'ըլլայ.

«Մի՛ տարտի՛ պի մի տարտիցի՛: Զի որով
տարաստանա- տարտի՛ տարտի՛ո՛ց էի, է- որով
չարիով չարիէ՛ չարիսցի՛ յեզ»: (Մարթէոս Է:1-2)

«Մի՛ դատէք, որպէսզի չդատուիք: Որովհետեւ ի՛նչ
դատաստանով որ դատէք՝ ան՞վ պիտի դատուիք, եւ

Ի՛նչ չափով որ չափէք: անո՛վ պիտի չափուի ձեզի»:

«Մի՛ զապիտի՛ եւ ո՛չ զապիտիցի՛, մի՛ պապիտի՛
եւ ո՛չ պապիտիցիցի՛, արշակիցի՛ էւ արշակիցիցի՛»:

(Ղ.ու.կառ. 9:37)

«Մի՛ դատէք՝ ու պիտի չդատուիք. մի՛ դատապարտէք՝ եւ
պիտի չդատապարտուիք. ներեցէ՛ք՝ ու պիտի ներուի
ձեզի»:

*Երբ մենք ուրիշ անձ մը կը դատենք, ըսել է թէ մենք
իր ըրածին վատ արարք մը եղած ըլլալը գիտենք:
Հետեւաբար երբ մենք նման արարք մը գործենք,
անտարակոյս անոր վատ արարք մը ըլլալը գիտնալով է
որ զայն գործած ենք: Հետեւաբար մեր դատած չափով
ալ դատուելու արժանի ենք: Ուրեմն, ո՞վ է, որ մեզ՝ մեր
արարքը պիտի դատէ: Շատեր կը խորհին թէ Հայր
Աստուած «վերը»՝ «երկինքը» նստած մեր արարքները
«կեանքի գիրքին» մէջ կ'արձանագրէ եւ համապատաս-
խան պատիժ կու տայ: Անտարակոյս այս հայեացքը
սխալ է եւ երախայական: Ըստ հետեւեալ երկու
համարներուն Հայր Աստուած բնաւ չի դատեր.*

«Եւ ո՛չ եթէ Ըայր զապիտի պիտի՛ այլ պամենայն
զապասպանն ետ որդեո՛յ իւրոյ պիտի ամենեկեանն
պապուտեցեն պորտի որպէս պապուտեալ պայտն»:

(Յովհաննոս Ե:22-23)

«Քանի որ Հայրը ո՛չ մէկը կը դատէ՝ Հապա ամէն
դատաստան Որդիին տուաւ. որպէսզի բոլորը պատուեն
Որդին՝ ինչպէս կը պատուեն Հայրը»:

«Չի որպէս Ըայր ունի կեանս յանձնին իւրում,
նո՛յնպէս ետ եւ որդեո՛յ ունել կեանս յանձնին
իւրում: Եւ իշխանութի՛ւն ետ նմա զապասպանն
ատենել: Եւ պիտի որդի մարդոյ է»: (Յովհաննոս Ե:26-27)

«Որովհետեւ ինչպէս Հայրը ինքնիր մէջ կեանք ունի,
այնպէս ալ Որդիին տուաւ՝ որ ինքնիր մէջ կեանք
ունենայ. նաեւ անոր տուաւ դատաստան կիրարկելու

Իշխանութիւն, քանի որ ան մարդու Որդին է»:

Քանի որ Հայր Աստուած չի դատեր, ուրեմն ո՞վ է, որ մեզ պիտի դատէ: Ըստ այս երկու համարներուն Հայր Աստուած դատաստանը Որդիին տուած է: Բայց հետեւեալ համարին մէջ Յիսուս Քրիստոս բացայայտ կ'ըսէ, թէ Ինք չի դատեր եւ դատելու չէ եկած այլ միայն փրկելու: Դարձեալ Ան բացայայտ կ'ըսէ, թէ անոնք, որոնք իրեն մտիկ չեն ըներ եւ իր սորվեցուցածները իրենց կեանքերուն մէջ չեն կիրարկեր, անոնք, այդ խօսքերը անտեսելով արդէն դատապարտուած պիտի ըլլան:

«Եւ եթէ ո՛վ լուսնիցէ Բանից ի՛նչո՞յ՝ եւ ո՛չ պահեացէ, եւ ո՛չ դատեմ պնա. ի՛նչպիսի ո՛չ եկի լիւս դատեցայց պաշխարհ այլ պի փրկեցից ո՞յ պաշխարհն: Որ անարգէ պիս, եւ ո՛չ ընդոռնի պԲանս իմ, Գո՛յ որ դատի պնա, Բանն պոր ես խօսեցայ՝ նա՛ դատի պնա յառօրն յեդոնոմ»:

(Յովհաննոս ԺԲ: 47-48)

«Եթէ մէկը լսէ իմ խօսքերս ու չհաւատայ՝ ես չեմ դատեր զինք, քանի որ ես եկայ՝ ո՛չ թէ դատելու աշխարհը, հապա՛ փրկելու աշխարհը: Ա՛ն որ կ'անարգէ զիս եւ չ'ընդունիր իմ խօսքերս, ունի մէկը՝ որ կը դատէ զինք: այն խօսքը՝ որ ես ըսի՝ անիկա՛ պիտի դատէ զինք՝ վերջին օրը»:

Վերոյիշեալ մէջբերումներուն մէջ կը թուի հակասութիւն մը ըլլալ: Համարներէն մէկուն մէջ գրուած է. «այլ զամենայն դատաստանն ետ որդւո՛յ իւրոյ»: Իսկ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «ես ո՛չ դատիմ եւ ո՛չ զքք»: Միթէ բոլորս ալ Աստուծոյ որդիները չե՞նք: Միթէ Քրիստոս ամէն մի անհատի հոգին՝ ճշմարիտ էութիւնը չէ՞: Միթէ Քրիստոս ամէն մի անհատի կեանքը չէ՞: Երբ Ան մարմնին մէջ է, ըստ Յովհաննոս Աւետարանին ան «Եւ զի որդի մարդոյ է»: Հետեւաբար ամէն անհատ ինք

զինք կը դատէ եւ իր դատաստանը արդար է, որովհետեւ այս դատաստանը ըստ իր «Ես»-ին չէ այլ ըստ իր ներքին Քրիստոսին: Հետեւեալ համարին մէջ կը տեսնենք թէ մարդ ընդհանուր առմամբ կը դատէ ըստ իր «Ես»-ին, որովհետեւ ան կապուած է իր մարմնոյն եւ կը կարծէ թէ ինք իր մարմինն է եւ չի հասկնար թէ մարմինը միայն իր Հոգիին Փիզիքական գետնի վրայ յայտնուելու միջոցն է եւ ինք իր մարմինը գործածելով հանդերձ ինք իր մարմինը չէ: Երբ յաջորդ համարին մէջ կը կարդանք. «Դուք ըստ մարմնոյ դատիք» կը հասկնանք թէ մարդ արարած սխալ կերպով կը դատէ:

«Դուք ըստ մարմնոյ դատիք եւ ո՛չ դատիմ եւ ո՛չ պո՛ղ: Թեպէտք եւ դատիմ եւս պո՛ղ՝ դատաստանն իմ ճշմարիտ պի շէ՛մ միայն այլ ես՝ եւ որ առաջեւս ցն պիս Հայր» : (Յովհաննոս Ը:15-16)
«Դուք կը դատէք մարմինի՛ն համաձայն. ես ո՛չ մէկը կը դատեմ: Նոյնիսկ եթէ դատեմ՝ իմ դատաստանս ճշմարիտ է, որովհետեւ ես միմակ չեմ, հապա՛ ես եւ Հայրը՝ որ զրկեց զիս»:

Իսկ ամէն անձի էութիւնը՝ ներքին Քրիստոս կը դատէ հոգիին համաձայն, որովհետեւ Հոգիին նպատակը մարդու միջոցաւ Աստուածայայտնութիւնն է ինչպէս վերեւ մէջբերումին մէջ գրուած էր. «զի ամենեքեան՝ պատուեսցէն զորդի որպէս պատուեն զՀայրն»: Հետեւաբար բոլոր դատողութիւնները եւ անոնց յառաջ բերած փորձառութիւնները կը ծառայեն իբր դաս, որպէսզի անհատին հոգեւոր ճանապարհին մէջ յառաջդիմութիւնը աւելի շիտակ եւ արագ ընթանայ: Ուրեմն ամէն անհատ ինքզինք կը դատէ: Իսկ եթէ ինքն է որ ինքզինք դատած է, պէտք չէ՞, որ իր կեանքի բոլոր լաւ ու վատ պատահարները ընդունի իբր Աստուծոյ՝ ներքին Քրիստոսի կամքը: Քրիստոս անձին Հոգին եւ էութիւնն

է: Չե՞նք խորհիր, որ մենք մեզի համար միշտ լաւագոյնը կը բաղձանք, հետեւաբար չե՞նք խորհիր, որ Քրիստոս մեզի համար լաւագոյնը կը բաղձայ: Այս հիման վրայ մարդ պարտ է միայն ինքզինք դատել եւ իրմէ դուրս ոչ ոք, հոգ չէ թէ որու միջոցաւ իրականացած ըլլայ իրեն համար իր ընտրած անբաղձալի պատահարը՝ դասը: Իսկ երբ մարդ ինքզինք կը դատէ եւ ինքզինք զոհի տեղ չի դնել ու կ'ընդունի իր կեանքի վատ պատահարները որպէս դաս եւ այդ պատահարէն իր պատշաճ դասը կը սորվի եւ այնուհետեւ իր հայեացքը, իր վարուելակերպը, իր խորհելակերպը եւ իր կենցաղը պէտք է փոխէ: Այս փոփոխութիւնը ճամբան կը բանայ գիտակցութեան մակարդակի բարձրացման: Ինչ աստիճանով որ անհատի գիտակցութեան մակարդակը բարձրանայ, նոյն աստիճանով ալ իր ներքին Քրիստոսը կը յայտնուի իր մէջ:

Եթէ ամէն անձի հոգին՝ Քրիստոս, զինք կը դատէ եւ անձն ալ կ'ենթարկուի իր կենցաղին յառաջ բերած պատիժներուն, ո՞ւր մնաց Աստուծոյ ողորմածութիւնը եւ ներողամտութիւնը: Նախ հասկնանք թէ ի՞նչ ըսել է պատիժ կամ ընդհանուր առմամբ հատուցում, լաւ ու վատ: Մարդ իր ապրած կենցաղով կ'որոշէ զինք կազմող զօրութեան քանակը եւ անոր թրթռացումին յաճախականութեան (frequency) որակը: Ամէն անհատ իրեն կը քաշէ պատահարներ, որոնց զօրութեան թրթռացումի յաճախականութիւնները ներդաշնակ են իր զօրութեան թրթռացումի յաճախականութեան որակին հետ: Հետեւաբար եթէ անձը ունի բարձր յաճախականութիւն կը վայելէ հաճելի պատահարներ, որոնք ունին նաեւ բարձր յաճախականութիւն: Իսկ եթէ անձին զօրութեան թրթռացումի յաճախականութիւնը ցած է՝ արդիւնք իր խաւարամտութեան եւ իր ցած գիտակցութեան մակարդակին, ինք ալ, համապատասխան իր զօրութեան,

իրեն կը քաշէ նման ցած յաճախականութիւն ունեցող պատահարներ, որոնք ներդաշնակ են զինք կազմող զօրութեան որակին: Անձին անհատականութիւնը քանի կը հեռանայ իր «Յս»-էն եւ կը մօտենայ իր ներքին Քրիստոսին, ինք դուռը կը բանայ յաւելեալ Ս. Հոգիի կենսատու զօրութեան իր մէջ հոսքին եւ կը կերտէ զօրութիւն մը աւելի բարձր յաճախականութեամբ: Միթէ Քրիստոս չըսա՞ւ.

«Ես եմ դուռն, ընդ իս թէ ո՛վ մտնիցէ,
կեցցէ՛, ...»: (Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը, եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի փրկուի. ...»:

Ամէն անձի գիտակցութիւնը, իր մէջ Աստուծոյ ներկայութիւնն է: Ինք ինչ աստիճանով ինքզինք կը պատրաստէ եւ կը կատարէ Յիսուսի բոլոր սորվեցուցածները, նոյն չափով ալ կը ստանայ Ս. Հոգիի զօրութիւնը եւ նոյն չափով ալ կը բարձրացնէ իր գիտակցութեան մակարդակը, որ նոյն չափով ալ յայտնաբերած կ'ըլլայ իր ներքին Քրիստոսը: Քրիստոսի այս յայտնութիւնն է, որ կը նկատուի մեղքերու թողութիւն, որով անձը իրեն կը քաշէ իր զօրութեան համապատասխան կամ ներդաշնակ լաւ պատահարներ միայն: Առանց վատ պատահարներու ինք ալ ներուած կը նկատուի:



ԴԱՏԵԼ ու ՆԵՐԵԼ ԵՒ ՀԱՅ ԱԶԳԸ

Այս դատելու եւ ներողամտութեան հարցը ի զօրու է թէ՛ անհատներու պարագային, թէ՛ ալ հաւաքականութիւններու: Այս հիման վրայ եթէ նկատողութեան առնենք Հայ հաւաքականութիւնը, ի՞նչ կը սորվինք կամ ի՞նչ կերպով ըմբռնած ենք մեր ազգին պատահածները եւ ի՞նչ կերպով պէտք է զայն ըմբռնենք: Այս ուղղութեամբ կարճ վերլուծում մը կը թուի պատշաճ ըլլալ:

Հայ ազգը դարերու ընթացքին յաճախ ենթարկուած է բազմաթիւ աղէտներու, որոնց գազաթնակէտը մօտաւորապէս հարիւր տարի առաջուայ թուրքերուն կատարած ցեղասպանութիւնն է: Որպէս Հայ ազգ, ի՞նչպէս ըմբռնած եւ հասկցած ենք պատահածները: Մենք զմեզ միշտ զոհի տեղ դրած եւ մեր ճակատագրին համար ալ նստած լացած ենք: Այս կացութիւնը վերագրած ենք մեր աշխարհագրական դիրքին, ինչպէս նաեւ մեր եւ այլ ազգերու միջեւ կրօնքի տարբերութեան: Աղեքսանդրի արշաւանքներու ատեն հարուած մը ստացանք: Այն ատեն տակաւին Քրիստոնեայ չէինք: Խաչակիրներու ատեն ալ հարուած մը ստացանք: Անոնց եւ մեր կրօնքը նոյնն էր, սակայն դաւանանքներու մէջ մի քիչ տարբերութիւն կար: Մինչեւ այսօր մեր ազգին կրած կորուստին համար կ'ողբանք: Արդեօք բնաւ խորհած ենք տարբեր ձեւով մը ըմբռնել եւ հասկնալ մեզի պատահածները: Իմ կարծիքով բացարձակապէս ո՛չ: Չենք խորհիր որ մեր ազգին ճակատագիրը, մեր գըլխուն եկածները, տարբեր ակնոցով մը դիտելու ժամանակը եկած է: Ինչպէս անհատ մը, նոյնպէս ալ հաւաքականութիւն մը, ազգ մը, իր ճակատագիրը ինք կը կերտէ: Հաւաքականութեան մը ճակատագիրը, այդ հաւաքականութիւնը կազմող անհատներուն անհատական ճակատագրին միացեալ բիւրեղացումը եւ արտայայտութիւնն է:

Նախ քննենք թէ ինչ են Հայ ազգին եւ զայն կազմող անհատներուն առաւելութիւնները եւ թերութիւնները: Օտարներու մօտ, հայր ճանչցուած է իբրեւ բարի, վստահելի, աշխատասէր, ուշիմ, խելացի, ստեղծագործ, զարգացած, խոհեմ, Աստուածավախ եւ խօսքին տէր անհատ: Անտարակոյս այս հասկացողութիւնը ճիշդ է երբ մեր յարաբերութիւնները օտարներու հետ են: Բայց արդեօք ի՞նչ են հայուն թերութիւնները: Այս ուղղութեամբ քննենք հետեւեալ երկու պատմական իրողութիւնները:

Վերջերս հայկական խազագրութիւններու (երաժրշտական նօթագրութիւն) մասին գրուած, Հայաստան հրատարակուած յօդուած մը կարդացի, 44 էջ¹: Ըստ յօդուածագրին, հինգերորդ դարէն մինչեւ տասնեօթերորդ դար, եկեղեցական եւ այլ երգեցողութեան համար կամաց կամաց հրաշալի խազագրութեան դրութիւն մը կատարելագործուած էր: Բայց դժբախտաբար վեց զանազան վայրերու մէջ՝ Էջմիածին, Կիլիկիա, Կ. Պոլիս, Նոր Զուղա (մինչեւ Հնդկաստան), Երուսաղէմ եւ Վենետիկ, անոնք տարբեր կերպով երգուած էին, որով միաձեւ համօրինակութիւն մը յառաջ չէր եկած: Միասնականութիւն չէր գոյացած: Տասնըութերորդ դարուն այդ արուեստը հետզհետէ կը կորսուի: Տասնըիններորդ դարուն կարծէք զայն վերապրեցնելու եւ արդիականացնելու աշխատանքը կը ստեղծէ Համբարձումեան նօթագրութիւնը, որ ան խազագրութիւն չէր, բայց հոն օգտագործուած էր խազերու նշանները եւ բոլորին ծանօթ արեւմտեան նօթագրութեանէ շատ աւելի հիանալի նօթագրութեան դրութիւն մը ստեղծուած էր: Բայց աւա՛ղ, մօտաւորապէս յիսուն տարիէ ի վեր ան ալ կորուստի ենթարկուած է եւ անոր տեղ կը գործածուի Եւրոպական նօթագրութիւնը:

1- Նիկողոս Թահմիզյան - Խազագրութեան Արվեստն Իր Պատմական Զարգացման Մէջ

Վերջերս կարգացի Հայոց կաթողիկոսութիւններուն անցեալի պատմութիւնը: Հոս պիտի չուզէի սորվածներս կրկնել, որովհետեւ ամօթ կը զգամ: Պարզապէս մեր նիւթը լաւ ընթոններու նպատակաւ պատշաճ է միայն ըսել, թէ ժամանակ եղած է որ մենք՝ Հայերս, նոյն ատեն ունեցած ենք նուազագոյն երեք առանձին կաթողիկոսութիւններ՝ նոյնիսկ աւելին, ինչպէս նաեւ հակաթոռներ: Վստահաբար շատեր պիտի ըսեն, անոնք անհրաժեշտ էին՝ աշխարհագրական եւ նուաճումներուն ստեղծած պայմաններուն իբրեւ հետեւանք: Նման հայեացք մը ինքնախաբէութիւն է: Բայց մէկ բան բացայայտ է եւ պէտք չէ զարմանանք, թէ մենք Հայերս յաճախ վատ պատահարներու ենթարկուած ենք: Անոնց ամէն մէկը մեզի տրուած դաս մըն էր: Իմացականօրէն շատ խելացի եւ նոյնիսկ հանճարներ կրնանք ըլլալ, բայց հոգեկան գետնի վրայ կարող չենք նոյնիսկ առաջին դասարանը աւարտել: Դարէ դար կը կրկնենք նոյն դասերը, առանց սորվելու անոնց մէջ թագնուած իմաստասիրութիւնները: Անտարակոյս ունեցած ենք իսկական սուրբեր: Այս իրողութիւնը անուրանալի է: Անոնք էին, որ Աստուծոյ կամքով ճշմարիտ հիմքերը դրին մեր հիանալի եւ անբաղդատելի Ս. Եկեղեցւոյն: Եւ այսօր ի՞նչ վիճակի բերած ենք այդ Եկեղեցին:

Վերոյիշեալ երկու գրութիւնները վերլուծելէ յետոյ այն եզրակացութեան հասայ, թէ հայը հայուն հետ լաւ չի հասկցուիր:

Երբ Հայ մը օտար վայրի մը մէջ ուրիշ Հայու մը հանդիպի, անոնք իրարու հետ սերտ բարեկամ կ'ըլլան: Երբ թիւը երեք ըլլայ հարցը քիչ մը կը փոխուի: Քանի անհատներուն թիւը բազմանայ, կարծիքի տարբերութիւններն ալ կը բազմանան: Հայերը աւելի այլասէր են քան թէ ազգասէր: Այսօր արեւմտահայերէնը կորսուելու վտանգին ենթարկուած լեզուներու շարքին կը

դասուլի: Կարելի չէ արեւելահայերէնի գոյութեան ուրախանալ, այն յոյսով որ ան հայութիւնը կրնայ պահել: Անոր ուղղագրութիւնը բառերը իրենց արմատներէն հեռացնելու ձեւով փոփոխութեան ենթարկուած բառացանկն ալ այլասերած է: Միթէ միայն մի քանի տարի առաջ չէ՞ր, որ առաջարկուած էր, որ Ռուսերէնը Հայաստանի պաշտօնական լեզուներէն մին ըլլայ: Նման մօտեցումներով «մօտ է դարունը»: Արեւելահայերէնն ալ շուտով կը հետեւի արեւմտահայերէնին եւ կը հասնի անոր վիճակին: Այս բոլորը օրինակներ են մեր այլասէրութեան եւ մեր ունեցածին նկատմամբ ալ՝ անտարբերութեան: Անտարակոյս, ունինք մի քանի անձեր որոնք ինքնագոհողութեամբ ազգին բարելաման համար կ'աշխատին: Բայց անոնց թիւը շատ քիչ է: Իսկ մեծամասնութիւնը զանոնք կը խեղդեն: Իրողութիւնը այն է որ մեծամասնութիւնը անտարբեր միայն իր անձնական հաճոյքին ու ապրուստին համար կ'աշխատի: Ան, որ ազգային գործիչ ըլլալ կը փափաքի, ինչպէս ամէն հայ իր հաւաքականութեան մէջ, կը կարծէ, թէ ինք լաւագոյնը գիտէ, անտեղեակ թէ ինք ոչինչ գիտէ: Ահա՛, այս հասկացողութեամբ անձեր, յարգելով բացառութիւնները, կը ցանկան «գլուխ» ըլլալ: Անոնք իրենց նպատակին հասնելու համար ալ կը գործեն ամէն տեսակի խարդախութիւն, դաւաճանութիւն, խռովութիւն ..., նոյնիսկ սպանութիւն: Կարգ մը անձերու համար նպատակը կրնայ նիւթական շահի ակնկալութիւն ըլլալ, կամ թէ պաշտօնին իրենց տուած «ենթադրեալ» փառքը: Երկու պարագաներն ալ եսասիրութենէ ծագում կ'առնեն, որոնք մահացու մեղքեր են ազահոլութիւն եւ փառամոլութիւն՝ հպարտութիւն:

Աւելի այժմէական օրինակ մը: 1970-ներու սկիզբը, գուցէ 1972-ին, միացեալ ժողով մը գումարուեցաւ Ս. Երրորդութիւն Հայց: Առաք. Եկեղեցւոյ, Ռամկավար

ազատական կուսակցութեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Հ. Բ. Ը. Միութեան եւ մի քանի չհզօք ազգայիններու մասնակցութեամբ, նպատակ ունենալով Թորոնթոյի մէջ միացեալ ուժերով համագաղութային ամենօրեայ դպրոց մը բանալ: Անոնք այն եզրակացութեան հասան թէ ամէն տարի դասարաններուն թիւը բարձրացող այդ դպրոցին ծախսերը այս գաղութը հայթայթելու կարողութիւնը չունէր: Գաղափարը մոռցուեցաւ: Զարմանալին այն է, որ 5 տարի յետոյ, որեւէ կազմակերպութեան չպատկանող «առանց կոնակի» եւ «առանց դրամի» խումբ մը անձեր, վարձեցին պետական դպրոց մը եւ Ս. Խաչ Ազգ. Ամենօրեայ նախակրթարանը բացին: Պաշտօնի կոչեցին Սուրիոյ եւ Լիբանանի մէջ երկար տարիներու փորձառութեան տէր ուսուցչուհիներ՝ առանց նկատողութեան առնելու անոնց կուսակցական եւ յարանուանական պատկանելիութիւնը: Ուրեմն նախորդ ցախողութեան պատճառը նիւթականը չէր այլ կողմերու անհամաձայնութիւնը՝ համագործակցելու ոգիին պակասը: Նիւթականը, հանրութեան առջեւ, պատճառաբանութիւն մըն էր, չըսելու համար թէ իրարու հետ չեն կրնար համագործակցիլ: Այն որ հինգ տարի առաջ անկարելի համարուած էր, պարզապէս բարի մրցակցութեան ոգիով Դաշնակցութիւնն ալ բացաւ գաղութին երկրորդ վարժարանը փոխանակ օգնելու Ս. Խաչ վարժարանին՝ համաձայն 5 տարի առաջուայ համագաղութային գաղափարին: Գոնէ անոնք գործօն կերպով չաշխատեցան, որ Ս. Խաչ վարժարանը գոցուի: Տեսնելով որ գաղութը ոչ թէ մէկ, այլ երկու դպրոց պահելու կարողութիւնը ունի, անոնցմէ մին ալ առանց «կոնակ» ունենալու, Ս. Խաչէն 8 տարիներ ետք Հ. Բ. Ը. Միութիւնն ալ որոշեց դպրոց մը բանալ, փոխանակ օգնելու միւս երկու դպրոցներուն՝ այդ նոյն համագաղութային ոգի-

ով: Բարեգործականին առաջարկուած էր, որ Ս. Խաչ վարժարանը նախակրթարան ըլլայ եւ իրենցն ալ միջնակարգ եւ բարձրագոյն վարժարան: Իրենց պատասխանը այն էր, թէ աշակերտը որպէս «Բարեգործականի համակիր եւ ապագայ անդամ» միայն կարելի էր փոքր տարիքէն պատրաստել: Հաւանաբար ՀՅԳ-ն ալ, որպէս կազմակերպութիւն, նման հասկացողութեամբ իր ամենօրեան բացած էր: Միթէ գաղութիս 25 տարի ծառայած Ս. Խաչ նախակրթարանին գոցուելուն պատճառն ալ մեր Հայերուս այս անջատողական՝ ժխտական նկարագրին հետեւանքը չէ՞ր: Ի՞նչ եղաւ երբ վերջապէս յաջողեցան Ս. Խաչ վարժարանը փակել: Մի քանի տարի յետոյ ալ Բարեգործականը իր վարժարանը փակեց: Այս աստիճան խաւարամտութիւն արդեօք կարելի է՞ գտնել այլ ազգերու մէջ: Արդեօք կը զարմանա՞նք թէ մեր լեզուն ինչո՞ւ նահանջի ճամբուն վրայ է:

Գաղութիս Հայ վարժարաններու վերոյիշեալ պատմութիւնը ընելուս պատճառը հին վերքերը բանալու համար չէր, ընդհակառակը, ես ուրախ եմ այդ բոլորին համար եւ երախտապարտ բոլոր անոնց, որոնք դեր ունեցան այս բոլորին մէջ: Այդ բոլոր պատահարները մեզի տրուած դաս մըն էր, որմէ շատ բան սորվեցայ եւ վստահ եմ որ եթէ այդ փորձառութիւններու ենթարկուած չըլլայի ես իմ այսօրուայ գիտակցութեան մակարդակիս ալ հասած պիտի չըլլայի: Ասոնց բոլորը ցոյց կու տան հայ ազգին՝ մեր բոլորին ընդհանուր նկարագիրը, որմէ պէտք է հասկցուի թէ ինչու միշտ մենք մեզի համար կը կերտենք ճակատագիր մը, որ մեզի հաճելի չէ եւ անընդհատ կը տուժենք: Վերեւ յիշուած կաթողիկոսութիւններու եւ կաթողիկոսներու ըրածներն ալ շատ հեռու են կատարելութեան ուղիէն եւ մեր վարդապետը Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներէն: Միացեալ Նահանգներու մէջ անցեալին

Կիրիկեան թեմէն, օտար եկեղեցիներուն, էջմիածինը վարկաբեկող գրութիւն մը ղրկուած էր, որպէսզի անոնք անտեսեն եւ դատապարտեն էջմիածինը եւ միայն զիրենք ճանչնան իբր Հայ Լուսաւորչական Ուղղափառ Եկեղեցի: Միթէ նման արարք մը, հասարակ մարդու մը հասկացողութեամբ, դաւաճանութիւն չէ՞: Կը թուի թէ Վասակը այսօր ալ տակաւին կ'ապրի: Հետեւաբար ինչո՞ւ զարմանք կը պատճառէ թէ Հայ ազգը միշտ հարուած մը կը ստանայ եւ անբաղձալի պատահարներու կ'ենթարկուի: Չե՞նք խորհիր, թէ մեր խորհուրդ, խօսք ու արարքներն են, որ ինչպէս անհատական կացութեան մէջ, նմանապէս ալ հաւաքականութեան մէջ եւս կը ստեղծեն մեր ճակատագիրը: Սխալ հասկացողութիւն մը պէտք չէ ըլլայ, ես այս գրութեամբ ոչ ոք՝ ոչ մէկ կամ միւս կազմակերպութիւն մը կը դատեմ, այլ միայն ես իբրեւ Հայ՝ ինծի կը դատեմ:

Սիրելի հայրենակիցներ ժամանակը հասած է, որ մոռնանք բոլոր կուսակցութիւնները, մոռնանք Պոլսահայը, Լիբանանահայը, Պարսկահայը, Եգիպտահայը, Սուրիահայը, Հայաստանցին, Ֆրանսահայը, Ամերիկահայը ..., ինչպէս նաեւ մոռնանք արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը, միացնենք զանոնք մեսրոպեան ճշգրիտ ուղղագրութեամբ, բարելաւենք եւ արդիականացնենք բառացանկը, բայց ոչ այլասերենք զայն: Ըլլանք մէկ ազգ՝ առանց բաժանումներու, ըլլանք մէկ եկեղեցի, մէկ հօտ եւ մէկ հովիւ: Աս իմ երազս է: Յուսամ չի մնար միայն երազ եւ մօտ ատենէն կ'իրականանայ: Ապա թէ ոչ, մենք ալ նման Աղուաններուն, Ասորիներուն եւ ուրիշ շատ մը այլ ազգերու, կորսուելու ճանապարհին մէջ կ'ըլլանք:

Աստուած ողորմած է եւ սէրով լի: Ան կը փափաքի, որ մենք իր ընտրած ճանապարհէն ընթանանք եւ այս ուղղութեամբ մեզի բազմաթիւ դասեր կու տայ: Ե՞րբ

պիտի սորվինք մեր դասը եւ հետեւինք Յիսուս Քրիստոսի սորվեցուցածներուն եւ մենք մեզ զոհի տեղ չդնենք եւ ուրիշներ չդատենք իբրեւ չարագործ, այլ դատենք միայն մենք ըզմեզ: Ներողամտութիւն չպահանջենք մեզ հալածողէն այլ ներենք մենք մեզի եւ շնորհակալութիւն յայտնենք մեզ հալածողներուն՝ որովհետեւ անոնք Աստուծոյ կամքը կատարած են եւ Յիսուսի նման, աղօթենք անոնց համար, որպէսզի անոնց ցանած հունտերուն հունձքը իրենց համար ներուի: Օգնենք անոնց, երբ անոնք օգնութեան կարօտին: Եթէ մենք հայերս մեծամասնութեամբ նման հայեացքով ընթանանք, չե՞նք խորհիր, որ օր մըն ալ Աստուած մեզ արժանի կը նկատէ մեր հողերուն դարձեալ տիրանալու: Անցեալին անկախ Հայաստանի մը յոյսը կը թուէր անկարելի ըլլալ: Բայց այսօր ունինք թէ՛ անկախ Հայաստան, թէ՛ ալ Արցախ: Չե՞նք խորհիր որ եթէ Աստուծոյ կամքը ըլլայ, կացութիւնները այնպէս մը կ'ընթանան, որ Արեւմտահայաստանի հողերուն հայերուն վերադարձն ալ կ'իրականանայ: Բայց պէտք է գիտնանք, թէ ո՛չ ըստ մեր կամքին, այլ՝ Աստուծոյ, եւ պէտք է Աստուծոյ կամքը յօժարաբար ընդունինք: Հետեւաբար պարտ ենք մենք զմեզ դատել, կեանքի պատահարներէն սորվիլ եւ ըստ այնմ մենք զմեզ փոխել: Իբրեւ Հայ միշտ հպարտ ենք առաջին Քրիստոնեայ պետութիւն ըլլալով: Պէտք չէ մոռնալ թէ հպարտութիւնը մահացու մեղքերէն մին է: Մէկդի դնենք մեր հպարտութիւնը, աշխատինք մեր դասը սորվիլ եւ մեր խաչը առնենք եւ մեր վարդապետին ետեւէն երթանք:

«Յայնժամ Յիսուս ասէ՛ր ցաշակերդսն իւր. Եթէ ո՛վ կամօցի զկնի իմ Գալ՝ ուրասցի՛ր զանձն, եւ ասցէ՛ր զսաշ իւր՝ եւ եկեացէ զկնի իմ»:

(Մաթթէոս Ժ. 9. 24)

«Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ

մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք,
վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի»:


**Բայց հասկնանք թէ ի՞նչ ըսել է «խաչը առնել եւ
իր ետեւէն երթալ»: Ան ընդունիլ է Աստուծոյ կամքը եւ
հանդուրժել մեր կեանքի բոլոր վատ պատահարներուն
առանց դժգոհուիթեան:**

«Մեծնայն ինչ ուղիղ է իմաստնոց. է-
յարմարեալ է այնոցիկ ոյ՛՛՛ գրասէն
պարտաւորեան» : (Լուսկայ Ը:9)

«Բոլորն ալ յստակ են հասկցողին համար, եւ ուղիղ՝
գիտութիւն գտնողներուն»:



«Ողորմեա ինչ Աստուած,
ըստ մեծի ողորմութեան չում,
ըստ Բասիլում Գրեթեան չում,
չաւեա պանօրէնութեան իմ»
(Սաղմոս Ծ:1)



Օրինակելի նկարագրի տեր ազնիւ մարդիկ, չար միաբ ունեցող վատ մարդոց ըսած բոլոր անվայել խօսքերը իմանալով Հանդերձ, կը սիրուն բարի եւ անուշ խօսքեր, որոնք բոլորին կ'ըլլան օգտակար ու կու տան սիրտիանք:



Աստուած վերօգտագործելու մասնագետն է: Ան նոյնիսկ մահաբեր աւելցուքներէն օգտակարը կը ստեղծէ:

Ամենակարեւոր օրինակը բոյսերուն ըրած լուսաբաղարկումն (photosynthesis) է: Բոյսերը վնասակար եւ թունաւոր բնածխային թթուն (carbon dioxide) կը ձծեն եւ անոր տեղ կեանքը ապահովող թթուածին (oxygen) կը հայթայթեն: Բոլոր կենդանիները կ'օգտագործեն կը շնչեն թթուածինը եւ կ'արտաշնչեն բնածխային թթուն ...: Եթէ բոյսերը արեւին օգնութեամբ այդ թունաւոր բնածխային թթուն թթուածինի չփոխէին, աշխարհի վրայ կեանքն ալ անկարելի պիտի ըլլար:

Հակառակ այն իրողութեան որ չարը միշտ բարիին վնաս կը հասցնէ, չարութիւնը պետք է փոխտփ բարիի, որովհետեւ թէ Աստուած եւ թէ բնութիւնը բարի են: Մենք յաճախ կը տեսնենք, թէ ամենագեղեցիկը ծագում կ'առնէ սքեղ ակէ մը:

Ահաւասի՛ կ,
բնութեան մեզի
տուած դասը այս է
չարը փոխել բարիի,
վնասակարն ալ՝
օգտակարի:

(ԹՎԱՐԳԱՆՆՈՒԹԻՒՆ Վ.Ս.)



ԶՈՆ ԹԷ ԶՈՆՈՂՈՒԹԻՒՆ

Մարդ արարածը, ընդհանուր առմամբ, ինքզինք իր կեանքի բոլոր վատ պատահարներուն զոհը կը նկատէ: Ինչպէս նախորդ երկու յօդուածներուն մէջ գրուած է, անհատը ինքզինք իր դէմ գործուած անարդարութիւնը կամ վատ պատահարը կիրարկող չարագործին զոհը կը նկատէ: Երբ անոր ենթարկուած վատ պատահարը բնութեան մէկ արարքն է, կամ արկածի մը արդիւնք, այս անգամ ալ, ան ինքզինք «բախտ»ին կամ ճակատագրին զոհը կը նկատէ: Անհատին բնոյթը եթէ վատ պատահարներ գործել է, անհատը ինքզինք կ'արդարացնէ ըսելով, թէ ինք իր միջավայրին հետեւանքը եւ զոհն է: Անտարակոյս անհատի մը կեանքին բոլոր լաւ ու վատ պատահարները, հոգ չէ թէ անոնք գործուած ըլլան մարդու կամ բնութեան միջոցաւ, կամ արկածի պատճառով, իր կերտած ճակատագրին հետեւանքներն են: Լաւ պատահարներուն համար անհատը ինքզինք զոհ չի նկատեր այլ՝ միայն բախտաւոր, իսկ վատ պատահարներուն համար ալ՝ զոհ: Ինք չ'անդրադառնար, թէ անոնք բոլորն ալ իր կենցաղով՝ խորհուրդ, խօսք ու արարքներով կերտած ճակատագրին յառաջ բերած արդիւնքներն են: Այսինքն, ինչ որ ցանած է, ան ալ կը հնձէ:

Երբ անհատ մը ինքզինք զոհ կը համարէ, իր այդ ընբռնումը սխալ չէ: Անհատին սխալը ինքզինք չարագործին, բնութեան կամ արկածին զոհը նկատելն է: Ծշմարտութիւնը այն է, թէ ինք իր կերտած ճակատագրին զոհն է: Եթէ իր խորհուրդ, խօսք ու արարքները վատ են, իր կերտած ճակատագրին ալ վատ պատահարներու պատճառ կ'ըլլայ: Բայց իր վատ կենցաղին պատճառը ի՞նչ է: Անհատը զայն կը վերագրէ իր միջավայրին: Ոեւէ անձ չ'ախորժիր ինքզինք քննարկութեան ենթարկելու եւ ճշմարտութիւնն ալ ընդունելու, հետեւաբար միջավայրը կ'ըլլայ իր

քառութեան նոխազը (*scape goat*): Ան չի հասկնար, որ ոչ թէ՛ միջավայրը իր բնոյթը կ'որոշէ, այլ իր բնոյթն է որ իր միջավայրը կը ստեղծէ, կը կերտէ: Ամէն անհատ իր խորհուրդ, խօսք ու արարքներով կը կերտէ զինք կազմող զօրութեան որակը եւ իրեն կը քաշէ համապատասխան զօրութեան որակ ունեցող միջավայր եւ պատահարներ:

Ամէն անհատի ազատ կամ ք մը տրուած է, որպէսզի ան կարողանայ իր այդ ազատ կամքով իր բնոյթը որոշել: Ան կարող է զատել իր անհատականութեան ժխտական բեւեռը՝ իր «Ես»-ը եւ ըստ այնմ կերտել իր կենցաղը, այսինքն՝ եսասիրութեամբ: Ան կարող է նաեւ զատել իր անհատականութեան դրական բեւեռը՝ Քրիստոս եւ ըստ այնմ՝ ըստ Աստուծոյ կամքին կերտել իր կենցաղը: Եւ ի՞նչ է Աստուծոյ կամքը: Ան փոխանակ եսասիրութեան այլասէր ըլլալն է: Եթէ կ'ընդունինք, թէ Աստուած ամենուրեք է, ուրեմն պէտք է ընդունինք թէ բոլոր ստեղծագործութիւնը կը ներկայացնէ Աստուծոյ մարմինը: Ինչպէս մեր մարմնի ամէն մէկ բջիջը կը գործէ այլասիրութեամբ՝ յօգուտ ընդհանուր մարմնին, մենք ալ, որպէս Աստուծոյ մարմնին մէջ մի բջիջ, պարտ ենք գործել այլասիրութեամբ՝ յօգուտ ընդհանուր մարմնին, քան թէ եսասիրութեամբ՝ որպէս քաղցքեղ՝ արժանի «կտրուելու ու նետուելու»: Մարդ, ընդհանուր առմամբ, կը ճօճի իր անհատականութեան երկու բեւեռներուն միջեւ եւ երբեմն կը կատարէ Աստուծոյ կամքը եւ երբեմն ալ իր «Ես»-ին կամքը: Այս հիման վրայ ալ ան երբեմն կ'ենթարկուի լաւ եւ երբեմն ալ վատ պատահարներու: Երբ ան կը գործէ ըստ իր «Ես»-ին կամքին, իր այդ կենցաղն ալ կ'ըլլայ եսասէր: Երբ իր այս եսասէր արարքին հետեւանք ան ապագային ենթարկուի վատ պատահարի մը, կը նշանակէ թէ ինք իր «Ես»-ին գոհն է:

Յիսուս ալ ամենասուղի վատ պատահարի մը ենթարկուեցաւ: Արդեօք կարելի է՞ ըսել, թէ Ան իր «Շա»-ին զոհն էր: Բացարձակապէս ո՛չ: Բայց կարելի է ըսել, թէ Յիսուս իր զոհողութեան զոհն էր: Երբ անձ մը ինք զինք կ'ենթարկէ վատ կացութեան մը ուրիշ անձի մը օգնելու համար, ինքզինք չի նկատեր իբրեւ զոհ, այլ իր արարքը կ'ըլլայ զոհողութիւն: Երբ մայր մը իր հանգիստը, իր քունը, իր խաղաղութիւնը, իր հաճոյքները եւ իր անդորրութիւնը կը զոհէ իր զակիւն համար, ինք այդ բոլորը կ'ընէ յօժարաբար եւ ինքզինք զոհ չի նկատեր: Իր ըրածը զոհողութիւն է: Յիսուս իր կեանքը տուաւ եւ մահը «համտեսեց», ոչ թէ իր հարազատներուն համար այլ՝ օտարներուն, նոյնիսկ իբրեւ Հրեայ, իր թշնամիին՝ հռովմէացի հարիւրապետին համար՝ երբ բժշկեց ծառան:

Յիսուս մեզի սորվեցուց Աստուածահաճոյ կենցաղ մը կերտել: Ան սորվեցուց իր յորդորներով եւ առակներու օրինակներով, բայց սորվեցնելու ամենաազդեցիկ միջոցը օրինակ ըլլալն է: Ան իր կեանքի բոլոր արարքները օգտագործեց մեզի սորվեցնելու համար, թէ ինչպէս պարտ ենք կերտել Աստուածահաճոյ կենցաղ մը: Շատ անգամ կ'իմացուի, թէ մայր մը, կամ հայր մը իր զաւակը վտանգէ մը ազատելու համար իր անձը զոհած է: Բայց շատ հազուադիւտ կ'իմացուի, թէ անձ մը օտար մը կամ թշնամի մը ազատելու համար ինքզինք զոհած է: Եթէ մենք մեզ կը համարենք Քրիստոնեայ, պարտ ենք հաւատալ Յիսուսի, հասկնալ իր սորվեցուցածները եւ զանոնք կիրարկել մեր կեանքին մէջ, քան թէ ծառայել մեր «Շա»-ին եւ ըլլալ անուանական Քրիստոնեաներ:

Երբ մարդ իր ազատ կամքով կ'ընտրէ իր «Շա»-ը եւ կը հետեւի անոր յորդորներուն, կ'ըլլայ եսասէր եւ ուշ կամ կանուխ կը դառնայ անոր զոհը: Իսկ երբ

անհատը իր ազատ կամքով ընտրէ իր ներքին Քրիստոսը եւ հետեւի Անոր յորդորներուն, ամենեւին զոհ չ'ըլլար, այլ՝ միայն զոհաբեր եւ կ'արժանանայ իր մէջ Քրիստոսի Յարուսեան, որ կը կոչուի նաեւ անձին մէջ Աստուածայայտնութիւն:

Վերեւ գրուած է, թէ մարդ ընդհանուր առմամբ կը կարծէ իր միջավայրին զոհը ըլլալ: Բայց ճշմարտութիւնը այն է, թէ իր միջավայրը կերտողը ինքն է: Այս ուղղութեամբ յարմար է հետեւեալ պատմութիւնը հոս ներկայացնել: Երիտասարդ մարդ մը ամէն շաբաթավերջ՝ Շաբաթ եւ Կիրակի օրերը, իր տան մէջ ընկերովի կը հաւաքուին եւ արբեցուցիչ ըմպելիներ խմելով կը զուարճանան: Այս երեւոյթը տարիներ կը շարունակուի: Օր մը, տարեկան բժշկական քննութեան հետեւանք, բժիշկը զինք կը զգուշացնէ, ըսելով, թէ ալքոլը իր լեարդին եւ սրտին վրայ բաւական ժխտական ազդեցութիւն մը ունեցած է եւ եթէ չդադրի խմելէ հաւանական է, որ երկու կամ երեք տարի յետոյ մահանայ: Մահուան վախը պատճառ կ'ըլլայ որ ան ոգելից ըմպելիներէ հրաժարի: Ընկերները կը շարունակեն հաւաքուիլ իր տան մէջ եւ նոյնպէս խմել եւ զուարճանալ, բայց ինք միայն պտուղի ջուր կը խմէ եւ ոչ ալքոլ: Անտարակոյս, հաւաքոյթին մասնակից իր բոլոր ընկերները, ինչպէս առաջուց, կը գինովնան եւ իրարու հետ ըստ այնմ կը վարուին: Ինք չի գինովնար: Երբ յաջորդ օր դարձեալ կը հաւաքուին, ընկերները տակաւին չխմած եւ չգինովցած, ան կը սկսի պատմել անոնց ըրած խայտառակութիւնները: Անոնք գինովցած, չէին գիտեր կամ չէին յիշեր թէ ինչեր ըրած էին: Ընկերները չեն ախորժիր իրենց մէջ զգաստ եւ ժուժկալ անձի մը ներկայութենէն, որ կը տեսնէր իրենց գինովցած վիճակը եւ կատարած խայտառակութիւնները: Մի քանի շաբաթուայ ընթացքին

կամաց կամաց կը հեռանան ու կը հրաժարին իրեն այցելութիւն տալէ: Երիտասարդին դրացիին աղջիկը, որ նաեւ իր դպրոցական դասընկերուհին եղած է, անոր հանդէպ միշտ համակրանք մը ունեցած է: Բայց ծնողքը, երիտասարդին անպատասխանատու ապրելակերպին պատճառաւ, զինք արգելած են որ անոր հետ ընկերակցի: Ժամանակ մը վերջ երբ աղջկան ծնողքը կը տեսնեն անոր փոխուած կենցաղը, կ'արտօսեն որ իրենց աղջիկը անոր հետ ընկերակցի: Ժամանակի ընթացքին անոնց ընկերութիւնը աւելի սերտ կ'ըլլայ, միասին երեկոյեան ճաշի եւ պարելու կ'երթան: Աղջիկը, որ ծերանոցի մը մէջ որպէս հիւանդապահուհի կ'աշխատի, իր ընկերոջ կը թելադրէ շաբաթավերջին ծերանոցին մէջ ծերերուն կամաւոր օգնել՝ ճաշ կերցնել, պարտէզը պտտցնել...: Բոլոր կամաւորները նաեւ ամիսը անգամ մը ծերունիները զուարճացնելու համար մասնաւոր արուեստագրօս երեկոյ մը կը կազմակերպեն: Երիտասարդն ալ անոնց կը մասնակցի՝ իր կիթառով նուագած եղանակներով: Ժամանակի ընթացքին նոր բարեկամութիւններ կը հաստատէ եւ իր կեանքը զգալիօրէն կը փոխուի բաղդատմամբ իր նախորդ ընկերներուն հետ վարած կեանքին:

Մենք ալ պարտ ենք մենք զմեզ փոխել եւ ըլլալ զոհաբեր քան թէ զոհ:

Մեր կեանքի վատ պատահարներուն համար մենք մեր «Ես»-ին զոհն ենք, իսկ այդ վատ պատահարները, որոնք մեր վճարած պարտքերն են, անոնք ալ մեր հոգիին համար մեր կատարած զոհողութիւնները:



ԶՈՀ,



ԹԷ՞



ԶՈՀՈՂՈՒԹԻՒՆ



ԱՅՆ ԾԱՌԵՐԸ,
ՈՐՈՆՔ ԱՌԱՆՅ
ՆԵՑՈՒԿԻ ԵՒ
ԴԱՆԴԱՂՕՐԷՆ
ԿԸ ՄԵԾՆԱՆ,
Կ'ԸԼԼԱՆ
ՀԱՍՏԱԲՈՒՆ

ԲԱՅՑ
ԱՆՈՆՔ,
ՈՐՈՆՔ
ՆԵՑՈՒԿՈՎ
ԿԸ ՄԵԾՆԱՆ,
ԵՒ ԱՐԱԳ
ՅԱՌԱՋԻԿԱՅԻՆ
ԿԸ ԾՌԻՆ:



ԱՍՏՈՒԱԾ ԱՐԴԱՐ Է, ԹԷ ՈՉ

Փոքր տարիքէն մեզի սորվեցուցին, թէ Աստուած արդար է: Աշխարհի վրայ առաջին քրիստոնեայ պետութիւնը ըլլալու հպարտութեամբ, Մեծ Եղեռնի օրերուն շատեր ըսին: «Ո՞ր է Աստուծոյ արդարութիւնը»:

Ի՞նչ կը հասկնանք երբ կ'ըսենք. «Աստուած արդար է»: Շատեր կը խորհին թէ Աստուած «երկինք»-ը Իր գահին վրայ նստած աշխարհը եւ համայն մարդկութիւնը կը դիտէ եւ զանոնք իրենց գործած լաւ արարքներուն համապատասխան կը վարձատրէ եւ վատ արարքներուն՝ մեղքերուն համար ալ կը պատժէ: Անտարակոյս այս հայեացքը սխալ եւ երախայական հասկացողութիւն է: Մարդ արարած, այս հիման վրայ, ստեղծած է «երկինք»-ը՝ «դրախտ»-ը, ուր բարիները յաւիտեան պիտի գոյատեւեն եւ «դժոխք»-ը, ուր չարերը յաւիտեան պիտի տառապին, այսինքն՝ անվերջ ժամանակ: Մարդ տակաւին չէ կրցած ըմբռնել, թէ յաւիտենականութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ժամանակի դրութեան դուրս ըլլալ է: Միայն Աստուած յաւիտենական է: Նմանապէս, թէ՛ «դրախտ»-ը, թէ՛ ալ «դժոխք»-ը հո՛ս, աշխարհի վրայ են: Մենք կարող ենք մեր կեանքը վերածել դրախտի, կամ դժոխքի:

Յիսուս բացայայտօրէն սորվեցուցած է թէ ի՞նչ է Աստուծոյ արդարութիւնը: Ան նաեւ այս ուղղութեամբ նկատողութեան առած է թէ՛ Հայր Աստուած, թէ՛ Որդին՝ Քրիստոս եւ թէ՛ Ս. Հոգին:

Ուրեմն տեսնենք, թէ Աստուած արդա՞ր է, թէ ոչ: Կ'ըսենք, թէ Աստուած մէկ է: Այսինքն մէկ էութիւն, բայց երեք «Անձիք»՝ Հայր Աստուած, Որդին՝ Քրիստոս եւ Ս. Հոգին: Ի՞նչ էր Յիսուսի սորվեցուցածը: Յիսուսի սորվեցուցածը այն էր, թէ ո՛չ Հայր Աստուած եւ ո՛չ ալ Որդին՝ Քրիստոս արդար են, այլ միայն Ս. Հոգին արդար է: Շատ հաւանաբար նման հայեացք մը

չատերուն զարմանք պատճառէ: Ուրեմն ուսումնասիրենք, թէ Յիսուս ի՞նչ սորվեցուց: Որովհետեւ Յիսուս իր առականերէն «Անառակ որդիին» առակը գործածեց իբր օրինակ ցոյց տալու համար իր այլ խօսքերով սորվեցուցածները:

«Ամէն ասեմ յեզ, պիտի ամենայն թողցի որդեգրման մարտնչան մեզի՝ եւ Հայհոյութիւնն՝ որչափ եւ Հայհոյեացեն, թայց որ Հայհոյեացէ պարտին սորբ, ոչ ունիցի թողութիւնն յաւիտեան, այլ պարտապան լիցի յաւիտենիցն մեղաց»: (Մարկոս Գ: 28-29)

«Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի թէ՛ ամէն մեղք պիտի ներուի մարդոց որդիներուն եւ Հայհոյութիւնները՝ որչափ որ Հայհոյեն: Բայց ով որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյէ, յաւիտեան թողութիւն պիտի չունենայ, Հապա յաւիտենական դատաստանին պարտաւոր պիտի ըլլայ»:

«Եւ ամենայն որ ասէ թան պարտեայ մարդոց, թողցի նմա. թայց որ պարտին սորբ Հայհոյեցէ, մի թողցի նմա»: (Ղուկաս ԺԲ: 10)

«Ամէն ով որ Որդի մարդոյ դէմ բան ըսէ, պիտի ներուի անոր, բայց ան որ Սուրբ Հոգիին դէմ Հայհոյութիւն ընէ, պիտի չներուի անոր»:

«... ամենայն մեղքի եւ Հայհոյութիւնն թողցին մարտնչան, թայց պարտեայն Հայհոյութիւնն մի թողցի»: (Մարկոս ԺԲ: 31)

«... Ամէն մեղք ու Հայհոյութիւն պիտի ներուի մարդոց. բայց Սուրբ Հոգւոյն դէմ եղած Հայհոյութիւնը պիտի չներուի մարդոց»:

«Անառակ որդի»-ին առակը վերելի մեջբերումներուն հիման վրայ ուսումնասիրենք: Անառակ որդին իր հօրմէն առաւ այն ինչ որ իրեն ժառանգ պիտի իյնար ու լքեց հօրը տունը: Ի՞նչ է Հօրմէն մեզի ինկած

Ժառանգը: Ի՞նչ է Հայր Աստուծոյ ստացուածքը: Միթէ Քրիստոս չըսա՞ւ. «Ես եմ կեանքը»: Հետեւաբար Հայր Աստուծոյ ստացուածքն ալ կեանքն է եւ մեր ժառանգն ալ մեր աշխարհիկ կեանքն է, ինչպէս նաեւ մեր գիտակցութիւնը: Այս աշխարհիկ կեանքը իր նպատակը ունի, ինչ որ մեր ստացած ժառանգը օգտագործել եւ բազմիցս անգամ զայն բազմացնել է՝ մինչեւ Աստուծայայտնութեան մեր մէջ իրականացումը: Բայց ընդհանուր առմամբ մարդ ի՞նչ կ'ընէ: Ան, հետեւելով իր «Ես»-ին յառաջ բերած ցանկութիւններուն, հաճոյքներուն, իրեն տրուած այդ ժառանգը կը վատնէ, կը մսխէ եւ կ'անտեսէ Հայր Աստուծոյ իրեն տուած պարտականութիւնը: Երբ «անառակ որդին» հասկցաւ, թէ իր ստացած ժառանգը վատնած էր, հօր տունը վերադարձաւ: Հայրը զինք բազուկները բաց ընդունեց: Մարդ արարած ալ իր ստացած ժառանգը՝ կեանքը կը վատնէ եւ խոր ծերութեան կ'անդրադառնայ, թէ վատնած է իր կեանքը եւ այդ ձեւով ալ Երկնային Հօր քով կը վերադառնայ: Հայրը զինք «բազուկները բաց» կ'ընդունի: Հայր Աստուած չ'ըսեր. «Քեզի տրուած ժառանգը վատնեցիր, կամ կեանքիդ նպատակը չգործադրեցիր, հետեւաբար քեզ պէտք է պատժեմ»: Այլ, Հայր Աստուած կը ներէ, որովհետեւ ներողամիտ է եւ ողորմած: Իր Որդին դարձեալ ետ կ'ընդունի: Որովհետեւ Հայր Աստուած չի պատժեր, ուրեմն ինք արդարութիւն չ'ուզեր, արդարութիւն չի փնտռեր, այլ միայն ներում: Հետեւաբար Հայր Աստուած արդար չէ, այլ Ան ներողամիտ եւ ողորմած է:

Որդին՝ Քրիստոս ամէն անհատի էութիւնն է եւ կեանքը՝ Հայր Աստուծոյ տուած ժառանգը: Բայց մարդ իր խաւարամտութեամբ կ'անտեսէ իր մէջ թաղնուած այդ գանձը՝ Քրիստոս եւ կ'առնէ իր «Ես»-ը եւ զայն կը նստեցնէ Աստուծոյ տաճարին՝ իր մարմնին մէջի գա-

հին վրայ եւ կ'արտօնէ, որ ինք կառավարուի իր «Ես»-
էն, քան թէ արտօնէ, որ Քրիստոս զինք կառավարէ: Աս
գործածը ահռելի մեղք մըն է: Բայց Յիսուս ըսաւ, թէ
Որդի մարդոյ դէմ եղած մեղքերը՝ հայհոյութիւնները,
բոլորն ալ ներելի են: Երբ «անառակ որդին» անդրադար-
ձաւ իր գործած սխալին եւ անտեսեց իր «Ես»-ը, հեզ եւ
խոնարհ, հօրը ըսաւ, թէ ինք այլեւս արժանի չէ իր
որդին կոչուելու եւ խնդրեց միայն իր ծառան ըլլալ:
Բայց Որդին՝ Քրիստոս զինք ներեց, որովհետեւ ան իր
դասը սորված եւ անտեսած էր իր «Ես»-ը: Որով ինք ալ
ներուած, Հօրը իրեն համար սարքած խնճոյքին արժա-
նացաւ: Իր եղբայրը, որ ոչ հօրը՝ «Հայր Աստուծոյ» դէմ
եւ ոչ ալ «Ս. Հոգիի» դէմ մեղանչած էր, հակառակ Հօրը
պաղատանքներուն, չմասնակցեցաւ խնճոյքին, որովհե-
տեւ իր Որդւոյն՝ Քրիստոսի դէմ գործած ներելի մեղ-
քէն դարձի չեկաւ եւ չկրցաւ անտեսել իր «Ես»-ը ու
անկէ յառաջ եկած բարկութեամբ եւ նախանձով ինք-
զինք զրկեց խնճոյքին մասնակցելէ՝ Աստուծոյ թագա-
ւորութեան արժանանալէ: Որովհետեւ Որդին՝ Քրիստոս
ալ ողորմած եւ ներողամիտ է, որով արդար չէ: Ուստի
Ան արդարութիւն չի փնտռեր: Բայց անձը պարտ է իր
Որդւոյն դէմ գործած մեղքին անդրադառնայ եւ ապ-
աշխարհ, որպէսզի ներուի:

Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնն է եւ Հայր Աստու-
ծոյ դրած զօրութեան օրէնքներուն համաձայն կը
գործէ: Յիսուս ըսաւ, թէ Ս. Հոգիին դէմ գործուած
մեղքերը աններելի են: Հետեւաբար «անառակ որդին»
իր բոլոր վատ արարքներուն համար, որոնք Ս. Հոգիի
զօրութեան դէմ գործուած մեղքերն էին, ենթարկուե-
ցաւ անոնց յառաջ բերած բոլոր հակազդեցութիւն-
ներուն: Ան անօթի եւ թշուառ տառապեցաւ եւ չար-
չարուեցաւ, մինչեւ կարօտ խոզերու ուտելիքին:

Ամէն անհատ իր Ֆիզիքական եւ մտային «մար-

մին»-ներէն զատ ունի նաեւ զօրութեան մարմին մը: Մարդ, իր կենցաղով՝ խորհուրդ, խօսք ու արարքներով, ինք կը կերտէ իր զօրութեան մարմնին թրթռացումի յաճախականութիւնը: Իր կերտած այդ յաճախականութեան համաձայն, մագնիսի մը նման, իրեն կը քաշէ ներդաշնակ յաճախականութիւն ունեցող պատահարները եւ կացութիւնները: Մարդ ինքն է իր միջավայրին, իր կեանքի պայմաններուն ու պատահարներուն ճարտարապետը: Աս ըսել չէ, թէ Ս. Հոգին մեզ կը պատժէ: Ս. Հոգին չէզոք է: Ս. Հոգին չի պատժեր: Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնն է: Ան անընդհատ մեր վրայ կը տեղացնէ իր շնորհները, բայց մեզմէ կախեալ է, թէ որքանով կ'օգտուինք անոնցմէ: Ս. Հոգիի զօրութեան ո՞րքան կ'արտօնենք, որ ան ներգործէ մեր էութեան ներս: Բայց Յիսուս ըսած էր, թէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այս խօսքով Յիսուս ըսել կ'ուզէ, թէ այն ինչ որ մենք պատիժ կը համարենք, մեր ցանած հունտերուն յառաջ բերած հունձքերն են եւ ոչ թէ Ս. Հոգիէն եկած պատիժ մը: Աս լաւ հասկնալու համար նկատողութեան առնենք հետեւեալ կացութիւնը: Եթէ անձ մը տան երկրորդ յարկի պատշգամէն դուրս քալէ անտարակոյս վար կ'իյնայ եւ շատ հաւանական է, որ վիրաւորուի՝ սրունքը կոտրի: Արդեօք կարելի է՞ ըսել թէ Աստուած զինք պատժեց: Նոյնիսկ անասունները անգամ գիտեն ձգողական ուժին (gravitational force) դէմ չգործել: Շունը կամ կատուն հազար անգամ կը նային, թէ արդեօք իրենք կարող են այդ հեռաւորութիւնը ցատկել եւ երբ չեն համարձակիր, չեն ցատկեր, որովհետեւ չեն ուզեր վիրաւորուիլ: Երբ որեւէ զօրութեան օրէնքին դէմ գործենք անոր յառաջ բերած հակազդեցութեան կ'ենթարկուինք: Աստուած իմաստութիւն տուած է, պարտ ենք զայն դրական կերպով օգտագործել, ապա թէ ոչ կ'ենթարկուինք զանազան

անբաղձալի պատահարներու, որոնց բոլորին ճարտարապետը մենք եղած ենք:

Ձարմանալին այն է, թէ մարդ չի գիտեր, թէ ինչ է Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը: Բոլոր ստեղծագործուած թիւերը եւ ստեղծագործութեան մէջի ամէն ինչ Ս. Հոգիի զօրութեամբ կազմուած են, որ այսօր ամբողջական բնագիտութիւնը (quantum physics) զայն «մութ զօրութիւն» (dark energy) կոչած է: Հետեւաբար որեւէ վատ խօսք մը կամ արարք մը դէմ բոյսի, անասունի կամ ուրեւէ անձի, կը ներկայացնէ Ս. Հոգիի դէմ գործուած մեղք: Պէտք է մոռնալ, թէ մենք ալ Ս. Հոգիի զօրութեամբ կը գոյատեւենք: Ուրեմն Ս. Հոգիի դէմ որեւէ արարք մեզ կազմող զօրութեան դէմ գործուած արարք մըն է: Արդեօք պէ՞տք է զարմանանք, թէ ինչ որ ցանենք նոյնն ալ կը հնձենք: Մեր կեանքի բոլոր լաւ, հաճելի ինչպէս նաեւ վատ եւ անբաղձալի պատահարները՝ հիւանդութիւն, թշուառութիւն, ցախորդութիւն, կորուստ ..., բոլորն ալ մեր ցանած «հունտ»-երուն հետեւանքներն են: Ուրեմն անոնց համար ամենեւին պէտք է մեղադրենք Աստուած կամ ուրիշ անձ: Նոյնիսկ երբ գողը մեր տունը կը մտնէ եւ մեր ինչքերը կը գողնայ, պէտք է հասկնանք, թէ գողը միայն միջնորդն է կատարելու այն ինչ որ պէտք էր ըլլար եւ մենք պէտք էր այդ կորուստին ենթարկուէինք: Եթէ մենք մէկը խաբած ենք, ըստ օրէնքի, ուրիշ մըն ալ մեզ պիտի խաբէ: Դժբախտաբար մարդ չի կրնար իր գործած մեղքին եւ իր ենթարկուած վատ պատահարին իրարու հետ ունեցած կապը հաստատել, որովհետեւ տարիներ կամ կեանքեր կրնան զանոնք իրարմէ բաժնել: Աստուծոյ զօրութեան՝ Ս. Հոգիի օրէնքները, որ Հայր Աստուծոյ կողմէ դրուած են, անխախտելի են: Հետեւաբար պարտ ենք ուշադիր ըլլալ եւ անոնց դէմ չգործել: Ահա՛, աս էր, որ Յիսուս մեզի սորվեցուց:

Շատեր կ'ըսեն, թէ այս հայեացքը սխալ է, որովհետեւ Յիսուս անձերու հիւանդութիւնները բազմիցս բուժեց եւ անոնց մեղքերը ներեց: Ուրեմն այդ մեղքերն ալ ներելի են: Յիսուս աշխարհ եկաւ մարդկութեան օգնելու եւ կատարելութեան ուղին, հետեւաբար փրկութեան ճամբան սորվեցնելու համար: Յիսուս, որ իր մէջ Քրիստոսը լրիւ յայտնաբերած էր, ցոյց տուաւ Քրիստոսի ողորմածութիւնը եւ իր ներած բոլոր մեղքերուն յառաջ բերած պարտքերը չէին անհետացած, որովհետեւ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են: Այլ Յիսուս, իր ողորմածութեամբ այդ պարտքերը, բոլորն ալ խաչին վրայ չարչարուելով ինք վճարեց: Յիսուս Քրիստոս, Հայր Աստուծոյ Որդւոյն մարդեղութիւնն է, հետեւաբար ողորմած է եւ մարդասէր: Յիսուս յարութիւն առաւ, Ան, նոյնիսկ այսօր Ս. Հոգիի դէմ մեր գործած մեղքերուն յառաջ բերած «պատիժները» պարտքերը կը մեղմացնէ, եթէ անշուշտ մենք մեր դասը սորված ենք եւ նոյն մեղքերը այլեւս չենք գործեր: Համայն մարդկութիւնը Աստուծոյ կ'աղօթէ, որպէսզի ազատի իր կեանքի անբաղձալի պատահարներէն, հիւանդութիւններէն եւ այլն: Արդեօք աս եսասիրութեան դադաթնակէտը չէ՞: Արդեօք մենք պէտք է՞ յօժարինք որ Յիսուս Քրիստոս մեր գործած մեղքերուն համար չարչարուի: Չեմ կարծեր: Մեր աղօթքը իրմէ համբերութիւն, տոկալու կարողութիւն եւ մեր դասը սորվելու գիտակցութիւն խնդրել պէտք է ըլլայ:

Ուրեմն Աստուած արդա՞ր է, թէ ոչ: Աստուած սէր է եւ սէրն ալ արդարութիւն չի փնտռեր: Հետեւաբար ոչ Հայր Աստուած եւ ոչ ալ Որդին՝ Քրիստոս արդար են, այլ Անոնք սէրով լի ողորմած եւ ներողամիտ են: Բայց մարդ կ'ըսէ, թէ Աստուած արդար է, որովհետեւ Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են:



ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ՝

ԳԻՏՆԱԿԱ Է,

ԹԷ ԵՍ ՈՉԻՆՉ ԵՄ:

ՍԷՐԸ՝

ԳԻՏՆԱԿԱ Է,

ԹԷ ԵՍ ԱՄԷՆ ԻՆՉ ԵՄ:



**ԵՒ ԱՅՍ ԵՐԿՈՒՔԻՆ ՄԻՋԵՒ Է,
ՈՐ ԻՄ ԿԵԱՆՔԱ Կ՛ՐՆԹԱՆԱԿ:**

ՍՐԻ ՆԻԱՐԿԱՏԱԹԹԱ

(ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ Վ.Ս.)

ՈՒՍՈՂՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՄԱՐԴՈՒՆ ԿԵՆՑԱՂԸ

Համացանցի միջոցով հետեւեալ մաթէմատիկական հաւասարութիւնը ստացայ, ուր մատնանշուած էր, թէ զայն լուծողները երկուքի բաժնուած էին: Լուծողներուն 40%-ին պատասխանը «1» էր, իսկ 60%-ինն ալ՝ «16»:

$$8 : 2(2+2) = X$$

Դուք ի՞նչ կը խորհիք: Ո՞րն է ճիշդ պատասխանը՝ $X=16$, թէ $X=1$: Հաճեցէք համբերատար ըլլալ: Ստորեւ պիտի ներկայացուի ճիշդ լուծումը:

Ըստ իմ կարծիքին վերեւ ցոյց տրուած հաւասարութիւնը փոխաբերաբար կը ներկայացնէ համայն մարդկութեան ջախջախիչ մեծամասնութեան իր կեանքին նկատմամբ ունեցած հասկացողութիւնը: Այս հիման վրայ մարդ շուարած, չի գիտեր թէ ինչ է իր վարելիք ճիշդ կենցաղը: Անտարակոյս, մարդուն կենցաղը կախեալ է իր ենթագիտակցութեան մէջ ամբարած տեղեկութիւններէն եւ հաւատալիքներէն: Անոնց մեծ մասը իր կրօնքին տուած հաւատալիքներն են: Բայց եթէ անձին իր կրօնքի նկատմամբ հասկացողութիւնը կը համապատասխանէ վերեւի հաւասարութեան, անձն ալ շուարած պիտի չկարենայ գտնել կատարելութեան ուղին եւ ապրիլ պատշաճ կենցաղով մը: Երբ նախառջարկը կամ ենթադրութիւնը սխալ է կամ շփոթեցուցիչ, անտարակոյս, արդիւնքն ալ կ'ըլլայ սխալ կամ շփոթեցուցիչ: Յիսուս մեզի սորվեցուց կատարելութեան ուղին՝ միայն մէկ կատարելութիւն եւ միայն մէկ ուղի: Իսկ մենք ստեղծած ենք բազմաթիւ հաւատալիքներ եւ այս հիման վրայ ալ՝ բազմաթիւ յարանուանութիւններ եւ աղանդներ: Անտարակոյս ամէն մի յարանուանութիւն ու աղանդ կը պնդէ իր հաւատացա-

ծին ճշգրտութեան: Անկարելի է որ բոլորն ալ ճիշդ ըլլան: Մարդ եթէ սխալ ըմբռնած է Յիսուսի սորվեցուցած կատարելութեան ուղին, ան իր ենթադրութեամբ յօրինած է կենցաղ մը, որ կը համապատասխանէ վերեւ տեղադրուած հաւասարութեան, եւ վարած կենցաղն ալ կ'ըլլայ սխալ եւ շփոթ:

Ինչպէս շատեր մաթէմատիկի մէջ հմուտ չեն եւ չեն կրնար հասկնալ թէ հաւասարութիւնը սխալ ներկայացուած է, կը ջանան իրենց սահմանափակ մաթէմատիկական գիտութեամբ լուծել հաւասարութիւնը եւ շփոթիլ թէ որն է ճիշդ լուծումը: Մարդ նոյնը կ'ընէ իր կեանքին մէջ եւս եւ կեանքի ճշմարտութեան նկատմամբ իր սահմանափակ գիտութեամբ կ'ապրի իր կեանքը որ հեռու է կատարելութեան ուղիէն: Եթէ ինք կ'ուզէ լուծել վերեւի հաւասարութիւնը նախ պարտ է քիչ մը մաթէմատիկական օրէնքները սորվիլ եւ այն ատեն պիտի հասկնայ թէ հաւասարութիւնը իրեն սխալ ներկայացուած է: Նմանապէս, եթէ անձը կ'ուզէ կատարելութեան ուղիէն յառաջանալ, նախ պարտ է սորվիլ Յիսուսի սորվեցուցած օրէնքները՝ նկատմամբ կատարելութեան ուղիին: Այն ատեն ինք ալ պիտի հասկնայ թէ ան առաջուց իրեն սխալ կերպով ներկայացուած էր եւ աս է պատճառը իր կեանքին մէջի անբաղձալի պատահարներուն:


Ինչպէս մաթէմատիկը ճշգրիտ գիտութիւն (exact science) մըն է, նմանապէս Կեանքն ալ ճշգրիտ գիտութիւն մըն է, բայց դժբախտաբար շատ քիչեր կը յաջողին ճշգրիտ կենցաղով մը ապրիլ: Անոնք որոնք «Կեանք»-ի օրէնքները լաւ գիտեն եւ կ'ապրին այդ օրէնքներուն համաձայն եւ ներդաշնակօրէն, ամենեւին չեն ենթարկուիր անբաղձալի պատահարներու եւ դժուարին ժամանակներու: Իսկ մեծամասնութիւնը, իր խաւարամտութեան հետեւանք եւ «կեանք»-ի օրէնքներ-

ըրուն նկատմամբ իր անգիտութեան, կ'ապրի կեանք մը որ յաճախ հակասական է այդ օրէնքներուն եւ ինք ալ կը ստեղծէ իր կեանքի բոլոր վատ պատահարները, որոնց ինք կ'ենթարկուի:

Իսկ Կեանքի օրէնքները Աստուծոյ դրած Ս. Հոգիի զօրութիւնը կառավարող անխախտելի օրէնքներն են:

Ուրեմն վերադառնանք վերելի հաւասարութեան եւ հասկնանք թէ ո՞ւր է սխալը: Հաւասարութիւնը ինք սխալ ներկայացուած է եւ չի համապատասխաներ մաթէմատիկական օրէնքներուն: Կրնանք ըսել թէ ան ներդաշնակ չէ մաթէմատիկական օրէնքներուն հետ, հետեւաբար պատճառ կ'ըլլայ շփոթութեան: Շփոթութիւնը կը ծագի այն իրողութենէն թէ այդ հաւասարութիւնը ճշգրիտ ըլլալով կարելի է երկու ձեւերով գրել՝ ներկայացնել: Որովհետեւ երկու ճշգրիտ հաւասարութիւններ կան անոնց ամէն մէկը պիտի ունենայ միայն մէկ լուծում եւ մէկ պատասխան առանց շփոթութեան: Հետեւեալները կը ներկայացնեն երկու զատ հաւասարութիւնները իրենց անշփոթ լուծումներով:

$$\frac{8}{2(2+2)} = 1 \quad \text{եւ} \quad \frac{8(2+2)}{2} = 16 \quad \text{կամ} \quad (8:2)(2+2)=16$$



**Առաջին հայերէն
նախադասությունը**

**Ճանաչել զիմաստութիւն և զիբրատ,
իմանալ զբանս հանճարոյ:**

**Ճանաչել իմաստությունն ու
յիբատը, իմանալ հանճարի
խտարը:**

Բոլորը զիտեն հայերէն տասերով
գրված այս առաջին
նախադասությունը, բայց քչերին է
հայտնի, որ այդ նախադասությունը
Աստվածաշնչից է:



**ԼՈՒԹԻՒՆԸ՝
ԱՍՏՈՒԾՈՅ ԼԵՉՈՒՄ Է:
ՄԻՄ ԲՈՂՈՐ ԼԵՉՈՒՄԵՐԸ
ԽԵՂՃ ԵՒ ՏԿԱՐ
ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՆ:**

ՐՈՒՄԻ
(ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՄ Վ.Ս.)

ՄԵՂՔԸ ԵՒ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

Ի՞նչ է մեղքը: «Լոյս ի Լուսոյ (Ա)» գիրքիս ժԳ. գլխուն մէջ (չջ 379) զանազան տեսակի մեղքերու մասին ընդարձակ տեղեկութիւն տուած էի: Այս յօդուածը կարելի է նկատել անոնց բիւրեղացումը եւ անոնց տրուած այժմէական հասկացողութիւն մը:

Այն բոլոր բաները, որ մենք մեղք կը համարենք ծագում կ'առնեն մարդու գործած ահուելի եւ գլխաւոր մէկ մեղքէ մը: Հետեւաբար անտեսելով այն բոլոր մեղքերը, ներառեալ մահացու մեղքերը, պարտ ենք գիտնալ այդ մէկ գլխաւոր մեղքը եւ զայն չգործել: Եթէ կարենանք աս իրականացնել միւս բոլոր մեղքերն ալ ինքնաբերաբար կ'անհետանան:

Մարդուն առաջին մեղքը, որ Ադամական մեղքն էր, իր անկումին պատճառ եղաւ եւ մինչեւ այսօր մարդ իր այդ անկեալ վիճակէն չէ կարողացած ինքզինք ձերբազատել: Մովսէսի տասը պատուիրաններուն առաջին երկուքը հետեւեալներն էին. «Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս» եւ «Դուն քեզի կուռք չչինես»: Իսկ Մովսէսին տուած երրորդ պատուիրանն ալ հետեւեալն էր. «Տէրօջը, քու Աստուծոյդ անունը պարապ տեղ բերանդ չառնես»: Այս վերոյիշեալներուն մեղքի հասկացողութիւնը թէ մեզի՝ քրիստոնեաներուս, թէ ալ հաւանաբար, հրեայ կրօնքին պատկանողներու համար, յառաջ կու գայ անոնց ներկայացուցած բառացի իմաստներէն: Ասոնք են Ադամի անհնազանդութիւնը, ինչպէս նաեւ զանազան կրօններու պաշտած արձանները, որոնք կուռք կը համարենք եւ տարբեր չաստուածներ: Այս հիման վրայ նաեւ անոնց գործածած զանազան անունները իրենց պաշտած Աստուծոյ համար, որոնք կը տարբերին «Եհովա» անունէն, մենք մեղք կը համարենք: Մենք նաեւ մեղք կը համարենք Աստուծոյ անունը՝ «Եհովա» բառի արտասանումը: Ճիշդ ասոր համար, հա-

կառակ որ Հին Կտակարանին աշխարհաբար թարգմանութեան մէջ «Եհովա» անունը գործածուած է, մեր գրաբար Աստուածաշունչին մէջ (Օրինակ - Ելից 6:2) Աստուծոյ այդ անունը չէ գործածուած ու անոր տեղ միայն «Տէր» գրուած է:

Արդեօք, Ս. Գիրքին մեզի սորվեցուցած այս վերոյիշեալ մեղքերը, պարզապէս իրենց բառացի իմաստներուն համա՞ր տրուած են, թէ ոչ անոնց բուն նպատակը սորվեցնել է անոնց ներկայացուցած փոխաբերական իմաստները: Միթէ նոյնիսկ Հին Կտակարանին մէջ ալ գրուած ու գուշակուած չէ՞ր.

«Բացից առակօ՛վ պէ՛րան իմ, խօսեցայց պառակս ինկպէանէ»: (Սաղմոս ԿԷ:2)

«Առակով պիտի բանամ բերանս՝ եւ վաղեմի հանելուկները պիտի արտայայտեմ»: (Սաղմոս ՀԸ:2)

«Զայս ամէնայն խօսեցաւ Յիսուս առակօ՛վ ընդ ժողովոսբոսն. եւ առանց առակի՛ր՝ ո՛չինչ խօսէր ընդ նոսա: Զի լցցի ասացելն ՚ի մարգարէէ. Բացից առակօ՛վ պէ՛րան իմ, Բողոքից պշաժկեալանն ՚ի ինկպէանէ աշխարհի»: (Մատթէոս ԺԳ:34-35)

«Յիսուս առակներով խօսեցաւ բազմութեան այս բոլոր բաները: Առանց առակի չէր խօսեր անոնց՝ որպէսզի իրագործուի մարգարէին միջոցով ըսուած խօսքը. «Առակներով պիտի բանամ բերանս՝ եւ պիտի արտայայտեմ աշխարհի Հիմնադրութենէն ի վեր ծածկուած բաները»:

«Հարցանելին պնա աշակերտի՛ն՝ թէ պի՞նչ իցէ առակն: Եւ նա՛ ասէ. Զե՛պ որուեա՛լ է պտորհոսորս արձայոսթեան Ասորոսթոյ, Բայց այլոցն առակօ՛վ պի՛ր տեսնէ՛ն՝ եւ մի՛ր տեսնէ՛ն, եւ լոսիցէն՝ եւ մի՛ր իմասցին»: (Ղուկաս Ը:9-10)

«Իր աշակերտները Հարցուցին իրեն. «Ի՞նչ է իմաստը այս առակին»: Ան ալ ըսաւ. «Ձեզի՛ տրուած է Հասկնալ Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները՝ բայց ուրիշներուն՝ առակներով կը խօսիմ. որպէսզի նայելով՝ չտես-

նեն՝ ու լսելով՝ չհասկնան»:

Ուրեմն կը թուի, որ թէ՛ Հին եւ թէ՛ Նոր Կտակարաններուն մէջ գրուածներուն տուած դասերը, յորդորները, այսինքն անոնցմէ մեր սորվելիքները բնաւ բացայայտօրէն չեն տրուած մեզի, այլ անոնց մէջ թագնուած դասերը կարելի կ'ըլլայ սորվիլ երբ կը հասկնանք անոնց ներկայացուցած բուն վերացական կամ փոխաբերական իմաստները:

Այս հիման վրայ ուրեմն ի՞նչ է գիտութեան ծառին եւ Ադամի մեղքին իմաստը: Մարդ արարած իր կեանքի ընթացքին շատ մը տեղեկութիւններու գիտակից կ'ըլլայ, այսինքն շատ մը գիտութիւններ կ'ամբարնէ: Որեւէ գիտութիւն մը ունենալ կարելի է միայն այդ գիտութեան գիտակցումով (to be aware): Իսկ այդ գիտնալն ալ կարելի է միայն գիտակցութեան (consciousness) միջոցով: Թմբիրի (coma) մէջ եղող անհատ մը որեւէ գիտակցութիւն չի յայտնաբերեր, հետեւաբար նաեւ չի կրնար որեւէ գիտութիւն ալ ամբարնել: Ուրեմն երբ մարդուն յայտնաբերած գիտակցութիւնը, որ Աստուծոյ անհուն գիտակցութեան փոքր մէկ մասնիկն է, այդ զանազան «գիտութիւններով» զբաղ, առիթը չ'ունենար գիտակցելու ճշմարտութեան: Այդ բոլոր «գիտութիւնները» ճշմարտութեան մաս չեն կազմեր եւ պատրանգային երազներ են: Երբ մարդուն յայտնաբերած գիտակցութիւնը, յաճախ զբաղ մարդուն միտքին յառաջացուցած խորհուրդներով, ցանկութիւններով, աշխարհային հաճոյքներով, ստացուած քներով, ընտանեկան կամ ընկերային յարաբերութիւններով, եւայլն. չի կրնար կեդրոնանալ Աստուծոյ վրայ եւ գիտակցիլ Անոր: Ահա՛, աս է Ադամին գործած մեղքը՝ միտքը զանազան գիտելիքներով զբաղեցնել: Այսօր համայն մարդկութիւնն ալ Ադամի հետեւելով կը գործէ նոյն մեղքը:

Այս հիման վրայ ուսումնասիրենք Մովսէսի առաջին երեք պատուիրանները: Անոնց իմաստը այն է թէ

Աստուծո՛վ է զատ ոչինչ մեր գիտակցութեան առարկան պէտք է ըլլայ: Բայց մենք ի՞նչ կ'ընենք: Մեր միտքերը յաճախ զբաղ կը պահենք եւ այդ մտային զբաղմունքները մեր սահմանափակ գիտակցութեան ուշադրութեան առարկաները կ'ըլլան: Այն բոլորը, որ մեր միտքերը կը գրաւեն, կ'ըլլան մեր ստեղծած կողուքերը: Ուրեմն այս մեր բռնած ընթացքը կը հակասէ վերեւ յիշուած երկրորդ պատուիրանին, որ է. «Դուն քեզի կողուք չչինես»: Իսկ այդ բոլոր խորհուրդներուն եւ ցանկութիւններուն ակն ալ մեր «Ես»-ը չէ՞: Ուրեմն մեր «Ես»-ն ալ՝ սատանան կ'ըլլայ՝ մեր պաշտած ուրիշ «աստուած»-ը: Իսկ առաջին պատուիրանը կ'ըսէ. «Ինծո՛ւմ է զատ ուրիշ աստուածներ չունենաս»: Ուրեմն կը թուի, թէ համայն մարդկութիւնը կը պաշտէ ուրիշ աստուած մը, քան թէ ճշմարիտ Աստուածը: Իսկ երբ մարդ բերանացիօրէն կ'ըսէ թէ կը սիրէ Աստուած ու կը պաշտէ Աստուած եւ անընդհատ կ'աղօթէ Աստուծոյ, բայց իր գիտակցութիւնը միշտ զբաղ է խորհուրդներով եւ զզացումներով, սա կը հակասէ երրորդ պատուիրանին եւ ի գուր Աստուծոյ անունը բեռանը առած կ'ըլլայ:

Ճիշդ ասոր համար Յիսուս մեզի սորվեցուց կատարելութեան ուղին: Այդ ալ, ըստ Յիսուսի սորվեցուցածին, կարելի է միայն աղօթքին ամենավեհ ձեւով՝ խոկալով: Յիսուս շատ լաւ գիտէր մեր այլ աստուած մը պաշտելը, հետեւաբար յանձնարարեց անտեսել այդ աստուածը՝ մեր «անձ»-ը՝ մեր «Ես»-ը: Ան նաեւ յորդորեց ջնջել, անհետացնել մեր ստեղծած կողուքերը: Միայն այն ատեն է որ պիտի կարողանանք Աստուած տեսնել:

«Երանի այնոցիկ՝ որ սորբէ եւ սրբիւմ, պի նոխ

պէս սորոսած ցեպէն»: (Մարքէոսի Ե:8)

«Երանի՛ անոնց որ սրտով մաքուր են, վասն զի անոնք պիտի տեսնեն Աստուած»:

Սուրբ սիրտը առանց խորհուրդներու, առանց զգա-

ցումներու եւ առանց բազմաթիւ ցանկութիւններու՝ անզբաղ միտքն է: Իսկ Յիսուսի առաջարկած միակ ցանկութիւնը պէտք է ըլլայ Աստուած՝ Քրիստոս գտնել՝ յայտնաբերել մեր անձերուն մէջ: Այս ուղղութեամբ Ան ըսած է.

«Երանի խղցելեալ եւ Ժարասի իցեն արդարո՞ւ-

թեան, պի նոյա յաճեացին»: (Մատթէոս Ե:6)

«Երանի՛ անոնց որ անօթի ու ծարաւ են արդարութեան, վասն զի անոնք պիտի կշտանան»:

Միակ արդարութիւնը մարդուն ցանած հունտերուն յառաջ բերած հունձքերն են: Եթէ մենք մեր կեանքի այդ հունձքերէն՝ պատահարներէն չենք զանգատիր եւ ուրախութեամբ զանոնք կ'ընդունինք իբրեւ Աստուծոյ կամքը, կը սորվինք անոնց մէջի թագնուած դասերը, պատրաստ կ'ըլլանք «կշտանալու», այսինքն Աստուծոյ հետ հաղորդուելու: Եւ երբ Աստուծոյ հետ հաղորդուելու տենջանքը բաւականին բարձրանայ եւ մենք հաղորդուելու պակասը ու այդ պակասին համար ալ սզանք, միայն այն ատեն է որ կրնանք միխթարուիլ այսինքն հաղորդութեան արժանանալ: Միթէ Յիսուս չըսա՞ւ.

«Երանի սճաւորաց, պի նոյա միխթարեացին»:


«Երանի՛ սզաւորներուն, վասն զի անոնք պիտի միխթարուին»: (Մատթէոս Ե:4)

Հետեւաբար, ի՞նչ է ամենամեծ մեղքը, որ համայն մարդկութիւնը կը գործէ եւ անոր հետեւանք ալ՝ միւս բոլոր մեղքերը: Ատիկա մարդուն իր գիտակցութիւնը պատրանգայինով զբաղ պահելով Աստուածայինը՝ ճշմարտութիւնը անտեսելն է: Մարդ խոկալու համար պէտք է նստի հանգիստ եւ լուռ տեղ մը, աչքերն ալ գոց որպէսզի արտաքին աշխարհէն իր հինգ զգայարանքներու միջոցաւ եկող որեւէ տեղեկութիւն չզբաղեցընէ իր գիտակցութիւնը: Բայց դժբախտաբար իր են-

Թազիտակցութեան մէջի յուշերը, ցանկութիւնները, յուզումները յառաջ կը բերեն խորհուրդներ եւ զգացումներ եւ զբաղ կը պահեն իր գիտակցութիւնը: Երբ անձը կը յաջողի անոնց վրայ իշխանութիւն կերտել եւ զանոնք զսպել կամ անհետացնել (եւ ահա՛ աս է խոկումին նպատակը), այլեւս իր սահմանափակ գիտակցութիւնը ոչ եւս զբաղ, կը գիտակցի ինք իրեն եւ կը հասկնայ գիտակցութեան անհունութեան եւ կը միանայ անհուն գիտակցութեան: Բայց գիտակցութիւնը Աստուծոյ ներկայութիւնն է: Միայն Աստուած գիտակցութիւն ունի: Մենք կ'օգտագործենք մեր մէջ յայտնուող անոր ճղճիմ եւ փոքր մէկ յայտնութիւնը եւ կը կարծենք թէ ան մեր ուրոյն գիտակցութիւնն է: Երբ անհատը կը գիտակցի այդ անհուն գիտակցութեան, ինք հաղորդուած կ'ըլլայ Աստուծոյ հետ: Այդ անհուն գիտակցութեամբ ան կը տեսնէ ճշմարտութիւնը՝ ամէն ինչի, քան թէ այն պատրանքայինը, որ ինք առաջուց ճշմարտութիւն համարած էր: Ան կը հասկնայ ամէն ինչի միականութիւնը եւ Յիսուսի պէս կ'ըսէ. «Ես եւ Հայր իմ մի եմք»: Ինք կը հասկնայ թէ իր առաջուան ճշմարտութիւն կարծած կեանքը միայն երազ մըն էր եւ ինք յօժարաբար զայն կը թողու եւ կը գոյատեւէ ճշմարտութեան եւ Աստուածային երանութեան մէջ: Նոյնիսկ ան եթէ շարունակէ երազել, գիտէ թէ ան միայն երազ մըն է եւ այդ երազին մէջի որեւէ պատահար, լաւ կամ վատ, իրեն վրայ որեւէ ազդեցութիւն չ'ունենար: Եւ ահա՛ աս է փրկութիւնը: Փրկութիւնը Աստուծոյ հետ մէկ ըլլալն է, անձին մէջ Քրիստոսի յայտնութիւնն է: Այս յայտնութեան հետեւանք՝ գիտակից ճշմարտութեան, ամէն ինչ, որ կեանքը իրեն կու տայ, կ'ըլլայ ընդունելի իբրեւ Աստուծոյ կամքը եւ ինք չ'ազդուիր անոնցմէ եւ կը գոյատեւէ միշտ Աստուածային երանութեան մէջ: Եւ ահա՛ աս է դրախտը, հո՛ս

աշխարհի վրայ եւ ոչ մահուընէ ետք «վերը», «երկինքը»
տեղ մը: Երբ անձը գիտակցօրէն իր ներքին Քրիստոսի
հետ կը հաղորդակցի եւ ճշմարտութիւնը կը տեսնէ, կը
հասկնայ, իր կենցաղն ալ ինքնաբերաբար կը փոխուի:
Ինք կը նմանի իր վարդապետին՝ Յիսուս Քրիստոսի:






**Անտին շփոթանալու սին-
կին ՀԱՄԱՅԱՅՆ ԱՄԷՆ ԻՆՉԻ
ԵՐԵՒՅԹԸ ԿԸ ՓՈՒՆՈՒԻ,
ՈՐՈՎ ԱՆՈՆՅ ՄԷՋ ԿԸ
ՏԵՍՆԵՆԸ ՄՈԳԱԿԱՆԸ ԵՒ
ԳԵՂԵՅՎՈՒԹԻՒՄԸ, ՄԻՆՉ ԴԵՆ
ՃՇԱՄՐՏՈՒԹԻՒՄԸ ԱՅՆ Է ԹԷ
ԹԷ՛ ՄՈԳԱԿԱՆԸ ԵՒ ԹԷ՛
ԳԵՂԵՅՎՈՒԹԻՒՄԸ ՄԵՐ ՄԷՋՆ
ԵՆ:**

ԽԱՂԻԼ ՃԻՊՐԱՆ

**ՃՇԱՄՐԻՏ
ԳԵՂԵՅՎՈՒԹԻՒՄԸ,
ՀՈԳԻՆ ԱՐԲՈՒԹԻՒՄ
ԱՐԲՈՅԷՆ ԾԱԳՈՂ
ՃԱՌԱԳԱՅԹ ՄԸՆ Է, ՈՐ
ԿԸ ԼՈՒԱՆՈՒԷ
ՄԱՐՄԻՆԸ, ՆՄԱՆ ԱՅՆ
ԿԵԱՆՔԻՆ ՈՐ ԵՐԿՐԻ
ԽՈՐՔԷՆ ԿՈՒ ԳԱՅ ԵՒ
ԿԸ ԳՈՒՆԱՈՒԷ
ԾԱՊԻԿԸ ԵՒ ԱՆՈՐ ԿՈՒ
ՏԱՅ ԻՐ ԲՈՅԻՐԸ:**

**ԽԱՂԻԼ ՃԻՊՐԱՆ
(Թ-ԱՐԳԱՆՈՒԹԻՒՄ ԱՄՆ)**



ԻՆՉ Է ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

Նախ հասկանա՞ք, թե՛ ընդհանուր քրիստոնեայ աշխարհին «փրկութիւն» հասկացողութիւնը ի՞նչ է: Մարդիկ, յենեւ լով հետեւեալ երկու համարներուն, կը կարծեն որ եթէ հաւատան թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ միածին որդին է եւ մեր մեղքերուն համար չարչարուած ու մեռած է, իրենք ալ փրկուած կ'ըլլան: Ըստ իրենց հասկացողութեան, փրկութիւնն ալ մահէն վերջ՝ աշխարհի վերջաւորութեան, մարմնային յարութեամբ «երկինքի» մէջ անվերջ ժամանակ հաճելի կեանք մը ապրիլն է:

«Ամէն ամէն ասէ՛մ պի որ Հասարայ՝ ընդոննի՛
պիւաննն յաթիբնականն»: (Յովհաննոս .Չ:47)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ա՛ն որ կը հաւատայ ինձի՛ ունի՛ յաւիտենական կեանքը»:

«Չի ո՛չ առաքեաց Լսիրոսաթ պորտի իւր յաշխարհ՝ թէ դասրեսցի պաշխարհ, այլ պի փրկեսցի աշխարհ նովա»: (Յովհաննոս .Գ:17)

«Քանի որ Աստուած աշխարհ դրկեց իր Որդին՝ ո՛չ աշխարհը դատապարտելու՝ հապա՛ որպէսզի աշխարհը փրկուի անով»:

Միայն այս եւ նման համարներուն, ինչպէս նաեւ Յիսուսի Նիկողեմոսին վերստին ծնունդի նկատմամբ ըսած խօսքերուն յենեւ լով յարանուանութիւններ կամ աղանդներ կազմուած են: Անոնք դժբախտաբար, ուրիշ բազմաթիւ համարներ կ'անտեսեն: Անտարակոյս, վերեւի համարներուն պարունակութիւնը բացարձակ ճշմարտութիւն է, բայց իրենց այդ համարներուն մեկնաբանութիւնը սխալ է: Անոնք նոյնիսկ իրենց հաւատքին որակով կը պարծենան: Անոնք դարձեալ կը մկրտուին եւ իրենք զիրենք «վերստին ծնած» կը նկատեն, որով աջ ու ձախ կը յայտարարեն թէ փրկուած են:

Նկատողութեան առնենք հետեւեալ համարը.

«Ամեն ամեն ասե՛մ թե որ Հասարակաց յիս Գործ-
քս Գոր ես Գործեմ, ե- նա՛ Գործեսցե ե- մեծա-
մեծս է՛ս և ինչ ան անոյնս Գործեսցե» : (Յովհաննու- մԻ:12)
«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի-
Ա՛ն որ կը հաւատայ ինձի, ի՛նք ալ պիտի ընէ այն
գործերը՝ որ ես կ'ընեմ, եւ անոնցմէ աւելի՛ մեծ գործեր
պիտի ընէ, ...»:

Եթէ Յիսուս Քրիստոսի հաւատալը փրկութեան համար միայն վերեւ նշուած ձեւով բաւարար էր, ըստ այս համարին, իրենց այդ հաւատքով ալ պէտք է Յիսուսի գործած հրաշքներէն ալ աւելի մեծ հրաշքներ կարենային գործել: Իսկ եթէ անոնք կարող չեն որեւէ հրաշք գործելու, պէտք է հարց տան թէ ինչո՞ւ: Այս հարցումին հետեւեալ երեք պատասխանները պէտք է նկատողութեան առնեն եւ անոնց մէջէն պատշաճ պատասխանը գտեն: Այս երկսայրին հետեւանք յառաջ կու գան հետեւեալ երեք հաւանական պատասխանները:

ա- Վերելի Յովհաննու ԺԴ:12 համարին մէջ Յիսուսի ըսածը սուտ էր: (Քաւ լիցի)

բ- Իրենց ունեցած հաւատքը ճշմարիտ հաւատքը չէ:

գ- Իրենք զօրաւոր հաւատք ունին, բայց սխալ բանի վրայ: Իրենց հասկացողութիւնը սխալ է:

Անտարակոյս, Յիսուս Քրիստոսի ամէն ըսածը ճշմարտութիւն է: Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ ճշմարտութիւնը կը ներկայացնէ: Հետեւաբար, վերելի հարցերուն առաջին պատասխանը սխալ է եւ ընդունելի չէ: Ուրեմն հարցերուն ճիշդ պատասխանը կը կայանայ մնացեալ երկուքին մէջ: Անոնց մեծամասնութիւնը շատ բարձր հաւատք (faith) ունին իրենց հաւատացած- ներուն (beliefs) վրայ: Ուրեմն շատ հաւանական է որ հարցին տրուած երկրորդ պատասխանն ալ ի զօրու չ'ըլլայ: Կը մնայ միայն երրորդ պատասխանը: Այս հիման վրայ ճիշդ է ըսել թէ Յիսուսի ըսածներուն

նկատմամբ անոնց հասկացողութիւնը սխալ է եւ իրենց հաւատքն ալ սխալ ըմբռնումի հետեւանք է: Ըստ, ստորեւ ներկայացուած համարին, բարձր որակով հաւատքի ալ պէտք չկայ, այլ միայն հաւատք Քրիստոսի վրայ:

«Եւ ասէն առաքելային ցՏէր. Յասէ՛լ մեզ
Ըստարս: Եւ ասէ՛ Տէր. Եթէ ունիցի՞ Ըստարս
ձան զԸստար մանանոյ, եւ ասիցէ՞ թըթէն-ո՛յս
այսմիկ. խլեա՛ց եւ րնկեաց ՚ի Զողոս, եւ
Ընապանդեացի՛ շեզ»: (Ղուկաս ԺԷ:5-6)

«Առաքեալները ըսին Տէրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»: Տէրը ըսաւ. «Եթէ մանանեի հատիկի չափ հաւատք ունենայիք, կրնայիք ըսել այս թթեանին. Արմատախիլ եղիր եւ անկուէ՛ ծովուն մէջ. ան ալ պիտի հնազանդէր ձեզի»»:

Նախ քան այդ սխալ հասկացողութիւնը վերլուծելու, հասկնանք թէ ի՞նչ է փրկութիւնը եւ մարդ ինչո՞ւ փրկուիլ կ'ուզէ: Վերեւի առաջին երկու մէջբերուած համարներէն յայտնի է թէ փրկութիւնը յաւիտենական կեանքի արժանանալն է: Թէ՛ յաւիտենական կեանքը եւ թէ՛ փրկութիւնը Աստուծմէ մարդուն տրուած շնորհք մը պարզեւ մըն է: Մարդ այդ շնորհքին կ'արժանանայ երբ ան իր կեանքին բուն պարտականութեան մէջ կը յաջողի: Մարդուն կեանքին նպատակը պէտք չէ փրկութիւնը ըլլայ: Այս «կէտ»-ը Աւետարաններուն մէջ շատ հստակօրէն բազմիցս շեշտուած է: Այս ուղղութեամբ տես յաջորդ երկու Աւետարանէն մէջբերումները: Երբ մարդ փրկութեան կը ձգտի, այդ կը նշանակէ թէ ան կ'ուզէ իր «անձ»-ը՝ իր «Ես»-ը փրկել՝ Աս ալ կը նշանակէ թէ ինք իր «Ես»-ին կապուած է:

«Զի որ կամիցի զանձն իւր կեցոսցանել,
կորոսցէ՛ զնա. եւ որ կորոսցէ զանձն իւր
վասն իմ՝ կեցոսցէ՛ զնա»: (Ղուկաս Թ:24)

«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի կորսնցնէ վայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինձի համար, պիտի փրկէ վայն»:

Որ սիրէ սննդն իւր՝ արձակէ սննս. եւ որ սպետայ սննդն իւր յաշխարհիս յայսմիկ, ՚ի կեանան յաւիտիւնականս պահեսցէ սննս»: (Յովհաննոս ԺԳ: 25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ վայն՝ եւ ա՛ն որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝ յաւիտեանական կեանքին համար պիտի պահէ վայն»:

Այս հիման վրայ, այն անձը, որ փրկութիւն կը հետապնդէ ամենեւին պիտի չփրկուի: Անտարակոյս այս երկու համարներուն մէջ «անձ»-ը կը ներկայացնէ մարդուն «Ես»-ը՝ սատանան:

Իսկ եթէ մարդու կեանքին նպատակը փրկութիւնը չէ, ուրեմն նպատակը ի՞նչ է: Իսկ եթէ հաւատքը միայն Յիսուս Քրիստոսի Աստուծոյ որդի ըլլալուն հաւատալ չէ, ուրեմն ի՞նչ է կամ ի՞նչի վրայ պէտք է ըլլայ:

Անտարակոյս մարդ Քրիստոսի վրայ պէտք է բացարձակ հաւատք ունենայ, քանի որ Ան իր վարդապետուն է եւ ըստ Յիսուսի ըսածին՝ իր միակ ուսուցիչը:

«Բայց դու՛ն մի սննդն իւր կ'ուզէ՛ վարդապետ սննդն իւր յետոյ սննդն... եւ մի կ'ուզէ՛ սննդն իւր յետոյ սննդն իւր յետոյ սննդն»: (Մատթեոս ԻԳ: 8, 10)

«բայց դուք Ռաբբի մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է՝ այսինքն Քրիստոս: ... Եւ դուք ուսուցիչներ մի՛ կոչուիք՝ վասն զի ձեր Ուսուցիչը մէկ է՝ այսինքն Քրիստոս»:

Ամէն անձ իր ուսուցիչին վրայ պէտք է հաւատք ունենայ եւ գայն պաշտէ: Բայց հաւատք ունենալը պաշտելով վերջ չի գտներ: Յիսուսի հետեւեալ երկու խօսքերը բացայայտ կ'ընեն թէ ինչ է ճշմարիտ հաւատքը:

«Ո՛չ ամենայն որ ասէ ցիս՝ Տէ՛ր Տէ՛ր, միտք յարեայս ինչն էրկնից, այլ որ ասնէ սկսման Ըօր իմոյ որ յերկնան է»: (Մատթեոս Է: 21)

«Ո՛չ թէ ո՛վ որ ինծի՛ «Տէ՛ր, Տէ՛ր կ'ըսէ, պիտի մտնէ երկիրնքի թագաւորութիւնը, Հապա ան՝ որ կը գործադրէ իմ երկնաւոր Հօրս կամքը»:

«*Չո՛ւր պաշտէնս զիս • ուսուցանեն զարտապէտս—*

իւրնս՝ զմարտկանն պատուելալս»: (Մարտէոս ԺԵ:9)

«Եւ պարապ տեղը կը պաշտեն զիս՝ մարդոց պատուէրները սորվեցնելով իբր վարդապետութիւն»:

Ուրեմն ի՞նչ է ճշմարիտ հաւատքը: Յիսուս Քրիստոս զանազան առիթներով մեզի սորվեցողց թէ ճշմարիտ հաւատքը ինչ է: Կարելի չէ որ մէկը հաւատք ունենայ անձի մը վրայ որուն ինք չի սիրեր: Հետեւաբար սէր առ Աստուած՝ առ Քրիստոս անհրաժեշտ է: Յիսուսի հետեւեալ խօսքը այս կէտը բացայայտ կ'ընէ:

«... Եթէ ո՛վ սիրէ զիս զբանն իմ պահեսպէ եւ

Հայր իմ սիրէսցէ զնա» : (Յովհաննոս ԺԳ:23)

«... Եթէ մէկը սիրէ զիս՝ պիտի պահէ իմ խօսքս, ու իմ Հայրս պիտի սիրէ զայն»:

Շատեր կ'ըսեն թէ կը սիրեն Աստուած, կը սիրեն Յիսուս Քրիստոս, սակայն իրենց կեանքը կ'ապրին իրենց «Ես»-ին կապուած: Անոնք կը ջանան երկու տիրոջ ծառայել: Այս ուղղութեամբ Յիսուս Քրիստոս մեզ կը զգուշացնէ:

«Մի՛ խաբելէ՛, Աստուած ո՛չ արհամարհի: Զի

զոր ինչ սերմանէ մարդ զնոյն եւ Հնչեացէ՛»:

(Գաղատացիս Զ:7-8)

«Մի՛ խաբուիք՝ Աստուած չի ծաղրուիր, որովհետեւ ինչ որ մարդ կը սերմանէ՝ զայն ալ պիտի հնձէ»:

Ո՛չ ո՛վ կարէ երկո՛ւց տերանց թաւայել • զի եթէ

զմին՝ ասրիցէ, եւ զմեւոնն սիրէ՛ • կամ զմին՝

մեծարիցէ, եւ զմեւոնն արհամարիցէ՛: Ո՛չ

կարելի է Աստուծո՛յ թաւայել եւ մամոնայի»:

(Ղուկաս ԺԶ:13)

«Ո՛չ մէկ ծառայ կրնայ ծառայել երկու տիրոջ •

որովհետեւ կա՛մ մէկը պիտի ստէ եւ միւսը սիրէ, կա՛մ մէկուն պիտի յարի ու միւսը արհամարէ: **Չէք** կրնար ծառայել Աստուծոյ եւ մամոնային»:

Այս վերեւի համարներուն առաջինին երկրորդ մասին մէջ անգամ մը եւս շեշտուած է Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերուն աններելի ըլլալը: Յիսուս Քրիստոս ես ձեր մեղքերուն պարտքերը պիտի վճարեմ որպէսզի փրկուիք չէ ըսած: Այլ ան ուրիշ առիթներով ալ այս կէտը շեշտած է:

«ասե՛մ ՚իւզ, ո՛չ ելանիցես անոր՝ մինչեւ Հապո-
ո-ցանիցես պէտրի՛ն Քե-իոնն» : (Ղուկաս ԺԲ : 59)
«Դուրս պիտի չելլես անկէ, մինչեւ որ վճարես վերջին լուման»:

Ընդհակառակը Յիսուս բացայայտ ըսած է թէ ինչ պէտք է ընել:

«Յայնժամ Յիսուս ասե՛ր ցաշակերդոսն իւր. Եթէ ո՛վ կամիցի պննի իմ Գալ՝ ուրասցի՛ր պաննն, ե-
սոցե՛ր պնաս իւր՝ ե- եկեսցե՛ր պննի իմ» :
(Մարքեւոս ԺԳ. 24)

«Այն ատեն Յիսուս ըսաւ իր աշակերտներուն. «Եթէ մէկը ուզէ գալ իմ ետեւէս, թող ուրանայ ինքզինք, վերցնէ իր խաչը, ու հետեւի ինձի»:

Ուրեմն, եթէ մեր վարդապետը՝ Յիսուս Քրիստոս կը սիրենք, պարտ ենք իր վրայ բացարձակ հաւատք ունենալ, որ կը նշանակէ իր բոլոր սորվեցուցածներուն վրայ հաւատք ունենալ, հետեւաբար զանոնք իւրացնել եւ մեր կեանքի ընթացքին կիրարկել: Այսինքն իրեն հետեւիլ եւ իրեն նման ըլլալ, որ կը նշանակէ իրեն նման յաջողիլ Քրիստոս մեր մէջ յայտնաբերել: Այս հայեացքը յայտի կ'ըլլայ իր հետեւեալ խօսքերէն:

«Ո՛չ է աշակերդ լա՛ւ - իան պլարտապետի իւր, ամենայն կարարեալն՝ եղիցի իբրեւ պլարտապետի իւր» : (Ղուկաս Գ : 40)

«Աշակերտը իր վարդապետին գերիվեր չէ՝ բայց ամէն կատարեալ աշակերտ՝ իր վարդապետին պէս պիտի ըլլայ»:

«Արդ եղերո՞ւն էր դո՞ւն էր կարարեա՞լն էր, որդե՞ս եւ Հայրըն յէր երկնաւոր կարարեա՞լն էր»: (Մատթեոս Ե:48)
«Ուրեմն դուք կատարեալ եղէք՝ ինչպէս ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»:

Մարդ արարած իր ներկայ վիճակին, որոշ չափով խաւարամիտ, պատրանքը՝ բազմազանութիւնը կը համարէ ճշմարտութիւն մը ըլլալ եւ այլեւս ճշմարտութիւնը չի փնտռեր: Մեզի այս մտային թմբիրէն արթննալ կը մնայ:

«...արի որ ննջեադ, եւ կանգնեա՛ց ՚ի մեռելոց, եւ լոսաւորեսցի պէտք Քրիստոս»: (Եփեսոսցիս Ե:14)

«...Արթընցիր, դուն որ կը քնանաս եւ կանգնէ մեռելներէն ու Քրիստոս քեզի լոյս պիտի տայ»:

Ընդհանուր առմամբ մարդիկ կը կարծեն թէ միայն Քրիստոսը Յիսուսն է: Ճիշդ է թէ Յիսուս՝ մարդու Որդին, Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին Իր մէջ յայտնաբերեց եւ մեզի ալ սորվեցուց նոյնը ընել: Ընդհանուր ստեղծագործութիւնը Աստուծոյ Որդոյն՝ Քրիստոսի արտայայտութիւնն է: Ամէն ինչ Քրիստոսի զանազան արտայայտութիւնն է: Ամէն ինչ թէ՛ կեանք ունի եւ թէ՛ գիտակցութիւն՝ յայտնուած զանազան մակարդակներով: Այս հիման վրայ Աւետարանին մէջ գրուած է.

«Սոյն ինչն Հոգին վկայէ Հոգոյս մերոսմ, եթէ եմէ որդի է՝ ապա եւ ժառանգ է՝ ժառանգ է Լսոյս-ժոյ՝ եւ ժառանգակից է Քրիստոսի»:

(Հոռովմայեցիս Ը:16-17)

«Նոյնիւքն Հոգին վկայութիւն կու տայ մեր Հոգիին հետ՝ թէ մենք Աստուծոյ զաւակներն ենք. եւ եթէ զաւակներ՝ ուրեմն՝ ժառանգորդներ՝ Աստուծոյ ժառանգորդներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ՝ ... »:

«Ո՞չ գիտէ՞ եթէ Կաթար է՞ Լսոյս-ժոյ, եւ Հո-

Գի Լսարո-Ժոյ Բնակեալ է 'ի Յեզ» : (Լ.Սարնբադա Գ:16)
«Ձէ՞ք գիտեր թէ Աստուծոյ տաճար էք դուք եւ
Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի»:

«Մի Լսարո-աշ էւ Հայր ամենեկոտն, որ 'ի
վերայ ամենայնի, էւ ընդ ամենեանն, էւ
յամենեանն 'ի մեզ» : (Եփեսացիս Գ:6)

«Մէ'կ է Աստուած եւ բոլորին Հայրը, որ բոլորէն վեր,
բոլորին հետ եւ ձեր բոլորին մէջն է»:

**Նոյնիսկ Հին Կտակարանին մէջ ալ նոյն գաղա-
փարը յայտնուած էր.**

«Լոյս Տեարն շունչ մարդկան, ...» : (Լուսնայ Ի:27)

«Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է»:

**Ուրեմն այս հասկացողութեամբ պարտ ենք մեր
կենցաղը հասկնալ, ըմբռնել եւ ըստ այնմ վարել: Քրիստոս
ամէն անհատի ճշմարիտ էութիւնն է: Ան ամէն
անհատի հոգին է: Ան ամէն անհատի թէ' կեանքը, թէ' ալ
գիտակցութիւնն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած. «Ես եմ
կեանքը, Ես եմ աշխարհի Լոյսը» (Լոյսը փոխաբերաբար
գիտակցութիւնը կը ներկայացնէ): Կան աղանդներ,
որոնք Յիսուս Քրիստոս դուրսէն իրենց մէջ կը հրաւի-
րեն: Այս ըմբռնումն ալ սխալ է: Քրիստոս ամէն անհա-
տի Հոգին է: Ան արդէն մեր մէջն է: Մեզի կը մնայ մեր
մտքի ուղղութիւնը, արտաքինէն՝ աշխարհի շրջուցիչ
պատրանքային «սա», «դա», «նա»-յէն դէպի մեր ներ-
քին ճշմարիտ էութեան Քրիստոսի, դարձնել: Ահա՛, աս է
«վերստին ծնունդը» եւ ոչ թէ դարձեալ մկրտուելը:
Աշխարհի կապուածութիւնը «Ես»-ին վարպետութիւնն
է: Հետեւաբար, մարդ հակառակ իր «Ես»-ին կապուած
ըլլալուն, յաճախ կը կրկնէ թէ վերստին ծնունդ ունե-
ցած է եւ փրկուած: Ծիշդ ասոր համար Քրիստոս ըսաւ.**

«Եւ դու-՛ն ո՛չ կամի՛ գա՛լ աս իս պի գլխանան
ունիցի՛» : (Յովհաննոս Ե:40)

«Դուք չէք ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք»:

Ան կեանքը, որ Քրիստոս կ'ըսէ այս համարին մէջ յաւիտենական կեանքի ակնարկութիւն մըն է: Քանի որ ամէն անհատի ճշմարիտ էութիւնը Քրիստոսն է, կը նշանակէ թէ յաւիտենական կեանքը բոլորին տրուած է: Անհատին կը մնայ միայն զայն յայտնաբերել:

Հետեւեալ համարը բացայայտ կ'ընէ այն իրողութիւնը թէ յաւիտենական կեանքը տրուած է ամէն անհատի եւ ան Աստուծոյ Որդիին՝ Քրիստոսի մէջն է, որ ամէն անհատի հոգին է:

«Եւ՝ ա՛յս իսկ է վկայութիւնն զի կեանս յաւիտեանս եր մեզ Աստուած էւ՝ ա՛յս էն կեանքն, որ յորդին նորա էն»:(Լ. Յովհաննոս Թոմար Ե:11)
«Իսկ աս՛ է վկայութիւնը. Աստուած տուաւ մեզի յաւիտենական կեանքը՝ եւ այս կեանքը անոր Որդիին մէջ է»:
Քրիստոս ալ իր հետեւեալ խօսքով կը վավերացնէ այս իրողութիւնը:

«Եւ՝ եմ դուռն, ընդ իս թէ ո՛վ մտնիցէ, կեցցէ՛, . . . »:(Յովհաննոս Ժ:9)

«Ե՛ս եմ դուռը, եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի վրկուի. . . »:

Իսկ ինչպէ՞ս «Քրիստոսի դռնէն» մտնել: Աս կը կարոտի «վերստին ծնունդի», այսինքն «Եւ»-ը անտեսել եւ յարիլ դէպի ներքին Քրիստոսի, Յիսուս Քրիստոսի բոլոր սորվեցողցածներուն հաւատալ, զանոնք իւրացնել եւ անոնց բոլորը մեր կեանքերուն մէջ կիրարկել: Եւ ահա՛, աս է մարդուն իր կեանքին համար տրուած պարտականութիւնը: Քրիստոս այս իրողութիւնը յաջորդ համարին մէջի խօսքերով բացայայտ կ'ընէ.

«Լ՛յս էն կամէ՛ Ըօր իմոյ. զի ամենայն որ ցուանիցէ զորդի՛ էւ Ըաւաստացի՛ ՚ի նա, ընկալցի՛ զկեանսն յաւիտեանականս էւ էս՛ յարոցի՛ց զնա յաւոռն յեդնում»:(Յովհաննոս .9:40)

«Որովհետեւ զիս զրկողին կամքը աս' է, որ ո՛վ որ տեսնէ Որդին ու Հաւատայ իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ես ալ պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը»:

Մարդ պարտ է Յիսուսի նմանիլ եւ Անոր նման Քրիստոս իր մէջ լրիւ յայտնաբերել: Երբ ան, իրեն այս ներկայ կեանքին մէջ տրուած վերեւ յիշուած պարտականութիւնը յաջողի լիովին կատարել, Քրիստոս ալ իրեն վերջին օրը յարուսթիւն կու տայ: Շատեր կը կարծեն թէ «վերջին օր»-ը աշխարհի վախճանն է: Այդ հայեացքը սխալ է: Ամէն անհատի համար իր վերջին օրը իր մարմնին մահուան օրն է: Իսկ յարուսթիւնն ալ իր անհատականութեան յարուսթիւնն է եւ ոչ՝ իր Փրկիչ քական մարմնին: Նոյնիսկ շատեր կը կարծեն թէ աշխարհի վախճանին Յիսուս Քրիստոս դարձեալ ամպերուն վրայէն ետ աշխարհ պիտի գայ եւ բարիներուն յարուսթիւն պիտի տայ: Այս հայեացքն ալ ըստ հետեւեալ համարին սխալ է.

«... ոչ Գայ արեւոյտ-թիւն Լսոյտ-ժոյ խորանօ՛վ. եւ շատիցեն թէ աւա-ասիկ ասոյ է՝ կամ անդ, զի աւա արեւոյտ-թիւն Լսոյտ-ժոյ ՚ի ներվա ՚ի Յեզէ» : (Ղ.Ն.Կատու ժէ: 20-21)

«... Աստուծոյ թագաւորութիւնը չի գար դուրսէն երեւցած բաներով: Եւ պիտի չըսեն թէ 'Ահա հոս է', կամ 'Ահա՛ հոն', Որովհետեւ ահա Աստուծոյ թագաւորութիւնը ձեր ներսն է»:

Հոգ չէ թէ քանիցս կը կրկնենք թէ Յիսուս Քրիստոս կը սիրենք, հոգ չէ թէ քանիցս մեր հաւատացածները կրկնող քարոզչութիւններ մտիկ կ'ընենք, հոգ չէ թէ Յիսուս Քրիստոսի վրայ մեր ունեցած հաւատքը քանիցս կը կրկնենք, եթէ իր սորվեցուցածները կ'անտեսենք եւ զանոնք չենք կիրարկեր մեր կեանքին մէջ, որով իր խօսքերը չընդունելով Ձինք անարգած կ'ըլլանք: Եւ ըստ հետեւեալ համարին այդ իսկ դատաստանն է.

«Եւ եթէ ո՛ր լո՛ւսն է թանկոց ի՛նչոց՝ եւ ո՛չ պատեացէ, եւ ո՛չ դատեմ պնաս. ի՛նչպիսի ո՛չ եկի թէ դատեցայց պաշխարհ այլ պի՛ փրկեցից՝ պաշխարհն: Որ անարգէ պիս, եւ ո՛չ ընդոտնի պթանս իմ, Գո՛ոյ որ դատի պնաս, թանն պոր ես խօսեցայ՝ նա՛ դատի պնաս յա՛ռարն յեցանո՛մ»:

(Յովհաննոս ԺԲ:47-48)

«Եթէ մէկը լսէ իմ խօսքերս ու չհաւատայ՝ ես չեմ դատեր զինք, քանի որ ես եկայ՝ ո՛չ թէ դատելու աշխարհը, հապա՛ փրկելու աշխարհը: Ա՛ն որ կ'անարգէ զիս եւ չ'ընդունի իմ խօսքերս, ունի մէկը՝ որ կը դատէ զինք. այն խօսքը՝ որ ես ըսի՝ անիկա՛ պիտի դատէ զինք՝ վերջին օրը»:

Նման կենցաղի հետեւանքն ալ մարդուն անհատականութեան մահն է, որով մարմինն մահուան հետ անհատականութիւնն ալ կը մեռնի եւ կ'անհետանայ: Իսկ մարդուն հոգին Քրիստոսի ներկայութիւնն է, որ անմահ է եւ Ան դարձեալ կը մարդեղանայ՝ կը վերամարմնանայ մինչեւ որ լրիւ յայտնուի: Անհատականութեան մահուան ճշմարտութիւնն ալ բացայայտ գրուած է թէ՛ Հին եւ թէ՛ ալ Նոր Կտակարաններուն մէջ.

«Զի թողանն մեղաց մահ է» : (Հոովմայեցիս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

«այլ իւրաւանշիւր՝ ի մեղս իւր մեռցի. ...» :

(Երեմիա ԼԷ:30)

«Հապա ամէն մարդ իր անօրէնութեանը համար պիտի մեռնի. ...»:

Ինչպէս վերեւ յիշեցինք, փրկութիւնը յաւիտենական կեանքի արժանանալն է: Բայց մարդ ի՞նչ բան է, որ կը փրկուի: Ընդհանուր առմամբ երբ մարդ վատ վիճակէ մը կ'ազատի, ատիկա փրկութիւն կը նկատէ: Ի՞նչ է այդ վատ վիճակը, որմէ մարդ փրկուիլ կ'ուզէ: Անտարակոյս, մեծամասնութիւնը կը հաւատայ, թէ այս

փրկութիւնը մահէ ետք դժոխքի մէջ «յաւիտեան»՝ անվերջ ժամանակ, այրիլ եւ տառապիլէ փրկուիլն է: Բայց ինչպէս այլուր շեշտուած է, յաւիտեանականութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ներկան է: Ուրեմն թէ՛ դրախտը, թէ՛ ալ դժոխքը պէտք է ներկային մէջ ըլլան: Միթէ ստեղծագործութեան մէջ ամէն ինչ երկուութեան վրայ հիմնուած չէ՞. մեծ-պզտիկ, տաք-պաղ, այր-կիւն, ուրախ-տխուր, բարի-չար, ծնունդ-մահ...: Միթէ դրախտը եւ դժոխքն ալ, իրարու երկու հակասական «վայրեր»՝ վիճակներ չէ՞ն, այս երկուութեան մաս չէ՞ն կազմեր: Ուրեմն անոնք ալ հոս աշխարհի վրայ պէտք է ըլլան եւ ներկային մէջը: Միթէ, այսօր, այս աշխարհի մէջ չկա՞ն անձեր, որոնց կեանքը դժոխային է եւ ուրիշներ կարծէք դրախտի մէջ կ'ապրին: Հետեւաբար Աւետարանին մէջ գրուած Յիսուսի ըսած փրկութիւնը ի՞նչէ փրկուիլ է: Ինչպէս վերեւ յիշեցինք, մարդուն հոգին անմահ է եւ կը վերամարմնանայ պատշաճ վայրի եւ կացութեան մը մէջ, որ կը համապատասխանէ անձին անցեալի մարմնացումներուն ընթացքին կերտուած ճակատագրին: Փրկութիւնն ալ շարունակական վերամարմնանալու «անիւէն»՝ ծնունդի եւ մահուան պատրանգային երկուութենէն ազատիլն է: Ան նաեւ Քրիստոսի շնորհած յարութեամբ մարդուն անհատականութեան մահէ եւ անհետացումէ ազատիլն է: Աստուծոյ միանալ՝ Անոր հետ մէկ ըլլալ, միականութեան մէջ գիտակցաբար գոյատեւելն է: Աս', Աստուծոյ շնորհքը՝ պարգեւն է, որ Աստուած կը շնորհէ անոնց, որոնք կը յաղթեն իրենց «Շ»-ին եւ կը յաջողին իրենց կեանքի պարտականութեան մէջ, այսինքն լրիւ կը յայտնաբերեն Քրիստոս իրենց մէջ, ինչպէս Յիսուս ըրած էր: Այս իրողութիւնն ալ շեշտուած է հետեւեալ համարին մէջ.

«Որ յաղթէ՝ արարից պնա սիւն դաճարի

Աստուծոյ իմոյ, եւ արքայա՛ն աշխ մի եւս
ելցէ. եւ Գրեցից 'ի վերայ նորա պանունն

Աստուծոյ իմոյ, ...» (Յայտնութիւն Գ:12)

«Ան որ կը յաղթէ, զանիկա իմ Աստուծոյ տաճարին
մէջ սին մը պիտի ընեմ ու ալ դուրս պիտի չելլէ:
Անոր վրայ իմ Աստուծոյ անունը պիտի գրեմ ...»

Այս համարին մէջի «եւ արտաքս այլ մի եւս ելցէ»
այլեւս գիտակցութեամբ Աստուծոյ չբաժնուիլ կը
նշանակէ: Իսկ հետեւեալ երկու նախադասութիւնները
«արարից վնաս սին տաճարի Աստուծոյ իմոյ» եւ «գրեցից
'ի վերայ նորա զանունն Աստուծոյ իմոյ» անհատին Աս-
տուծոյ հետ մէկ ըլլալուն եւ Աստուծոյ մէջ լուծուիլը
կը նշանակէ: Իսկ սկիզբի «Որ յաղթէ»-ն ալ անհատին իր
«Ես»-ը յաղթած ըլլալուն ակնարկութիւնն է:





**ՍՈՐԿԻ ԵՎ ԽՈՐՀՐԿԱԾԵԼԻՈՒ
ԱՆՕԳՈՒՄ Է:
ԽՈՐՀՐԿԱԾԵԼ ԵՎ ՍՈՐԿԵԼԻՈՒ
ՎՏԱՐԳԱԽՈՐ Է:**

ԿՈՆՖՈՒՅԻՐՈՒ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Մարդկույթեան մեծ մասը կը կարծէ, թէ յաւիտենականնութիւնը է՛ անվերջ ժամանակ: Շատ մը գիրքերու եւ յօդուածներու մէջ նախապէս նշած եմ, թէ յաւիտենականնութիւնը անվերջ ժամանակ չէ, այլ ժամանակի գրուածնէ գուրս ըլլալ է:

Բոլոր տիեզերքի մէջ միայն երկու յաւիտենականներ կան: Հետեւեալ համարը կը բացայայտէ, թէ անոնցմէ մին Աստուած է: Աստուած ժամանակի ենթակայ չէ, այլ տիեզերքը եւ ժամանակը Աստուծոյ մէջն են:

«Պարբասար է աբոու ին իսկաբանէ յաւիտեանս
դոու ես»: (Սաղմոս ԴԲ:2)

«Քու գահդ վաղուց հաստատ է. Դուն յաւիտենական
ես»: (Սաղմոս ԴԳ:2)

Նոյնիսկ, վերելի. «բոլոր տիեզերքի մէջ» գրուած թիւնն ալ սխալ է, որովհետեւ տիեզերքն ալ ստեղծուած է, որով սկիզբ մը ունի հետեւաբար՝ վախճան ալ: Բայց պէտք է հասկնալ, թէ Ան որ յաւիտենական է, այսինքն տիեզերքը ստեղծող Աստուած, է նաեւ տիեզերքի մէջ: Շատ հաւանական է, որ շատերու համար Աստուծոյ յաւիտենականնութիւնը որեւէ զարմանքի պատճառ չ'ըլլար:

Աստուծմէ զատ ուրիշ ի՞նչ բան յաւիտենական կրնայ ըլլալ: Այն ինչ որ յաւիտենական է միայն մեր Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին յատուկ է եւ անոր ամէն մի աղօթատեղիին խորանին վրայ ներկայացուած: Ասիկա «Է» տառն է: Հայերէնի «Է» գիրը հական բային ներկայ ժամանակ երրորդ դէմքն է (Տես նաեւ «Լոյս ի Լուսոյ (Ա.)» գիրքի «Աստուած կա՛յ թէ չկայ» խորագրեալ Դ. գլխուն մէջ, էջ 86): «Է» տառը կը ներկայացնէ

Աստուած, ինչպէս նաեւ ներկան: Հետեւեալ համարները ցոյց կու տան, թէ Աստուած միայն ու միշտ ներկային մէջ է: Աստուծոյ համար բային միշտ ներկայ ժամանակը գործածուած է:

«Էս առ Լսարոսաթ ցՄ ովսէս էս էմ Լսարոսաթ

որ էն» (Ելէ Գ: 14)

«Էւ Աստուած ըսաւ Մովսէսին. «Ես եմ ՈՐ էՆ»»:

«Լսէ ցնոսայ Յիսոս. ամէն ամէն ասեմ յէզ.

յսոսաջ էան պիկնէն Լբրաւամոս էմ էս»

(Յովհաննոս Ը:58)

«Յիսուս ըսաւ անոնց. «Ճշմարիտ ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, Աբրահամին ըլլալէն առաջ եմ ես»»:

Եթէ Աստուած յաւիտենական է եւ միշտ ներկային մէջ, տրամաբանական է ըսել, թէ ներկան ալ յաւիտենական է:

Ժամանակը գոյութիւն չունի, հետեւաբար, ոչ անցեալը եւ ոչ ալ ապագան ճշմարտութիւն են, կամ գոյութիւն ունին: Միթէ չե՞ք ըսեր. «Միակ ճշմարտութիւնը Աստուածն է»: Անցեալը եւ ապագան մարդուն մտքին ստեղծած եւ կերտած պատրանքային երեւոյթներ են: Ճիշդ ասոր համար ալ կարելի եղած է փաստել թէ ժամանակը յարաբերական է եւ կ'ընթանայ տարբեր արագութեամբ՝ ըստ անհատին յայտնաբերած գիտակցութեան մակարդակին (Տես նաեւ «Լոյս ի Լուսոյ Գ. - Տիեզերական Օրէնքները» գիրքիս «Գիտակցութիւնը եւ Ժամանակը» խորագրեալ է. գլխուն մէջ, էջ 203): Ստեղծագործութեան սկիզբը թէ՛ ժամանակը եւ թէ՛ միջոցը (space) ի յայտ եկան: Այս հիման վրայ միջոցն ալ ճշմարտութիւն մը չէ եւ հետեւաբար՝ յարաբերական: Միթէ չե՞ք ըսեր. «Աստուած ամէն տեղ է»: Աստուած միայն ներկային մէջ գոյ է եւ հ'ոս: «Հոս»-ը, այն տեղն է ուր դուն ես, կամ ուր ես եմ, կամ ոեւէ ուրիշ անձ մը՝ ուր որ է: Այդ «հոս»-ը, հոս-ու-հոնի երկուութեան ենթակայ չէ, ինչ-

պէս ներկան ալ անցեալի եւ ապագայի ենթակայ չէ: Ճիշդ ասոր համար Քրիստոս ստեղծագործութեան մէջ ամենուրեք է: Բայց Աստուծոյ ներկայութիւնը մարդուն մէջ անհատին կեանքն է:

«Լոյս Տէարն շոնշ մարդկան, ...»: (Լուսկայ 1:27)

«Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է»:²

Առանց Աստուծոյ՝ Քրիստոսի իր մէջ ներկայութեան մարդն ալ կեանք չ'ունենար: Հետեւաբար ամէն անհատ իր ընդհանուր կեանքի տեւողութեան միայն ներկան է որ կ'ապրի:

«Լամենայն ինչ զոր Գործեաց՝ Բարի է 'ի Ժամանակի իրոս: Սա՛ է- զամենայն յախիտանա եփ 'ի սիրտս նոցա. զի մի Գոյցէ մարդ զարարածն զոր արար Լստոսա՞ծ 'ի սկզբանէ մինչ ցկայարած» : (Ժողովողին Գ:11)

«Ան ամէն ինչ գեղեցիկ ըրաւ իր ժամանակին, եւ մարդուն միտքին յաւիտենականութեան մտածումը դրաւ. Սակայն ո՛չ մէկը կրնայ յայտնաբերել Աստուծոյ ըրած գործը՝ Սկիզբէն մինչեւ վախճանը»:

Ըստ այս համարին, մարդ իր ներկայ գիտակցութեան մակարդակով յաւիտենականութեան գաղափարը կարող է ունենալ, բայց կարող չէ անոր փորձառութիւնը ունենալ, այսինքն զայն յայտնաբերել: Մարդուն այս անկարողութիւնը ծագում կ'առնէ այն իրողութենէն, թէ ինք իր մտքին ղեկը չէ կարողացած իր ձեռքը առնել եւ ինք պատրանքային երկուութեան գերին եղած է: Ինչպէս կատղած կապիկը ծառին վրայ անընդհատ ճիւղէ ճիւղ կը ցատկէ, մարդուն միտքն ալ, կատղած կապիկին նման, անընդհատ խորհուրդէ խորհուրդ ու զգացումէ զգացում կը «ցատկէ»: Այս բոլոր խորհուրդներն ու զգացումները ծագում կ'առնեն անցեալի յուշերէն եւ ապագայի համար անձին ունեցած ցանկութիւններէն: Այս հիման վրայ, մարդն ալ, հակառակ որ իր

ընդհանուր կեանքը Ֆիզիքայազու միայն ներկային մէջ կ'ապրի, մտայնօրէն իր կեանքին ջախջախիչ մեծամասնութիւնը, իր ստեղծած ժամանակին, կամ անցեալին, կամ ալ ապագային մէջ կ'ապրի՝ անտեղեակ եւ անգիտակից ներկային յաւիտենականութիւն ըլլալէն: Եթէ Աստուած՝ անհատին ներքին Քրիստոսը, միայն ներկային մէջ է, անհատին համար ալ անկարելի կ'ըլլայ Աստուծոյ հետ հաղորդուիլ, որովհետեւ անհատը իր գիտակցութեան կեդրոնացումով «հոն» չէ ուր Աստուած է, այսինքն ներկային մէջ: Միթէ Քրիստոս չըսա՞ւ.

«Եւ որով ո՛չ կամի՛լ Գա՛լ առ իս զի զկեանսն
«նիցիլ» : (Յովհաննոս Ե : 40)

«Դուք չէք ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք»:

Այս խօսքերով Քրիստոսի ակնարկութիւնը յաւիտենական կեանքն է: Քրիստոսի ստորեւ մէջըբերուած խօսքերը կը նկարագրեն մարդուն բռնած ներկայ ընթացքը եւ կենցաղը: Ան, փոխանակ իր ներկայ կեանքին մէջ յաւիտենական կեանքին գիտակցելու, կը սպասէ մարմնին մահուան որպէսզի յաւիտենականութեան արժանանայ:

«Լըթա՛յն Գործեցէ՛լ՝ մի՛ զկորստական կերակուրն,
այլ զկերակուրն որ մնայ ՚ի կեանսն յաւիտենականս
զոր որդին մարդոյ ցազ՛ ինչ զնա Հայր
կնի՛ւնց Լսորոսա՛ջ» : (Յովհաննոս 9 : 27)

«Գացէ՛ք, գործեցէ՛ք ո՛չ թէ կորստական կերակուրին համար, հապա այն կերակուրին համար՝ որ կը մնայ յաւիտենական կեանքին մէջ, եւ մարդու Որդի՛ն պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրը՝ Աստուած զի՛նք կնքեց»:

Այս խօսքերով Քրիստոս կը շեշտէ մարդոց կենցաղը, որ կը ծառայէ «կերակրելու» իրենց մարմինները, յուզումները, զգացումները եւ խորհուրդները: Իսկ եթէ անհատը կարողանայ իր ներքին Քրիստոսի՝ Աստուծոյ Որդւոյն, հետ հաղորդակցիլ, Անկէ կը ստանայ յաւիտե-

նական կեանքի «կերակուրը»: Անհատին ներքին Քրիստոսը, որ է մարդու որդին, է մարդը ինքը, որովհետեւ Քրիստոս անհատին հոգին է, հետեւաբար՝ անոր կեանքը: Յաւիտենական կեանքի «կերակուրը»-ն ալ Ս. Հոգիի գորուծիւնն է: Միթէ Քրիստոս չէ՞ ըսած.

«Լոյս Տէարն շոնշ մարդկան, ...»: (Լուսնայ 1:27)

«Մարդուն հոգին Տէրոջը լոյսն է»: ²

«Ես եմ դուռն, ընդ իս թէ ո՛վ մտնիցէ, կեցցէ՛, ...»: (Յովհաննոս Ժ:9)

«Ես եմ դուռը, եթէ մէկը ներս մտնէ ինձմէ՛ պիտի փրկուի. ...»:

Հետեւեալ համարին մէջ Քրիստոս կը պարզէ Հայր Աստուծոյ կամքը եւ մարդու կեանքին նպատակը:

«Լ՛յս են կամո՛ւ Հօր իմոյ. զի ամենայն որ տեսնիցէ զորդի՛ եւ Հաւատացէ՛ ի նա, ընկալցի՛ զկեանան յաւիտենականս եւ ես՝ յարոցից զնա յառօրն յեղնում»: (Յովհաննոս 9:40)

«Որովհետեւ զիս զրկողին կամքը աս՛ է, որ ո՛վ որ տեսնէ Որդին ու հաւատայ իրեն՝ ունենայ յաւիտենական կեանքը. ես ալ պիտի յարուցանեմ զայն՝ վերջին օրը»:

Հայր Աստուծոյ կամքը այն է, որ ամէն անձ «տեսնէ»՝ հաղորդուի Որդւոյն՝ Քրիստոսի հետ, որպէսզի ունենայ յաւիտենական կեանք: Հաւիտենական կեանքը ներկային մէջ ապրիլն է եւ անտեսել պատրանքը: Այն անձը, որ կը յաջողի յաւիտենական կեանքին արժանանալ, նոյնիսկ եթէ ան շարունակէ այս աշխարհին վրայ գործել, իր միտքը կեղրոնացած կ'ըլլայ ներքին Քրիստոսի վրայ: Իր բոլոր խորհուրդները կ'ըլլան Քրիստոսի խորհուրդները, իր բոլոր արարքները կ'ըլլան Աստուծոյ արարքները եւ կամքը: Անհատը կապուած չ'ըլլար անոնց արդիւնքներուն, որովհետեւ արդիւնքները կը պատկանին Աստուծոյ եւ կը ցոլացնեն Աստուծոյ կամքը: Այս հիման վրայ անհատին կեանքն ալ կ'ըլլայ

չարունակական աղօթք մը: Ահա՛, աս է անընդհատ աղօթելուն ճիշդ իմաստը եւ ոչ թէ անընդհատ ծունկի գալ եւ Աստուծոյն աս ու ան խնդրել: Անտարակոյս, մեր բոլոր արարքները կը ցոլացնեն Աստուծոյ կամքը, սակայն այսպէսով անոնք կ'ըլլան առանց մեր գիտակցութեան: Իսկ այն անհատը, որ կ'արժանանայ յաւիտենական կեանքին, զանոնք կ'ընէ գիտակցաբար: Իսկ երբ Քրիստոս կ'ըսէ. «Ես ալ պիտի յարուցանեմ զայն վերջին օրը», ըսել կ'ուզէ, թէ վերջին օրը անհատին մարմնոյն մահուան օրն է: Միթէ ամէն անհատի մահը իր վերջին օրը չէ՞: Յարուցանելը մարմնին վերակենդանանալը չէ, այլ՝ անձին անհատականութեանը: Երբ մարդ մեռնի իր հոգին, որ Քրիստոսն է, անմահ է: Սակայն, ընդհանուր առմամբ, իր անհատականութիւնն ալ մարմնին հետ կը մեռնի եւ կ'անհետանայ:

«Զի ընդանն մեղաց մահ է» : (Հոովմայեցիս 9:23)

«Որովհետեւ մեղքին վարձատրութիւնը մահ է»:

«այլ իւրախանչիւր 'ի մեղս իւր մեռացի. ...» :

(Երեմիա 1:17:30)

«Հապա ամէն մարդ իր անօրէնութեանը համար պիտի մեռնի. ...»:

Երբ անհատը եսասիրութեամբ կը վարէ իր կենցաղը, նոյնիսկ եթէ կ'ուզէ «փրկուիլ», որ դարձեալ եսասիրութեան նշան մըն է, որովհետեւ կ'ուզէ իր անձը փրկել, բնաւ պիտի չյաջողի: Այն անձը որ կ'անտեսէ իր անհատականութիւնը եւ իր կենցաղով կը հետապնդէ յաւիտենական կեանքը եւ կ'ապրի յաւիտենական կեանքը, մահէ ետք պիտի պահէ իր անհատականութիւնը: Այսինքն անհատականութիւնը յարութիւն պիտի առնէ:

Որ սիրէ զանձն իւր՝ արձակէ զնա. եւ որ սրբայ զանձն իւր յաշխարհիս յայսմիկ, 'ի կեանան յաւիտենականս պահեացէ զնա» : (Յովհաննոս 13:25)

«Ան որ կը սիրէ իր անձը՝ պիտի կորսնցնէ զայն՝ եւ

ա՛ն որ կ'ատէ իր անձը այս աշխարհի մէջ՝
յաւիտենական կեանքին համար պիտի պահէ զայն»:

Բայց դժբախտաբար մարդ կապուած աշխարհի, չ'ուզեր անկէ բաժնուիլ: Իսկ այն անձը, որ յաւիտենական կեանքը կ'ապրի, ինք երանութեան մէջ է որով յօժարաբար կը թողու իր մարմինը եւ աշխարհը: Իսկ եթէ շարունակ է իր Ֆիզիքական կեանքը, զայն կ'ընէ Աստուծոյ կամքը կատարելու համար: Միթէ Յիսուս ալ նոյնը չ'ըրա՞ւ:

«Ամէն ամէն ասե՛մ զի որ Հասարակաց՝ ընդոռնի՛

զկեանսն յախոյենականս» : (Յովհաննոս - Զ : 47)

«Ճշմարտապէս, ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի -
Ա՛ն որ կը հաւատայ ինծի՛ ունի՛ յաւիտենական կեանքը»:

Յիսուս Քրիստոսի հաւատալ կը նշանակէ Անոր բոլոր ըսածներուն հաւատալ եւ զանոնք կիրարկել մեր կեանքերուն մէջ: Ընել այն ինչ որ Յիսուս ըրաւ՝ նմանիլ Անոր եւ երկնաւոր Հօր պէս կատարեալ ըլլալ: Առանց այդ հաւատքին եւ անոր կիրարկման անհատին կեանքին մէջ յաւիտենական կեանքն ալ իրականացնել անկարելի կ'ըլլայ: Միշտ պարտ ենք յիշել, թէ յաւիտենական կեանքը մահէն վերջ՝ ապագային չէ, այլ՝ է ներկային մէջ: Ապագան պատրանքային է, իսկ ներկան՝ ճշմարիտ:

Պատշաճ է անգամ մը եւս շեշտել, թէ յաւիտենական կեանքը մահէն վերջ «աշխարհի»՝ ստեղծագործութեան, վախճանին մարմնային յարուսթիւն առնել եւ ուրիշ վայրի մը մէջ՝ «երկինքը» անվերջ ժամանակ ապրիլ չէ: Այլ ան, ներկային մէջ, մեր ներքին Քրիստոսի հետ գիտակցաբար հաղորդուիլն է: Անոնք, որոնք փրկութեան կը ձգտին, իրենց այս ցանկութեան մէջ ալ կը ձախողին: Եթէ նոյնիսկ, անոնք բազմիցս կրկնեն, թէ վերստին ծնած են եւ կը հաւատան թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է եւ մեր մեղքերուն քաւութեան համար մեռած է, իրենք զիրենք փրկուած չեն կրնար համարել: Ոչ վերստին ծնունդը խօսքով կու

զայ, ոչ ալ փրկութիւնը հաւատալիքներով:

«Ձե՛ր որ կամիցի պանչն իւր կեցո-ցանել,
կորո-սցէ՛ պնա. եւ որ կորո-սցէ պանչն իւր
վասն իմ՝ կեցո-սցէ՛ պնա»: (Ղո-կաս Թ: 24)
«որովհետեւ ո՛վ որ ուզէ փրկել իր անձը՝ պիտի
կորսնցնէ զայն, իսկ ո՛վ որ կորսնցնէ իր անձը՝ ինծի
համար, պիտի փրկէ զայն»:

Կատարելութեան ուղին, որ յաւիտենականութեան
ճանապարհն է, նեղ է եւ խոչընդոտներով լի, հետեւաբար
դժուար է անձին համար այդ ուղին զատել: Եթէ նոյն-
իսկ այդ ուղին զատէ, շատ դժուար է Քրիստոս իր մէջ
յայտնաբերել եւ միայն զհտակցաբար ներկային մէջ
ապրիլ: Շատ դիւրին է «կը հաւատամ, հետեւաբար փրկ-
կուած եմ» ըսելը: Եթէ կատարելութեան ուղին միայն
այդ ըլլար, աշխարհ սուրբերով լեցուն պիտի ըլլար:

«Եւ ա՛յս իսկ է վկայութիւնն զի կեանս յաւիտե-
նականն եր մեզ Աստուած եւ ա՛յս էն կեանչն,
որ յորդին նորա էն»: (Լ. Յովհաննոս Թ-ուրբ Ե: 11)
«Իսկ աս է վկայութիւնը. Աստուած տուաւ մեզի յաւի-
տենական կեանքը՝ եւ այս կեանքը անոր Որդիին մէջ է»:

Այս համարը անգամ մը եւս կը շեշտէ թէ յաւիտենա-
կան կեանքը տրուած է ամէն անհատի, հարկաւ եթէ
անհատը իր կենցաղով այդ ուղղութեամբ ընթանայ իր
կեանքի տեսողութեան: Պէտք է մոռնալ թէ անհատը
ազատ կամք ունի՝ զատելու ժամանակաւոր կեանքը,
կամ թէ յաւիտենական կեանքը: Ահա՛ աս էր որ Յիսուս
մեզի սորվեցուց: Աշխարհի մէջ ապրելով հանդերձ
պարտ ենք չկապուիլ անոր:


Եւ ամենայն որ ո՛վ էթող ստու-ն, կամ սեղսայրս,
կամ սեղսայրս, կամ սեղսայր, կամ սեղսայր, կամ սեղսայր,
կամ սեղսայրս, կամ սեղսայրս սեղսայրս անու-ան իմոյ,
հարի-րապարիկ ա-սցէ՛ եւ սեղսայրս յաւիտեան-

կանս ժառանգեացէ» : (Մատթ. 29)

«Ո՛վ որ թողուցած ըլլայ տուներ, եղբայրներ, քոյրեր, հայր, մայր, կիսն, զաւակներ, կամ արտեր՝ իմ անունիս համար, պիտի ստանայ հարիւրապատիկը եւ ժառանգէ յաւիտենական կեանքը»:

Այս համարին ըսածը անտեսել չէ մեր պարտականութիւնները, ընդհակառակը զանոնք լաւագոյնս կատարելն է, բայց ոչ իբրեւ մեզի պատկանող սեփականութիւններ, այլ Աստուծոյ պատկանող եւ որպէս Աստուծոյ կողմէ մեզի տրուած պարտականութիւններ: Անոնք պէտք չէ համարենք որպէս մեր սեփականութիւնը եւ կապուինք անոնց: Այսօր հարուստ եմ, իսկ վաղը՝ աղքատ: Այսօր ամուսնացած եմ, վաղը՝ այրիացած: Այսօր զաւակ ունիմ, վաղը՝ ոչ: Հոգ չէ թէ կեանքի պատահարները ինչեր կը բերեն եւ ինչ վիճակներու կ'ենթարկեն անհատը, մարդ միշտ իր հաւասարակշռութիւնը պարտ է պահել եւ այդ պատահարներէն չազդուելի: Աս կարելի կ'ըլլայ միայն ու միայն այն ատեն երբ անհատը կ'ապրի յաւիտենական կեանքը: Ան ամէն ինչ կ'ընդունի իբրեւ Աստուծոյ կամքը: Միթէ Յիսուս ալ չընդունէ՞ց խաչին ճամբան որպէս Աստուծոյ կամքը:

Այս յաւիտենական կեանքին մէջ յաջողողին համար կարելի է ըսել թէ իր կեանքը շարունակական անընդհատ աղօթքի՝ խոկումի պահ մըն է:





ՄԻԱՅՆ ՄԷԿ ՎԱՅՐԿԵԱՆ

**Ես ունիմ միայն մէկ վայրկեան
Որ ունի վաթսուին երկվայրկեան**

**Պարտադրուած եմ, ջեմ Կրևար մերժել
Չփեսմեժի ջայն, ջեմ Կրևար ջասել
Բայժ ստիպուած եմ ջայն օգտագործել**

**Պիտի սառապիւմ եթէ Կորձնեմ ջայն
Հնչիի ուէջք է սաւ եթէ եղծեմ ջայն
Միայն տրբին ու փոքր վայրկեան
Մէջն ստոր ներկան յսիճեանկան**

ԲԺՇ. ԲԵՆՅԱՄԻՆ Է. ՄԵՅԱ
(Dr. Benjamin E. Mays)
(ԱՅՍ ԽԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ Վ. Ս.)



ՄԱՐԴԸ ՀԱՒԱՏՔԸ, ՅՈՒՅՍԸ ԵՒ ՍԵՐԸ

Ըստ մարդուն այժմու կացութեան ան «երկուութեան» երկու բեւեռներուն միջեւ անընդհատ կը ճոճի: Մարդ արարած կը թուի զգացումներու եւ յուզումներու մարմնացումը ըլլալ: Ան երբեմն կը խնդայ եւ երբեմն ալ կու լայ: Երբեմն կը բարկանայ, երբեմն ալ խաղաղ հանդարտ կ'ըլլայ: Ան երբեմն կ'ըլլայ անօգ ու կարօտալից եւ երբեմն ալ ուրիշներ անօգ ու կարօտալից վիճակի կը մատնէ: Ան երբեմն երջանիկ կ'ըլլայ, բայց, դժբախտաբար, երբեմն ալ տխուր: Եթէ ան կը փափաքի յաւերժական երջանկութիւն ունենալ եւ գոհունակութեան տէր, պարտ է ինքզինք ձերբազատել բոլոր զգացումներէն ու յուզումներէն: Ահա՛ աս էր, որ Յիսուս մեզի սորվեցուց: Մարդ իր երջանկութիւնը կը կորսնցնէ իր խաւարամտութեան հետեւանք: Խաւարամտութիւնը իրեն կու տայ երկուութեան գաղափարը, քան թէ միականութեան գիտակցութիւնը որ ճշմարտութիւնն է: Եթէ ան անդրադառնայ այս իրողութեան եւ չազդուի երկուութեան յառաջ բերած զգացումներէն ու յուզումներէն, անկարելի է որ ինք տխրութեան, ընկճումի, անձկութեան ու տառապանքի ենթարկուի:

Իմաստութիւնը Աստուծոյ շնորհքն է եւ Աստուծոյ «Լոյս»-ը՝ անձին մէջ: Այն անձը, որ կը կարողանայ յայտնաբերել Աստուծոյ այդ «Լոյս»-ը իր մէջ, իր հաւասարակչութիւնը ամենեւին չի կորսնցներ ու կը մնայ խաղաղ երկու ծայրահեղութիւններէ՝ ուրախութիւններէ կամ տխրութիւններէ հեռու: Իր միտքը կեդրոնացած Աստուծոյ վրայ, ինք գոնէ մտայնօրէն կ'ըլլայ Աստուծոյ հետ եւ ահա՛, աս է ճշմարիտ նուիրումը ու բարեպաշտութիւնը:

Մարդկութեան ջախջախիչ մեծամասնութիւնը, անկարող իր կեանքին ղեկը ձեռք առնելով եւ պատշաճ

կենցաղ մը կերտելով իր ապագան որոշելու, կը թողու, որ ինք կառավարուի ուրիշներու կողմէ տրուած հաւատալիքներով: Նոյնիսկ ան կը կարօտի այդ հաւատալիքներուն, որովհետեւ ինք կը կարծէ թէ նման հաւատալիքներով կերտուած կենցաղ մը մեծ մասամբ իրեն «ուսերուն» վրայէն կը վերցնէ հսկայ պատասխանատուութիւն մը: Անտարակոյս կան ինքնավստահ եւ զօրաւոր կամքի տէր անհատներ, բայց ընդհանուր առմամբ անոնք ալ իրենց ունեցած կարողութիւններու հպարտութեամբ, իրենք զիրենք կը տկարացնեն: Որով հպարտութիւնը տկարութիւն է: Հպարտ մարդուն նախապէս ունեցած զօրութիւնն ալ աւելի կը զօրացնէ իր բոլոր թերութիւնները եւ ան կը կորսնցնէ իր կեանքին նպատակն ու ապագան:

Ըստ Ս. Գիրքին, միայն Աստուած է, որ կը խնամէ ընդհանուր ստեղծագործութիւնը, ներառեալ մարդը: Աստուած նաեւ կ'որոշէ անձին ապագան, բայց մարդ չ'անդրադառնար այս իրողութեան եւ ինքզինք կը դնէ Աստուծոյ տեղ եւ կը կերտէ իր ապագան՝ դժբախտութիւն ու մահ: Ան այս արարքով կարծէք «ասպարէզ կը կարդայ» Աստուծոյ, քան թէ անձնանուիրումով արտօնէ, որ Աստուած որոշէ իր ապագան: Ան, փոխանակ աստուածալաշտութեան կարծէք կը պատերազմի Աստուծոյ հետ: Մարդ անկարող կ'ըլլայ հասկնալ, թէ ինք չէ որ իր ապագան՝ ճակատագիրը կ'որոշէ: Ան հետեւանքն է իր բոլոր խորհուրդ, խօսք ու արարքներուն: Անձը չի կըրնար հասկնալ թէ իր բոլոր արարքները, լաւ կամ վատ, նուիրուած են Աստուծոյ: Այս «նուէր»-ներուն հիման վրայ Աստուած ալ կ'որոշէ անձին ապագան: Ահա՛ աս է, որ ճակատագիր կը կոչենք: Մարդ արարած անկարող է իր ճշգրիտ ապագան կերտել, որովհետեւ ոչ ոք միմիայն առաքինութիւններու տէր է: Բայց պէտք է մոռնալ, թէ Քրիստոս ամէն անհատի հոգին է: Ամէն մի

անհատ բանտարկեալ մըն է, ոմանք կալանաւորուած իրենց հաւատալիքներով, ոմանք՝ իրենց աշխարհիկ պատասխանատուութիւններով, ուրիշներ՝ իրենց ցանկութիւններով եւ նոյնիսկ ոմանք՝ իրենց ունեցած սէրով: Իսկ համայն մարդկութիւնն ալ կալանաւորուած է նաեւ մահուան գաղափարով: Յիսուս Քրիստոսի հետեւեալ խօսքը ճիշդ աս է որ կը ներկայացնէ:

Եւ ամենայն որ ոչ եթող սրտն, կամ սեղէայրս,
կամ սէոյրս, կամ սէայր, կամ սմայր, կամ սկին,
կամ սորոյնս, կամ սաճարակս վասն անոան իմոյ,
Ըարի-րապարակ առցէ՝ եւ սկեանան յառիտեան-
կանս ժառանգեացէ»: (Մարթէոս ԺԹ:29)

«Ո՛վ որ թողուցած ըլլայ տուներ, եղբայրներ, քոյրեր, հայր, մայր, կին, գաւակներ, կամ արտեր՝ իմ անունիս համար, պիտի ստանայ հարիւրապատի՛կը եւ ժառանգէ յախտենական կեանքը»:

Մարդ պարտ է ինքզինք այս բանտէն ազատ արձակել: Մարդ ուշ կամ կանուխ իր բոլոր գործած մեղքերուն պատիժը պիտի կրէ՝ պարտքերը վճարէ: Միթէ Յիսուս չըսա՞ւ. «Մ. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Մարդուն խորհուրդ, խօսք ու արարքները իր ազատ կամքին համաձայն չեն եւ նոյն ատեն իր կեանքի փորձառութիւնները եւ պատահարներն ալ ըստ իր կամքին չեն: Հոգ չէ թէ անհատը կարծէ թէ անոնք իր կամքէն ծագում առած են: Մարդ կը կառավարուի իր ենթագիտակցութեան մէջ տեղաւորուած հաւատալիքներով, հետեւաբար՝ ըստ իր բնութեան: Իր լաւ արարքներուն համար կը վարձատրուի հաճելի, լաւ եւ դրական պատահարներով, իսկ վատ արարքներն ալ գինք կ'առաջնորդեն դէպի կորուստ: Յաճախ կը լսենք. «Եթէ Աստուած բարի է եւ ստեղծեց ընդհանուր տիեզերքը, ինչո՞ւ համար նաեւ ստեղծեց «չարը»:

Ստեղծագործութիւնը կը թուի հիմնուած ըլլալ

երկուութեան վրայ, ապա թէ ոչ միայն Աստուած գոյութիւն պիտի ունենար: Աստուած միականութիւն է: Ճշմարտութիւնը այն է թէ ստեղծագործութիւնն ալ միականութիւն է եւ երկուութիւնը՝ զանազանութիւնը պատրանգային է, երազ մըն է եւ ոչ ճշմարտութիւն: Մարդուն նպատակն ալ պատրանգին վերջ տալ եւ ճշմարտութեան գիտակցիլն է՝ երազէն արթննալն է: Հետեւաբար ստեղծագործութեան մէջ լոյսին հետ մութըն ալ միանգամայն յայտնուեցաւ: Եթէ մութը չըլլար, արդեօք պիտի կարողանայի՞նք լոյսը գնահատել: Ինչպէս լոյսը եւ մութը, յայտնուեցան նաեւ բարին եւ չարը, երջանկութիւնը ու տխրութիւնը: Առանց տխրութեան գոյութեան, երջանկութիւնը նոյն խանդավառութիւնը պիտի չունենար: Դարձեալ յայտնուեցան սէք, նուիրում, զոհողութիւն եւ զանազան առաքիւնութիւններ, բայց նաեւ բարկութիւն, եսասիրութիւն, կապուածութիւն, հպարտութիւն, նախանձ, մոլութիւններ, կեղծաւորութիւն, տուփանք ...: Մարդու կեանքին նպատակը իր բոլոր թերութիւններուն յաղթահարելն է: Ճիշդ ասոր համար Աստուած մարդուն տուած է ազատ կամք, ինչպէս նաեւ դատելու եւ զատելու կարողութիւն:

Բայց մարդ ի՞նչպէս պիտի յաջողի այս կատարելութեան ուղիին մէջ ու սրբանայ: Աստուած միշտ մարդուն ապաշխարելու եւ իր կենցաղին ուղղութիւնը փոխելու առիթը կու տայ: Ճիշդ աս էր, որ Յիսուս Իր կեանքով՝ արարքներով, իր խօսքերով՝ յորդորներով եւ առականերով ուզեց մեզի սորվեցնել, հարկաւ եթէ Իրեն հաւատանք եւ Իր բոլոր սորվեցուցածներուն խորքը թափանցենք եւ զանոնք հասկնանք ու կիրարկենք մեր կեանքին մէջ: Մենք ալ պարտ ենք Յիսուսին նմանիլ եւ երկու ծայրահեղութիւններէն խուսափիլ ու մեր հաւասարակշռութիւնը պահել եւ ուշադիր ըլլալ, որ Յիսուսի սորվեցուցածներուն հակառակ գործելով չմեղանչենք:

Մարդ ամենեւին պէտք է լուսահատի եւ միշտ պէտք է հաւատք ունենայ իր ճշմարիտ հոլթեան վրայ, որ Քրիստոսն է: Ան նաեւ պարտ է վստահիլ Քրիստոսին եւ ի սէր Քրիստոսի իր ըրած «զոհողութեան»: Անձին յայտնաբերած սէրը զինք կը զօրացնէ եւ զինք կը ձերբազատէ ամէն տեսակի կալանաւորումէ: Սէրը անձին մէջ Աստուծոյ ներկայութեան փաստն է: Մարդուն խիղճն ալ, որ սիրոյ հետեւանքն է, Աստուծոյ ձայնն է: Իսկական սէրը կ'անտեսէ եւ կը յաղթէ բոլոր դժուարութիւնները: Յարմար է մէջբերել Պօղոս առաքեալի սիրոյ մասին գրածը.

«Եթէ պէպոս մարդկան խօսեցիմ եւ հրեշտակաց, եւ սէր ո՛չ ունեցիմ, եղէ ես իբրեւ պողոնն, որ հնչէ կամ իբրեւ պօշօշոյս որ զօղջէն: Եւ եթէ ունեցիմ պարագարեութիւն եւ գրեցիմ պտորհորոս ամենայն եւ պամենայն գրեութիւն եւ եթէ ունեցիմ պամենայն հասարակ՝ մինչեւ պէրինա փոփոխելոյ եւ սէր ոչ ունեցիմ. ո՛չ ինչ եմ: Եւ եթէ ջամբեցիմ պամենայն ինչս աղէտաց եւ մարեցիմ պարմինս իմ յայրոսմն եւ սէր ոչ ունեցիմ. ո՛չ ինչ օգրիմ: Ալ եւ երկայնամիտ եւ խաղցրանայ. սէր՝ ո՛չ նախանշի, ո՛չ ամպարհասձէ, ո՛չ հարարանայ. ո՛չ յանդգնի. ո՛չ խնդրէ պիտ, ո՛չ գրգռի. ո՛չ խորհի պար. ո՛չ խնդայ ընդ անիրաւութիւն. այլ խնդայ ընդ սրտագրութիւն. ամենայնի՛ր եւեւ. ամենայնի՛ր հասարայ. ամենեւե՛ն յոսայ. ամենայնի՛ր համբերէ: Ալ եր ո՛չ երբե՛վ անկանի. եթէ մարագարեութիւնէ եմ՝ խափանեացի՛ն, եթէ լեպոսէ՛ լուսացե՛ն, եթէ

Գրքոս-Դիւն՝ Խասիանեացի՝ » : (Լ. Կորնելացիս ժ.Գ:Ի-Յ)
«Եթէ խօսիմ մարդոց եւ հրեշտակներուն լեզուները՝
բայց սէր չունենամ, ես հնչող պղինձի պէս կ'ըլլամ,
կամ դօղանջող ծնծղայի պէս: Ու եթէ ունենամ մարգա-
րեութեան պարգեւը, հասկնամ բոլոր խորհուրդները եւ
ամբողջ գիտութիւնը, ու եթէ ունենամ ամբողջ հա-
ւատքը՝ որ կարենամ լեռներ տեղափոխել, բայց սէր
չունենամ, ես ոչինչ եմ: Եւ եթէ սնուցանեմ աղքատ-
ները՝ իմ ամբողջ ինչքովս, ու մարմինս այրուելու
ընծայեմ, բայց սէր չունենամ, ես օգուտ մը չեմ
ունենար: Սէրը համբերատար է, քածցը է: սէրը չի
նախանձիր. սէրը չի գոռոզանար, չի հպարտանար.
անվայել վարմունք չ'ունենար, իրենը չի փնտեր, չի
գրգռուիր, չարութիւն չի մտածեր. անիրաւութեան
համար չ'ուրախանար, հապա ճշմարտութեան ուրախվից
կ'ըլլայ. ամէն բանի կը հանդուրժէ, ամէն բանի կը
հաւատայ, ամէն բանի կը յուսայ, ամէն բանի կը
տոկայ: Սէրը բնա՛ւ չ'իյնար. բայց եթէ մարգարեու-
թիւններ ըլլան՝ պիտի ոչնչանան, եթէ լեզուներ՝ պիտի
գաղբին, եթէ գիտութիւն՝ պիտի ոչնչանայ»:

*Մահացու մեղքերէն ամենագորաւորները եսասիր-
րութիւնն ու հպարտութիւնն են: Եսասիրութիւնը պատ-
ճառն է միւս բոլոր մեղքերուն: Հպարտութիւնն ալ նոյն-
իսկ կատարելութեան ուղիին մէջ, անձին յաջողած ըլլա-
լու հպարտութիւնը կու տայ: Հպարտութիւնը եւ եսասիր-
րութիւնը իսաւարամտութեան հետ սերտ կապ ունին:
Անոնք կը կաշկանդեն գիտակցութեան յայտնութիւնը:
Խաւարամտութիւնը կաշկանդուած եւ սահմանափակ-
ուած գիտակցութիւնն է: Գիտակցութիւնը գիտութիւն
եւ իմաստութիւն կու տայ եւ ճշմարտութիւնը կը յայտ-
նէ եւ պատրանգը կը փարատէ: Աս ալ Աստուածահաճոյ
կենցաղի մը ճամբան կը բանայ: Պէտք չէ մոռնալ, թէ
անհատին գիտակցութիւնը իր մէջ Աստուծոյ ներկայու-
թիւնն է: Այն անձը, որ իր անխախտելի հաւատքը դրած
է իր ներքին Քրիստոսին վրայ եւ առանց դժգոհու-
թեան եւ վարանումի իր կեանքի բոլոր լաւ ու վատ*

պատահարները, առանց իր հաւասարակշռութիւնը կորսընցնելու, կ'ընդունի իբրեւ Աստուծոյ կամքը, պիտի տեսնէ, որ Աստուած ալ շուտով կը հարթէ իր դժուարութիւնները: Աստուած կ'օգնէ բոլոր անոնց, որոնք ամէն ինչի մէջ մեծ յոյսով Իրեն կ'ապաւինին եւ Իրեն մօտ են: Անհատին ունեցած հաւատքը եւ անոր որակը ամենակարեւոր միջոցառումն է կատարելութեան ուղիին մէջ յաջողելու համար: Հաւատքին տեղը մարդուն սրտին մէջն է եւ անոր գոյութիւնը կախեալ է թէ՛ անոր նուիրումէն, թէ՛ ալ վախէն: Երբ հաւատքը յառաջ կու գայ նուիրումէն, ան մարդը կը յառաջացնէ դէպի իր ներքին Քրիստոսի յայտնութեան: Բայց երբ հաւատքը յառաջ կու գայ վախէն, ան ալ մարդուն մէջ կը յառաջացնէ հպարտութիւն ինչպէս նաեւ բարկութիւն ու բռնապետութիւն, որոնք, անտարակոյս, զինք կը տանին դէպի կործանում: Մարդ բարկութիւն ցոյց կու տայ, որովհետեւ կը վախնայ թէ ուրիշներ զինք տկար պիտի համարեն:

Հետեւաբար կատարելութեան ուղիին մէջ մարդուն յառաջդիմութեան համար կարեւոր են հաւատքը, յոյս եւ սէր: Յարմար է հոս մէջբերել Պօղոս առաքեալի գրածը.

«Բայց արդ՝ մնան Հաւատք, յոյս, սէր, սոքա երեւեան. եւ մեծ շան պատաս՝ սէր է»: (Լ. Աորնթացիս ԺԳ:13)

«Իսկ հիմա սա՛ երեքը կը մնան՝ հաւատքը, յոյսը, սէրը. բայց սէ՛րն է ասոնց մեծագոյնը»:



ԱԶԳԸ



Ազբը օր մը ըսաւ. «Այս
ՀՈՎԻՏԷՆ ԱՆՊԻՆ ԱՇՈՒՇԱՊԱՏ
լեռ մը կը տեսնեմ: Միթէ
գրդեճիկ ջէ՞»:



ԱԿԱՆՁը ուճարորոհօճեամբ
մտիկ ընելէ վերջ ըսաւ. «Բայժ
ո՞ր է լեռը. Ես ջայն ջեմ
լսեմ»:



ՅԵՏՈՅ ջեռքը ԽՕՍԵՅԱՒ ՈՒ
ըսաւ. «ՁԱՆՔ Կ'ըՆԵՄ ԼԵՐԱՆ
ԴՊՉԻԼ, ԲԱՅՅ ԱՊԱՐԴԻՒՆ,
ԿԱՐՈՂ ջեմ լեռ գՏՆԵԼ»:



ՈՒ քիթը ըսաւ. «ԼԵՐ
ԳՈՅՈՒԹԻՒՆ ՉՈՒՆԻ, ԵՍ
ԱՆՈՐ ՀՈՏԸ ջեմ ԱՊՆԵՐ»:

ԱճԵՆ ԱՂ ԴԱՐՁԱՒ ՀԱԿԱՊԱԿ ՈՒԴՂՈՒԹԵԱՆ ԵՒ
բոլորը սԿԱՆ ԽՕՍԻԼ ԱՃԵՐԻՆ ՈՒՆԵՅԱԾ
ՏԱՐՕՐԻՆԱԿ ՏԵՍԻԼԵՐԻՆ ՎՐԱՂ ՈՒ ԸՍԻՆ.

«ԱճԵՐԻՆ ԲԱՆ ՄԸ ՊԱՏԱՀԱԾ ԸԼԼԱՂՈՒ Է»:

ԽԱՂԻԼ ՃԻՊՐԱՆ

(ԹԱՐԳԱՆԱՆԾ Վ. Ս.)

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԵՒ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

Յաճախ կ'իմանանք հետեւեալ ասացուածքը. «Առանց Աստուծոյ կամքին տերեւ մը իսկ չի շարժիր»: Հետեւաբար, այս իրողութեան հիման վրայ, ամէն ինչ որ կը պատահի այս աշխարհի վրայ կ'ըլլայ ըստ Աստուծոյ կամքին: Նախ պարտ ենք հասկնալ, թէ ի՞նչ է «Աստուծոյ կամքը»: Այսինքն, ի՞նչ ըսել կ'ուզենք երբ կ'ըսենք Աստուծոյ կամքը: Մարդ կը կարծէ, թէ Աստուած «վերը - վայր մը»՝ «երկինք»-ը նստած աշխարհ եւ համայն մարդկութիւնը կը դիտէ եւ ամէն մի անհատին կենցաղին համապատասխան պատշաճ վարձատրութիւն կամ պատիժ կը տնօրինէ: Եւ ահա՛, այդ կ'ըլլայ Աստուծոյ կամքը: Անտարակոյս, նման հայեացք մը սխալ է եւ երախայական:

Շատեր կը համարեն, թէ Աստուծոյ կամքը անհատին կամքէն անկախ իրեն տրուած ճակատագիրն է: Անտարակոյս այս հայեացքն ալ սխալ է: Բայց միւս կողմէն պէտք չէ մոռնալ, թէ ճակատագիրը եւ «Աստուծոյ կամքը» իրարու հետ սերտ կապ ունին: Եթէ ամէն ինչ կ'ընթանայ ըստ Աստուծոյ կամքին, ո՞ր կը մնայ մարդուն տրուած ազատ կամքը:

Մարդ իր Ֆիզիքական եւ մտային «մարմին»-ներէն զատ ունի նաեւ զօրութեան մարմին մը: Այդ զօրութեան մարմինը մարդուն հոգին՝ իր ներքին Քրիստոսը՝ Աստուծոյ որդին է: Աստուած սէր է եւ միշտ լաւագոյնը կը բաղձայ բոլորին: Ահա՛, աս է իմաստը յաջորդ նախադասութեան. «Աստուծոյ շնորհները կը տեղան թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն վրայ առանց խտրութեան»: Դժբախտաբար, մարդուն անհատականութիւնը, անտեսելով իրեն տրուած զօրութեան մարմնին սրբութիւնը եւ կարողութիւնները, կ'որոշէ ինք կառավարել ինքզինք: Իր խորհուրդ, խօսք ու արարքներուն համապատասխան տեղեկութիւն կ'ամբարէ իր զօրու-

Թեան մարմինն մէջ: Անհատը ինք կ'որոշէ ինչ որակով
զօրութիւն պիտի արտօնէ իր զօրութեան մարմինէն
ներս: Ինք իր ձեռքով կը խափանէ Աստուծոյ շնորհնե-
րուն ներգործումը իր հութեան մէջ: Պէտք է մոռնալ
թէ ամէն զօրութիւն թրթռացում մը ունի եւ այդ
թրթռացումն ալ իր ուրոյն յաճախականութիւնը: Աս-
տուծոյ շնորհներն ալ, որոնք ճանչցուած են իբրեւ Ս.
Հոգիի շնորհները, ունին իրենց ուրոյն թրթռացումի
յաճախականութիւնները: Աստուած մարդուն՝ Ադամին
տուաւ անբիծ եւ բարձր յաճախականութեամբ զօրու-
թեան մարմին մը (spirit): Ադամ կը վայելէր Քրիստոսի
անհուն գիտակցութեան մակարդակը եւ կ'ապրէր երա-
նութեան մէջ: «Լուսաբեր հրեշտակը»՝ մարդուն անհա-
տականութիւնը, ուզեց կառավարել ինքզինքը, հետեւա-
բար որոշել իր ստացած զօրութեան որակը: Մարդ իր
կենցաղով կը փոխէ իրեն տրուած զօրութեան անբիծ
եւ անարատ յաճախականութիւնը եւ հոն կը տեղաւորէ
բազմաթիւ տեղեկութիւններ զանազան խառն յաճախա-
կանութիւններով: Ինչպէս ռատիոկայանին մէջ ձայնաս-
փիւռի ալիքներուն մէջ որոշ տեղեկութիւններ կը
տեղաւորուին, զորոնք մենք կարող ենք ունկնդրել, նը-
մանապէս մարդ իր զօրութեան մարմինն մէջ ալ կա-
րող է բազմաթիւ տեղեկութիւններ տեղաւորել: Մարդ
այդ «տեղեկութիւններուն» հիման վրայ կը խափանէ
իրեն շնորհուած Քրիստոսի անհուն գիտակցութիւնը եւ
կը յայտնաբերէ իր ուրոյն ցած գիտակցութեան մա-
կարդակը, կամ աւելի ճիշդ է ըսել՝ իր խաւարամտու-
թիւնը: Իր զօրութեան մարմինը (energy body)՝ իր հոգին
(spirit), որ առաջուց անբիծ էր, իր այդ փոփոխ թրթռա-
ցումի յաճախականութեամբ (frequency of vibration) կը կոչ-
ուի անհատին ոգին (soul): Մարդուն կողմէ դրուած տեղե-
կութիւն պարունակող «հոգի»-ն կը կոչուի «ոգի»: Մար-
դըն ալ իր ոգիին մէջի տեղեկութեան համաձայն, անոր

վերամարմնացման ատեն, կը ստանայ պատշաճ Ֆիզիքական եւ մտային մարմին:

Զօրութեան դաշտին մէջ (energy field) իրարու ներդաշնակ զօրութիւններ իրար կը յառին, հետեւաբար անհատն ալ, մագնիսի մը երկու հակառակ բեւեռներուն նման իրեն կը քաշէ պատահարներ որոնց թրթռացումի յաճախականութիւնները ներդաշնակ են իր զօրութեան մարմնին մէջ տեղաւորած տեղեկութիւններուն՝ թրթռացումի յաճախականութեան: Եւ ահա՛, անձին իր ճակատագրին ճարտարապետը ըլլալու իմաստըն ալ աս է: Այս հիման վրայ, անձին կեանքի բոլոր պատահարները ինք պէտք է ընդունի, որովհետեւ ինք է այդ բոլորին պատճառը: Անհատին կերտած ճակատագիրը, իր Աստուծոյ տուած նուէրն է: Բոլոր պատահարները, որոնք կը կառավարուին ըստ զօրութեան օրէնքներուն, են Աստուծոյ կամքը: Ծիշդ ասոր համար Յիսուս մեզի ըսաւ. «Ս. Հոգիի դէմ գործուած մեղքերը աններելի են»: Ս. Հոգին Աստուծոյ զօրութիւնն է եւ թափանցած ընդհանուր ստեղծագործութեան մէջ, որուն համար կարող ենք ըսել «զօրութեան դաշտ»՝ Ս. Հոգիին ներկայութիւնը:

Ուրեմն մարդ արարած ազատ կամքով կը կերտէ իր բնոյթը, որ պատճառն է իր կենցաղին: Ան չի հասկնար իր կենցաղին եւ իր կեանքի լաւ ու վատ պատահարներուն իրարու հետ ունեցած կապը, հետեւաբար կը մեղադրէ Աստուած եւ դժբախտաբար ընդհանրապէս կը մոռնայ Աստուծոյ շնորհակալ ըլլալ՝ լաւ եւ հաճելի պատահարներուն համար: Անհատը իր ճակատագիրը՝ հետեւաբար «Աստուծոյ կամքը» ինք կ'որոշէ իր կենցաղով: Աստուած մարդուն չի պատժեր ու միայն լաւագոյնը կը բաղձայ:



ՊՈՒՏՏԱՅԻՆ ԿՐ ՀԱՐՅՆԵՆ ՀԵՏԵԻՆՎ ՀԱՐՅՈՒՄԸ.

«ԽՈՎԱԼՈՎ ԻՆՁ ՇԱՀԵՇԱՐ»:

ԱՆ ԿՐ ՊԱՏԱՍԽԱՆԷ.

«ՈՉԻՆՁ»

ՈՒ ԿՐ ՇԱՐՈՒՄԱԿԷ.

**«ԲԱՅՅ ՁԵՉԻ ԸՍԵՎ ԹԷ ԻՆՁԵՐ
ԿՈՐԱՆՅՈՒՅԻ... ԲԱՐԿՈՒԹԻՄ,
ԱՆՁԿՈՒԹԻՄ, ԸՆԿՃՈՒՄ,
ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԻՄ ԻՆՁՊԷՍ ԱՆԵՒ ԹԷ՛
ԾԵՐԱՆԱԼՈՒ ԵՒ ԹԷ՛ ՄԵՌՆԵԼՈՒ ՎԱԽԸ»:**

(ԹԱՐԳԱՆԵՅ Վ. Ս.)

ՓՈԽԱՆ ՎԵՐՋԱԲԱՆԻ՝ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ, ԱՆԴՐԱԴԱՐՁ ՈՒ ԱՄՓՈՓՈՒՄ

Յարգելի ընթերցողներ, եթէ կարգացած էք գրած գիրքերս, նոյնիսկ այս գիրքին սկիզբէն մինչեւ վերջը, պիտի տեսնէք, թէ «կատարելութեան ուղիին» կամ «Տոգեւոր ճանապարհին» նկատմամբ Յիսուսի սորվեցուցած եւ Աւետարաններուն մէջ թագնուած իմաստասիրութիւններու իմ հասկացողութիւնս եւ ընթռնումս ժամանակէ ժամանակ մանր-մունր փոփոխութիւններ ունեցան: Այս փոփոխութիւնները արդիւնքն են այն իրողութեան, թէ այս գրութիւններուն նպատակը ինքնաուսուցում մըն էր: Հետեւաբար պէտք չէ զարմանալ, թէ որքան աւելին սորվեցայ, հայեացքս, հասկացողութիւնս եւ ըմբռնումս ալ նոյնքան փոփոխութեան ենթարկուեցան: Թէեւ Յիսուսի սորվեցուցած բոլոր իմաստասիրութիւններուն նկատմամբ ներկայ հասկացողութիւնս որքան որ ալ տրամաբանական է ան տակաւին միայն իմացական գետնի վրայ է: Յուսամ օր մը նաեւ կ'արժանանամ անոնց փորձառականօրէն ալ գիտակցիլ:

Ստեղծագործութիւնը Աստուածայայտնութեան միջոցն է: Եթէ ոչ հարեւանցի, այլ լրջօրէն ուսումնասիրենք ստեղծագործութիւնը, պիտի տեսնենք թէ ան սկիզբէն մինչեւ այսօր կը ծառայէ Աստուածայայտնութեան նպատակին: Նկատի առնենք հետեւեալ երկու իրողութիւնները. ա- Քրիստոս ըսած է. «Ես եմ կեանքը»: Բ- Աստուած ամենագէտ է, հետեւաբար ընդհանուր ստեղծագործութեան մէջ աստուծոյ գիտակցութիւնն (consciousness) է որ կը գործէ: Միթէ Աւետարանին մէջ Քրիստոսի համար չէ՞ գրուած. «Աշխարհի Լոյսը»: Ֆիզիքական աշխարհի մէջ լոյսը անհրաժեշտ է տեսողութեան համար, հետեւաբար՝ հասկացողութեան: Հոգեւոր

կեանքի մէջ «Լոյսը» իր փոխաբերական իմաստով կը ներկայացնէ Աստուծոյ գիտակցութիւնը, որ կը գործէ ընդհանուր ստեղծագործութեան մէջ եւ մեզի կու տայ «տեսողութիւն»՝ գիտնալու եւ հասկնալու կարողութիւն: Ստեղծագործութիւնը սկիզբէն կ'ընթանայ ըստ Աստուծոյ դրած բարեշրջման (evolutionary) օրէնքներուն: Նախ յառաջ եկաւ «Զօրութիւնը», յետոյ կազմուեցաւ նիւթը, որուն յաջորդեց միաբջջային էակները եւ յետոյ ալ բոյսերը: Բոյսերուն յաջորդեցին ձուկերը, յետոյ թռչունները եւ սողունները, յաջորդաբար չորքոտանիները, իրենց զանազան գիտակցութեան մակարդակներով՝ զանազան մտային հասունութեամբ եւ ի վերջոյ մարդը: Եթէ ուսումնասիրենք պիտի տեսնենք, թէ ստեղծագործութեան ամէն մի հանգրուանին կեանքի եւ գիտակցութեան արտայայտութիւններն ալ աւելցած են: Այս արտայայտութիւնները կը ներկայացնեն Աստուծայայտնութեան հասած մակարդակը: Կարելորութիւն չունի, թէ մարդ ինչ կը խորհի կամ ինչ կը համարէ իր կեանքին նպատակը, ստեղծագործութիւնը կամաց կամաց կը յառաջանայ դէպի լրիւ Աստուծայայտնութիւն: Մարդ արարած իր գոյութիւնը կը համարէ որպէս ստեղծագործութեան գազաթնակէտը: Կարելի է ըսել թէ Ֆիզիքական գետնի վրայ մարդկային մարմինը եւ ուղեղը ու այդ ուղեղին յայտնաբերած միտքն ալ՝ դատելու ու գատելու կարողութեամբ եւ իմացականութեամբ, բարեշրջման յայտնաբերած սքանչելիքներն են: Մարդ արարած իր ունեցած մարմինով եւ միտքով անհուն կարողութիւններու տէր է: Ունի Աստուծայայտնութիւնը լրիւ իրականացնելու կարելիութիւնը: Բայց աւա՛ղ, ան տակաւին չէ սորված ինչպէս գործածել իր միտքը եւ իր ուղեղը: Ան տակաւին ինքզինք չէ կրցած ձերբագատել իր անասնական բնոյթէն: Անտարակոյս բարեշրջումը պիտի շարունակէ, բայց ոչ

Ֆիզիքական գետնի վրայ, այլ մտային գետնի վրայ: Մարդ ժամանակի ընթացքին պիտի սորվի իր ուղեղը պատշաճ կերպով օգտագործել, քան թէ այսօրուայ պէս անոր կարողութեան միայն հինգ առ հարիւրը օգտագործել:

Անհատը պարտ է հասկնալ հիմնական մի քանի հարցումներու պատասխանը: Ո՞վ է մարդը: Որո՞նքն հրամանովն «հոս» եկած է: Որո՞նքն հրամանովն է, որ կ'պարի իր այս կեանքը: Ո՞վ է որ անհատին լսելու, տեսնելու, հոտոտելու, համտեսելու եւ զգալու կարողութիւնները կու տայ: Ո՞վ է որ անհատին գիտնալու կարողութիւնը տուած է: Ի՞նչ է մարդուն կեանքին նպատակը:

Մարդը անհատականութիւն մը ունի: Ճիշդ ասոր համար ալ «անհատ» կ'ըսենք: Անհատը աշխարհ եկած է միայն ու միայն Աստուծոյ կամքով: Անհատը ազատ կամք, դատելու եւ զատելու կարողութիւն ունի, ինչպէս նաեւ՝ իմացականութիւն: Աստուած անհատին տուած է մարմին, որպէսզի ան զայն օգտագործէ եւ անոր միջոցաւ ալ գործէ ու աշխարհի վրայ իրականացնէ իրեն տրուած պատասխանատուութիւնը, ինչպէս նաեւ պարտականութիւնը: Անհատը իր մարմինը չէ, այլ զայն գործածողն է: Ինչպէս ինքնաշարժ մը վարող անհատը ինքնաշարժը չէ, այլ վայրէ մը ուրիշ վայր երթալու համար զայն օգտագործողն է, նոյնպէս ալ մարմինը անհատին «կառք»-ն է՝ «ծնունդ»-էն մինչեւ «մահ» օգտագործելու համար: Այդ մարմինը ընդհանուր ստեղծագործութեան մէջ ամենաբարդ, ամենա-սքանչելի, ամենահիանալի եւ ամենակարող արուեստագիտութիւնն (technology) է: Անհատը կարող է հրաշքներ գործել, որովհետեւ այն մարմինը, որ ինք կը գործածէ ամենակարող է: Միթէ Յիսուս ալ իր մարդկային մարմինով հրաշքներ չգործե՞ց եւ չըսա՞ւ, թէ իր

ըրածներէն աւելի մեծ բաներ կրնանք ընել: Ստեղծագործութեան գազաթնակէտը մարդկային ուղեղն է: Այդ ուղեղին միջոցաւ կը գործէ անհատին միտքը: Մարմինն եւ մտքին կարողութիւնները կու գան Ս. Հոգիի կենսատու զօրութենէն, զորս անհատը կը ստանայ իր «հոգիէն»՝ Քրիստոսէն: Մարմինն կեանք տուողը «հոգին»՝ Քրիստոսն է: Միթէ նիւթը զօրութենէ յառաջ եկած չէ՞: Ս. Հոգիի այդ զօրութեան նիւթացումը՝ մարմնացումը Աստուծոյ Որդի՝ Քրիստոսն է: Միթէ Ս. Գիրքին մէջ չէ՞ գրուած. «Դուք բոլորդ Աստուծոյ որդիներ էք»: Այդ զօրութիւնը մարմինն մէջ գոյ է եւ որոշ չափով ալ կը գործէ, ապա թէ ոչ անհատը կեանք պիտի չունենար: Ան անհատին կեանքն է: Բայց եթէ անհատը այդ զօրութիւնը «չարթնցնէ» եւ աւելիովը չյայտնաբերէ, ան անօգուտ կը մնայ եւ անհատը իր կեանքի պարտականութեան մէջ ձախողած կ'ըլլայ: Այդպիսի անհատ մը կը նմանի կծծի մեծահարուստի մը, որ անօթի կը մեռնի: Ինչպէս մեքենայ մը ոչինչ կարող է ընել առանց երեկտրականութեան կամ որեւէ ուժանիւթի օգնութեան, անհատը, իր մարմինը եւ միտքն ալ ոչինչ կարող են ընել, եթէ Ս. Հոգիի զօրութիւնը անհատին մէջ չհոսի: Ս. Հոգիի զօրութիւնը անընդհատ կը հոսի՝ թէ՛ բարիներուն եւ թէ՛ չարերուն վրայ: Անհատէն կախեալ է, թէ ան ինչ չափով կ'արտօնէ Ս. Հոգիի զօրութեան հոսքը իր մարմինէն ներս: Միթէ Քրիստոս չըսաւ. «Ես եմ դուռը»: Միթէ Քրիստոս անհատին փրկութեան «դուռը»՝ միջոցը չէ՞: Անհատին հոգին՝ Քրիստոս, Ս. Հոգիի զօրութեան դուռն է: Միթէ Յիսուս Քրիստոս իր աշակերտներուն չըսա՞ւ. «Ձեզի Ս. Հոգին պիտի ղրկեմ»: Բայց եթէ անհատը այդ զօրութեան հոսքը չարտօնէ որ ան հոսի իր մէջ, զօրութեան գոյութիւնը ապարդիւն կ'ըլլայ: Անհատականութեան՝ «Լուսաբեր հրեշտակ»-ին պարտականութիւնը Աստուծոյ

«Լոյս»-ը՝ Քրիստոս յայտնաբերել է եւ ոչ թէ Աստուծոյ գահին վրայ նստիլ: Անհատականութիւնը, գործելով մարմինն եւ միտքին միջոցաւ, Քրիստոսի բարձր գիտակցութեան՝ Աստուածայայտնութեան միջոցն է: 110 վոլթով աշխատող մեքենայ մը եթէ 220 վոլթ հոսանքի կապուի, կ'այրի, նմանապէս անհատը առանց պատրաստութեան պէտք չէ յաւելեալ զօրութեան հոսքին ձգտի եւ ստանայ: Ան կրնայ թէ՛ ուրիշներուն եւ թէ՛ ինքզինքին վնասել: Անհատին մարմինը եւ միտքը ամենակարող են, որովհետեւ անոնք կարողութիւնը ունին յայտնաբերելու թէ՛ հագեկան (spiritual) եւ թէ՛ հոգեբանական (psychological) զօրութիւն: Այս ուղղութեամբ, անհատին միտքը իր լաւագոյն ընկերն է, բայց միանգամայն անոր ամենավատ թշնամին: Անհատը պարտ է իր միտքը մարզել, որ ան ըլլայ առաքինի ու ուղղամիտ: Երբ միտքը այդ ձեւով կը մարզուի, անհատին սրտին մէջ կը յառաջացնէ հետեւեալ առաքինութիւնները. ողորմածութիւն, կարեկցութիւն, սէր, համակրանք, ճշմարտութիւն, համբերութիւն, ներողամտութիւն, մեղմութիւն, ազնուութիւն եւ յարատեւութիւն: Նման անհատ մը, համայն մարդկութեան կ'ըլլայ օրինակ եւ ատելութեան տեղ մարդոց սրտերուն մէջ կը սերմանէ սիրոյ հունտեր: Միթէ Յիսուս ալ նոյնը չըրա՞ւ: Միթէ Յիսուս չըսա՞ւ, որ պէտք է Իրեն նմանինք:

Անհատը իր աշխարհիկ կեանքի ընթացքին երեք պատասխանատուութիւններ ունի, որոնք իրեն «պարտքերն» են, ինչ որ ինք պարտ է վճարել:

Ուռաջինը՝ անհատին Աստուծոյ ունեցած պարտքն է: Որովհետեւ իր գոյութիւնը «հոս», Աստուծոյ իրեն տուած շնորհքն է: Անհատը կարող է իր այս պատասխանատուութիւնը կատարել՝ «պարտք»-ը վճարել, Աստուածպաշտութեամբ: Հոս հարկ չէ կրկնել, թէ ինչ է

ճշմարիտ Աստուածպաշտութիւնը (Տեա Էջ 263):

Երկրորդը՝ անհատին իր ծնողքին ունեցած «պարտք»-ն է: Այդ պարտքը կը ծագի այն իրողութենէն որ անոնք իրեն մարմին մը տուած են եւ զայն խնամած, մինչեւ որ ինք հասուն տարիքի հասած եւ ինքնաբաւ եղած է: Անհատը նոյնիսկ իր հաճոյքները եւ երջանկութիւնը պարտ է գոհել եւ իր կեանքը նուիրել իր ծնողաց խնամքին՝ անոնց խոր ծերութեան օրերուն:

Երրորդն ալ՝ անհատին իր ուսուցիչին ունեցած «պարտք»-ը եւ պարտականութիւնն է: Ճիշդ այս հիման վրայ անցեալին բացարձակ յայգանք կ'ունենայինք մեր ուսուցիչներուն հանդէպ եւ անոնց ձեռքը կը համբուրէինք: Այդ սովորութիւնը այլեւս կը թուի գոյութենէ դադրած ըլլալ, նա մանաւանդ արեւմուտքի մէջ: Բայց ըստ Յիսուսի սորվեցուցածին, նա մանաւանդ հոգեւոր ճանապարհին մէջ, որեւէ մէկը պէտք չէ ուսուցիչ՝ վարդապետ կոչենք, որովհետեւ միայն մէկ վարդապետ ունինք, ան ալ Քրիստոսն է: Հետեւաբար պարտ ենք մեր այս պարտականութիւնը լիովին կատարել: Աս կարելի կ'ըլլայ երբ մենք մեր «Ես»-ը Աստուծոյ գահէն վար կ'առնենք եւ Քրիստոս հոն կը նստեցնենք: Այն ատեն մեր բոլոր արարքները կ'ըլլան ըստ Քրիստոսի կամքին՝ բարի, հանրութեան օգտակար եւ կը սփռենք գեղեցկութիւն, ուրախութիւն եւ սէր աշխարհի մէջ: Անհատին պարտականութիւնն է գտնել Ան, որ կեանք կու տայ իր մարմնին եւ գիտակցութիւն՝ իր մտքին, ինչ որ իր մէջ Քրիստոսի ներկայութիւնն է: Այս «գտնել»-ը պէտք չէ միայն իմացական հասկացողութիւն մը ըլլալ, այլ՝ փորձառական գիտութիւն մը: Քրիստոս, մարդկային հասկացողութեամբ, ոչ մէկ կերպարանք ունի: Ան սիրոյ արտայայտութիւն մըն է: Ան ամէն ինչ ըլլալով, ոչ մէկ բանի հետ կապուածութիւն ունի: Կարելի չէ Զայն հինգ զգայարանքներով

գտնել կամ հասկնալ: Ուրեմն ինչպէս գտնել կամ հասկընալ էութիւն մը որ աներեւոյթ է եւ միայն՝ սէր: Ան անհատին ճշմարիտ էութիւնն է, անոր հոգին՝ կեանքը, եւ անոր գիտակցութիւնը: Ինչպէս այս գիրքին՝ Բ. գլխուն որոշ գրութիւններուն մէջ մանրամասնութեամբ ներկայացուած է, մարդ գիտակից է երեք գիտակցութեան մակարդակներու. «արթուն», «երազի», «խորունկ քուն - անգիտակից» եւ չորրորդն ալ՝ «մահ», որմէ ինք միշտ կ'ուզէ խուսափիլ: Բայց երբ անհատը յարատեւութեամբ եւ մտային կեդրոնացումով ինքզինք կը նուիրէ Քրիստոսի, խզելով իր բոլոր զգացական կապերը աշխարհիկ հետապնդումներէն, իր խորհուրդներն ալ կը դադրին եւ ինք կը կերտէ «սուրբ սիրտ», այն ատեն ինք՝ իր գիտակցութիւնը, կը յափշտակուի Քրիստոսի կողմէ իր մարդկային գիտակցութեան մակարդակէն Քրիստոսի բարձր գիտակցութեան մակարդակին եւ ասա՛ աս է Աստուածայայտնութիւնը անհատին մէջ: Այն ատեն անհատը յօժարաբար կը խզէ իր կապը մարմինէն եւ կը միանայ իր հոգիին՝ Քրիստոսի եւ կը լուծուի Անոր մէջ: Երբ անհատը կը լուծուի իր հոգիին մէջ, կը գտնէ Աստուած: Այդ մտային կեդրոնացումը անհրաժեշտ է բարձր գիտակցութեան յափշտակուելու եւ Աստուած գտնելու համար: Նման յաջողութեամբ անհատըն ալ իր պարտքը վճարած կ'ըլլայ եւ իր պարտականութիւնը լիովին կատարած իր ուսուցիչին՝ Քրիստոսի:

Անհատին մարմինը կարեւոր է յայտնաբերելու իր մարդկային գիտակցութիւնը, որով այդ գիտակցութեամբ է որ անհատը պիտի կեդրոնացնէ իր միտքը Քրիստոսի վրայ: Մարմինը հողէն եկած է եւ օր մըն ալ հողին պիտի վերադառնայ: Բայց որպէսզի անհատը յաջողի իրեն տրուած մարդկային պարտականութեան մէջ, պէտք ունի մարմնին: Հետեւաբար ինք պարտ է գայն լաւ խնամել: Մարմինը եւ ուղեղին յայտնաբերած


միտքը միջոցներն են անհատին փրկութեան: Փրկութիւնը պարզեւ մըն է, որ կը տրուի անհատին երբ ան կը յաջողի իր պարտականութեան մէջ: Ըստ Յիսուսի ըսածին, փրկութիւնը պէտք չէ անհատին կենցաղին դրդապատճառը ըլլալ, այլ՝ իր կեանքի պարտականութիւնը՝ Աստուածայայտնութիւնը իր մէջ: Մարմինը եւ միտքը միայն այդ բարձր գիտակցութեան փորձառական գիտութիւնը ունենալու միջոցներն են: Անհատը այդ գիտութեան արժանանալէ յետոյ իր կապը կը խզէ իր մարմնին հետ: Խելացի մարդը ան է, որ իր այս կեանքի ընթացքին կ'արժանանայ յաւիտենական կեանքին: Անկարելի է մարմնին մահէն վերջ յաւիտենական կեանք ունենալ: Որով, մարմնին հետ անհատականութիւնն ալ կը մեռնի եւ կ'անհետանայ: Ստեղծագործութիւնը Աստուծոյ երազն է, իսկ անհատին կեանքն ալ անոր ներքին Քրիստոսի երազը: Երբ Քրիստոս խորունկ քունի մտնէ երազն ալ կը վերջանայ եւ անհատն ալ վերջնականապէս կ'անհետանայ: Ինչպէս երբեմն մեր երազները պատճառ կ'ըլլան որ արթննանք, նմանապէս անհատին վարած կենցաղը եւ անոր յայտնաբերած գիտակցութեան մակարդակն ալ պատճառ պէտք է ըլլան Քրիստոսի Իր քունէն արթննալուն, որ անձին մէջ Աստուածայայտնութիւն կը կոչուի: Այս հանգրուանին անհատականութիւնը դարձեալ կ'անհետանայ որովհետեւ ան Քրիստոսի միացած կը վայելէ Աստուածային երանութիւն եւ փորձառականօրէն կը գիտակցի ամէն ինչի միականութեան: Երբ Աստուծոյ հետ մէկ եղած է այլեւս ինչ պէտք ունի պատրանքային (երազին) անհատականութեան: Անհատականութիւնը բազմազանութեան կը պատկանի: Ինք Քրիստոսի մէջ լուծուած միականութեան մասն է, հետեւաբար ամէն ինչ է: Այս մարմինը եւ միտքը Աստուծոյ անհատին տուած նուէրներն են, պէտք չէ զանոնք չարաչար


գործածել եւ տրուած նուէրը վատնել: Դժբախտաբար ամէն անհատ որոշ կապուածութիւն մը, յարում մը ունի, որմէ չի կրնար ինքզինք ձերբազատել: Բայց, ամէն անհատ պարտ է գոնէ ջանք մը ընել իր աշխարհիկ կապերը խզելու: Աս ալ կարելի է միայն մտային կեդրոնացումով իր ճշմարիտ էութեան՝ Քրիստոսի վրայ, որպէսզի իր մէջ ննջող Քրիստոս արթննայ եւ իրեն շնորհէ բարձր գիտակցութիւն, որ կու տայ միականութեան փորձառութիւնը:

Ինչպէս վերեւ գրուած է Քրիստոս ընդհանուր ստեղծագործութեան մէջն է եւ ընդհանուր ստեղծագործութիւնն ալ՝ Աստուծոյ: Աշխարհը եւ անոր մէջի ամէն մի անհատ Քրիստոսի մաս կը կազմեն եւ Քրիստոս ալ ամէն ինչի մաս կը կազմէ: Աշխարհ լի է ատելութեամբ, բարկութեամբ, ազահութեամբ եւ նախանձով, բայց Քրիստոս անոնցմէ չ'ազդուիր: Քրիստոս մարդեղացաւ եւ յայտնուեցաւ Յիսուսով, որպէսզի համայն մարդկութեան սորվեցնէ իրենց պարտականութիւնը եւ պատասխանատուութիւնը, ինչպէս նաեւ զանոնք իրագործելու միջոցառումները:

**ՏԵՈՒՆԱԳՐԵԱ՛ ՔՈ ԱՆՈՒԱՄԲ
ՉՂՈՒԱՆՅՈՅ ԵՐԿ յԱՐԿԻԱ.
ՊԱՐՓԱԿԵԱ՛ ՔՈ ՁԵՌԱՄԲ
ՁՈՒՍԱՏՊ ՏԱՃԱՐԻԱ.
ԳՏԱԳՐԵԱ՛ ՔՈ ԱՐԵԱՄԲ
ՁՈՒՏ ԱԵՄՅՈՅ ԱԵՆԵԿԻԱ.
ԿԵՐՊԱՅՈ՛ ՁՔՈ ԱԵԱՆԻ
Ի ՀԵՏԱ ԵՂԻՅ ԱՆՊԹՈՂԻԱ.**

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՅ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՅՈՅ
(ԲԱՍ ԺԲ)






ԱՎ՝ ԸՆԹԱՅՔՆ ԵՐԱԶԻԱ.
ԲԱՅ ԻՆՁ ԵՄ ԵԱ:
ԳԻՇԵՐՈՒՄԱՆ ՄՈՒԹԻՆ ԱԷՉ
լԱՅՈՂ ՄԱՆՈՒԿ ՄՈ
ՊԱՅԾԱՊ ԼՈՂԱԻՆ ՀԱՄԱՐ
լԱՅՈՂ ՄԱՆՈՒԿ ՄՈ
ԱՊԱՆՅ ՈՐԵԷ ԼԵՉՈՒԻ,
Ի ԲԱՅ ԱՊԵՂ ԼԱՅԻԱ:

ԹԷՆՆԻՍՈՆ (*Tennyson*)
(Ազատ Թարգմանություն Վ.Ս.)





-Գ-

ՅԱԲԵՆՈՒԱԾԱԿԱՆ

«ՆԱՐԵԿ»ՈՎ՝ ՄԻՇՏ ԿԵՆՊԱՆԻ 405

ԻՍԱՍՏՈՒՆ ԽՍՈՍՔԵՐ 427

ԻՆՁ Է ՊԱՇՏԵՆՈՒԹԻՒՆ 428

ԿՈՄԻՏԱՍԷՆ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ
429

**Հոգեմտաւոր Խոհեր
ԻՐ ԿԵԱՆՔՈՎ՝ ՄԱՀԿԱՆԱՑՈՒՆ
«ՆԱՐԵԿ»ՈՎ՝ ՄԻՇՏ ԿԵՆԴԱՆԻ
ՄԵԹՐ Գ. ՏԵՐՏԵՐԵԱՆ**

Բերկրանքով կարդացի բանասեր, մատենագետ, գրականագետ Հ. Մեսրոպ Վրդ. Թօփալեանի (Հայունի) ակադեմական ակնարկը՝ Գրիգոր Նարեկացիի «ՆԱՐԵԿ»ին մասին, որ լոյս տեսաւ «Կամար» պարբերաթերթի թիւ 30-ին մէջ: Մասնաւորաբար, այն պարբերութիւնը, որուն մէջ, ան «Մատեան Ողբերգութեան՝ Նարեկ»ը կ'որակէ հետեւեալ երեք բնորոշումներով. Առաջին՝ «Նարեկ մարդկային հոգիին պատմութիւնն է»: Երկրորդ՝ «Նարեկ մարդկային հոգիին ողբերգութիւնը չէ, այլ՝ մեղքի խարանձաբն է»: Երրորդ՝ «Նարեկ մարդկային հոգիին ազատագրումն է»:

Թոնտրակեան բարենորոգչական յեղափոխութեան համակիր Գրիգոր Նարեկացիի «ՆԱՐԵԿ»ին մասին՝ այս գրեթէ ամբողջական բնորոշումը վեր հանելու համար, հեղինակը ունեցած պէտք է ըլլայ՝ առնուազն, հետեւեալ երեք արժանիքները.

1) «ՆԱՐԵԿ»ի շուրջ 1125 էջերուն ընթերցանութեան պահանջած համբերատարութիւնը եւ անոր հետապնդած վախճանական նպատակը վերծանելու խորաթափանց միտքը:

2) Չաղարտուած ենթագիտակցութիւն՝ Թոնտրակեան յեղափոխութեան մասին:

3) Հաշտ մօտեցում Թոնտրակեան բարենորոգչական յեղափոխութեան, կամ՝ սեփական յեղափո-

խական ոգի: Եւ տակաւին, ըստ մեր համեստ կարծիքին, Հայր Մեսրոպ Վրդ. Թօփալեան մեջբերած է «ՆԱՐԵԿ»էն եւ աշխարհաբարի վերածած Գրիգոր Նարեկացիի այս մատեանով հետապնդած բուն նպատակը, որ է՝ ասոր հրատարակութիւնը ապահովելու համար անոր յարակայութիւնը: Բայց թէ՛ ինչո՞ւ համար, ահա ներկայ գրութեան նպատակն է տալ այս հարցումին պատասխանը: Մեջբերումը. «Պատմեսցի ի յականջս ազգաց Եւ քարոզեսցի ի լուր ժողովրդոց, կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 10/54 Նկարեսցի ի դրունս իմաստից Իբր կենդանեալք զիմս պատմեսցի, Եւ թեպէտ վախճան ընկալայց իբր մահկանացոտ Այլ յարակայութեամբ բանի այսր սոփերի Գրեցայց կենդանի»: (Բան ԶԸ, տ. 30-32) Աշխարհաբարով՝ «Թող պատմուի սերունդներուն Եւ քարոզուի ժողովուրդներուն, Թող նկարուի իմացականութեան դուռներուն Իբրեւ իմ կենդանութիւնս՝ թող պատմէ Այնպէս, որ թեպէտ մեռնիմ իբրեւ մահկանացու Բայց կենդանի պիտի համարուիմ Այս գիրքին յարակայութեամբը»: Ակնարկուած «գիրք»ը «ՆԱՐԵԿ»ն է: «Նարեկ»ը՝ ինքը Գրիգոր Նարեկացի... անոր խորհրդանշած գաղափարները, աշխարհայեացքը, փիլիսոփայութիւնը...: Իսկ ո՞րն է այդ աշխարհայեացքը, եթէ ոչ՝ Թոնտրակեան Բարենորոգչական Յեղափոխութիւնը, որ միջնադարու խաւարին մէջ, կը պահանջէր «մարդկային հոգիին ազատագրումը» դպրական, ստրկական աստուածաբանութենէն, հիմնաքարը հանդիսանալով «Հայկական Ռենեսանս»ին, որուն համակիրն էր Գրիգոր Նարեկացի, սակայն չէր

ներգրաւուած յեղափոխութեան մէջ՝ կազմակերպչականօրէն, որովհետեւ կը գտնուէր շատ դժուարին երկրնտրանքի մը առջեւ: Պայքարի լ յեղափոխութեան շարքերուն մէջ, եւ իր գրականութիւնը ենթարկել հրոյ ճարակ դառնալու ճակատագրին, եկեղեցոյ էսթապլիշմէնթին ձեռամբ, որ արեան ու կրակի մէջ խեղդամահ կընէր Թոնտրակեան յեղափոխութիւնը եւ հրոյ ճարակ կը դարձնէր Թոնտրակեան ողջ գրականութիւնը: Թէ՞ դուրս մնալ յեղափոխութեան շարքերէն, փրկելու համար «ՆԱՐԵԿ»ը, որ Թոնտրակեան յեղափոխութեան պատգամախօսն էր: Եւ՝ Գրիգոր Նարեկացիի հանճարը հեռու մնաց յեղափոխական զգացական խիզախութենէն, եւ կիրարկեց յեղափոխական արթնութիւնը ու փրկեց «ՆԱՐԵԿ»ը, որուն «յարակայութեամբը», այսօր՝ ինք եւ իր «ՆԱՐԵԿ»ի աշխարհայեացքը կենդանի են տակաւին, թելպտ՝ մահկանացու մըն էր ինք...: Այս ենթահողին վրայ ժայթքած «ՆԱՐԵԿ»ը՝ ամբողջովին տարականն, ինքնաստիպ, անօրինակ, անկրկնելի եւ անսահմանելի, բայց միաժամանակ՝ բազմասեռ ու բազմաբովանդակ գրական երկ մըն է, արտացոլացումը՝ իր ապրած տուայտանքին, այն բոլոր արտայայտչական միջոցներով՝ բանաստեղծութեամբ, երաժշտականութեամբ ու պատկերաւոր խօսքերով, կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գոյումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 11/54 նախանձախնդրութիւնը ունենալով՝ ոչ թէ գեղագիտական ձեւին, այլ՝ ամէն գնով իր պատգամը ժողովուրդին ու մարդկութեան հասցնելու խնդրին, առաջնահերթութիւնը տալով խորքին (ձեւին փոխարէն): Ժայթքող պատգամախօսը հոգիի ազատագրու-

թեան՝ չի կրնար մեղմօրօր լեզու գործածել, ճիշդ այնպէս ինչպէս յեղափոխութիւնը չի կրնար թաւշեայ ըլլալ: «ՆԱՐԵԿ»ը յեղափոխական հանճարի մը Թոնտրակեան պոռթկումն է:

Այսպէս, երբ կարդացինք Հայր Մեսրոպ Վրդ. Հայունիի տուած բնորոշումները «ՆԱՐԵԿ»ի մասին, յատկապէս երկրորդը, եւ մանաւանդ՝ երրորդը, հոգեմտաւոր խոհերու ժապաւէն մը պատեցաւ մեր մտքի պաստառին վրայ: Առաջին հերթին, երկրորդ բնորոշումը թէ՛ «ՆԱՐԵԿ» մարդկային հոգիի ողբերգութիւնը չէ, շատ կարելոր ճշդում մըն է, որ կը վկայէ Նարեկացիի լուստեսութիւնը մարդկային հոգիին նկատմամբ, մանաւանդ երբ ատիկա ազատագրուած է...: Այս ճշդումը անհրաժեշտ էր, քանի որ այս գլուխգործոցը (չեմ գիտեր որո՞ւ սխալով) կոչուած է «Մատեան Ողբերգութեան»: Արդեօ՞ք անոր խարանած շուրջ 3000 մեղքերուն ու մեղանչումներուն պատճառով: Բայց... մեղքերը քաւելի են եւ մարդկային հոգին՝ ազատագրելի, գոր կատարած է «ՆԱՐԵԿ»: «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» հանդիսացող «ՆԱՐԵԿ»ին հեղինակը երբ համարձակօրէն կըսէ թէ՛ մարդն ալ կրնայ աստուածանալ... ասիկա յեղափոխական մերժումն է Միջնադարու խաւարի դպրական (scholastic),– ստրկական –, աստուածաբանութեան, որ մարդկային հոգին կազատագրէ այդ ստրկութենէն եւ անոր կը վերադարձնէ կենսախինդ կեանքի երջանկութիւնը, կեանքի քաղցրութիւնը, եւ՝ մոռնալու հին աշխարհի անցաւոր անիմաստ կեանքն ու արցունքի հովիտը... անգոյ դրախտի մը ձրի խոստումին դիմաց պարտադրելով ա՛յս աշխարհին մէջ գոյութիւն ունեցող

իրական դժոխային ենթարկուածութիւնը՝ շահագործողական դժոխային հասարակարգերու: Այլեւ՝ գօտեպընդուելու այն նոր խօսքէն, թէ՛ ՄԱՐԴն է գերագոյն արժէքը, որ կրնայ հասնիլ աստուածութեան. եւ ուրեմն, նաեւ փոխել, յեղափոխել՝ դժոխային հասարակարգերը դրախտայինի: Մարդկային հոգիին ազատագրումը կը նշանակէ մարդու ուղեղին անկաշկանդ աշխատանքը՝ դպրական քարացած տոկմաներու չափուած-ձեւուած կաղապարներէն դուրս գալով, եւ ստեղծագործելով...: Մարդկային հոգին՝ ուղեղին աշխատանքն է, որ եթէ աշխատի ազատօրէն, կը ստեղծագործէ եւ կաղապարուած միտքերու թափածոնները չի կրկնէր անընդհատ: Հոգին, ուրեմն, մարդու ուղեղին միտք ածելն է (մտածելը)՝ աշխատանքը: Մտածող ուղեղին արգասիքը՝ երբ ազատագրուած է կարծրատիպերէ: «ՆԱՐԵԿ»ի հարցադրումները Թոնտրակեան Յեղափոխութեան հարցադրումներն էին, որոնք սերմերը հանդիսացան «Հայկական Վերածնութեան» Եւրոպայէն 3-4 դարեր առաջ: Անոր երկնակամարին վրայ շողացին որպէս պսպղուն աստղեր՝ Անանիա Շիրակացին, Յովհ. Իմաստասէրը, Ներսէս Շնորհալին, Յովհ. Երզնկացին (Պլուզ), Մխիթար Գօշը, Մխիթար Հերացին, Ֆրիկը, Նահապետ Քուչակը, Թորոս Ռոալինը եւ տասնեակ ուրիշներ, որոնց ռահվիրան էր հայոց կանխահաս Տանթէ Ալլէկիէրին՝ Գրիգոր Նարեկացին: (Հայկական Վերածնութեան շուրջ տեսնել՝ Ակադեմիկոս Վազգէն Չալոյեանի «Հայկական Ռենեսանս» երկը, որ նախ լոյս տեսաւ Մոսկուա, ռուսերէն լեզուով, Ակադ. Քոնրատի յառաջաբանով, սպա՝ հայերէն, Երեւան,

1964 թ.): կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 12/54 Թոնտրակեցիներու ղեկավարն էր Սմբատ Զարեհավանեցին, Թոնտրակ գիւղէն, որուն աջակիցներէն էր Խոսրով Եպս. Անձեւացին, որուն որդին էր Գրիգոր Նարեկացին... նաեւ սանը՝ նոյնպէս Թոնտրակեան՝ Անանիա Անձեւացիի: Թոնտրակեցիներու պաշտպանած թեզերէն էին. – Վերադառնալ քրիստոնէութեան մաքրամաքուր սկզբնաղբիւրին եւ անեղծ կենցաղին: – Մերժել Հին Կտակարանը: – Յիսուս Որդի Մարդու է: (Հաւանաբար ՈՐԴԻ ՄԱՐԴՈՒ Յիսուսի պնդումը իսլամական արաբական մշակոյթին ազդեցութիւնն է: Սակայն, 2008 թուին, բրիտանացի ֆիլմի բեմադրիչ Մարք Տորընֆորմի, ԱՄՆ-ի մէջ ցուցադրեց իր «ՈՐԴԻ ՄԱՐԴՈՒ» վերնագրով ֆիլմը, որուն Յիսուսը խափշիկ է, հակապատկերը՝ Արեւմուտքի ցարդ ցեղային խտրականութեամբ ներկայացուած Քրիստոսի...): – Մերժել՝ վերջին ահեղ դատաստանի, սկզբնական մեղքի, մկրտութեան եւ յաւերժ կոյս Մարիամի վերջէն աւելցուած հնարանքները՝ ստրկացնելու եւ սարսափեցնելու համար հաւատացեալները («Սկզբնական մեղք»ով ստրկացնելու եւ «վերջին ահեղ դատաստան»ով սարսափեցնելու... եւ դեռ «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն է» սրբապղծութիւնը, քանի որ Սէր Աստուածը երկիւղ չի պահանջեր հաւատացեալէն: Երկիւղ կը պահանջեն բռնատէրները...): – Ունեցուածքի եւ իրաւունքի հաւասարութիւն՝ բոլոր մարդոց միջեւ, ներառեալ կանանց եւ այրերու միջեւ:

– Եկեղեցին մենք ենք՝ ժողովուրդս: Առանց մեզի եկեղեցին քար է եւ կիրէ շինուածք մըն է, եւ սրբանկարներուն, խաչին ու եկեղեցիին պաշտամունքը կռապաշտութիւն է, իսկ մենք՝ «ոչ ենք կռապաշտք, այլ՝ աստուածապաշտք»...

– Մերժել՝ եկեղեցիէն ներս հոգեւորականներու ամէն իշխանակարգ, աստիճանակարգ կամ քրիստոնէական հոգեւոր կարգ... քանի որ հոգեւոր առաջնորդութեան առաքելութիւնը քաղաքական իշխանութիւն չէ: (Հին չին Բարոյագէտ Լաօ Յէ կը պատգամէր. «Առաջնորդել՝ առանց տիրապետելու»):

– Դրախտի եւ դժոխքի վիճակները կը գտնուին այս երկրի վրայ. դրախտային՝ արդար հասարակարգերու մէջ, եւ դժոխային՝ անարդար, շահագործողական հասարակարգերու մէջ:

– Մերժել այն՝ թէ Քրիստոսի գալուստով, արդէն իսկ փրկուած է մարդկութիւնը, հաշուեյարդարը՝ անդէնականի մէջ պիտի ըլլայ, այս երկրի վրայ չիք տարբեր փրկութիւն արտաքոյ եկեղեցւոյ (Extra ecclesia nihil salus):

– Մերժել ամէն տեսակի միջնորդութիւն՝ եկեղեցիին եւ եկեղեցականներուն կողմէ մարդուն եւ Աստուծոյ միջեւ, քանի որ մարդ կրնայ ուղղակի խօսիլ Անոր հետ, եւ Ան ամէն տեղ է արդէն: (Հետագային, այս թեզին հետեւորդներու աստուածաբանութիւնը կոչուեցաւ Pantheism – Համաստուածութիւն): Յիշեցնենք թէ՛ Թոնտրակեցիներու գրականութիւնը գրեթէ ամբողջութեամբ հրոյ ճարակ դարձած է եկեղեցւոյ բարբարոսացած էսթապլիշմենթին կողմէ: Ինչ որ այսօր վերականգնուած է որպէս պատառիկներ այդ

հարուստ գրականութենէն, հիմնուած է այդ բարբարոս կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 13/54 Էսթապլիշմենթին խնկարկու, ստրկամիտ գրիչներու հակաթոնտրակեան թունայից գրութիւններուն մէջ կատարուած մէջբերումներուն վրայ: Թոնտրակեան Բարենորոգչական Յեղափոխութիւնը ծնունդ առաւ Թոնտրակ գիւղէն, ընդդէմ՝ այդ օրերու քաղաքական ու կրօնական աւատատիրութեան բոնատիրութեան ու փտածութեան, եւ այդ էր պատճառը, որ արագ տարածուեցաւ բոլոր հայկական շրջաններուն մէջ: Անոնց քարոզած գաղափարներուն գտած ժողովրդականութեան մասին նոյնիսկ խոստովանած է Արիստակէս Լաստիվերտացին, իր «Պատմութիւն» երկին մէջ, հակառակ անոր որ ինք եղած է ամենատիւերիմ եկեղեցականը Թոնտրակեան Յեղափոխութեան դէմ: Ան իր այսերկին 79-րդ էջին վրայ խոստովանած է տիրող փտածութիւնն ու անօրինութիւնը, գրելով. «Արդարութեան օրէնքը յանիրաւութիւն դարձաւ, եւ յարգելի դարձաւ արծաթասիրութիւնը, քան՝ զաստուածասիրութիւն, եւ մամոնայն, քան՝ զՔրիստոս»: Իսկ երկի 144-րդ էջին վրայ խոստովանած է Թոնտրակեան քարոզչութեան համոզկերութեան ուժը, գրելով. «Թոնտրակեցոց բանք իբրեւ քաղցկեղ ճարակին, զիս որպէս ախտն այն, դժուարին է առ ի բժշկել, այսպէս եւ ի նոցանէ ըմբոնեալքն հազիւ կարեն կալ յակաստանի»: Այս ժամանակաշրջանին գործող քաղաքական ու կրօնական (Էսթապլիշմենթական) աւատատիրութեանց դաշինքին մասին գրած են նաեւ Թոնտրակեան

շարժումին համակրող Ներսէս Շնորհալին, իր «Թուղթ Ընդհանրական»ին մէջ, եւ Ստեփանոս Օրբէլեան, իր «Պատմութիւն Նահանգին Սիսական»ին մէջ, տալոց ցնցիչ ու նողկալի տեղեկութիւններ եկեղեցւոյ փտած էաթապլիշմէնթին մասին: Կը բաւէ հոս յիշենք, թէ՛ Պետրոս Գետադարձ Կաթողիկոսը եղած է աւատատէրը հինգ հարիւր (500) հայկական գիւղերու եւ թշուառութեան մատնած հայ գիւղացիները: (Առեղծուածային, հանելուկային իրողութիւն մըն է այն, որ Նարեկացիի եւ Թոնտրակեան յեղափոխութեան պահանջած բարենորոգութեան հանդէպ, Հայց. Եկեղեցւոյ էաթապլիշմէնթը կրցած է անդրդուելի մնալ հազարամեակ մը եւ մինչեւ այսօր: Նոյնիսկ «Եկեղեցին Հայկական»ը պանծացնող Վ. Թէքէեան, իր «Դիմառնութիւն առ Հայկական Եկեղեցին» քերթուածին մէջ, անոր մասին գրած է. «Այն պարպուած է հիւրէն: Դարձած է անտառ մը... որ քարացած է վաղուց»: Եւ բարձրաստիճան եկեղեցական մըն ալ՝ «Հոգիէ զուրկ դիակ» մը համարած է Հայց. Եկեղեցին): • • Հայկական Վերածնութեան դարաշրջանին 3-4 դարով կանխահասութիւնը ոչ միայն փաստագրուած է Ակադ. Վագգէն Չալոյեանի նշեալ երկին մէջ եւ հաստատուած՝ ռուսերէն լեզուով հրատարակութեան ռուս Ակադ. Քննրատի Յառաջաբանին մէջ, այլեւ՝ հաստատուած է այլ բառերով՝ Ն. Ադոնցի եւ Մանանդեանի կողմէ: Ն. Ադոնց գրած է. «Մինչ Անիի թագաւորութեան մէջ, աւատապետութեան վերջին ճառագայթներն ալ կը մարէին, Արեւմուտքը նոր էր որ կողջունէր աւատապետութեան արշալոյսը» (տես՝ Ն. Ադոնց, «Պատմական Ուսումնասիրութիւններ», Փարիզ, 1948,

էջ 47): Իսկ Ակադ. Վազգէն Չալոյեան, իր վերոնշեալ երկին 12-րդ էջին վրայ կը վկայէ. «Մանանդեան վկայ է թէ՛ Անիի եւ Բագրատունեաց Հայաստանի քաղաքներու մշակութային կեանքը կը գտնուէր՝ զարգացման աւելի բարձր մակարդակի վրայ, քան՝ Արեւմտեան Եւրոպայի միջնադարեան քաղաքներունը»: կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 14/54

Ինչու զարմանալ, երբ պատմական փաստեր են՝ Միջնադարի 1080-էն մինչեւ 1375 տարիներուն (այսինքն՝ Սելճուքեան արշաւանքներու նախօրեակին) Կիլիկիոյ Հայկական Իշխանապետութիւնը իր մշակոյթով՝ մշակոյթը իր ամենալայն ու համապարփակ առումով (այլ խօսքով՝ կուլտուրայով, Արեւմտեան Եւրոպայի կուլտուրայէն աւելի բարձր մակարդակի վրայ էր, ինչպէս որ այդ ժամանակ Արաբական քաղաքակրթութիւնն ալ աւելի բարձր մակարդակի վրայ կը գտնուէր քան Արեւմտեան Եւրոպայինը): Հոգեմտաւոր մշակոյթի բոլոր մարզերուն մէջ, ներառեալ հոգեւոր, երբ Իսլամի Անտալուզեան դպրոցի աստուածաբանութիւնը, Եւրոպային անձանօթ կրօնական հանդուրժողութեամբ, Յիսուսն ու Մարիամը ճանչցած էր որպէս Իսլամի ալ մարգարէները (Լիբանանի հարաւային մայրաքաղաք Սայտայի արեւելքի գիւղերէն մէկուն մէջ կը գործէ մինչեւ այսօր՝ Յիսուս Որդի Մարիամի անուն մզկիթ): Հայկական Վերածնունդէն դարեր ետք միայն Եւրոպական Վերածնունդի եւ Եկեղեցւոյ Բարենորոգութեան (La Renaissance, La Réforme) երկնակամարին վրայ փայլեցան՝ Տանթէ Ալլեկիերին, Միկէլ Տը

Մերվանթէսը, Ֆրանսուա Ռապըլէն, Փիեռ Ռոնսատը, Ռոթերտամցի Էրազմուսը, Թոմասսօ Քամփանելլան, Նիքոլօ Մաքիավելլին, Մարթին Լուտերը, Կալվինը եւ Թովմաս Մունձերը (Գերմանիոյ Սմբատ Զարեհավանեցին, որուն ղեկավարած շարժումը ատլի արմատական էր քան Լուտերի եւ Կալվինի շարժումները, եւ նման էր Թոնտրակեան շարժումի յեղափոխականութեան եւ ընկերային արդարութեան թեքումին, որոնցմէ զուրկ էր Լուտերականութիւնն ու Կալվինականութիւնը):

Մարդկային հոգիին ազատագրութեան այս երթը անցաւ ժողովուրդներու ազգային ու ընկերային կրկնակ ազատագրութեան ալ՝ Հոկտեմբերեան Յեղափոխութեան հանգրուանին (1917 թ.) եւ հասաւ 20-րդ դարու 60-ականներու Լատին Ամերիկայի Կաթոլիկ յեղափոխական աստուածաբաններու մշակած «Ազատագրութեան Աստուածաբանութեան», որուն հետեւորդներէն՝ Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի առաջնորդ Խորխէ Մարիօ Պերկոլիօ Արքեպիսկոպոսը կէս դար ետք հասաւ Վատիկանի Պապական Աթոռին՝ Ֆրանչիսկոս Ա. անունով, եւ ձեռնարկեց հոգեւոր յեղափոխութեան մը՝ հին Վատիկանի դպրական աստուածաբանութեան փոխարէն, որդեգրելով նոր աստուածաբանութիւն մը, որ տեղաշարժ, անցեալի քարացած տոկմաները կրկնող դպրականը չէ, այլ՝ քայլող, շարժող ու զօրաշարժող՝ ուղեւոր աստուածաբանութիւն, իրականացնելու համար դարերով մոռացութեան տրուած առաքելութիւնը եկեղեցիին, 3-րդ հազարամեակի ներկայ անմարդկայնացած աշխարհին մէջ, որ դարձած է արդի

ստրկատիրական ժամանակաշրջան (Ֆրանչիսկո Ա.ի որակումով): Այսինքն, մարդկությունը վերադարձած է մարդկային պատմութեան երկրորդ դարաշրջանին: Այլ խօսքով՝ երեք դարաշրջան ետ՝ սոցիալիստական, դրամատիրական եւ աստատիրական. առաջին դարաշրջանը ըլլալով՝ նախնական համայնատիրական դարաշրջանը: Ուրեմն, ներկայ դարաշրջանը հին ստրկատիրականը չէ, այլ՝ արդի ստրկատիրականը: . . . Վատիկանի պաշտօնաթերթ "L'OSSERVATORE ROMANO"ի 1 Հոկտեմբեր 2018 թուակիր համարի ֆրանսատառ շաբաթական յաւելումածին մէջ լոյս տեսած է, Կաթոլիկ Եկեղեցւոյ աստուածաբանութեան մասին, Ֆրանչիսկո Ա.ի նոր թեզը՝ "Pour une Théologie en Chemin" վերնագրով (Ի խնդիր ուղեւորութեան ելած աստուածաբանութեան մը):

Բնագանցական մտածելակերպով քարացած ուղեղ մը չի կրնար ըմբռնել, թէ՛ աստուածաբանութիւնը եւս մէկ չէ... միանգամընդմիջտ կաղապարուած չէ, այլ փոփոխելի կայք էջ : www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 15/54 դարաշրջանէ դարաշրջան: Ֆրանչիսկո Ա. յստակօրէն կը շեշտէ, թէ իր նոր աստուածաբանութիւնը 3-րդ հազարամեակի դարաշրջանին պահանջածն է: Անոր այս ճշդումը հեշտօրէն կը հասկնայ, կըմբռնէ, կընկալէ եւ կընդունի դիալեկտիկ (տրամախոհական) մտածելակերպով ուղեղը, որ կողմնակից է եկեղեցւոյ բարենորոգումին, անդրադարձած ըլլալով արդէն բարենորոգումի անհրաժեշտութեան: Ուրեմն, Ֆրանչիսկո Ա. ունի տրամախոհական (դիալեկտիկ)

մտածելաեղանակ, եւ կը տրամախոհէ. «Այս 3-րդ հազարամեակին, երբ աշխարհ թեւակոխած է արդի ստրկատիրական դարաշրջանին (այսինքն՝ վայրի դրամատիրութեան համաշխարհայնացումի, պատերազմներու, անմարդկայնութեան ժամանակներու), մարդկութիւնը կարիքը ունի՝ ոչ թէ տեղքայլ ընող, այլ տինամիք, շարժունակ, եւ ուղեւորութեան ելած յառաջընթաց յեղափոխական հոգեւոր աստուածաբանութեան մը, մարդկայնական սիրոյ եւ քնքշութեան յեղափոխութեան մը, քնքշութեան աստուածաբանութեան մը, որպէսզի՝ անմարդկայնացած աշխարհին տառապող մարդկութիւնը առաջնորդուի դէպի հասարակութեան ծառայութիւն եւ մարդասիրութիւն, ընդդէմ՝ նարկիզականութեան, դրամապաշտութեան, եսակեդրոնութեան եւ անհատապաշտութեան բոլոր ախտաւոր դրսեւորումներուն...»: («Ազատագրութեան Աստուածաբանութիւն»ն ալ մշակած կաթովիկ յեղափոխական եկեղեցականները՝ 20-րդ դարու 60-ականներուն, Լատին Ամերիկայի մէջ, ունէին դիալեկտիկ մտածելակերպ եւ ամերիկեան իմփերիալիզմի միջամտութիւններուն դէմ՝ որդեգրած էին զինեալ պայքարի ուղին: Անոնցմէ մէկուն՝ Քոլումպիացի նահատակ Հայր Քամիլօ Թորեսի (1929-1966) ծննդեան 90-ամեակն է այս տարի: 1966-ին նահատակուելէ առաջ, ան ինքզինք ներկայացուցած է հետեւեալ պարբերութեամբ. «Ես Քոլումպիացի յեղափոխական, ընկերաբան, քրիստոնէայ, ռազմիկ եկեղեցական մըն եմ: Քոլումպիացի, որ չի կրնար անգիտանալ իր ժողովուրդին պայքարը: Ընկերաբան, որ գիտէ թէ արդար կարգը չի կրնար հաստատուիլ

առանց յեղափոխութեան: Քրիստոնէայ մը, որ սորված է քրիստոնէութեան մարդասիրութիւնը եւ գիտէ թէ իր եղբայրներուն բարօրութիւնը չիրականանար առանց յեղափոխական զինեալ պայքարի: Եկեղեցական, քանի որ յեղափոխութիւնը կը պահանջէ ամբողջական անձնագոհութիւն, որ եկեղեցականին կոչումն է»: Ան նահատակուած է ռազմադաշտին վրայ: Պապը կը դիտարկէ. «Թէպէտ աստուածաբանութիւն եւ քնքշութիւն եզրերը իրարմէ տարբեր եւ անջատ կը թուին ըլլալ, առաջինը՝ կը թուի յիշեցնել միայն ակադեմական ոլորտը, երկրորդը՝ անձերու միջեւ յարաբերութեանց լոկ ոլորտը: Սակայն, իրականութեան մէջ, մեր հաւատքը այդ երկու եզրերը անխզելիօրէն կը միացնէ իրարու: Իրօք՝ աստուածաբանութիւնը չի կրնար վերացական ըլլալ: Եթէ վերացական եղած ըլլար, գաղափարախօսութիւն մը եղած պիտի ըլլար, որ վերացական է եւ կապ չունի անձերու միջեւ փոխ-յարաբերութեան ու վերաբերմունքին հետ: Աստուածաբանութիւնը Աստուծոյ Բանին մարմնացումն է մարդոց կեանքին մէջ: Հետեւաբար, այն կոչուած է հաղորդելու Սէր Աստուծոյ շօշափելի յատկութիւնը, որ քնքշութիւնն է: Իսկ քնքշութիւնը՝ գոյութենական շօշափելի լատիւնն է, որ մեր ներկայ դարաշրջանին պիտի հանդիսանայ այն գուրգուրանքը, զոր Աստուած կը ցուցաբերէ մեր հանդէպ»: Եւ կը շարունակէ. «Քնքշութիւնը բնաւ չի նշանակեր վերածուիլ գերզգայնոտ անձի, այլ՝ աստիկա նախաքայլն է յաղթահարելու ինքն իր անձին մէջ կծկուելու ախտը, եւ դուրս ելլելու եսակեդրոնութենէն ու նարկիզականութենէն, որոնք կապակողմնորոշեն մարդկային ազա-

տուրիստները: Որովհետև կայք էջ : www.azadkhosk.com
Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018
16/54 Աստուծոյ քնքշութիւնը մեզ կ'առաջնորդէ
հասկնալու եւ լաւապէս ըմբռնելու, որ կեանքին
իմաստը Սէրն է: Եւ մենք՝ այսպիսով կ'ըմբռնենք որ
մեր ազատութեան արմատը ինքնանպատակ ու
անպայմանադիր ինքնակամութիւն չէ, այլ՝ հրաւեր
մըն է, առիթ մըն է մեզի տրուած՝ որ Տէրոջը մեզի
տուած Սէրը վերաբաշխենք մեր կեանքին մէջ՝ մեր
ընտանիքին ու հանրութեան, անոր միացնելով նաեւ՝
մեր ծառայութիւնը եւ նուիրումը հասարակութեան:
Բայց, այս ամէնը՝ ոչ որպէս պարտականութիւն կամ
պարտաւորութիւն, այլ որպէս ապրուած սիրոյ եւ
քնքշութեան արտայայտութիւն, մարդոց եւ հասարակ-
ութեան հանդէպ: Եւ որպէս՝ մեր ապրուած սիրոյ
արտայայտութիւն հանդէպ Անոր, որ մեզ կը սիրէ
քնքշօրէն»:

Հոս ուրեմն, կը պարզուի թէ՛ Իդէալազտութեան
(Idealism) նախահայր Քանթի հետեւորդ Ռեթէոս Յ.
Պերպլերեանի Մատերիալազտութեան (Materialism)
եւ Ֆրանչիսկոս Ա. Պապի կողմէ «Ազատութիւն»
յղացքին տրուած սահմանումները տարբեր չեն
իրարմէ, հակառակ իրենց իրարմէ տարբեր
փիլիսոփայական դպրոցներուն: Երեքը զիրար կը
հաստատեն, երբ երեքն ալ ազատութիւնը պայմանա-
ւոր եւ ոչ-կամայական կը նկատեն: Երեքն ալ
ազատութիւնը պարտքի մը վճարումը կը նկատեն:
Ռեթէոս Յ. Պերպլերեան կը խօսի «Պարտուց
Հրամայական»ի մասին. մատերիալազտութիւնը՝
«Պատմական Անհրաժեշտութեան» մասին, իսկ Ֆրան-

չիսկոս Ա. կը խօսի «Տերոջը տուած սիրոյն մարդոց վերաբաշխելու աստուածային հրաւերի» մասին: Պերպերեանի համար, ասուն մարդը անասուն կենդանիէն կը զատորոշուի, երբ իր ազատ կամքով, հասարակութեան հանդէպ իր պարտքը վճարելով՝ ԱՆՁ կը դառնայ: Մատերիապաշտութեան համար մարդ ազատ շարժած կըլլայ, եթէ քալէ իր ժամանակի պատմական անհրաժեշտութեան համաձայն ուղղութեամբ:

Տրանչիսկոս Ա.ի համար, մարդկային ազատութիւնը ճիշդ գործածելը կը պահանջէ որ մարդը՝ Աստուծմէ ստացած իր սէրը վերաբաշխէ իր եղբայր մարդոց ու հասարակութեան (մարդոց եղբայրակցութեան մասին Վ. Թէքէեանն ալ ունի «Խօսք առ Աստուած» մը, իր «Շուարում» քերթուածին մէջ, ուր կըսէ. «Ի՞նչպէս զքեզ ըմբռնեմ, երբ մարդ մարդու ոտխը կըլլայ, եղբայրը եղբօրմէն կը զարնուի, նուազ ուժովները ուժովէն ոտնակոխ կըլլան... Եւ դուն յաճախ կըլլաս ընդդէմ տկարին...»): Ուրեմն, մարդկային հասարակութեան հանդէպ պատասխանատուութիւն վերցնելով է որ մարդ ազատագրուած կը նկատուի: Ուրեմն, ազատութիւնը կամայականութիւն չէ, հասարակութեան հանդէպ անպատասխանատու ըլլալ չէ. ինքնակամ ու ինքնասիրահարուած, նարկիզական եսակեղրոն մարդը ազատագրուած չի նկատուիր: Երբ ժամանակը հասունցած ըլլայ պատմական փոփոխութեան մը համար, այդ փոփոխութեան համար մղուած պայքարը ազատագրական պայքար մըն է եւ այդ պայքարին մասնակիցը՝ ազատամարտիկ մը եւ ազատ մարդ մը: Ուրեմն, իր

ազատագրական առաքելութեան գիտակցող յեղափոխականը՝ լիովին ազատագրուած անձն է: Եւ այս տիպի անձեր կրնան ըլլալ բոլոր անոնք, որոնց հոգին ազատագրուած է: Ուրեմն, մարդկային հոգիին ազատագրումը հանդիսացող «ՆԱՐԵԿ»ը պրծած է Հայց. Եկեղեցոյ Էսթապլիշմենթին խաւարամիտ գրաքննութենէն, եւ սակայն, «ՆԱՐԵԿ»ի պատգամը չէ հասած ժողովուրդին, մեր պարտագանց մտաւորականներուն անտարբերութեան յանցանքով: Իսկ Էսթապլիշմենթը գովազդած է «ՆԱՐԵԿ»ը, իբր լոկ աղօթագիրք: Եւ այսօր, Ֆրանչիսկոս Ա. Կը դարմանէ այդ յանցանքին գործած ակերներն ու յետամնացութիւնը, նաեւ՝ միջնադարեան կայք էջ : www.azadkhosk.Com Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 17/54 Վատիկանի գործած վնասները՝ միջեկեղեցական յարաբերութեանց մէջ, իր մեծապետական մոլուցքին հետեւանքով, պատճառաբանելով թէ՛ ազգային եկեղեցիները առաքելական չեն, հիմնուած են լոկ ազգային սուրբերու կողմէ, ոչ՝ առաքելալներու... եւ հետեւաբար՝ "To be in communion with God, you have to pass by the Vatican" (Աստուծոյ հետ հաղորդակից դառնալու համար, դուն պարտիս անցնիլ Վատիկանի բովէն): Ֆրանչիսկոս Ա. 2-3 տարիներու հետեւողական ջանքերով, Վատիկանը հաշտեցուց Ռուս Ուղղափառ, Յոյն Ուղղափառ եւ Լուտերական ազգային եկեղեցիներուն հետ, եւ՝ Կարմիր Չինաստանի (Ժողովրդային) պետութեան հետ:

Ֆրանչիսկոս Ա.ի հոգեւոր յեղափոխութեան պատմական յեղաշրջումները եղան՝ իր նոր աստուածաբանութիւնը, ու ասոր մէջ սրբութեան տրուած նոր

սահմանումը, որպես հոգևոր բալասան՝ 3-րդ հազարամեակի վայրի դրամատիքական, արդի ստրկատիրութեան անմարդկայնացուած աշխարհի չարիքներուն: (Իսկ յեղափոխական Վ. Թէքէեան, «Գիտեմ Գաղտնիք Մահաւոր» քերթուած մէջ, խօսած է ծնելիք նոր Աստուծոյ մասին. Պիտի մեռնի այս աստուածն ալ՝ մարդուն հետ գիրկընդիսառն Պիտի մեռնի մարդը այս ու պիտի ծնի մարդը նոր Բանաստեղծի մը թերեւս երգէն՝ սիրոյ ցասումի): Սրբութեան նոր սահմանումը, Ֆրանչիսկոս Ա. երկարօրէն պարզած է Պապական Թուղթի մը մէջ՝ *Gaudete et Exsultate* վերնագրով (տես՝ www.vatican.va): Ան սրբութեան տուած է հետեւեալ պարզունակ սակայն տարողունակ սահմանումը. «Սրբութիւնը ճշմարիտ կեանքն է. երջանկութիւնը, որուն համար ստեղծուած ենք: Սրբութեան հակառակը՝ անշուշտ մեղքը չէ, այլ այն է՝ երբ մենք կը գոհանանք միջակութիւններով, կիսամիջոցներով ու բովանդակագուրկ կեանքով, եւ Աստուծոյ մեզի պարգեւած սէրը չենք վերաբաշխեր մեր եղբայր մարդոց ու հասարակութեան»: Կը շարունակէ. «Մենակեաց կեանքը, ինքնիրմով բաւականանալով ապրուած կեանքը ճշմարիտ կեանքը չէ, եւ հետեւաբար՝ մեզ չառաջնորդեր դէպի սրբութիւն, որ ճշմարիտ կեանքի առօրեայի վարք ու բարքէն կը բխի: Պատմութիւնը արձանագրած չէ անհատական հերոսութեամբ սուրբ դառնալու պարագայ: Առանց հասարակութեան մէկ մասի նեցուկին, սուրբ հերոսութիւն եւ առանց նպատաւորուող անձերու ներկայութեան մարդասիրութիւն չի կրնար կատարուիլ: Քրիստոնէական սրբութիւնը կը

պահանջէ նաեւ յանձնառութիւն՝ հանդէպ մարդկային պատմութեան եւ անոր զարգացումին ու յառաջդիմութեան: Եւ այս տիպի յանձնառութիւնները կը համարէ «վտանգաւոր յեղափոխականներ», քանի որ ասոնք վճռած կըլլան ռիսքեր (վտանգներ) յանձն առնել աներէր յանդգնութեամբ՝ իրենց առաքելութեան ի կատար ածման համար: Գոյութիւն չի կրնար ունենալ քրիստոնէական սրբութիւն հոն, ուր հոգեւորական դասը խզուած կըլլայ մարդկութեան պատմութենէն եւ զայն դէպի լաւը փոխակերպելու առաջադրանքէն»: կայք էջ: www.azadkhosk.com Խմբագիր - Երան Գոյումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 18/54 Ուրեմն, այսպիսի վսեմ առաջադրանք կ'ունենան սրբութեան թեկնածու այդ «վտանգաւոր» յեղափոխական անհատներն ու իրօք յեղափոխական կազմակերպութիւնները, որոնք կ'ուզեն արմատախիլ ընել Արդի Ստրկութեան (վայրի դրամատիրութեան) հասարակարգը: (Արդարեւ, միջազգային հեղինակաւոր տնտեսագէտներն ու ֆինանսագէտները, հիմնուելով պաշտօնական վիճակագրութիւններու վրայ, պարզեցին թէ՛ աշխարհի հարստութեան 48 տոկոսը (շուրջ կէտը) սեփականութիւնն է մարդկութեան միայն մէկ տոկոսին... Բարբարոսային անհաւասարութեան այս իրավիճակին մէջ, ուր մարդկութեան 99 տոկոսին սեփականութիւնը՝ միմիայն մնացեալ կէսն է... չափազանցութիւնն է՝ վայրի դրամատիրութիւնը Արդի Ստրկատիրութիւն որակել): Մինչ պահպանողականները կը գոհանան լոկ ներհամակարգային կուսակցութիւններու եւ անհատներու իշխանութեան հերթափոխութեամբ: Ֆրանչիսկոս Ա. յեղափոխական մը

ըլլալով, Վատիկանի պաշտօնաթերթի 10 Օգոստոս 2018 թուակիր թիւ 32-33 համարի անգլիատառ յաւելումով մէջ ունի քարոզ մը՝ "A Comprehensive Strategy To Combat MODERN SLAVERY" վերնագրով, զոր ջերմօրէն կը թելադրեմ կարդալ՝ բոլոր մտաւորականներուն եւ հոգեւորականներուն մանաւանդ: Հոս, որպէս նախաճաշակ, կը մէջբերեմ միայն հետեւեալ պարբերութիւնը. «Ներկայի այս արդի ստրկատիրութիւնն ու մարդավաճառութիւնը բաց վերք մըն է ժամանակակից մարդկութեան սրտին վրայ, խոց մը՝ Յիսուսի մարմնին վրայ եւ ՈՃԻՐ ՄԸ՝ ԳՈՐԾՈՒԱԾ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԴԷՄ»: Իսկ «մարդկութեան դէմ գործուած ոճիր»ը, Միջազգային Հանրային Իրաւունքին մէջ, համագոր է «պատերազմի ոճիրներ»ուն, եւ՝ «ցեղասպանութիւն» կոչուող գերագոյն ոճիրին:

Հայոց Ցեղասպանութեան գերագոյն ոճիրին պատասխանատու պետութիւնը՝ Օսմանեան Կայսրութեան իրաւայաջորդ Թուրքիոյ Հանրապետութիւնը, ցարդ չէ պատժուած եւ հայերուն չէ վերադարձուցած Արեւմտահայաստանն ու Արեւելահայաստանէն կարգ մը շրջաններ, երկու պատմական պատճառներով: -Առաջինը՝ Բ. Աշխարհամարտի բարեբեր աւարտին խափանումը՝ Ամերիկեան Իմփերիալիզմի կողմէ, Հիրոշիմայի եւ Նակագաքիի ռմբահարումովը ջրածնային ռումբերով: Պատմութեան մէջ այս աննախընթաց ոճիրով, երբ ԱՄՆ ունէր մենաշնորհը հիվեական զէնքի եւ այդ մենաշնորհով խափանեց Սովետ Միութեան պահանջը՝ Կարսի, Արտահանի եւ Արդուինի կապակցութեամբ, Սովետ Հայաստանի անունով, պատճառաբանելով թէ՛ Թուրքիոյ հողային

սահմանները Սովետ Միության հետ, յետայնու՝ ԱՄՆ-ի հողային սահմանները պիտի համարուին...: Այս տրամաբանությամբ կը խափանուի նաև ու միանգամայն՝ Տարագիր Արեւմտահայութեան Հողային Դատը՝ աթոմական զէնքի մենաշնորհեալ պետութեան հովանին վայելող եւ ՕԹԱՆ-ի զինակից Թուրքիոյ դէմ...:

-Երկրորդը՝ Յուրտ Պատերազմի տելոդութեան շարունակուող իմփերիալիստական պատերազմներուն բազմապատկումն ու առաւել աւերիչ դառնալը: Սովետ Միութեան ինքնալուծարումէն վերջ, երբ Ամերիկեան Իմփերիալիզմը աշխարհին պարտադրեց վայրի դրամատիրութեան «Համաշխարհայնացում»ը միաբեւեռացած աշխարհակարգին մէջ, որ ներկայի Արդի Ստրկատիրական դարաշրջանը կը հանդիսանայ: Եւ ուրեմն, այս ստրկատիրութեան դէմ պայքարող Ֆրանչիսկոս Ա.ի յաղթանակով պայմանաւորուած է՝ մեր հողային դատին արդար լուծումը, եւ հետեւաբար՝ յեղափոխական Պապին այս պայքարը՝ պայքարն է նաև ամէն մի ՀԱՅի: կայք էջ : www.azadkhosk.com

Խմբագիր - Երան Գույումճեան Թիւ (90) Ապրիլ 2018 19/54 Ներկայի Արդի Ստրկատիրութենէն մարդկային հոգիին ազատագրումը՝ միակ արդար լուծումն է բոլոր իրաւագրկուած ժողովուրդներու ազգային դատերուն: Այս ուղին «ՆԱՐԵԿ»եան է, որ անցաւ Թոնտրակեան, Հոկտեմբերեան Յեղափոխութեան, Ազատագրութեան Աստուածաբանութեան հանգրուաններէն, եւ հիմա՝ կը շարունակէ երթը Ֆրանչիսկոս Ա.ի կողմէ:

Պէյրուօ



**ՈՎ ՈՐ ԻՐ ԱՐԻԵԼԻՆԵՐՈՒ
յԻՇՈՂՈՒԹԵԱՆ ԱԷՋ Կ'ԱՊՐԻ,
ԱՆ ԱԱՀԱՅԱԾ ՁԷ,
ԱՅԼ ՀԵՊՈՒ.
ՄԱՀԱՅԱԾՆ ԱՅՆ Է,
ԵՐԲ յՈՂԱՅՈՒԻԾ Է:**

Լ. Ա. ՍԵՆԵԿԱ (ՅՔ 1-65)

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

*Ոչինչ տեսական է այս աշխարհի վրայ, նոյնիսկ մեր նեղութիւնները:

*Անձրեւին քալելը կը սիրեմ, որովհետեւ ոչ ոք արձունքներս կրնայ տեսնել:

*Առանց խնդալու անցուած օր վատնուած օր մըն է:

*Ունեցածովդ գոհացիր եւ ժպիտդ թող անպակաս ըլլայ:

*Լաւ ընկեր մը համապատասխան է ազդու դեղի մը, իսկ լաւ ընկերային խումբ մըն ալ՝ դեղարանի մը:

*** Աշխարհի լաւագոյն բժիշկներն են .**

Արեւի լոյսը, Անդորրութիւնը, Մարգանքը,
Պահեցողութիւնը, Ինքնավստահութիւնը եւ
Բարեկանները

Երբ կեանքիդ բոլոր հանգրուաններուն անոնք հետդ ըլլան, կ'ունենաս առողջ կեանք:

*Երբ լուսինը տեսնես, կը տեսնես Աստուծոյ գեղեցկութիւնը:

*Երբ արեւը տեսնես, Աստուծոյ զօրութիւնը կը զգաս:

*Եւ երբ հայելիին նայիս, Աստուծոյ լաւագոյն ստեղծագործութիւնը կը տեսնես:

*Որով ինքնավստահ եղիր, բոլորս ալ զբօսաշրջիկներ ենք եւ Աստուած մեր ուղղեցոյցը: Ան արդէն իսկ ճշդած է մեր ճանապարհը, ապահոված կեցութեան վայրերը եւ նպատակատեղը, որով վստահիր Իրեն եւ վայելէ այս «պտոյտ»-ը որ ԿԵԱՆՔ կը կոչուի:



ԵՎԵՂԵՅԻ

Ս. ԱՏՈՒԿՕՍԾՈՒՆ ՀԱՅՅ. ԱՌԱՔ. ԵՎԵՂԵՅԻ, ԹՈՐՈՆՏՈ
SAINT MARY ARMENIAN APOSTOLIC CHURCH, TORONTO
ՓԷ, ՏԱՐԻ, ԹԻՒ 26, 21 ՅՈՒԼԻՍ, 2019

ԻՆՉ Է ՊԱՀԵՅՈՂՈՒԹԻՒՆԸ



Այսօր կ'սկսի Բարեկենդան Վարդավառի Պահոց: Սակայն իՆՉ է պահեցողութիւնը:

Պահեցողութիւնը իր ընդհանուր եւ պարզ հասկացողութեան մէջ այն ժամանակաշրջանն է՝ կարճ կամ երկար, ուր մարդ ինքնամոխիման փորձ կը կատարէ, հասկնալու համար՝ թէ ո՛ւր հասած է եւ ի՛նչ վիճակի մէջ կը գտնուի: Այլ խօսքով պահեցողութիւնը բացառապէս ինքնաքննութեան, ինքնաճանաչողութեան եւ ինքնամաքման ժամանակաշրջան է, ուր մարդ մուտք կը գործէ կեղտոտ ոտքերով ու

ձեռքերով, միտքնած միտքով ու հոգիով, եւ դուրս կու գայ մաքրուած եւ սրբուած ձեռքերով ու ոտքերով, ինչպէս նաեւ պայծառացած եւ լուսաւորուած միտքով ու հոգիով: Մաքրութիւնն ու պայծառացումը անշուշտ կը պատկանի ջուրը այն պահեցողներուն, որոնք պահեցողութիւնը ընկալած են որպէս այլապիտին, այլինքն՝ որպէս մաքրման եւ պայծառացման շրջան: Ս. Գրիգոր Լուսաւորիչ կ'ըսէ.

- «Պահճը մեր հոգեւոր կեանքը կը զօրացնէ եւ մարմնաւոր անկարողութիւնները կը խափանէ, որովհետեւ մէկուսն զօրանալու միջոցին միւսը կը տկարանայ: Ինչպէս որ լէշակեր թռչունները անհինայ ուտելնուն պատճառով զժուարութեամբ կը թռչին եւ հեշտութեամբ կը որսացուն, իսկ սակաւակերները արազաթւիչ են եւ զժուար կը բռնուին, այդպէս ալ որկրամով ու շափաւոր մարդն է:»



ԱՆՄԱՐ ՍԷՐ

Քեզ չսիրե՛լ

Գե՛հէն կօրե՛լ

Ու կրակով հոգին փորե՛լ:

Քեզի սիրե՛լ՝

Դրախտ երթալ

Ու վարդերով քնանալ:

ՔՈ ԵՐԱԶՈՒՄ

Եւ ա՛յս գիշեր, քո երազում, տեսել ես, որ ես ու դու
Երես-երես ճանաչել ենք սիրոյ ծովում իրարու...

Քո սուրբ սերը սար է դառել
Դալարագեղ, երկնածրար ու բեղուն,
Գլխիդ վերը ամպ է շարել՝
Գալարաճեղ, կամարակապ ու զեղուն:
Սարի շողէն, ամպի քողէն՝
Մենաւորի ուփին ծնել, դեգերել,
Չեռին մի բոյս՝ կանաչ ու կոյս՝
Խորհրդաւոր ձորէն քաղել ու բերել:
Ծաղիկ-ծաղիկ քեզ որոնել
Ամպի տակին արեւծագին շունչ առել,
Ջրի մտտին, կանաչ խոտին՝
Գլխիդ վերեւ ծիրան-գօտին փունչ արել:

ՃԱՆԱՊԱՐՀ

Բարակ ուղին սողալով,
Ոտի տակին դողալով,
Ճամփի ծայրին բուսել է
Կեանքի ծառը շողալով:
Ի՛նչ լայն սիրտ է, որ ունի
Այս ճանապարհն Անհունի...
Մարդու, բոյսի, գազանի
Եւ թեւաւոր թռչունի:

ՓՇՈՒՐ ՄԸ

Մտի՛ր խորը,
Գտի՛ր նորը,
Վան՛է՛ հինը,
Բան՛է՛ մինը:

ՀՈՎ - ՍԷՐ

Նուրբ հովի պէս լարերով
Սուրբ ծովի պէս պարելով,
Սէրդ սրտում պաշէցիր,
Սրտիս խորքում գաշէցիր:
Աշունն եկաւ ծառին, սարին հեւելով
Անձրեւ թելեր փոշի-փոշի թեւելով,
Պտուկը ճոխ՝ առին տարին
Տերեւները կանաչ-ճանաչ պեղելով:





Ժամազաճառ մի ըլլար անպէտ
վիճաբանութիւններով ու կրօնական նիւթերու
անհամաչափութեամբ:

«Սուրբ սիրտ» կերպէ, մարտկոտութեան
ժառանգել:

Սիրէ Ըստուած է- Իր սրտի շահորժութեան
բոլոր արարածները:

ՏԷՐ ՀՈՎՈՒԵԱԾԷ ՉԻԱ, ԵՒ ԻՆՁ ԻՆՁ ՈՉ ՊԱԿԱՍԵԱԾԷ:



**ԹԷՊԷՏ ԵՒ ԳԱԱԾԻԾ ԷԱ Ի ՄԷՁ
ԱՏՈՒԵՐԱԾ ՄԱՀՈՒ, ՈՉ ԵՐԿԵԱՅԾ
Ի ՉԱՐԷ ՉԻ ԴՈՒ ՏԷՐ ԸՆԴ ԻԱ ԷԱ:**

